Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary



# ՄԱՐՏՆՉՈՂ ԱՐՑԱԽԸ 1917-2000

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**գիրք Ա**

**1917-1923**

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՄԱՐՏՆՉՈՂ ԱՐՑԱԽԸ
# 1917-2000

## ԳԻՐՔ Ա
## 1917-1923

36.636

ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Ա 161

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐՆԵՐ Գ.Ս. ԳԵՂԱՄՅԱՆԸ ԵՎ Կ.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Խմբագիր՝ Ա.Ի. Շահնազարյան*

**Աբրահամյան Հ.**
**Ա 161** Մարտնչող Արցախը, 1917-2000, Գիրք Ա, 1917-1923, — Եր.: Զանգակ–97, 2003, 340 էջ:

*Հրանտ Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» մենագրության սույն մասում պատմագիտական հետազոտությունների, արխիվային հարուստ փաստաթղթերի, մամուլի և այլ նյութերի հիման վրա ցույց է տրված 1917-1923 թվականներին թուրք-ազերիների բռնատիրության դեմ արցախահայության մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: Պայքարելով վերստին Հայաստանի կազմում լինելու համար՝ արցախահայությունը ցուցաբերել է մեծագույն հերոսություն և տոկունություն: Այդ պայքարը գլխավորում էր Մեծն Գարեգին Նժդեհը: Արցախցիները հետևողականորեն պայքարել են ոչ միայն թուրք-ազերիների, այլև անգլիական զաղութարարների և խորհրդային Ռուսաստանի նկրտումների դեմ: Սակայն խորհրդային բոլշևիկյան կայսրապետությունը, ընդառաջելով թուրք-ազերիների ազգայնամոլ ցանկություններին և ոտնահարելով ազգերի ինքնորոշման իրավունքները, Արցախը նետեց Ադրբեջանի երախը: Մայր Հայաստանի կազմում լինելու համար արցախահայության պայքարը երբեք չմարեց:*

*Գիրքը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար, ում հետաքրքրում է Արցախ-Ղարաբաղի պատմությունը:*

Ա $\frac{0503020913}{0003(01)\text{-}2003}$ 2003

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99930–2–532–1

© Հ. Աբրահամյան, 2003 թ.
© «Զանգակ–97», 2003 թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական Հայաստանի 10–րդ նահանգի՝ Արցախի հիմնախնդիրը մեր օրերում դարձել է համաշխարհային չափանիշներով ազգամիջյան բարդ խնդիր և ունի ավելի քան ութսունամյա ողբերգական պատմություն: Ողբերգական է, որովհետև Արցախ–Ղարաբաղը հերոսական պայքարի է ելել թուրք ազերիների բռնատիրության դեմ, որոնց նպատակն է հայոց Արցախը լիովին հայաթափել: Ողբերգական է, որովհետև խորհրդային կայսրապետության տարիներին Արցախ–Ղարաբաղի հիմնահարցը ոչ միայն չլուծվեց, այլև ավելի խճճվեց քաղաքական, տնտեսական և մշակութաքարոյական նոր հերյուրանքներով ու խարդախություններով: Ողբերգական է, որովհետև 20–րդ դարի ութսունական թվականների վերջերին, երբ արցախցիները միանգամայն խաղաղ, ժողովրդական ձևով կրկին պահանջեցին իրենց մարզը միավորել մայր Հայաստանի հետ, Ադրբեջանի պարագլուխները այդ արդարացի պահանջին պատասխանեցին ադրբեջանահայության կոտորածներով և արտաքսումով: Եվ, վերջապես, ողբերգական է, որովհետև Ադրբեջանի ազգայնամոլները, որոնց ակտիվորեն ու բացահայտորեն օգնում և ոգևորում են Թուրքիայի կառավարող շրջանները, նպատակադրվել են Արցախի հիմնահարցը լուծել զենքի ուժով՝ պնդելով, թե իբրև Լեռնային Ղարաբաղը ադրբեջանական տարածք է:

Ահա թե ինչու ներկայումս առանձնապես սուր, քաղաքականապես հրատապ, կենսականորեն անհրաժեշտ խնդիր է դարձել 1917–1923 թթ. ղարաբաղյան խնդրի ծագման ու վերջնական ձևավորման պատմության ուսումնասիրումը: 1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխություններից հետո, Թուրքիայի իշխող ուժերի դրդմամբ, Ադրբեջանի բուրժուաազգայնական պարագլուխները ձգտում էին տիրանալ Արցախին՝ անհիմն հայտարարելով, թե քանի որ այն անցյալում մտել է Ռուսաստանի Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մեջ, հիմա պիտի կազմի Ադրբեջանի մաս, որովհետև նախկին Ելիզավետպոլի նահանգը մտել է Ադրբեջանի կազմի մեջ:

Սակայն պատմական անհերքելի ճշմարտություն է, որ Արցախը երբեք չի եղել Ադրբեջանի տարածք և չի մտել ադրբեջանական պետության կազմի մեջ, պետություն, որը մինչև 1918 թ. ամառը երբեք գոյություն չի ունեցել: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի նորանկախ պետությունը, չնայած բավականին ուժեր չուներ զսպելու սանձարձակ հարևանին, այնուամենայնիվ, ջանքեր էր գործադրում պաշտպանելու իր պատմական տարածքի արևելյան շրջանը՝ Արցախ–Ղարաբաղը, որը, Լեոյի արտահայտությամբ, ամենից առաջ Հայաստանի

պատնեշն է Արևելքից եկող արհավիրքների դեմ, իսկ ռուս բանաստեղծ, հասարակական գործիչ, հրապարակախոս, հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամ Սերգեյ Գորոդեցկու բնորոշմամբ՝ «Ազգագրական, տնտեսական և լեզվական առումով լինելով միասնական, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպես է նա եղել անցյալում, այդպես է ներկայումս և այդպիսին կլինի ընդմիշտ, քանի որ առանց Ղարաբաղի տերը լինելու, անկարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը»:[1]

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական խոշոր իրադարձություններից հետո Արցախ–Ղարաբաղում սկիզբ առավ ազատության և գոյատևման համար պայքարի մի նոր շրջան, որի առաջին փուլը եզրափակվեց 1923 թ. տեղի ունեցած իրադարձություններով, երբ Ղարաբաղի լեռնային շրջանը ինքնավարության անվան տակ թողնվեց Խորհրդային Ադրբեջանի սահմաններում:

Ելնելով թեմայի կարևորությունից՝ ուսումնասիրության մեջ հիմնական ուշադրությունը դարձրել ենք հետևյալ կարևոր հարցերի ուսումնասիրության և ընդհանրացման վրա. բացահայտել ենք 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փոթորկալից իրադարձություններից հետո արցախահայության ժողովրդավարական և ազատագրական պայքարի առաջին քայլերն ու հետևանքները, ինչպես և Արցախ–Ղարաբաղի բնակչության, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների դերը հայրենի երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու գործում:

Ռուսաստանի կազմից Անդրկովկասի դուրս գալուց և Բաթումի դաշնագիրը կնքվելուց հետո իրավիճակը բարդացավ նաև Արցախում: Վերլուծելով այդ հանգամանքները՝ հատուկ ուշադրություն է դարձված հայ ժողովրդի հանդեպ նորահայտ Ադրբեջան կոչված պետության ոտնձգությունների մերկացմանը: Հենց այդ ժամանակաշրջանում են ծնվել Արցախի առաջին ինքնակառավարման մարմինները, որոնց գործունեությունը բացահայտված է հանգամանորեն:

1918–1920 թթ. Արցախի պատմության կարևոր իրադարձություններից են Ղարաբաղի հայության համագումարները: Անդրկովկասի պատմության մեջ եզակի երևույթ էր, երբ մի ամբողջ երկրամաս շուրջ երկու տարի կառավարվել է ժողովրդական համագումարների կողմից: Դրանք կատարել են օրենսդիր և գործադիր մարմինների ֆունկցիաներ, եղել արցախահայության ազգային–ազատագրական պայքարի կազմակերպիչն ու ղեկավարը:

Հանգամանորեն քննարկվել և նորովի է լուսաբանվել ինչպես համագումարների գործունեությունը, այնպես էլ թուրք զավթիչների ու մուսավաթական հրոսակների դեմ արցախահայության հերոսական պայքարը: Ցույց է տրված զորավար Անդրանիկի դերը Արցախի ուժերը համախմբելու և Արցախի ու Զանգեզուրի ռազմաքաղաքական ու տնտեսական կապերն ամրապնդելու ուղղությամբ:

Արցախի ճակատագրում խիստ բացասական դեր են խաղացել արևմտյան տերությունները, մանավանդ անգլիական իմպերիալիստները: 1918 թ. աշնանից մինչև 1919 թ. ամառն ընկած ժամանակաշրջանում անգլիական ուժերը, գտնվելով Ղարաբաղում, ջանքեր չէին խնայում արցախահայությանը ենթարկելու մուսավաթական Ադրբեջանին: Հանգամանորեն բացահայտել ենք օտար տերությունների գաղութային քաղաքականությունը Արցախ–Ղարաբաղի նկատմամբ և թուրք ազգայնամոլների կողմից այդ քաղաքականության նպատակամղումը Արցախը Ադրբեջանին բռնակցելու համար:



1919 թ. գարնանը և ամռանը ավելի էր ծանրացել արցախահայության վիճակը: Օգոստոսին տեղի ունեցած Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարը Ադրբեջանի մուսավաթական կառավարության հետ հարկադրաբար կնքեց ժամանակավոր համաձայնություն, ըստ որի, մինչև Փարիզի վեհաժողովի վերջնական որոշումը, Արցախը լինելու էր մուսավաթական Ադրբեջանի սահմաններում: 1920 թ. փետրվար–մարտին տեղի ունեցած արցախահայության ութերորդ համագումարը մերժվեց օգոստոսյան համաձայնությունը և մի անգամ ևս Արցախը հայտարարեց Հայաստանի անբաժան մաս: Ուսումնասիրության մեջ բացահայտված են այդ իրադարձությունների պատճառներն ու հետևանքները:

1920 թ. մարտին մուսավաթական Ադրբեջանը լայնածավալ հարձակում է սկսում Արցախ–Ղարաբաղի դեմ: Թուրք դահիճներին զոհ են գնում հազարավոր արցախցիներ, և հրդեհի ճարակ է դառնում հայոց Շուշին: Հայաստանի կառավարությունը, ի վերջո, դիմում է վճռական գործողության: Այն իր ուժերը Դրոյի գլխավորությամբ մտցնելով Արցախ՝ միացնում է Հայաստանի Հանրապետությանը: Արցախում ստեղծված ժամանակավոր կառավարությունն անում էր ամեն ինչ՝ այդ միացումը իրական դարձնելու համար: Հենց այդ օրերին Խորհրդային Ռուսաստանի 11–րդ Կարմիր բանակի միջամտությամբ Ադրբեջանում հաստատվում են խորհրդային կարգեր: Նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանի պարագլուխները 11–րդ Կարմիր բանակի զորամասերը ուղղում են Արցախ–Զանգեզուրի դեմ: Նրանք, շարունակելով մուսավաթական կառավարության ռազմատենչ քաղաքականությունը, ձգտում էին, ստեղծված իրավիճակն օգտագործելով, Արցախ–Զանգեզուրը հայաթափել և այդ տարածքները բնակեցնել մուսուլմաններով: Կարմիր բանակի՝ Արցախ ներխուժելուց հետո այստեղ լայնորեն իրագործված բռնարարքները և խորհրդային մարմինների անօրեն գործողությունները հանգեցրին նրան, որ 1920–1921 թթ. Արցախում Թևան Ստեփանյանի գլխավորությամբ բռնկվեց ժողովրդական ապստամբություն: Այդ ապստամբությունը սերտ կապի մեջ էր Գարեգին Նժդեհի գլխավորած Զանգեզուրի ազգային–ազատագրական պայքարի հետ: Ուսումնասիրության մեջ այդ բոլոր հարցերը լուսաբանված են արխիվային վավերագրերի և հարուստ նյութերի հիման վրա:

Չնայած վերջին տարիներին Հայաստանում և արտասահմանում տպագրվել են բազմաթիվ գրքեր, որոնք կարևոր ներդրում են Արցախի 1917–1923 թթ. պատմության ուսումնասիրության գործում, դրանք հիմնականում միակողմանի բնույթ են կրում: Ներկայումս հայ պատմագրության մեջ դեռևս չկա որևէ ամբողջական ուսումնասիրություն 1917–1923 թթ. արցախահայության մղած ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ: Սույն ուսումնասիրությունն ամբողջական է, ունի ընդհանրացող բնույթ և գալիս է լրացնելու այդ բացը:

Խորհրդային տարիներին Ղարաբաղի պատմության ուսումնասիրությունը կատարվել է կողմնակալ, կուսակցական դիրքերից: Հեղինակները, լինի Ադրբեջանում, թե Հայաստանում, պատմահամեմատական վերլուծության մեթոդի փո-

խարեն առաջնորդվել են մարքսիզմ–լենինիզմի այն դրույթներով, որոնք կարելի է միայն օգտագործել տոտալիտար սիստեմի քաղաքականությունն արդարացնելու համար: Սույն ուսումնասիրության հեղինակի համար ուղեցույց են եղել պատմական երևույթները, դեպքերն ու դեմքերը ճիշտ գնահատելու պատմաքննական մեթոդը, որի հիմքում դրվել է իրողությունների անկողմնակալ վերլուծությունը: Ձգտել ենք մերժել պատմագիտության մեջ կարծրացած միակարծությունը և գաղափարական անհանդուրժողականությունը: Արցախի 1917–1923 թթ. պատմությանն անդրադարձած հեղինակների, նույնիսկ ժամանակակիցների հուշերում թույլ են տրվել բավականին անճշտություններ և սխալ եզրահանգումներ: Ուսումնասիրության մեջ, բացի մի քանի դեպքերից, գիտակցաբար չենք շոշափել այդ հարցերը, որովհետև նախ՝ գիրքը շատ կծանրաբեռնվեր, հետո՝ մտադիր ենք հատուկ ուսումնասիրություն նվիրել Արցախ–Ղարաբաղի նշված ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ հրապարակումներում տեղ գտած սխալների բացահայտմանն ու ուղղմանը:

Նշենք նաև, որ խորհրդային տարիներին արխիվներն ըստ էության յոթ փակի տակ էին, և պատմական ճշմարտությունը բացահայտող արժեքավոր փաստաթղթերը հնարավոր չէր գիտական լայն շրջանառության մեջ դնել:

Արցախահայության ազատության և գոյատևման համար մղված պայքարի բազմակողմանի հետազոտությունն ու վերլուծությունը ներկայումս ավելի է արժեքավորվում և գործնական նշանակություն ստանում, որովհետև այն դառնում է մայր Հայաստանի հետ միավորվելու համար արցախահայության 1988 թ. վերսկսած պայքարի պատմական հիմնավորումը: Տվյալ ժամանակաշրջանում արցախահայության մղած պայքարի ձևերն ու մեթոդները, ստեղծված ժողովրդական մարմինների գործունեության յուրահատկությունը, երկրամասի բնակչության վճռականությունն ու նվիրվածությունը, ինչպես և թույլ տված սխալներն ու բացերը, որոնք այն ժամանակ հանգեցրին արցախահայության համար ոչ ցանկալի հետևանքների, դաս են ներկայումս իր նպատակին հասնելու համար աննահանջ պայքարող արցախահայության, ինչպես և ողջ հայ ժողովրդի համար: Արցախի հիմնախնդրի միջազգայնացման փորձը նույնպես գալիս է այն ժամանակվանից, երբ Արցախի հարցը, որպես Հայոց հարցի բաղկացուցիչ մաս, փոխադրվեց Փարիզի վեհաժողով, որը, սակայն, խոշոր տերությունների կողմից տորպեդահարվեց և մնաց անարդյունք: Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ) իր արտաքին քաղաքական կուրսը մշակելիս, ելնելով անցյալի այդ դառը փորձից, ցուցաբերում է ճկունություն, որը լիովին բխում է Հայաստանի Հանրապետության ու ողջ հայ ժողովրդի շահերից:

Սույն ուսումնասիրությունը հայ պատմագիտության մեջ համալիր փաստերով հագեցված առաջին փորձն է՝ ցույց տալու 1917–1923 թթ. Ղարաբաղի հիմնախնդրի առաջացման ակունքները, նրա հետագա սրվելը խորհրդային իշխանության տարիներին և ժամանակակից ազգամիջյան հարաբերությունների բարդ խնդիրներից մեկի վերածվելը:

Գրքում շոշափված բոլոր հարցերը ուսումնասիրվել են պատմական փաստաթղթերի ու աղբյուրագիտական նյութերի հիման վրա: Այդ փաս-



տաթղթերը, նյութերը և պարբերականների տվյալները կարելի է բաժանել հետևյալ խմբերի:

Առաջին խմբին են պատկանում Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների պետական ու նախկին կուսակցական արխիվներից և Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից հավաքված փաստաթղթերը և նյութերը: Օգտագործել ենք հետևյալ ֆոնդերի փաստաթղթերն ու նյութերը. ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՊԿՊԱ)՝ 199–րդ (ՀՀ նախարարների խորհուրդ), 200–րդ (ՀՀ արտաքին գործերի նախարարություն), 278–րդ (ՀՀ դիվանագիտության ներկայացուցչությունը Ադրբեջանում), 276–րդ (ՀՀ դիվանագիտության ներկայացուցչությունը Վրաստանում), 223–րդ (Բաքվում Հայոց ազգային խորհուրդ), 222–րդ (Թիֆլիսում Հայոց ազգային խորհուրդ), 221–րդ (Իմպերիալիստական պատերազմում հայերի կորուստները որոշող բյուրո), 290–րդ (ՀՀ զինվորական նախարարություն), 314–րդ (Անձնական ծագում ունեցող վավերագրական նյութերի հավաքածո), 93–րդ (Երևանի արքունական պալատ), 150–րդ (Միսակ Գաբրիելի Տեր–Դանիելյան), 370–րդ (Հայ ազգային–ազատագրական շարժման հերոս Անդրանիկ Թորոսի Օզանյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ փաստաթղթերի պատճենների հավաքածո), 198–րդ (Հայկական Հանրապետության խորհրդարան), 201–րդ (ՀՀ ներքին գործերի նախարարություն), ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՆՊ ԿՊԱ)՝ 114–րդ (ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ), 112–րդ (ՀԽՍՀ Կենտգործկոմ), 113–րդ (ՀԽՍՀ Ժողկոմխորհ) ֆոնդերից: Ուսումնասիրության թեմային առնչվող արժեքավոր նյութեր ենք հայտնաբերել ՀՀ հասարակական, քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ)՝ 1–ին (Հայաստանի կոմկուսի Կենտկոմ), 4049–րդ, 4050–րդ (Անձնական գործերի), 4047–րդ (Հայ հեղափոխական դաշնակցական կուսակցություն), 1022–րդ (ՀԿ(բ)Կ կուսկոմիտեին կից կուսպատմության ինստիտուտի արխիվային նյութեր), 4033–րդ (Ղարաբաղի ժամանակավոր նահանգապետություն (այս ֆոնդի նյութերը վերջերս հանձնվել է ՊԿՊԱ) ֆոնդերից: Թեմային առնչվող նյութեր ենք հայտնաբերել նաև Մատենադարանում (թղթ $240^{1}$, վավերագիր 29), ՀՀ ազգային անվտանգության նախարարության արխիվում (գործ՝ 9373, 5231), ՀՀ գրականության և արվեստի թանգարանում (ՀՀ ԳԱԹ), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվում (ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի ֆոնդ):

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետ կապված նյութեր կան նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվի (ԼՂՀ ՊԱ) 1–ին (Լեռնային Ղարաբաղի գործերի կոմիտե), 460–րդ (ԼՂԻՄ ժամանակավոր հեղափոխական կոմիտե), 2–րդ (ԼՂԻՄ խորհուրդների համագումարներ), 450–րդ (Ջիվանշիրի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների գավառային խորհուրդների պատգամավորների գործադիր կոմիտե), 345–րդ (Ջիվանշիրի գավառի Մարտակերտի տեղամասի հեղկոմ), 485–րդ (Շուշիի գավառի երկրորդ տեղամասի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների գործադիր կոմիտե), 3–րդ (ԼՂԻՄ աշխատավորների պատգամավորների խորհր-

դի գործադիր կոմիտե), 6–րդ (ԼՂԻՄ քաղաքային և շրջանային աշխատավորների խորհուրդների պատգամավորների գործադիր կոմիտե) և այլ ֆոնդերում: Օգտագործել ենք նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմաերկրագիտական թանգարանի (ԼՂՀ ՊԵԹ) 2–րդ ֆոնդում պահվող մի շարք նյութեր, արցախցի երախտավոր, հանգուցյալ Սուրեն Կարապետյանի (Ստեփանակերտ) և այլոց անձնական արխիվներում պահվող որոշ նյութեր, մեր կողմից դեռևս 1950–1970–ական թվականներին գրի առնված մի շարք արցախցիների հուշերը և այլն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ բավականին նյութեր կան Ադրբեջանի Հանրապետության պետական և կուսակցական արխիվներում, մանավանդ Ադր. Հ. նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ԱՀ ՆՊ ԿՊԱ) 420–րդ (Ղարաբաղի և Զանգեզուրի արտակարգ կոմիսարիատ), 410–րդ (Ադրիեղկոմ), Ադրբեջանի հասարակական–քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ԱՀ ՀՔԿՓ ԿՊԱ) 89–րդ (ԼՂԻՄ մարզկոմի արձանագրություններ), 456–րդ (Անձնական գործեր) և այլ ֆոնդերում:

Երկրորդ խմբին է պատկանում ուսումնասիրվող ժամանակաշրջանի և հետագա տարիների պարբերական մամուլը, այդ թվում «Մշակ» (Թիֆլիս, 1917–1921), «Յառաջ» (Երևան, 1919–1920), «Արև» (Բաքու, 1917–1919), «Նեցուկ» (Շուշի, 1917), «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս, 1918), «Զանգ» (Երևան, 1917–1919), «Ժողովուրդ» (Երևան, 1918–1920), «Զինվոր» (Երևան, 1917–1918), «Հորիզոն» (Թիֆլիս, 1917–1918), «Նոր Հորիզոն» (Թիֆլիս, 1918), «Աշխատավոր» (Թիֆլիս, 1917–1920), «Փայլակ» (Շուշի, 1915–1917), «Ապառաժ» (Շուշի, 1917), «Պայքար» (Թիֆլիս, 1917), «Մյունիք» (Գորիս, 1920), «Կոմունիստ» (Բաքու, 1920–1923), «Խորհրդային Հայաստան» (Երևան, 1920–1930, 1988–1990), «Հուսաբեր» (Կահիրե, 1929), «Ալիք» (Թեհրան, 1934), «Տեղեկատու» (Բաքու, 1918), «Խորհրդային Ղարաբաղ» (հետագայում փոխված անուններով, Ստեփանակերտ 1923–2000), «Азербайджан» (Баку, 1918-1920), «Бакинский рабочий» (Բաքու, 1918–1925, 1988–1990), «Борьба» (Թիֆլիս, 1917–1919), «Заря Востока» (Թիֆլիս, 1926–1932), «Наше время» (Բաքու, 1919), «Социал-демократ» (Թիֆլիս, 1918), «Кавказское слово» (Թիֆլիս, 1918), «Жизнь национальностей» (Մոսկվա, 1920–1922), «Искра» (Բաքու, 1920), «Слово» (Բաքու, 1919) և այլ թերթեր: Պարբերական մամուլի շարքում կարևոր են «Հայաստանի կոոպերացիա» (Երևան, 1919–1920), «Հայրենիք» (Բոստոն, 1922–1960), «Վէմ» (Փարիզ, 1936), «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան, 1965–1995), «Լրաբեր հասարակական գիտությունների (Երևան, 1955–2000), «Նորք» (Երևան, 1990), «Մանկավարժ» (Երևան, 1975–1991), «Քաղաքական զրուցակից» (Երևան, 1990–1992), «Արցախ» (Ստեփանակերտ, 1989–1994), «Բանբեր Երևանի համալսարանի» (Երևան, 1973), «Գործ» (Բաքու, 1917), «Պատմաբանասիրական հանդես» (Երևան, 1988–2000), «Красный архив» (Մոսկվա, 1936), «Народное хозяйство» (Բաքու, 1920–1921), «Революция и национальности» (Մոսկվա, 1932–1936) և այլն հանդեսներ:



Երրորդ խմբին պատկանում են մյուս բոլոր աղբյուրները: Հայաստանի, Ադրբեջանում և նախկին Խորհրդային Միությունում հրատարակված մի շարք օրենքների, դեկրետների և հրամանագրերի, գաղտնի փաստաթղթերի ժողովածուները, կուսակցության և խորհուրդների համագումարների արձանագրությունները ու վիճակագրական հրապարակումները պարունակում են ուսումնասիրվող թեմային առնչվող անհրաժեշտ նյութեր:[2]

Արցախահայության ազատագրական պայքարի մասնակիցներից և դեկավարներից ոմանք իրադարձությունների թարմ տպավորությունների տակ պահել են օրագրություններ և գրել հուշեր, որոնց մի մասը հրատարակվել են պարբերական մամուլում[3], իսկ մի մասն էլ պահվում են տարբեր արխիվներում կամ առանձին անձանց մոտ: Այդ գրառումները, որքան էլ մոտ լինեն ճշմարտությանը, այնուամենայնիվ, դրանց հեղինակները[4] այս կամ այն կերպ տուրք են տվել սուբյեկտիվիզմին և թույլ տվել մի շարք սխալներ ու անճշտություններ: Առանձնապես կարևոր է Եղիշե Իշխանյանի օրագրության հիմքի վրա գրված «Լեռնային Ղարաբաղ 1917–1920» ծավալուն գիրքը[5], որը, իրավամբ, 1917–1920 թթ. Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների նկարագրության լավագույն աղբյուր է, անկախ դրանում տեղ գտած մի շարք անճշտություններից:

Հետազոտվող շրջանում Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ տվյալ ժամանակի քաղաքական և պետական գործիչների հուշերն ու գրքերը, որոնց մի մասը տասնյակ տարիներ անմատչելի է եղել մասնագետներին, պարունակում են հետաքրքիր փաստեր և որոշ հարցերի պատասխաններ: Այս առումով կարևոր սկզբնաղբյուր են Սիմոն Վրացյանի, Ալեքսանդր Խատիսյանի, Հովհաննես Քաջազնունու, Ռուբեն Տեր–Մինասյանի և այլոց հուշագրություններն ու աշխատությունները:[6]

Լեռնային Ղարաբաղի պատմությանն է նվիրված Գրիգոր Հովհաննիսյանի «Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում» մենագրությունը,[7] որում հայ պատմագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել ամբողջական ձևով շարադրել 1917–1925 թթ. Ղարաբաղի պատմությունը: Գրքի հիմնական թերություններից է այն, որ հեղինակը գերագնահատել է Ղարաբաղի բոլշևիկների գործունեությունը և քննադատական ոչ մի խոսք չի ասել նրանց թույլ տված սխալների մասին:

1918 թ. ամառվանից մինչև 1919 թ. մարտի վերջը զորավար Անդրանիկը, գտնվելով Զանգեզուրում, սերտ կապի մեջ է եղել արցախահայության հետ և ղեկավարել է նրանց ազատագրական պայքարը: Դրանց նվիրված բազմաթիվ գրքեր ու հրապարակումներ օգտագործվել են սույն ուսումնասիրության համապատասխան բաժինը լուսաբանելու ժամանակ:[8]

Արցախ-Զանգեզուրի բնակչության համատեղ պայքարի վերաբերյալ առանձին փաստեր կան մի շարք գրքերում, որոնք նույնպես օգտագործվել են հեղինակի կողմից:[9]

Վերջերս Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը տպագրել է Արամ Սիմոնյանի «Զանգեզուրի գոյամարտը 1920–1921 թթ.» ծավալուն մենագրությունը,[10] որը ևս հաշվի ենք առել:

Արցախյան շարժման նորօրյա իրադարձությունները և տեղի ունեցած ռազմավարական ու աշխարհագրական փոփոխությունները աշխուժացրին ինչպես հայ, այնպես էլ այլազգի մի շարք պատմաբանների, իրավաբանների, քաղաքագետների և այլ մասնագետների, որոնք փաստագրական նյութերով հարուստ հոդվածներ ու գրքեր նվիրեցին Արցախի թե անցյալին և թե ներկային վերաբերող հարցերի լուսաբանմանը: Այդ տեսակետից հետաքրքրական են Հրաչիկ Սիմոնյանի, Լենդրուշ Խուրշուդյանի, Գալուստ Գալոյանի, Հրանտ Ավետիսյանի, Բագրատ Ուլուբաբյանի, Վարդգես Միքայելյանի, Լեոն Մկրտչյանի և այլոց գրքերը, հոդվածներն ու հրապարակումները:[11]

Հայ պատմագիտության մեջ կարևոր երևույթ է հեղինակային կոլեկտիվի կողմից պատրաստված և ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի խմբագրությամբ հրատարակված «Լեռնային Ղարաբաղը 1918–1923 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն[12], որից մի շարք նյութեր օգտագործել ենք ուսումնասիրության մեջ:

Արցախի 1917–1920–ականների պատմության մի շարք հարցերի վերաբերյալ գնահատականներ, բնորոշումներ, տեղեկություններ կան Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի, Դավիթ Անանունի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ս. Կասյանի և այլ քաղաքական ու պետական գործիչների հուշերում, զեկուցագրերում, որոնք ևս արժանացել են մեր ուշադրությանը:

Խորհրդային իշխանության տարիներին Արցախ–Ղարաբաղի պատմության վերաբերյալ Ադրբեջանի պատմաբանների հրապարակած գրեթե բոլոր հոդվածներում և աշխատություններում խեղաթյուրվել է Արցախի պատմությունը, և հեղինակները ամեն կերպ փորձել են ապացուցել, թե իբրև Արցախ–Ղարաբաղը ադրբեջանական տարածք է, և որ արցախահայությանն այստեղ հող ու ապրելու հնարավորություն է տվել Ադրբեջանը:[13] Սույն ուսումնասիրության մեջ բացահայտել ենք ադրբեջանցի հեղինակների այդ կեղծիքները ու պանթուրքական մոտեցումը: Ազգայնամոլության բացահայտ օրինակներ են 1988–1990–ական թթ. Ադրբեջանի մամուլում Դ. Գուլիևի, Մ. Իսմայիլովի, Ե. Տոկարժևսկու, Թ. Քոչարլիի, Է. Նամազովի, Ա. Դաշտամիրովի և ուրիշների հոդվածներն ու կազմած ժողովածուները:[14] Բացի այդ, Ադրբեջանի պատմաբանները, արցախյան պայքարի հենց սկզբին հապճեպ հրատարակեցին փաստաթղթերի մի ժողովածու,[15] որտեղ խեղաթյուրվել են տասնյակ փաստաթղթեր ու նյութեր: Անշուշտ, այդ ամենին ցուցաբերել ենք քննադատական մոտեցում:

Երբեք էլ այն մտքին չենք, որ մեզ հաջողվել է լիովին լուծել մեր առաջ դրված բավականին բարդ ու ծավալուն խնդիրը: Նախօրոք շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր նպաստել են սույն մենագրության հրատարակմանը և օժանդակել են հնարավորին սահմաններում նվազագույնի հասցնել թերությունները ու բացերը: Երախտագիտությամբ կընդունենք արդարացիորեն արված բոլոր դիտողությունները:





# ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂ

## 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ-1918 Թ. ՄԱՅԻՍ

### *1. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ*

1917թ. Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխությունը տապալեց Ռոմանովների երեքհարյուրամյա տիրապետությունը, և երկրում հաստատվեց երկիշխանություն: Ռուսաստանը դարձավ ժողովրդավարական պետություն, որի հիմնական ծեռքբերումներից էր Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների ազգային ինքնորոշման պահանջի իրագործումը:

Ռուսաստանում տեղի ունեցածը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասում: Ժողովուրդը ցնծության մեջ էր: Ղարաբաղի իշխանությունները հեղափոխության լուրն ընդունեցին նոր իշխանությանը հավատարմության երդումներով: Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի՝ մարտի 6–ին իշխան Լվովին, կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին և Թիֆլիսի քաղաքագլխին ուղարկած հեռագրերում ասված է, որ «խոստանում ենք պահպանել անխախտ հանգստություն, եթե ոստիկանական իշխանությունների գործողությունները համաձայնեցվեն քաղաքային ինքնավարության ցուցումներին»:[1] Հաջորդ օրը Շուշիի քաղաքապետը Թիֆլիսից, կոմիսարներ Ժորդանիայի, Խատիսյանի և Պոպովի ստորագրությամբ, ստանում է հեռագիր–հանձնարարական, որտեղ առաջարկվում է քաղաքում և գավառում կարգը պահպանելու համար կազմակերպել քաղաքի բնակիչներին, բանվորական խորհրդին, քաղաքական կուսակցություններին և մշակութային ընկերություններին: Խորհուրդ է տրվում հարաբերությունների մեջ մտնել «գավառի իշխանության հետ, որպեսզի չստեղծվի անարխիա կամ անիշխանություն թեկուզ և ամենակարճ ժամանակով»:[2]

Շուշիում առաջին խոշոր ցույցը տեղի ունեցավ մարտի 9–ին,[3] «Շեյթան բազար» հրապարակում: Ռեալական ուսումնարանի աշակերտները երաժշտությամբ ուղևորվեցին դեպի քաղաքային վարչություն: Ճանապարհին նրանց միացավ ամբոխը: Քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, դուրս գալով պատշգամբ, ողջունում է ցուցարարներին և նրանց շնորհավորում նոր կարգի հաստատումը, բոլորին աշխատանք ու խաղաղություն ցանկանում: Ապա ցուցարարներին միանում են տեղի դրուժինայի զինվորները, թեմական, քաղաքա-

յին և ծխական դպրոցների սովորողները: Ցուցարարները շարժվում են դեպի ադրբեջանական թաղամասը: Մեչիդի հրապարակում տեղի է ունենում մեծ միտինգ, որտեղ ելույթ են ունենում հայեր, ռուսներ և թաթարներ: Ելույթ ունեցողները կոչ են անում պահպանել խաղաղությունը և կարգ ու կանոնը:[4] Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանին հեռագրում է. «Զորքից, սպաներից, աստիճանավորներից, քաղաքի և գավառի ազգաբնակությունից տեղի է ունենում Ղարաբաղի Գործադիր կոմիտեի պատվիրակների ընտրություն: Զորքը եղբայրանում է ազգաբնակության հետ: Կատարյալ հանգստություն է: Երկուշաբթի տեղի կունենա Գործադիր Կոմիտեի նորոգված կազմով դումայի առաջին նիստը...»:[5]

Փետրվարյան հեղափոխության հաղթանակին նվիրված միտինգներ ու ցույցեր տեղի ունեցան նաև Վարանդայի ու Խաչենի Թաղավարդ, Կաղարծի, Հադրութի, Ճարտար, Խնուշինակ, Քռասնի, Ղաշբուլաղ, Նորշեն և այլ գյուղերում: Տեղական իշխանությունները գյուղացիների մեծամասնությունից թաքցնում էին հեղափոխության և ցարի տապալման լուրը: Ժամանակի մամուլը հաղորդել է, որ Շուշիի գավառում «հետամնաց մուսուլման և հայ գյուղացիները դեռևս տեղեկություններ չունեն ցարական կառավարության տապալման մասին»:[6] «Մարտի 11–ին մեծ միտինգ է տեղի ունենում Խանքենդ ավանում, որտեղ ելույթ ունեցողներ Հարություն Թումյանը, Հայրապետ Մուսայելյանը և Լևոն Բաբայանը հավաքվածներին բացատրում են հեղափոխության կարևոր նշանակությունը:[7]

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո ժամանակավոր կառավարությունը ստեղծեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ОЗАКОМ), որի կարգադրությամբ հիմնվեցին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ: Մարտի 13–ին, երկար վարանումներից և ծգծգումներից հետո, կազմակերպվեց երեսունինը հոգուց բաղկացած Ղարաբաղի գործերի կոմիտե (ՂԳԿ), որը ղեկավարում էր երկրամասը:[8] Կոմիտեն ընտրեց ութ հոգուց բաղկացած նախագահություն և ստեղծեց վարչական, կազմակերպչական, պարենային և քարոզչական հանձնաժողովներ: Նրա իշխանությունը տարածվում էր ամբողջ Ղարաբաղի դաշտային և լեռնային շրջանների ու Զանգեզուրի վրա: Շուշիի մենշևիկյան «Փայլակ» թերթի վկայությամբ՝ Ղարաբաղի նահանգային գործադիր կոմիտեի մեջ մտնող պատգամավորներից շատերը բեկեր, խոշոր կալվածատերեր և նրանց դասակարգային շահերի պաշտպաններ էին,[9] իսկ բոլշևիկյան «Պայքար» շաբաթաթերթի վկայությամբ՝ Ղարաբաղի նահանգային գործադիր կոմիտեի մեջ մտնող պատգամավորներից շատերը «հին ռեժիմի գործակալներ էին և ժողովրդի թշնամիներ»:[10]

Ղարաբաղում զինվորական պատգամավորների խորհրդին և գործադիր կոմիտեին զուգահեռ գործում էր գավառական կոմիսարիատը, որը նախկին վարչակարգից ժառանգել էր «գրեթե ամեն ինչ, ծույլ չինովնիկներից սկսած, մինչև գրասենյակային սեղաններն ու աթոռները»:[11] Երկրամասում աշխուժացող քաղաքական ուժերը տարբեր կերպ էին գնահատում Ղարաբաղի գործադիր կոմիտեի գործունեությունը: Օրինակ՝ մենշևիկները հայտարարում են, որ «սոցիալ–քաղաքական հայացքներով, միանգամայն հակառակ լինելով Ղարաբաղի նորակազմ կատարողական (գործադիր– Հ.Ա.) կոմիտեի մեծամասնություն կազմող անդամներին, մենք, այնուամենայնիվ, առայժմ ընդունում ենք նրա իրավասությունն ու իշխանությունը, իբր Գերագույն ժամանակավոր կառավարության մի մասնիկի ու նրա ենթակա մի մարմնի, որ հանձն է առել Ղարաբաղի կյանքը դուրս բերել նոր պետական ու քաղաքական ճանապարհի վրա»: Մենշևիկները հիշեցնում են. «Թող չմոռանան նորակազմ կոմիտեի անդամները, որ ամեն ինչ ժողովրդից է, ամեն ինչ ժողովրդի համար է, և հենց իրենք էլ ժողովրդի համար են»:[12]

Փաստորեն, ցարական նախկին պաշտոնյաներն ամբողջ նահանգում մնացին տեղերում և շարունակում էին իրենց հակաժողովրդական քաղաքականությունը: Դրա դեմ ըմբոստացավ Ղարաբաղի աշխատավորությունը: Հենց դրա հետևանքով մարտի 17–ին պաշտոնից ազատվեց Շուշիի գավառապետ Դրուժենկոն, և գավառապետի պաշտոնակատար նշանակվեց Դղեբուածեն, իսկ կոմիսար հաստատվեց Կոբիևը: Շուշիում գործող քաղաքական կուսակցությունները՝ դաշնակցական, էսէռական, մեշևիկյան, բոլշևիկյան և կադետական, պայքարում էին երկրամասում հաստատելու ժողովրդավարական իշխանություն: Արցախի քաղաքական ուժերը ուշադիր հետևում էին Ռուսաստանում և Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին և ձգտում մասնակից լինել ընդհանուր կյանքին: Մարտի 19–ին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասի քաղաքների գործադիր կոմիտեների ներկայացուցիչների համագումարին Ղարաբաղից մասնակցում են բոլշևիկ Սաքո Համբարձումյանը և Լյուֆտալի բեկ Բեհբուդովը:

1917 թ. մարտի կեսերին Ղարաբաղում առաջ եկան բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների առաջին խորհուրդները: Ժամանակի մամուլում հաղորդումներ կան այն մասին, որ դրանցից առաջինը զինվորական պատգամավորների Շուշիի խորհուրդն էր՝ Սերգեյ Սեմյոնովի նախագահությամբ:[13] Այնուհետև կազմակերպվել է բանվորների և գյուղացիների պատգամավորների միասնական խորհուրդ: Շուշիի խորհրդում ակտիվ էին գործում քաղաքում տեղակայված 533–րդ պենզայան հետևակային զորախմբի և ռազմաճակատից տուն վերադարձող զինվորները: Նրանք կարևոր դեր խաղացին ոչ միայն քաղաքի, այլև գյուղի կյանքում:[14]

19–րդ դարում ցարական կառավարության կողմից Անդրկովկասում կատարված վարչական բաժանումները հակասում էին էթնիկական սկզբունքին: Նոր պայմաններում դա խստորեն խանգարում էր ազգային կյանքի զարգացմանը: Նման բարդություններ առաջ եկան մանավանդ Ղարաբաղում: Ժամանակավոր բնույթ ունեցող տեղական կոմիտեների աշխատանքներն արդյունավետ չէին, որովհետև դրանց ազգային կազմը միատարր չէր, և միևնույն նպատակներ չէին հետապնդում: Որոշվեց երկրամասի գավառական կոմիտեները բաժանել չորս աստիճանների՝ ըստ յուրաքանչյուրի գործունեության համապատասխան շրջանի: Այդ կոմիտեներն էին՝ գյուղական (յուրաքանչյուր գյուղում), համայնա-

կան (ընդգրկում էր ամբողջ համայնքի ազգաբնակչությունը), տեղամասային և գավառական: Ըստ որում, գավառական կոմիտեի ներկայացուցիչը մասնակցում էր Ղարաբաղի գործադիր կոմիտեի նիստերին:[15] Կոմիտեներ ստեղծվում են երկրամասի մի շարք բնակավայրերում և Շուշի քաղաքում, անշուշտ, պահպանելով ազգային սկզբունքը, որն ավելի էր խորացնում ազգամիջյան լարվածությունը: Շուշի քաղաքը բաժանվում է 32 թաղամասի, որոնցից 18–ը հայկական, 14–ը՝ մուսուլմանական մասերում: Ընտրվում են թաղային կոմիտեներ երեքական անդամներից բաղկացած: Դրանք ենթարկվում էին քաղաքային վարչությանը:[16] Այդ կոմիտեները հիմնականում պետք է զբաղվեին թաղամասերի բնակիչների ներքին կյանքով՝ պարենավորում, ոստիկանության կազմակերպում, մարդկանց կյանքի պաշտպանում, մաքրության հետևում և այլն:

Թուրք ազգայնամոլ տարրերն ամեն կերպ ձգտում էին սեպ խրել հայ և մուսուլման ժողովուրդների միջև և առաջ բերել ազգամիջյան ընդհարումներ: 1905–1906 թթ. Շուշիում և ամբողջ Ղարաբաղում տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումներից հետո շատ դժվարությամբ էին վերականգնվել նախկին ազգամիջյան հարաբերությունները: Փետրվարյան հեղափոխությունից հետո, եթե երկրամասի հայերը ձգտում էին այդ հարաբերությունները պահպանել, ապա մուսուլման բնակչության ազգայնամոլ տարրերը, ընդհակառակը՝ դեմ էին երկու ժողովուրդների դրացիական կապերի ամրապնդմանը: Դրա հիմնական առիթը Արցախի շուրջ ծագած վեճն էր:[17] Այդ նրանց ազդեցության տակ է, որ Շուշի քաղաքի մուսուլմանները կազմեցին առանձին ազգային կոմիտե, որն իրեն հայտարարեց «երկրամասի բոլոր մուսուլմանների բարձրագույն» օրգան և «խոսում էր վերջինիս անունից», մինչդեռ, թե երկրամասի և թե քաղաքի մուսուլմանությունը «քիչ է հաշվի առնում այդ կոմիտեի ցուցումներն ու որոշումները»:[18] Յամենայնդեպս, այդպես էր 1917–ի գարնան սկզբին: 1905–1906 թթ. Շուշիում ու երկրամասում տեղի ունեցած հայ–թաթարական ընդհարումները մուսուլման ազգայնամոլները մեկնաբանում էին յուրահատուկ ձևով. նրանք ամեն կերպ ձգտում էին դրանում մեղավոր ճանաչել հայերին ու կրկին բորբոքել և կազմակերպել հայ–թաթարական նոր միջադեպեր: Դրան գումարվում էին նաև երկրամասում ստեղծված տնտեսական ծանր պայմանները և մուսուլմանների կողմից Շուշի–Եվլախ ճանապարհի հաճախակի փակումը:

Շուշի քաղաքի բնակչությանը պարենով ապահովելու հարցը դարձել էր ամենահրատապ խնդիրը: Պարենային ճգնաժամը հետզհետե ավելի էր խորանում, որն առաջ էր բերում դժգոհության նոր ալիք:[19] Երկրամասի տնտեսական վիճակի վրա չափազանց ծանր ազդեց 1917 թ. երաշտը, որից խիստ վնաս կրեցին մանավանդ Խանաբաղի, Խանքենդու, Փիրջամալի, Նորաշենի, Ճարտարի, Սկոբելևսկու, Սոսի, Տողի և այլ գյուղերի բնակիչները: Զգալի վնաս կրեցին նաև լեռնային արոտավայրերը: Արագորեն բարձրացան գյուղատնտեսական մթերքների գները. ցորենի փութը հասել էր 14–18, գարունը՝ 7–8, իսկ հարդինը՝ 4 ռուբլու:[20] Ժամանակակիցը գրում է, որ Գետաշենից մինչև Թաղեր շատ ծանր է հացի և անասնակերերի վիճակը:[21]

Շուշի քաղաքում ստեղծված պարենային կոմիտեն (նախագահ՝ իրավաբան Ստեփան Մանդինյան) ջանում էր քաղաքը դուրս բերել ճգնաժամային պայմաններից: Մթերքներ ստանալու համար մտցվեց քարտային համակարգ, որից օգտվում էին հավասարապես թե չքավորները և թե ունևորները: Քաղաքի բնակիչներից հավաքվեց 200 հազար ռուբլի՝ Ջիվանշիրի գավառի հայկական Սարով գյուղից ցորեն գնելու համար: Սակայն այդ գումարը չկարողացան լրիվ օգտագործել:[22] Շուշի քաղաքի չքավորներին էժան գնով հաց մատակարարելու համար հայկական և մուսուլմանական թաղամասերում ստեղծվում են հանձնաժողովներ: «Փայլակը» 1917 թ. ապրիլի 2–ին հաղորդել է, որ հայերից կազմված հանձնաժողովը, որը գլխավորում էր Յայրապետ Մուսայելյանը, էժան գնով հաց էր մատակարարում 1500 հոգու: 1917 թ. գարնանը և ամռանը Ղարաբաղում ստեղծված տնտեսական ծանր պայմանները հանգամանորեն նկարագրել է Արամայիսը (Միսակ Տեր–Դանիելյան) հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին Խաչենի, Վարանդայի և Դիզակի գավառներից ստացած իր տպավորությունների մեջ:[23]

1917 թ. աշնանից դադարեցին գոյություն ունենալ Շուշիի քաղաքային և գավառական պարենավորման մարմինները: Թուրք-ազերիների քարոզչությունը մուսուլմաններին համոզում էր բոյկոտի ենթարկել արցախահայությանը, հարաբերությունները խզել նրանց հետ, հացահատիկ չվաճառել նրանց: Սակայն, մուսուլման աշխատավորներից ոմանք, անտեսելով վտանգը, «հարևան հայ գյուղացուն օգնելու համար... գաղտնաբար, հաճախ բեռներով հացահատիկ էին բերում հայերին, առանց որևէ հատուցում ակնկալելու»:[24]

Ղարաբաղում հասարակական–քաղաքական կյանքը շարունակում էր աշխուժացում ապրել: Առաջ են գալիս աշակերտական, ուսուցչական, արհմիութենական միություններ, արհեստավորների, զինվորների և բնակչության այլ խավերի ակումբներ: Ստեղծվում են նաև սպառողական և գյուղական կոոպերատիվ ընկերություններ: Շուշիում հիմնվում է ժողովրդական տուն, որը ղեկավարելու համար ընտրվում է մի մարմին հետևյալ կազմով՝ Ալեքսանդր Ծատուրյան (Ռուբենի), Յայկ Յովակիմյան, Յայրապետ Մուսայելյան, Ռուբեն Տեր–Գասպարյան և տիկին Ս. Զաքարյան:[25] Ժողովրդական տանը քաղաքի բնակչության համար սիստեմատիկ կազմակերպվում էին դասախոսություններ: Կազմակերպվում էին նաև միտինգներ և ցույցեր: Մարտի 26–ին մեծ ցույց տեղի ունեցավ Թոփխանայի հրապարակում, որի նախաձեռնողները եղան զինվորները: Ժամանակակիցը նկարագրել է. «Ժամը 12–ին Թոփխանայի հրապարակում հավաքվել էին համբարները իրենց դրոշակներով և ժողովրդի ահագին բազմություն, որոնք սպասում էին զինվորներին: Ժամը 12–ին երաժշտության նվագակցությամբ և «Մարսելյեզ» երգելով երեք կողմից հրապարակ մտան քաղաքում գտնված երեք վաշտերը: Բոլոր զինվորներն ու սպաները զարդարվել էին կարմիր նշաններով... Դետո զինվորների շարքը շարժվեց դեպի թուրքաց թաղամասը, ապա՝ դեպի այլոց մուտերքը: Վերջում երգվեց «Вечная память»:[26]

Ղարաբաղի գործադիր կոմիտեի կողմից ստեղծված հայ–թուրքական խառը կոմիտեն շրջում էր գավառներն ու գյուղերը, ստեղծում գավառային և գյուղական կոմիտեներ, որոնց անդամները կամ տանուտերեր էին ընտրվում, կամ էլ

հեղինակություն ունեցող անձնավորություններ: Այսպես՝ շրջակա յոթ գյուղերից Խանքենդ եկած պատվիրակները միաձայն տանուտեր են ընտրում Բալլուջա գյուղի (Այգեստան) բնակիչ, լեժենյան հալածանքների ենթարկված Ալեքսան Բալասյանին (Ալեքսան դային), որը 1905–1907 թթ. հայ–թուրքական ընդհարումների ժամանակ եղել է Համազասպի օգնականը: Նա հայտնի էր իր քաջությամբ և որպես հմուտ նշանառու: Ալեքսան դային բանակում ծառայել է 1897 թ. հուլիսի 24–ի Խանասուրի հայտնի ճակատամարտի ղեկավարներից Վարդանի հետ ու վերադարձել ավագ ենթասպայի աստիճանով:

Ղաքարի գործադիր կոմիտեն Ղարաբաղի հետ կապելու համար այնտեղ է ուղարկվում հատուկ հանձնաժողով:[27] Որոշ տեղերում պաշտոններից ազատվում են մի շարք նախկին պաշտոնյաներ, թարմացվում է թաղային կոմիտեների կազմը, նշանակում են նոր կոմիսարներ ու նրանց տեղակալներ:

Երկրամասում հրատապ խնդիր էր հողային հարցը: Այդ հույժ կարևոր հարցը, գրում է ժամանակակիցը, «մեր գյուղացիության... հին խնդիր է, երկար ու ձիգ, անհիշելի ժամանակներից ի վեր սպասում է յուր լուծմանը»: Ղարաբաղում «մի կողմից ավատական ազնվականության խոշոր հողատիրությունը և պետական հողերի հավաքումը, իսկ մյուս կողմից՝ գյուղացիության հողազրկությունը... և սակավահողությունը այն երկու հակադիր սոցիալական խմբավորումներն են, որոնք տարբեր տնտեսական պայմաններում են գտնվում և իրենց տարբեր աշխարհայացքներով բախվում են իրար դեմ»: Հեղինակը շեշտում է, որ Ղարաբաղում «հողերի ահագին մասը, քաղաքական իրավունքների ու տնտեսական շահերի ամբողջ ուժը կենտրոնացած է բեգերի ու մելիքների դասի ներկայացուցիչների ձեռքում, որոնց հանդեպ սակավահող, երբեմն իսկ հողազուրկ գյուղացիությունն օրհասական տնտեսական պայքար է մղում միշտ կաշկանդված, հալածված յուր իրավունքներում, յուր շահերում»:[28]

Հողային հարցը դժվար լուծելի էր ոչ միայն Արցախում, այլև Անդրկովկասի մյուս հայաբնակ շրջաններում: Անդրկովկասի հատուկ կոմիտեն բնակչությանն ուղղված կոչում պահանջում էր կարևոր ուշադրություն դարձնել մանավանդ հողային հարցին: Իսկ դրանում մեծ աշխատանք ունեին կատարելու հողային կոմիտեներն ու տեղական իշխանությունները:

ՂԳԿ իր նիստերում քննարկում էր քաղաքի և երկրամասի կյանքի հետ կապված հարցեր: Ապրիլի 14–ի նիստում, որին մասնակցում էր Գանձակի նահանգային գործադիր կոմիտեի անդամ Կուլինսկին, քննարկվում է բնակչությանը զինաթափելու հարցը: ՂԳԿ երկրամասի բոլոր իշխանություններին առաջարկում է «ամենաեռանդուն միջոցներ ձեռք առնել» հայտնաբերելու զենքի գաղտնի առևտրով զբաղվողներին, բռնագրավել բոլոր զենքերը, պատասխանատվության ենթարկել հանցագործներին: ՂԳԿ կոչ է ուղղում բնակչությանը և առաջարկում «ինքնակամ ետ դարձնել բոլոր զենքերը»: Առաջարկվում է զենք ունեցողներին «իսկույն զինաթափ անել և ենթարկել պատասխանատվության»: Քանի որ զենք հիմնականում տեղափոխվում էր Պարսկաստանից, որոշվում է ամրապնդել Պարսկաստանի հետ ունեցած սահմանը: Այս նույն նիստում, գավառական կոմիսար Լևոն Վարդապետյանը, հանդես գալով զեկուցումով, առաջարկում է գավառներում ևս կազմակերպել միլիցիա, որպեսզի հնարավոր լիներ պահպանել «ներքին անդորրությունը»:[29]

ՂԳԿ ուշադրության կենտրոնում էր ազգային հարցը: Կոմիտեն ի սկզբանե «նրբանկատ և չափազանց զգույշ քաղաքականություն դրդեցրեց հայ–թուրքական հարաբերության խնդրում»: Այդ զգույշ քաղաքականությունը, նշում էր «Փայլակը», արդարացված չէ և դա ազգային բաժանման միջոց է: Այդ ամենի հետևանք էր, որ ընտրված մի շարք պաշտոններ զբաղեցրել էին կալվածատերերից և բուրժուազիայից, որոնց ազդեցության տակ էին թուրք մասսաները:[30] Մուսուլմանները հլու–հնազանդ ենթարկվում էին մանավանդ մուսուլման հոգևորականությանը և կատարում նրանց բոլոր պահանջները:

ՂԳԿ ավելի արդյունավետ կգործեր, եթե նրա անդամների մեծամասնությունը չլինեին բեգեր ու նրանց «դասակարգային շահերի ջատագով–պաշտպաններ»: Կոմիտեն շարունակում էր մնալ «իր դասակարգային շահերի պաշտպանման մակարդակի վրա», և այն հանդես էր գալիս «իբրև արտահայտիչ Ղարաբաղի տիրող դասակարգի...»: Աշխատավորները ճիգեր էին թափում «ազատվելու իրենց շահագործող ազնվական–կալվածատերերի ու սրանց պնակալեզ պաշտպանների անկուշ խնամակալությունից»:[31] Շուշիի և մյուս բնակավայրերի չքավորները հաճախակի էին դիմում բողոքների, որոնք ուղղված էին տեղական իշխանությունների և տնտեսական ծանր պայմանների դեմ: «Փայլակը» հունիսի 29–ին հաղորդել է, որ երկու օր առաջ, հունիսի 27–ին, Շուշիի չքավոր բնակչությունը, հավաքվելով քաղաքային շուկայում, պատրաստվում էր ավերածություններ ու խանութները թալանելու, որը ժամանակին կանխվեց: Այդ նույն երեկոյան տեղի ունեցած Ղարաբաղի գործադիր կոմիտեի արտակարգ նիստը որոշեց նման երևույթներին վերջ տալու համար ամենից առաջ վերացնել հացի և պարենի ճգնաժամը, բարեփոխել գործադիր կոմիտեն, քաղաքային դուման, պարենային կոմիտեն և սրանց հարակից կազմակերպությունները:

Ղարաբաղի գործադիր կոմիտեն անկարող գտնվեց քաղաքը պարենով ապահովելու, երկրամասի շրջափակումը վերացնելու, անիշխանությունը և ծավալվող ավազակությունները վերացնելու գործում: Երկրամասի բնակչության զգալի մասը դժգոհ էր ՂԳԿ գործունեությունից և պահանջում էր այն լուծարել: Բոլշևիկյան «Նեցուկ», դաշնակցական «Ապառաժ» և այլ թերթեր այդ օրերին պահանջում էին երկրամասում խաղաղությունն ու անդորրը պահպանելու համար ամրապնդել դրկից ժողովուրդների՝ հայերի ու թաթարների կապերը, հնարավոր բոլոր միջոցները գործադրել և բնակչությանն ապահովել պարենով ու այլ անհրաժեշտ ապրանքներով:

Ժամանակավոր կառավարությունից դժգոհ արցախահայությունը ապագայի նկատմամբ հստակ պատկերացում չուներ: Դավիթ Տեր–Դանիելյանը (Դավիթ Անանուն) 1917 թ. ամռանը, լինելով հայրենի Զիվանշիրի գավառում, իր տպավորությունները հրապարակեց «Գործ» հանդեսում:[32] Այնտեղ ասված է, որ Արցախի գյուղացիները ռեալ իշխանություն չեն տեսնում, քաղաքական ազատությունները առանձին հարգանք չունեն նրանց աչքում, մինչդեռ «հողի ծարավը.. համակել է նրանց էությունը»: Գյուղացիները երազում էին սեփական հաց

36636

ունենալ, մինչդեռ ժամանակավոր կառավարությունը չէր շտապում լուծել հողի հարցը: Հողը, ինչպես նշվեց, արցախցիների համար կենսական նշանակություն ուներ: Արցախցին ստիպված էր աշխատել իր պապենական հողերին տեր դարձած եկվոր–քոչվորների համար, որոնք հեռու էին հողամշակման կուլտուրայից: Արցախի հարթավայրում գտնվող Խոնաշենի շրջանի Սկոբելևկա, Նիկոլաևկա, Կոտլերևկա, Կուրոպատկինո, ինչպես և ռուսական մյուս բնակավայրերի բնակիչները, պատմում է ժամանակակիցը, շրջակա մահմեդականների անընդհատ հարձակումներից փրկվելու համար ստիպված էին հեռանալ Ռուսաստան:[33] Թուրք ավազակները «շեն ու փարթամ ավանները մի քանի օրվա ընթացքում ավերեցին՝ տները քանդեցին և փայտեղենը փոխադրեցին իրենց գյուղերը, իսկ մնացածները վառեցին՝ հրի ու սրի ճարակ դարձրին ծաղկած ավաններն իրենց այգիներով ու պարտեզներով»: Նրանք «իրենց վայրագություններով ավանները օձերի և կարիճների բներ դարձրին և մարդաբնակ հսկայական տարածությունները վերածվեցին սարսափեցուցիչ անապատի»:[34] «Արևը» 1917 թ. սեպտեմբերի 21–ին հաղորդել է, որ Զանգեզուրի Բազարչայ կոչված ռուսական գաղութը ավազակներից փրկելու համար Շուշիից ուղարկվել է զինվորական ջոկատ: Թերթը նաև հաղորդել է, որ սկսել են հեռանալ Ասկերանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սունջինկա ռուսական բնակավայրի բնակիչները: Ղարաբաղի տարածքից հեռացած ռուսական գաղութների հողերը հայտարարվեցին արցախահայության սեփականություն, և քայլեր ձեռնարկվեցին մահմեդականների՝ այդ հողերի վրա բնակվելը կանխելու համար:

Մի փոքր ուշ, 1918–ի մարտ–ապրիլին, նման «մաքրագործումներ» կատարվեցին նաև Լենքորանում, Սալյանում, Մուղանի տափաստանում, Կուր գետի առափնյա տարածքում եղած ռուսական բնակավայրերում՝ Պետրոպավլովսկում, Վարանցովկայում, Դաշկովայում, Գալիցինոյում, ինչպես նաև Շամխորում, Նուխիում, Դերբենդում: Այդ«մաքրագործումը» կատարվում էր թուրքական էմիսարների մշակած ծրագրերով, որը ղեկավարում էին մուսավաթի տեղական կոմիտեները:[35]

Արցախում պարենային ճգնաժամը 1917 թ. գարնան վերջին և ամռանը ավելի է խորանում: Երկրամասի տնտեսությանը մեծ վնաս էր հասցրել, ինչպես նշվեց, երաշտը, մանավանդ Մարտակերտի և մյուս հացահատիկային շրջաններում: Գյուղացիները ստիպված ծախում էին իրենց ապրուստի հիմնական միջոց հանդիսացող անասունները: «Հորիզոնը» օգոստոսի 26–ին օրինակ է բերում, որ Խաչենի «20 գյուղերում բացառապես ոչինչ չի արված», գյուղացիները «չգիտեն ում դիմել սերմացու ձեռք բերելու համար»: Միտսարը Շուշիից հաղորդում էր, թե «քաղաքը ու գավառը իրար են նայում և հացի օգնություն խնդրում: Ավազակությունները, սպանությունները, թալանը մոռացված են» հաց չլինելու դիմաց:[36] Շուշիի բնակչությունից հավաքված գումարներով Ջիվանշիրում գնված հացահատիկը Շուշի չէր հասնում, որովհետև, վրդովված շարունակում է Միտսարը, «Խաչենագետի ափերին գրավման ենթարկվեց աղդամեցոց կողմից, պարզապես հափշտակեցին, վերցրին մեր դրամով գնված ցորենը, մեր գյուղացիների վրա կրկնակի ու եռակի գնով վաճառելով»: Ընդհանրապես, ամփոփում



է հեղինակը, «ծանր է կացությունը, հուսահատական, թե քաղաքում և թե գյուղում»:[37]

Երկրամասը շրջապատող մուսուլմանները օր օրի ակտիվանում էին: Նրանք աչք էին գցել հայերի բնակավայրերի և նրանց ունեցվածքի վրա: Ժամանակի մամուլում և արխիվային նյութերում բավականին տվյալներ կան այդ մասին: Արցախահայության նկատմամբ նրանց իրագործած գողությունները, մարդասպանությունները, անընդմեջ կրկնվող շրջափակումը ծանր հետևանքներ էին թողնում:

Ղարաբաղի գործադիր կոմիտեն փաստորեն մատնվել էր անգործության: Արդեն յոթանասուներկու անդամ ունեցող այդ մարմինը ի վիճակի չէր նման ծայրահեղ պայմաններում հավաքվել և որևէ կոնկրետ հարց վճռել: Այդ օրերին Շուշիի մուսուլմանական ազգային կոմիտեի որոշմամբ քաղաքի մուսուլմանական և հայկական թաղամասերից հավաքվեց հարյուր հազար ռուբլի՝ ճանապարհների վրա վխտացող ավազակային խմբերի դեմ պայքարելու համար:

Այդպիսի մի վճռորոշ ժամանակաշրջանում բարձրանում է Արցախի առաջադեմ ուժերի պատասխանատվությունը: Երբ ամբողջատիրական վարչակարգը տապալվեց, և Ռուսաստանը բռնեց ժողովրդավարության ուղին, Արցախը հետևեց նրան: Երկրամասի առաջադեմ ուժերը գտնում էին, որ սկսված այդ պայքարը հաղթանակով ավարտելու համար նախ և առաջ պետք է բոլոր ուժերը միավորել, և ապա՝ ամրապնդել կապերը հարևան ժողովուրդների հետ: Այդ օրերին «Մշակը» գրել է. «Թուրքերի և հայերի հարաբերությունները, ըստ նախկինի, ընթանում են շատ համերաշխ և նույնիսկ մտերիմ»:[38] Ցավոք, դա կարճատև էր: Թուրք ազգայնամոլները, մեծ ազդեցություն ունենալով խավարի մեջ տառապող մահմեդականների վրա, կարողացան նրանց ոտքի հանել հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների դեմ, սեպ խրել նրանց միջև և կազմակերպել նոր ոճիրներ:

Արցախում քաղաքական ուժերի ակտիվացումը հանգեցրեց նրան, որ ընդհանուր մթնոլորտը հետզհետե փոխվեց: Հայ հեղափոխական դաշնակցության, սոցիալ–ժողովրդավարների, սոցիալիստ–հեղափոխականների և մյուս քաղաքական կազմակերպությունների ու խմբերի հետևողական ակտիվ գործունեությունը տվեց դրական արդյունքներ: Փետրվարյան հեղափոխությունից հետո ինչպես մյուս վայրերում, այնպես էլ Արցախում, միավորվեցին բոլշևիկներն ու մենշևիկները: Ստեղծվել էր այն կարծիքը, թե իբր հեղափոխության հաղթանակով և ամբողջատիրական վարչակարգի քայքայումով վերացվել են մենշևիկների և բոլշևիկների միջև գոյություն ունեցող տարաձայնությունները: Նույնիսկ փորձ դրվեց Ղարաբաղի բոլշևիկներին և մենշևիկներին միավորել մեկ կազմակերպության մեջ: «Փայլակը» ապրիլի 23–ին հաղորդել է, թե մոտ օրերս Շուշիում կկազմակերպվի տեղական սոցիալ–դեմոկրատական կուսակցության անդամ մի քանի «ինտելեգենտների ձեռներեցությամբ սոցիալ–դեմոկրատական մարմին, որ սկսելու է մոտ ապագայում ակտիվ քաղաքական գործունեություն Ղարաբաղի շրջանում»: Շուշիում ստեղծվեց բոլշևիկ–մենշևիկների միացյալ կազմակերպություն՝ ժամանակավոր կոմիտեով: Սակայն երկու–երեք ամսվա

համատեղ աշխատանքը ցույց տվեց, որ բոլշևիկների և մենշևիկների միջև տեսական ու գործնական հարցերի վերաբերյալ տարաձայնություններն ավելի են խորանում, մանավանդ սոցիալիստական հեղափոխության զարգացման հեռանկարների հարցում: Հետևապես, անջատումը դարձավ անխուսափելի: Հուլիսի վերջին Շուշի քաղաքում տեղի ունեցած մի շարք ժողովներում բոլշևիկները բանաձև ընդունեցին մենշևիկներից կապերը լրիվ խզելու վերաբերյալ և ստեղծեցին իրենց ինքնուրույն ՌՍԴԲ(բ)Կ Շուշիի կազմակերպությունը: Ընտրվեց կոմիտե՝ Ալեքսանդր Ծատուրյանի գլխավորությամբ:[39]

Նոր իրադարձություն էր բոլշևիկների Շուշիի կոմիտեի օրգան «Նեցուկ» թերթի հրատարակումը, որի առաջին համարը լույս է տեսել 1917 թ. օգոստոսի 18–ին: Ընդամենը տպագրվել է ութ համար: Յոթ համարը խմբագրել է Աշոտ Հովհաննիսյանը («Ներիակ» ստորագրությամբ), իսկ վերջին՝ ութերորդ համարը լույս է տեսել հոկտեմբերի 20–ին, Հակոբ Կամարու խմբագրությամբ: «Նեցուկը», չնայած կարճատև գոյությանը, որոշ դեր խաղաց երկրամասի հեղափոխական ուժերը համախմբելու, Ղարաբաղի ներքին և արտաքին կյանքի իրազեկման, հակահեղափոխական ուժերի քննադատության, հեղափոխական ուժերի պայքարն ընդհանուր նպատակին ուղղելու գործում: Թերթի առաջին համարի առաջնորդողում ասված է, որ այն ասպարեզ է իջնում պաշտպանելու բանվորության և սեփականազուրկ գյուղացիության շահերը, «դասակարգային գիտակցության կոչելու ժողովրդական ճնշված խավերին», այն «կռվի է կոչված բուրժուական, մանր բուրժուական և կալվածատիրական շահերի քաղաքականություն վարող հասարակական շահերի դեմ, որոնք «սոցիալիստ» և «հեղափոխական» անվան տակ մթագնում են սեփականազուրկ դասակարգի գիտակցությունը, բորբոքում ազգային կրքերը, պարարտ հող պատրաստում մութ խորշերից գլուխ հանող ռեակցիոն ետադեմ ուժերի համար»:[40]

Այդ ժամանակաշրջանում արցախահայության համար ամենաhրատապ խնդիրը, ինչպես ասվել է, պարենավորման հարցն էր: Գարնանից մինչև աշնան սկիզբը տեղական իշխանությունները շատ քիչ բան էին արել պարենավորման հարցը լուծելու համար: «Նեցուկը» հարց է բարձրացնում պարենավորման գործի կազմակերպումը հանձնել խորհուրդներին: Թերթը, անդրադառնալով Վարանդայի երկրորդ գավառամասում ստեղծված ընդհանուր վիճակին, գրում է, որ այնտեղ «մթերքների ստացումն ու բաժանումը կատարվում է տեղական վաշխառուների ձեռքով, որոնք, բնականաբար, չէին կարող անշահասիրությամբ կատարել գործը: Հացահատիկի, ալյուրի և շաքարի փողերը հավաքվում են վաշխառուական սկզբունքներով: Ունևորները մտցնում են իրենց փողերը այն պայմաններով, որ ամեն մի շրջանառության համար 7–8 % օգուտ ստանան, որը տարեկան կկազմի 70–80 %: Նույն վիճակում էին նաև մյուս գավառամասերը:[41] Հետևապես, եզրակացնում է թերթը, անհրաժեշտ է արմատական վերափոխումներ կատարել: Պարզվում է, որ ոչ բոլոր քաղաքական կուսակցություններն ու կազմակերպություններն էին այդ հարցում կանգնած սկզբունքային դիրքերի վրա: Օրինակ՝ էսէռները, որոնք ազդեցություն ունեին գյուղացիության վրա և հանդես էին գալիս նրա շահերի պաշտպանությամբ, «հողի սոցիալիզացիայի»



իրենց ծրագրով փորձում էին իրենց կողմը քաշել գյուղացիությանը: Հուլիսի վերջերին Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական միության կենտրոնի կողմից Շուշի գործուղված էսէռական կուսակցության ներկայացուցիչ Արշակ Զաքարյանը փորձում էր Ղարաբաղում կազմակերպել «գյուղացիական միություններ»: Սակայն էսէռներն այդ հարցում ուշացել էին, որովհետև Հայ հեղափոխական դաշնակցությունը գյուղացիական միություններ կազմակերպելում ձեռնամուխ էր եղել դեռևս մայիսի սկզբին: ՀՀԴ հանձնարարությամբ Աբրահամ Կիսիբեկյանի և Միքայել Արզումանյանի ջանքերով մայիս և հունիս ամիսներին «գյուղացիական անկուսակցական միություններ» էին կազմակերպվել Վարանդայի և Խաչենի մի շարք գյուղերում: Այնուամենայնիվ, այդ «միությունները» կոնկրետ քայլեր չձեռնարկեցին հողային հարցի լուծման ուղղությամբ: Այդ հարցում գործնական առաջարկություններով հանդես եկան սոցիալ–դեմոկրատները: Նրանք պահանջեցին անհապաղ վերացնել կալվածատիրական, եկեղեցական, վանքապատկան, ուդելային հողատիրությունը: Էսէռները դեմ էին կալվածատիրական հողերի «ինքնակամ գրավումներին» և Ղարաբաղի գյուղացիներին խորհուրդ էին տալիս սպասել մինչև Սահմանադիր ժողովի կողմից օրենքի ընդունումը: Ստացվում է, որ թուրք կալվածատերերը պետք է շարունակեին արցախահայության շահագործումը և նրան պահեին ստրկական վիճակում: Սովորվելու շեմին կանգնած Արցախի բնակչությունը, առաջին հերթին գյուղացիությունը, հիասթափվեց էսէռներից և դուրս եկավ նրանց ազդեցությունից:[42]

Արցախում գործող քաղաքական ուժերից ուրույն տեղ ուներ ՀՀԴ Շուշիի կոմիտեն, որը կրում էր «Ապառաժ» անունը: Այն նշանակալից գործ է կատարել մանավանդ 1905–1906 թթ. Արցախում տեղի ունեցած հայ–թաթարական ընդհարումների ժամանակ: «Ապառաժը» կարողացավ կազմակերպել արցախահայության ինքնապաշտպանությունը և արժանի հակահարված հասցնել թուրք ազգայնամոլներին: Ստոլիպինյան բռնությունների և չեժենյան հալածանքների տարիներին նրա տասնյակ անդամներ ենթարկվեցին հետապնդումների ու տաժանակրության: Նրա գործունեությունը սկսեց ակտիվանալ առաջին աշխարհամարտի տարիներին և Փետրվարյան հեղափոխությունից հետո: Ապառաժի պաշտոնական օրգան «Ապառաժը» (1917–1919), որը խմբագրում էր ՀՀԴ Շուշիի կոմիտեի քարտուղար Հայրապետ Մուսայելյանը, էական դեր խաղաց արցախահայության ազատագրական պայքարի կազմակերպման գործում: Եղիշե Իշխանյանը վկայում է, որ երբ 1917 թ. հուլիսին Պետրոգրադից վերադառնում է Շուշի, տեսնում է տեղում ՀՀԴ Շուշիի ԿԿ–ի անդամների մեծամասնությունը՝ Հայրապետ Մուսայելյան, Հարություն Թումյան, Անուշավան Տեր–Միքայելյան, Կալվածատեր Ավետիսյան, Գրիգոր Ղարագյոզյան և Ար. Բաղդասարյան: Այդ նրանց ջանասիրությամբ էին վերակազմվել բոլոր արհեստակցական միությունները, որոնց անդամների ընդհանուր թիվը հասել էր 800–ի:[43]

Այդ օրերին Շուշիում լայն պայքար էր սկսվել արհեստակցական միությունների վարչության և դպրոցների հոգաբարձության միջև: Վարչությունը ձգտում էր իր տնօրինության տակ վերցնել դպրոցների ղեկավարումը: Սակայն հոգաբարձուները չէին համաձայնվում: Նրանց պաշտպանում էին բոլշևիկները, մեն-

շնիկները և էսէռները։ Քանի որ հոգաբարձական մարմինները ընտրված էին ժողովրդի կողմից և ստանում էին նրա աջակցությունը, ուստի արհեստակցական միությունների վարչությունը, որը գտնվում էր դաշնակցական կուսակցության հովանավորության տակ, նպատակահարմար գտավ փոխել պայքարի ձևը։ Որոշվեց եկեղեցական կանոնադրության համաձայն հրավիրել եկեղեցական–ծխական ժողովներ, ընտրել պատգամավորներ և նրանց ժողովում ընտրել հոգաբարձական մարմիններ Թեմական, Ղուկասյան և Մարիամյան դպրոցների համար։ Քանի որ պատգամավորների 85 տոկոսից ավելին ընտրվել էին դաշնակցությունից, հետևապես «հոգաբարձական մարմիններն էլ նույն պատկերն ունեցան»։[44]

1917 թ. ամռանը և աշնանը քաղաքական կազմակերպությունների միջև պայքարն առանձնապես սաստկանում է խորհուրդների ընտրության և հունիս–հուլիս ամիսներին տեղի ունեցած վերընտրությունների, Քաղաքային դումայի, ինչպես և Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ։ Բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների միասնական խորհրդի ստեղծման հարցը դարձել էր խիստ հրատապ։ Քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների համառ աշխատանքի հետևանքով հունիսի սկզբներին ստեղծվեց բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների Շուշիի խորհուրդը, որի կազմի մեջ մտնում էին տարբեր ազգությունների և բնակչության տարբեր խավերի ներկայացուցիչներ։ Խորհուրդը կոչով դիմում է Շուշիի բնակչությանը, որում ասված է. «Շուշի քաղաքում ստեղծվել է հեղափոխական մարմին՝ զինվորների, բանվորների և գյուղացիների հեղափոխական խորհուրդ, որի նպատակն է ամրապնդել հեղափոխության նվաճումները և այն հասցնել ժողովրդական հանրապետության իրագործմանը, ինչպես և բոլոր ուժերով աջակցել ու պաշտպանել ժողովրդավարության շահերը»։ Խորհուրդը քաղաքացիներին կոչ է անում «համախմբվել խորհուրդների շուրջը» և նրանց «պաշտպանել թե բարոյապես և թե նյութապես»։[45]

Սակայն այդ խորհուրդը, իր մանրբուրժուական մեծամասնությամբ, իրեն չարդարացրեց և սկսեց անվճռականություն հանդես բերել հեղափոխության առաջ կանգնած արմատական հարցերի վերաբերյալ։[46] Ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ «խորհուրդների դերը ընդհանուր քաղաքականության մեջ զրոյի է հասել»։[47] Հեղափոխությունից հետո հանդես էին եկել նաև մաքուր բանվորական խորհուրդներ, որոնք գործում էին վճռական։ Այդպիսի խորհուրդներից էր Ղարաբաղի Ղաթարի պղնձի ձեռնարկությունում կազմված բանվորական խորհուրդը։[48]

1917 թ. ամռանը և աշնանը ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, եբ քաղաքական ուժերին միավորելը և նրանց գործունեությունը մեկ նպատակի ուղղելը հանդիպում էր լուրջ խոչընդոտների։ Իսկ այդ նպատակը հետևյալն էր. ցարական բյուրոկրատիան «բաժանիր, որ տիրես» քաղաքականության իրագործման նպատակով Անդրկովկասում կատարել էր այնպիսի վարչական բաժանում, որի հետևանքով հայկական մի շարք գավառներ հայտնվել էին ոչ հայաշատ նահանգների կազմում։ Ամբողջովին անարդարացի էր, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և այլ հայկական շրջաններ մտնում էին Ելիզավետպոլի նահանգի մեջ։ Դեռ ավելին, Ղարաբաղի արևելյան գավառները միացվել էին նահանգի մահմեդական բնակչություն ունեցող գավառներին։ Արցախի քաղաքական ուժերի կարևոր խնդիրներից էր այդ անհամապատասխանությունը վերացնելը։ Թերևս դա էր հիմնական պատճառը, որ ժամանակակիցը չէր տեսնում «որևէ խմբակցությունների համերաշխ, միահամուռ գործունեությունը»։[49]

Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Արցախում, բուրժուակալվածատիրական բլոկը ձգտում էր երկրամասի ամբողջ իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում, պահպանել նախկին պետական բյուրոկրատական ապարատը, կանխել հեղափոխության հետագա զարգացումը և քար նետել Արցախում ընթացող ժողովրդավարության զարգացման ճանապարհին։ Հենց դա ի նկատի ուներ, երբ ժամանակակիցը ցանկություն է հայտնում. «Քանի շարժումը հեղափոխության դեմ է, հեղափոխությունն է վտանգված, պետք է համախմբվեն միայն հեղափոխական, դեմոկրատ տարրերը, կուսակցությունները։ Կառավարությունն այժմ պետք է լինի կատարյալ դեմոկրատական, միմիայն նա կարող է կռվել ռեակցիայի դեմ, փրկել հեղափոխությունը»։[50]

Ղարաբաղի հայ և մուսուլման առաջադեմ ուժերը ձգտում էին ժողովրդին հեռու պահել ազգամիջյան ընդհարումներից և նրանց պայքարն ուղղել ժողովրդավարության հաստատման և ամրապնդման գործընթացի իրագործմանը։ Դրանում որոշ դրական դեր է խաղում քաղաքում և երկրամասի մի շարք բնակավայրերում հանրահավաքների և ցույցերի կազմակերպումը, որի ժամանակ հայերն ու մահմեդականները բարեկամության օգտին ճառեր էին արտասանում։ Մի այդպիսի խոշոր հանրահավաք տեղի ունեցավ սեպտեմբերի 10–ին՝ ռեալական ուսումնարանի հրապարակում։ Ճառախոսները կոչ էին անում ամրապնդել դրկից ժողովուրդների բարեկամությունը և չկրկնել անցյալի սխալները։ Շեշտվում էր, որ դրանում կարևոր դեր ունեն քաղաքական ուժերն ու խորհուրդները։

Իրոք, Արցախի բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդների անելիքները զգալիորեն մեծ էին։ «Նեցուկ», «Ապառաժ», «Փայլակ» և այլ պարբերականներ առաջ են քաշում ԴԳԿ լուծարման և նրա փոխարեն խորհուրդների գործունեության ծավալման խնդիրը։ «Նեցուկը» պահանջում է վերանայել Շուշիի բանվորների, զինվորների և գյուղացիների խորհրդի կազմը, ստեղծել երկրամասի «հեղափոխական ժողովրդական կենտրոնական մարմին», որի հիմնական նպատակը պետք է լիներ պայքար մղել «տիրող դասակարգի դեմ՝ ընդլայնելու և խորացնելու հեղափոխության սոցիալական և քաղաքական բովանդակությունը»։ Բոլշևիկների օրգանը վստահություն է հայտնում, որ խորհուրդները իրենց նպատակին կարող են ծառայել միայն այն դեպքում, եթե «նրանց մեջ ներկայացված կլինեն հասարակական այն խավերը, որոնք շահագրգռված են հեղափոխության արմատական ընթացքով, հնարավորություն և կամք կարող են ունենալ իրենց ձեռքն առնելու հեղափոխության լիակատար հաղթության համար անհրաժեշտ դասակարգային կռվի կազմակերպման գործը»։[51] Թերթի խմբագիր Աշոտ Հովհաննիսյանը «Շուշիի բանվորական ներկայացուցիչների

խորհրդի վերակազմության խնդիրը» վերտառությամբ հոդվածում թերահավատություն է արտահայտում բանվորների, զինվորների և գյուղացիների Շուշիի խորհրդի նկատմամբ՝ «շնորհիվ այն դիրքի, որ գրավել է նա դեպի Դաշնակցությունը», որովհետև, բացատրում է բոլշևիկների ներկայացուցիչը, գործելով բանվորական խորհրդի ներսում իբրև «դաշնակցականները աշխատում են ուժեղացնել նրա մանր բուրժուական կազմը՝ ի հաշիվ պրոլետարական և կիսապրոլետարական ներկայացուցչության»:[52]

Ղարաբաղի բոլշևիկները սկզբում չէին համագործակցում խորհուրդների հետ: Սակայն հետո, 1917 թ. ամռանը, փոխում են իրենց վերաբերմունքը և ակտիվորեն մասնակցում հուլիսի 30–ին տեղի ունեցած խորհուրդների վերընտրություններին: Խորհուրդների վերընտրությունների ժամանակ խոշոր հաղթանակ է տանում Հայ հեղափոխական դաշնակցությունը: Բոլշևիկները դաշնակցության այդ հաղթանակը բացատրում էին նրանով, որ իբրև հայ բանվոր–արհեստավորների մի խոշոր մասը չէր հասկանում իր դասակարգային շահերը և հավատում էր դաշնակցության մանրբուրժուական գաղափարախոսությանը: Բացի այդ, Շուշի քաղաքի մահմեդականների մեծամասնությունը մուսավաթականների և մուսուլման հոգևորականների հորդորանքներով բոյկոտում են խորհուրդների վերընտրությունները:[53]

Բոլշևիկները պահանջում էին վերակառուցել նորընտիր խորհուրդները, որոնք ժողովրդավարական մարմիններ էին: Նրանք մյուս քաղաքական ուժերին զգուշացնում էին, որ եթե իրենց պահանջը չկատարվի, ապա իրենք կհեռանան խորհուրդներից: Մինչդեռ դաշնակցականները «ոչ մի կերպ չէին կամենում հաշտվել ս.դ.–ների պահանջի հետ»:[54] Նրանք հայտարարում են, թե իրենք դեմ չեն խորհուրդների վերակազմությանը, միայն թե «բանվորական աշխատանքից» օգտվող վարպետների ներկայացուցիչները չպետք է ընտրվեն ղեկավար մարմիններում: Այնուամենայնիվ, բոլշևիկները, բլոկ կազմելով ձախ ուժերի հետ, համաձայնվում են քվեարկության դնել այդ առաջարկությունները: Օգոստոսի 17–ին տեղի ունեցած վերընտրված խորհուրդների ընդլայնված նիստում երկու առաջարկություններն էլ դրվում են քվեարկության: Բոլշևիկների առաջարկության օգտին քվեարկում են 18 հոգի, իսկ դաշնակցականների՝ 11:[55] Միևնույն ժամանակ ընտրվում է հինգ հոգուց բաղկացած կազմակերպչական հանձնաժողով, որը պետք է մշակեր և իրականացներ խորհուրդների վերակազմության հետ կապված անհրաժեշտ միջոցառումներ: Օգոստոսի 23–ին կայացած հանձնաժողովի նիստում բոլշևիկների առաջարկությամբ որոշվում է ստեղծել «անկուսակցական ինտերնացիոնալ բանվորական արհմիություն»:[56] Բոլշևիկների մեկնաբանությամբ՝ արհմիության ինտերնացիոնալ ձևը հնարավորություն էր տալիս բոլոր ազգերի տարբեր մասնագիտության բանվորներին միավորվել, պայքարն ուղղել հակահեղափոխական ուժերի դեմ և արագացնել ժողովրդավարական փոփոխությունները ոչ միայն քաղաքում, այլև ամբողջ երկրամասում: Հանձնաժողովը որոշում է նոր արհմիության մեջ ընդունել քաղաքի բոլոր բանվորներին, այդ թվում՝ տներում, հասարակական և պետական հիմնարկություններում աշխատող տեխնիկական աշխատակիցներին, արտադրության գործիքներից զուրկ բանվոր–արհեստավորներին, օրավարձով աշխատող որմնադիրներին, հյուսներին, ներկարարներին և այլն: Փաստորեն, բոլշևիկների և դաշնակցականների միջև տեղի ունեցած պայքարում՝ թե ում համախմբել բանվոր, ավարտվեց բոլշևիկների տեսակետի հաղթանակով:

Այդ օրերին Պետրոգրադում տեղի ունեցած կոռնիլովյան խռովությունը դատապարտող հանրահավաքներ և ցույցեր տեղի ունեցան նաև Շուշի քաղաքում ու երկրամասի մի շարք բնակավայրերում: Սեպտեմբերի10–ին տեղի ունեցած միտինգային հանրահավաքում ճառերով հանդես եկած մենշևիկ Լևոն Վարդապետյանը, բոլշևիկներ Փառանձեմ Կնունյանցը, Յակոբ Կամարին և զինվորականների ներկայացուցիչը երկրամասի աշխատավորներին կոչ են անում ակտիվորեն մասնակցել հակահեղափոխական ուժերի դեմ տարվող պայքարին և չենթարկվել չգնալ սադրանքներին:[57] Կոռնիլովշչինան խիստ դատապարտեցին «Նեցուկ»-ը, ինչպես և բոլոր ձախ ուժերի տպագիր մամուլը: Սեպտեմբերի 2–ին տեղի ունեցած Շուշիի բոլշևկյան կազմակերպության ընդհանուր ժողովը, քննարկելով քաղաքական դրության մասին Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը, հանգեց հետևյալին.

1. երկրամասի ամբողջ իշխանությունը պետք է անցնի վերակազմվելիք հեղափոխական խորհուրդներին և կոմիտեներին,
2. ամեն աջակցություն ցույց տալ Շուշիում վերակազմվող բանվորների, գյուղացիների և զինվորների խորհուրդներին՝ նկատելով այդ խորհուրդը որպես գավառական իշխանության խորհուրդ,
3. քաղաքի հեղափոխական կազմակերպությունների հետ միասին հրավիրել ժողովրդական հանրահավաք՝ բացատրելու քաղաքական պահի նշանակությունը:[58]

Սեպտեմբերի 6–ին վերսկսվում է Շուշիի նորընտիր խորհրդի նստաշրջանը, որը ամսի 9–ի նիստում ընտրում է նախագահության նոր կազմ. նախագահ՝ Յակով Քալանթաձե, տեղակալ՝ Աշոտ Հովհաննիսյան, քարտուղար՝ Ռուբեն Շահնազարյան և անդամներ՝ Հաջիև ու Բոսմըկ: Այդ նույն օրը դռնփակ նիստում ընդունվում է Սարգիս Համբարձումյանի առաջարկած բանաձևը, որտեղ ասվում է, որ բանվորների և զինվորների խորհուրդը սկսում է «հեղափոխական ժողովրդավարության գործը», հետևապես, այն «թիկունքով պետք է դարձած լինի դեպի գործադիր մարմինը», իսկ երեսով՝ դեպի «հեղափոխական ժողովրդավարությունը»: Խորհուրդը պետք է անհաշտ պայքար մղի հակահեղափոխական ուժերի դեմ, և նորընտիր նախագահությունը պետք է «հսկողություն ունենա քաղաքի և գավառի հակահեղափոխական բոլոր արտահայտությունների վրա և ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով կռիվ սկսի նրանց դեմ»:[59]

1917 թ. ամռան վերջին և աշնան սկզբին ավելի է ակտիվանում ժողովրդական համալսարանի գործունեությունը, որը տեղավորված էր Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցի 280–300 տեղանոց դահլիճում: Այստեղ դասախոսություններ էին կարդում բոլոր քաղաքական ուժերի և հոսանքների ներկայացուցիչները: Քանի որ ունկնդիրների թիվը հետզհետե ավելանում էր, ՅՅԴ կոմիտեն վարձում է ռեալական ուսումնարանի ակումբը, որը տեղավորում էր ա-

վելի քան 500 հոգի: Քաղաքի շուրջ 400–500 վաճառականներ ու արհեստավորներ կազմում էին կադետական կուսակցության զանգվածը: Նրանց հավաքատեղին էր բարեգործական ընկերության ընթերցասրահը:[60] Այդ հավաքներում հիմնականում քննարկվում էին երկրամասի հետ կապված այս կամ այն հարցերը, արվում առաջարկություններ և դիմում գործնական քայլերի:

1917 թ. սեպտեմբերի 29–ից մինչև հոկտեմբերի 13–ը Թիֆլիսում տեղի ունեցած Հայոց ազգային համախորհրդակցությանը մասնակցեց նաև Արցախ–Ղարաբաղի պատգամավորությունը՝ Միքայել Ղարաբեկյան (ս.դ., թեմական դպրոց), Պետրոս Զաքարյան (ս.դ., քաղաքային ինքնավարություն), Ղազար Տեր–Ղազարյան (ս.դ., քաղաքային ինքնավարություն), Հրանտ Բահաթրյան (անկուսակցական, կոոպերատիվների կողմից) և Հայկ Հովհաննիսյան (դաշնակցական, Մարիամ Ղուկասյան դպրոց): Համախորհրդակցությանը նախորդած ժամանակաշրջանում Արցախի քաղաքական ուժերը լայնորեն քննարկում էին համախորհրդակցությանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցը: Պայքարը սուր էր մանավանդ բոլշևիկների և դաշնակցականների միջև: Ընդհանուր վիճաբանությունների ժամանակ, եթե պարենավորման և խորհուրդների վերակառուցման հարցերի վերաբերյալ բոլշևիկների տեսակետը ճիշտ էր, ապա համախորհրդակցությանը մասնակցելու հարցում նրանք խուսափեցին համազգային խնդիրներից: Նրանց համար ընդունելի էին միայն բանվորական հարցը և դասակարգային կռիվը: Արցախի բոլշևիկների օրգան «Նեցուկը», դեռևս օգոստոսի 24–ին դեմ արտահայտվելով նախատեսված ազգային համագումարի ընտրակարգին, գրում էր. «...գավառում ստեղծված տնտեսական ու քաղաքական ճգնաժամային պայմանների մեջ հնարավորություն չկա ենթադրել, որ գյուղացին ցանկություն կունենա մասնակցել մի համագումարի, որի վճիռները դեկլարատիվ նշանակություն պիտի ունենան և նույնիսկ մասնակցել ցանկանալու դեպքում նույն պայմանների շնորհիվ հնարավորություն չի ունենա կանոնավոր ծանոթանալու պայքարող կուսակցությունների պլատֆորմներին և իր ձայնը տալու իր շահերի գիտակցությամբ»: Թերթը միևնույն ժամանակ հիշեցնում է, որ ՌՍԴԲԿ Շուշիի կոմիտեի դեռևս հուլիսի 24–ին տեղի ունեցած նիստը վճռել է հրաժարվել «որևէ մասնակցություն ունենալուց այդ համագումարի ընտրություններին Շուշվա ընտրական շրջանում՝ գտնելով, որ նման պայմաններում ընտրված համագումարները չեն կարող լինել ժողովրդական ցանկությունների արտահայտություն, այլ՝ պատահական մարդկանց խորհրդակցություն»: Բոլշևիկների այդ «մարգարեական կանխատեսումը» ամփոփվեց թերթի սեպտեմբերի 28–ի համարում տպագրված Ներիակի «Ազգային համախորհրդակցություն» վերատառությամբ հոդվածում: Հեղինակը խոսելով առաջիկա խորհրդակցության բնույթի, խնդիրների, խորհրդակցությանը մասնակցող կուսակցությունների դերի ու խնդիրների մասին, ազգային համաժողովը համարում էր «...հայ կղերականության, վաճառականության և մանր բուրժուազիայի ներկայացուցչություն»: Նա հայտարարում է. «հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան չի կարող ժամավաճառ լինել մի խորհրդակցության մեջ, որի նպատակն է ի մի խմբել անպատասխանատու տարրերին և հանուն հայ ժողովրդի՝ «համաձայնություն»



կնքել ինչ–ինչ մութ ու պղտոր խնդիրների շուրջը: Նրանք չեն կարող և ոչ մի խնդրում համերաշխ լինել ոչ հայ կաթողիկոսի, ոչ հայ վաճառականության, ոչ հայ խմբապետների և ոչ իսկ հայ «սոցիալիստների» հետ: Մեր ընկերները պետք է բոյկոտի ենթարկեն ազգային համախորհրդակցությունը և մերկացնեն հայ բանվորության առաջ ազգային այդ կատակերգության համաժողովրդական բովանդակությունը»:

Հակառակ բոլշևիկների այդ սնանկ տեսակետի և պահանջների, Հայ հեղափոխական դաշնակցությունը գտնում էր, որ պետք է մասնակցել Հայոց ազգային համախորհրդակցությանը: Արցախ–Ղարաբաղի դաշնակցականները լիովին պաշտպանում էին իրենց կուսակցության այդ դիրքորոշումը: Դեռևս հուլիսի 16–ին «Ապառաժը» «Ազգային ժողով (համագումար)» վերտառությամբ ծավալուն հոդվածում (հեղինակ՝ Պլեբեյ) խոսելով Ռուսաստանի մի շարք քաղաքներում համանման ժողովներ հրավիրելու մասին, հարց է դնում այդպիսիք հրավիրել նաև հայության շրջանում: Նույն թերթը օգոստոսի 10–ին հաղորդել է, որ հուլիսի 23–ին Դաշբուլաղ (Քարադբյուր) գալով Պողոս Մկրտչյանը, հավաքել է գյուղի կոմիտեի անդամներին, խոսել «Թիֆլիսում գումարվելիք ռուսահայ ազգային ժողովի մասին, բացատրելով ժողովի ծրագիրն ու նշանակությունը, առաջարկելով պատրաստել հասարակությանն այդ ընտրություններին»: Երկրամասի գրեթե բոլոր բնակավայրերում անց են կացվում համանման ժողովներ և որոշում ակտիվորեն մասնակցել Հայոց ազգային համախորհրդակցությանը:

Մոտենում էին քաղաքային ինքնավարության (դումա) վերընտրությունները և Սահմանադիր ժողովի ընտրությունները: Նախընտրական քարոզչությանը մասնակցում էին բոլոր քաղաքական ուժերը: Պետք է նախօրոք ճշտվեին և արձանագրվեին քվեի իրավունք ունեցողների անուն–ազգանունները: Դրան մասնակից են դարձնում թեմական, ռեալական և քաղաքային դպրոցների բարձր դասարանների աշակերտներին և մտավորականությանը: Քաղաքային ինքնավարության ընտրությունները նշանակված էին հոկտեմբերի 22–ին: Առաջարկվում է չորս ցուցակ, ըստ, որում առաջին ցուցակը պատկանում էր հայ–թուրքական բլոկին, երկրորդը՝ սոցիալ-դեմոկրատական մեծամասնականներին և ինտերնացիոնալ–փոքրամասնականներին, երրորդը՝ սոցիալ-դեմոկրատական փոքրամասնություններին և սոցիալիստ հեղափոխականներին, չորրորդը՝ հայ հեղափոխական դաշնակցությունը: Չորս ցուցակներում մտցված էին 97 հոգու անուն:[61] Նախապես կատարված վիճակագրության համաձայն, ընտրական իրավունք ունեցողների թիվը կազմում էր մոտ 13 հազար հոգի, որից հայեր՝ մոտ վեց հազար, թուրքեր՝ մոտ յոթ հազար: Ընտրությունները տեղի են ունենում նշանակված օրը: Հայերից ընտրություններին մասնակցել են 3000 հոգի, թուրքերը՝ գրեթե բոլորը: Քաղաքի ինքնավարության անդամներ ընտրվեցին 54 հոգի, որից 27–ը՝ թուրքեր, 12 հոգի՝ դաշնակցականներ, 12 հոգի՝ կադետներ, մեկական հոգի՝ էսէռ, մենշևիկ և բոլշևիկ:[62] Դումայի առաջին նիստը տեղի է ունենում դեկտեմբերի 2–ին, որին մասնակցում է 39 պատգամավոր: Քաղաքագլուխ է վերընտրվում Գերասիմ Իսահակի Մելիք–Շահնազարյանը: Դումայի ղեկավար կազմում բոլշևիկները, էսէռները և մենշևիկները ոչ մի տեղ չեն ստանում: Աբրահամ Կիսի-

բեկյանը նշում է, որ եթե Շուշիում ընտրապայքարում հանդես էին գալիս բոլոր քաղաքական կուսակցությունները, ապա գավառներում հիմնականում հանդես եկավ դաշնակցությունը և հասավ հաջողությունների:[83]

Առանձնապես սուր պայքարի պայմաններում անցան Սահմանադիր ժողովի ընտրությունները: Դրանք ղեկավարելու համար ՕԶԱԿՈՄ–ի կողմից նշանակվել էին Հայրապետ Մուսայելյանը և Լյութֆալի բեկ Բեհբուդովը: Նախընտրական հանդիպումների ժամանակ թեկնածուներին տրվում էին արցախահայության ընդհանուր պահանջներից բխող հանձնարարություններ: Նախկին ռուսական կայսրության ժողովուրդները մեծ հույսեր էին կապում Սահմանադիր ժողովի հետ: Նրանց վստահեցնում էին, թե այն կլուծի հողային և այլ տնտեսական հարցեր: Սահմանադիր ժողովի ընտրությունները տեղ են ունենում նոյեմբերի 26–ին (նոր տոմարով): Ընտրություններին մասնակցածների 90 տոկոսը քվեարկում են դաշնակցության ցուցակի օգտին, որը թվով չորրորդն էր Կովկասի բոլոր նահանգներում:[84]

Փետրվարյան հեղափոխությունից հետո Արցախ–Ղարաբաղում նկատելիորեն աշխուժացան նաև արհմիությունները: Մարտի 22–ին կազմակերպվեց ուսուցիչների արհմիությունը,[85] ապա «Բանկային աշխատավորների ինտերնացիոնալ արհմիությունը», «Կին աշխատավորների արհմիությունը» և «Ծառայողների արհմիությունը»: Ավելի ուշ կազմակերպվեցին «Բանվոր–արհեստավորների» և «Վարպետ–արհեստավորների» արհմիությունները: Արհմիությունները քաղաքում կազմակերպեցին մի շարք բողոքի ցույցեր և գործադուլներ: Խոշոր ցույց կազմակերպվեց Քարին տակ գյուղում գտնվող Դավիթ Ներսիսյանի մետաքսագործական ֆաբրիկայում, որտեղ բանվորներն օրական աշխատում էին մինչև 12 ժամ, այն էլ աննշան աշխատավարձով: Չնայած որոշվել էր սահմանել 8–ժամյա աշխատանքային օր, սակայն ձեռնարկատերերը հրաժարվում էին դա կատարել: Գործադուլն ընդգրկեց նաև Տողի, Խնձրստանի, Հադրութի, Ղզղալայի (Բերդաշեն) և մյուս մետաքսագործական ֆաբրիկաները:[86] Ի վերջո, ձեռնարկատերերը ստիպված էին հաշվի նստել արհմիությունների և նրանց աջակցող քաղաքական ուժերի հետ:

Արցախի քաղաքական ուժերը լայն աշխատանք էին ծավալում նաև երիտասարդության շրջանում: Այդ աշխատանքը իրենց վրա են վերցնում Բաքվից Ղարաբաղ եկած երիտասարդները:[87] Դաշնակցականների կազմակերպած «Միություն» և բոլշևիկների կազմակերպած «Միրաժ» աշակերտական–երիտասարդական կազմակերպությունները հրատարակում էին թերթիկներ և ակտիվ աշխատանք ծավալում քաղաքի երիտասարդության շրջանում: Ազգայնամոլների դեմ առանձնապես սուր էին պայքարում ռեալական ուսումնարանի բարձր դասարանների հայ և թաթար սովորողները: Նրանք մահմեդական արհեստավորներին և բնակիչներին համոզում էին մասնակցել խորհուրդների վերընտրություններին և կտրված չմնալ քաղաքում ձեռնարկվող մյուս միջոցառումներից:



## 2. ԱՐՑԱԽԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1917 Թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1918 Թ. ՄԱՅԻՍ)

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Արցախ–Ղարաբաղը կրկին ապրում էր հեղափոխական օրեր: Բոլոր ձախ ուժերը պայքարում էին երկրամասում հաստատելու աշխատավորների քաղաքական իշխանություն: Հոկտեմբերի վերջին հեռագրական գործակալությունները և Ռուսաստանի ու Անդրկովկասի տարբեր քաղաքներից հայրենիք վերադարձող արցախցիները ուրախալի լուրեր էին բերում: Գյուղացիներին մեծ ուրախություն էր պատճառում հողի մասին դեկրետը: Նրանք կազմակերպված գրավում են կալվածատիրական ու վանքապատկան հողերը և հրաժարվում հարկեր տալուց: Տեղական պաշտոնյաներին հեռացնում էին աշխատանքից և պահանջում տեղերում իշխանությունը հանձնել խորհուրդներին: Խաչենի Խանաբաղ (Ոսկեվազ) գյուղի հասարակությունն ընդունեց այսպիսի մի որոշում. «Ճանաչել խորհրդային իշխանությունը ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում ու բոլոր ուժերով պաշտպանել այն: Խնդրել գործադիր կոմիտեին՝ ճանաչել Խանաբաղի հասարակության բանվորագյուղացիական խորհուրդը և կազմակերպիչ ուղարկել շրջան՝ խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար»:[68] Համանման որոշումներ և կոչեր ընդունվեցին Ղարաբաղի տասնյակ բնակավայրերում: Հարություն Թումյանը հետագայում գրել է, որ Հոկտեմբերյան հաղթանակից հետո Արցախում ստեղծված իրադրությունում՝ «Սեփական ժողովրդի կենսական շահերը, ազգամիջյան համերաշխությունն ու խաղաղությունն ապահովելու հրամայական անհրաժեշտությունը պահանջում էին համախմբել ընդհանուր գործի շուրջ հասարակության բոլոր ազնիվ, կարող, ձեռներեց, անձնվեր ու գործուն ուժերը, անկախ նրանց քաղաքական հայացքներից ու ստեղծել նրանց մասնակցությամբ մի հեղինակավոր մարմին երկրի կառավարման համար»:[69]

1917 թ. նոյեմբերի 15–ին կազմակերպվեց Անդրկովկասյան կոմիսարիատը, որի հռչակագրի համաձայն այն պիտի գոյություն ունենար մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Այդ ժամանակաշրջանում Արցախ–Ղարաբաղում բացահայտորեն անիշխանություն էր: Երկրամասը բոլոր կողմերից ենթարկվում էր թուրք–թաթարական ավազակային հարձակումներին: Ժամանակակիցը գրել է, որ գավառներում տիրում է անիշխանություն և սովը բախում է դռները. «Երեք ամիս է,– շարունակում է նա,– չգիտենք, թե ինչ է կատարվում աշխարհում: Դրությունը ծանր է. դրամ չկա, շաքար բոլորովին չկա: Հացի գները օր օրի բարձրանում են... Պետք է փրկել ժողովրդին»:[70]

Այդպես շարունակել հնարավոր չէր: Առանձնապես խիստ անհանգստացած էին քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Անհանգստացած էր նաև թուրք առաջադեմ մտավորականությունը: Ահա այդպիսի դժվարին պայմաններում, երբ Արցախ–Ղարաբաղը բոլոր կողմերից շրջափակված էր, Շուշիում տեղակայված 533–րդ զո-

ումասը հրաման ստացավ հեռանալ և նրա փոխարեն Շուշի տեղափոխվեց 552–րդ սահմանապահ զորամասը, որի զինվորների մեծամասնությունը գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ:[71] Ընդհանրապես, 1917 թ. նոյեմբերի վերջին սկսվեց ռուսական բանակի կազմալուծումն ու փախուստը Կովկասյան ճակատից: Արդեն 1918–ի հունվարի վերջին բանակ չկար:[72] Թուրքերը փորձում էին զինաթափել ռուսական զորամասերին և տիրանալ ամբողջ զենքին: Ղարաբաղ եկող ռուսական զորամասը Խուդաֆերինից Դիզակ–Վարանդայի վրայով հասնում է Շուշի և տեղավորվում զորանոցում: Պարզվում է, պատմում է Եղիշե Իշխանյանը, որ թուրքերը Կարյագինոյում գտնվող ռուսական բանակի ռազմական պահեստը պայթեցնելուց հետո «մի գիշեր, երբ զինվորները քնած են եղել, ահագին բազմութեամբ յարձակւել են զինւորների վրայ, կոտորել բոլորին և երկու հարիւր հոգուց հազիւ երկու հոգի հրաշքով ազատւել են, փախել և ապաստանել Բանազուր հայկական գիւղը»: Այդ և այլ պատճառներով Շուշիի հայերը «զինւորներին գուրգուրալի վերաբերմունք ցույց տւին, սննդամթերք մատակարարեցին»:[73] Իսկ թե ինչ տեղի ունեցավ Պարսկաստանի սահմանից Շուշի տեղափոխված ռուսական այդ զորամասի հետ, այդ մասին քիչ հետո:

1917 թ. դեկտեմբերը արցախահայության համար ծանրաբեռնված ամիս էր: Դեռևս դեկտեմբերի 16–ին սպա Նիկոլայ Իսախանյանի նախաձեռնությամբ կազմվել էր Հայ զինվորական միության Ղարաբաղի ճյուղը, որը շտապ ստեղծեց 150 հոգուց բաղկացած վաշտ: Այն պետք է տեղավորվեր զորանոցում և պահպաներ քաղաքի անդորրը: Թիֆլիսի զինվորական շտաբի դեկտեմբերի 21–ի կարգադրությամբ Շուշիի գավառի զինվորական շենքերի և այլ գույքերի պահպանությունը հանձնվեց Հայ զինվորական միության Շուշիի ճյուղին:[74]

Ստեղծվել էր խիստ տագնապալի վիճակ: Երկրամասը բոլոր տեսակի սադրանքներից զերծ պահելու և ժողովրդի անդորրը պահպանելու համար քաղաքական ուժերը որոշում են հրավիրել հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով և վճռել հետագա անելիքները: Ժողովը տեղի է ունենում դեկտեմբերի 23–ին, իրավաբան, մենշևիկ Լևոն Վարդապետյանի բնակարանում: Դրան մասնակցեցին քաղաքական բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները: Ժողովը, հանգամանորեն քննության առնելով ստեղծված լարված դրությունը, միաձայն հանգում է այն եզրակացության, որ պետք է ստեղծել միասնական մարմին՝ կազմված բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից: Այդ մարմինը պետք է կազմակերպեր երկրամասի աշխատավորներին, վերջ տար գլուխ բարձրացած անիշխանությանը, հնարավոր բոլոր միջոցներով ապահովեր խաղաղությունն ու համերաշխությունը հայերի ու մուսուլմանների միջև, երկրամասը դուրս բերեր շրջափակումից: Ժողովը միևնույն ժամանակ «իր ժխտական վերաբերմունքն արտահայտեց Անդրկովկասի կոմիսարիատի նկատմամբ»:[75] Եղիշե Իշխանյանը, Աբրահամ Կիսիբեկյանը, Արամ Միքայելյանը, Զարե Մելիք–Շահնազարովը և ուրիշներ վկայում են, որ



այդ ժողովը, ելնելով Արցախ–Ղարաբաղում ստեղծված իրավիճակից, որոշում է ստեղծել ժամանակավոր մի մարմին, որը պետք է իր ձեռքում կենտրոնացներ երկրամասի օրենսդիր և գործադիր իշխանությունները: Այն պետք է գոյություն ունենար մինչև Ղարաբաղի հայության համագումար հրավիրելը: Այդ մարմինն անվանվեց ժամանակավոր խորհուրդ կամ Միջկուսակցական բյուրո: Քանի որ թե՛ Քաղաքային ինքնավարության և թե՛ Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ դաշնակցությունը հաղթանակ էր տարել, ուստի մեշևիկների և էսէռների կողմից առաջարկվում է, որ «երեքական ներկայացուցիչներ մտնեն Միջկուսակցական Բիւրօի մէջ, իսկ Դաշնակցութեան կողմից աւելի մեծ թւով, ընդհանուր կեսից աւելի»:[76] Միջկուսակցական բյուրոյի կազմն ընտրելու համար, հաջորդ օրը, դեկտեմբերի 24–ին, տեղ է ունենում ընտրություն, որին քաղաքական կուսակցություններից մասնակցում են 22 ներկայացուցիչ: Ժամանակավոր խորհրդի կազմում ընտրվում են դաշնակցությունից՝ Հայրապետ Մուսայելյան, Անուշավան Տեր–Միքայելյան, Եղիշե Իշխանյան, Հարություն Թումյան, Ասծատուր Ավետիսյան, մենշևիկներից՝ Լևոն Վարդապետյան, Աշոտ Մելիք–Հովսեփյան, Նիկոլայ Իսախանյան, էսէռներից՝ Հռիփսիմե Տեր–Միքայելյան, Արամ Միքայելյան, Ալեքսանդր Մելքումյան, բոլշևիկներից՝ Ալեքսանդր Ծատուրյան, Արմենակ Ղարագյոզյան (Կարակազով) և Մելիքսեթ Եսայան: Ժողովը բաց քվեարկությամբ ընտրում է բյուրոյի ղեկավարություն. նախագահ՝ Հայրապետ Մուսայելյան, նախագահի տեղակալներ՝ Աշոտ Մելիք–Հովսեփյան և Եղիշե Իշխանյան, քարտուղար՝ Արամ Միքայելյան, գանձապահ՝ Աստվածատուր Ստեփանյան:[77] Երկու օր անց բոլշևիկների ներկայացուցիչները հրաժարվում են մասնակցել խորհրդի աշխատանքներին: Արցախում ստեղծված նման ծանր պայմաններում քաղաքական կուսակցությունների հետ համագործակցելուց հրաժարվելը Ղարաբաղի բոլշևիկների կողմից աններելի քայլ էր, մանավանդ, որ նրանք մինչև անգամ չցանկացան բացատրել խորհրդից իրենց հեռանալու պատճառը: Բոլշևիկների այդ քայլը վրդովմունք առաջ բերեց մյուս քաղաքական կուսակցությունների, մտավորականության և աշխատավորների շրջաններում: Այդ առթիվ մի փոքր անց Դավիթ Անանունը գրել է. «Շուշիում լռեցին կուսակցական վեճերն ու տարաձայնությունները: Արտաքին վտանգը ստիպեց հայերին համագործակցության ուղիներ բռնել: Ընդհանուր աշխատանքներից հեռու մնացին մի քանի բոլշևիկ կոչվածներ, սակայն այդ հոգով ներքինները անկարող եղան խանգարել ուժերի հավաքման գործին»:[78]

Հարևան մահմեդականների հետ հարաբերությունները խաղաղ պահպանելու համար Միջկուսակցական բյուրոն նպատակահարմար գտավ արդեն քայքայված գավառական գործադիր խորհրդի փոխարեն ստեղծել նոր, ավելի գործունյա մարմին՝ երկու ժողովուրդների կողմից հավասար թվով ներկայացուցիչներից: Ժողովը հայ–թուրքական կոմիտեի կազմի համար ընտրեց ներկայացուցիչներ՝ Հայրապետ Մուսայելյան, Աշոտ Մելիք–Հովսեփյան, Լևոն Վարդապետյան, Արամ Միքայելյան, Արսեն Բակունց, Աստվա-

ծատուր Ավետիսյան և Եղիշե Իշխանյան։ Նորընտիր այդ ներկայացուցիչներին հանձնարարվեց անմիջապես կապի մեջ մտնել թուրքերի հետ։ Դեկտեմբերի 25–ին Հասարակական ակումբում տեղի է ունենում հայ և թուրք ներկայացուցիչների միացյալ ժողով, որը որոշեց գավառական գործադիր խորհրդի փոխարեն ստեղծել հայ–թուրքական կոմիտե անունով նոր մարմին, որը պետք է ղեկավարեր երկրամասը։ Հենց այդ ժողովում կոմիտեի կազմում թուրքերից ընտրվում են Լյուֆտալի բեկ Բեհբուդովը, Խոսրով բեկ Փոլոդովը, Միրզա Ջամալովը, Խասայ Մամեդովը, Սաբունչի Մամեդը, Աբուլֆազ բեկ Հասանբեկովը և Հեյդարբեկ Մեյիդբեկովը։[79] Երկու կողմերի համաձայնությամբ միացյալ կոմիտեի նախագահ ընտրվեց Շուշիի նախկին հաշտարար միջնորդ, ազգությամբ վրացի Յոսիֆ Իլարիոնովիչ Կոբիևը, որը Հարություն Թումյանի բնորոշմամբ, «մի շատ բարեկիրթ, անաչառ ու ամենից հարգված» անձնավորություն էր։[80]

Դեկտեմբերի 26–ին տեղի ունեցավ Հայ–թուրքական կոմիտեի առաջին պաշտոնական նիստը՝ Կոբիևի նախագահությամբ։ Միաձայն նախագահի տեղակալներ ընտրվեցին Հայրապետ Մուսայելյանն ու Լյուֆտալի բեկ Բեհբուդովը, քարտուղար՝ Աշոտ Մելիք–Հովսեփյանը։ Որոշվեց դեռևս փոփոխության չենթարկել նախկին գործադիր խորհրդի կողմից նշանակված գավառական և շրջանային կոմիսարների կազմը, ըստ որում, գավառական կոմիսար Լևոն Վարդապետյանը և նրա տեղակալ Խոսրով բեկ Փոլադովը պետք է շարունակեին աշխատել իրենց պաշտոններում։ Նաև որոշվում է երկու շաբաթը մեկ հրավիրել նիստ՝ կոմիտեի լրիվ կազմով։

Ազգամիջյան կոմիտեի կատարած առաջին քայլը դարձավ այն, որ նրա պահանջով հրավիրվեց Ղարաբաղի գործադիր կոմիտեի նիստ և որոշվեց լուծարել այն։ Նաև դրականորեն վճռվեց քաղաքի մուսուլմանների կողմից նախկինում առաջ քաշված 100 հազար ռուբլի հավաքելու և դրանով ավազակային խմբերը վերացնելու մասին առաջարկությունը։ Չնայած այդ գումարի հավաքումը ձգձգվեց մինչև 1918 թ. հունվարի կեսերը, բայց և այնպես այն իրագործվեց և պայքար ծավալվեց Աղդամ–Շուշի, Շուշի–Գորիս և այլ ճանապարհների վրա գործող ավազակային խմբերը վերացնելու համար։ Հանցագործների և ավազակային խմբերի դեմ պայքար ծավալվեց նաև Շուշի քաղաքում։ Քաղաքի հայկական մասում հիմնվեց ոստիկանական մարմին։ Երկրամասի բոլոր շրջաններում և գյուղերում նշանակվեցին քաղաքացիական և զինվորական լիազորներ։ Շուշիին հաց մատակարարելու հարցը լուծվեց դրականորեն։ Ջախջախվեցին Ջրաբերդի անտառներում վխտացող ավազակային խմբերը։

Այս մի քանի դրական քայլերը, այնուամենայնիվ, երկրամասը դուրս չբերեցին ճգնաժամային վիճակից։ Արցախի Ջրաբերդ գավառի ժամանակավոր իշխանության ֆինանսների կոմիսար Հովհաննես Առաքելյանի՝ 1919 թ. փետրվարի 17–ին Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղարկած զեկուցագրում նշված է, որ «հայկական և մուսուլմանական կոմիտեները միասին Շուշի քաղաքը կառավարեցին մինչև 1918 թ. հուլիսի 16–ը, Արցախի չորս գավառները՝ Վարանդան, Դիզակը, Խաչենը և Ջրաբերդը մինչև այդ ժամանակը ապրում էին առանց որևէ վարչության»։ Կոմիսարն ապա հաղորդում է, որ Արցախում դրությունը դարձել է անտանելի, լցվել է ժողովրդի համբերության բաժակը և իշխանության կարիք է զգացվում։[81]

Արցախ–Ղարաբաղի ընդհանուր վիճակի վրա բավականին ծանր ազդեց ռուսական վերջին զորամասի հեռանալը։ 1917 թ. դեկտեմբերին հրաման ստացվեց Շուշիում գտնվող 552–րդ զորամասի ապակազմման և Արցախից հեռանալու մասին։ Հրամայվել էր ամբողջ զենքը հանձնել կայազորի պետին։ Այդ օրերին, պատմում է Եղիշե Իշխանյանը, տեղի էր ունեցել մի հետաքրքիր իրադարձություն. Հադրութում գտնվող սահմանապահ զորամասերի հրամանատար, ազգությամբ լեհ Ցահլ Մեյերովիչ Ռամիշևսկին, որը բավականին հայասեր մարդ էր, հայտնում է հադրութցիներին, որ զորամասը նահանջելու ժամանակ Ջեբրայիլ ավանում թողել է 700 հրացան և 300 հազար փամփուշտ։ Որպեսզի այդ զենքը թուրքերի ձեռքը չընկներ, նա առաջարկել էր այն տեղափոխել հայկական գյուղերից մեկը։ Այդ զենքն ու զինամթերքը մի գիշերվա մեջ տեղափոխում են Բանազուր, Ցոր, Հադրութ և Կարմրակուճ գյուղերը։ Դա հնարավորություն տվեց երկրամասի ինքնապաշտպանությունը հարավից ապահովել։[82]

Արցախի քաղաքական ուժերին խիստ մտահոգում էր երկրամասի մյուս հատվածներում ևս ինքնապաշտպանության ամրապնդման հարցը։ Դա հնարավոր էր իրագործել հետևյալ դեպքում. կամ պետք էր ռուսական զորամասին համոզել չհեռանալ Արցախից մինչև խաղաղության վերականգնվելը, կամ էլ ամբողջ զենքը հանձնել հայերին և լեռներով գնալ Գանձակ, իսկ այնտեղից էլ՝ Թիֆլիս կամ Բաքու։ Նույնիսկ նրանց առաջարկվում է Գորիսի վրայով ուղեկցել մինչև Երևան, որտեղից Թիֆլիսի վրայով կարող էին ապահով անցնել Ռուսաստան։ Վճռական խոսքը պատկանում էր զորամասի հրամանատար կապիտան Շմիդտին։ Նրան հասկացնում են, որ Աղդամ–Եվլախ խճուղու վրա ստեղծվել է ծանր վիճակ։ Օրինակ են բերում, որ այդ օրերին ռազմաճակատից տուն վերադարձող հայկական մի քանի խմբեր Եվլախ–Աղդամ ճանապարհին ենթարկվել են թուրք ավազակների հարձակմանը։ Տուն վերադարձող հայ զինվորները մուսուլման ավազակային խմբերի կողմից զինաթափվել էին նաև Գորիս–Շուշի և Գանձակ–Շուշի ճանապարհներին։

1918 թ. հունվարին մուսավաթականների կողմից Շամխորում կազմակերպված սպանդը նույնպես չազդեց 552–րդ զորամասի զինվորների վրա։ Արցախցիները առաջարկում են մինչև անգամ վճարել ամբողջ զենքի արժեքը և նրանց նապահով ուղարկել հայրենիք։ Սակայն այդ բոլոր ջանքերն անցնում են ապարդյուն։ Մեկ ամիս առաջ Շուշիից հեռացած 533–րդ գնդի հրամանատար, գնդապետ Ռաշկովսկին, որն ընտանիքով հաստատվել էր Շուշիում և այնտեղից հեռանալու միտք չուներ, նույնպես միջամտում է, սակայն «եզի համառություն» ունեցող գերմանացի կապիտանը մնում է անդրդվելի։ Հետագայում պարզվում է, որ դրանում խիստ բացասական դեր է խաղացել Շուշիի դատախազ Կուզմինը։

Հեղափոխությունից հետո մեծ թվով թուրք լրտեսներ և քարոզիչներ էին ներթափանցել Ղարաբաղ ու մուսուլմաններին գրգռում էին հայերի դեմ: Միջկուսակցական բյուրոն երկրամասի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար հաշվառում է բոլոր զենքերը, մթերքը, սպաներին և մարտունակ զինվորներին: Որոշվում է ինքնապաշտպանության ղեկավարումը հանձնել սպաներին, որոնց պետք է ենթարկվեին խմբապետները: Շուշիի ինքնապաշտպանությունը հանձնարարվում է Հարություն Թումյանին և Եղիշե Իշխանյանին: Քաղաքը բաժանվում է վեց շրջանի, որոնցից յուրաքանչյուրն ունենում է շրջանային կամ թաղային իր խորհուրդը և շրջապետը, որը ենթակա էր շրջանի հրամանատար սպային: Եղիշե Իշխանյանը պատմում է, որ թաղային խորհուրդը ցուցակագրում էր տվյալ շրջանի զենք ունեցողներին և հանձնարարում հերթով դիրքապահություն անել գիշերները:

Ռուսական զորամասը Շուշիից մեկնում է հունվարի 11–ին: Ասկերանն անցնելու ժամանակ խաչենցիներն ու վարանդացիները, տեղյակ լինելով խաղաղ ճանապարհով զենքը ստանալու համար Շուշիում կատարված անհաջող փորձին, որոշում են ուժի միջոցով զինաթափել զորամասը, սակայն Դալի Մահրասան արգելում է, կանխում ընդհարումը և դրանից բխած հետևանքները:[83]

Ժամանակակիցների վկայությամբ, Աղդամի և Բարդայի արանքում գտնվող Քոչարլի կայանում, զորամասը ենթարկվում է Աղդամում տեղակայված «վայրի դիվիզիայի»[84] մի հարյուրյակի և այնտեղ կուտակված մուսուլման զինված բաշիբոզուկների հարձակմանը: Զորամասը լրիվ զինաթափվում է, իսկ շատերն էլ գնդակահարվում են: Դրանում հանցավոր էին զորամասի հետ գնացող դատախազ Կուզմինը և հրամանատար Շմիդտը: Նման ճակատագիր են ունենում նաև Կարյագինոյից, Ջեբրայիլից և սահմանամերձ այլ վայրերից Մուղանի դաշտով դեպի Եվլախ գնացող ռուսական մյուս սահմանապահ զորամասերը: Ռուս զինվորներից խլված զենքը մուսուլման խուժանը հետագայում օգտագործել է արցախահայության դեմ:

1917 թ. հեղափոխություններից հետո Հյուսիսային Արցախի բնակչությունը հույս ուներ, թե կազատվի թուրք կալվածատերերի ճնշումից, ձեռք կբերի ազատություն, և կլուծվի հողի հարցը: Հողի համար պայքարը լայն ծավալ ընդունեց մանավանդ Գետաշենում, որտեղ մեկ շնչին հասնում էր հազիվ 0,73 դեսյատին հող: Ականատեսն այդ օրերին գրել է, թե «այսպիսի մի անարդար վերաբերմունքի դեմ, որպիսին կատարվում և կատարվելիս է եղել կործանված ռեժիմի օրոք, քարերը կաղաղակեն... Հատուցումը պիտի լինի, արդարությունը այդ է պահանջում»:[85]

Դավիթ Անանունն այդ օրերին լինելով հայրենի Ջիվանշիրում՝ պատմում է, թե Հյուսիսային Արցախում գյուղացիները ինչպես էին պայքարում տեղական իշխանությունների դեմ: Գանձակում, Աղդամում ու Թարթառում հաստատված մահմեդական իշխանությունները ամեն կերպ փորձում էին հպատակեցնել շրջապատի հայ բնակչությանը: Եվ չնայած ուժերն անհա-



վասար էին, այնուամենայնիվ, Հյուսիսային Արցախի լեռնաշխարհի հայությունը չհպատակվեց:

Միջկուսակցական բյուրոն, ելնելով այն վիճակից, որ կրկին փակվել էր Աղդամ–Եվլախ ճանապարհը և Արցախ–Ղարաբաղը կտրվել էր դրսի աշխարհից, միջոցառումներ է ձեռնարկում վերականգնելու դեռևս հայ–թաթարական ընդհարումների ժամանակ հանգանակված դրամով կառուցված Շուշի–Գանձակ լեռնային ճանապարհը: Ճանապարհի անվտանգությունը ստուգելու համար հունվարի կեսերին Գանձակ է ուղարկվում մի էքսպեդիցիոն ջոկատ՝ Հարություն Թումյանի գլխավորությամբ, որի կազմում էին Արշավիր Քամալյանը, ճանապարհաշինարարներ՝ Իվան Իշխանյանը, Լևոն Միրզաբեկյանը և էլի մի քանի հոգի: Ջոկատը նաև պետք է կապ հաստատեր Արցախի հյուսիսային գյուղերի հետ, նախապատրաստական աշխատանքներ տաներ նոր ճանապարհի կառուցելու համար և այլն:

Ընդհանրապես, Միջկուսակցական բյուրոյի նիստերը հարթ չէին ընթանում: Որոշ քաղաքական ուժեր, ինչպես և մուսուլման անդամները, հաճախ այնպիսի հարցեր էին առաջ քաշում, որոնք չէին բխում Արցախ–Ղարաբաղի ընդհանուր շահերից և պահանջներից: Դա էլ առաջ էր բերում սուր վիճաբանություններ՝ մեծամասամբ կապված քոչի, ինքնապաշտպանության, զենքերի հաշվառման, հանգանակությունների կազմակերպման և այլ հարցերի հետ: Այս կամ այն հարցը վճռելու համար հաճախ վկայակոչվում էին ցարական կառավարության կամ ժամանակավոր կառավարության ինչ–ինչ որոշումներ, մինչդեռ այդ օրերին Արցախի տերն ու տիրակալը համարվում էր Միջկուսակցական բյուրոն, հետևապես, պետք էր հիմք ընդունեին նրա և Անդրկովկասյան կոմիսարիատի որոշումները: Սակայն, քաղաքական որոշ ուժեր այդ ամենին նայում էին թեթևակի և բանի տեղ չէին դնում: Եթե Միջկուսակցական բյուրոն գտնվեր իր բարձրության վրա, ապա հնարավոր կլիներ ունենալ ամուր իշխանություն և երկրամասն ինքնուրույն կառավարելու հաստատակամություն: Բանը հասավ նրան, որ Ղարաբաղի բոլշևիկների ղեկավար Ալեքսանդր Ծատուրյանը[88] Միջկուսակցական բյուրոյի հունվարի 24–ի նիստում հայտարարեց, թե իրենց կուսակցությունը դուրս է գալիս բյուրոյից, քանի որ Ղարաբաղում խեղաթյուրվել են Հոկտեմբերյան հեղափոխության սկզբունքները: Բոլշևիկներին հետևեցին ռամկավարները՝ հայտարարելով, թե չեն կարող մասնակցել բյուրոյի աշխատանքներին, մինչև չորոշվի մյուս հոսանքների վերաբերմունքը: Մյուս երեք կուսակցությունները՝ դաշնակցությունը, սոցիալիստ–հեղափոխականները և սոցիալ–դեմոկրատները, չպաշտպանեցին բոլշևիկների բռնած դիրքը: Մուսավաթականները ևս դեմ գնացին բոլշևիկներին: Այսպիսով Միջկուսակցական բյուրոն իր աշխատանքները շարունակեց առանց կադետների և բոլշևիկների: Փոխարենը բյուրոյի աշխատանքներին սկսեց մասնակցել զինվորական միության Շուշիի ճյուղի ներկայացուցիչը:

Այդ օրերին Արցախ–Ղարաբաղի տարբեր տեղերում կրկին գլուխ էին բարձրացրել ավազակային խմբերը, որոնք թալանում և սպանում էին մարդ-

կանց: Միջկուսակցական բյուրոն որոշում է ստեղծել պատժիչ ջոկատ՝ այդ ավազակաբարո խմբերին վերջ տալու համար: Ջոկատի ղեկավար է նշանակվում Ալեքսան դային, օգնականներ՝ Ղալի Մահրասան և Դահրավ գյուղացի Մուսան (Մուսա Խաչատրյան): Մուսան ուներ ենթասպայի աստիճան: Նա ևս աչքի էր ընկել Խաչենի, Ջրաբերդի և Շուշիի կռիվներում: Ալեքսան դայու գլխավորած ջոկատին հաջողվում է ոչնչացնել Ջրաբերդի շրջանում գործող ավազակներին և վերականգնել բնակչության անդորրը: Ջոկատը գործում էր Միջկուսակցական բյուրոյի անունից: Բյուրոյի հեղինակությունը հետզհետե բարձրանում էր, իսկ դիրքերն ամրանում: Հենց այդ նույն օրերին անհրաժեշտություն զգացվեց քաղաքի և գավառների զինվորական ծառայությունը չվերջացրած երիտասարդներից կազմել մի վաշտ, որի ծախսերը պիտի հոգար բյուրոն: Ստեղծվում է Ռազմական խորհուրդ, որի կազմի մեջ մտնում են Հարություն Թումյանը, Արտաշես Վարդապետյանը,[87] Մարտին Այվազյանը և Սամսոն Մելիք–Շահնազարյանը: Զինվորական միության առաջարկությամբ նորաստեղծ այդ զորամասի ավագ է նշանակվում կապիտան Արտաշես Վարդապետյանը, իսկ շտաբի պետ՝ Արտաշես Առուստամյանը: Արդեն 1918–ի փետրվարի կեսերին վաշտը կազմված էր և տեղավորված զորանոցում: Այն կազմված էր 100 հոգուց: Քանի որ արցախահայության տղամարդկանց մեծամասնությունը գտնվում էր ռազմաճակատում և ռուսական բանակում, ուստի ջոկատի մեջ ընդունում էին նաև 14–18 տարեկան պատանիներ և երիտասարդներ: Զենքերը կարգի բերելու համար Շուշիում բացվում է հատուկ արհեստանոց՝ ինժեներ Սուրեն Օհանջանյանի ղեկավարությամբ: Հարություն Թումյանը, Զարե Մելիք–Շահնազարովը, Արամ Միքայելյանը և ուրիշներ վկայում են, որ այդ ժամանակ Արցախում գրեթե չկար ընտանիք, որ զենք չունենար: Զենք կրելու ընդունակ գրեթե բոլոր տղամարդիկ զինված էին: Սակայն եղած փամփուշտը հազիվ կհերիքեր երկու–երեք օր: Ուստի կազմակերպվում է նաև փամփուշտի արտադրություն:[88]

Միջկուսակցական բյուրոյի հրատապ խնդիրներից էր Շուշի–Գորիս ճանապարհին անվտանգ դարձնելը: Այդ նշանակում է, որ պետք էր ամրապնդել Բերդաձոր գյուղի պաշտպանությունը: Բերդաձորը գտնվում է Շուշիից երեսուն վերստ հեռավորության վրա, ուներ շուրջ 800 տուն: Բերդաձորը մի խումբ գյուղերի հավաքական անունն է: Այդ գյուղախումբը ցրված էր մի քանի վերստի վրա: Կենտրոնը Մեծ շենն էր, որն ուներ 600 տուն: Այդ գյուղի բնակիչները վաղուց հայտնի էին իրենց քաջությամբ, մանավանդ թուրքերի դեմ մղած ինքնապաշտպանական մարտերում: Միջկուսակցական բյուրոն, ամենայն լրջությամբ գնահատելով Բերդաձորի դերը Գորիսի հետ կապն անվտանգ պահպանելու գործում, այնտեղ է ուղարկում Ալեքսան դայուն և Չթչիյան Ասատուրին՝ Խանասուրի հայդուկներից կազմված նրանց ջոկատով: Այնտեղ կարգավորելով ինքնապաշտպանության գործը՝ ջոկատը վերադառնում է Շուշի: Արդեն փետրվարի սկզբից Շուշի–Գորիս ճանապարհը գործում էր:[89] Սակայն դա տևում է կարճ, որովհետև շուտով թուրք–քրդական ավազակախմբերը կրկին փակում են այն:



Արցախ–Ղարաբաղի ինքնապաշտպանությունն ավելի արդյունավետ դարձնելու համար, Միջկուսակցական բյուրոն երկրամասը բաժանում է երկու զինվորական կոմիսարիատի՝ Խաչեն, Ջրաբերդ, Գյուլիստան և Վարանդա, Դիզակ: 1918 թ. մայիսին Միջկուսակցական բյուրոն կրկին անդրադառնալով այդ հարցին՝ Վարանդայի շրջանի մեջ մտնող Կարկառ գետի աջ ափի գյուղերը, Ասկերանից մինչև Շոշ, մտցնում է առաջին շրջանի մեջ և լիազոր նշանակում Եղիշե Իշխանյանին, երկրորդ շրջանի լիազոր է նշանակում Արսեն Բաղդասարյանին (Հովհաննիսյան): Այդ օրերին Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից Հայրապետ Մուսայելյանը և Լյութֆալի բեկ Բեհբուդովը նշանակվում են կոմիսարիատի լիազոր ներկայացուցիչներ՝ Շուշիի, Ջիվանշիրի, Կարյագինոյի և Զանգեզուրի քաղաքական իշխանությունները վերակազմելու համար:

***

1918 թ. փետրվարի 18–ին (մարտի 3–ին) կնքված Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրի չորրորդ կետը չարաղետ էր Հայաստանի համար: Հայ ժողովուրդը զրկվեց իր պատմական հողերից և ստացավ տնտեսական ու բարոյական հսկայական վնաս, կրեց մարդկային մեծ կորուստներ: Շուտով թուրքական բանակը խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5–ին կնքված Երզնկայի զինադադարը, շարժվում է դեպի Հայաստանի խորքերը:

Անդրկովկասյան թե կոմիսարիատը և թե սեյմը վճռական քայլեր չձեռնարկեցին Բրեստ–Լիտովսկի պայմանագրի՝ իրենց վերաբերող մասի խափանման ուղղությամբ: Ընդհակառակը, գերմանա–թուրքական իմպերիալիստների խրախուսանքով անդրկովկասյան ժողովուրդների ճակատագրը տնօրինողները ջանքեր էին գործադրում Անդրկովկասն անջատել խորհրդային Ռուսաստանից: 1918 թ. ապրիլի 9 (22)–ին սեյմը հայտարարեց Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և երկրամասի անկախության մասին՝ ըստ էության կատարելով թուրքերի պահանջը: Ստեղծվում է Անդրկովկասի ժողովրդավարական դաշնակցային հանրապետությունը, որի հեռանկարը խախուտ էր և շատ կարճ կյանք ունեցավ: Նրա մենշևիկ–մուսուլմանական մեծամասնություն կազմող իշխանությունը չցանկացավ դիմադրել թուրքերին, որի զորքերը գրավելով Կարսը և Ալեքսանդրապոլը, շարժվում էին Երևանի և Ղարաքիլիսայի ուղղություններով: Թուրքական զորամասերը, ուժեղացված տեղական մահմեդական բաշիբոզուկներով, մայիսի 21–ին գրավեցին Սարդարապատ գյուղը և կայարանը: Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ–Ապարանի մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը ցուցաբերեց աննկուն կամք, ազգովին պայքարելու պատրաստակամություն և վճռականություն: Երիտթուրքերի ձգտումը՝ նվաճել Հայաստանի արևելյան հատվածը և այնտեղի հայերին էլ ոչնչացնել, ձախողվեց: Սարդարապատի կենաց ու մահու ճակատամարտում իր մասնակցությունն ունեցավ նաև արցախահայությունը:[90]

Այդ բոլոր իրադարձությունները, ինչ խոսք, կամա թե ակամա առնչվում էին արցախահայության կյանքին: 1918 թ. գարնանը Արցախում լայն թափ առավ ագրարային շարժումը: Այն ընդգրկեց մի քանի շրջաններ: Դիզակի, Խաչենի, Վարանդայի և մյուս գավառների գյուղերում ստեղծված հողային կոմիտեները հեղափոխական մեթոդներով իրականացնում էին խանաբեկական, վանքապատկան և աղայական հողերի բռնագրավումը: ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային և Թիֆլիսի կոմիտեների օրգան «Բանվոր» թերթն այդ օրերին գրել է. «Շուշիի գավառի Յինդարխ ադրբեջանական գյուղում ագրարային մեծ հուզում է սկսվել, գյուղացիները գրավել են բեգական բոլոր հողերը: Բեգերը փախել են: Աղդամի դաշտային, Խաչենի և Վարանդայի շատ գյուղերում ևս ագրարային շարժում է նկատվում: Գյուղացիներն ինքնաբերաբար կազմել են հողային կոմիտեներ»:[91] Բանը հասնում է նրան, որ մի շարք գյուղերում տեղի են ունենում զինված ընդհարումներ: Իսկ դրանից օգտվում են թուրք–թաթարական ավազակախմբերը, և սահմանամերձ հայկական գյուղերի վրա հարձակումները դառնում են մշտական:

Արցախահայության պաշտպանության հարցը խիստ մտահոգում էր նաև Արցախ–Ղարաբաղից դուրս ապրող ղարաբաղցիներին: Յայաստանի ռազմական խորհրդի գործերի կոմիտեի անդամ Միրակ Տիգրանյանի՝ 1918 թ. հունվարի 28–ի հաղորդումից իմանում ենք, որ պորուչիկ Ստեփանյանը (ըստ երևույթին, խոսքը Յովակ Ստեփանյանի մասին է –Յ.Ա.) հունվարի 23–ին վերոհիշյալ կոմիտեին ուղարկած նամակում հարց է դնում շուշեցի հայերից կազմել մի գունդ և ուղարկել Ղարաբաղը պաշտպանելու համար, քանի որ այդ երկրամասի պաշտպանությունը հատուկ նշանակություն ունի հայության համար:[92]

Յամայն Կովկասյան ռազմաճակատի ընդհանուր հրամանատարի 1918 թ. հունվարի 23–ի, 29–ի և փետրվարի 5–ի հրահանգների համաձայն, հայ ժողովրդի ներքին ճակատների ինքնապաշտպանությունը ապահովելու նպատակով հայկական գնդեր են կազմակերպվում Անդրկովկասի հայաշատ բնակավայրերում: Դրանցից էր նաև Շուշիի կամ Արցախի գունդը, որի նպատակն էր Արցախ–Ղարաբաղը պաշտպանել մուսուլմանների ոտնձգություններից: Գնդի կազմակերպման աշխատանքներն արագացնելու նպատակով Ղարաբաղի Միջկուսակցական բյուրոյի հանձնարարությամբ Յայրապետ Մուսայելյանը 1918–ի հունվարի առաջին օրերին մեկնել էր Թիֆլիս: Գնդի հրամանատար է նշանակվում ծննդով արցախցի, գնդապետ Միքայելբեկ Մելիք–Շահնազարյանը, իսկ տեղակալ՝ նույնպես ծննդով արցախցի Յովակ (Յովակիմ) Ստեփանյանը, որը մինչ այդ հայկական կամավորական երկրորդ գնդի առաջին գումարտակի հրամանատարն էր: Գունդը, որի կազմակերպման և հանդերձավորման ամբողջ պատասխանատվությունն իր վրա էր վերցրել Արցախ–Զանգեզուր հայրենակցական միությունը (նախագահ՝ Լեո), Թիֆլիսից ճանապարհվում է փետրվարի 18–ին:[93]

1918 թ. գարնանը ստեղծված ծանր վիճակում, մանավանդ որ Զաքուղի



ձորը լցվել էր մուսուլմանական ավազակներով, որոնք կրկին փակել էին Շուշի–Գորիս ճանապարհը, արցախահայության համար դժվար էր կապ հաստատել Երևանի հետ: Միջկուսակցական բյուրոն որոշում է Երևանի հետ կապը զարգացնել երկրամասի հյուսիսային տարածքով: Սակայն դա էլ կապված էր այլ դժվարությունների հետ. ճանապարհը խիստ նորոգման կարիք ուներ, Ջիվանշիրի անտառներում և ճանապարհների վրա հայտնվել էին հայ և թուրք ավազակային նոր խմբեր, որոնք թալանում և սպանում էին մարդկանց, թուրքերը հաճախ փակում էին Գանձակ տանող ճանապարհը և այլն:

1918 թ. ձմռանը և գարնան սկզբին Ղարաբաղի հարթավայրային շրջաններում գտնվող մահմեդական գրեթե բոլոր գյուղերում երևացած թուրք զինվորական հրահանգիչներն ու էմիսարները, իրենց ձեռքը վերցնելով տեղական իշխանությունը, մուսուլմաններին հրահրում էին հայերի դեմ: Այս անգամ ավելի երկար է փակվում Շուշի–Եվլախ ճանապարհը, Արցախը կտրվում է Բաքվից և ընկնում պաշարման օղակի մեջ, որն ընդհատումներով շարունակվում է երեք տարի: Արցախահայության համար ստեղծվում է աղետալի վիճակ: Արցախ–Ղարաբաղի ինքնուրույնությունը և նրա բնակչության ֆիզիկական գոյությունը դրվում են հարցականի տակ: Մինչև անգամ Անդրկովկասի հայ և մահմեդական ազգային խորհուրդների փոխադարձ համաձայնությամբ Լեռնային Ղարաբաղին տրված ազատ շրջանի իրավունքը չեղյալ է հայտարարվում:[94]

Արցախահայության համար հարցերից հարցը Բաքվի և Զանգեզուրի հետ ընդհատված կապի վերականգնումն էր: Բաքվում կուտակվել էին հազարավոր ղարաբաղցի և զանգեզուրցի զինվորականներ, որոնք չէին կարողանում վերադառնալ հայրենիք: Թուրքերը փակել էին ճանապարհները: Յենց այդ ժամանակ՝ 1918–ի մարտի սկզբին, Պետրոգրադից Բաքու եկավ զորավար Յակոբ Բագրատունին՝ Ռոստոմի հետ միասին: Բագրատունին սկսեց ջոկատներ կազմակերպել և բացել ճանապարհները դեպի Յայաստան և Ղարաբաղ: Սակայն մարտի 15–ին նա ծանր վիրավորվեց թուրք գործակալի կողմից և կորցրեց մեկ ոտքը: Արևմտյան ռազմաճակատից վերադարձող զինվորների բավականին մասը Վլադիկավկազյան երկաթուղով Բաքու էին շտապում՝ Ղարաբաղ–Զանգեզուր անցնելու համար: Այդ օրերին մուսավաթի նպատակն էր գրավել Բաքուն և Ադրբեջանը հայտարարել անկախ: Մուսուլմանական ազգային խորհուրդը «մուսուլմանական զորամասեր էր կազմակերպում Գյանջայում, Ղարաբաղում, Շամախում, զենք, զինամթերք ձեռք բերում կողոպուտով և թալանով»:[95] Բաքվի վրա արշավող խառն ուժերի հրամանատարն էր վրացի գեներալ Լևան Մաղալովը: Նրա հրամանատարության տակ կար 5800 զինվորներով դիվիզիա և վրացական հեծելազոր: Այդ զորամասերը, Գանձակից շարժվելով դեպի Բաքու, մարտի վերջին հասան Յաջի–Կաբուլ: Դեպի Խուրդալար էին շարժվում գեներալ Թալիշինսկու գլխավորած մուսավաթական ուժերը: Բաքվում կազմակերպված մոտ 3000 զինվորական կազմով հայկական ուժերը կանգնեցին թշնա-

մու դեմ։ Հայկական զորախմբերը փայլուն հաղթանակ տարան, և Մաղալովի զորքերի մնացորդները նահանջեցին Գանձակ ու Վրաստան։[96] Հետո, Համազասպի գլխավորությամբ կազմակերպվեցին Ղարաբաղյան, Զանգեզուրյան, Երևանյան և այլ անուններ կրող գումարտակներ, որոնց հիմնական խնդիրը պետք է լիներ Թիֆլիսի վրայով Հայաստան գնալը թուրքերին դիմակայելու համար։

Բաքվից և Հայաստանից անհանգստացնող լուրեր էին հասնում Ղարաբաղ։ Հայաստան և Բաքու օգնության գնալու համար սկսվում է կամավորական շարժում։ Սակայն երկրամասում առաջ եկած որոշ խնդիրներ հետին պլան են մղում կամավորական ջոկատների ստեղծումը։ Ամենից առաջ դրվում է քոչի հարցը։ Մուսուլման–քոչվորները խնդրում են ճանապարհը բացել։ Արցախցիներն իրենց հերթին պահանջում են նախ բացել Բաքու և Գորիս տանող ճանապարհները, նոր միայն քննարկել Արցախի տարածքով քոչի բաց թողնման հարցը։ Քոչի հարցով խիստ մտահոգված էր նաև Անդրկովկասյան կոմիսարիատի լիազոր Լյուֆտալի բեկ Բեհբուդովը։ Այդ օրերին նա վերադառնալով Թիֆլիսից, իր հետ բերել էր 500 հազար ռուբլի օգնություն։[97]

Երկրամասի պարենավորման, քոչի. ֆինանսական և այլ հարցեր քննարկելու նպատակով ապրիլի 2–ին հրավիրվում է հայ–թուրքական առաջին համագումարը երկու ազգություններից հավասար թվով՝ քառասունհինգական պատգամավորների մասնակցությամբ։ Համագումարում նախագահում էին Անդրկովկասյան կոմիսարիատի լիազորներ Հայրապետ Մուսայելյանը և Լյուֆտալի բեկ Բեհբուդովը։ Համագումարը քննարկում է անիշխանության վերացման, պարենավորման, քոչի և սպեկուլյացիայի դեմ պայքարի հարցերը։ Բոլոր հարցերի վերաբերյալ ընդունվում են գործնական որոշումներ։ Որոշվում է վերացնել տիրող անիշխանությունը, օգնել Ղարաբաղի ղեկավար մարմին հանդիսացող հայ–թուրքական կոմիտեին, հասարակության խաղաղ կյանքը խանգարողներին երկրամասում ապաստան չտալ, հեռու վանել անկարգություններ սարքողներին, ավազակների դեմ լինել խիստ և անողոք, հնարավորություն տալ գյուղացիներին իրենց մթերքներն անարգել փոխադրել և վաճառել քաղաքում, խիստ միջոցառումներ ձեռնարկել բոլոր տեսակի չարաշահումների դեմ։ Զանգեզուրի հայ և թուրք պատգամավորներն առաջարկեցին թույլ չտալ քոչը բարձրանա լեռները։ Այս հարցի վերջնական վճռումը տեղափոխվեց հաջորդ համագումար։[98] Որոշվեց Լյուֆտալի բեկ Բեհբուդովի բերած 500 հազար ռուբլի օգնությունից 300 հազարն օգտագործել երկրամասում գլուխ բարձրացած անիշխանությունը վերացնելու, իսկ 200 հազարը՝ բնակչության համար սննդամթերքներ ձեռք բերելու համար։ Համագումարն ընտրեց մի խորհուրդ (Մուշեղ Զաքարյան, Ռուբեն Շահնազարյան, Լյուֆտալի բեկ Բեհբուդով և Հյուսեյին բեկ Վեզիրով), որը պետք էր մինչև հաջորդ համագումար քոչի հարցը լուծելու առաջարկներ մշակեր։ Ընտրվեց օկրուգային խորհուրդ, որի հիմնական խնդիրն էր ամրապնդել երկրամասի կառավարման գործը և հավաքել հարկերն ու տուրքերը։ Հայրապետ Մուսայելյանին և Լյուֆտալի բեկ Բեհբուդովին



հանձնարարվում է շրջել համագումարին մասնակցած Շուշիի, Ջիվանշիրի, Կարյագինոյի և Զանգեզուրի գավառների հայկական ու մուսուլմանական գյուղերը, մոտիկից ծանոթանալ բնակչության վիճակին, տեղերում լուծել պարենավորման, ֆինանսական և այլ հարցեր։

Հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ նորաստեղծ մարմինը, որտեղ իշխում էին բեգական, կալվածատիրական և ազնվական տարրերը, կենսունակ չէր Ղարաբաղը կառավարելու և վիճելի հարցերը դրականորեն լուծելու գործում։ Բացի այդ, խորհրդի աշխատանքներին խանգարում էին ազգայնամոլները, մանավանդ մուսավաթականները։ Ուստի, խորհուրդը շուտով կազմալուծվեց։[99]

Երկրամասի շրջանների հետ կապված մի շարք կենսական խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ էր հրավիրել գյուղացիական և շրջանային համագումարներ։ 1918թ. ապրիլի 22–ին Խանքենդում տեղի ունեցած Խաչենի և Վարանդայի գյուղացիական համագումարը քննարկեց քոչի հարցը։ Շատերն իրենց ելույթներում պնդում էին, որ Ղարաբաղի հարթավայրային շրջանների քոչվորներին չպետք է թույլատրել բարձրանալ սարերը։ Զինվորական միության ներկայացուցիչ Նիկոլայ Իսախանյանն իր ելույթում շեշտում է, որ ժողովրդի դարավոր ապրելաձևն ու սովորությունները չի կարելի վերացնել մեկ որոշումով, ուստի, չի կարելի արգելել քոչվորների սար բարձրանալը։ Եղիշե Իշխանյանը Միջկուսակցական բյուրոյին առաջարկում է չուշացնել համագումարի հրավիրումը և որոշել քոչի հարցը, որովհետև սար բարձրանալու ժամկետին շատ քիչ էր մնացել։[100] Որոշվում է համագումարը հրավիրել Դաշբուլաղ գյուղում, ապրիլի 29–ին։ Նշված օրը Դաշբուլաղում հավաքվում են 45 գյուղական համայնքների ավելի քան 100 պատգամավորներ։ Համագումարին մասնակցում են նաև Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը, Հայրապետ Մուսայելյանը, մի շարք այլ քաղաքական գործիչներ և սպաներ։ Սրբազանը նախ օրհնում է համագումարը, ապա խրախուսանքի խոսք ուղղում պատգամավորներին։ Նա կոչ է անում քննարկվող ծանրակշիռ խնդիրը լուծելիս աչալուրջ լինել և այնպիսի որոշում ընդունել, որ «չխախտի խաղաղությունը և չվնասվի մեր ժողովուրդը»։ Երկար վիճաբանությունից հետո որոշվում է քոչվորներին ճամփա տալ սարերը բարձրանալու, պայմանով, եթե նրանք զենք չկրեն և վերացնեն հայերին մթերք վաճառելու բոյկոտը։[101]

Չնայած արցախահայությունը գնաց այդ զիջմանը, սակայն թուրք ազգայնամոլները շարունակում էին տանել հակահայկական քարոզչություն։ Շուշիի մուսավաթականների պարագլուխներից բժիշկ Քեարիբեկ Մեհմանդարովը և նրա գաղափարակից ոմանք մեղադրում էին նրանց, ովքեր ջանում էին կանխել ազգամիջյան ընդհարումները և հարաբերությունները բարելավել հայ ու մուսուլման ժողովուրդների միջև։ Թուրք ազգայնամոլների ճնշման տակ Աղդամի և հարևան շրջանների մուսուլմանները հրաժարվեցին հացահատիկ և այլ սննդամթերք վաճառել հայերին։

Անկասկած, Ղարաբաղի տարածքում բույն դրած մուսուլման բեկերի և

կալվածատերերի քաղաքական կողմնորոշումը թուրքական էր: «Մուսուլման կալվածատերերի,– գրում է Հարություն Թումյանը,– դասակարգային ինքնապահպանության բնազդը, նրանց համար մահացու վտանգներով հղի այդ խառը ժամանակներում, մղել էր նրանց օսմանյան թուրքերի գիրկը՝ դարձնելով վամպիրների այդ ոհմակին պանթուրքական, պանիսլամական գաղափարախոսության կատաղի հետևորդներ»:[102]

Արցախ–Ղարաբաղը բոլորից շատ կարիք էր զգում ֆինանսական միջոցների: Դրամ ձեռք բերելու նպատակով Բաքու է մեկնում մի պատվիրակություն, ի դեմս Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի և Վարդան Վարդապետյանի, որին հաջողվում է Բաքվի Հայոց ազգային խորհրդից ստանալ 100 հազար ռուբլի, որից 90 հազարը տրվում է Դավիթ խանին[103] Շուշիի բնակչության համար հացահատիկ գնելու: Գերասիմ Մելիք–Շահնազարյանը Բաքվից մեկնում է Թիֆլիս, որտեղ նրան հաջողվում է ձեռք բերել 700 հազար ռուբլի ևս: Մինչդեռ սովի ճիրաններում գտնվող արցախահայության պահանջները բավարարելու համար պահանջվում էր 12–13 միլիոն ռուբլի:[104]

Մյուս հրատապ խնդիրը Գորիսի հետ կապի վերականգնումն էր, մանավանդ, որ Զանգեզուրի վիճակը ևս խիստ ծանր էր: Զանգեզուրը նույնպես կտրված լինելով բոլոր կողմերից, Արցախի պես գալարվում էր սովի ճիրաններում: Այստեղ կուտակված հազարավոր գաղթականները կյանքի դժոխային պայմաններում էին: Շտապ Գորիս են մեկնում մի խումբ արցախցիներ, որոնք մի քանի օրից վերադառնում են՝ 500 արևմտահայ գաղթականների հետ միասին:[105] Գորիս մեկնած պատվիրակությունը նաև հանձնարարություն ուներ իմանալ, թե երբ տեղ կհասնի Շուշիի գունդը, որի նկատմամբ մուսուլմանները կանխակալ կարծիք էին ստեղծել և պատրաստվում էին թույլ չտալ, որ այն մտնի Արցախ:





# ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ

## *1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ*

1918թ. մայիսի վերջին Անդրկովկասի ժողովրդական դաշնակցային հանրապետությունը փլուզվեց. մայիսի 26–ին և 27–ին վրացական և ադրբեջանական ազգային խորհուրդների կողմից հռչակվեց Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների անկախությունը, իսկ մայիսի 28–ին ստեղծվեց Հայաստանի անկախ հանրապետությունը: Ավելի քան հինգ դար առաջ կորցրած պետականության վերականգնումը հայ ժողովրդի դարավոր իղձն էր: Այդ բաղձալի լուրը աշխարհին հայտնեցին Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջնունին և արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Խատիսյանը: Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն» և «ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:[1] Իրոք, հայկական պետականության վերականգնումը բեկումնային իրադարձություն էր հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ:

Այդ օրերին, երբ Անդրկովկասի ժողովրդավարական դաշնակցային հանրապետությունն արդեն օճառի պղպջակ էր դարձել, Բաթումում ընթացող բանակցություններում Թուրքիան մատ էր թափահարում: Վրացական և ադրբեջանական հանրապետությունները շատ արագ լեզու գտան թուրքերի հետ: Միանգամայն այլ էր Հայաստանի վիճակը: Նրա պատմական տարածքի մեծ մասը գրավված էր թուրքերի կողմից: Դեռևս ապրիլի 22–ին, երբ սեյմը քննարկեց Թուրքիայի պահանջը, նրանում իշխող ազգայնամոլները գերադասեցին երկրամասը փաստորեն հանձնել Անդրկովկասի ժողովուրդների դարավոր թշնամուն՝ սուլթանական Թուրքիային, միայն թե չլինեին խորհրդային Ռուսաստանի հետ:

Ինչպես ասվել է, ապրիլի 22–ին սեյմը Անդրկովկասը հայտարարեց անկախ, և դրանով իսկ երկրամասի դռները բացվեցին թուրք–գերմանական և անգլիական նվաճողների առաջ: Մուսավաթականները վաղուց գաղտնի կապեր ունեին թուրքերի հետ և երազում էին նրանց խնամակալությամբ Անդրկովկասում հասնել իշխող դիրքի: Թուրքերն ու գերմանացիները ձգտում էին մասնատել Անդր-

կովկասը, որպեսզի հեշտությամբ նվաճեն այն: Բաթումում հունիսի 4–ին կնքված պայմանագրով Թուրքիային է անցնում 38 հազար քառակուսի վերստ տարածություն՝ 1.250 հազար բնակչությամբ, որից 28 հազարը Հայաստանից՝ 900.000 բնակչությամբ, 10 հազար քառակուսի վերստ՝ 350.000 բնակչությամբ՝ Վրաստանից, հատկապես. հայաշատ տարածքից: 12.421 քառակուսի վերստով և 635 հազար բնակչությամբ գերազանցում էր այն տարածքը, որը պետք է թողնեին ռուսական զորքերը Բրեստի հաշտությամբ:[2]

Թուրքերն իրենց համաթուրքական հրեշավոր ձգտումն իրագործելու ճանապարհը փակող Հայաստանը ոչնչացնելու և հայ ժողովրդին լրիվ բնաջնջելու լավագույն տարբերակներից մեկը համարում էին Անդրկովկասում իրենց ցեղակից թուրք–թաթարների պետության ստեղծումը:

Վերջին տասնամյակներում Ադրբեջանի պատմաբանների մի խումբ, կանգ չառնելով ոչ մի կեղծության առաջ, փորձում է «ապացուցել», թե իբր «ադրբեջանցիները» հանդիսանում են աղվանների հետնորդները, հետևապես՝ նրանք Անդրկովկասի հնագույն ժողովուրդներից են: Մինդեռ անժխտելի ճշմարտություն է, որ Արևելյան Անդրկովկասը մինչև 20–րդ դարը չգիտեր «Ադրբեջան» անվամբ պետություն: «Ադրբեջան» անունով պետությունը առաջին անգամ հայտարարվեց 1918 թվականի մայիսին կովկասյան թաթարների բուրժուաազգայնական «Մուսավաթ» կուսակցության կողմից՝ յուրացնելով իրանական Ատրպատական նահանգի արաբական անվանումը, դրանով իսկ հասկացնելով իրենց պահանջատիրությունը նաև Իրանի այդ հողերի նկատմամբ:[3]

Այդ ժամանակ, քանի որ Բաքվում իշխում էր կոմունան, ուստի մուսավաթականները որոշեցին իրենց նորածնունդ պետությունը կազմակերպել Ելիզավետպոլի նահանգում, որտեղ բնակվում էին ավելի քան 300 հազար հայեր: Թուրք–թաթարների համար հայերի բնաջնջման քաղաքականությունը չէր վերացել օրակարգից: Նրանք առաջին հերթին նախատեսել էին ոչնչացնել Գանձակից մինչև Բաքու ընկած տարածքի վրա բնակվող հայերին: Այդ ոճրի իրագործումը չուշացավ: 1918 թ. հունվարի 9–12–ը Շամխորի արյունոտ դեպքերից հետո Բաքուն կտրվեց Թիֆլիսից ու Ղարաբաղից: Բաքու–Գանձակ երկաթուղային ճանապարհը մնաց թուրքերի ձեռքին: Ամբողջ Նուխի–Արեշի հայությունը ընկավ շրջափակման մեջ: Նախիջևանում, Օրդուբադում, Ագուլիսում և Գանձակում զանգվածային ջարդեր կազմակերպվելուց հետո, թուրքերը նույնը շարունակեցին Շամախու, Գյոկչայի, Արեշի, Նուխիի հայության նկատմամբ: 1918 թ. փետրվար–մարտ ամիսներին Նուխի–Արեշում ոչնչացվեցին 18 հայկական գյուղ և սրի քաշվեցին 17 հազար մարդ, տեղահանվեց Խաչմազի և Լենքորանի հայ բնակչությունը, ծանրացավ Ղուբայի հայության վիճակը: Մարտին թուրքերը ավերեցին Շամախու հայկական թաղամասը և 20–25 հայկական գյուղեր: Մոտ 25.000 հայեր ապաստան գտան Մազրա և մյուս ռուսական գյուղերում: Նույն թվականի մայիս–հունիսին Նուխի–Արեշի 52 հայկական գյուղերից 42–ը ոչնչացվեցին, և սրի մատնվեցին 40 հազար տեղաբնակ հայեր:[4]

Բաթումի բանակցություններին հայկական կողմից մասնակցում էին Ալեքսանդր Խատիսյանը, Հովհաննես Քաջազնունին և Միքայել Պապաջանովը: Ճիշտ



է, նրանց կողմից թուրքերի հետ ստորագրված պայմանագրում խոսք չկա Արցախի և Զանգեզուրի մասին, բայց այն փաստը, որ հայկական հանձնաժողովը հրաժարվել է նախկին Ելիզավետպոլի նահանգի մեջ մտած հայկական շրջաններից, խոսում է այն մասին, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ղեկավարները թերագնահատում էին Արցախ–Զանգեզուրի դերը Հայաստանի ճակատագրում: Երբեք էլ պատահական չէ, որ վրացական պատվիրակության խորհրդականը գրել է. «Հայերը հրաժարվել են Գանձակի նահանգի մասերից (Ղարաբաղի)...»:[5] Ճիշտ է, հունիսի 13–ին Հայոց ազգային խորհուրդը դ. 2640 գրությամբ Ադրբեջանի Մուսուլմանական ազգային խորհրդից պահանջել էր Ղարաբաղը ճանաչել որպես Հայաստանի տարածքի մաս, սակայն հաջորդ օրը Ադրբեջանի Մուսուլմանական ազգային խորհրդի նախագահը դ. 114 գրությամբ մերժել էր այդ պահանջը՝ պատճառաբանելով, թե «Մուսուլմանական և Հայկական ազգային խորհուրդների ներկայացուցիչների համատեղ նիստում ընդհանուր գծերով ձեռք է բերվել բանավոր համաձայնություն Ադրբեջանի և Հայաստանի տարածքների սահմանազատման հարցի վերաբերյալ, ըստ որում Հայկական ազգային խորհրդի կողմից մասնակցել են Մ.Խ. Պապաջանովը, Ս.Ս. Հարությունովը և ուրիշներ: Այն ժամանակ Ղարաբաղի հարցը ընդհանրապես չի բարձրացվել»: Ադրբեջանի Մուսուլմանական ազգային խորհուրդը պնդում էր, որ Ադրբեջանի և Հայաստանի տարածքների սահմանների մասին բոլոր տեսակի բանակցությունները կարող են ընթանալ «միայն վերոհիշյալ համաձայնության սահմաններում և հիմքի վրա»:[6]

Բաթումի պայմանագիրը ստորագրվեց առանց Ղարաբաղի, Զանգեզուրի և հայկական այլ տարածքների բնակչության կամքն ու ցանկությունը հարցնելու: Թե պայմանագիրը ստորագրողները ինչի վրա էին հույս դնում, պարզ չէ: Միանգամայն արդարացիորեն արցախցիներն ու զանգեզուրցիներն ըմբոստացան և մերժեցին Բաթումի պայմանագիրը:

Նորահայտ Ադրբեջանի Հանրապետությունը փորձում էր թուրք զավթիչների օգնությամբ տիրանալ ամբողջ Արցախ–Զանգեզուրին և Գանձակի հայկական շրջաններին: Հետզհետե ավելի էր շեշտվում ադրբեջանական թուրքերի իշխող խավի ծավալապաշտական ոգին ու ախորժակը: Հողային ավելի խոշոր տիրապետության ձգտող Ադրբեջանի կալվածատերերի երևակայության մեջ «Ադրբեջան էր համարվում ոչ միայն հողային տարածության այն մասը,– գրում է արևմտահայ պատմաբան Լևոն Մկրտչյանը,– որը հիմնականում ադրբեջանցիներով էր բնակված, այլև կովկասյան Հայաստանի կեսից ավելին: Տրամաբանությունն այս էր. Լեռնային Գանձակը, Ղարաբաղը և Զանգեզուրը *«Ադրբեջանի անբաժանելի մասն են կազմում»*, ներառյալ Երևան քաղաքը, որովհետև ադրբեջանցիներն այդպես են կամենում, թեև այդ բոլոր շրջանները ժամանակին Երևանի նահանգի, իսկ էլ ավելի առաջ «Հայկական մարզի» մեջ էին մտնում: Եվ այս ծավալապաշտական մտայնությունը յուրացում էր համապատասխան քաղաքականության և գործունեության»:[7]

Բաթումի պայմանագրի և թուրք–թաթարների ծավալապաշտական ձգտումների վերաբերյալ ավելի հստակ և վճռական արտահայտվեց Զանգեզուրի ազ-

գային խորհուրդը 1918 թ. օգոստոսի 18–ին երկրամասի բնակչությանն ուղղված կոչում: «Հայկական Հանրապետությունից,– կարդում ենք այդ փաստաթղթում,– արհեստական կերպով անդամահատել են Արցախն ու Սյունիքը, որոնք... շարունակ պիտի ըմբոստանան և հանգիստ կյանք չպետք է ունենան, մինչև որ չվերանան արհեստական բաժանումները...»: Այնուհետև ասված է, որ եկվոր թուրքերը փորձում են «ստրուկ դարձնել Ղարաբաղի և Զանգեզուրի լեռներին ապաստանած հայերին, որոնք գլուխ չեն խոնարհել Լենկ–Թեմուրին և Ալփ–Ասլանին և ոչ էլ օսմանյան զորքերին»: Ապա «...Մեր առջև երկու ճանապարհ կա. կամ պետք է առանց կռվի զինաթափ լինենք, հանձնվենք տաճիկներին ու թաթարներին, տանք նրանց բռնաբարելու մեր քույրերին մեր աչքերի առջև, ապա ոչխարի պես մորթոտվենք բոլորս, կամ ամենքս միանգամից պետք է պատրաստ լինենք զենքը ձեռքներիս պաշտպանելու մեր գոյությունն ու պատիվը»:[8]

Ռուբեն Տեր–Մինասյանը տեղեկացնում է, որ «Վրացիները և տաճիկ բանագնացները Ադրբեջանին կը թելադրեին իրը համարել Գանձակի հայկական լեռնային գաւառները և նույնիսկ կազմել «Արազդայան» Հանրապետութիւն Երևանյան նահանգի մեջ»:[9]

Թուրքերը, ձեռքի տակ ունենալով Բաթումի պայմանագիրը, մտածում էին ճանապարհ բացել Նախիջևան–Զանգեզուր–Ղարաբաղ գոտիով, որը նշանակում է այդ տարածքները խլել Հայաստանից, ամբողջովին հայաթափել և լրիվ բնակեցնել մուսուլմաններով: Հայկական ցեղասպանության կազմակերպիչներից դոկտոր Բեհաեդդին Շաքիրը տակավին առաջին աշխարհամարտի նախօրյակին ցինիկաբար հայտարարել էր. «Հայերը կանգնած են համաիսլամական և համաթուրքական մեր սուրբ գաղափարների ճանապարհին, և մենք անխուսափելիորեն կբախվենք նրանց հետ: Դա վեհ խնդիր է և դուրս է մեր անձնական զգացումներից ու տրամադրություններից: Մենք ստիպված ենք մեր ճանապարհին տարերայնորեն ոչնչացնել այն ամենը, ինչը խոչընդոտում է մեր ազգային սուրբ գաղափարների կենսագործմանը»: Հայ ժողովրդի ցեղասպանության մեկ ուրիշ երիտթուրքական հանցագործ Վեհիբ փաշան 1918 թ. մայիսին Բաթումի կոնֆերանսում դիմելով հայկական պատվիրակությանը, անամոթաբար ասել է. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային նետում է արևմուտքից արևելք: Մենք հեռացել ենք Բալկաններից... բայց մենք պետք է տարածվենք: Այնտեղ մեր արյունն է, մեր կրոնը, մեր լեզուն: Դա տարերային ձգտում է: Մեր եղբայրները Բաքվում, Դաղստանում և Ադրբեջանում են: Մենք պետք է ճանապարհ հարթենք դեպի նրանց: Եվ դուք, հայերդ, մի կանգնեք մեր ճանապարհին...»:[10]

Հետաքրքիր է նաև այն, որ Բաթումի պայմանագրով պետք է «ետ կանչվեին» Բաքվի կոմունան պաշտպանող հայկական ուժերը: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունը ոչ մի առնչություն չուներ այդ ուժերի ձևավորման հետ: Բաքվի կոմունային հիմնականում պաշտպանում էին հայկական ուժերը, որոնց թիվը հասնում էր 17–18 հազարի, որոնցից 10–12 հազարը Արևմտյան ռազմաճակատից վերադարձող հայ զինվորներ էին, իսկ նրանց մեջ կային բավականին թվով արցախցիներ և զանգեզուրցիներ, որոնք հնարավորություն չունեին հայրենի օջախներ վերադառնալ, քանի որ թուրք–թաթարները փակել էին ճանապարհները: Այդ ուժերը պաշտպանում էին ոչ միայն Բաքվի կոմունան, այլև քաղաքում գտնվող 90 հազարի հասնող հայերի ֆիզիկական գոյությունը:[11]



Արարատյան Հանրապետությունում շուտով հասկացան Բաթումի բանակցությունների ժամանակ թույլ տրված բացթողումները: Դրանք ուղղելու համար անհրաժեշտ էր դիմել գործնական քայլերի: Հանրապետության արտաքին գործերի նախարար Ավետիս Ահարոնյանը 1918 թ. հուլիսի 8–ին Կոստանդնուպոլսի կոնֆերանսի հայկական պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանին ուղարկած հեռագրում պահանջում է ուղղում մտցնել Բաթումի պայմանագրի մեջ և Շուշիի, Կարյագինոյի, Ջիվանշիրի, Գանձակի, Զանգեզուրի, Ղարալագյազի, Շարուրի, Սուրմալուի, Նախիջևանի տարածքները ճանաչել որպես Հայկական Հանրապետության անբաժան մաս:[12] Իր հերթին, ինչպես 1918 թ. հուլիսի 27–ին հաղորդել է «Կովկազսկոե սլովո» թերթը, «Ադրբեջանը պատրաստվում էր... թուրքական սվիններով գրավել Ղարաբաղը և այնտեղ նշանակել իրենց պաշտոնյաներին»: Թերթը նաև հաղորդում էր, որ երբ հայտնի դարձան Բաթումի բանակցությունների արդյունքները, Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ եզրակացրին, որ անարդարացի է Հայաստանից կտրել 250 հազար բնակչություն ունեցող Շուշին, Զանգեզուրը և Սիսիանը: Թերթը Հայաստանի կառավարությունից և ազգային խորհրդից պահանջում էր «միջոցառումներ ձեռնարկել Ղարաբաղի բնակչությանը պաշտպանելու համար» և «այն փրկել ահեղ վտանգից»: Թիֆլիսի հայրենակցականների միության 1918 թ. հուլիսի 10–ին Ղարաբաղի մասին կազմած հուշագրում նշված է, որ ներկայումս Հայաստանի և Ադրբեջանի միջև վիճաբանության հարց է դարձել Ղարաբաղը, և որ Ադրբեջանը պնդում է, թե պետք է Ղարաբաղը մտցվի իր սահմանների մեջ, մինչդեռ հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղը տեղագրական, լեռնագրական, ֆիզիկական, տնտեսական և մշակութային կյանքի, էթնիկական և լեզվաբանական տեսակետից հայկական է. և դրանում որևէ կասկած լինել չի կարող:[13]

***

Արցախ–Ղարաբաղում անհամբերությամբ հետևում էին Անդրկովկասում, մանավանդ Գանձակում և Բաքվում տեղի ունեցող իրադարձություններին: Հայաստանի անկախության հռչակման մասին լուրը մի քանի օր ուշացումով հասավ Ղարաբաղ և ընդունվեց մեծ ոգևորությամբ: Իսկ երբ Բաթումի հաշտության պայմանագրի բովանդակությունը հայտնի դարձավ, արցախահայության վրա սառը ջուր մաղվեց: Հենց այդ օրերին՝ մայիսի 29–ին, Ասկերանում տեղի ունեցած հայ–թուրքական երրորդ համագումարը, քննարկելով քոչը սար բարձրանալու, հայերի նկատմամբ բոյկոտի վերացման, Կովկասյան կոմիսարիատի բռների և Բաքվի ճանապարհը անվտանգ դարձնելու մասին հարցերը, ընդունեց կարևոր որոշումներ: Չնայած քոչը սար բարձրանալու մասին հարցը դրական լուծում էր ստացել հայ գյուղացիական համագումարում, սակայն ելույթ ունեցողները բազմաթիվ օրինակներ բերեցին, որ հարթավայրի թուրքերը շարունակում են բոյկոտի քաղաքականությունը, չեն բացում Շուշի–Եվլախ ճանապարհը, հրաժարվում

են մթերքներ վաճառել հայերին, փորձում են սար բարձրանալ զինված, առուծախի ժամանակ չեն ընդունում Կովկասի կոմիսարիատի բոները, հայերի համար Բաքվի ճանապարհները փակ են բոլոր կողմերից, մահմեդականների մեղքով արցախցիները լրիվ կտրվել են Երևանից, մասամբ էլ Գանձակից: Մուսուլման պատգամավորները խոստացան ջանքեր գործադրել և հարթել այդ բոլոր խոչընդոտները, իսկ հայ պատգամավորներն էլ խոստացան բացել քոչի ճանապարհը:[14] Քոչը սար բարձրանալու համար Աղդամից մինչև հայ–թուրքական սահմանը քոչվորներին պետք է հսկեին թուրք միլիցիոներները, իսկ ամբողջ Ղարաբաղի տարածքով՝ հայ միլիցիոներները: Քոչը թույլատրվեց սար բարձրանալ հունիսի 9–ից:

Արցախ–Ղարաբաղի քաղաքական ուժերի միջև մեկ-մեկ խախտվում էր հաստատված համերաշխությունը, որը թողնում էր բացասական հետևանքներ: Շուշիի երիտասարդ դաշնակցականները հունիսի երկրորդ տասնօրյակի սկզբին Ապառաժի անդամ Մուշեղ Զաքարյանի դրդմամբ կատարելով հեղաշրջում, ցրում են Միջկուսակցական բյուրոն և իշխանությունը վերցնում իրենց ձեռքը: Սակայն մեկ շաբաթ անց նրանք ստիպված հրաժարվում են իշխանությունից և բյուրոյին խնդրում հետ վերցնել իշխանությունը:[15] Այդ գործողությունն արագացնում է Արցախում ղեկավար նոր մարմնի ստեղծումը: Հունիսի 15–17–ը տեղի ունեցած միջկուսակցական նոր հավաքը ստեղծում է «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»:[16] Պարզապես՝ Միջկուսակցական բյուրոն վերանվանվում է Կոմիսարների խորհուրդ: Նորակազմ Կոմիսարների խորհուրդը ուներ հետևյալ կազմը.

1. Հայրապետ Մուսայելյան (դաշնակցական), Կոմիսարների խորհրդի նախագահ,
2. Աշոտ Մելիք–Հովսեփյան (սոցիալ- դեմոկրատ, մենշևիկ), արդարադատության կոմիսար,
3. Հարություն Թումյան (դաշնակցական), զինվորական կոմիսար,
4. Արսեն Բակունց (սոցիալ-դեմոկրատ, մենշևիկ), արտաքին գործերի կոմիսար,
5. Արամ Միքայելյան (սոցիալիստ-հեղափոխական), ֆինանսների կոմիսար,
6. Ասծատուր Ավետիսյան (դաշնակցական), պարենավորման կոմիսար,
7. Արտաշես Պետրոսյան (դաշնակցական), ներքին գործերի կոմիսար:

Կոմիսարների խորհրդի քարտուղար է ընտրվում Ռուբեն Տեր–Գասպարյանը (սոցիալիստ-հեղափոխական, հետագայում՝ Գնունի– Հ.Ա.):[17]

Հավաքը ստեղծում է մի կոմիտե՝ Հայրապետ Մուսայելյան, Աշոտ Մելիք–Հովսեփյան, Լևոն Վարդապետյան, Արամ Միքայելյան, Նիկոլայ Իսախանյան և Արտաշես Պետրոսյան կազմով, որը պետք է կապերն ամրապնդեր երկրամասում բնակվող այլազգերի հետ:[18]

Ստեղծված պայմաններում նման կոալիցիոն կառավարություն կազմելը և համատեղ ուժերով երկրամասի ղեկավարումը, նրա ինքնապաշտպանության ամրապնդումն ու ժողովրդավարության զարգացումը միակ ընդունելի քայլն էր: Մինչդեռ դա չգնահատվեց Ղարաբաղի բոլշևիկների կողմից: Հարություն Թումյանը գրել է, թե Ղարաբաղում «կոալիցիա կազմած հայ մտավորականության քաղաքական կողմնորոշումը երբեք չգնահատվեց Շուշիի բոլշևիկյան խմբակի ղեկավարների կողմից»: Թե Ալեքսանդր Ռուբենին, թե Սաքո Համբարձումյանը և թե Արմենակ Կարակոզովը «շարունակում էին պահպանել իրենց աղանդավորական, դոգմատիկ դիրքը: Նրանք մինչև վերջ չկամեցան այդ ծանր ժամանակներում որևէ բանում աջակցել Ղարաբաղի ղեկավարությանը... Այդ մարդկանց անվայել դիրքը չհանդուրժեց նրանց ընկերներից միայն մեկը՝ Մելիքսեթ Եսայանը: Քաղաքական մեծ արիության տեր, անկեղծ, ուղղամիտ և հայրենասեր այդ անձը դատապարտեց իր նեղահայաց գաղափարակիցների դիրքը, եկավ Կոմիսարների խորհուրդ և առաջարկեց իր ծառայությունը...»:[19]

Ղարաբաղի նորաստեղծ կառավարությունն անմիջապես անցնում է գործի: Ամենից առաջ սար բարձրացող թուրք քոչվորների նկատմամբ սահմանվեց հսկողություն, որպեսզի չփչացնեն ցանքսերն ու այգիները: Ապա քայլեր ձեռնարկվեցին արդեն Զանգեզուր հասած Շուշիի գունդը Արցախ տեղափոխելու և Շուշի–Գորիս փոստ–հեռագրական ընդհատված կապը վերականգնելու համար: Սակայն թուրք–թաթարների հակահայկական գործողությունների հետևանքով այդ ձեռնարկումները մնացին անկատար: Նաև քայլեր են կատարվում Բաքվի Կոմունայի և Խորհրդային Ռուսաստանի հետ կապեր հաստատելու, հացահատիկային կուլտուրաների բերքահավաքն անկորուստ կազմակերպելու, տեղական իշխանությունները և երկրամասի ինքնապաշտպանությունը ամրապնդելու, Ղարաբաղի հայության առաջին համագումարը հրավիրելու և այլ կարևոր հարցեր լուծելու ուղղությամբ:[20]

Այնուամենայնիվ, երկրամասի վիճակը մնում էր ծանր: «Աշխատավորը» 1918թ. հուլիսի 6–ին այսպես է նկարագրել քաղաքի և գյուղերի դրությունը. ամեն տեղ սով է և անիշխանություն, գյուղերում գյուղացին դաշտային աշխատանքները կատարում է զենքը ձեռքին: Ութ ամիս է՝ չի գործում փոստը, դրա համար էլ քաղաքում դրամի սով է: Դրսի աշխարհի հետ հաղորդակցության որևէ կապ չկա: Շատերը վաճառում են տան իրերը, որպեսզի կարողանան ձեռք բերել կենսամթերքներ: Աղքատները մի քանի ամիս է, ինչ սնվում են բույսերով և արմատներով: Այստեղ շատերը մտածում են տեղափոխվել Թիֆլիս կամ Ռուսաստան: Մարդիկ չեն կարողանում իրենց առօրյա զբաղմունքին նվիրվել: Ամբողջ առևտուրը կենտրոնացված է թաթարների ձեռքին: Տեղական կյանքը ղեկավարում է «հեղափոխական կուսակցությունների միությունը» և հետևում է քաղաքի կարիքներին վերաբերող բոլոր գործերին:

Այդ նույն օրերին, հուլիսի 3–ին, Բաքվի «Արևը» նույնպես հաղորդել է, որ աշխարհից կտրված Շուշին մնացել է առանց դրամի: Հայերն ամրացել են Ասկերանում, իսկ թուրքերը՝ Աղդամում: Երկու կողմից էլ ոչ մի հարաբերություն: Եվլախի ճանապարհը փակ լինելու պատճառով Շուշիի հայկական մասում իսկական սով է: Թուրքերը չեն համաձայնվում բացել Բաքու տանող ճանապարհը:

1918 թ. հունիս–հուլիսին Աղդամ, Շուշի, Կարյագինո, Ջեբրաիլ և այլ տեղեր են ժամանում թուրքական էմիսարները, որոնց ազերիներն անվանում էին «փաշա»: Հաստատվում են պարետություններ առանց բանակի: Հունիսի կեսերին Աղ-

դամի կոմենդատ (պարետ) է նշանակվում տաճիկ Քյազիմ Բեյը, Շուշիում նույնպես տաճիկ Յասան Բասրի բեյը, իսկ Կարյագինոյում՝ Մահմուդբեկովը (այլ աղբյուրներում՝ Բախրայ բեյը): Յենց այդ ժամանակվանից մուսուլմանական ազգային կոմիտեները դադարեցնում են իրենց գործունեությունը և ամբողջ իշխանությունը հանձնում են թուրք կոմենդանտներին: Այս վերջինների պահանջով մուսուլմանները սկսում են դադարեցնել իրենց հարաբերությունները հայերի հետ և երկու ժողովուրդների միջև օր օրի խորանում են անվստահությունն ու թշնամությունը:[21]

Արցախահայության վիճակն ավելի ծանրացավ մանավանդ Բաքվի կոմունայի անկումից հետո: Մուսավաթական կառավարությունը շտապում էր թուրքական զավթիչների սվիններով վերջ տալ Արցախ–Ղարաբաղի ինքնուրույնությանը և զավթել այն: Թուրք–թաթարների այդ ձգտումներին պատասխան տալու համար արցախահայությունը կարևոր էր համարում բոլոր ջանքերով պաշտպանել երկրամասը և պահպանել նրա ինքնուրույնությունը: Այդ կենսական և բախտորոշ խնդիրը հնարավոր էր լուծել միայն Ղարաբաղի աշխատավորների կամքն արտահայտող ընդհանուր համագումարի միջոցով:

Նախատեսվում է Ղարաբաղի հայության առաջին համագումարը հրավիրել հուլիսի երրորդ տասնօրյակում: Մինչ այդ տեղի են ունենում շրջանային համագումարներ և ընտրվում են պատգամավորներ: Կոմիսարների խորհուրդը հուլիսի 14–ին հրահանգ է ուղարկում Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի գյուղական հասարակություններին՝ ընտրված պատգամավորներին ուղարկել Շուշի՝ մասնակցելու Ղարաբաղի հայության առաջին համագումարին: Յամագումարին մասնակցելու համար քաղաքի բնակչությունից ընտրվել էին ութ հոգի, երկուական հոգի էլ ընտրվել էին դաշնակցականներից, սոցիալ-դեմոկրատներից, էսէռներից, բոլշևիկներից և կադետներից: Ընդամենը ընտրվել էր 60 պատգամավոր, որոնց գրեթե մեկ երրորդը ունևոր գյուղացիներ էին:[22]

Ղարաբաղի հայության առաջին համագումարը[23] բացվում է 1918 թ. հուլիսի 22–ին: Խորհրդակցական ձայնով դրան մասնակցում են նաև Միջկուսակցական բյուրոյի բոլոր անդամները և զանազան կուսակցությունների անդամ մի քանի մտավորականներ: Այն տեղ է ունենում Շուշիի թեմական դպրոցի դահլիճում և աշխատանքները շարունակում է մինչև հուլիսի 26–ը: Յամագումարի նախագահ է ընտրվում բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյանը, փոխնախագահ՝ Արշավիր Քամալյանը, քարտուղար՝ Մելիքսեթ Եսայանը (որոշ աղբյուրներում՝ Թեոդորոս Տեր–Յովհաննիսյանը): Յամագումարի առաջին նիստից հետո Ալ. Ծատուրյանը, առանց որևէ պատճառաբանության, հրաժարվում է նախագահելուց, որը մեծ «վրդովմունք է առաջ բերում պատգամավորների շրջանում»:[24] Այնուհետև համագումարի նախագահ է ընտրվում Արսեն Յովհաննիսյանը (Արսո Բաղդասարյան):

Յամագումարը քննարկում է հետևյալ հարցերը.

1. Բյուրոյի և Կոմիսարների խորհրդի հաշվետվությունները: 2. Պարենավորման խնդիրը: 3. Յարկահանությունը: 4. Դատարանների հարցը: 5. Արտաքին հարաբերությունների մասին: 6. Ղարաբաղը որպես Արարատյան Յանրապետության անբաժան մաս: 7. Ինքնապաշտպանության խնդիրը: 8. Ընտրություններ:[25]



Յամագումարը Արցախ–Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած կառավարություն, որն իրագործում էր թե օրենսդիր և թե գործադիր մարմնի ֆունկցիաներ: Սրանով իսկ հռչակվում էր Ղարաբաղի ինքնիշխան և անկախ վարչատարածքային միավոր լինելը: Յամագումարն ընտրում է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն հետևյալ կազմով.

1. Իշխանյան Եղիշե (դաշնակցական), կառավարության նախագահ, ներքին և արտաքին գործերի կառավարիչ, 2. Թումյան Յարություն (դաշնակցական), զինվորական գործերի վարիչ, 3. Քամալյան Արշավիր (սոցիալ-դեմոկրատ, մենշևիկ), ֆինանսների վարիչ, 4. Յովհաննիսյան Արսեն (սոցիալիստ հեղափոխական), պարենավորման գործերի վարիչ, 5. Տեր–Աստվածատրյան Սարկոս բեկ (անկուսակցական), արդարադատության գործերի վարիչ, 6. Այվազյան Մարտիրոս (դաշնակցական), հողագործության և ճանապարհների վարիչ, 7. Եսայան Մելիքսեթ (անկուսակցական), կառավարության քարտուղար և շրջանների հետ կապի վարիչ:

Որոշվում է կառավարության կից ստեղծել երկու հանձնաժողով՝ բժշկասանիտարական և ժողովրդական կրթության: Յամագումարն ընտրված կառավարությանը իրավունք է վերապահում, եթե կարիք զգացվի, կոոպտացիոն սկզբունքով թարմացնել և ուժեղացնել իր կազմը:

Յամագումարը որոշում է գյուղական հասարակություններին թույլ տալ կատարել հողերի բռնագրավումներ[26] և օգոստոսի 15–ին հրավիրել պատգամավորական նոր ժողով: Ադրբեջանի նկատմամբ որդեգրելիք վերաբերմունքի առթիվ որոշվում է «ոչ մի դեպքում Ղարաբաղը չճանաչել Ադրբեջանի Յանրապետության մաս», «ձգտել Ղարաբաղը միացնել կամ Յայաստանի Յանրապետությանը կամ էլ լավագույն դեպքում նրան տալ կանտոնի սկզբունքով կառավարելու իրավունք», իսկ «անհրաժեշտության դեպքում պահպանել ռուսական կողմնորոշում և հնարավորության դեպքում վերամիավորվել միասնական Ռուսաստանին»:[27] Յամագումարը որոշում է խիստ միջոցառումներ ձեռնարկել անիշխանության, ավազակների և կողոպտիչների դեմ, կանոնավորել վարչական և դատական հիմնարկությունների գործերը, հոգ տանել քոչվոր անասնապահների անվտանգության համար: Յամագումարի որոշմամբ ստեղծվում է կառավարության օրգան՝ «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը, որի առաջին և միակ համարը լույս տեսավ 1918 թ. օգոստոսի 19–ին:

Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը հուլիսի 24–ին ընդունում է հայտարարություն, որում ասված է, թե ռուսական հեղափոխությունը ոչնչացրեց ցարական բռնակալությունը և ժողովրդին իրավունք տվեց կառավարել ինքն իրեն և որոշել իր ճակատագիրը: Այնուհետև ասված է, որ հեղափոխության ալիքը հեղեղեց նաև Կովկասն ու հրամայականորեն առաջ քաշեց նոր կյանքի ստեղծման պահանջը: Սակայն այն հանդիպեց բազմաթիվ խոչընդոտների: Պատերազմի հետևանքով ստեղծված ծանր վիճակը, զուգորդվելով տեղական աննախընթաց պայմանների և քաղաքական տիասության հետ, դժվա-

րացնում, համարյա ի չիք է դարձնում ամբողջ աշխատանքը: Ռուսական զորքերի հեռանալուց հետո կովկասյան քաղաքական կյանքը կորցրեց իր ծանրության կենտրոնը: Դրությունը չփրկվեց նաև, երբ Կովկասում ստեղծվեցին երեք հանրապետություններ:

Քաղաքական այդ բոլոր վերիվայրումներից միանգամայն առանձնացած, կղզիացած մնաց Ղարաբաղը: Կտրված աշխարհից՝ նա ամբողջ ութ ամիս դեգերում էր միևնույն մռայլ կետում: Ղարաբաղը գիտակցեց պահի լրջությունը: Ժողովրդին հատուկ առողջ բնազդով Ղարաբաղի ազգաբնակչությունը վճռեց չսպասել, մինչև կգա երրորդ ուժը, որը կարող էր նրան ազատել շղթաներից:

Համագումարն ընդգծեց իր ունեցած սերտ բարեկամական վերաբերմունքը դեպի մյուս ազգությունների ժողովրդավարությունը, քանի որ միայն այդ ճանապարհով կարելի է հասնել ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանը:

Արցախում դրությունը կայունացնելու և ձեռք բերված ինքնուրույնությունը պաշտպանելու համար առաջարկվում է գործողությունների լայն ծրագիր:[28]

Ղարաբաղի հայության առաջին համագումարը, ժամանակի մամուլի վկայությամբ, ստեղծելով կառավարություն, դրանով իսկ հռչակեց իր «անկախության իրավունքը», որը, սակայն, մեծ տհաճություն պատճառեց «թուրք մուսավաթականներին»:[29] Համագումարը կարևոր նշանակություն ունեցավ բիրտ ուժերի դեմ երկրամասի աշխատավորների հետագա պայքարը կազմակերպելու և երկրամասում ժողովրդավարական կարգեր հաստատելու գործում:

Չնայած նորաստեղծ կառավարության ուժերն աննշան էին և գրեթե զուրկ էր ֆինանսական միջոցներից, այնուամենայնիվ, այն գործի անցավ «համառ կամքով, անսպառ եռանդով և խորին համոզմունքով»:[30] Կառավարությունն իր առաջին նիստերից մեկում որոշում է ընդլայնել կառավարության կազմը: Աշոտ Մելիք–Հովսեփյանը հրավիրվում է որպես արտաքին գործերի վարիչ: Դպրոցական գործերը վարելու համար հրավիրվում է Շուշիի ռեալականի ուսուցիչ Ռուբեն Շահնազարյանը: Շուշիում կուտակվել էին 3500 գաղթականներ: Որոշվեց, բացի արհեստավորներից, նրանց բոլորին ուղարկել գյուղերը: Գաղթականների գործը վարելու համար հրավիրվում է Մուշեղ Զաքարյանը: Լսելով Գորիսից եկած Գրիգոր Ասրյանի հաղորդումը Շուշիի գնդի մասին՝ որոշվում է միջոցառումներ ձեռնարկել այն Գորիսից Շուշի տեղափոխելու համար: Արցախցիների համար խիստ անհրաժեշտ էր մանավանդ գնդի զինամթերքը, քանի որ գնդում մնացած 200 զինվորներով էական ոչինչ հնարավոր չէր վճռել: Խիստ վիճաբանության հարց դարձավ կառավարության անվան հարցը: Որոշվեց այդ հարցը քննության առնել հաջորդ համագումարում: Քանի որ վտանգված էր Սարով գյուղի բնակիչների կյանքը, որոշվեց նրանց փոխադրել Մարգուշևան և այնտեղ նոր գյուղ հիմնել, չնայած այդ օրերին նման խնդրի լուծումը բավականին դժվարությունների հետ էր կապված:[31]

Կառավարությունը սկսեց ամրապնդել երկրամասի պաշտպանությունը: Դա ամենից առաջ բխում էր նրանից, որ Ղարաբաղի անվտանգությունը չէր ապահոված, և թուրքերը բավականին ուժեր էին տեղափոխել Ջաբուղ: Նրանք արդեն



տեղյակ էին, որ արցախահայերը նախապատրաստվում են Շուշիի գունդը Գորիսից տեղափոխել Արցախ, ուստի շտապում էին փակել ճանապարհը: Թուրքերը միևնույն ժամանակ Գանձակի, Եվլախի և Արաքսի կողմերից զորամասեր էին տեղափոխում դեպի Ղարաբաղ: Ղարաբաղի հայության առաջին համագումարի ավարտի հենց հաջորդ օրը «Կովկազսկոյե սլովո» թերթը գրել է, որ վերջին տարիներին խաղաղ ապրող Ղարաբաղի կյանքը ներկայումս սպառնալիքի տակ է: Հավաստի լուրերի համաձայն, գրում էր թերթը, «Ադրբեջանը պատրաստվում է Ղարաբաղը գրավել թուրքական սվինների օգնությամբ և այնտեղ նշանակել իր կառավարիչները»: Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղի հայերից պահանջում էր անառարկելիորեն ենթարկվել իրեն: Թերթը գտնում էր, որ «Հայաստանի ազգային խորհուրդը և կառավարությունը պետք է իրենց միջոցները ձեռնարկեն Ղարաբաղի բնակչությանը պաշտպանելու համար», և որ պետք է Կոստանդնուպոլսում դիվանագիտական բոլոր միջոցները օգտագործեն, որպեսզի կանխվի Ղարաբաղի սահմաններ ներխուժումը:[32]

Երկրամասի պաշտպանությունը ամրապնդելու համար գործի լծվեցին բոլոր կառավարչություններն ու հանձնաժողովները, ստեղծվեց կենտրոնական շտաբ կապիտան Արտաշես Վարդապետյանի գլխավորությամբ: Հարց է դրվում զինվորական արհեստանոցում աշխատելու համար հրավիրել փորձված վարպետների: Նախատեսվում է արհեստանոցում պատրաստել ռմբաձիգներ և կատարել զենքերի նորոգում: Դեռևս մարտ ամսին Միջկուսակցական բյուրոյի զինվորական կոմիսարը երկրամասի բնակչությանը տեղյակ էր պահել, որ նորոգելու ենթակա բոլոր զենքերը բերեն Շուշի:

Օգոստոսի 2-ին կառավարության նիստում որոշվում է Գանձակի գավառի հայկական շրջանները համարել Արցախին միավորված:[33] Վերացվում է գյուղական լիազորի պաշտոնը, և գավառամասերում հիմնվում է կոմիսարի պաշտոն: Շրջաններում նշանակվում են կոմիսարներ, որոնք զգալի աշխատանք են տանում տեղերում անիշխանությունը վերացնելու և կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ:[34] Վերացվում են գյուղախմբակային դատարանները և նրանց փոխարեն հիմնվում են հաշտարար դատարաններ՝ Ջիվանշիրում, Խաչենում, Վարանդայում և Դիզակում, իսկ Շուշիում՝ շրջանային դատարան, որպես ամենաբարձր ատյան, իսկ նրան կից՝ հատուկ գործերի քննիչ հանձնաժողով: Կազմվում են զինվորական հեղափոխական տրիբունալ և հատուկ գործերի քննիչ հանձնաժողով:

Օգոստոսի 3–ին կառավարությունը հրապարակում է մի քանի շրջաբերականներ երկրամասում չարաշահումների, դրամի արժեզրկման, հայ–թուրքական հարաբերությունները բարելավելու և այլ հարցերի վերաբերյալ: Դրանցից մեկում ասված է, որ մութ ուժերը լուրեր են տարածում, թե իբր սկսվել են հայ–թուրքական կռիվները: Այդ սուտ լուրերը տարածում են բախտախնդիրներն ու թալանչիները: Բնակչությանը կոչ է արվում չենթարկվել նման սադրանքների և հայ–թուրքական բոլոր տեսակի վեճերը լուծել խաղաղ ու օրինական ճանապարհով: Մեկ այլ շրջաբերականում քաղաքի և շրջանների պարետներին կոչ է արվում ամեն տեսակի միջոցներով վերջ տալ և «խեղդամահ անել իր սաղմի մեջ

այն բոլոր խառնակչական գործողությունները, որոնք կարող են ազդել մեր և թուրքերի հարևանական... հարաբերությունների վրա»:[36]

Այդ ժամանակաշրջանում, վկայում են Հարություն Թումյանը, Գրիգոր Հովհաննիսյանը, Եղիշե Իշխանյանը, Աբրահամ Կիսաբեկյանը և ուրիշներ, երկու ժողովուրդների՝ հայերի և թուրքերի միջև խաղաղ- դրացիական հարաբերությունների պահպանման գործում բավականին ազդեցիկ և դրական դեր է խաղացել Նյուֆտալի բեկ Բեհբուդովը: Նրա գլխավորությամբ թուրք առաջադեմ մտավորականությունը տանում էր խաղաղասիրական քարոզչություն, որը «մեծապես թուլացնում, չեզոքանում էր Շուշիի օսմանյան գործակալների՝ բժիշկ Մեհմանդարովի և նրա համախոհների պանթուրքական գրգռիչ քարոզների վտանգավոր ազդեցությունը...»:[37]

## 2. ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔ-ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ

Թուրքական դահիճների հայաջինջ քաղաքականությունը չսահմանափակվեց միայն 1915 թ. եղեռնով: Այն շարունակվեց նաև հետագա տարիներին, առանձնապես 1918–1920 թթ., երբ նրանք քայլեր կատարեցին իսպառ բնաջնջելու Անդրկովկասի հայությանը: Այս ծրագիրը դարձավ թուրք նվաճողների քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը: Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում տասնյակ հազարավոր հայեր զոհվեցին նվաճողների սվիններից:[38] Սակայն չպետք է այն պատկերացումը ստեղծվի, թե հայ ժողովուրդը գլուխ է խոնարհել թուրքական յաթաղանի և մուսավաթական խուժանի առջև: Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ–Ապարանի, Արցախի, Զանգեզուրի, Բաքվի, Նախիջևանի և այլ հերոսամարտեր հանդիսանում են դրա լավագույն վկայությունը:

Ինչպես նշվել է, 1918 թ. գարնանից սկսած թուրք նվաճողները շտապում էին դեպի Բաքու: Հայտնի է, որ թուրքերի այդ առաջխաղացման համար նպաստավոր պայմաններ ստեղծեց Բաթումի պայմանագիրը, որը նրանց հնարավորություն էր տալիս իր զորքերը փոխադրել Բաթում–Բաքու և Ալեքսանդրապոլ–Երևան–Ջուլֆա երկաթգծերով: Մուսավաթականները ոչ մի խոչընդոտի առաջ չէին կանգնում՝ դյուրացնելու իրենց ազգակից և կնքահայր թուրք դահիճների առաջխաղացումը դեպի Բաքու: Նրանք «բացահայտ և հետևողական» պայքար էին մղում Անդրկովկասում տաճիկների գերիշխանության հաստատման համար»:[39] Մուսավաթականները Ելիզավետպոլում անհամբեր սպասում էին հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշայի եղբայր Նուրի փաշայի ժամանմանը, որը հանձնարարություն ուներ ջախջախել Բաքվի խորհուրդների իշխանությանը և Հայաստանի արևելյան տարածքները, առաջին հերթին Արցախ–Զանգեզուրը միացնել մուսավաթական Ադրբեջանին: Այդ առթիվ Լեոն նկատել է, որ Նուրի փաշայի հիմնական նպատակներից էր



«որևէ կերպ անվնաս դարձնել Լեռնային Ղարաբաղը՝ դյուրացնելու իր ուժերի առաջխաղացումը Բաքու»:[40]

Թուրքիան ձգտում էր դառնալ ամբողջ Անդրկովկասի տերն ու տիրակալը: Իսկ դա հակասում էր նրա դաշնակից Գերմանիայի շահերին: Անդրկովկասում գերմանական զորքերի հրամանատար գեներալ Ֆոն Կրեսը Վրաստանում Հայաստանի դիվանագիտության ներկայացուցիչ Արշակ Ջամալյանի հետ Երևանից Թիֆլիս վերադարձի ճանապարհին, ուր եկել էին հուլիսի 30–ին, ասել է. «Մեր հարաբերությունները տաճիկների հետ բավական վատացան շնորհիվ մեր միջամտության Անդրկովկասյան գործերին: Թուրքերը այս երկիրը իրենցն են համարում ռուսների հեռանալուց հետո և, հանկարծ, մենք ասում ենք՝ «halt (կեցիր), բնական է, որ պետք է լարվեն մեր դեմ»:[41]

Այդ օրերին Էնվեր փաշայի հրամանով Թավրիզի վրայով թուրքական կադրային զորքեր էին փոխադրվում դեպի Ելիզավետպոլ՝ մուսավաթական իշխանության և Ադրբեջանի խան–բեկական հետադիմական ուժերի կենտրոն: Թուրքական այդ զորամասերը տեղ հասան մայիսի 25–ին: Հավաքակայան ժամանեց նաև Նուրի փաշան, որի հրամանատարության տակ դրվեց մուսավաթականների կողմից վերակազմավորված և 1918 թ. ռազմաճակատից տուն վերադարձող ռուսական զորամասերին ոչնչացրած ու թալանած զենքերով զինված «վայրի դիվիզիան»: Թուրքիան չէր կասկածում, որ «մուսավաթական Ադրբեջանը կդառնա իր հենարանը՝ Արևելյան Հայաստանը կործանելու և երկրամասում իր գերիշխանությունը հաստատելու համար», իսկ մուսավաթականներն էլ «իրենց հերթին հույսեր էին կապում թուրքերի հետ՝ ջանալով Կովկասի մուսուլմանական ժողովուրդներին միավորել իրենց դրոշի տակ և հաստատել իրենց տիրապետությունը»:[42]

Անդրկովկաս ներխուժած թուրք զավթիչներին ակտիվորեն օգնում էին ոչ միայն մուսավաթականները, այլև իմպերիալիստական Գերմանիան, որը, ինչպես հայտնի է, պակաս հանցավոր դեր չխաղաց հայ ժողովրդի ցեղասպանության իրականացման գործում: Ժամանակակիցը վկայում է. «...Շատ բնական է, որ Կովկասի թաթարների համակրությունը Տաճկաստանի կողմը պետք է թեքվեր, ինչպես համակրոն և համացեղ ազգի, նամանավանդ, որ Տաճկաստանի թիկունքին կանգնած էր հզոր Գերմանիան, որի կայսրը Բաղդատի մզկիթից քառորդ դար առաջ հայտարարել էր ի լուր աշխարհի, որ ինքը բարեկամ ու պաշտպան է կանգնելու երկրագնդի 300 միլիոն մահմեդական ազգաբնակչությանը»:[43]

Հանուն ճշմարտության նշենք, որ Անդրկովկասում ոչ բոլոր մուսուլմաններն էին համակրում թուրք նվաճողներին և պաշտպանում նրանց հրեշավոր գործողությունները: Թուրք դահիճները հաճախ թալանում և նեղություններ էին պատճառում նաև մուսուլմաններին:[44] Թիֆլիսում հայկական դիվանագիտության ներկայացուցչությանն առընթեր տեղեկատվության բյուրոյի 1918 թ. հուլիսի 21–ի հաղորդագրության մեջ ասված է, որ առաջիկա օրերին Ելիզավետպոլից Կոնստանդնուպոլիս կմեկնի Ադրբեջանի քաղաքացիների պատգամավորությունը՝ նպատակ ունենալով խնդրել Թուրքիայի կառավարությունից միջոցառումներ ձեռնարկելու թուրք ասկյարների դեմ, որոնք Ադրբեջանի բնակչության նկատ-

մամբ բռնություններ են գործադրում: Նույն փաստաթղթում նաև ասված է, որ Եվլախ կայարանից նա մի պատգամավորություն է մեկնել Նուրի փաշայի մոտ՝ բողոք ներկայացնելու այն մասին, որ ասկյարները բռնությամբ տանում են աղջիկներին, ծեծում տղամարդկանց, հաճախակի «մտնում թաթարների տները և ստիպում բավարարել իրենց բոլոր պահանջները՝ որպես թաթարական ազգին գյավուրներից (անհավատներից– Հ.Ա.) ազատագրողների»:[45]

Ղարաբաղը խոչընդոտ էր հանդիսանում Ջուլֆայի գծով և Գանձակից դեպի Բաքու շարժվող թուրքական զորամասերի միացման համար: Թուրքական հրամանատարությունը վճռեց օգտագործել այդ շրջաններում կազմակերված մուսուլմանական ավազակախմբերին և նրանց օգնությամբ արագացնել նշված զորախմբերի միավորումը: 1917 թ. դեկտեմբերից սկսած ռուսական սահմանապահ ջոկատներն Արաքսի ափից հեռանում էին դեպի Ռուսաստան: Տեղական մահմեդականները մաքրեցին սահմանի բոլոր պահակակետերը, թալանեցին պահեստները, գրավեցին զենքն ու ռազմամթերքը և նույնիսկ ռուս զինվորների մի ամբողջ ջոկատ կենդանի թաղեցին Ջեբրայիլի շրջանի ջրհորների մեջ:

Թուրք հրահանգիչներն ու էմիսարները հավաքագրում էին մուսուլմաններին և նրանցից ստեղծված հրոսակախմբերն օգտագործում քրիստոնյա ժողովուրդների դեմ:[46] Թուրք պարետների պահանջով «մուսուլմանական բնակչությունը տնտեսական բոյկոտ» հայտարարեց հայերին և տեղական խոշոր շուկաներում՝ Թարթառ, Աղդամ, Գանձակ, Կարյագինո և այլուր «հայ գյուղացիներին չէին վաճառում ոչ հաց, ոչ նավթ, ոչ աղ»:[47] Հայերի վրա հարձակումներն ուղեկցվում էին թուրքերին հատուկ բարբարոսություններով, դաժանությամբ և անբարոյական արարքներով: Սպանությունները սովորական բնույթ ընդունեցին, թալանվեց և հիմնահատակ արվեց Ամարասի սուրբ Գրիգորեսի վանքը, Խոնաշենում և այլուր ավերվեցին հարյուրավոր տներ:[48] Հայաստանի Հանրապետության կառավարությանը Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի 1919 թ. հունվարի 31-ի հղած նամակից իմանում ենք, որ 1918 թ. մայիսից սկսած Ղարաբաղում թափառող թուրք սպաները «օսմանյան կառավարության անունից և ապա Ադրբեջանի կողմից» սկսեցին Ղարաբաղի հայությանը «վերջնագրեր ներկայացնել՝ հպատակության և զենքը հանձնելու»: Նրանք սպառնում էին՝ «հակառակ դեպքում բնաջնջել բնակչությանը»:[49] Այդ գործողությունները հիմնականում գլխավորում էին թուրք պարետները, որոնք նշանակվել էին Նուրի փաշայի կողմից, իբրև «անվտանգություն և կարգ պահպանելու» համար:[50]

Կովկասում թուրքական բանակի հրամանատար Ֆերիք Նուրի փաշան շտապում էր որքան հնարավոր էր շուտ հնազանդեցնել արդեն Բաքվից ամբողջովին կտրված Ղարաբաղն ու Զանգեզուրը: Վրաստանում Հայաստանի դիվանագիտությանն առընթեր լրատվության բյուրոյի պետ Ա. Մալխազովի 1918 թ. օգոստոսի 10-ի հաղորդումից իմանում ենք, որ թուրքերը փորձել էին նշված տարածքները նվաճել խաղաղ ճանապարհով: Այդ նպատակով Նուրի փաշան հուլիսի կեսերին Գանձակից Շուշի էր ուղարկել հայերից և թաթարներից կազմված մի պատվիրակություն, որպեսզի Ղարաբաղի բնակչությանը նախապատրաստեն առանց դիմադրության ընդունել թուրքական իշխանությունների և Ադրբեջանի



Մուսավաթական կառավարության կարգադրությունները՝ «Ղարաբաղի դեմ ձեռնարկվելիք լուրջ միջոցառումներից խուսափելու» համար:[51]

Թուրք դահիճը, ստանալով արցախահայության մերժումը, օգոստոսի 18-ին [illegible] բովանդակությամբ կոչով դիմում է հայերին, որտեղ ասված է. «Մեր ստացած տեղեկությունների համաձայն, վերջին ժամանակներս Շուշիի և Զանգեզուրի գավառների հայերը՝ գտնվելով գաղտնի և հայտնի հարաբերությունների մեջ Գանձակի գավառի լեռնային մասի հայերի հետ ու խրախուսվելով... Անդրանիկի կողմից... հարձակվում են մուսուլմանական գյուղերի վրա և կատարում մասսայական սպանություններ ու կողոպուտներ»: Ապա փաշան ցինիկաբար հայտարարում է, թե «թուրքերը միշտ էլ պաշտպան են եղել իրենց տարածքի ազգերին»: Թուրք դահիճը շարունակում է շաղակրատել, թե «Թուրքիո շատ պաշտոններում հայեր են, նրանք՝ հայերը, մեր երկրում բոլորից լավ են ապրում: Օտարերկրացիների դրդմամբ... հայերը սկսել են զենք կուտակել, որի հիման վրա էլ ծագել է թշնամության հողեհը հայերի և թուրքերի միջև»: Նուրի փաշան հայությունից պահանջում է ընդունել, որ «Ղարաբաղը կազմում է Ադրբեջանի հանրապետության անքակտելի մասը»: Իսկ վերջում սպառնում է զենքի դիմել, եթե հայերը չդադարեցնեն դիմադրությունը:[52] Դրանով չբավարարվելով՝ Նուրի փաշան Թիֆլիսի «Ժողովրդի ձայնը» թերթի օգոստոսի 28-ի համարում հանդես է գալիս մի հայտարարությամբ, որը տպագրվել է իբրև թռուցիկ և փակցվել Շուշի քաղաքի շենքերի պատերին: Ահա այդ ամբոխավարական հայտարարությունը. «Հայեր, զգուշացնում եմ ձեզ հանգիստ լինել, չլսեք անգլիացիների կողմից կաշառված Անդրանիկին, որը նրանց խորհրդով ձեզ ապստամբության է դրդում: Զգույշ եղեք, մի ենթարկվեք նրա դրդմանը, այլապես նույնը կանենք ձեզ հետ, ինչպես եղավ Ադանայում»:

Ղարաբաղի, Զանգեզուրի և մյուս շրջանների հայերը զայրույթով ընդունեցին Նուրի փաշայի այդ հորդորանքներն ու սպառնալիքները: Նրանք պատրաստ էին մինչև վերջին շունչը դիմադրել թուրք-մուսավաթական հորդաներին, քանի որ նրանց համար անկախ ապրելն ու միասնական լինելը վեր էր ամեն տեսակի զգացումներից: Դրա առաջին քննությունը հանդիսացավ 1918 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին տեղի ունեցած Բերդաձորի հերոսամարտը:[53]

Արցախ-Զանգեզուրի կապի ճանապարհին Զաբուղը խիստ կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող հանգույց է, որն իր հսկողության տակ էր վերցրել «Քրդստանի» միահեծան տեր Սուլթանբեկ Սուլթանովը: 1918 թ. օգոստոսին թուրքական հրամանատարությունը Կարյագինոյի վրայով Զաբուղ է ուղարկում մի նոր զորամաս, որն իր ձեռքն է վերցնում այդ հանգույցի մշտական հսկողությունը՝ կտրելով կապը Արցախի և Զանգեզուրի միջև: Միայն այդ օրերին ավելի քան 200 արցախցիներ և նախեցիներ, որոնք վերադառնում էին ռազմաճակատից, Զաբուղի ձորում ոչնչացվեցին թուրքերի կողմից:[54] Բացի այդ, Շուշիի մուսուլմանական մասի թուրք պարետ Հասան Բասրի-բեյը ոտքի է հանում քոչվոր մուսուլմաններին և նրանց օգնությամբ փակում Բերդաձոր-Շուշի ճանապարհը:[55] Ահա այսպիսի պայմաններում, մանավանդ, որ մի կողմից խիստ կարևոր էր բացել Շուշի-Գորիս ճանապարհը, իսկ մյուս կողմից էլ ամրապնդել Ար-

ցախի հարավային և արևելյան սահմանները, չափազանց անհրաժեշտ էր Շուշի-ի գնդի և ամբողջ զինամթերքի տեղափոխումը Արցախ: Արցախահայության համար Շուշիի գնդի տեղափոխման նշանակությունը, ինչպես ասվել է, լավ էին հասկանում նաև թուրքերը, ուստի ամեն կերպ ձգտում էին խափանել այն: Գնդի տեղափոխման համար Ղարաբաղի կառավարությունը Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջաններից ուղարկում է 200 սայլ և 150 զինվոր:[56] Ընդհանուր պատասխանատու է նշանակվում Ղարաբաղի զինված ուժերի հրամանատար Արտաշես Վարդապետյանի օգնական Սարդի Այվազյանը:[57] Գումակը պահպան ջոկատով Գորիս է ճանապարհվում օգոստոսի 20–ին: Թուրք–մուսավաթական հրամանատարությունը, իմանալով այդ մասին, քոչվոր ավազակների խմբերին հրամայում է փակել Շուշիից Բերդաձոր տանող ճանապարհին գտնվող կամուրջը: Օգնություն հասած բերդաձորցիների և գումակին ուղեկցող ջոկատի համատեղ ուժերով ջախջախվում են կամուրջը փակած մուսուլմանական ավազակները, և թողնելով 32 դիակ, դիմում են փախուստի:[58] Օգոստոսի 28–ին թուրք–մուսավաթական ուժերի կողմից գումակը շրջապատվում է Բերդաձորի մոտ, Ջաբուղին չհասած: Օգնության են հասնում հարյուրավոր բերդաձորցիներ: Տեղի է ունենում անհավասար մարտ: Ութ օր ու գիշեր շարունակվում են արյունալի մարտերը:[59] Թուրք–մուսավաթական հրոսակները փորձում են շրջապատել գումակը, ոչնչացնել այն և ներխուժել Բերդաձոր: Հայ մարտիկները հակահարված են հասցնում մի քանի անգամ գերազանցող թշնամուն և հետ շպրտում Ջաբուղի ձորը: Ի վերջո, հայ մարտիկները ստիպված են լինում բերդաձորցիների հետ միասին նահանջել Շուշի: Այսպիսով, արցախցիներին չի հաջողվում անցնել Ջաբուղը, միանալ զանգեզուրցիների ջոկատներին և Շուշիի գունդը տեղափոխել Արցախ: Այդ ռազմավարական կարևոր խնդիրը ձախողվում է, որովհետև նախ և առաջ հակառակորդի ուժերը զգալիորեն գերակշռում էին հայկական ուժերին, իսկ դա անտեսվել էր Ղարաբաղի ռազմական ուժերի գլխավոր պատասխանատու Հաբություն Թումյանի կողմից: Հետո, զանգեզուրյան ուժերը և Շուշիի գունդը ցուցաբերեցին պասիվություն ու չդիմեցին ակտիվ գործողությունների, որից օգտվեց հակառակորդը և իր ուժերի զգալի մասը Ջաբուղի կողմից տեղափոխեց Բերդաձոր: Պարզապես, այդ օրերին Գորիսում լուրջ չընկալվեց խնդրի կարևորությունն ու բարդությունը, որը բերեց աղետալի հետևանքների և գնցեց «Ղարաբաղի հայությանը»:[60]

Հայության գլխին եկած հաջորդ ողբերգությունը տեղի ունեցավ Բաքվում, 1918–ի սեպտեմբերին: Բաքուն գրավելու համար թուրքերը ուղարկել էին 15.000-անոց զորք:[61] Օգոստոսի սկզբին Բաքու մտած անգլիական զորքերը սեպտեմբերի 15–ին թողեցին դիրքերը և մերկացրին ամբողջ տեղամասեր: Մեկ օր առաջ քաղաքը լքել էին Բաքվի զորքերի շտաբի պետ Ստոքսը և գնդապետ Շարդինեն: Արդեն սեպտեմբերի 15–ին, ժամը 10–ին բոլոր անգլիացիները նավերի վրա էին: Քաղաքից հեռացան նաև Հակոբ Բագրատունին, Ռոստոմը և Ս.Տեր–Պողոսյանը: Էնզերի տեղափոխվեցին 1500 հայ զինվոր, 8 հազար փախստական, Պետրովսկ՝ 10 հազար զինվոր, որից 8 հազարը հայ և 16 հազար փախստական:[62] Բաքվի մնացած հայությունը հանձնվեց թուրքի սրին: Բախչի Իշխան-



յանի հաշվումներով Բաքվի հայերի զոհերի թիվը հասել է մոտ 30 հազարի, իսկ նյութական կորուստը՝ 945.724.017 ռուբլու:[63] Բաքվի այդ ողբերգությունը ժամանակակիցն այսպես է նկարագրել. սեպտեմբերի 14–ի երեկոյան սկսվեց Բաքվի բանակի նահանջը, որից միայն 25 գումարտակ հայկական էր, զինվորական կարգով իրենց հետ տանելով ամբողջ ռազմամթերքը:

Կիրակի, սեպտեմբերի 14–ին, առավոտյան ժամը 10–ին, տաճիկները խուժեցին քաղաք Սալյանսկի զորանոցների կողմից: Ներս մտած քրդերը, տեղական թուրքերն ու զորքը սկսեցին կողոպտել հայերին: Կոտորածներն ու թալանը տևեց 2,5 օր: Կոմենդանտ Նազիմ–բեյի հրամանով սեպտեմբերի 17–ի ժամը երկուսից դադարեցվեցին այդ վայրագությունները:[64] Մեկ ուրիշ ժամանակակից պատմում է, որ քաղաքը գրոհելուց առաջ Նուրի փաշայի հրամանով այն 16 ժամ շարունակ ենթարկվել է հրետանային նախապատրաստության: Տաճիկները քաղաք են խուժել առավոտյան ժամը 10–ին, իսկ ինքը՝ փաշան, քաղաք է մտել ժամը 14–ին: Սեպտեմբերի 17–ին Ադրբեջանի կառավարության նախագահ Խան Խոյսկին իր կառավարական կազմով Գանձակից մեկնում է Բաքու: Թուրքական հրամանատարության կարգադրությամբ քաղաքի փողոցներից հավաքված դիակները նետվում են ծովը: Բաքվի կոտորածներին եռանդուն մասնակցություն է ցույց տվել քրդական մի հատուկ հրոսակախումբ՝ բաղկացած 2000 հոգուց: Մամուլը նաև հաղորդել է, որ Բաքուն գրավելուց հետո տեղական թուրքերը ջոկել են հայերին և սկսել կոտորել: Ոչնչացրել են ամբողջ հայկական թաղամասը, այրել են նավթապահեստները, ջարդել 500–ից ավելի նավթահոր: Նաև հաղորդվել է, որ քաղաքը թալանելու և հայերին ջարդելու համար թուրքերին երեք օր ժամանակ է տրվել:[65]

Այս ամենի մասին դառնությամբ ու զայրույթով իմացան արցախցիները: Չէ՞ որ այդ բոլոր զոհերի մեջ շատերը նրանց հարազատներն էին ու հայրենակիցները: Նման ճակատագիր էր սպասվում նաև իրենց: Թուրք-մուսավաթական բարբարոսները 1918 թ. աշնանը մեծ ուժեր կենտրոնացրին Արցախ–Ղարաբաղի դեմ: Նրանք որոշել էին ծնկի բերել նաև արցախահայությանը, մանավանդ, երբ Ղարաբաղի հայության առաջին համագումարից հետո միանգամայն ակնհայտ դարձավ, որ երկրամասը չի ընդունում Ադրբեջանի իշխանությունը և պայքարում է Հայաստանի հետ միավորվելու համար: Հետևապես, Ադրբեջանը «թուրքական բանակին ուղարկում է, որպեսզի զենքի ուժով Ղարաբաղը միացնի իր տարածքին»:[66]

1918թ. հունիսից մինչև նոյեմբերի 1–ը Կոստանդնուպոլսում գտնվող Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսյանը հետագայում գրել է. «Երբ մենք մեր բողոքը յայտնեցինք Թալէաթին, թէ թուրք զօրքերը կը պատրաստուին յարձակում գործել Ղարաբաղի վրայ, Թալէաթը վերցուց հեռախօսը և սկսաւ խօսիլ Էնվերի հետ՝ ըսելով ի միջի այլոց, որ «Հայերը կը խնդրին հրաման տալ չյարձակելու Ղարաբաղի վրայ»: Ըստ երևոյթին, Էնվէրը կը ժխտէր այդպիսի յարձակման մը մտադրութիւնը և Թալէաթը ժպտալով կըսէր. «Էնվէր, մի մոռնար, որ քեզ հետ խօսողը օտար դեսպան մը չէ: Եւ յետոյ այստեղ նստած են Ահարոնյանն ու Խատիսյանը, որոնք շատ լաւ գիտեն ամէն ինչ»:

Այս խոսակցութենէն յետոյ Թալէաթ մեզ յայտնեց, որ ինքը կերաշխաւորէ, թէ որևէ յարձակում պիտի չըլլա Ղարաբաղի վրա»: Էնվեր փաշան ևս հայ պատվիրակությանը վստահեցնում է, որ «ինք հրաման տուած է չզրաւել Ղարաբաղը...»:[67]

Թուրքը միշտ էլ մնում է թուրք: Թալեաթ և Էնվեր փաշաների տված խոստումները լոկ կեղծիք էին և ամբողջովին խաբեություն: Թուրք–մուսավաթական ուժերը Արցախը շրջապատեցին բոլոր կողմերից և այն չեզոքացրին հայկական մյուս շրջաններից: Այդ ժամանակ Ղարաբաղ–Արցախում բնակվող 440 հազար մարդուց 72 տոկոսը հայեր էին, 20–ը՝ թուրքեր, 8–ը՝ իրանական ժողովուրդներ: Ղարաբաղը համարվում էր «Հայաստանի անքակտելի մասը»:[68] Սակայն դա ոչ մի նշանակություն չուներ թուրք–մուսավաթականների համար: Նրանք մի գերխնդիր ունեին՝ Ապշերոնից մինչև Սևանա լիճ հաստատել իրենց գերիշխանությունը, ինչին մեծապես խանգարում էր Արցախը: Եվ ահա «Թուրքական մի բրիգադ, Ջեմիլ Ջահիդ բեյի հրամանատարության տակ և տեղական թուրք բեգերի առաջնորդությամբ, Եվլախից ուղղվեց դեպի Շուշի՝ ճանապարհին ռմբակոծելով ու զինաթափելով հայկական գյուղերը»:[69] Ջահիդ բեյը հասնելով Աղդամ, Նուրի փաշայի անունից վերջնագիր ուղարկեց Ղարաբաղի կառավարությանը՝ չդիմադրելու և հպատակվելու պահանջով՝ սպառնալով ոչնչացնել բոլոր այն գյուղերը, որոնք չեն ենթարկվի թուրքական հրամանատարությանը:[70] Թուրք–մուսավաթական ուժերը արագորեն կենտրոնացվում էին Արցախի և Զանգեզուրի սահմանամերձ գոտիներում: Թուրք հրամանատարության կողմից Արցախի սահմանամերձ մի շարք տարածքներում նշանակված պարետները լայնորեն ծավալում էին համաթուրքական և համախլամական քարոզչություն:

Ստանալով թուրքական հրամանատարության վերջնագիրը՝ հրավիրվում է կառավարության նիստ, որին մասնակցում են բոլոր հոսանքների ներկայացուցիչները: Հիմնական հարցը թուրքական վերջնագրին տրվելիք պատասխանն էր, որի համար տրված էր հինգ օր: Պարզապես, դա ոչ թե կառավարության նիստ էր, այլ խառը ժողով, որին մասնակցում էին նաև հրամանատարներն ու շրջանների ներկայացուցիչները: Անհրաժեշտ էր մի մտքի գալ, ճշտել բոլոր հնարավորությունները և ժամանակ շահել՝ ուժերը վերադասավորելու համար: Բացի այդ, ավելի քան 5000 բերդաձորցիների ներգաղթը Շուշի, առաջ էր բերել բավականին դժվարություններ: Չէր բավարարում սննդամթերքը, բնակվելու պայմաններ չկային, սովն ու հիվանդությունները հնձում էին մարդկանց, գլուխ էին բարձրացրել և լայն տարածում գտել գողությունն ու մարդասպանությունը և այլն:[71] Այդ բոլոր հարցերին լուծում տալու համար անհրաժեշտ էր հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար: Որոշվեց բոլոր գյուղական հասարակությունների յուրաքանչյուրից հրավիրել երեքական հոգի: Առաջարկվում է համագումարը հրավիրել Խանքենդում, որպեսզի Շուշիի «ճնշող մթնոլորտից ազատ լինեն մարդիկ»:[72] Արդեն սեպտեմբերի 7–ին բոլոր գյուղական հասարակություններից ընտրված էին պատգամավորները: Եղիշե Իշխանյանը նշում է, որ Գյուլիստանի, Ջրաբերդի և Խաչենի պատգամավորները հավաքվել էին Խանքենդում, իսկ Վարանդայի և Դիզակի պատգամավորները՝ Շուշիում: Կառավարությունը առաջարկում է, որ Խանքենդում հավաքված պատգամավորները գնան Շուշի:

1918թ. սեպտեմբերի 8–10–ը Շուշիի ռեալական ուսումնարանի դահլիճում տեղի է ունենում Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին 101 հոգի:[73] Այն տեղի է ունենում քաղաքական խիստ լարված պայմաններում: Համագումարը քննարկում է հետևյալ հարցերը. 1. Թուրքական հրամանատարության վերջնագրին տրվելիք պատասխանի ձևակերպումը, 2. Ղարաղշլաղի հայության խնդիրը և 3. Կառավարության զեկուցումն ու անվանափոխությունը:

Բուռն վիճաբանություններ է տեղի ունենում առաջին հարցի քննարկման ժամանակ: Բոլոր ելույթ ունեցողները շեշտում են, որ վտանգված է Ղարաբաղի հայության կյանքը: Զենքը վայր դնել, ենթարկվել թուրքին նշանակում է կամավոր գնալ կառափնարան: Նաև նշվում է, որ Ղարաբաղի հայերն ու թուրքերը ապրում են խաղաղ և կառավարվում են նրանց կողմից ստեղծված կոմիտեի կողմից:

Արցախահայության համար ստեղծված այդ դժվարին պահին երկրամասի բոլոր ուժերը միավորվում են՝ հայրենիքը պաշտպանելու և համատեղ պայքարելու թշնամու դեմ: Օրեցօր խորացող թուրքական վտանգը խիստ անհանգստություն էր առաջ բերել գյուղերում և Շուշի քաղաքում: Համագումարը մերժում է թուրք հրամանատարի պահանջը և որոշում մի պատվիրակություն ուղարկել Աղդամ՝ «երես առ երես խոսելու նրա հետ»:[74]

Երկրորդ հարցի վերաբերյալ որոշում է ընդունվում ազատել Բերդաձորն ու մյուս գրավված հայկական գյուղերը և այնտեղ վերադարձնել գաղթված բնակչությանը: Դրա հետ կապված, համագումարը շրջաբերական է ուղարկում երկրամասի հայ բնակչությանը՝ կոչ անելով «բարեկամական վերաբերմունք պահպանել թուրք հարևանների հետ» և «հեռու մնալ ընդհարումներից»:

Երրորդ հարցի քննարկումը տևում է ավելի երկար: Կառավարությունը բանավոր հաղորդում է տալիս հուլիսի 26–ից հետո կատարված աշխատանքների մասին: Շեշտվում է, որ այդ ժամանակաշրջանում հաջողությամբ իրագործվել է Սարով գյուղի բնակչության տեղափոխումը Ջրաբերդի շրջան և Շուշիի հայկական վաշտի օգնությամբ Գորիսից Շուշի են տեղափոխվել ավելի քան 3000 գաղթականներ: Կառավարությունը խիստ քննադատվում է Գորիսից Շուշիի գնդի փոխադրումը ձախողելու և Բերդաձորի կործանման համար: Խաչենի պատգամավորները աններելի են համարում այն կարգադրությունը, որով Ալեքսան դայուն արգելվել էր Մեյդանի կողմից Հաջի Սամլուի վրա հարձակվելը, որը բավականին կջլատեր թշնամու ուժերը և կօգներ Շուշիի գնդի տեղափոխմանը:

Համագումարը, կապված երրորդ հարցի հետ, լսեց նաև զինվորական կոմիսարի զեկուցումը ինքնապաշտպանության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին և կառավարությանը հանձնարարեց էլ ավելի ուշադրություն դարձնել այդ կարևոր խնդրին:

Համագումարի ընթացքում, վկայում է Եղիշե Իշխանյանը, Գանձակի շրջանի գյուղացիներից մի քանի հոգի, Աբլահ գյուղացի Բագրատ Ղազանչյանի հետ միասին, եկել էին բանակցություններ վարելու Ղարաբաղի կառավարության հետ,

որպեսզի իրենց շրջանն էլ միացվի Արցախին: Համագումարը միաձայն որոշում է ընդունում բավարարել Գանձակի հայ գյուղացիության խնդրանքը: Միևնույն ժամանակ, Բագրատ Ղազանջյանը նշանակվում է Ջրաբերդի և Գյուլիստանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար:

Կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը, սակայն համագումարը մերժում է և որոշում կառավարության կազմը հինգ հոգով ընդլայնել ու փոխել անունը: Առաջարկվում է նորընտիր կառավարությունն անվանել Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդ: Նշենք, որ ազգային խորհուրդը Ղարաբաղում անկախ կառավարության դեր էր կատարում: Ազգային խորհրդի կազմում ընտրվում են.

Եսայան Մելիքսեթ՝ անկուսակցական, Զաքարյան Հարություն՝ դաշնակցական, Թումյան Հարություն՝ դաշնակցական, Իշխանյան Եղիշե՝ դաշնակցական, Մուսայելյան Հայրապետ՝ դաշնակցական, Հովհաննիսյան Արսեն՝ էսէռ, Շահնազարյան Ռուբեն՝ կադետ, Վարդապետյան Լևոն՝ մենշևիկ, Տեր–Միքայելյան Անուշավան՝ դաշնակցական, Քամալյան Արշավիր՝ մենշևիկ:[75]

Համագումարը հաստատում է կառավարության կազմը. Եղիշե Իշխանյան նախագահ, Աշոտ Մ. Հովսեփյան՝ արտաքին գործերի կոմիսար, Լևոն Վարդապետյան՝ արդարադատության կոմիսար, Արշավիր Քամալյան ֆինանսների կոմիսար, Հարություն Թումյան՝ զինվորական կոմիսար, Ռուբեն Շահնազարյան լուսավորության կոմիսար, Մուշեղ Զաքարյան՝ գաղթականների կոմիսար, Անուշ Տեր–Միքայելյան՝ խնամատարության կոմիսար, Արսեն Հովհաննիսյան՝ պարենավորման կոմիսար:[75]

Սեպտեմբերի 10–11–ը տեղի է ունենում կառավարության, դեռևս տեղերը չմեկնած պատգամավորների և կուսակցությունների ներկայացուցիչների խառը նիստ, որն Աղդամ գնալու համար ընտրում է հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն՝ Գերասիմ Մելիք–Շահնազարյան (Շուշիի քաղաքագլուխ, կադետ), Հայրապետ Մուսայելյան (Ղուկասյան օրիորդաց դպրոցի տեսուչ. դաշնակցական), Աշոտ Մելիք–Հովսեփյան (իրավաբան, մենշևիկ), Արշավիր Քամալյան (թեմական դպրոցի ուսուցիչ, մենշևիկ) և Դանիել Առաքելյան (գյուղացի, դաշնակցական):[76]

Բանագնացները Աղդամ են մեկնում սեպտեմբերի 12–ին, վաղ առավոտյան: Նրանց հետ մեկնում է նաև Լյութֆալի բեկ Բեհբուդովը: Բանագնացները, հասնելով Աղդամ, անմիջապես ներկայանում են Գալիպոլյան դիվիզիայի հրամանատար Ջամիլ Ջահիդ բեյին: Վերջինս, չցանկանալով անգամ լսել արցախահայության ներկայացուցիչներին, նրանցից պահանջում է անհապաղ ենթարկվել Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը, ամբողջովին զինաթափվել և թուրքական զորքերի համար ճանապարհ բացել դեպի Շուշի: Հենց այդ օրերին թուրք–մուսավաթականներն արագացնում են նոր զորքերի փոխադրումը Աղդամ, Թարթառ, Կարյագինո, Զաբուղ և այլ վայրեր: Արդեն ակնհայտ էր, որ թուրքերը վճռել էին ներխուժել Ղարաբաղ, վերջ տալ նրա ինքնուրույնությանը և ստիպել ենթարկվել մուսավաթական Ադրբեջանին: Նրանք նաև խնդիր ունեին ամբողջովին զինաթափել Գանձակի լեռնային շրջանի հայկական գյուղերը, ապա գրոհել Զանգեզուրի և Ղարալագյազի վրա: Հաջողության դեպքում նրանք նպատակ ունեին այդ շրջանները ևս բռնակցել մուսավաթական Ադրբեջանին:[77]



Թուրք հրամանատարը հայ բանագնացներից երկուսին՝ Հայրապետ Մուսայելյանին և Դանիել Առաքելյանին հետ է ուղարկում Շուշի՝ թուրք–մուսավաթականների նոր պահանջը արցախահայությանը հասցնելու համար, իսկ մյուսներին, որպես պատանդ, պահում է Աղդամում: Նրանք գտնվում էին «տաժանակիր ռեժիմի պայմաններում՝ 12 ասկյարների հսկողության տակ»:[78] Թուրք հրամանատարը ավելի է կոնկրետացնում իր պահանջը՝ ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը, հանձնել ժողովրդի մոտ գտնվող ամբողջ զենքը, բացել Ասկերան–Շուշի–Գորիս ճանապարհը և երաշխիք տալ Ադրբեջանի պաշտոնյաներին ու թուրքական զորամասերին հայկական շրջաններում իրենց համար նշանակված կետերը հասնելու և այնտեղ ապահով ապրելու համար: Այդ բոլորը կատարելու համար տրվում է 24–ժամյա ժամկետ:

Սեպտեմբերի 14–ի առավոտյան Հայրապետ Մուսայելյանը և Դանիել Առաքելյանը, մեկնելով Աղդամից, հասնում են Ասկերան և թուրք հրամանատարի պահանջը հայտնում Ղարաբաղի կառավարության կողմից այնտեղ ուղարկված հանձնախմբին: Ղարաբաղի հայության երկրորդ համագումարի որոշման համաձայն, հանձնախումբը ձիավոր կապավորների միջոցով հայտնում է երկրամասի բոլոր գյուղերին՝ շտապ կարգով երկուական ներկայացուցիչ ուղարկել Շուշի՝ թուրքերի պահանջին պատասխան տալու համար: Եղիշե Իշխանյանը պատմում է, որ սեպտեմբերի 16–ի առավոտյան կառավարության անդամները՝ դեռևս քաղաքում գտնվող երկրորդ համագումարի պատգամավորները և կուսակցությունների ներկայացուցիչները, հավաքվելով, լսում են Աղդամից վերադարձած բանագնացներին ու որոշում հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար և վերջնական որոշում ընդունել թուրք հրամանատարության պահանջի վերաբերյալ:[79]

Կասկած չկար, որ թուրք–մուսավաթականները արցախահայությանը մեղադրելու համար անպայման կդիմեն կանխամտածված սադրանքների: Օրինակ՝ նրանք սպանում են Լյութֆալի բեկ Բեհբուդովին, հետո հայտարարում, թե իբր նա սպանվել է հայերի արձակած գնդակից, երբ սպիտակ դրոշը ձեռքին կամեցել է մոտենալ հայկական Քյաթուկ գյուղի դիրքերին:[80]

Սեպտեմբերի 16–ի օրվա երկրորդ կեսին տեղի ունեցած կառավարության հատուկ նիստը, քննարկելով ստեղծված վիճակը, հանգում է հետևյալ եզրակացության. Ղարաբաղի հայությունը, չնայած քսան հազար հրացան ունեցող մարտիկներ ունի, սակայն երկարատև կռվելու փամփուշտ չունի: Հետևապես, պետք է ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը, մինչև Կոնստանդնուպոլսի կոնֆերանսը որոշում կընդունի, երեսանց զինաթափ լինել՝ հանձնելով ժողովրդի մեջ գտնվող հին ու փչացած զենքերը, թույլ տալ տաճկական մեկ վաշտ մտնել Շուշի և կառավարության կազմի մեջ հրավիրել տեղական թուրք ներկայացուցիչների:[81]

Սեպտեմբերի 17–ին արդեն Շուշի էին հասել շատ գյուղերի պատվիրակություններ: Եկել էին նաև Գարդմանի գյուղերից երեք հոգի՝ իրերի դրության հետ ծանոթանալու համար: Նրանք ցանկություն են հայտնում, որ Գարդմանը ևս միանա Ղարաբաղին, և իրենք մասնակցեն համագումարի աշխատանքներին:

Թուրք–մուսավաթականների վերջնագրին պատասխան տալու, երկրամասի պաշտպանությունն ամրապնդելու համար միջոցառումներ ձեռնարկելու և վերահաս աղետը կանխելու նպատակով շտապ հրավիրված Ղարաբաղի հայության երրորդ արտակարգ համագումարը տեղի ունեցավ սեպտեմբերի 18–22–ը, Շուշիի ռեալական ուսումնարանի դահլիճում:[82] Համագումարի աշխատանքներին մասնակցում էին մոտ 300 հոգի: Համագումարի պատգամավոր Արսեն Հովհաննիսյանը պատմում է, որ համագումարի «մթնոլորտը ծայրահեղ լարված էր. պատգամավորները բոլորն էլ զինված էին և դժվար էր առանց կյանքը վտանգի ենթարկելու որևէ բառ ասել՝ համագումարի մարտական տրամադրությանը չհամապատասխանող: Թվում էր, թե հարցի խաղաղ լուծման մասին խոսք լինել չի կարող»: Ելույթ ունեցող բոլոր 78 հռետորներից և ոչ մեկը չէր ցանկանում դավաճանել ժողովրդին:[83] Թուրքական հրամանատարությունը փորձում էր ճնշում գործադրել համագումարի պատգամավորների վրա և նրանց ստիպել արագացնել վերջնագրի պատասխանը, այն էլ միայն դրական: Այդ նպատակով թուրք–մուսավաթական ուժերը շտապ կարգով զբաղեցնում են Խանաբադ–Ասկերան–Փրջամալ–Դահրազ գյուղերի ուղղությամբ գտնվող կարևոր ռազմավարական կետերը, Ասկերանին մոտեցնում Գանձակից և այլ վայրերից այդտեղ տեղափոխված զորամասերը և պատրաստվում ներխուժել Արցախ: Միևնույն ժամանակ, Հաջի Սամլուի քրդերը Խանքենդիի հյուսիսարևմտյան կողմից, Ղարաբաղի լեռնաշղթայի Քյոսալար կոչված տեղից հարձակվում են Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուր և Ջամիլլու գյուղերի վրա. Քրդերին դիմադրում է Ալեքսան դայու ջոկատը, որին օգնության էին հասել Վարանդայի Տռնավարզի, Հարավի, Ղավախանի, Ավետարանոցի, Սղնախի և Շոշի ուժերը:[84] Խ. Քիրսը գրում է, թե Բաքուն գրաված թուրքական բանակից Աղդամ են փոխադրվում 5000 զինվոր, 8–10 հազար նորակազմ հետիոտն ու հեծյալ կռվողներ, որոնք ունեին 12 լեռնային և 4 դաշտային հրանոթներ:[85] Մինչդեռ, ինչպես վկայում են համագումարի պատգամավորներ Հարություն Թումյանը, Արսեն Հովհաննիսյանը, Աբրահամ Կիսիբեկյանը, Արամ Միքայելյանը, Եղիշե Իշխանյանը և ուրիշներ, պատգամավորները չէին ցանկանում լսել թուրքերի հետ խաղաղ ճանապարհով որևէ հարց լուծելու մասին:[86]

Համագումարում վիճաբանությունը հետզհետե ավելի սուր բնույթ է ընդունում: Այն աշխատում էր խիստ լարված պայմաններում և կառավարությունից պահանջում էր հայտնել իր տեսակետը թուրքական առաջարկի վերաբերյալ: Համագումարի պատգամավորների ճնշող մեծամասնությունը հասարակ, անգրագետ գյուղացիներ էին: Կառավարությունը չէր ցանկանում դիմել ռիսկի և ասել իր կարծիքը, որը, ինչպես ասվել է, արդեն մշակված էր: Ասել, թե պետք է ընդունել թուրքական պահանջը և թույլատրել թուրք ասկյարներին մտնել Շուշի, մեծ հարված կլիներ համագումարի պատգամավորների համար: Նրանցից շատերը չէին հասկանա կառավարությանը: Զինվորական կոմիսար Հարություն Թումյանը և զինվորական շտաբի պետ Արտաշես Վարդապետյանը հանգամանորեն զեկուցում են ինքնապաշտպանության համար ունեցած միջոցների մասին և հստակեցնում՝ երկրամասում բավարար քանակությամբ զենք կա, սակայն տևական պաշտպանողական մարտերի համար փամփուշտ չկա: Արցախահայությունը, Հարություն Թումյանի բնորոշմամբ, մի ժողովուրդ, որի հիշողության մեջ թարմ էր իր «նախնիների հայրենասիրությունը, ազատասիրությունն ու մարտական ուղին, որի մեջ չէր մարել ազգային ինքնասիրության և արժանապատվության վեհ զգացումը, մի ժողովուրդ, որ իր անառիկ լեռներին ապավինված՝ վիզ չէր ծկել և ոչ մի ահեղ բռնակալի առաջ», երբեք էլ չվախեցավ թուրք–մուսավաթական այդ վերջնագրերից:[87] Ի վերջո, պատգամավորները առաջարկում են մերժել տաճիկ հրամանատարի պահանջը և նրա հորդուներին պատասխանել զենքով:

Սեպտեմբերի 19–ի երեկոյան համագումարը լուր է ստանում, որ Ասկերանի ճակատում՝ Խրամորթից մինչև Մյուրիշեն տաճկական ուժերը հարձակման են անցել, և Արցախի ինքնապաշտպանական ուժերը դիմադրություն են ցույց տալիս: Բացի այդ, նաև լուր է ստացվում, որ Բաքուն գրավվել է թուրքերի կողմից, և այնտեղ կատարվել է հայերի ջարդ:

Սեպտեմբերի 21–ին Շուշի է հասնում Գանձակից եկած նոր պատվիրակություն, որը եկել էր Նուրի փաշայի պահանջով: Այդ պատվիրակությունը հանձնարարություն ուներ Շուշիի բնակչությանը համոզել ենթարկվելու Ադրբեջանին և հրաժարվել դիմադրություն ցույց տալուց: Սակայն տեղի զայրացած հայերը բանտարկում են պատվիրակության անդամներին և հինգ օր պահում բանտում: Նրանք մեղադրվում էին հայ ժողովրդին դավաճանելու մեջ:[88]

Ղարաբաղի հայության երրորդ համագումարում ոչ արցախանպաստ դիրք էին բռնել բոլշևիկների կուսակցության ներկայացուցիչներ Սաքո Համբարձումյանը և Ալեքսանդր Ծատուրյանը: Քաղաքում բոլորի կողմից լավ ճանաչված այդ անձնավորությունները հրաժարվեցին ներկայացնել այդ ծանր պայմաններից դուրս գալու վերաբերյալ իրենց կուսակցության կարծիքը: Նրանց բռնած կրավորական դիրքը խիստ քննադատվեց համագումարի մի շարք պատգամավորների կողմից: Բոլշևիկների ներկայացուցիչներն առանց որևէ բացատրության հեռացան համագումարի դահլիճից:

Այդ օրերին խիստ սրվել էին Շուշիի հայերի և մուսուլմանների հարաբերությունները: Նուրի փաշայի գործակալ Հասան Բասրի բեյը, որն հռչակվել էր քաղաքապետ և շրջանի զինված ուժերի հրամանատար, քաղաքում մտցնում է զինվորական դրություն: Նա իրար հետևից մի քանի վերջնագրեր է ուղարկում Ղարաբաղի կառավարությանը և նրանից պահանջում համոզել երկրամասի հայությանը՝ ընդունելու և կատարելու Ադրբեջանի մուսավաթական կառավարության բոլոր պահանջները: Եվ ահա, Շուշիի պատերին երևում է հետևյալ հայտարարությունը.

«Տաճկական բանակը գալիս է, նրա նպատակն է առանց կրոնի ու ազգի խտրականության ապահովել Ադրբեջանի բնակչության խաղաղ գոյությունը: Այսօրվանից քաղաքում կատարված յուրաքանչյուր հրաձգության համար հանցավորները դիվիզիայի հրամանատարության կողմից կենթարկվեն մահապատժի:

Շրջանային կոմիտեները պարտավոր են հրացան արձակողներին անմիջապես ներկայացնել ոստիկանատուն, հակառակ դեպքում տվյալ շրջանային կո-

միտեն կենթարկվի 10.000 ռուբլու տուգանքի կանխիկ դրամով՝ հօգուտ Ադրբեջանի Հանրապետության:

Շուշի քաղաքի պարետ՝ Հասան Բասրի բեյ:

24 սեպտեմբերի, 1918 թ., ք. Շուշի»:[89]

Արցախահայությունը կտրուկ մերժում է Հասան Բասրի բեյի այդ պահանջը:[90] Թուրք–մուսավաթականների դրդմամբ քաղաքի մոլեռանդ մուսուլմաններն արագորեն զինվում և պատրաստվում էին «գյավուրներին» քաղաքից դուրս քշել: Թուրքը, վկայում է ժամանակակիցը, ամեն կերպ «հենց արմատում խեղդում էր հայ և թաթար մերձեցման ամեն փորձ»: Թուրք-թաթարական հրամանատարությունը մինչև անգամ «մի հրամանով դաշտային ադրբեջանցիներին արգելում է հարևան հայերի հետ որևէ հարաբերության մեջ մտնել և մանավանդ մթերք վաճառել»:[91]

Հայ–մուսուլմանական ընդհարումները կանխելու և թուրքական հրամանատարության պահանջները գոնե մասամբ կատարելու համար Ղարաբաղի կառավարությունը և քաղաքական կուսակցությունները ջանքեր չէին խնայում համոզելու Ղարաբաղի հայության երրորդ արտահերթ համագումարի պատգամավորներին հեռու մնալ արյունահեղությունից և թուրքերին դիմադրելու վճռից, քանի որ չկային բավարար քանակությամբ զենք, զինամթերք և զինվորական ուժեր: Ճիշտ է, այդ օրերին զինվորական գործով զբաղվող սպայակույտը և զինվորական գործերի կառավարչությունը ցուցակագրում են երկրամասի բոլոր տղամարդկանց, ովքեր ի վիճակի էին զենք կրելու, լրիվ թափով աշխատում էր Շուշիում կազմակերպված զինամթերք արտադրող և զենքեր նորոգող ձեռնարկությունները, նորոգվում և ստուգվում էին բոլոր ատրճանակներն ու հրացանները, մինչև անգամ փորձարկվում են սեփական ռմբաձիգ մորտիրները, մի քանի տասնյակ անգամ ավելանում է փամփուշտների արտադրությունը, բայց և այնպես այդ ամենը շատ քիչ էր տասնյակ անգամ գերազանցող հակառակորդին դիմակայելու համար:[92] Այդ ամենից բացի, Զանգեզուրից, որտեղ գտնվում էր Անդրանիկը, օգնություն ստանալը հստակ չէր: Շարունակում էր անտարբեր մնալ Հայաստանի կառավարությունը: Համագումարի պատգամավորների վրա ճնշող տպավորություն թողեց նաև Բաքվի անկման լուրը: Ղարաբաղի կառավարությունը մի անգամ ևս բազմակողմանի քննության առնելով թուրք–մուսավաթականների վերջնագիրը, որոշեց թույլատրել Շուշի մտցնել միայն թուրքական կանոնավոր զորամասեր՝ 800–1000 զինվորից ոչ ավելի: Ադրբեջանական զինված ուժը կանոնավոր կամ անկանոն, չպետք է բերվեր Շուշի: Քաղաք մտած զորամասերը պետք է տեղավորվեին մուսուլմանական թաղամասում: Թուրքերի ժամանակավոր իշխանությունը պիտի տարածվեր միայն քաղաքի մուսուլմանական մասի վրա: Միևնույն ժամանակ, կառավարությունը ընդունեց նոր ռազմավարություն՝ հնարավորին սահմաններում ձգձգել վերջնագրի պատասխանը և, ընդհանրապես, բանակցությունները թուրքերի հետ, մինչև Հայաստանից լուր կստացվեր:

Ղարաբաղի կառավարությունն իր ընդունած որոշման մասին համագումարի պատգամավորներին իրազեկ դարձրեց սեպտեմբերի 20–ի նիստում: Պատգամավորները վրդովմունքով են ընդունում թուրքերին Շուշի թողելու վերաբերյալ կառավարության առաջարկությունը: Երկար վիճաբանելուց հետո քաղաքական



կուսակցությունները և կառավարությունը կարողանում են համոզել պատգամավորների մեծամասնությանը և թուրքական հրամանատարությանն ուղարկել հետևյալ պատասխանը. Լեռնային Ղարաբաղի աշխատավորությունը չի կարող համաձայնել զինաթափման հետ և ոչ մի դեպքում թույլ չի տա ադրբեջանական անկանոն զորքերի մուտքը Շուշի, միայն թուրքական կանոնավոր, փոքրիկ զորագնդի կթույլատրի մտնել Շուշի:[93]

Համագումարն իր լիակազմ վերջին նիստում, սեպտեմբերի 22–ին, որոշում է, որ հինգ շրջաններից՝ յուրաքանչյուրից հնգական, ինչպես և քաղաքից հինգ պատգամավորներ շարունակեն աշխատանքները կառավարության հետ, իսկ մնացածները վերադառնան տեղերը: Համագումարի որոշմամբ ստեղծվում է երկու հանձնախումբ. ա) Վահան եպիսկոպոս Տեր–Գրիգորյան, Տիգրան Յուզբաշյան և Բախշի Մուրադյան, Ասկերան և նրա ձախ թևի երկարությամբ գտնվող Խաչենի գյուղերը գնալու, իսկ բ) Ասկերանի աջ կողմի՝ Վարանդայի գյուղերը գնալու համար՝ Գարեգին քահանա Հովհաննիսյան, Եղիշե քահանա Խաչիկյան և Կարապետ քահանա Վարդապետյան: Հանձնախմբերի խնդիրն էր համագումարի որոշումները հասցնել բնակչությանը և «ժողովրդի միտքերը խաղաղեցնել»:[94]

Համագումարի որոշմամբ քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարյանը և Գրիգոր Ղարագյոզյանը սեպտեմբերի 22–ին մեկնում են Աղդամ՝ թուրքական զորքերի հրամանատարի հետ բանակցելու: Համագումարն ընտրում է ժողովրդական նոր խորհուրդ, որը գոյություն է ունենում մի քանի օր:

Թուրքերը հարձակման են անցնում ճակատի երկարությամբ՝ Քարագլխից մինչև Սեյդիշեն: Հակառակորդին հաջողվում է գրավել Ասկերանի աջ կողմում գտնվող որոշ կետեր, սակայն Քյաթուկ, Փրջամալ և Վարազաբուն գյուղերի ինքնապաշտպանական ուժերը սպա Արշավիր Պետրոսյանի ղեկավարությամբ հետ են մղում թշնամու գրոհները: Ասկերանի աջ մասում գտնվող Ղլիզբաղ, Խրամորթ, Քարագլուխ գյուղերի և Ասկերանի մարտիկները շարունակում էին պաշտպանվել առանց մի քայլ նահանջելու: Ալեքսան դայու գլխավորությամբ Դալի Մահրասան, Մուսան, Աղասին և այլ քաջեր հերոսաբար էին կռվում մանավանդ Քարագլխի ուղղությամբ: Սեպտեմբերի 22–ին շարունակվում էր դիմադրությունը երկու ճակատներում՝ Ասկերանի աջ և ձախ կողմերի: Կեսօրից հետո թուրքերին հաջողվում է գրավել Դահրազը և թիկունքից սպառնալ Քյաթուկի, Փրջամալի և Վարազաբունի ուժերին: Սեպտեմբերի 22–ի առավոտից Ղլիզբաղ, Խրամորթ, Քարագլուխ գյուղերի ճակատում սկսվում են կատաղի կռիվներ, որոնք շարունակվում են մինչև երեկո: Չնայած հակառակորդը բավականին զոհեր է տալիս, բայց և այնպես շարունակում էր գրոհել: Ինքնապաշտպանական ուժերի փամփուշտները վերջանում են: Բացի այդ, թուրքերը Ասկերանի աջ կողմից Մյուրիշեն և Դահրազ գյուղերը գրավելով, անցնում են ինքնապաշտպանական ուժերի թիկունքը, և տիրելով Ասկերանի աջ թևի բարձունքներին, ուժեղացնում են ճնշումը: Մարտերում վիրավորված Ալեքսան դային տեղափոխվում է Խանգք: Մութն ընկնելու պես, ինքնապաշտպանության ուժերը Ասկերանի ձախ կողմից նահանջում են դեպի Սարդարաշեն, իսկ աջ կողմից՝ դեպի Հարավ:

Սեպտեմբերի 22–23–ը հակառակորդը, որն ուներ 7–8 հազար լավ զինված ասկյարներ՝ չհաշված մեծաթիվ թաթարական խուժանը, ներխուժելով Լեռնային Ղարաբաղ, գրավում և ավերում է Ասկերանի շրջակայքի Դահրավ, Վարազաբուն, Փրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղլիզբադ, Քարագլուխ գյուղերը: Մեկ ուրիշ զորամաս, ներխուժելով Վարանդա, թալանում է Ղզղալա (Կարաքենդ), Խերխան, Բիլբիլաք, Սոս, Քերթ, Քարահունջ, Մաշադիշեն (Կոլխոզաշեն), Ծովատեղ և այլ գյուղեր՝ թվով 19:[95] Հայ մարտիկները ստիպված թողնում են Ասկերանը, ինչը ծանր տպավորություն է թողնում արցախահայության վրա:

Այդ օրերին զինվորական գործով զբաղվող սպայակույտը և զինվորական գործերի կառավարչությունը ցուցակագրել էին երկրամասի բոլոր տղամարդկանց, ովքեր ի վիճակի էին զենք կրելու. լրիվ թափով աշխատում էր Շուշիի զինամթերք արտադրող ձեռնարկությունը, նորոգվում և ստուգվում էին հրացաններն ու ատրճանակները, օր ու գիշեր աշխատում էին սրեր պատրաստող դարբինները, բայց և այնպես այդ ամենը շատ քիչ էին հակառակորդին դիմադրելու համար:[96]

Շուշիի հայերի և մուսուլմանների միջև հարաբերությունների սրումը օր օրի ավելի էր խորանում: Նուրի փաշայի գործակալ Հասան Բասրի բեյի քաղաքում հայտարարած զինվորական դրությանը ենթարկվում էին միայն մուսուլմանները: Մուսավաթական «Ազերբայջան» թերթի համաձայն, Հասան Բասրի բեյը քաղաքում կազմակերպել էր չորս ջոկատ, 14 կոմիտե, զենք գնելու համար հանձնաժողով, ստեղծել էր ասկյարներին զենք ու զինամթերք մատակարարող հատուկ բաժին, մուսուլման երիտասարդներին ընդգրկել էր ռազմական հատուկ դասընթացներում և այլն:[97] Նա անընդհատ վերջնագրեր էր ուղարկում Ղարաբաղի կառավարությանը և պահանջում արագացնել արցախահայության զինաթափումը: Ղարաբաղի կառավարության որոշմամբ շրջաններ են ուղարկվում հանձնախմբեր իբրև կազմակերպելու բնակչության զինաթափումը: Քաղաքում զինաթափման գործը ղեկավարում էր առանձին հանձնախումբ: Ամենուր հանձնվում էին միայն կռվի համար ոչ պիտանի զենքեր:

Արցախահայությունը լի էր թուրք նվաճողներին և մուսավաթական հրոսակներին դիմադրելու վճռականությամբ: Ինչ խոսք, ստեղծված պայմաններում միանգամայն հնարավոր էր կանխել թուրքերի մուտքը Ղարաբաղ, մանավանդ, որ զորավար Անդրանիկը գտնվում էր Զանգեզուրում և պատրաստ էր օգնության հասնել Ղարաբաղին: Ցավոք, թե՛ կառավարությունը և թե քաղաքական կուսակցությունները այդ ուղղությամբ սկզբում ակտիվ չէին գործում և Անդրանիկի հետ դեռևս սերտ կապի մեջ չէին: Խիստ բացասական էր նաև այն, որ չհաջողվեց Շուշիի գունդը և նրա ամբողջ զինամթերքը տեղափոխել Ղարաբաղ: Ինչպես տեսանք, Ղարաբաղի կառավարությունը և երրորդ համագումարը որոշեցին ռիսկի չդիմել՝ պատճառաբանելով, որ գավառը պատրաստ չէ դիմադրության և ձգտում էին հարցը լուծել խաղաղ ճանապարհով: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ գավառը պատրաստ լինելու հարցում թե՛ կառավարությունը և թե՛ համագումարը սխալվել էին: Այնուամենայնիվ, Ղարաբաղի հայության երրորդ



համագումարը որոշեց «թուրքերին թույլատրել Շուշի», բայց «զենքը ցած չդնի»,[98] որպեսզի կարողանան «փրկել հազարավոր կանանց ու երեխաների կյանքը քաղաքի երկու մասերում»՝ գիտակցելով, որ թուրքերին դիմադրելը անշուշտ կուղեկցվի «հայերի և թուրքերի միջև կոտորածներով»:[99] Այդ օրերին, սեպտեմբերի 28–ին, Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը, հանդիպելով Կովկասում գտնվող Գերմանիայի պատվիրակության ղեկավար Գեներալ ֆոն Կրեսսի հետ, նրան հիշեցնում է, որ թուրքերը Բաքուն գրավելուց և այնտեղ վայրենություններ իրագործելուց հետո «հենց ատամները սրում են Ղարաբաղի դեմ: Ըստ ստացված տվյալների՝ նրանք արդեն Շուշի են ուղարկել ռազմական ուժեր: Պետք է միաժամանակ նկատել, որ այդ ձեռնարկումը հնարավոր է թուրքերի և ադրբեջանցիների վրա էժան չնստի, այնպես, որ Ղարաբաղի հայությունը ունի ուրիշ ռազմական ընդունակություններ, քան ունեն մյուս տեղերի հայերը»: Ապա նա նշում էր, որ եթե թուրքերի այդ գործողություններն ավարտվեն հաջողությամբ, ապա հավանական է, դրան կհաջորդի հայերի մասսայական բնաջնջումը»: Եվ երբ գերմանացի գեներալին խնդրվում է միջամտել, բնական է, նա հրաժարվում է:[100]

Ղարաբաղի կառավարության կողմից Աղդամ ուղարկված պատվիրակությունը Շուշի վերադարձավ սեպտեմբերի 25–ին: Ջամիլ Ջահիդ բեյը պահանջել էր երկրամասի բնակչությանը հարկադրել ամբողջ զենքը հանձնել իր ներկայացուցիչ Իսմայիլ Հակկի–բեյին և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:[101] Անհապաղ գյուղացիական համագումարներ են հրավիրվում Վարանդայում, Խաչենում և մյուս շրջաններում, որտեղ քննարկվում են թուրքական հրամանատարության վերջին պահանջը ու որոշում կազմակերպել դիմադրություն, խնայողաբար օգտագործել փամփուշտները և չզիջել դիրքերը: Այնուամենայնիվ, թուրքական զորամասերը Ջահիդ բեյի հրամանատարությամբ և գանձակեցի կալվածատեր, մուսավաթական կառավարության պաշտոնական լիազոր Իսմայիլ Խան Զիաթխանովի ուղեկցությամբ շարժվում են դեպի Շուշի՝ ճանապարհին սփռելով մահ և ավերածություն: Արցախահայությունը ոտքի ելավ փրկելու հայրենիքը, առանց երկնչելու թշնամու ուժերի թվական գերազանցությունից: Թուրք–մուսավաթական բարբարոսները ստիպված էին մարտերով գրավել ամեն մի բնակելի կետ: Այսպիսով՝ «սկսվեց Ղարաբաղի հայ գյուղացիության փառապանծ հերոսապայքարը թուրքական նվաճողների դեմ»:[102]

Թուրքական առաջապահ զորամասերը, մոտ 1500 հոգի, Ջահիդ բեյի գլխավորությամբ Շուշի մտան սեպտեմբերի 26–ին: Բանակի ետևից շարժվում էր «տեղական թաթարների խուժանը՝ գրավված գյուղերն ու քաղաքն ավերելու և թալանելու նպատակով»:[103] Շուշի քաղաքի մուսուլմանները թուրք նվաճողներին դիմավորեցին ցնծությամբ:[104]

Թուրքերը, մտնելով Շուշի, քաղաքը, ամբողջ Ղարաբաղը հայտարարեցին զինվորական դրության մեջ և արցախահայությունից պահանջեցին հանձնել բոլոր զենքերը:[105] Ջահիդ բեյը հայկական թաղամասի կոմիսարին առընթեր նշանակում է արտակարգ լիազորություններով թուրք կոմիսար, որին պետք է ենթարկվեր Ղարաբաղի կառավարությունը: Ջահիդ բեյի պահանջով մի պատվիրակութ-

յուն է ուղարկվում Գորիս (Մուշեղ Զաքարյան, Արսեն Բակունց և Սերգեյ Բաղիրյան, որոնց միացել էր նաև հոգևորական Թարխանյանը) Անդրանիկին «համոզելու» անձնատուր լինել:[106] Թուրք հրամանատարի պահանջով քաղաքի հարուստ հայերից ընտրվում է վեց հոգուց կազմված ներկայացուցչական մարմին, որը պետք է կապ պահպաներ թուրքական հրամանատարության հետ:[107] Հասան Բասրի բեյը հայտարարվում է Շուշի քաղաքի պարետ, Խոսրով բեկ Փոլադովը նշանակվում է Շուշիի գավառապետ, իսկ ընդհանուր նահանգապետ է նշանակվում Իսմայիլ Խան Զիաթխանովը: Նրանց հիմնական խնդիրն էր «Ադրբեջանի իշխանությունը մտցնել Ղարաբաղ»:[108] Հոգևորականներից և քաղաքացիներից կազմված պատվիրակություններ են ուղարկվում երկրամասի գյուղերը, որպեսզի բնակչությանը համոզեն ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը և կատարել թուրքական հրամանատարության բոլոր պահանջները: Սակայն նրանք ըմբոստացած գյուղացիների դատաստանից հազիվ փրկված՝ վերադառնում են քաղաք:[109] Թուրքական հրամանները գյուղերում չէին իրագործվում, նրանց «իշխանությունը Շուշիից և խնուղուց այն կողմ չէր տարածվում»:[110]

Հենց Շուշի մտած առաջին օրը՝ սեպտեմբերի 26–ին, Ջահիդ բեյը ճառերով հանդես է գալիս Շուշիի հայկական և մուսուլմանական թաղամասերում: Գերմանիայում կրթություն ստացած այդ չերքեզը շատ լավ էր յուրացրել թուրքական խաբեբայության, քծնանքի և կեղծելու նրբությունները: Թուրքական թաղամասում արտասանած իր ճառում նա ասում է. «Մենք ոչ միայն մեր կրոնակից ժողովուրդների, այլև բոլոր մյուս ազգերի իրավանց ջերմ պաշտպան ենք ու կողմնակից արդարության», իսկ հայկական թաղամասում ցինիկաբար ավելացնում է. «Մենք եկել ենք այս երկիրը ոչ թե տակնուվրա անելու, ինչպես մեր թշնամիները տարածել են մեր մասին, այլ կատարյալ խաղաղ վիճակ ստեղծելու, որպեսզի բոլորս միասին կարողանանք շենացնել մեր երկիրը և բարգավաճել: Մենք հավասար աչքով պիտի նայենք ձեզ վրա, թուրք թե հայ: Բոլորդ եղբայրներ եք: Գնացեք և հանգիստ ձեր աշխատանքին կացեք»:[111] Նա իր կեղծամիտ խոսքերին «իրական տեսք տալու համար» մինչև անգամ կախաղան է բարձրացնում մի քանի թուրք ավազակների: Հենց Ջահիդ բեյի համաձայնությամբ Իսմայիլ Հակկի–բեյը սեպտեմբերի 29–ին Խաչենի և Վարանդայի ժողովրդին հրամայում է զինաթափ լինել և զենքերն իրեն հանձնել: Այդ օրերին Տոնավարզ գյուղում տեղի ունեցած Վարանդայի գյուղացիության համագումարը, ի պատասխան, որոշում է ուժեղացնել շրջանի ինքնապաշտպանությունը և չենթարկվել թուրքի հրամաններին: Համագումարը Վարանդայի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար է ընտրում Ավետարանոց գյուղի ուսուցիչ Սոկրատ Մելիք–Շահնազարյանին:[112]

Թուրքական հրամանատարությունը «լիկվիդացիայի» ենթարկեց Ղարաբաղի կառավարությունը և սկսեց իր նենգ գործելակերպը՝ նախ իրար դեմ հանել քաղաքի հայերին և մուսուլմաններին, ապա սկսել արցախահայության սպանդը: Հոկտեմբերի մեկից քաղաքում սկսվեցին ձերբակալություններն ու խուզարկումները: Մինչև հոկտեմբերի 11–ը ձերբակալվեցին 51 հոգի, այդ թվում՝ Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, Հայրապետ Մուսայել-



յանը, Աշոտ Մելիք–Հովսեփյանը, Լևոն Վարդապետյանը, Արսեն Հովհաննիսյանը, Արշավիր Քամալյանը, Արտաշես Վարդապետյանը, Մարտիրոս Այվազյանը, Գերասիմ Բաղդասարյանը, Մելիքսեթ Եսայանը, Հարություն Թումյանը, Ռուբեն Տեր–Գասպարյանը և ուրիշներ:[113] Ձերբակալվածները նետվեցին բանտ, որտեղ մեկ ամիս ենթարկվում էին կտտանքների: Բաքվի հայկական տեղեկատվության բյուրոյի 1919 թ. փետրվարի 28–ի հաղորդակցության մեջ ընթերցում ենք. «Հոկտեմբերի 1–ի գիշերը ադրբեջանական հանրապետության ներկայացուցիչների հետ հայ մտավորականների տները խուժեցին իրենց գավառների ղեկավարներ հորջորջող թուրք ասկյարների բանդաները: Առանց համապատասխան հրամանաթերթի ու ընթերականների, ահ ու երկյուղի մատնելով կանանց ու երեխաներին, նրանք խուզարկություններ կատարեցին և բռնագրավեցին կարևոր բազմաթիվ փաստաթղթեր ու արժեքավոր իրեր: Խուզարկությունից հետո բոլորին փոխադրեցին Շուշիի բանտ, որտեղ սահմանեցին խիստ հսկողություն... Բանտարկյալների թիվը հասնում էր վաթսունի... Հարցաքննության ընթացքում Ղարաբաղի ժողովրդական իշխանության ներկայացուցիչ Եղիշե Իշխանյանը ենթարկվեց ծեծի ու կտտանքների, իսկ մյուսները՝ վիրավորանքի ու ծաղրուծանակի...

Զանգվածային բանտարկության հաջորդ օրն իսկ քաղաքի հրապարակում կանգնեցվեցին կախաղաններ...»:[114] Դա օսմանցիների վաղուցվա սովորությունն էր՝ մեկուսացնել ժողովրդին իր ղեկավարներից և հետո սպանդ կազմակերպել: Շուշի մտնելու հենց առաջին օրը նրանք քաղաքի հրապարակում կախաղան հանեցին ութ անմեղ մարդկանց և հայերին անխնա «ենթարկում էին մասսայական ահաբեկչության»:[115] Հոկտեմբերի 3–ին կախաղան է բարձրացվում Ավետարանոց գյուղացի խանութպան Ավագ Սայադյանցը իբրև զենք թաքցնելու համար:

Անչափ ծանրացավ քաղաքի դրությունը: Այն կտրվեց գավառներից և սննդամթերքի սուր խիստ կարիք առաջացավ: Թուրքերի տիրապետության առաջին երկու շաբաթվա ընթացքում սննդամթերքների գներն ավելացան մի քանի անգամ:[116] Ադդամից Շուշի տանող խճուղու մերձակա գյուղերում թուրք–մուսավաթականները սիստեմատիկ կատարում էին բռնագրավումներ, բռնաբարում կանանց, տանում աղջիկներին ու տղամարդկանց: Հարյուրավոր գյուղացիներ ձերբակալվեցին և «Ադրբեջանի կառավարության անդամ Զիաթխանովի կարգադրությամբ ոչնչացվեցին»:[117] Սակայն բարբարոսները շուտով համոզվեցին, որ այդ ճանապարհով երբեք չեն կարող արցախահայությանը ծնկի բերել և ենթարկել տալ Ադրբեջանին: Թուրքերին չհաջողվեց Շուշի քաղաքում և գրաված գյուղերում սպանդ կազմակերպել, որովհետև «եթե Շուշին կոտորածի չենթարկվեց տաճիկների կողմից, պատճառն այն էր, որ ամբողջ Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը տակավին զենքը ձեռքին կռվում էին նրանց դեմ: Տակտիկական տեսակետից տաճիկը նախ պետք է առերևույթ մեղմ ու կոռեկտ վարվեր Շուշիում, որպեսզի գավառներում կռվող հայ զանգվածների հոգում բեկում առաջանար հօգուտ տաճիկների, ապա, եթե տիրապետեր ընդհանուր Ղարաբաղին, այն ժամանակ ցույց կտար իր յաթաղանը շուշեցուն, ինչպես վարվել է Տաճկաստանում, Բաքվում և Ագուլիսում...»:[118]

Թուրքերին չհաջողվեց զինաթափ անել արցախահայությանը: Ահա թե այդ

մասին հոկտեմբերի 7-ին Անդրանիկին ինչ է հաղորդվել Արցախից. «...Այսօր Շուշիից մեզ մոտ եկան մարդիկ և ասացին հետևյալ հաստատ տեղեկությունները. Շուշի են մտել թե՛ տաճկական և թե՛ ադրբեջանական զորքեր, թվով 1500 հոգի 4 թնդանոթով և 12 գնդացիրներով: Բայց թիկունքից ոչ մի օգնություն չունեն: Շուշիում հայերը հավաքել էին մինչև 100–150 հրացան, մի գնդացիր և մի կոտրված թնդանոթ, որ տաճկական զորքը գալուց հանձնեն: Այն էլ մինչև տաճիկները քաղաք մտնելը թալանվել է հայ երիտասարդների ձեռքով: Քաղաքի թե՛ ռազմամթերքը և թե՛ երիտասարդությունը օր առաջ դուրս են եկել քաղաքից. ոչ մի տեղ ոչ մի հրացան չեն հանձնել տաճիկներին: Վարանդան նույնպես իր ուժի մեջ է, միայն մի 3–4 գյուղ հանձնել են, այն էլ լոկ խոսքերով, ոչ մի հրացան չեն հանձնել...»:[119]

Չնայած Շուշին անձնատուր եղավ, բայց Արցախ–Ղարաբաղի գավառները մնացին անառիկ: Դեռևս ամռանը և աշնան սկզբին, երբ ակնհայտ դարձավ թուրքական վտանգը, արցախահայությունը սկսեց հավաքագրել իր ուժերը: Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը կառավարությունից պահանջել էր կարգի բերել ռազմական ուժերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել աշխարհազոր: Հենց այդ օրերին Դիզակի զորահրամանատար է հաստատվել Արտեմ Լալայանը,[120] Վարանդայի հարավային և հարավ–արևելյան մասում՝ Աղալար Հայրիկյանը, Վարանդայի հյուսիսային մասում՝ Ալեքսան դային, օգնական՝ Աղասի Վերտյան, ծախափնյա Խաչենում և Ջրաբերդում՝ Բագրատ Ղազանչյանը, օգնական՝ Դալի Մահրասան: Արցախի զինվորական գործերի կառավարիչը մնում էր Հարություն Թումյանը,սպայակույտի ղեկավարը՝ Արտաշես Վարդապետյանը, Վարանդայի ընդհանուր հրամանատարը՝ Սոկրատբեկ Մելիք–Շահնազարյանը: Կենտրոնական շտաբը գտնվում էր հենց Շուշիի դիմաց Վարանդայի Տռնավարզ (Կարմիր գյուղ) գյուղում: Ամբողջ Արցախ–Ղարաբաղում սկսվում է համաժողովրդական շարժում: Աշխարհազորային ջոկատներ են կազմակերպվում բոլոր գավառներում և գյուղերում: Նրանց դրոշի վրա ասեղնագործվում էր «Մահ կամ ազատություն»:[121]

Երկրամասի գավառների բնակչությունը Շուշիի հանձնումը համարում էին դավաճանություն և չէին ցանկանում ոչ մի բանով օգնել քաղաքին: Նրանք Շուշիի հայ բնակչությունից պահանջում էին բոլոր տեսակի շփումներն ու կապերը խզել թուրքերի հետ: Զինաթափման և Ադրբեջանի կառավարությանը ենթարկվելու վերաբերյալ թուրքական հրամանատարության պահանջը մերժվում է Արցախ–Ղարաբաղի բոլոր գյուղերի կողմից: «Նոր հորիզոնը» 1918–ի դեկտեմբերի 14–ին գրել է. «Արցախցիները հրաժարվել են զինաթափվել»:

Գավառների և քաղաքի միջև ընդհատված կապը վերականգնելու և թույլ տրված սխալն ուղղելու համար անհրաժեշտ էր ստեղծել համընդհանուր ճակատ և ամուր կապեր ստեղծել Զանգեզուրի ու Անդրանիկի հետ: Այդ կարևոր գործին լծվում են քաղաքական կուսակցությունները, սպայությունը, մտավորականության մեծամասնությունը, զորահրամանատարները:

Թուրք բարբարոսների Ղարաբաղ ներխուժելու օրը՝ սեպտեմբերի 22–ին, Ասկերանի և շրջակա գյուղերի ինքնապաշտպանության ջոկատների կազմակեր-



ված դիմադրությունը ցանկալի արդյունք չտվեց, նախ և առաջ նրանց սակավազեն լինելու պատճառով: Ուստի նրանք նահանջեցին հարևան գյուղերը, ամրանալով անտառներում ու լեռներում՝ փակելով թշնամու առաջխաղացման ճանապարհները: Այդ ամենը ոգևորում էր արցախահայությանը և ամրապնդում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Թուրք–մուսավաթականները իրենց հարձակումները նախ և առաջ ուղղեցին դեպի Վարանդա և Ջրաբերդ, որտեղ հերոսաբար մարտնչում էին աշխարհազորային ջոկատները: Կարյագինոյի կողմից փորձ արվեց ներխուժել Վարանդա: Սակայն Շեխեր գյուղի ուղղությամբ առաջացած թշնամու ջոկատները ջախջախվեցին Տողի, Նոր Թաղերի, Շեխերի, Թաղավարդի և հարևան մյուս գյուղերի աշխարհազորայինների կողմից ու հետ շպրտվեցին:

Երբ թուրք–մուսավաթականները շարժվում էին դեպի Շուշի, այդ նույն օրերին ահեղ մարտեր տեղի ունեցան Արցախի Ջրաբերդ գավառում: Մեր ձեռքի տակ է այդ գավառի հայ բնակչության ներկայացուցիչների կազմած և համայնքների կնիքով հաստատված վճիռը, որի իսկությունը վավերացվել է Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի կնիքով: Գավառի 40 հազար հայերի շահերն արտահայտող այդ փաստաթուղթը Շուշի է հասցնում Ջիվանշիրի գավառի Վանք գյուղի բնակիչ Սերգեյ Պողոսյանը: Հավաքը, որը տեղի է ունեցել 1918թ. դեկտեմբերի 18-ին, քննարկել է գավառի տնտեսական ու քաղաքական դրության հետ կապված մի շարք հարցեր՝ առաջացած թուրք–մուսավաթական կանոնավոր զորամասերի կողմից շարունակ կրկնվող հարձակումների հետևանքով: Կայացած վճռում ասված է, որ արդեն երկու տարի է, ինչ Ջիվանշիրի գավառի բնակչությունը կտրված է դրսի աշխարհից, մուսուլմանները փակել են հաղորդակցության բոլոր ճանապարհները, սակայն գավառի բնակչությունը հինավուրց Գանձակի լեռներում կարողանում է պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը: Իսկ երբ թուրքական բանակը գրավեց Ալեքսանդրապոլն ու մոտեցավ Ելիզավետպոլի նահանգին, «տեղական թաթարները զենքը ձեռքին ոտքի կանգնեցին, որոնց նպատակն էր Ջիվանշիրը մաքրել հայերից և այն դարձնել Ադրբեջանի հանրապետության բաղադրամասը: Մեր հարևան գյուղերի թաթարները սկսեցին իրար հետ բաժանել հայերի տները, գեղեցիկ աղջիկներին ու կանանց և այդ մասին մեզ հայտարարել առանց ամոթ զգալու»:[122] Այնուհետև ասվում է, որ ամեն օր թաթարները պատգամավորներ էին ուղարկում և պահանջում անձնատուր լինել: Երբ սեպտեմբերին թուրք–ադրբեջանական բանակը շարժվեց Շուշիի վրա, Ջիվանշիրի գավառի հայերը անհապաղ հրավիրեցին գավառային հավաք և միահամուռ վճռեցին կռվել, մինչև արյան վերջին կաթիլը չզինաթափվել, անձնատուր չլինել բարբարոսներին, որոնք գլխովին բնաջնջում էին իրենց ձեռքն ընկած հայերին՝ հաշվի չառնելով ոչ սեռը, ոչ էլ տարիքը, կողոպտելով նրանց ունեցվածքը, ավերելով մշակույթի օջախները, դրանք կրակի մատնելով»:[123]

Ծանր գնդացիրներով և զենքի այլ տեսակներով զինված թուրք–թաթարական ուժերը, բաղկացած երկու գումարտակից և չորս հազարի հասնող տեղական թուրքերից, հոկտեմբերի 5–ին ներխուժում են Ջրաբերդի շրջան և շարժվում Մարտակերտի (այն ժամանակ՝ Աղջաբենդ) ուղղությամբ:[124] Սարալանջի

գյուղացիները, գրում է Դավիթ Անանունը, իրենց փոխադրական միջոցներով օգնության են գնում տափաստանի հայ գյուղացիներին և իրենց մոտ փոխադրում նրանց ընտանիքները, հացն ու բամբակը:[125] Ջիվանշիրի հայերի ինքնապաշտպանության կենտրոնը դարձավ Մարտակերտ գյուղը, որը փակել էր տափաստանի կողմից դեպի լեռնային գյուղեր տանող հիմնական ուղին: Յրոսակները թուրք սպա Քյամիլ բեյի, բժիշկ Դ. Լեմբերանսկու, մուսուլմանական «վայրի դիվիզիայի» սպա Շիրին բեյի, հայտնի ավազակ Շահմալիի, կալվածատեր, նույնպես հայոց դահիճ Կարաբեկովի և այլոց առաջնորդությամբ, երեք անգամ հարձակվեցին Մարտակերտի վրա և ամեն անգամ էլ ջախջախված ետ շպրտվեցին:[126] Ջիվանշիրի հայ քաջարի գյուղացիները Թարթառի կամրջից մինչև Մարտակերտ ամուր շղթա էին կազմել: Ջրաբերդի աշխարհազորային ուժերի հրամանատար Բագրատ Ղազանչյանը ամեն ինչ անում էր՝ դուրս քշելու գավառ ներխուժած թշնամուն: Աշխարհազորայինները կռվում էին խիզախորեն և անգիջում: Նրանց օգնության են հասնում Խաչենի ու Գյուլիստանի աշխարհազորայինները: Այլևս նահանջի ճանապարհ չկար: Կռվող տղամարդկանց օգնում էին կանայք, ծերունիները և դեռահասները: Նրանք թիկունք էին տեղափոխում վիրավորներին և զոհվածների դիակները, կռվողներին հասցնում սննդամթերք, փամփուշտ և անհրաժեշտ այլ պարագաներ: Յակառակորդը, չդիմանալով հայերի գրոհներին, ստիպված նահանջեց՝ մարտի դաշտում թողնելով մեծաթիվ դիակներ: Թուրքերը նահանջի ճանապարհին ձերբակալեցին Ներքին Գետաշեն (Չայլու) գյուղի «պատվարժան անձանց և տարան Թարթառ կայան՝ իրենց գլխավոր շտաբ, ուր հայկական ուժերի մասին տեղեկություններ կորզելու նպատակով հարցաքննելիս տանջամահ արեցին նրանց:[127] Ջրաբերդի գավառային կոմիսար Յովհաննես Առաքելյանը 1919 թ. փետրվարի 17-ին ՅՅ նախարարների խորհրդի նախագահին հղած վերոհիշյալ նամակում պատմում է, թե ինչպիսի նվիրվածությամբ էին կռվում գավառի Մարտակերտ, Մոխրաթաղ և Ըյուլասազ գյուղերի բնակիչները:[128] Ջիվանշիրի հայերի հերոսամարտը կանխեց թուրք-թաթարների մուտքը Ջրաբերդի շրջան և բնաջնջումից փրկեց տեղի հայ բնակչությանը:

Մարտակերտի ռազմաճակատում խայտառակ պարտություն կրելուց հետո թուրք-մուսավաթական հրամանատարությունը որոշեց այս անգամ ամբողջ թույնը թափել Դիզակի և Վարանդայի վրա: Արցախ-Ղարաբաղի այս երկու շրջանները հակառակորդի համար ունեին հատուկ նշանակություն: Թե պարսիկները, թե արաբները, թե թուրք-սելջուկները Արցախ են ասպատակել հենց Դիզակի և Վարանդայի վրայով: Դեպի հարթավայր և դեպի լեռնային արոտավայրեր տանող հիմնական ճանապարհներն անցնում են Դիզակով և Վարանդայով: Զանգեզուր-Նախիջևան-Երևան և հակառակ ուղղությամբ մինչև Բաքու տանող ճանապարհների հանգույց Դիզակն ու Վարանդան ամուր ոսկոր էին թուրք-մուսավաթականների կոկորդում: Թուրքական հրամանատարությունը և մուսավաթական Ադրբեջանը ավելի կատաղեցին, երբ Դիզակն ու Վարանդան զինաթափվելու և Ադրբեջանին ենթարկվելու վերաբերյալ պահանջները մերժելուց բացի, առաջինը սկսեցին կազմակերպել ժողովրդական աշխարհազոր: Որոշ հեղինակներ այն կարծիքին են, թե իբր այն ժամանակ Արցախում տեղի ունեցած կռիվները լոկ պարտիզանական բնույթ են կրել: Մինչդեռ Արտեմ Լալայանը լիովին ժխտում է այդ տեսակետը՝ նշելով, որ Ղարաբաղում «ընդհանուր ժողովրդական կռիվներ են եղել թե մուսավաթ Ադրբեջանի կառավարության և թե տաճիկ զորքերի ու փաշաների դեմ», որոնք ցանկացել են Ղարաբաղի հայությանը հպատակեցնել մուսավաթական Ադրբեջանի կառավարությանը: «Ժողովուրդը վճռել էր մեռնել, բայց չհպատակվել Ադրբեջանին: Այնպիսի ոգևորություն էր, ինչպես 451 թվականին Մեծն Վարդանանց պատերազմի ժամանակ»:[129]

Եվ ահա 1918 թ. հոկտեմբերի կեսերին արդեն Կարյագինոյի պարետ Քյազիմ բեյը[130], որն իրեն «փաշա» էր հորջորջել, Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանից պահանջում է անձնատուր լինել և Դիզակի բոլոր ռազմավարական կետերը հանձնել թուրքական հրամանատարությանը: Արտեմ Լալայանը պատմում է, որ իրեն մի պատվիրակություն է ուղարկել (Ալեքսան Մադունց, Մարգար Խուբլարյան և Մովսես Յակոբյան) Կարյագինոյի պարետի մոտ: Յանդիպումը տեղ է ունենում Ղարաքյոլլու (հին հայկական Յասկահատիկ գյուղն է, գտնվում է Յադրութից հարավ, դեպի Արաքսի կողմը– Յ.Ա.) գյուղում: Պատվիրակությունը հանձնարարություն ուներ ամեն կերպ ձգձգել բանակցությունները, մինչև դիզակցիների ուժերը կարգի կբերվեին: Սակայն Կարյագինոյի պարետը պնդում է իր պահանջը և հոխորտում, թե հակառակ դեպքում զորք բերել կտա Շուշիից և ամբողջ Դիզակը հողին կհավասարեցնի: Իրոք, Քյազիմ բեյի այդ սպառնալիքը լոկ հոխորտանք չէր: Նա օգնություն է խնդրում թուրքական հրամանատարությունից: Ջալիլ բեյի հրամանով շտապ կարգով ավելի քան 400 ասկյարներից բաղկացած մի զորամաս Շուշիից Վարանդայի վրայով նետվում է Կարյագինո: Նա միանալու էր Մուղանի կողմից դարձյալ դեպի Կարյագինո շարժվող թուրքական զորամիավորումներին՝ միասին տեղի և թաթարական մի քանի հազարանոց խուժանի աջակցությամբ նվաճելու Դիզակն ու Վարանդան: Թուրք հրոսակների Վարանդա ներխուժելու լուրը արագորեն տարածվեց ամբողջ Արցախում: Ընդհանուր հրամանատարության կողմից թշնամուն ջախջախելու և Վարանդայի ու Դիզակի պաշտպանության պատասխանատվությունը դրվեց Դիզակի հրամանատար Արտեմ Լալայանի, իսկ Վարանդայի ուժերի կազմավորման պատասխանատվությունը՝ Սոկրատ Մելիք-Շահնազարյանի վրա:

Վարանդան ու Դիզակը ոտքի ելան: Արագորեն կարգի են բերվում նաև Խաչենի ու Ջրաբերդի ուժերը: Ավետարանոց, Աղնախ, Շոշ, Տռնավարզ, Խաչմաչ, Սարուշեն, Թաղավարդ, Սխտորաշեն, Շեխեր, Ղավախան, Սսմնա, Մավաս, Խերխան, Ծովատեղ, Յերհեր, Մաշադիշեն, Քերթ, Քարահունջ, Սոս, Յադորտի, Մուշկապատ, Ճարտար և Վարանդայի մյուս գյուղերում արագորեն կարգի բերվեցին աշխարհազորային ջոկատները: Առաջին հերթին զենք վերցրին բոլոր նրանք, ովքեր մասնակցել էին առաջին աշխարհամարտին, Սարդարապատի ու Բաքվի հերոսամարտերին և կռվելու փորձ ունեին:

Թուրք-թաթարական զորամասը, հոկտեմբերի 17-ին (ըստ Եղիշե Իշխանյանի հոկտեմբերի 9-ին) դուրս գալով Շուշիից, շարժվում է Մոլլա-Նասրեդին կոչված ճանապարհով, որը Վարանդա գետի ուղղությամբ տանում էր Ղաջար-Կար-

յագինո: Սակայն Սարուշեն չհասած, զորամասը փոխում է ուղղությունը, շրջվում է ձախ՝ դեպի Սմնա գյուղը:[131] Թուրքական հրամանատարությունը նպատակ ուներ Սմնա–Հաղորտի ուղղությամբ դուրս գալ Ճարտար, որը Վարանդայի ամենալավ պաշտպանված գյուղերից էր: Ճարտարի պաշտպանական ջոկատները փակել էին Աղդամ–Խոնաշեն–Կարյագինո ճանապարհը և անընդհատ հարվածներ էին հասցնում թուրք–թաթարական այն ուժերին, որոնք փորձում էին հարավ–արևելքի կողմից ներխուժել Վարանդա: Թուրքական հրամանատարությունը որոշեց նախ հնազանդեցնել Ճարտարն ու շրջակա գյուղերը, ապահով դարձնել Աղդամ–Կարյագինո ճանապարհը, նոր միայն գնալ Կարյագինո:

Աղբյուրներում հակասական հաղորդումներ կան այն մասին, թե թուրքական այդ զորամասն անմիջապես ղեկավարում էր Զահիդ բեյը,[132] կամ էլ Քյազիմ բեյը և իբրև թե վերջինս զոհվել է Սմնայի ճակատամարտում: Այդ տեղեկությունները ճիշտ չեն այն պարզ պատճառով, քանի որ Զահիդ բեյը, ինչպես գիտենք, Արցախ–Ղարաբաղ ներխուժած թուրքական ուժերի ընդհանուր հրամանատարն էր և այդ օրերին Շուշիից դուրս չէր եկել, հետո, Քյազիմ բեյն էլ 1918–1919 թթ. ղեկավարել է Գորիսի և Կապանի ուղղությամբ կազմակերպված թուրքական հարձակումները: Այդ ժամանակ Արցախի ռազմական ուժերի ղեկավար Հարություն Թումյանը, Քիրս–Սարոտը (իսկական անունը և ազգանունը չկարողացանք պարզել) Աբրահամ Կիսիբեկյանը և ուրիշներ վկայում են, որ Վարանդայի վրայով դեպի Կարյագինո շարժված թուրք–թաթարական զորամասի հրամանատարը եղել է Բաքվի և Արցախի հայ բնակչության դեմ գործադրած վայրագություններով հայտնի Խոսրով–բեկ Փոլատովը: Վկայություն կա նաև այն մասին, որ թուրքական զորամասին ուղեկցել է «Ղարաբաղի ճանապարհներին քաջածանոթ նախկին ցարական մի ծառայող»:[133] Այդ «քաջածանոթը» ծննդով Վարանդայի Հաղորտի գյուղացի (Եղիշե Իշխանյանի մոտ՝ հերհերցի) նախկինում անտառապահ Ներսես Հեյբաթյանն է (Հեյբաթով) եղել: Թե վերոհիշյալ Գրիգոր Գրիգորյանը և թե Սմնա գյուղի բնակիչ Սողոմոն Բաբայանը (այս վերջինի հետ հանդիպել ենք 1974 թ. ամռանը, Սմնա գյուղում) վկայում են, որ թուրքական զորամասին Սմնայի ուղղությամբ գիտակցաբար շեղել է Հեյբաթյանը, այդ մասին նախօրոք տեղյակ պահելով հայկական աշխարհազորի հրամանատարությանը: Նա նաև զգուշացրել է, որ զորամասը Սմնայից կշարժվի Ղավախան–Հաղորտի ուղղությամբ՝ դուրս գալու Ճարտար–Կարյագինո ճանապարհը: Ներսես Հեյբարյանի վերաբերյալ այդ տեսակետը պաշտպանում է նաև Վիկտոր Մուրադյանը: Քիրս–Սարոտը գրում է, թե թուրքերը «Իրիկնամուտին հասնում են Սմնա: Փոլատովը նպատակ ուներ իր մոտ կանչել հարևան գյուղերից ներկայացուցիչների և 48 ժամ ժամանակ տալ զինաթափման համար: Միտք ուներ Ճարտար մտնել»:[134]

Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը վճռել էր հակառակորդի ուժերը ոչնչացնել հենց Վարանդայում, նախքան Կարյագինո կհասներ: Նա իր տեղակալ, ծննդով Հադրութի շրջանի Կամրակուճ գյուղից Ասլանիկ Մուրադխանյանին (վերոհիշյալ Վիկտոր Մուրադյանի հայրն էր), որը փորձված և խիզախ երիտասարդ էր, նշանակում է հրամանատար և ուղարկում Վարանդա: Հետագայում Արտեմ Լալայանը գրել է, թե Ասլանիկին Վարանդա է ուղարկել «երկու բեռ փամփուշտով և քսան քաջ զինվորներով» և մի հրամանով՝ Դիզակի և Վարանդայի ժողովրդին, որ Ասլանիկին իրավունք է տալիս «այդ շրջանից վերցնել քաջ, աչքի ընկնող զինվորներ ջարդել տաճիկ զորքին»: Լալայանի վկայությամբ՝ «Ասլանիկը հավաքում է Դիզակի և Վարանդայի շրջաններից մոտ 120 քաջ զինվորներ»:[135]

Դիզակի քաջարի խմբի հետ Վարանդա ժամանած Ասլանիկ Մուրադխանյանը դասավորում է ուժերն այնպես, որպեսզի կարողանա շրջափակման մեջ առնել հակառակորդին: Զննելով տեղանքը և խորհրդակցելով աշխարհազորային ջոկատների հրամանատարների հետ՝ նա որոշում է գործողությունները հետաձգել հաջորդ օրը:[136]

1918 թ. հոկտեմբերի 18–ի առավոտյան Սմնայի բարձունքը թաղված էր մառախուղում: Այդ նույն գիշերը գյուղում ամեն վայրագություններ կատարելուց հետո, (այդ ամենի մասին տեղյակ էր պահվում հարևան բլուրների վրա դիրքեր բռնած աշխարհազորայիններին), վաղ առավոտյան թուրքերը դուրս գալով գյուղից՝ մտնում են ձորով անցնող ճանապարհը: Հանկարծ թշնամու վրա սկսում են կարկուտի պես գնդակներ տեղալ: Թուրքերը «Ջրատափ» կոչված տեղամասում ընկնում են ծուղակի մեջ: Հայ քաջարի մարտիկները թշնամուն հնարավորություն չեն տալիս ամբողջովին օգտագործել թնդանոթներն ու ծանր գնդացիրները: Նրանք մի քանի անգամ գրոհում են հակառակորդի դիրքերը: Նույնիսկ վիրավորները չէին հեռանում մարտի դաշտից: Քարահունջ գյուղից եղբայրներ Սմբատ և Հարություն Ղահրամանյանները զոհվեցին կողք կողքի, բայց չնահանջեցին դիրքերից:[137] Զոհվեցին նաև Արսեն Գրիգորյանը (Ծովատեղ), Բախշի Միրզոյանը (Մաշադիշեն), Սարգիս Գասպարյանը (Ղավախան) և Բաղդասարյանը (Ճարտար): Հերոսամարտը շարունակվեց մինչև մութն ընկնելը: Աշխարհազորայինների շարքերը լրացվում էին նորերով: Շրջակա գյուղերի բնակիչները սննդաթերք և փամփուշտ են հասցնում կռվողներին ու տեղափոխում վիրավորներին և զոհվածների դիակները: Իրիկնամուտին Դիզակից օգնության է հասնում նոր ջոկատ՝ Թոումեցի Թևան Ստեփանյանի գլխավորությամբ:

Մարտը դադարեց միայն ուշ երեկոյան: Արցախի աշխարհազորայինները գլխովին ջախջախեցին թշնամուն: «Ասկյարներից ազատվում են քչերը, որոնք Փոլատովի հետ, օգտվելով մթից ու ձորը կոխած մառախուղից, կարողանում են մի կերպ գլուխներն ազատել»,– հետագայում գրել է Հարություն Թումյանը:[138] Հակառակորդին հաջողվում է իրենց հետ տանել գնդացիրները, իսկ հրանոթներն ընկնում են աշխարհազորայինների ձեռքը:[139] Գրավված հրանոթները և մյուս տեսակի զենքերը տեղափոխվում են Հաղորտի գյուղը, մի մասն էլ տարվում է Դիզակ: Զահիդ բեյի ուղարկած պատվիրակության խնդրանքը՝ ետ վերադարձնել զենքերը, մերժվում է:

Սմնայի ճակատամարտում թուրք–թաթարների դեմ տարած այդ փայլուն հաղթանակն էլ ավելի է ոգևորում արցախցիներին և բարձրացնում նրանց մարտական ու բարոյական ոգին: Մի քանի օր անց թուրքական հրամանատարությունը մի նոր, ավելի խոշոր ջոկատ, բաղկացած 600–700 ասկյարներից, ու-

դարկում է Վարանդա՝ հաշվեհարդար տեսնելու տեղի բնակչության հետ։[140] Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը, լուր ստանալով թուրքերի այս նոր հարձակման մասին, իր զորամասով շտապում է Վարանդա։ Սոկրատբեկի հետ նա շրջում է գյուղերը, կազմակերպում նոր աշխարհազոր և փակում թշնամու ճանապարհը։[141] Թուրքերը ճարահատյալ, առանց առաջ շարժվելու որևէ փորձ կատարելու, վերադառնում են Շուշի, հայտարարելով, թե իբր «իրենց դեմ կանգնած են հայկական մեծ ուժեր»։[142]

Այսպիսով, Ջրաբերդի, Վարանդայի, Դիզակի և Արցախի մյուս շրջանների բնակչության հերոսական պայքարի շնորհիվ միայն հնարավոր դարձավ կասեցնել թուրք–մուսավաթական նվաճողների կողմից Լեռնային Ղարաբաղի գրավման և արցախահայության նկատմամբ նոր սպանդի կազմակերպման փորձերը։

Արցախ–Ղարաբաղի համար այդ ծանր ու ճակատագրական օրերին երկրամասի բոլոր գավառների զորահրամանատարները գտնվում էին իրենց բարձրության վրա և սերտ կապերի մեջ։ Այստեղ թուրք–մուսավաթականների դեմ մղված պայքարը ընդունել էր համաժողովրդական, ազգային–ազատագրական բնույթ։ Արցախահայությունը նաև սերտ կապի մեջ էր զորավար Անդրանիկի հետ և անհամբեր սպասում էր նրան տեսնել արցախյան հողի վրա։

Սակայն հետագա իրադարձություններն այլ կերպ դասավորվեցին. թուրքական բանակը, անգլո–ֆրանսիական միացյալ ուժերի կողմից ջախջախիչ հարված կրելով Միջագետքում, Սիրիայում, Պաղեստինի, Դարդանելի և Մակեդոնիայի ճակատամարտերում, իրեն ճանաչեց պարտված։ 1918 թ. հոկտեմբերի 30–ին Անտանտի զորքերի հրամանատարության և սուլթանական կառավարության միջև Մուդրոսում կնքվեց զինադադար, որի 11–րդ հոդվածի հիման վրա Թուրքիան իր զորքերը անմիջապես պիտի դուրս բերեր նաև Անդրկովկասից։ Համաձայն այդ զինադադարի, թուրքական զորքերը շտապ հեռացան նաև Ղարաբաղից։ Թուրք հրամանատարությունը Շուշիի բանտից ազատած քաղբանտարկյալների դիմաց քաղաքի հայ բնակչությունից պահանջեց 111 հազար ռուբլի ոսկով, սպիտակեղեն և յուրաքանչյուր ընտանիքից մեկ դատարկ դույլ՝ իրենց հեծելազորի կարիքների համար։[143] Թուրք բարբարոսները, հեռանալով Անդրկովկասից, թալանում և իրենց հետ տանում էին հնարավոր ամեն ինչ։ Ուլուխանլուից (Արմավիր) մինչև Ալեքսանդրապոլ և Աղստաֆայից մինչև Քյուրդամիր կանգնած էին գնացքներ՝ թալանված բարիքներով բարձված։ Թուրքերը, հեռանալով զավթված տարածքներից, իրենց հետ տանում էին մինչև անգամ պատուհանների շրջանակներ, դռներ, տանիքներ, իսկ վառարանները ջարդում էին՝ իմանալով, որ դրանով իսկ վերադարձողներին դատապարտում են մահվան։[144]

Մուդրոսի զինադադարի համաձայն, պետք է զորացրվեր թուրքական բանակը, սակայն դաշնակից պետությունները հետևողական չեղան այդ հարցում։ Օգտվելով դրանից՝ թուրքական բազմաթիվ սպաներ՝ Նուրի, Քյազիմ և Խալիլ փաշաների գլխավորությամբ, մնացին Ադրբեջանում՝ խնդիր ունենալով կազմակերպել և գլխավորել մուսավաթական Ադրբեջանի բանակը։



## 3. ԱՆԴՐԱՆԻԿԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ Օզանյանը անտարբեր չէր արցախահայության ճակատագրի նկատմամբ։ Նա լավ գիտեր արցախցիներին. արցախցի շատ զավակներ մեկ անգամ չէ, որ իրենց քաջությամբ հիացմունք էին պատճառել զորավարին։ Անդրանիկ Օզանյանը, 1918 թ. օգոստոսի 3–ից գտնվելով Սյունիքում, ջանքեր էր գործադրում արձագանքելու արցախահայության խնդրանքին և օգնության ձեռք մեկնելու նրան։ Արցախի հայությունն անհամբեր սպասում էր զորավարի մուտքին «Հայոց արևելից կողմանց աշխարհը», սակայն, ցավոք, հանգամանքների բերումով դա տեղի չունեցավ։ Ցավալի է, որ հայ հեղինակներից ոմանք, հիմք ընդունելով մեկ–երկու եզակի դեպք, ընդհանրացնում են, թե իբր Արցախի հայոց «Ազգային խորհուրդը և մտավորականության զգալի մասը բացասական» դիրք են գրավել «Անդրանիկին Ղարաբաղ հրավիրելու հարցի վերաբերյալ»՝ գտնելով, թե իբր ստեղծված պայմաններում Անդրանիկի «Ղարաբաղ մտնելը ավելի կբարդացնի մուսավաթական կառավարության հետ ունեցած առանց այն էլ լարված հարաբերությունները»։[145] Մինչդեռ, Անդրանիկին Արցախ էին հրավիրում թե Ղարաբաղի ազգային խորհուրդը և թե գյուղական համայնքները, համոզված լինելով, որ նրա ներկայությունը Ղարաբաղում կսանձի թուրք–մուսավաթական ազգայնամոլներին, վերջ կտրվի ազգամիջյան բախումներին, և Արցախը կմիավորվի մայր Հայաստանի հետ։ Հայոց դատի անխոնջ գործիչ Անդրանիկ Օզանյանը այդ ծանր օրերին հույս ու հավատ, մարտնչելու կորով էր ներշնչում Արցախի և Զանգեզուրի քաջարի ժողովրդին։ Քանի որ թուրք–մուսավաթական ուժերը խիստ վտանգ էին սպառնում Արցախ–Զանգեզուրին, ուստի այդ ժամանակ Անդրանիկի Սյունյաց աշխարհում գտնվելը պատմական առաքելություն պետք է համարել։

Մինչ Անդրանիկը Գորիս կհասներ, օգոստոսի 2–ին Արցախի իշխանությունները Զանգեզուրի ազգային խորհրդին խնդրել էին Գորիսում գտնվող Շուշիի գունդը հնարավորին չափ շուտ տեղափոխել Ղարաբաղ։ Նման բովանդակությամբ նամակ ուղարկվեց նաև օգոստոսի 8–ին, երբ արդեն Անդրանիկը Գորիսում էր։ Արցախից գրել են. «Այն ծանր, տագնապալից դրությունը, որն ապրում ենք մենք, մեզ ստիպում է խնդրանքով նորից դիմել ձեզ։ Ղարաբաղի հայ ժողովրդի համար ներկայումս օդի պես անհրաժեշտ է գնդի (Շուշիի– Հ.Ա.) և մանավանդ ռազմամթերքի այստեղ տեղափոխելը։ Մենք կանգնած ենք ճակատագրական անխուսափելի անակնկալների առաջ, և եթե մինչև ամսոյս 25–ը ռազմամթերքի պաշար չստանանք, կարելի է վճռականապես և հաստատ ասել, որ կորած ենք»։[146]

Երբ Անդրանիկը հասնում է Գորիս, Շուշիի գնդի հրամանատար գնդապետ Միքայել Մելիք–Շահնազարյանը գունդը և ամբողջ ունեցվածքը հանձնում է զորավարի տնօրինությանը։[147] Ղարաբաղի և Զանգեզուրի գլխավոր լիազոր Արշակ Ստեփանյանը օգոստոսի 12–ին զորավարին հայտնում է, որ Զանգեզուրի ազգային խորհուրդը և Շուշիի գնդի հրամանատարությունը վճռել են «պինքի ուժով բաց անել Անգեղակոթից Շուշի տանող խճուղին», և խնդրում է

հրահանգել իր զորամասին, որ «մասնակցի տեղի ունենալիք ռազմական գործողություններին»:[148]

Արցախահայությունը, իմանալով, որ զորավար Անդրանիկը արդեն գտնվում է Սյունիքում, ցնծություն է ապրում: Իրար հետևից պատվիրակություններ են մեկնում նրա մոտ և խնդրում մտնել Արցախ՝ խոստանալով ամեն ինչում օժանդակել նրան: Միքայել Մելիք–Շահնազարյանը, Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի նախագահ բժիշկ Միքայել Պարոնյանը և Յովակ Ստեփանյանը, օգոստոսի 16–ին Անդրանիկին ուղարկելով Շուշիից ստացված պաշտոնական նամակը,[149] խնդրում են նրան մնալ Սյունիքում: «Ձեր գործունեության,– գրում են նամակի հեղինակները,– հարազատ միջավայրն այժմ հանդիսանում է միայն Ղարաբաղը, խնդրում ենք Ձեզ մի պատկառելի զորամասով անցնել Շուշի: Այդ է և Ղարաբաղի ժողովրդական կառավարության իղձն ու ցանկությունը»: Եվ վերջում՝ «Լիահույս ենք, որ Դուք անտես չեք անի մեր խնդիրքը և Ձեր շնորհիվ պատմական Ղարաբաղը հնարավորություն կստանա կատարել իր կոչումը»:[150] Մի քանի օր անց, օգոստոսի 20–ին, Անդրանիկին ուղարկած նամակում գնդապետ Մելիք–Շահնազարյանը պարզաբանում է. «...Այս պատմական օրերին ստեղծվել է Ղարաբաղի ու այս շրջանի մի այնպիսի կրիտիկական դրություն, որի այս կամ այն լուծումը կախված է Ձեզանից ու ինձանից: Բովանդակ Ղարաբաղն իր ամբողջ ուշադրությունը հառել է մեզ երկուսիս վրա: Ուրեմն մենք ենք, որ պիտի ճիգ ու ջանք չխնայենք, լարենք մեր բոլոր ուժերն ընդառաջ գնալու այն ահազանգերին, որ հնչում են Ղարաբաղի լեռներից»: Գնդապետը զորավարին խնդրում է «անկատար չթողնել այն բոլոր դիմումները, որ կհասնեին Ձեզ»:[151]

Թուրք էմիսարներն ու մուսավաթականները Անդրանիկի դեմ ոտքի էին հանել Զանգեզուրի տարածքում բնակվող մուսուլմաններին: Անհրաժեշտ էր կանխել արյունահեղությունը, բնակչության մեջ տանել բացատրական աշխատանք և ամրապնդել թիկունքը: Զբաղվելով այս հարցերով՝ Անդրանիկը հետաձգեց Արցախ մտնելու իր որոշումը: Սակայն Արցախից շարունակվում էին նորանոր տագնապալի լուրեր ստացվել: Գնդապետ Մելիք–Շահնազարյանը թախանձագին Անդրանիկին խնդրում էր «հնարավորին չափ շուտ ավարտելու սկսած օպերացիան, որովհետև վաղը կարող ենք ուրիշ անակնկալների առաջ կանգնած լինել»: Նա հավատացած էր, որ զորավարը «մի քանի օրից հետո» կերևա արցախական աշխարհի «հորիզոնի վրա»:[152]

Արցախահայության կապը զորավարի հետ դարձել էր գրեթե ամենօրյա, մանավանդ Բերդաձորի իրադարձություններից հետո: «Մեր սուրհանդակը,– կարդում ենք արցախցիների Անդրանիկին ուղարկած զեկուցագրերից մեկում,– Զանգեզուրից անփորձ եկավ հասավ այստեղ, և իմացանք ամեն մի հանգամանքը: Սուրհանդակը շուտով նամակներ կբերի Ձեզ»: Ապա զորավարին հանգամանորեն տեղեկություններ է հաղորդվում երկրամասում տեղի ունեցող իրադարձությունների և թուրք–մուսավաթականների նկրտումների մասին, իսկ վերջում՝ «Ղարաբաղի հայության փրկությունը կախված է Ձեզնից»:[153] Չես կարող առանց հուզմունքի ընթերցել այդ օրերին Շուշի քաղաքի աշխատավորների անունից Անդրանիկին ուղարկված նամակը, որտեղ հստակորեն շարադրված է արցախահայության վճիռն իր անկախության և ինքնորոշման վերաբերյալ: Ահա տողեր այդ նամակից. «Այսօր կայծակի արագությամբ հայ ժողովրդին հասավ այն ուրախալի լուրը, որ Դուք... մեր վիճակը բարելավելու ցանկություն եք արտահայտել»: Ապա՝ «Այժմ ադրբեջանական ազգը մեր հայ ժողովրդին ստիպում է ընդունել ադրբեջանական սահմեդական տիրությունը: Մենք՝ հայերս, երբեք չենք ընդունի այդ անօրենների տիրությունը: Մեր հավատարիմ հպատակների արյունը և կյանքը միշտ թանկ են եղել մեզ համար»: Շուշիի բնակիչները ցանկություն են հայտնում, որ զորավարը «փութապես» այցելի Շուշի՝ խոստանալով «Ինչ–որ հրամայեք, մենք կկատարենք: Միայն սահմեդական տիրությանը ոչ, երբեք մենք չենք կարող հնազանդվել: Միայն պարտավոր ենք կատարել Ձեր շնորհալի կարգադրությունը»: Արցախահայուրթյունը պատրաստ էր մինչև անգամ «Անգլիային, Ֆրանսիային, Ամերիկային հնազանդվել, քան թե ադրբեջանական սահմեդականի տիրությանը»: Նրանք զորավարին տեղյակ են պահում. «Մենք ինքներս, երեխեքն ու գերդաստանը կզոհվենք, քան թե այսպիսի սահմեդական տիրությանը հպատակ կլինենք...

Մնանք միշտ գերազնիվ գթությանդ՝ հայ ժողովուրդ Ղարաբաղի»:[154]

Զորավարն ուշի ուշով հետևում էր Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Նա շատ լավ էր պատկերացնում թե Ղարաբաղում և թե Զանգեզուրում ստեղծված դժվարությունները: Սեպտեմբերի 29–ին Գորիսում հրավիրելով զինվորական ներկայացուցիչների ժողով՝ Անդրանիկը լսում է Շուշիից եկած վերոհիշյալ պատվիրակության անդամներին և որոշում արցախահայությանն օգնելու հարցը քննարկել Զանգեզուրի համաժողովրդական համագումարում: Յաջորդ օրը՝ սեպտեմբերի 30–ին, հրավիրված համագումարը որոշում է կատարել Անդրանիկի բոլոր հրամանները և «հուժկու դիմադրություն կազմակերպել ընդհանուր թշնամու դեմ»:[155]

Իրոք, 1918 թ. սեպտեմբեր–հոկտեմբերին վիճակը չափազանց ծանր էր Արցախ–Սյունիքի հայության համար: Երիցս ճիշտ է Յ. Սիմոնյանը, երբ գրել է. «Նույն ոխերիմ թշնամուց եկող մահացու վտանգը և այդ վտանգի դեմ դրսևորած պայքարի կամքը երբեք այսպես ընդհանրական չեն եղել հարևան հայկական երկու գավառների՝ Ղարաբաղի և Զանգեզուրի հայության համար, ինչպես 1918 թվականի սեպտեմբեր–հոկտեմբերին»:[156]

Այդ օրերին զանգեզուրցիները ևս բազմաթիվ նամակներ են ուղարկում Անդրանիկին և խնդրում օգնություն ցույց տալ արցախցիներին, իսկ Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը երկրամասի բնակչությանը կոչ է անում. «Խմբվենք մեր պաշտելի ազգային հերոս Անդրանիկի շուրջ և կրծքներս դեմ տանք թշնամուն»:[157] Յոկտեմբերի 17–ին Գորիսում տեղի ունեցած շրջանի 16 գյուղերի 35 ներկայացուցիչների ժողովը, որին ներկա էին նաև Անդրանիկը, գնդապետ Մելիք–Շահնազարյանը և Գորիսի ազգային խորհրդի անդամները, քննարկեց արցախցիների խնդրանքը՝ նրանց օգնություն ցույց տալու վերաբերյալ: Յամագումարը միաձայն որոշեց «օգնության գնալ Ղարաբաղին»:[158] Յաջորդ օրը, հոկտեմբերի 18–ին, Գորիսի ազգային խորհրդի նախագահ Արշակ Շիրինյանը Արցախի Վարանդայի զորահրամանատար Սոկրատբեկ Շահնազարյանին

հաղորդում է, որ «Զանգեզուրի հայությունը միածայն որոշեց օգնության գալ Ձեզ՝ Յերոսի առաջնորդությամբ... մոտավորապես ութ օրեն կշարժվենք դեպի Ղարաբաղ»:[159]

Անդրանիկին շատ էր մտահոգում Արցախում տիրող ներքին վիճակը, մանավանդ Շուշին թուրքերին հանձնվելուց հետո առաջ եկած անհամաձայնությունները ու անվստահությունը շրջանների և Արցախի ղեկավար ուժերի միջև: Նա առանձնապես վախենում էր ընդհանուր ուժերի պառակտումից: Յենց դա ի նկատի ունենալով՝ Վարանդայի զորահրամանատար Սոկրատբեկ Շահնազարյանին զգուշացնում է. «Աշխատեք միշտ համերաշխությամբ տանել տեղվույտ գործերը: Ծայրահեղության չհասցնեք: Աշխատեցեք ազնվորեն կազմակերպել և լավ հիմքերի վրա դնել տեղվույտ զինվորական ուժերը»:[160] Այնուամենայնիվ, զորավարը ինչ–որ կասկածանք ու երկյուղ ուներ Սոկրատբեկի նկատմամբ: Այդ է վկայում հոկտեմբերի 18–ին նրան ուղարկած հետևյալ նամակը. «Սոկրատբեկ. գրածներդ ինծ կարդացին.[161] չիմնի խաբուիք Ձեզ հղած առաջարկություններուն և Ձեր ունեցածները հանձնեք ու ամբողջ երկիր մը դժբախտացնեք: Տեղվույս ժողովուրդը ինծ խոստացան օգնել իմ երեսը դեպի Ձեզ ուղղելու: Ձեր երկիրը իր պատմութինովը բարձր է եղած, չպետք է արատավորել և մրոտել այդ պատմութինը և զոհ չգնալ մի քանի սինլքորներու տուած խորհուրդներուն: Մյուս անգամ ֆրիլուտ ժողովրդի ներկայացուցիչներն ալ թող ստորագրին»:[162]

Յովակ Ստեփանյանը պատմում է, որ զորավար Անդրանիկը չէր շտապում մտնել Ղարաբաղ, սակայն Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանի և ուրիշների խորհուրդներով նա, ի վերջո, «տեղի տվեց ու սկսեց պատրաստվել արշավանքի»: Նա սկսում է ուժերը կենտրոնացնել Գորիսում՝ «կազմակերպելու համար փառավոր արշավանք դեպի Ղարաբաղի մայրաքաղաքը»: «Բայց և այնպես,– շարունակում է Յ. Ստեփանյանը,– Անդրանիկը տատանվում և ծգձգում էր: Զորամասի բոլոր վաշտապետները գրավոր դիմում արին Անդրանիկին, որ անհապաղ արշավի դեպի Ղարաբաղ, բայց նա շարունակում էր ծգձել»: Յովակ Ստեփանյանը այնուհետև նշում, է որ Անդրանիկը «երկու կետի պատասխան էր ուզում գրավոր կերպով.

1. Վստահ լինել, թե ամբողջ Ղարաբաղի հայ ազգաբնակության ցանկությունն է, որ Անդրանիկը Զանգեզուրից օգնութեան էրթա Ղարաբաղի ժողովրդին.
2. Արդյոք Զանգեզուրի ժողովուրդը ուզո՞ւմ է ամեն միջոցներով, մարդով, ռազմամթերքով ու գրաստներով օգնութեան էրթա Ղարաբաղին»:[163]

Զանգեզուրի ազգային խորհուրդը դրականորեն է տալիս երկրորդ հարցի պատասխանը: Առաջին հարցի պատասխանը ստանալու համար խմբապետ Աղաջանը և նրա տեղակալ Արշակ Բալասանյանը «սուրհանդակների ճանապարհով», այսինքն՝ Խծաբերդի վրայով, մեկնում են Ղարաբաղ և բերում արցախահայության գրավոր խնդրանքը:[164]

Զորավար Անդրանիկը հոկտեմբերի վերջերին և նոյեմբերի սկզբներին թափով նախապատրաստվում էր մտնել Ղարաբաղ: Նրան ակտիվորեն օգնում էին դեռևս հոկտեմբերի 4–ին Երևանից Գորիս եկած հայկական բանակի սպաներ՝



փոխգնդապետներ Ստեփան Սարգսյանը (Ստեսեր), Մելիք Յուսեինովը, Ռուբեն Լարինյանը, հասարակական գործիչ Կոստյա Աթայանը և մեկ ուրիշը, որի ով լինելը մնում է չպարզված:[165] Նրանք Գորիս էին եկել Յայաստանի կառավարության ցուցումով, որպեսզի տեղում ծանոթանան իրավիճակի հետ:

Ընդհանուր հարձակումը պետք է սկսվեր նոյեմբերի 5–ին: Զորավարն այդ մասին տեղյակ է պահում Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանին և Սոկրատբեկին:[166] Այդ օրերին առանձնապես շատ ակտիվ և համարձակ էր գործում մանավանդ Արտեմ Լալայանը: Բայց ահա, այդ վճռական պահին Անդրանիկը ստանում է Սոկրատբեկի նամակը, որում խնդրվում է հարձակումը հետաձգել 10 օրով՝ հավաստիացնելով, որ ինքն առանց որևէ ուժեղ դիմադրության կգրավի Շուշի քաղաքը: Նա, խոստովանելով իր «մեղավորությունը», որ զորավարն ավելի շուտ չի մտել Ղարաբաղ, գրում է. «Ի վերջո, ես եկել եմ այն համոզմունքին, որ քանի որ թուրքերը բանակցության մեջ են մտնում, քանի որ ռաճկաց զորքերը քաշվել են և Աղդամում կենտրոնացրել իրենց ուժերը, քանի որ երկաթե դիսցիպլինայի տակ են իմ զորքերը և ամբողջ Դիզակի և Խաչենի շրջանը, ինչու անել մի այնպիսի քայլ, որը կարող է կոտորածի պատճառ դառնալ»: «Բայց լավ իմացած եղեք,– շարունակում է Սոկրատբեկը,– որ թուրքերի Աղդամ հավաքվելը, ինձ թվում է, նրա համար է, որ Դուք գաք դեպի քաղաքը, նրանք հարձակվեն գյուղերի վրա, գրավեն մեր ուշադրությունը և միգուցե կարողանան այդպիսով թերի թողնել մեր ծրագիրը, քանի որ կարելի է Ձեր անվամբ առանց արյունի մտնել և գրավել քաղաքը այնպիսի մոմենտում, որ թուրքերը չկարողանան կոտորած սարքել հայերի մասում: Ուստի ես Ձեզ խնդրում եմ միայն սպասել 10 օր Գորիսում: Այս 10 օրվա ընթացքում ես բոլոր միջոցներով ձեռք կառնեմ քաղաքականությամբ մտնելու և գրավելու քաղաքը... Ուրեմն, եթե մինչև 10 օրը ինձ հաջողվի գրավել քաղաքը, ես նույնպես դիմում եմ Ձեզ անպատճառ գալ Ղարաբաղ, նստել մեր քաղաքում, կարգի բերել քաղաքը և շրջանը, հետո որտեղ կցանկանաք՝ գնալ»:

Ըստ Եղիշե Իշխանյանի, նա նոյեմբերի 15–ին գնում է Ավետարանոց Սոկրատբեկի մոտ և նրանից իմանում, որ Անդրանիկը կոռնիծորցի սուրհանդակի միջոցով նամակ է ուղարկել իրեն ու հայտնել, որ նոյեմբերի 16–ին հարձակվելու է Խոջի Սամլուի վրա ու շարժվի Շուշի: Նա Սոկրատբեկին առաջարկել է Վարանդայի ուժերը հանել ու գրավել Քիրսի բարձունքները և բացել ճանապարհը: Սոկրատբեկը Եղիշե Իշխանյանին հայտնում է, որ ինքը գրել է քաղաքագլխին և որոշել քաղաքը գրավել ու «ուժերի մեկ մասն ուղարկել Ղարաղշլաղում դիրք բռնելու, և այնտեղից նպաստել Անդրանիկի առաջանալուն»: Յաջորդ օրը, նոյեմբերի 16–ին, Ավետարանոց են գալիս նաև Յայրապետ Մուսայելյանն ու Եսայի Քամալյանը: Յայրապետ Մուսայելյանը տեղյակ է պահում, որ Բաքվից ստացվել է երկրորդ հեռագիրը, որով հայտնվում է, որ կգան երկու զինվորական՝ «կարգադրելու խնդիրները»: Այդ չորսի խորհրդակցության ժամանակ առաջարկվում է խափանել Բաքվից եկող զինվորականների Գորիս գնալը: Քանի որ թուրքերի՝ Շուշի մտնելուց հետո, ըստ էության, դադարել էր ազգային խորհրդի և պետական իշխանությունների գործունեությունը, առաջարկվում է վերականգնել ազգային

խորհուրդը: Փաստորեն, շրջանները կտրվել էին իրարից և գործում էին ինքնուրույն: Որևէ մարմին չկար, որ միավորեր շրջանների ինքնապաշտպանական ուժերը: Վարանդայի ուժերի հրամանատար, «վարժապետ» Սոկրատբեկը չի ընդունում առաջարկված երեք տարբերակներից որևէ մեկը, ըստ որի չպետք էր թույլ տրվեր, որ Բաքվից ուղարկված պատվիրակությունը հասներ Գորիս և հանդիպեր Անդրանիկի հետ: Եղիշե Իշխանյանը գրում է, որ «Սոկրատի ուժերից վեր էր նման ծանր պարտականութիւն ստանձնելը, դէպքերի բերումով, սահմանափակ ուժերի տէր մարդ լինելով, դարձել էր հրամանատար Վարանդայի, այն էլ տագնապալի շրջանում: Պարզ էր, որ խուսափում էր որևէ կտրուկ միջոցի դիմելուց»: Նույնիսկ կարելի էր հարց դնել և անհապաղ հրավիրել Վարանդայի ընդհանուր ժողով ու գլխավոր հրամանատարի պաշտոնից զրկել Սոկրատբեկին, մանավանդ, որ նա պատահական էր հայտնվել այդ պաշտոնում: Մի որոշ ժամանակ Վարանդան մատնված է եղել անիշխանության: Տռնավարզում տարբերայնորեն հրավիրվել էր ժողով, որին ներկա չի եղել երկրամասի քաղաքական և իշխանական գործիչներից ոչ մեկը: Ժողովի մասնակիցները ժողովրդի կողմից չընտրված և լիազորություն չունեցած մարդիկ էին: Վարժապետ Սոկրատը պատահաբար էր գտնվել այդ ժողովում: Միակ գրագետ մարդն էր: Հենց դրա համար էլ նրան ընտրեցին հրամանատար: Նաև ի նկատի ունեին, որ նրա Նիկողայոս (Ասլան) եղբայրը 1905–1906 թթ. հայ–թուրքական ընդհարումների ժամանակ ցուցաբերել էր հերոսություն և զոհվել: Սոկրատբեկին պաշտպանում էր Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, որը նրա ազգականն էր: Քաղաքագլուխը դեմ էր Անդրանիկի՝ Շուշի մտնելուն՝ պատճառաբանելով, թե իբրև քաղաքում ազգամիջյան ընդհարումներ կսկսվեն: Ըստ Եղիշե Իշխանյանի, երեքով չեն կարողանում ազդել և ճնշում գործադրել Սոկրատբեկի վրա: Բացի այդ, Եղիշե Իշխանյանը բավականին ազդեցություն ուներ Ասկերանում և հարևան գյուղերում, մանավանդ որ, Ալեքսան դային և Դալի Մահրասան նրա հավատարիմներն էին և կարող էին Գորիս գնացող սպաների ճանապարհը փակել Աղդամից Ասկերան ընկած հատվածում: Սակայն դա չարվեց: Մի խոսքով՝ ամենահարմար պահը բաց թողեցին ձեռքից, որը կարող էր Արցախի ճակատագրում էական դեր խաղար:[168]

Հակառակ Սոկրատբեկի բռնած դիրքի, Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը շտապում էր իր համաերկրացիների ուրախությունը կիսել սիրելի զորավարի հետ: Նա 1918–ի հոկտեմբերի 7–ին զորավարին հաղորդում է. «Ձեր ուղարկած նամակը մեծ ցնծություն պատճառեց Ղարաբաղի ամբողջ հայությանը, նամանավանդ՝ Դիզակի շրջանում»: Եվ ապա՝ «Ձեր մեզ գրած ազդանշանը և մեր ուժերը մի օրվա ընթացքում կկենտրոնացնենք Խծաբերդի շրջանում», իսկ թե «ինչպես կվերաբերվի Ղարաբաղի հայ գյուղացիությունը Ձեր այս կողմերն անցնելուն, ամբողջ Դիզակի, նույնիսկ ամբողջ Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությունն այն է, որ Դուք անցնեք մեր երկիրը մի քանի կարևոր և անհետաձգելի գործեր առաջ տանելու համար»: Արտեմ Լալայանը մեղադրելով «Շուշիի թուլամորթ հայ կառավարությանը», որի մեղքով «կրակի մատնված Ղարաղշլաղ գյուղը... դարձել է մահմեդականների տեղ», առաջ է քաշում Ղարաղշլաղի ազատագրման



և «Շուշվա իր արժանի պարտքը» տալու վերաբերյալ ծրագիր, որի արդյունքում Ղարաբաղը պետք է հանձնվի զորավարին և «կառավարությունից հաշիվ պահանջել իր անարգ... գործի համար»: Լալայանը նաև խնդիր է դնում Աղդամի մահմեդականներից պահանջել Վարանդայի ավերված յոթ գյուղերի պատճառված վնասը: Դիզակի հրամանատարը, զորավար Անդրանիկին շարադրելով իր պլանը, հայտնում է, որ ինքը բավականին ռազմամթերք ունի, կարող է մինչև անգամ օգնել Վարանդայի գյուղացիներին:[169] Ըստ պլանի, Դիզակի և Վարանդայի զինյալ ուժերը պետք է բռնեին Խծաբերդ–Քիրս գիծը և ապահով դարձնեին Շուշի տանող ճանապարհը, իսկ Խաչենի և Ջրաբերդի զինյալ ուժերը պետք է փակեին Ասկերանի անցուղին և թույլ չտային թուրք–թաթարական նոր զորամասերի ներխուժումը Արցախ:

Անդրանիկին ուղարկված Սոկրատբեկի նամակը, իրոք, արցախահայության համար բախտորոշ դեր խաղաց: Անդրանիկը հավատաց Սոկրատբեկին և 10 օրով հետաձգեց հարձակումը, որն անհեռատեսություն էր: Հովակ Ստեփանյանը գրում է, որ զորամասի ղարաբաղցի սպաները դեմ էին հարձակումը հետաձգելուն և զորավարին խնդրում էին չհավատալ Սոկրատբեկին: Բայց՝ անօգուտ:[170]

Սոկրատբեկի խնդրած 10 օրը լրացավ, սակայն նրանից ոչ մի լուր չկար: Այլևս հապաղելը իմաստ չուներ: Այդ 10 օրվա ընթացքում նա հանգամանորեն ուսումնասիրում է Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած տարածքների քարտեզները և ծանոթանում Զաբուղ և Հագարո գետերի հովիտներում ու լեռնալանջերին ընկած թուրքական և քրդական բնակավայրերի տեղադրությանը:[171]

Անդրանիկի հարվածող զորամասը նոյեմբերի 14–ին (27–ին) դուրս գալով Գորիսից, նույն օրը հասնում է Տեղ և պատրաստ էր հաջորդ օրը սկսել արշավանքը: Ամենադժվարը Զաբուղ և Հագարո գետերի անցումն էր: Հրաչիկ Սիմոնյանը գրել է. «Չորս կողմը ժայռեր են ու անդունդներ, դժվարանց կիրճեր և խիտ անտառներ՝ բլուրների հետզհետե աճող կուտակումներով: Բնակիչները՝ թուրք և քուրդ, կատաղի թշնամանքով էին լցված հայերի հանդեպ: Այդ ձորերի ու անտառների ավազակաբարո բարքերով բնակիչները իսկական պատուհաս էին մերձակա հայկական գյուղերի համար: Զանգեզուրի ու Ղարաբաղի ծայրամասային գյուղերի վրա մշտապես ոտնձգություններ էին կատարում շրջակայքի տասնյակ մուսուլմանական գյուղերի մարդիկ»:[172]

Սիա այդպիսի պայմաններում զորավար Անդրանիկը 1918 թ. նոյեմբերի 15–ին (որոշ աղբյուրներում՝ 16–ին) Տեղից իջնում է դեպի Զաբուղի կիրճը:[173] Անդրանիկի արշավանքի մասին իմանում են բոլոր կողմերում: Հաջի Սամլուի քրդերը Սուլթանբեկ Սուլթանբեկովի գլխավորությամբ և սահմանապահ թուրք–ասկյարները փակում են Զաբուղի կիրճը, դիրքեր բռնում Մարքիզ բարձր լեռան ու հարևան բլուրների վրա:

Զորքը արագ մտնում է Զաբուղի կիրճը, այնտեղ ուր իրենց գերեզման են գտել 1918 թ. փետրվարին ճակատից տուն վերադարձող 217 ղարաբաղցի զինվորները, որոնք փորձել են Գորիսից այդ տարածքով անցնել հայրենի Արցախ: Նույն թվականի օգոստոսին այստեղ զոհվել են նաև 83 արևմտահայ գաղթականներ:[174] Հարվածող զորամասը, ջախջախիչ հարված հասցնելով և կոտրելով

հակառակորդի առաջին դիմադրությունը, ժամը 11-ին Զաբուղ գյուղից բարձրանում են դեպի Ավդալարի (հետագայում՝ Լաչին, իսկ ներկայումս՝ Բերձոր) ստորոտները: Նահանջած և քարաժայռերի վրա ամրացած թշնամին շարունակում էր ուժգին գնդակոծել: Անդրանիկը, ուշադրություն չդարձնելով և հարված հասցնելով հակառակորդին, իր զորամասով ընդհուպ մոտենում է Ավդալարին: Ահեղ մարտեր են տեղի ունենում Ավդալարի կամրջի մոտ: Զորամասն ունեցավ սպանվածներ ու վիրավորներ: Սպանվում են վաշտապետի օգնական Հովհաննես Աղաջանյանը, կապիտան Ստեսերը (Ստեփան Սարգսյան) և ուրիշներ: Այնուամենայնիվ, հայոց քաջերին հաջողվում է անցնել կամուրջը: Արդեն մութը վրա էր հասել, և կրակոցները լռեցին: Մարտերը վերսկսվեցին նոյեմբերի 17-ին (30-ին)՝ քրդական Զեյվա գյուղի մոտերքից մինչև Դիզակի Կոռնիձոր գյուղի դիմացի սարերը: Ամենամեծ խոչընդոտը Մարքից լեռն էր, որի գրավումը միայն կարող էր ապահովել առաջշարժումը դեպի Շուշի: Նոյեմբերի 18-ի առավոտյան Անդրանիկը կարճատև խորհրդակցություն ունեցավ հրամանատարների հետ, որից հետո Հովակ Ստեփանյանին հանձնարարեց իր «պահեստի» ուժերով կենտրոնից անդադար գնդակոծել Քյարավուզի դիրքերը, իսկ խմբապետ Աղաջան Բալասանյանը հանձնարարություն ստացավ իր հեծյալ խմբով անցնել Հագարո գետը և աջ թևով հարվածելով թշնամուն՝ անցնել հակառակորդի թիկունքը: Միևնույն ժամանակ ձախ թևով պետք է ուժեղացվեր ճնշումը հակառակորդի վրա: Խմբապետ Աղաջանին չհաջողվեց կատարել առաջադրանքը, որովհետև գետի մոտ թշնամին շրջապատեց հեծելազորին ու առավ ուժեղ կրակի տակ: Հեծյալ խումբը տալով կորուստներ՝ նահանջեց: Իսկ Մարքիզի ուղղությամբ հայերն ունեցան հաջողություն և հետզհետե բարձրանում էին դեպի լեռան գագաթը: Հովակ Ստեփանյանը հետագայում նկարագրել է, որ Անդրանիկը երկօրյա լարված կռիվներից հետո փորձում է մի փոքր հանգստանալ: Մեկ էլ, կեսօրին ոտքի է ելնում ու պահանջում իր Ասլանին: Արագ նստելով ձին՝ սլանում է դեպի Մարքիզ: Տղաները հազիվ էին հասցնում հեծնել իրենց ձիերը և հետևել զորավարին: «Հրաշալի էր,– շարունակում է Հովակ Ստեփանյանը,– Անդրանիկի վերելքը դեպի Մարքիզ: Թշնամին պարզ նկատեց, թե ով է եկողը և ջղայնացած գնդակների կարկուտ տեղաց նրա վրա, սակայն քաջասիրտ և խիզախ երիվարը իր նույնքան քաջորդի հեծյալով շարունակ դիմում էր դեպի վեր: Տղաներն իրենց դիրքերից գոռացին՝ «Փաշան գալիս է, փաշան գալիս է», և մեկ էլ լսվեցին գոռ ուռաները: Զինվորներն իրենց դիրքերից մեկեն պոկվեցին և փոթորկի պես սլացան դեպի Մարքիզ: Մի քանի րոպեից հետո Մարքիզ լեռան գագաթին ծածանվեց մեր կարմիր դրոշը: Հետո մերոնք գրավեցին համանուն Մարքիզ կամ Մարքյազ գյուղը, այդ շրջանի արյունարբուների որջը»:[175]

Այնուհետև հայկական վաշտերը գրավում են Սուս, Սումուքլու, Նովրուզլու, Թարթարա և Զեյվա գյուղերը, իսկ հեծյալ երկրորդ հարյուրյակը ձախ թևով անցնում է Հագարո գետը և առանց դիմադրության հանդիպելու՝ մտնում Ավդալար: Հիմնական խոչընդոտները հաղթահարվել էին, և ճանապարհը բաց էր դեպի Շուշի: Որոշված էր նոյեմբերի 19-ին գիշերել Թթու ջրում (Լիսագորսկ), իսկ 20-ին՝ մտնել Շուշի: Անդրանիկը Դիզակի և Վարանդայի զինյալ ուժերի հրա-



մանատարներին հայտնում է, որ «Սաղսաղանի և Թթու ջրի ուղղությամբ բարձունքները բռնեն ու սպասեն իրեն»:[176] Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը կատարում է առաջադրանքը, մինչդեռ Վարանդայի զորահրամանատար Սոկրատբեկը փոխանակ ուժերը դուրս բերելու նշված ռազմավարական պլանը, այն տանում է «Քարին տակի ձորը և բանակցությունների մեջ մտնում Շուշիի թաթարների հետ»:[177] «Դիզակում, լրացնում է Եղիշե Իշխանյանը, Խաչենում և Ջրաբերդում հրամանատարներն իրենց տեղում էին, Սոկրատը քաջ գիտեր բոլորին: Զորքը կենտրոնացրեց Քարին տակ գյուղում և բանակցութուններ սկսեց քաղաքագլխի հետ: Վերջինիս համար Սոկրատի միտքը պարզ չէր: Սոկրատը պահանջում էր քաղաքից՝ թաթարներին հասկացնել քաղաքն առանց արյունահեղության հանձնել»:[178]

Այսպիսով՝ Անդրանիկը Շուշիից հեռու էր ընդամենը 40 վերստ: Մնում էր բարձրանալ Թթու ջուրը և խճուղին բռնած հասնել Շուշի: Հակառակորդի ուժերը նահանջել էին, և ամբողջովին բաց էր ճանապարհը, անցնելը՝ դյուրին:[179] Բայց ահա այստեղ զորավարին են հանձնում Բաքվից ուղարկված գեներալ Սարտ Թոմսոնի 501-րդ համարը կրող հեռագիրը՝

«Շուշի, Բաքվից, շտապ

Չորս հասցեով. Շուշիի գավառապետին, մուսուլմանական ջոկատի հրամանատարին, Շուշիում Հայկական ազգային կոմիտեին, Մուսուլմանական ազգային կոմիտեին՝ հանձնելու համար Անդրանիկին և Շուշիում հայկական զորքերի հրամանատարին:

Ինձ հաղորդում են, որ Դուք մտադրվել եք գրոհել Շուշիի վրա: Թուրքական զորքերին դաշնակիցները հրամայել են թողնել Կովկասը: Ադրբեջանական զորքերին դաշնակիցների կողմից հրամայված է հայերի դեմ ռազմական գործողությունների չդիմել: Որպես դաշնակիցների ներկայացուցիչ՝ հրահանգում եմ չգրոհել թուրքական կամ ադրբեջանական զորքերի վրա: Եթե Դուք չգործեք այս կարգադրության համաձայն, Ձեզ նախազգուշացնում եմ, որ անձամբ պատասխանատու կլինեք ձեր գործողություններով արյունահեղության տեղիք տալու համար: Այսօր մի սպա եմ ուղարկում Շուշի հանդիպելու Ձեզ հետ: Անգլիական զորավար»:[180]

Հեռագրի տակ չկա Թոմսոնի ստորագրությունը: Անգլիացի զորավարը, ինչպես երևում է հեռագրի տեքստից, կարծում էր, թե մինչև հեռագիրը կհասներ, Անդրանիկը կլիներ Շուշիում, և ուղարկված սպան նրա հետ կհանդիպեր այնտեղ: Նույն ժամին Շուշի է հաղորդվել նաև Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի խան Խոյսկու հեռագիրը՝ հասցեագրված Շուշիի գավառապետին, քաղաքագլխին, Հայոց ազգային խորհրդին և հայկական զինվորական հրամանատարներին Թոմսոնի հեռագիրը անհապաղ Անդրանիկին հասցնելու հրահանգով. «Առաջարկում եմ ձեզ սույն հեռագիրն անհապաղ հասցնել զորավար Անդրանիկին և Շուշիում հայկական զորքերի հրամանատարին»:[181]

Պարզվում է, որ Անդրանիկի առաջխաղացումը դեպի Շուշի, ոտքի էր հասել Քելբաջարից (Քարավաճառ) մինչև Արաքս ընկած տարածքի վրա ապրող մուսուլմաններին, որոնց ղեկավարները իրար ետևից հեռագրեր էին ուղարկել

Բաքու և ադաղակող լուրեր հաղորդել Ադրբեջանի իշխանություններին: Մուսավաթական կառավարությունը, պաշտոնապես դիմելով Բաքվում հաստատված Կովկասում դաշնակից զորքերի հրամանատար զորավար Մարկ Թոմսոնին և նրան ուղարկելով Ջեբրայիլի գավառի ներկայացուցիչների կողմից Ադրբեջանի Հանրապետության մինիստր–նախագահ Ֆաթալի Խան Խոյսկուն ուղարկած հեռագրերը, պահանջում է ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ: Այդ հեռագրերում բոլոր փաստերը չափազանցված էին և մեծամասամբ կեղծված: Թուրքերը հաղորդում են, թե Զանգեզուրում հայերը ավերել են թաթարական ավելի քան 50 գյուղ, և որ Անդրանիկը 500 զինվորի գլուխ անցած արդեն երրորդ օրն է, ինչ պաշարել է Զաբուղը՝ նպատակ ունենալով անցնել Շուշի: Նրանք աղերսում են անգլիական և ամերիկյան կառավարությունների ուշադրությունը դարձնել Զանգեզուրի վրա:[182] Բաքվից ուղարկված այդ հեռագրերը ստանալով՝ Շուշիի հայկական կառավարության նախկին անդամները և Վարանդայի հրամանատար Սոկրատբեկը, որոնք ոչ մի գործնական օգնություն ցույց չէին տվել Անդրանիկի արշավանքին, գոնե կարող էին Թոմսոնի այդ չարաբաստիկ հեռագիրը ուշացնել, մինչև Անդրանիկը կմտներ Շուշի: Սակայն «այդ բանը չարվեց, ընդհակառակը, նրանք հերթական երկչոտությամբ որքան հնարավոր է արագ, առանց վայրկյան կորցնելու, հեռագրերն ուղարկեցին Անդրանիկին»:[183] Անդրանիկը, չնայած տարակուսում էր, այնուամենայնիվ, որոշում է պատասխանել այդ հեռագրերին:

«Բաքու, Ադրբեջանի մինիստր–նախագահ Խոյսկուն, չորս պատճենը՝ Շուշի՝ մուսուլմանական զորքերի Շուշիի հրամանատարին, Շուշիի Մուսուլմանական ազգային կոմիտեին, Շուշիի Հայկական ազգային կոմիտեին և Ղարաբաղի հայկական բեմի Առաջնորդին.

Բաքվի հրամանատարի՝ անգլիական զորավարի դ 501 հրահանգը ստացել եմ այսօր: Այդ կարգադրությունն իմ մեջ որոշ կասկած հարուցեց դրա իսկության վերաբերյալ:

Նախ՝ նրանում չի հիշատակվում անգլիական զորավարի, նույն ինքը՝ Բաքվում դաշնակիցների ներկայացուցչի ազգանունը, երկրորդ՝ եթե այն կրել է պաշտոնական բնույթ, թվում է, ինձ պետք է հանձնվեր Շուշի քաղաքի հայ և մուսուլմանական բնակչության ընտրովի ներկայացուցիչների կամ որևէ պաշտոնական անձի կողմից, բայց, համենայն դեպս, ոչ հայի՝ Հարար գյուղի կույր ծերունու:

Ինչ վերաբերում է Զանգեզուրից դեպի Շուշի իմ շարժմանը, դրա համար ես ունեմ բազմաթիվ ծանրակշիռ պատճառներ: Ահա մեկ տարի է, ինչ թաթարները կտրել են ամեն հաղորդակցություն Զանգեզուրի և Ղարաբաղի հայերի միջև:

Զաբուղ և Հագարո գետերի խորխորատներում ընկած են մի քանի հարյուրի հասնող դիակներն այն զինվորների, որոնք ռազմաճակատից Զանգեզուրի վրայով վերադառնում էին Ղարաբաղ: Հուլիսին և օգոստոսին բարբարոսաբար սպանվել են հազարավոր թուրքահայ գաղթականներ, որոնց ցանկությունն է եղել բնակություն հաստատել Ղարաբաղում: Կալադարասի հայկական գյուղի լիակատար ոչնչացումը, թաթարների կողմից Զանգեզուրի հայերի վրա



կատարվող հարձակումները, կողոպուտներն ու ասպատակությունները, իրենց երկրամաս վերադառնալու հնարավորությունից զրկված ղարաբաղցիների կուտակումները Զանգեզուրում, վերջապես, մուսուլմանների թշնամական վերաբերմունքը Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ– այս բոլորն ինձ պարտադրում են իրար հետ կապել այդ երկու երկրամասերը»:[184]

Բաքվից ուղարկված հեռագրերն Անդրանիկին էին հասցվել Հարար գյուղացի մի ծերունու միջոցով: Նույնով ուղարկվում է նաև Անդրանիկի պատասխանը: Անդրանիկը չէր հրաժարվել Շուշի արշավելու իր որոշումից, մանավանդ որ գավառի զինվորներն ու սպաները նրան թախանձագին խնդրում էին կանգ չառնել, մտնել Շուշի և դաշնակիցներին կանգնեցնել կատարված փաստի առաջ: Սակայն հեռագրում բերված սպառնալիքը Անդրանիկին ստիպում է ավելի զգույշ լինել և նա որոշեց սպասել դաշնակից պետությունների ներկայացուցիչների գալուն:

Հաջորդ օրը՝ նոյեմբերի 20–ին (դեկտեմբերի 2–ին), երբ զորքը կազմ ու պատրաստ սպասում էր զորավարի հրամանին, հանկարծ լուր են բերում, թե խճուղու վրայով դեպի Ավդալար է գալիս մի ավտոմոբիլ՝ սպիտակ դրոշակ պարզած: Մեքենայի մեջ էր «հաշտարար պատվիրակությունը»՝ Թոմսոնի ուղարկած անգլիացի կապիտան Սքուերը և ֆրանսիացի կապիտան Գասֆիլդը:[185] Նրանց Շուշիից ուղեկցում էին թուրք Աբուլֆազլբեկ Հասանբեկովը և բժիշկ Արտաշես Գյանջեցյանը: Այս վերջինը իր հետ տանում է Ապառաժի կոմիտեի գաղտնի նամակը Անդրանիկին:[186] Այդ նամակում հաղորդվում էր, թե դաշնակիցները մտադիր են Արցախն ու Զանգեզուրը հանձնել Ադրբեջանին: Ապա զորավարին խնդրում են կանգ չառնել, «մտնել Շուշի և կատարված փաստի առաջ կանգնեցնել դաշնակիցներին ու մուսավաթներին»:[187]

Բաքվից եկած պատվիրակությունը Անդրանիկին է հանձնում զորավար Թոմսոնի ստորագրությամբ հետևյալ նամակը. «Անդրանիկին կամ Շուշի քաղաքի շրջակայքում գտնվող մյուս հայկական հրամանատարներին:

Ես տեղեկություններ ունեմ, որ Դուք մտադիր եք հարձակում գործել Շուշի քաղաքի վրա, որտեղից այժմ էվակուացված է այնտեղ գտնվող թուրքական զորքը դաշնակիցների կարգադրության համաձայն:

Ադրբեջանական զորքին դաշնակիցների կողմից հրամայված է թշնամական գործողություններ չձեռնարկել հայերի դեմ և այժմ ես, որպես դաշնակիցների ներկայացուցիչ, Ձեզ առաջարկում եմ ձեռնպահ մնալ որևէ թշնամական գործողություններից՝ ուղղված թուրքական և ադրբեջանական զորքերի դեմ:

Ես Ձեզ նախազգուշացնում եմ, որ եթե Դուք չկատարեք ինձնից ստացած այս հրահանգը, անձամբ պատասխանատու կլինեք Ձեր գործողությունների հետևանքով առաջացած արյունահեղության համար:

Ես Ձեզ այդ կապակցությամբ երեկ ուղարկել եմ հեռագիր: Դուք չեք կարող չիմանալ, որ իմ հրահանգների կատարումից Ձեր ամեն մի խուսափումը անպայմանն լրջորեն կազդի հայերի հարցի վրա, երբ այն քննարկվի Խաղաղության Վեհաժողովում:

Ես Ձեզ սույն նամակն ուղարկում եմ դաշնակիցների ներկայցուցիչներից

կազմված պատվիրակության միջոցով և խնդրում եմ նրանց ստորագրություն տալ նամակի ստացման մասին:

Բաքվում դաշնակիցների զորքերի հրամանատար՝ գեներալ–մայոր Թոմսոն:

ք. Բաքու»:[188]

Սպառնալից և անտակտ տոնով գրված նամակից երևում է, որ Անգլիան պաշտպանում էր Ադրբեջանի շահերը: Ապառաժի կենտրոնական կոմիտեի վերոհիշյալ նամակում խնդրվում է չխաբվել և կատարել արցախցիների խնդրանքը:[189] Հովակ Ստեփանյանը գրել է, թե Արշակ Շիրինյանը, ինքը, բժիշկ Ռուբեն Տեր–Ստեփանյանը և Եղիշե Քաջունին շատ են աշխատել համոզել Անդրանիկին, որ «նա պատմական սխալ չանե, ետ չդառնա, այլ մտնի Շուշի, մանավանդ, որ դիմադրողները թուլացել էին: Այսպիսով՝ Անդրանիկին ամենքին կատարված փաստի առաջ կդներ և մի անգամ ընդմիշտ կլուծեր դրական մտքով նախ Շուշվա, ապա ընդհանուր Ղարաբաղի խոշոր հարցը»: Բայց, շարունակում է Հովակ Ստեփանյանը, Անդրանիկը «չլսեց մեզ, մնաց անդրդվելի, որովհետև պատմական սխալի երկընտրանք ստեղծեց իր համար: Հեռագիր–նամակի մեջ ասված էր, որ եթե դուք չլսեք և առաջ շարժվեք, ապա ձեր այդ քայլը լրջորեն կազդի «հայկական հարցի վրա, երբ այն քննարկվի Խաղաղության Վեհաժողովում»:

Որքան ջանում են Անդրանիկին համոզել, որ այդ տողերը նախապես խմբագրվել են մուսավաթական շրջանում, օգուտ չի տալիս: Եվ նա «կողի ընկավ ու կանգնեց»: Պարզապես, շարունակում է Հովակը, ***«Ղարաբա՞ղ, թե՞ հայկական հարց***,– այսպիսի կոպիտ երկընտրանքի առջև կանգնեց հերոսը և կատարեց ***օրհասական սխալը,*** որ հետագայում ունեցավ իր այնքան մեծ ու անուղղելի բացասական հետևանքները...» (ընդգծումները մերն են– Հ.Ա.):[190]

Զորավար Անդրանիկը միամտորեն հավատում է անգլիական երեսպաշտ հրամանատարության կեղծ խոստումներին՝ մերժելով Ղարաբաղի հայության խնդրանքը: Մինչդեռ, նա այդպես չպետք էր վարվեր, մանավանդ նման մի վճռորոշ պահի: Դրանով իսկ հայոց ազգային հերոսը Արցախ–Ղարաբաղի հարցում կատարեց անուղղելի ու ճակատագրական սխալ: Դեռ ավելին, նա Զանգեզուրի և Արցախի հայությունից պահանջեց կատարել Բաքվից ստացված վերոհիշյալ նամակ–հեռագրի պահանջները: Այլապես չէր ծնվի 1918 թ. նոյեմբերի 19–ին ստորագրած 640–րդ համարը կրող հրամանը, որով նա Արցախի, Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Ջիվանշիրի զինվորական հրամանատարներից, կոմիսարներից և հայ ազգաբնակչությունից պահանջում է «դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները թաթարների և տաճիկների դեմ», որովհետև «բոլոր հարցերը պետք է որոշվեն Խաղաղության Վեհաժողովում»:[191] Այստեղ մեջ բերենք նաև Հրաչիկ Սիմոնյանի եզրակացությունը. «Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ, ենթարկվելով անգլիացիների ճնշմանը՝ Զորավարը գործել է անուղղելի սխալ: Այդ սխալը հետագայում շատ թանկ նստեց Ղարաբաղի հայության վրա: Եթե Անդրանիկը չլսեր «դաշնակիցներին», այլ Զաբուղի ձորերը գրավելուց հետո առաջ գնար ու մտներ Շուշի, ապա Լեռնային Ղարաբաղը Զանգեզուրի հետ կցված կլիներ Հայաս-



տանին: Անդրանիկի՝ իրեն ոչ հատուկ այդ ոչ վճռական վարմունքը ժամանակին այդպիսի գնահատական է ստացել նույնիսկ բոլշևիկյան պատմա–քաղաքական գրականության մեջ»:[192]

Անդրանիկը հավատացած էր, թե հայ ժողովրդի, այդ թվում և Արցախի հարցը կլուծվի Փարիզի խաղաղության վեհաժողովում: Ելնելով դրանից՝ նա վորոշում է վերադառնալ Գորիս, չնայած համոզված էր, որ իր այդ քայլը սրտի ցավով կընդունեն արցախցիները, որոնք այնքան սպասում էին նրան: Կես ճանապարհից Գորիս վերադառնալը, իրոք, ինչպես ցույց են տվել հետագա իրադարձությունները, բացասական ազդեցություն ունեցավ արցախահայության ազատագրական պայքարի վրա: Ավելի ակտիվացան մուսավաթականներն ու Ադրբեջանում ապաստան գտած տաճիկ սպաները: Ղարաբաղում հայկական գյուղերի վրա նրանց հարձակումները, ավերումներն ու կոտորածները սովորական երևույթ դարձան: Անդրանիկի զորամասում գտնվող արցախցի զինվորները վճռում են մտնել հայրենի երկրամաս և օգնության հասնել հայրենակիցներին: Շուշիի գնդի և Անդրանիկի զորամասի արցախցի 450 զինվոր դեկտեմբերի 11–ին հրաժեշտ են տալիս զորավարին: Նրանցից 200 հոգի Շուշի են մտնում դեկտեմբերի 13–ին, իսկ վարանդացի և դիզակցի զինվորները Քարինտակի ճանապարհով գնում են դեպի իրենց գյուղերը:[193]

Գեներալ Թոմսոնի սուրհանդակները հետ են դառնում նոյեմբերի 20–ին, իսկ հաջորդ օրն էլ Անդրանիկն է իր բանակով հետդարձի ճանապարհ բռնում և Գորիս հասնում նոյեմբերի 22–ին: Նա նոյեմբերի 23–ին հրապարակում է հատուկ թերթիկ, որում Զանգեզուրի հայ և մուսուլմանական բնակչությանը բացատրում է, որ «...Շուշի իմ գնալը կանգնեցվել է Բաքվում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի հրամանով: Այդ հրամանը հենվել է Ադրբեջանի կառավարության նախագահ պ-ն Խան Խոյսկու պնդման վրա»: Այնուհետև բացատրում է, թե կանգնեցնելով դեպի Շուշի իր երթը, դադարեցրել է իր «ամեն տեսակի ռազմական գործողությունները»: Զորավարը կոչ է անում երկրամասում պահպանել անդորր:[194]

Այդ օրերին թուրքից մինչև մուսավաթը ճակատ են կազմում զորավար Անդրանիկի դեմ և ամեն միջոց գործադրում նրան վարկաբեկելու և Զանգեզուրից հեռացնելու համար: Վրաստանում Հայաստանի դիվանագիտության ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը հատուկ հանձնարարությամբ Ալեքսանդրապոլ Խալիլ փաշայի մոտ է ուղարկում Ս. Մելիքյանին, որի հետ զրույցի ժամանակ թուրք փաշան խիստ դժգոհում է Անդրանիկից՝ հայտարարելով, թե հայերի դժբախտության պատճառը Անդրանիկն է: Խալիլը պնդում է, թե Հայաստանի կառավարությունը պետք է էքսպեդիցիոն ուժեր ուղարկի Զանգեզուր, Անդրանիկին ստիպի հեռանալ այնտեղից և, իբրև, միայն այդ դեպքում Հայաստանի և Ադրբեջանի միջև կարող են հաստատվել բարիդրացիական հարաբերություններ:[195] Այդ նույն թուրք փաշան, գալով Երևան, հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունուն առաջարկում է համատեղ (հայկական, թուրքական և ադրբեջանական) գործողություններ սկսել Անդրանիկի դեմ: Դիվանագիտության համաշխարհային պատմության մեջ, մտորում է ժամանա-

կակիցը, աննախադեպ, իր ցինիզմով և թեթևամտությամբ չգերազանցված մի օրինակ էր դա, որին ընդունակ էին միայն թուրք փաշաները: Քաջազնունին հասկացնում է Խալիլ փաշային, որ Անդրանիկը մեծ հեղինակություն է, սեր ու հարգանք է վայելում Սյունիքի և Արցախի հայ լեռնականների մեջ, և նրա դեմ հարձակման դեպքում այդ անառիկ շրջանների զինված ուժերը մի մարդու պես կկանգնեն Անդրանիկի թիկունքում:[196]

Չնայած զորավարը չմտավ Արցախ, բայց և այնպես կապը չէր խզում արցախցիների հետ: Վերջիններս զորավարին կանոնավորապես իրազեկում էին Արցախ աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին: Արցախ–Ղարաբաղ ոտք դրած անգլիացիները միայն խաբում էին և ամեն ինչ կեղծում: Արցախցիներից ոմանք սկզբում հավատում էին, թե անգլիացիները սատար կկանգնեն իրենց արդար պահանջին և կնպաստեն երկրամասի միավորմանը մայր հայրենիքին:[197] Սակայն շուտով այդ պատրանքը հօդս ցնդեց. նրանք համոզվեցին, որ անգլիական հրամանատարությունը բացահայտորեն պաշտպանում է մուսավաթականներին և օժանդակում Արցախը Ադրբեջանին բռնակցելուն: Եվ ամեն անգամ թուրք–մուսավաթականների բարբարոսությունների դեմ արցախցիների բողոքները մնում էին անհետևանք: Անգլիական հրամանատարությունն այդ ամենի հանդեպ բացարձակորեն աչք էր փակում: «Քանի անգամ դիմել ենք Շուշիի անգլիական միսիային, սակայն մինչ օրս ոչ մի կարգադրություն չկա»,– կարդում ենք 1918 թ. դեկտեմբերի 29–ին Դիզակի Խծաբերդ գյուղի բնակիչների Անդրանիկին գրած նամակում:[198]

Անդրանիկը խիստ զայրացավ, երբ իմացավ, որ գեներալ Թոմսոնի երաշխավորությամբ «հայության արյունարբու թշնամի, արմատում սուլթանիզմի ամենակույր» գործակալ,[199] Արցախի դեմ ուղղված ավազակային բոլոր հարձակումների կազմակերպիչ[200] Խոսրովբեկ Սուլթանովը նշանակվել էր Շուշիի, Զանգեզուրի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի գավառների ժամանակավոր գեներալ–նահանգապետ: Զորավարը դժգոհ էր արցախահայության նկատմամբ անգլիացիների քաղաքականությունից: Նա Բաքու դաշնակից պետությունների զորամասերի գլխավոր հրամանատարությանն ուղարկած բողոքագրում հիշեցնում է, որ ինքը, լսելով Թոմսոնին, չմտավ Շուշի, վերադարձավ Զանգեզուր և միջոցառումներ ձեռնարկեց վերականգնելու խաղաղությունը ևամենաբարի հարաբերությունները բոլոր ազգությունների միջև, որոնք բնակվում են Զանգեզուրում: Սակայն, շարունակում է նա, ըստ մեզ հասած տեղեկությունների, մուսուլմանական զորամասերը անարգել տեղաշարժվում և կենտրոնանում են Արցախում ու Զանգեզուրում: Զորավարը խնդրում է հանուն ժողովուրդների բարօրության, միջոցառումներ ձեռնարկել և վերականգնել մինչև 1918 թ. նոյեմբերի կեսերը եղած դրությունը. այն է՝ կարգադրել զորամասերը հանել Խանքենդիից և բոլոր այն կետերից, որոնք վտանգ են սպառնում բնակչությանը, զսպել կրքերը և հայերին չստիպել դիմելու հակառակ գործողությունների: Վերջում զորավարն իր պարտքն է համարում «հայտնել, որ Ղարաբաղի հայությունը և Զանգեզուրի ընդարձակ գավառը Կափանի, Սիսիանի և Մեղրիի մահալներով ավելի քան 400 հազար հայ



բնակչությամբ, չեն կարող ոչ մի դեպքում ընդունել Ադրբեջանի իրավունքը իրենց տարածքի նկատմամբ:[201]

Արցախահայությունն իր կապերը երբեք էլ չի թուլացնում զորավար Անդրանիկի հետ: Այդ են վկայում Արցախից Անդրանիկին ուղարկված բազմաթիվ նամակներն ու խնդրագրերը: Արցախահայությունը դեռևս չէր կորցրել այն հույսը, որ վաղ թե ուշ զորավարը կմտնի Արցախ: Նրանք միշտ էլ թախանձագին խնդրում են զորավարին չհեռանալ Զանգեզուրից, եթե, գոնե, Արցախ չէր մտնում:

Անդրանիկը 1918 թ. նոյեմբերին անգլիական հրամանատարության ներկայացուցիչներին հայտարարել էր, թե ինքը 1919 թ. գարնանը կհեռանա Զանգեզուրից: Զորավարի այդ վճռից խիստ անհանգիստ էին արցախցիները, մանավանդ իր բանակում ծառայած արցախցի սպաները, որոնք վերադառնալով հայրենիք այստեղ կազմել էին սպայակույտ: Շտաբի անդամներից Արտաշես Վարդապետյանը, Հովակ Ստեփանյանը, Նիկոլայ Իսախանյանը և Արտաշես Տեր-Միքայելյանը 1919 թ. փետրվարի 2–ին Անդրանիկին գրած նամակում հաղորդում են, որ զորավարի «ներկայությունը Զանգեզուրում նպաստել է Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյության ապահովությանը և շարունակում է մեծապես նպաստել»: Այդ նամակից նաև պարզ է դառնում, որ սպայակույտը և Արցախի Հայոց ազգային խորհուրդը պահանջել են գեներալ Թոմսոնից, որ նա թույլատրի Անդրանիկի մուտքը Արցախ: Արցախցի սպաները խնդրում են զորավարին, որ նա հայտնի, թե ուր և երբ պիտի շարժվի նրա բանակը, ինչ և ինչքան զենք կարող է տրամադրել Արցախի ինքնապաշտպանության համար:[202] Այդ նույն օրը, փետրվարի 2–ին, Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը Անդրանիկին գրած նամակում հաղորդում է, թե արցախցիները իրենց հույսերը դեռևս չեն կորցնում, նրանք հավատում են, որ զորավարը մի օր «պիտի գա Ղարաբաղ», որպեսզի բոլորը գործեն նրա հրամաններով:[203]

Եղիշե Իշխանյանը փետրվարի 3–ին զորավարին ուղարկած նոր նամակում տեղյակ է պահում, որ «Ադրբեջանը ռազմամթերք ու զինվորներ է տեղափոխում Զաբուղի կողմը... Կարյագինոյի կողմից էլ թուրքերը ռազմամթերք են տեղափոխում դեպի Զանգիլան: Այսօր Շուշի է եկել Ադրբեջանի զինվորական նախարար գեներալ Մեհմանդարովը (Սամեդբեկ Սադըխբեկ օղլը Մեհմանդարով. գեներալ–լեյտենանտ– Հ.Ա.), նաև իբրև թե Ղարաբաղի զինվորական նահանգապետ բժիշկ Սուլթանովը: Կարգադրություն են արել զորանոցներ պատրաստել Շուշիում: Դրանից երևում է, որ Ադրբեջանը լրջորեն սկսել է զինված ուժերը մտցնել Ղարաբաղի սիրտը, որով և գրաված կլինի ամբողջ Ղարաբաղը»:[204] Ազգային խորհրդի նախագահը, զգալով, որ շատ շուտով Արցախը պիտի դառնա կռվի թատերաբեմ, հարցնում է. «Բայց մենք ո՞ւմ վրա դնենք մեր հույսը, եթե ոչ Ձերդ Գերազանցության, որին և խնդրում ենք ձեռք առնել ամեն միջոց մեր ժողովրդին ազատելու այս ճգնաժամային նեղ դրությունից... Մեր փրկությունը միայն Ձեզնից է կախված. պաշար չունենք, դրամ չունենք– ահա մեր վիճակը»: Իշխանյանը այնուհետև հաղորդում է, որ զորավարի Զանգեզուրից հեռանալու լուրը արցախցիների վրա «շշմեցուցիչ ազդեցություն ունեցավ»: «Մինչև այժմ,– շարունակում է նա,– երբ Ղարաբաղը գրավված չէ Ադրբեջանի կողմից, այդ միայն

չնորհիվ այն հանգամանքի, որ Դուք գտնվում եք Զանգեզուրում, իսկ Ձեր ներկայությունը միշտ էլ սպառնալիք է եղել ադրբեջանյան խանությանը»: Իսկ վերջում՝ «Ձերդ Գերազանցություն, Ձեր հեռանալը Զանգեզուրից, աղետաբեր ու կործանաբեր հետևանք է ունենալու համայն Ղարաբաղի համար...

Եթե ինչ–ինչ պատճառներից դրդված է, որ հեռանում եք Զանգեզուրից, և եթե ոչ մի հնարավորություն չկա այդտեղ ծմեռելու, ապա ազատասեր Ղարաբաղն ամենայն սիրով ու հոգով պատրաստ է իր ծոցում տեղ տալու անզուգական Սերոբ փաշայի ամենաարժանավոր ու հարազատ հաջորդին՝ Ձերդ Գերազանցությանը»:[205]

Կարող է տպավորություն ստեղծվել, թե զորավարը անտարբեր էր արցախցիների այս բոլոր խնդրանքների նկատմամբ: Բայց բնավ այդպես չէր: Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին, սպայակույտին, ՀՅԴ Շուշիի շրջանային կոմիտեին և Սոկրատբեկին 1919 թ. փետրվարի 8–ին ուղարկած նամակում զորավարը գրում է, թե վերջին չորս տարվա փորձն իրեն համոզել է, որ պետք է վերջ տրվի անհամաձայնություններին և պետք է գործել համերաշխ: Նա խորհուրդ է տալիս լինել միասնական, գործել մտածված և հավատով: Այդ օրերին Արցախում նախապատրաստվում էին Ղարաբաղի հայության չորրորդ համագումարին: Անդրանիկը ցանկություն է հայտնում, որ համագումարում ընտրվելիք ազգային խորհուրդը «իրական արտահայտիչը լինի Ղարաբաղի ազգաբնակչության բոլոր դասերուն և հաջողի մտցնել կարգ ու կանոն և իշխանություն»: Նա հավատացած էր, որ եթե ռուսական կառավարությանը 30 հազար զինվոր տված Ղարաբաղն այսօր ունենա 10 հազար զինվոր, ապա նա կարող է կազմակերպել իր ինքնապաշտպանությունը: «Ձեզնե շատերի,– նամակն ավարտում է զորավարը,– ծանոթ են իմ դրությանը, չեք կրնար սպասել, որ այս միջավայրի մեջ հրաշքներ կարելի լինի կատարել: Իմ որոշումս անփոփոխ է. մի քանի օրից ետ գնում եմ Սիսիան և ավելի առաջ:

Կը մաղթիմ Ձեզ կատարյալ համերաշխություն և հաջողություն»: Ապա խոստանում է Ղարաբաղ ուղարկել երկու գնդացիր և 50 հազար փամփուշտ:[206]

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը և Ադրբեջանում գտնվող թուրք սպաները վճռել էին Անդրանիկին ծուղակի մեջ գցել: Նրանք անգլիական միսիայի միջոցով զորավարին առաջարկում են Զանգեզուրից հեռանալ Շուշի–Եվլախ–Թիֆլիս ուղիով: Մուսավաթականները տենդագին նախապատրաստվում էին շրջապատել Անդրանիկի ջոկատը, զինաթափել այն և բոլորին ոչնչացնել: Այդ հրեշավոր պլանը, անշուշտ, արժանացել էր անգլիական հրամանատարության հավանությանը: Արցախցիները ազգային հերոսին հիշեցնում են, որ անգլիացիներին հատուկ է «ուժեղ անհատներին, որոնք անհրաժեշտության դեպքում լուրջ արգելք կարող են լինել իրենց ծրագրած քաղաքականության, աստիճանաբար չեզոքացնել, միջից վերացնել», հետևապես նրանք ցանկանում են այդպես վարվել նաև ձեզ հետ, բայց քանի որ «Դուք Զանգեզուրում Ձեր ներկայությամբ թեկուզ հեռվից սանձահարում, զսպում եք Ադրբեջանի ախորժակը», ուստի դա չի կարող տանել ոչ Ադրբեջանը և ոչ էլ անգլիական հրամանատարությունը:[207]



Հովակ Ստեփանյանը 1919 թ. փետրվարի 15–ին Անդրանիկին ուղարկած նամակում հաղորդում է այն ասկյարների քանակը, որոնք պիտի Անդրանիկի ջոկատի դեմ գործեին Բարդայի մոտերքում, եթե նա խաբվեր և գնար դեպի Եվլախ:[208]

ՀՅԴ Շուշիի շրջանային կոմիտեի կողմից փետրվարի 19–ին Անդրանիկին ուղարկված 4790–րդ համարն ունեցող գրության մեջ, հուրախություն զորավարի, նշվում է, որ Ղարաբաղի հայության չորրորդ «Համագումարը միաձայն վճռել է ոչ մի գնով չընդունել Ադրբեջանի իշխանությունը»:[209] Անդրանիկին շատ մոտիկ բժիշկ Հայկ Շահնազարյանը սիրելի զորավարին հաղորդում է, որ Շուշի են ժամանել մոտ 1200 զինվոր, իբրև Անդրանիկին հանդիսավոր պայմաններում ճանապարհելու համար: «Նշաններից երևում է,– զգուշացնում է բժիշկը,– որ Ձեզ ուզում են շրջապատել և վնաս տալ: Շատ զգույշ եղեք»:[210] Հաջորդ նամակում, որը գրվել է մարտի 4–ին, Հայկ Շահնազարյանը զորավարին հայտնում է, թե Ղարաբաղում բոլորը նույն բանն են հարցնում. մի՞թե այսպիսի ժամանակաշրջանում Անդրանիկը Զանգեզուրն ու Ղարաբաղը կթողնի միայնակ և կհեռանա: Նա վախ է հայտնում, որ զորավարի հեռանալուց հետո Ղարաբաղում և Զանգեզուրում կսկսվի անիշխանություն: Նա կրկին Անդրանիկին խնդրում է Շուշիով չգնալ, որովհետև «Շատ լուրեր կան, որ Ձեզ անպատճառ վնասելու են ճանապարհին: Այն ժամանակ, իմացած եղեք, մենք կորած ենք, և Ձեր կորուստը հավասար է ամբողջ հայության կորստին»:[211] Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի մարտի 1–ին Անդրանիկին ուղարկած թիվ 260 գրության մեջ ասված է, որ թուրքերը «որոշել առ րոպե սպասում են, թե երբ Ձեզ զինաթափ արած իրենց միջով կտանեն» և խնդրում են՝ «ի սեր հայ տառապած ու նահատակված ժողովրդի, չհամաձայնեք զինաթափվել, ապա թե ոչ, ամբողջ Զանգեզուրի և բուն Ղարաբաղի հայությանը սպասում է անխուսափելի կորուստ»:[212]

Թուրք–մուսավաթականներն ամեն կերպ ձգտում էին գեներալ Թոմսոնի օգնությամբ որքան հնարավոր է Անդրանիկին շուտ հեռացնել Սյունիքից և հայկական Արցախն ու Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին: Անդրանիկը կտրուկ մերժում է անգլիական հրամանատարության հանդուգն պահանջը՝ Զանգեզուրը հանձնել մուսավաթական Ադրբեջանին: Գորիս ժամանելով՝ Թոմսոնի ներկայացուցիչներ մայոր Գիբոնը և կապիտան Սիրայտը, Բաքվի մուսավաթական կառավարությունից Աբդուլլա բեկ Հասանբեկովը և Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչ Գ. Չիլինգարյանը, Անդրանիկի հետ համաձայնության են գալիս, որ վերջինս Զանգեզուրում կմնա մինչև 1919 թ. մայիսը: Սակայն 1918 թ. դեկտեմբերի 23–ին Անդրանիկի կողմից հրավիրված բոլոր հրամանատարների ընդհանուր ժողովը նպատակահարմար գտավ Սյունիքից հեռանալ ավելի շուտ, որովհետև ոչ սննդամթերք կար, ոչ էլ ձմեռն անցկացնելու համար անհրաժեշտ շենքեր: Բացի այդ, զինվորները ցանկանում էին վերադառնալ իրենց տները և ժամանակին կատարել գարնանային գյուղատնտեսական աշխատանքները: 1919 թ. մարտի 4–ին մայոր Գիբոնը կրկին ժամանելով Գորիս՝ զորավար Անդրանիկին առաջարկում է Զանգեզուրից մեկնել՝ Շուշի–Աղդամ–Եվլախ–Գանձակ–Թիֆլիս ճանապարհով՝ վստահեցնելով, որ իբր ճանապարհներն ապահովված են, և զորամասին կուղեկցի 250 զինվորից կազմված անգլիական մի զորախումբ: Ղարա-

բաղից Անդրանիկին կրկին ու կրկին խնդրում են նախ՝ չհեռանալ Զանգեզուրից, իսկ եթե դա հնարավոր չէ, և զորավարի վճիռը վերջնական է, ապա, չհամաձայնվել գնալ անգլիացիների առաջարկած երթուղիով:[213] Նրանք տեղյակ էին, որ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը նախապատրաստվել էր Շամխորում նոր ջարդ կազմակերպել այս անգամ Անդրանիկի զորամասի հետ: Զորավարը մերժում է անգլիացիների առաջարկը:

1919 թ. ապրիլի 1-ին զորավար Անդրանիկը հեռացավ Զանգեզուրից: Իրոք, ինչպես հետո կգրի հայ պատմաբանը, առանց Անդրանիկի կարծես Զանգեզուրն ու Արցախը որբացան:[214] Անդրանիկի Զանգեզուրից հեռանալը ծանր կացության մեջ դրեց Արցախ-Զանգեզուրի հայությանը: Այդ մասին հստակորեն ասված է Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվիրակության (Հակոբ Մանանդյան, Բախշի Իշխանյան և Հայկ Խաչատրյան) կողմից Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին 1919 թ. հուլիսի 2-ին ուղարկած ընդարձակ նամակում: «Քանի որ,– կարդում ենք այդ շատ կարևոր փաստաթղթում,– Անդրանիկն իր զորամասով կազմում էր մի հակակշիռ ուժ և սպառնալիք՝ ծառացած Ղարաբաղի մյուս մասերը մուտք գործած Ադրբեջանի իշխանության դեմ, մի կողմից՝ Ղարաբաղի հայությունն էր լավատես ու վստահ իր դիմադրության վրա, ունենալով զորեղ ու ապահով թիկունք, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարությունն էր համեմատաբար մեղմ ու զգույշ իր քաղաքականության մեջ»: Այդ ամենից հետո, շարունակում են նամակի հեղինակները, «Անդրանիկի հեռանալը, կամ ուրիշ խոսքով՝ Ղարաբաղի մի մասի ռազմաճակատի հայկական անկազմակերպ ուժերից մերկացումը ոչ միայն թուլացնում է մյուս մասերի դիմադրական թափը ու անապահով վիճակ ստեղծում նրանց համար, այլև խզում է այդ մասերի կապն ու հարաբերությունները Զանգեզուրի և նրա վրայով՝ նաև Հայաստանի Հանրապետության հետ»:[215]

Զորավար Անդրանիկը, անգամ գտնվելով հայրենիքից դուրս, դարձյալ չէր դադարում մտածել Արցախի և նրա քաջարի ժողովրդի մասին: Նա շատ ծանր տարավ թուրք-մուսավաթականների կողմից 1919 թ. հունիսի սկզբին Արցախում կազմակերպված նոր սպանդի լուրը: Երբ Պողոս-Նուբար փաշայի ուղեկցությամբ 1919 թ. հունիսի 15-ին Ֆրանսիայի նախագահ Պուանկարեն ընդունեց զորավարին, վերջինս իր վրդովմունքն է հայտնում Արցախում տեղի ունեցող իրադարձությունների առթիվ՝ նշելով. չէ՞ որ հայերն իրենց հույսը դրել էին դաշնակիցների վրա:[216]

Զորավար Անդրանիկն արցախահայության համար եղել և մնում է որպես պայքարի, հույսի, հավատի և հաղթանակի լուսն աստղ:





# ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ

## *1. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԴՐԲԵՋԱՆԱՄԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ: ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ*

Անդրանիկի՝ կես ճանապարհից Գորիս վերադառնալուց հետո ավելի ակտիվացան թուրք-մուսավաթականները: Նրանց ղեկավարությամբ մուսուլման ավազակախմբերը կատաղի հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի վրա, կողոպտում հայերի ունեցվածքը, ավերում գյուղերը և կոտորում բնակչությանը: Նրանք ավերածություններ գործեցին Դիզակի Արփա-Գյադուկ, Թեղ-Խարար, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Խծաբերդ, Դուդուկչի, Խանձաձոր, Դոլանլար, Հին Թաղեր, Վարանդայի Ճարտար, Մաշադիշեն, Սոս և այլ գյուղերում:[1] Դիզակի Խծաբերդ գյուղից 1918 թ. դեկտեմբերի 27-ին Անդրանիկին գրել են. «...հանգիստ նստել ենք մեր տներում, բայց մեր հարևանները թույլ չեն տալիս հանգիստ մեր գործին կենալ: Թուրքերի այդ հարձակումները պատրաստողները Մուսուլմանլարը և Ալիանլուն են»:[2]

Արցախ-Ղարաբաղի ծայրամասային անպաշտպան գյուղերի բնակիչները ստիպված էին թողնել իրենց օջախները և գաղթել հարևան գյուղեր կամ էլ Շուշի: Ըստ տվյալների՝ այդ օրերին Շուշի քաղաքում կուտակվել էր ավելի քան 50 հազար մարդ: Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը, քաղաքական ուժերը ջանքեր էին գործադրում՝ ստեղծված դժվարությունները հաղթահարելու և բնակչությանը վերահաս սովից փրկելու համար: Ժամանակակիցը գրել է, որ «Ղարաբաղում, հատկապես Շուշիում, սովը սարսափելի աստիճանների է հասել: Բնակիչները ծախում են ամեն ինչ, անգամ հագուստներն ու անկողինները: Դրան չկա հաց ճարել...»:[3]

Երկրամասում մահացությունները հետզհետե մեծ թիվ էին կազմում: Հիմնականում մահանում էին սովից, վարակիչ հիվանդություններից և ցրտից: Խիստ նվազել էր գյուղերի, մանավանդ մուսուլմանական, օգնությունը քաղաքին: Մահմեդականներին այդ էին պարտադրում մուսավաթականներն ու թուրք սպաները:

Սովը և կյանքի ծանր պայմանները արցախահայության դռանը չոքեցին մանավանդ 1918 թ. ձմռանը և շարունակվեցին մինչև 1919 թ. ամառը: Արամ Միքայելյանը 1918 թ. նոյեմբերի 10–ին Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն ուղարկած նամակում, նկարագրելով Ղարաբաղում ստեղծված աղետալի վիճակը, խնդրում է միջնորդել՝ դիմելով ՀՀ կառավարությանը՝ 10–11 ամիս շարունակ շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը նյութական և բարոյական օգնություն ցույց տալու համար: Արամ Միքայելյանը օրինակ է բերում, որ միայն Ծամձոր գյուղում սովից մահացել է 70 մարդ: «Սովից բացի,– նամակն ավարտում է Միքայելյանը,– ոչինչ չի կարող կոտրել Ղարաբաղի կայունությունն ու դիմացկունությունը»: Ապա նա կոչ է անում թույլ չտալ, որ «կործանվի ազատասեր Ղարաբաղը»:[4] Իսկ Ադրբեջանում ՀՀ ներկայացուցչությունից 1918 թ. նոյեմբերի 23–ին Երևան ուղարկված հեռագրում ահազանգ է հնչեցվում Ղարաբաղում բռնկված սովի առթիվ և պահանջվում է «բնակչությունը փրկելու... համար... անհապաղ ցույց տալ ֆինանսական օգնություն»:[5]

Արցախ–Ղարաբաղի վիճակը ծանր էր ոչ միայն տնտեսական տեսակետից: Արցախահայ մշակութային կյանքը նույնպես դյուրին չէր: Արցախի թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Տեր–Գրիգորյանի 1918 թ. դեկտեմբերին ՀՀ կառավարությանն ուղարկած նամակում կարդում ենք. «Պատերազմի վերջին երկու տարում Արցախում դրությունն այնքան ծանր էր՝ գլխավորապես տնտեսական կողմից, որ մեր կրթական հիմնարկները, գլխավորապես թեմական դպրոցը, վտանգի ենթարկվեցին: Այդ կրթարանները պահելու համար ժողովուրդն ուժ չուներ, իսպառ ցամաքեցին սովորական եկամտի աղբյուրները... Ազգային այս հիմնարկները պահպանելու և մատաղ սերնդին կորստից փրկելու համար մնում է մի ելք, հույսի մի ճանապարհ... Եվ այս հույսը մեր փայփայած Հայաստանի Հանրապետությունն է...»: Նա խնդրում է, եթե հնարավոր է, օժանդակություն ցույց տալ, չնայած լավ գիտեր, որ «Հայաստանի Հանրապետությունը, որպես մի նորածին կառավարություն», ուներ «ավելի մեծ հոգսեր ու կարիքներ»: Այնուամենայնիվ, նա հավատացած էր, որ Հայաստանի Հանրապետությունը «չի խնայի ըստ հնարավորության օգնության ձեռք մեկնելու» Արցախին: Վերջում Վահան եպիսկոպոսը ողջունում է Հայաստանի Հանրապետությանը և փափագում «նրա հավիտենականությունը»:[6]

Եթե այս ամենին գումարենք նաև երկրամասում առաջացած քաղաքական ծանր վիճակը, ապա պատկերը կլինի ամբողջական: Ադրբեջանի կառավարող ուժերը անընդհատ թմբկահարում և Հայաստանի կառավարությունից պահանջում էին «հավատարիմ մնալ Բաթումի պայմանագրին» և «Ղարաբաղը ճանաչել որպես Ադրբեջանի անբաժանելի մաս»: Ադրբեջանը պահանջում էր ոչ միայն Ղարաբաղը, այլև Զանգեզուրը: Մուսավաթական Ադրբեջանի այդ ծավալապաշտական պահանջը ամեն ձևով պաշտպանում էր Թուրքիան: Արխիվային մի փաստաթղթից իմանում ենք, որ թուրք պարագլուխները Հայաստանի կառավարությանը ստիպում էին կատարել Բաթումի պայմանագիրը: Պարզապես այդ չարաղետ պայմանագիրը ոսկորի պես մնացել էր ՀՀ ղեկավարների կոկորդում: Երբեք էլ պատահական չէր, որ թուրք Աբդուլ–Քերիմ փա-



շան, 1918 թ. հոկտեմբերի 8–ին Թիֆլիսում հանդիպելով ՀՀ ներկայացուցչին, գիտակցաբար հիշեցնում է, թե Բաթումի բանակցությունների օրերին Թուրքիան համաձայնվել է ճանաչել Հայաստանի անկախությունը միայն այն պայմանով, որ Հայաստանը «չբարձրացնի ղարաբաղյան հարցը»:[7]

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով տնտեսական և քաղաքական ծանր վիճակում, չկարողացավ օգնել սովյալ Արցախին և ոչ էլ աջակից լինել նրա քաղաքական խնդրի լուծմանը: Իսկ դա, կամա թե ակամա, արցախահայության մեջ առաջ էր բերում դժգոհություն: Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարի 10–ին Անդրանիկին գրել է. «Արարատյան Հանրապետությունը հանցավոր լռություն է պահպանում: Այն կառավարությունը, որը մի բիզ հողի համար պատերազմ հայտարարեց վրացիներին, որոնք, համենայն դեպս, Թուրքիայից վատ չեն, այնինչ անտարբերություն է ցուցաբերում և հանդուրժում ադրբեջանական ոտնձգությունները: Երեք հարյուր հազարի հասնող Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը մատնված է բախտի քմահաճույքին: Ով է այս ժողովրդի տերը, ոչ ոքի հայտնի չէ»:[8] Այդ նույն ազգային խորհուրդը մարտի 14–ին զորավարին ուղարկած մեկ այլ նամակում նրան խնդրում է «Երևան հասնելուց Արարատյան կառավարության հատուկ ուշադրությունը» հրավիրել «Ղարաբաղի ազատասեր ժողովրդի վրա»:[9] Արցախի Ջիվանշիրի հայ բնակչության կողմից Հայաստանի կառավարությանն ուղարկված վերոհիշյալ համախոսականում Հայաստանի կառավարությանը խնդրվում է Փարիզի վեհաժողովին մասնակցող «Մեծ տերությունների ներկայացուցիչներին հանձնել Արարատյան Հանրապետության հետ միավորվելու Ջիվանշիրի գավառի հայ բնակչության աղերսանքը, այսուհետև մեզ չթողնել ադրբեջանական հանրապետության լծի տակ, ինչը որ կլինի մեր կամքին հակառակ, և մենք երբեք կենդանի չենք հանձնվի հայ ազգի բնաջնջման այդ մասնագետներին:

Նույնպիսի դրություն է նաև Ելիզավետպոլի մյուս գավառներում, որոնց հայ բնակչության ցանկություններն ու ձգտումները նույնն են, ինչ որ մերը»:[10]

Արցախահայությունը 1918 թ. ամռանը և աշնանը բազմիցս հարց էր դրել Հայաստանի կառավարության առաջ՝ ուղարկել իր պաշտոնական ներկայացուցիչը և հայտարարել Ղարաբաղը Հայաստանին միավորված: Սակայն, ելնելով ստեղծված արտաքին անկայուն վիճակից, մանավանդ, որ տարածքային հարցերի շուրջ հարաբերությունները խիստ բարդացել էին Վրաստանի և Թուրքիայի հետ, և ելնելով Ադրբեջանի հետ հարաբերություններն ավելի բարդացնելու վտանգից, Հայաստանի կառավարությունը դա չարեց և զգուշություն էր ցուցաբերում: Նաև պետք է ասել, որ թուրք զավթիչները Ղարաբաղից հեռանալուց հետո ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, որ առանց որևէ դիմադրության Հայաստանի կառավարությունը կարող էր իր ուժերը մտցնել այնտեղ: Դրան, անշուշտ, կօժանդակեր զորավար Անդրանիկը, որը, ինչպես գիտենք, գտնվում էր Զանգեզուրում: Ահա թե այդ բացառիկ հնարավորությունը ինչպես է մեկնաբանում ժամանակակիցը. Հայաստանի կառավարությունը, առանձնապես Հ. Քաջազնունու դահլիճը «անընդունակ եղավ ըմբռնելու րոպեի լրջութ-

յունը և օր առաջ միջոցների դիմելու»: Ապա՝ «Տաճիկների հեռանալուց հետո ստեղծվել էր մի դրություն, երբ շուտ հասնողը տեր էր»: Այդ ժամանակ «Երևանի քաղաքական շրջանակները համառորեն պնդում էին կառավարության առաջ, թե պետք է շուտափույթ օգնության գնալ Ղարաբաղ–Զանգեզուրին և, նահանգապետներ նշանակելով այդ խոշոր հայաբնակ շրջանների համար, կատարված փաստի առաջ դնել անգլիացիներին», որովհետև «Այդ ժամանակ, նոյեմբերի 17–ից հետո, Ադրբեջանի կառավարությունը թերևս շշմած դրության մեջ էր. տաճիկները հեռացել էին՝ տեղի տալով անգլիացիներին»: Ադրբեջանի կառավարության «քաղաքականությունը Ղարաբաղում հանդիպել էր հայ ժողովրդի համառ դիմադրությանը, իսկ անգլիական հրամանատարությունը դեռ նոր էր ծանոթանում իրերի դրությանը»: Այդ ժամանակ «Հայաստանի լիազոր–ներկայացուցիչը՝ հենված Ղարաբաղի հայության կազմակերպած ուժի վրա, կարող էր մի անգամ ընդմիշտ միացած համարել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին և այդպիսով վերջ տալ երկու տարվա արյունալից ընդհարումներին ու սրված հարաբերություններին Ադրբեջանի հետ»: Բայց, ցավոք, «Քաջազնունին չէր լսում և չէր ուզում ներկայացուցիչ ուղարկել Ղարաբաղ»: Ի վերջո, «Զուր էին Ղարաբաղի ազգային խորհրդի աղերսանքները. կառավարությունը հաստատ մնաց իր որոշման վրա և ոչ զիջեց, ոչ պաշտպանեց Ղարաբաղի գյուղացիության արդար պահանջները» և եթե «Ղարաբաղ ներկայացուցիչ ուղարկվեր», ապա «մեկ տարի հետո տեղի չէր ունենար արյունոտ անցքերը և Շուշին չէր ավերվեր»:[11]

Նման մեկնաբանությունը, թերևս, տրամաբանական է և առարկության կարիք չունի: Պարզապես, Հայաստանի կառավարությունը զուրկ էր Ղարաբաղ–Զանգեզուրի նկատմամբ որևէ վճռական քայլ կատարելու համարձակությունից: Տեսեք, Բաքվում Հայաստանի զինվորական ներկայացուցիչ զորավար Հակոբ Բագրատունին 1918 թ. դեկտեմբերի 25–ին զորավար Անդրանիկին գրել է, թե ինքը Երևանի կառավարությանը տեղեկացնելով, որ թուրքերը ձգտում են «տարածել իրենց իշխանությունը Ղարաբաղի զուտ հայկական բոլոր մասերի վրա», հարց է դրել Հայաստանից «օգնություն հասցնեն հայկական վարչություն մտցնելու գործում»: Նա փակագծերի մեջ բացատրում է, որ «այդ վարչությունը չպետք է լինի Արարատյան Հանրապետության կողմից գոնե պաշտոնապես» և որ *«Դաշնակիցների և թուրքերի համար վարչությունը պետք է լինի միակ տեղական ինքնավարություն տեղական ժողովրդի կողմից,* մինչև Ղարաբաղի վիճակը որոշվի Փարիզի կոնֆերանսում»: Զորավար Բագրատունին գտնում էր, որ չպետք է թույլ տալ, որ «թուրքերը իրենց վարչությունով մուտք գործեն Ղարաբաղի հայաբնակ մասերը»:[12]

Որ Արցախ–Ղարաբաղի ճակատագիրը չէր անհանգստացնում Արարատյան Հանրապետության ղեկավարությանը, պարզորոշ երևում է նաև մեկ այլ փաստաթղթից: 1919 թ. հունվարի 28–ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի՝ Անդրանիկին ուղարկած նամակում կարդում ենք. «Վերջին երկու տարիների ընթացքում Ղարաբաղը միանգամայն մոռացության է տրված եղել մեր կենտրոնների կողմից: Թեև իր ժամանակին քանիցս կենտրոնների ուշադրությունն ենք հրավիրել, այնուամենայնիվ, այստեղից ուղղած գրությունները և հատուկ ներկայացուցչների միջոցով արված դիմումները մնացել են «ձայն բարբառոյ յանապատի»: Ղարաբաղն իր աշխարհագրական դիրքով ընկած լինելով Հայաստանի մի կողմում, «երբ իր հույսը կտրեց կենտրոններից, որոշեց մեն–մենակ ինքնապաշտպանվել թե դրսի զորեղ թշնամիներից և թե ներսում բուն դրած հայ կյանքի հիմքերը փորփրող անիշխանական տարրերից»:[13]

Հանուն ճշմարտության ասենք, որ, այնուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը ստիպված էր կատարել որոշ երկրչոտ քայլեր: Այդ առթիվ Հովակ Ստեփանյանը վկայում է, 1918 թ. հոկտեմբերին Երևանից Բասարգեչար է ուղարկվում մի զորամաս զորավար Բաղդասարյանի (ծննդով Արցախի Ավետարանոց գյուղից էր) հրամանատարությամբ: Այն Զոդի լեռնանցքով[14] պետք է անցներ Ջրաբերդի շրջան և փակեր Բաքվից ու Գանձակից եկող ադրբեջանական զինյալ ուժերի ճանապարհը: Սակայն Ղարանլուղ չհասած՝ Բաղդասարյանի զորամասը Արցախ մտնելու փոխարեն «շուտով հրաման ստացավ արշավելու դեպի Վրաստան», որովհետև սկսվել էր հայ–վրացական պատերազմը: Հովակ Ստեփանյանը բերում է նաև այլ օրինակներ: 1918թ. նոյեմբերի 11–ին Հայաստանի կառավարության կողմից որոշ հանձնարարություններով Արցախ են ուղարկվում խմբապետ Աղաջանը և սպա Արշակ Բալասանյանը: Ինչպես գիտենք, Անդրանիկի՝ Արցախ արշավելուց առաջ Երևանից գալիս են վերոհիշյալ սպաները Ստեսերի գլխավորությամբ, որոնց «Հայաստանի կառավարությունը ուղարկել էր... իբրև ներկայացուցիչներ, դրամական օժանդակությամբ հանդերձ: Դա առաջին երկչոտ քայլն էր Հայաստանի կողմից՝ առնելու հովանավորության տակ իր լքած հողամասերը, որոնք ամիսներ շարունակ բախեցին նրա դռները»:[15]

Ժամանակակիցներից նույն կարծիքին էին նաև Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը, Աբրահամ Կիսիբեկյանը և ուրիշ քաղաքական ու պետական գործիչներ: Այո, ամենահարմար պահը ձեռքից բաց թողնվեց: Այնքան ուշացվեց, որ գեներալ Թոմսոնի երաշխավորությամբ Ադրբեջանի կառավարության կողմից 1919 թ. հունվարի 15–ին ստեղծվեց Ղարաբաղ–Զանգեզուրի նահանգապետություն ու նահանգապետ նշանակվեց Խոսրովբեկ Սուլթանովը՝ վերոհիշյալ Հաջի Սամլուի «տիրակալ» Սուլթանբեկ Սուլթանովի եղբայրը: Դրանից հետո միայն Հայաստանի կառավարությունը ուշքի եկավ և 1919 թ. հունվարի 21–ին քննարկելով Զանգեզուրում և Ղարաբաղում ժամանակավոր վարչություն ստեղծելու հարցը, որոշեց.

1. Զանգեզուրի և Արցախի հայաբնակ շրջանները, կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, կառավարվում են հանրապետության կենտրոնական կառավարության կողմից հաստատված մարմինների միջոցով և Հայաստանում գործող օրենքների հիման վրա:

2. Հաղորդակցության դժվարությունների պատճառով ժամանակավորապես երկրի ընդհանուր վարչությունը հանձնվում է գոյություն ունեցող «Զանգեզուրի հայկական ազգային խորհրդին», որը կոչվելու է «Զանգեզուր–Արցախի շրջանային խորհուրդ»:

3. Խորհուրդը երկիրը ժամանակավորապես կառավարում է Հայաստանի Հանրապետության անունից և նրանից ստացված լիազորություններով:

4. Խորհրդի ներկա մասը պիտի լրացվի Արցախի հայկական մասերի ներկայացուցիչներով, ինչպես նաև շրջանում ապրող թուրք ազգաբնակչության ներկայացուցիչներով, համապատասխան իրենց թվին...

11. Հանրապետության կառավարությունը Գորիս է ուղարկում մի պետական կոմիսար՝ իբրև իր ներկայացուցիչը Զանգեզուր–Արցախի հայկական շրջանների համար:[16]

Այդ որոշումն ընդունվելուց մի քանի օր անց, հունվարի 30–ին, դ 267–րդ գրությամբ հանրապետության կառավարությունը Զանգեզուրի ազգային խորհրդին հայտնում է, որ Զանգեզուր–Արցախի հայկական շրջանի պետական կոմիսար է նշանակված շտաբս–կապիտան Արսեն Շահմազյանը:[17] Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը կառավարության անունից հունվարի 26–ին բողոքի վերջնագիր է ուղարկում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանը՝ Ղարաբաղ–Զանգեզուրի գեներալ–նահանգապետություն հիմնադրելու մասին, որը բնորոշվում է որպես «Հայաստանի տարածքի նկատմամբ ոտնձգություն»:[18] Ադրբեջանի կառավարության անունից արտաքին գործերի նախարար Ադիլխան Զիաթխանովը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հունվարի 31–ին ուղարկված պատասխանում իր հերթին Հայաստանի կառավարության այդ քայլը որակավորում է որպես ադրբեջանական իշխանության դեմ ոտնձգություն և «Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու փորձ»:[19]

Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված այդ քայլերը արցախահայության համար խիստ ուշացած էր, որի պատճառով էլ Արսեն Շահմազյանին չհաջողվեց կոմիսարի իր պարտականությունները տարածել նաև Արցախում:

* * *

Ինչպես նշվել է, երբ թուրքերը մտան Շուշի, հայտարարեցին Ղարաբաղի կառավարությունը լուծարված: Հենց այդ օրերին կառավարության անդամների և սպայակույտի մեծ մասը Շուշիից տեղափոխվել էին Տռնավարզ գյուղը:[20] Երկրամասի գավառների իշխանությունը կենտրոնացել էր զինվորական և տեղական մարմինների ձեռքին: Թուրքերը հեռանալուց հետո, չնայած Շուշի են վերադառնում կառավարության անդամներն ու սպայակույտի անդամները, այնուամենայնիվ, Արցախում տիրում էր անիշխանություն: Այդ հանգամանքը խիստ անհանգստացնում էր երկրամասի բնակչությանը և քաղաքական կուսակցություններին: Արցախ–Ղարաբաղը այդ անորոշությունից դուրս բերելու միակ ելքը երկրամասի բոլոր ուժերի միավորումն էր, ժամանակավոր իշխանության ստեղծումը և Ղարաբաղի հայության նոր համագումարի հրավիրումը: Այդ նախաձեռնությունը իր վրա է վերցնում Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը, որի մասին հետագայում ժամանակակիցներից Արտաշես Բաբալյանը



գրել է, թե «բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից» կազմված ազգային խորհուրդը «կարողացավ երկար ժամանակ Ղարաբաղը պահել անկախ վիճակում» և ձգտում էր «Ղարաբաղը միացնել Հայաստանի Հանրապետությանը», և որ նա իր համագումարների միջոցով թույլ չտվեց «ոչ տաճիկներին և ոչ Ադրբեջանին՝ տիրանալու Լեռնային Ղարաբաղին»:[21] Այդ քաղաքականության հստակությունը մեկ անգամ ևս հաստատելու համար Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի հրավիրումը դարձավ հրատապ խնդիր, որի նախապատրաստմանը ձեռնամուխ եղան ազգային խորհուրդն ու երկրամասի առաջադեմ ուժերը: Եղիշե Իշխանյանը բացատրում է, որ այդ օրերին, ասել է թե՝ 1918 թ. նոյեմբեր–դեկտեմբերին, հնարավոր չէր հրավիրել համագումար: Նպատակահարմար էր ստեղծել ժամանակավոր ազգային խորհուրդ: Եվ ահա, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի զորահրամանատարների կողմից նշանակված ներկայացուցիչները, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը և Միջկուսակցական բյուրոյի նախագահ Հայրապետ Մուսայելյանը,[22] դեկտեմբերի 15–ին հավաքվելով Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր–Գրիգորյանի մոտ, որոշում են ստեղծել ժամանակավոր ազգային խորհուրդ, որը «նպաստում էր հոսանքների միջև եղած համերաշխությանը»:[23] Ժամանակակիցների վկայությամբ ստեղծված ժամանակավոր խորհրդում գոյություն ունեին հակասություններ, որոնք խոչընդոտում էին խորհրդի արդյունավետ գործունեությանը:[24] ՀՅԴ կոմիտեն գտնում էր, որ ստեղծված անհամաձայնությանը վերջ տալու միակ ելքը Ղարաբաղի հայության նոր համագումարի հրավիրումն է, որպեսզի «նախ՝ մի հեղինակավոր մարմին ընտրվի և երկրորդ՝ անգլիական միսիայի ներկայությամբ, բովանդակ Ղարաբաղի հայ ժողովրդի կամքը և ցանկությունը հանդես բերի իր քաղաքական դատի պաշտպանության համար»:[25] Դաշնակցության այդ կարծիքը կիսում էր քաղաքական ուժերի մեծամասնությունը:

Ղարաբաղում ստեղծված այդ նորաստեղծ մարմինն անվանվում էր Ղարաբաղի Հայոց ժամանակավոր ազգային խորհուրդ, որը գոյություն ունեցավ մինչև 1919թ. փետրվարի 10–ը: Խորհրդի անդամներն աշխատում էին հասարակական հիմունքներով: Այն կապեր ուներ Անդրանիկի, Հայաստանի կառավարության, Բաքվի, Թիֆլիսի և Զանգեզուրի Հայոց ազգային խորհուրդների հետ: Այսպիսով, երկու և կես ամիս ընդհատումից հետո Արցախ–Ղարաբաղում ստեղծվեց մի մարմին, որն իր վրա վերցրեց երկրամասը ղեկավարելու ֆունկցիաները: Սակայն անգլո–ադրբեջանական գաղութարարները ամեն կերպ խոչընդոտում էին դրա գործունեությունը:

Ինչպես տեսանք, դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Վ. Թոմսոնի ջանքերով էր, որ զորավար Անդրանիկը չմտավ Արցախ և կես ճանապարհից վերադարձավ Գորիս: Իրար հետևից Արցախ ժամանեցին Թոմսոնի ուղարկած պատվիրակները: Արցախցիները լոյալ ընդունեցին անգլիացիների մուտքը երկրամաս: Նրանք հույս ունեին, թե անգլիացիների գալով կվերանա թուրքական վտանգը, Արցախ–Ղարաբաղը կազատվի կղզիացումից, կբացվեն ու անվտանգ կդառնան ճանապարհները, կսկսվեն բարիդրացիա-

կան հարաբերությունները հարևան մուսուլմանների հետ, երկրամասում կհաստատվի կայուն խաղաղություն, ամբողջովին կվերականգնվի պետական ու հասարակական մարմինների գործունեությունը, կթեթևանան պարենային ծանր պայմանները, հոգ կտարվի գաղթականների մասին և, վերջապես, որն ամենակարևորն էր, դրականորեն կլուծվի Արցախը Հայաստանի հետ միավորվելու հարցը, ինչպես որոշել էին Ղարաբաղի հայության նախորդ համագումարները:

1918թ. դեկտեմբերի կեսին Բաքվից Շուշի եկավ բրիտանական բանակի մայոր, Թոմսոնի պատվիրակ Գիբոնը:[28] Երկու օր հետո նրա ստորագրությամբ Շուշիի պատերին երևաց հետևյալ հայտարարությունը.

«Շուշվա գավառի ազգաբնակչությանը

Քանի որ Շուշի քաղաք անգլիական միսիայի գալու մասին գոյություն ունի սխալ պատկերացում, ես՝ միսիայի ղեկավարս, հայտարարում եմ հետևյալը.

Սույն միսիան ուղարկված է Բաքվում գտնվող դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թոմսոնի կողմից՝ օրենքն ու կարգը Շուշիի շրջանում վերականգնելու համար, մինչև որ այդ շրջանում յուրաքանչյուրը հնարավորություն կունենա գարնանը վերադառնալու իր տունը և իր խաղաղ աշխատանքին: Քաղաքական ու սահմանային հարցերը միսիային չեն վերաբերում, քանի որ դրանք կվճռվեն Հաշտարար կոնֆերանսում:

Որպեսզի օրենքն ու կարգն այս գավառում պահպանվի, մահմեդական և քրիստոնյա բոլոր բնակիչներին ես կոչ եմ անում՝ հնազանդվել այն բոլոր հրամաններին, որոնք ես կարձակեմ:

Այն փաստը, որ անգլիական կառավարությունն ունի միլիոնավոր քրիստոնյա ու մահմեդական հպատակներ, որոնք ինքնակամ մտնելով նրա զորքերի շարքերը, կողք–կողքի կռվում են այդ պետության համար, գրավական է հանդիսանում, որ մենք, գործելով անաչառ, կանենք այն, ինչ օգտավետ ենք գտնում երկու կողմերի համար:

Անգլիական միսիայի ղեկավար՝ մայոր **Գիբոն**

18 դեկտեմբերի 1918թ., Շուշի»:[27]

Ինչպես երևում է այս փաստաթղթից, Գիբոնը փորձում էր արցախցիներին համոզել, թե իբրև ինքը Ղարաբաղ է եկել «օրենքն ու կարգը... վերականգնելու» համար, իսկ բնակչության հետ հանդիպումների ժամանակ շեշտում էր, թե իր հիմնական նպատակն է հոգ տանել գաղթականների մասին, իսկ երկրամասի ղեկավարման հարցով կարող են զբաղվել զորահրամանատարներն ու մյուս պաշտոնյաները: Նա տեղեկանալով Արցախի նախկին իշխանությունների գործունեությանը՝ ցանկություն է հայտնում Արցախ–Ղարաբաղը կառավարել նույնանման ձևերով: Մայոր Գիբոնը միևնույն ժամանակ գաղտնի տեղեկություններ էր հավաքում Արցախի զինյալ ուժերի մասին: Նա հանդիպում ունենալով Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր–Գրիգորյանի հետ, որի հետ խոսում էր հայերեն, հայտնում է, թե ինքը եկել է Զանգեզուր–Ղարաբաղի գաղթականների վիճակին ծանոթանալու և անհրաժեշտ օգնություն ցույց տալու: Նա հույս է հայտնում, որ ինքը աջակցություն կստանա արցախցիներից: Թեմի



առաջնորդը նրան պատասխանում է, որ Արցախ աշխարհում «ամէն տեղ գործի գլուխ կանգնած են ժողովրդից ընտրուած և իրենց պարտականութեանը գիտակ մարդիկ, որոնք անհրաժեշտ աջակցութիւնը միշտ ցոյց կը տան»:[28]

Անգլիացիները փորձում էին Ղարաբաղի հայերին համոզել, թե իբր Փարիզի վեհաժողովը կլուծի նաև իրենց հարցերը, իսկ մինչ այդ պետք է ենթարկվել Ադրբեջանի կառավարությանը: Մայոր Գիբոնը Ղարաբաղի հայերի ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ անընդհատ կրկնում էր, թե Ադրբեջանի իշխանությունը ժամանակավորապես տարածվելու է Շուշի քաղաքի և Ասկերանի շրջանի վրա, իսկ Ղարաբաղի մյուս շրջանների ապագան որոշելու է Փարիզի վեհաժողովը: Հենց այդ օրերին, 1918 թ. դեկտեմբերի վերջերին, Թոմսոնը Բաքվում հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ, որով «հանրապետությանը տեղյակ է պահում, որ Մեծ Բրիտանիան Ադրբեջանի տարածքը համարում է միասնական ամբողջություն և այդ տարածքի վրա ճանաչում է միայն մի իշխանություն՝ ադրբեջանականը»: Ըստ որում, այդ միասնական տարածքում նա ընդգրկում էր նաև Արցախ–Զանգեզուրը:[29]

Մայոր Գիբոնը Շուշի գալուց մի քանի օր անց ազգությամբ ազերի Աբուլֆազբեկ Հասանբեկովի հետ մեկնում են Գորիս: Գիբոնի բացակայության ժամանակ Շուշի գալով՝ Ղարաբաղի շրջանների զորահրամանատարների ներկայացուցիչները, անգլիական միսիային տեղեկություններ են հաղորդում իրենց շրջանների բնակչության տնտեսական դրության, զինվորական գործի և Հայաստանին միավորվելու վճռականության մասին: Նրանք միևնույն ժամանակ փորձում էին իմանալ, թե Ղարաբաղի հարցում Անգլիան ինչ քաղաքականություն է վարում: Բնական է, միսիան խուսափում է պատասխանից և առաջարկում է սպասել մինչև Գիբոնի վերադարձը: Հայ զորահրամանատարները հասկանում են, որ անգլիացիները չեն ցանկանում լսել Ղարաբաղը Հայաստանին միանալու մասին: Եվ ահա, Դիզակի և Վարանդայի զորահրամանատարների ներկայացուցիչներ Ասլան Շահնազարյանը և Արտաշես Տեր–Միքայելյանը դեկտեմբերի 16–ին Անդրանիկին գրած նամակում տագնապ հայտնելով անգլիացիների քաղաքականության առթիվ, գրում են, թե իրենք անգլիական միսիային են ներկայացել «ոչ իբրև այս կամ այն կառավարության ներկայացուցիչ, այլ իբրև Ղարաբաղի հայության ներկայացուցիչ», և որ արցախցիների նպատակն է «ստեղծել անկախ Ղարաբաղի նահանգ և առանձին կառավարություն»:[30]

Դիզակի և Վարանդայի ներկայացուցիչները տեղերը վերադառնալուց առաջ դեկտեմբերի 25–ին Անդրանիկին ուղարկում են երկրորդ նամակը, որտեղ կրկին տագնապ են հայտնում անգլիացիների քաղաքականության նկատմամբ, նշելով, որ «անգլիացուց միսիան բացարձակ չի հայտնում իր միտքը ինձ և մենք տարտամ վիճակում ենք»: Եվ ապա՝ «Քանիցս բացատրել ենք, որ Ղարաբաղի զինվորական շրջանները չեն ճանաչել Ադրբեջանի կառավարությունը» և երբեք չենք հաշտվի Շուշին և Ասկերանը Ադրբեջանին հանձնելու մտքի հետ:[31]

Եղիշե Իշխանյանը գրում է, որ 1918 թ. դեկտեմբերի 8–ին Շուշի է հասնում

գեներալ Թոմսոնի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ կապիտան Սերրայտը: Նա արցախցիներին հայտնում է, թե ինքը պիտի «ջանայ խաղաղութիւն պահպանել Ղարաբաղում երկու ժողովուրդների միջև և խաղաղութիւն պահպանելու համար անգլիական զորքը կը գայ, որ արդէն ճամբին է»: Երբ Գիբոնը վերադառնում է Գորիսից, նրա հետ Ղարաբաղ են գալիս Շուշիի գնդի զինվորները: Սերրայտը, ընդառաջելով քաղաքի մուսուլմանների սադրանքներին, ազգային խորհրդից պահանջում է, որ Շուշի եկած զինվորների զենքերը հավաքեն և հանձնեն իրեն: Սակայն ստանում է մերժում: Կապիտան Սերրայտը, Թոմսոնի կարգադրությամբ, փորձում էր ճշտել թուրքական զորքերի և ադրբեջանական բանդաների կողմից Ղարաբաղին հասցված վնասների չափը: Այդ առթիվ ստեղծվում է հանձնախումբ՝ Լևոն Վարդապետյան, Աշոտ Մելիք–Յովսեփյան, Գրիգոր Մինասբեկյան, Յրանտ Բախթրյան, Սերգեյ Աթաբեկյան, Գրիգոր Խաչյան, Ստեփան Մանդինյան, Նիկողայոս Իսախանյան, Ասլան Շահնազարյան և Եղիշե Իշխանյան, որը պետք էր գործեր Սերրայտի գլխավորությամբ: Ըստ երևույթին, անգլիացիները փորձում էին ինչ–որ տեղ սիրաշահել արցախահայությանը: Կապիտան Սերրայտն իր խսկական դեմքը ցույց է տալիս, երբ դեկտեմբերի 23–ին ժամանակավոր ազգային խորհրդին հայտնում է Թոմսոնից ստացված հրամանի մասին, ըստ որի՝ Ղարաբաղը պետք է ժամանակավորապես ճանաչեր Ադրբեջանի իշխանությունը: Յաջորդ օրը նա առաջարկում է 1919 թ. հունվարի մեկը սկսել նոր տոմարով, որն ընդունվում է ժամանակավոր ազգային խորհրդի կողմից:[32]

Անգլիացիներն Արցախ ոտք դնելու հենց առաջին օրվանից բացեիբաց պաշտպանում էին մուսավաթական Ադրբեջանի շահերը՝ շարունակելով թուրքերի քաղաքականությունը: Անգլիան դեռևս 19-րդ դարի վերջին քառորդից սկսած՝ անբարենպաստ դիրք ուներ հայկական հարցի վերաբերյալ: Շարունակելով իրենց հակահայ քաղաքականությունը, անգլիացիները, որոնց պետք էր Բաքվի նավթը, պահանջում էին Յայաստանի արևելյան հատվածը՝ Ղարաբաղ–Զանգեզուրը ենթարկվի Ադրբեջանի իշխանությանը և անառարկելիորեն կատարել Բաթումի պայմանագիրը:

Ղարաբաղում անգլիացիները երևալուց հետո թուրք–մուսավաթականների ավելի ակտիվացան: Մնկասկած, հենց անգլիացիների դրդմամբ էին մուսավաթական մութ տարրերը կատաղի հարձակումներ գործում հայկական գյուղերի վրա և թալանում, ավերում ու կոտորում բնակիչներին: Ղարաբաղի ժամանակավոր ազգային խորհուրդը անգլիական միսիային բողոքում է այդ առթիվ և պահանջում միջոցառումներ ձեռնարկել:[33] Սակայն անգլիական միսիան ցուցաբերում էր անտարբերություն:

Արցախահայությունը դեռ հստակ չէր հասկանում անգլիացիների բռնած հակադարաբաղյան դիրքը: Չնայած դրան՝ արցախցիները փորձում էին հասկացնել այդ բիրտ ուժերին, որ իրենք երբեք չեն նահանջի իրենց վճռից: 1918 թ. դեկտեմբերի 30–ին Ղարաբաղի զորահրամանատարների ստորագրությամբ Բաքվի Յայոց ազգային խորհրդին ուղարկված նամակում կարդում ենք. «Անգլիական երկրորդ միսիայի... ուշադրությունը դարձրինք այն հանգամանքի վրա, որ Ղարաբաղի հայ ժողովուրդը մինչև այսօր չի ճանաչել Ադրբեջանի կառավարությունը և չի էլ կարող ճանաչել թե ներկայումս և թե ապագայում. Մենք դրա համար չենք կռվել տաճիկների դեմ...»: Այնուհետև ասված է, որ թող լավ հասկանա անգլիացի գեներալը, որ Ղարաբաղի հայը թուրքական զորքերի բռնությունների դեմ կռվել է «Ադրբեջանի իշխանությունը չճանաչելու համար» և որ «մեր բարեկամ Անգլիան չպետք է մեզ ստիպի նրան (Ադրբեջանին–Ա.Ի.) ենթարկվելու. դա մեզ համար... ոչ միայն պատվի հարց է, այլ նաև ֆիզիկական գոյության, որի համար այնքան արյուն ենք թափել»: Զորահրամանատարները արտահայտելով արցախահայության անսասան կամքը, իրենց խոսքն ավարտում են հետևյալ վճռականությամբ. «Մեր ժողովրդի մի մասը մերկ է ու քաղցած, զուրկ նյութական ամեն մի միջոցից, մի տարի է, ինչ փողի երես չի տեսել. նա պատրաստ է նույն զոհաբերությունը տանել նաև ապագայում, միայն թե ազատ Ղարաբաղի լեռներում չճանաչի ոչ մի մահմեդական գերիշխանություն»: Ապա խնդրում են հասկացնել գեներալ Թոմսոնին, որ «ամբողջ մի տարվա ընթացքում ազատության համար կռվող ղարաբաղցին չի կարող իր արշալույսին ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը»:[34]

Արցախահայությունը հետզհետե համոզվում էր, որ չի կարելի վստահել անգլիացիներին և մեծ հույսեր կապել նրանց հետ: Ղարաբաղի ժամանակավոր ազգային խորհուրդը Բաքվի Յայոց ազգային խորհրդին 1919 թ. հունվարի 15–ին ուղարկված մի նամակում գրում է, թե անգլիացիները գալուց հետո «անցել ենք խաղաղ կյանքի, հաստատ հավատացած լինելով, որ այդպես գործելով չարաչար պիտի պատժվենք ու հիմնահատակ կործանվենք շնորհիվ մեր վստահության»:[35]

Արցախցիների բոլոր այդ բողոքները մնում էին անհետևանք: Անգլիական հրամանատարությունը աչք էր փակում և ասես չէր տեսնում մուսավաթական Ադրբեջանի հակահայկական գործողությունները: Բայց և այնպես, խիզախ, շիտակ, օրինապահ, նաև միամիտ ղարաբաղցիները հույսերը չէին կորցնում, իրենց ուսերի վրա տանում էին բոլոր դժվարությունները և վճռականապես մերժում Ադրբեջանին ենթարկվելու անգլիացիների պահանջը: Անգլիական միսիան, չնայած խոսքով պնդում էր, թե կօգնի ամրապնդել երկու դրկից ժողովուրդների՝ հայերի և ադրբեջանցիների բարեկամությունը, բայց գործնականում հակառակն էր կատարում: Ահա թե Ջրաբերդի Յոռաթաղ գյուղացի Մա[illegible] Պատաշյանն այդ առթիվ 1919թ. փետրվարի 1-ին ինչ է գրել Ղարաբաղի ժամանակավոր ազգային խորհրդին. «Դաշնակից միսիան Ջիվանշիր գալուց հետո, թվում էր, թե վիճակը կբարելավվի և երկու հարևան ժողովուրդների միջև ամեն ինչ կհարթվի, մինչդեռ նրանց գալուց հետո բոլորը հավատացին, թե կլինեն խաղաղ օրեր, բայց վերջին օրերի իրադարձությունները ցույց են տալիս, որ ինչ որ չար ձեռք հարյուրամյակներ թիկունք–թիկունքի ապրող երկու հարևան ժողովուրդների միջև ատելություն է սերմանում՝ չխորշելով առաջ բերելով արյունոտ միջադեպեր»: Պատաշյանն այնուհետև պատմում է, որ անգլիացիների գալուց հետո Ջիվանշիրում սկսվել է թալանը, մարդասպանությունը, [illegible]ումը: Նա օրինակ է բերում, որ հունվարի 29–ին Թարթառում՝ թաթարները

շատ հայեր են սպանել, որոնց թվում իր երկու տղաներին, համագյուղացի 70 տարեկան Գրիգոր Գալստյանին և նրա տղա Նիկոլային:[36]

Անգլիական գաղութարարների հակաարցախյան հաջորդ քայլը եղավ այն, որ գեներալ Թոմսոնի երաշխավորությամբ, ինչպես նշվել է, Խոսրովբեկ Սուլթանովը նշանակվեց Ղարաբաղ–Զանգեզուրի ժամանակավոր գեներալ–նահանգապետ: Այդ դահիճը[37] ամեն կերպ ջանում էր արդարացնել անգլիական հրամանատարության և մուսավաթական Ադրբեջանի հույսերը: Ղարաբաղում ծվարած անգլիական միսիան ատամներով պաշտպանում էր Սուլթանովին, տոն տալիս նրա ավազակային գործողություններին, միևնույն ժամանակ էլ շողոքորթում Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին:[38] Անգլիական հրամանատարությունը 1919թ. հունվարի 15–ին մի հայտարարություն է հրապարակում, որով հավաստիացնում է, թե Ղարաբաղի որևէ պետության կազմի մեջ մնալու հարցը կլուծվի Խաղաղության վեհաժողովում: Հետևապես, մինչ այդ գեներալ–նահանգապետության և նրա բոլոր բաժինների կողմից արձակված յուրաքանչյուր հրաման բնակչության կողմից պետք է իրագործվի անառարկելիորեն և «նրանց կողմից բոլոր տեսակի դիմադրությունը կճնշվի ամենավճռական միջոցներով»:[39] Մինչդեռ այդ նույն օրերին Մեծ Բրիտանիայի պատվիրակության անդամ գեներալ Կորին Փարիզի վեհաժողովում հայտարարում էր, թե մինչև Լեռնային Ղարաբաղի, իբրև վիճելի տարածքի, հարցը չլուծվի վեհաժողովում, այնտեղ միայն հայկական ազգային խորհուրդը կլինի ղեկավար և ինքը կլուծի երկրամասին վերաբերող ամեն տեսակի հարցեր:[40] Իսկ երկու ամիս անց, ապրիլի 3–ին, անգլիական միսիայի պաշտոնական հաղորդագրության մեջ, որի տակ ստորագրել էր արդեն Թոմսոնին փոխարինած գնդապետ Դ. Շատելվորտը, բացեիբաց, առանց որևէ երկմտանքի, ասված է, որ իրենց դրածո նահանգապետի բոլոր հրամանները ու պահանջները կպաշտպանվեն անգլիական հրամանատարության կողմից:[41] Ասված է պարզ ու հասկանալի. Ղարաբաղի անօրեն նահանգապետ Սուլթանովի թիկունքում կանգնած էր Անգլիան, որը պատրաստ էր հանուն մուսավաթական Ադրբեջանի զոհաբերել ավելի քան 300 հազարանոց արցախահայությանը:

1919թ. հունվարի 19–ին (հին տոմարով՝ 6–ին), ջրօրհնեքի օրը, բծավոր տիֆից մահանում են Հայրապետ Մուսայելյանն ու Կարապետ Նարինյանը: Դա մեծ կորուստ էր արցախահայության համար: Նրանց մահը սգում էր ամբողջ Արցախը: Արցախահայության ազատագրական պայքարը մեծ ու անվերադարձ հարված կրեց: Եղիշե Իշխանյանը գրել է. «Հայրապետ Մուսայելյանը և Կարապետ Նարինյանը զոհվեցին իրենց ազգային–հասարակական պարտականութեան կատարման ընթացքին, երկուսը միասին, չքավոր հայ ընտանիքներին նպաստ բաժանելու ժամանակ վարակվելով բծավոր տիֆով: Բժիշկներն ամէն ջանք գործ դրին, չկարողացան փրկել: Եվ այսօր հասարակութիւնը զրկվում է իր երկու վաստակաւոր գործիչներից, որոնք դեռ լեցուն էին եռանդով և պատրաստ՝ իրենց ուժերը ի սպաս դնելու իրենց հարազատ ժողովրդին»:[42]

Այդ օրերին ամբողջ Արցախում ակտիվ աշխատանքներ էին տարվում Ղա-



րաբաղի հայության չորրորդ համագումարը հրավիրելու ուղղությամբ: Հունվարի 24–ին տեղի է ունենում զինվորական միության ընդհանուր ժողով: Մինչ այդ Բաքու էին գնացել Արտաշես Վարդապետյանը և Մարտիրոս Այվազյանը, որոնք հանդիպումներ էին ունեցել Բաքվի ազգային խորհրդի և զորավար Բագրատունու հետ: Վերջիններս դրվատանքով էին խոսել Ղարաբաղում քաղաքական կուսակցությունների համերաշխ գործունեության մասին և բարձր գնահատել նրանց վարած «զգուշավոր քաղաքականությունը»: Նրանք զորավար Բագրատունու ակտիվ միջամտությամբ Բաքվի Հայոց ազգային խորհրդից ստացել էին 200 հազար ռուբլի՝ «Միութեան անհրաժեշտ ծախսերը հոգալու, հետախուզական աշխատանք կատարելու և արդյունքի մասին տեղեկացնելու Հայաստանի կառավարությանը»:[43] Ընդհանուր ժողովում Արտաշես Վարդապետյանը զեկուցում է Բաքվում տեղի ունեցած հանդիպումների մասին: Պարզվում է, որ այդ օրերին Սոկրատբեկը ևս պատվիրակություն էր ուղարկել Բաքու՝ Բագրատունուց օժանդակություն խնդրելու: Այդ փառամոլը փորձում էր դառնալ Ղարաբաղի ընդհանուր ուժերի հրամանատար: Զինվորական միության ընդհանուր ժողովը դատապարտում է Սոկրատբեկի այդ ձգտումները և առաջարկում շուտ հրավիրել Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը: Ընդառաջելով այդ պահանջին, ժամանակավոր ազգային խորհուրդը հունվարի 25–ին որոշում է Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը հրավիրել փետրվարի 10–ին: Նախապատրաստական աշխատանքներն ու ծախսերն իր վրա է վերցնում զինվորական միությանը: Որոշվում է երկրամասի 22 գյուղական հասարակություններից յուրաքանչյուրից ընտրել երեքական պատգամավոր:

Մինչև համագումարի հրավիրումը, Արցախ–Ղարաբաղում տեղի են ունենում մի շարք իրադարձություններ: Ամենից առաջ անգլիական միսիան, ի դեմս կապիտան Սերրայտի, տուրք տալով թուրքերի բարբաջանքներին, պնդում էր, թե Արցախ–Ղարաբաղում բնիկները եղել են թուրքերը, հետևապես այդ տարածքը պետք է հանձնվի Ադրբեջանին:

Անգլիական մի գումարտակ, որը եկել էր Հնդկաստանից, հունվարի 27–ին թուրքական մի գնդի հետ մտնում են Արցախ և գրավում Խանքենդիի զորանոցներն ու սպայական ակումբը: Ղարաբաղի ժամանակավոր ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը 1919 թ. փետրվարի 3–ին զորավար Անդրանիկին հաղորդել է. «Վեց օր առաջ Ադրբեջանի կարգադրությամբ «վայրի դիվիզիայի» չորս հարյուրյակ թնդանոթներով ու գնդացիրներով եկել զետեղվել են Շուշիի մոտ՝ Խանքենդ ավանում», իսկ «այսօր Շուշի է եկել Ադրբեջանի զինվորական նախարար գեներալ Մեհմանդարովը, նաև իբրև թե Ղարաբաղի զինվորական նահանգապետ բժիշկ Սուլթանովը»:[44] Երկու օր անց, փետրվարի 5–ին, Արցախից զորավարին կրկին հաղորդել են. «Ադրբեջանը 4500 զորք է տալիս անգլիացոց տրամադրության տակ բոլշևիկների դեմ կռվելու: Բավականաչափ պարզ է, որ անգլիացոց քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ փոխվում է, իսկ դրա հետևանքը կարող է լինել այն, որ թույլ կտան Ադրբեջանն իր ուժերով մտնի Ղարաբաղ ու Զանգեզուր և իր հրա-

վունքները տարածի հայերի վրա: Խանքենդի են եկել 1500 զինվոր թնդանոթներով և գնդացիրներով: Շուշիում նույնպես 1000 հոգի կա...»:[45] Հաղորդում կա նաև այն մասին, որ թուրք–անգլիացիներն այդ օրերին իրենց ուժերի մի մասը տեղափոխում էին Զաբուղ և մյուս սահմանամերձ գծերը:

Արցախցիները գիտեին, որ Ղարաբաղ–Զանգեզուրի ժամանակավոր նահանգապետ նշանակված բժիշկ Սուլթանովը պետք է գար Ղարաբաղ և անցներ իր պարտականությունների կատարմանը: Այդ առթիվ նրանք խիստ անհանգստացած էին և պատրաստվում էին փակել նրա ճանապարհը: Փետրվարի մեկին, պատմում է Եղիշե Իշխանյանը, քաղաքում բռնկված դժգոհությունների առթիվ տեղի է ունենում միջկուսակցական խորհրդակցություն, որի կողմից անգլիական միսիային է ներկայացվում բողոք Ադրբեջանի ոտնձգությունների վերաբերյալ, որը ձգտում էր «բռնի կերպով Հայաստանի բնական մաս կազմող և միատարր հայ բնակչությամբ Ղարաբաղը, որտեղ թուրքերը չնչին փոքրամասնություն էին կազմում, կցելու Ադրբեջանին»: Արցախցիները անգլիական միսիայից պահանջում էին Ղարաբաղից հեռացնել «թե Սուլթանովին և թե Ադրբեջանի զորքը»:[46]

Այդ օրերին տեղի է ունենում նաև մեկ այլ իրադարձություն: Սոկրատբեկը փորձում էր պղտոր ջրում ձուկ որսալ: Նա, միացած քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի հետ, մի պատվիրակություն են ուղարկում Բաքու (Արտեմ Պետրոսյան և Միքայել Ալլահվերդյան), որը պետք էր հաջողացներ և զորավար Բագրատունուց հրաման բերեր՝ Սոկրատբեկին Արցախի ուժերի գլխավոր հրամանատար նշանակվելու վերաբերյալ:

Փետրվարի 2–ին, Սուլթանովը Ղարաբաղ ժամանելու նախօրյակին, գեներալ Թոմսոնի հրամանով Բաքու է մեկնում կապիտան Սերրայտը: Փետրվարի 8–ին կապիտան Սերրայտի փոխարեն Ղարաբաղ է գալիս նոր միսիա՝ Մոնկ Մեսսենի[47] գլխավորությամբ: Իսկ փետրվարի 9–ին Շուշի են գալիս Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Գերասիմ Բալայանը և Լևոն Զառաֆյանը, որոնք պետք է օգնեին Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի աշխատանքների կազմակերպմանը:

Ինչպես նշվել է, փետրվարի 3–ին (որոշ աղբյուրներում՝ 10–ին) մեծ շքախմբով և Ադրբեջանի ռազմական նախարար Մեհմանդարովի ուղեկցությամբ Շուշի է ժամանում Ղարաբաղ–Զանգեզուրի ժամանակավոր նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը, որի հիմնական խնդիրն էր ուժով նվաճել Ղարաբաղը և այն ենթարկեցնել Ադրբեջանին: Սուլթանովը Ղարաբաղ էր եկել՝ իր հետ բերելով մեծ գումար: Շուշի ժամանելու հենց հաջորդ օրը նա պահանջում է, որ բանակցելու նպատակով իրեն ներկայանան քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Տեր–Գրիգորյանը և այլ պաշտոնյաներ: Սակայն ժամանակավոր ազգային խորհուրդը արգելում է որևէ հանդիպում ունենալ Սուլթանովի հետ: Սուլթանովի ծրագրի մեջ էր մտնում հայերին կաշառելը և նրանցից Ադրբեջանին ենթարկվելու համաձայնություն պոկելը: Շուրջ մեկ տարի էր, ինչ քաղաքի պաշտոնյաները և մյուս ծառայողները աշխատավարձ չէին ստացել: Սուլթանովը



նրանցից պահանջում է ներկայանալ իրեն և ստանալ իրենց աշխատավարձը՝ միայն նախօրոք ստորագրելով իր կողմից կազմված պահանջագիրը, թե իբրև իրենք 1918 թ. հունիսի 1–ից ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այսուհետ ևս «կշարունակեն ծառայել ամբողջ եռանդով և պատվով»:[48] Այդ պահանջագիրը բլանկի վրա, ուղարկվել էր բոլոր ուսումնական հաստատություններին և հիմնարկներին: Շուշիի հայ մտավորականությունը և ամբողջ հայությունը զայրույթով են ընդունում Սուլթանովի պահանջը և մերժում: Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը հատուկ որոշում է ընդունում արգելել բոլոր հայերին ադրբեջանական իշխանությունից որևէ տեսակի աշխատավարձ ստանալ:[49]

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը տեղի ունեցավ 1919 թ. փետրվարի 10–20–ը, Շուշիի թեմական դպրոցի դահլիճում: Համագումարի պատգամավորների ճնշող մեծամասնությունը երկրագործ գյուղացիներ էին: Կային նաև միջնակարգ կրթությամբ գյուղական դպրոցների ուսուցիչներ: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին 22 գյուղական հասարակություններից երեքական ներկայացուցիչներ, քաղաքից՝ 8, քաղաքական հինգ կուսակցություններից երկուական, բոլորը միասին՝ 84 հոգի: Համագումարի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող էին մասնակցել նաև գավառների զորամասերի հրամանատարները և ժամանակավոր ազգային խորհրդի անդամները: Համագումարը փետրվարի 14–ին որոշում է ընդունում նիստերին մասնակցելու թույլատրել Բաքվից եկած Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Գերասիմ Բալայանին և Լևոն Զառաֆյանին, ինչպես և նույնպես Բաքվից եկած Իշխան Միրզաբեկյանին և Ներսես Նասիբյանին:[50]

Համագումարը վարելու համար միաձայն և բաց քվեարկությամբ նախագահ է ընտրվում Ասլան Շահնազարյանը, փոխնախագահ՝ Հակոբ Եսայանը, քարտուղարներ՝ Թեոդորոս Տեր–Հովհաննիսյանը և Արշակ Առստամյանը: Հաստատվեց հետևյալ օրակարգը. 1) Ղարաբաղի ժողովրդական կառավարության զեկուցումը, 2) ժամանակավոր ազգային խորհրդի զեկուցումը, 3) Ինքնապաշտպանության հարցը, 4) Ղարաբաղը Հայաստանին կցելու հարցը, 5) Ֆինանսական հաշվետվություն, 6) Վարչական մարմինների կազմակերպման, դատարաններ ստեղծելու, դպրոցների բացման հարցեր, 7) Հայ–թուրքական հարաբերությունները և 8) Ընտրություններ:

Համագումարը ժամանակավոր ազգային խորհրդին շնորհակալություն է հայտնում իր կատարած անխոնջ աշխատանքի համար, ապա լսում շրջանային զինվորական հրամանատարների զեկուցումները երկրամասի պաշտպանությունն ամրապնդելու վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին: Հատուկ որոշում է ընդունվում համագումարը ճանաչել որպես Լեռնային Ղարաբաղի միակ օրինական մարմին, իսկ գործադիր մարմին է ճանաչվում համագումարի կողմից ընտրված գերագույն խորհուրդը: Ներքին որոշ հարցեր լուծելու համար համագումարը հնարավոր էր համարում իր ներկայացուցիչներից «Փոքր խորհրդի» ստեղծումը: Արցախի սահմանադրությունը մշակելու համար ստեղծվում է հանձնաժողով:

Համագումարը քննարկելով Ղարաբաղի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի ոտնձգությունների հարցը՝ որոշում է այդ մասին հեռագիր ուղարկել Փարիզի հաշտության վեհաժողովի աշխատանքներին մասնակցող Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությանը և կտրուկ մերժում է Արցախը Ադրբեջանին բռնակցելու մուսավաթականների և անգլիացիների բոլոր փորձերը։ Համագումարի ընդունած բանաձևում ասված է. «Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքի վրա՝ Արցախի հայ ազգաբնակչությունը հարգանքով է վերաբերվում դեպի հարևան թուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը և դրա հետ միաժամանակ կառավարության փորձերի դեմ, որոնցով ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Արցախի նկատմամբ, որը երբեք չի ընդունել և չի ընդունում իր վրա Ադրբեջանի իշխանությունը։ Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե Կովկասում գտնվող դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե Եվրոպայի խաղաղարար համագումարի առաջ»։[51]

Համագումարի օրերին անգլիական միսիայի ղեկավար մայոր Մոնկ Մեսսենը Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Գերասիմ Բալայանին և Լևոն Զառաֆյանին առաջարկում է «ստորագրել մի հայտարարություն, ըստ որի հայկական Ղարաբաղը մինչև Զաբուղ ժամանակավոր հանձնվում է Ադրբեջանին»։ Բալայանն ու Զառաֆյանը հրաժարվում են։ Դրանից հետո Մոնկ Մեսսենը նրանցից պահանջում է անհապաղ հեռանալ Շուշիից։ Քաղաքի հայերն իմանալով այդ մասին, մարտի 25–ին հավաքվում են «Մարտուն» հյուրանոցի մոտ, որտեղ տեղավորված էր անգլիական միսիան, և պահանջում փոխել այդ որոշումը։ Սակայն անգլիական միսիան մնում է անդրդվելի։[52] Դեռ ավելին, այն փետրվարի վերջին Շուշի է տեղափոխում 400 հոգուց բաղկացած անգլիական մի զորամաս և տեղավորում հայկական թաղամասում գտնվող զորանոցներում,[53] որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտագործի հայերի դեմ։

Նախօրոք ստանալով համագումարի պատվիրակների համաձայնությունը՝ փետրվարի 15–ի նիստում ելույթ է ունենում Սալմանբեկ Ալիբեկովը։[54] Նա ասելու բան ուներ, քանի որ հայերի և մահմեդականների բարեկամության և համագործակցության ջատագով էր։ Նա իր ելույթում խոսում է ցարական ինքնակալության գաղութային քաղաքականության և ժողովուրդներին դաժանորեն ճնշելու մասին։ Չնայած դրան՝ նա գտնում է, որ փոքր ժողովուրդները պետք է լինեն ռուս ժողովրդի հետ։ Եվ ապա ասում է. «Դուք տեսաք, թե օտար ուժերը՝ օսմանցիները, ինչ չարիք գործեցին, եղբայրասպան կռիվ ստեղծելով Բաքվում, տասնյակ հազարավոր մարդկային զոհեր խլելով։ Օսմանցիները ինչպես ծեզ, նույնպես էլ կողոպտեցին թուրք գյուղացիներին... Ես, որպես հայ ժողովրդի բարեկամ, ամբողջ հոգով ու սրտով... ցանկանում եմ իսկական խաղաղություն համայն Ռուսաստանի բոլոր ազգերի համար...»։[55]

Փետրվարի 20–ին, վերջին նիստում, Ղարաբաղի հայության չորրորդ համագումարն ընտրում է Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդ, հետևյալ կազմով. Հրանտ Բահաթրյան, Եղիշե Իշխանյան, Աշոտ Մելիք–Հովսեփյան, Իշխան



Միրզաբեկյան, Ասլան Շահնազարյան, Արտաշես Տեր–Միքայելյան։ Փոխանդամներ են ընտրվում Մելիքսեթ Եսայանը և Պետրոս Տեր–Գրիգորյանը։ Ազգային խորհրդի կազմը լրացնում են Գերասիմ Բալայանն ու Լևոն Զառաֆյանը։ Ազգային խորհրդի՝ նախագահ է ընտրվում Ասլան Շահնազարյանը, փոխնախագահներ՝ Եղիշե Իշխանյանը և Հրանտ Բահաթրյանը, քարտուղար Մելիքսեթ Եսայանը։[56] Ազգային խորհուրդն իր վրա է վերցնում երկրամասը կառավարելու բոլոր ֆունկցիաները։ Այն և՛ ազգային խորհուրդ էր, և՛ օրենսդիր ու գործադիր մարմին։ Եղիշե Իշխանյանը հետագայում գրել է, որ «թե միջկուսակցական ժողովներից և թե համագումարներից ընտրված մարմինները կառավարության դեր էին կատարում»։[57]

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարը բնորոշեց երկրամասի բնակչության և նորաստեղծ իշխանությունների հիմնական խնդիրներն ու գործելու ուղղությունները։ Այն և նրա կողմից ընտրված ազգային խորհուրդը կարևոր ուշադրություն էին դարձնում առանձնապես երկրամասի պաշտպանության ամրապնդման հարցին։ Համագումարի որոշմամբ ստեղծվում է զինվորական շտաբ, որն իր ձեռքում է կենտրոնացնում գավառների և քաղաքի զինվորական ուժերի ղեկավարումը։ Դեռևս համագումարից առաջ, Շուշիում կազմակերպված սպայախումբը[58] պաշտպանում էր համագումարի ընդունած որոշումները և աջակցում նորընտիր ազգային խորհրդի գործունեությանը։

Ղարաբաղի հայության չորրորդ համագումարից հետո քաղաքական մթնոլորտն ավելի է շիկանում։ Անգլիական հրամանատարությունը Սուլթանովին [illegible]ապեցնում էր որքան հնարավոր է Ղարաբաղը շուտ ենթարկեցնել Ադրբեջանին։ Համանման ձգտում է դրսևորում նաև այդ օրերին Աղդամում տեղի ունեցած մուսուլմանների համագումարը։[59] Եղիշե Իշխանյանը պատմում է, որ համագումարի հաջորդ օրը, փետրվարի 21–ին, ազգային խորհուրդ է գալիս անգլիական միսիայի թարգմանիչ Մասլեննիկովը և հայտնում, թե Մոնկ Մեսսենը գեներալ Թոմսոնից հեռագիր է ստացել, որը պահանջում է, որ Ղարաբաղի հայությունը ճանաչի Ադրբեջանի գերիշխանությունը և բոլոր հաստատությունները ենթարկվեն Սուլթանովի իշխանությանը։ Ազգային խորհրդի նախագահը պատասխանում է, թե հայտնեցեք մայորին, որ Ղարաբաղի հայության գերագույն լիազոր ներկայացուցիչներն իրենց չորրորդ համագումարում միաձայն վճռել են չճանաչել Ադրբեջանի իշխանությունը։ Թող անգլիացիք լավ իմանան, որ Ղարաբաղն իր հազարամյա պատմական հուշարձաններով և 85 տոկոսից ավելի հայ ազգաբնակչությամբ Հայաստանի անբաժան մասն է և որ համագումարի ընտրած ազգային խորհուրդը, իր լրիվ կազմով և բոլոր շրջանների հրամանատարները, որոնք պատասխանատու են Ղարաբաղի գերագույն լիազոր ատյանի համագումարի առաջ, չեն ճանաչում և երբեք չեն կարող ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը։[60] Դեռևս փետրվարի 19–ին համագումարի նախագահ Ասլան Շահնազարյանի և համագումարի քարտուղար Թեոդրոս Տեր–Հովհաննիսյանի ստորագրությամբ Բաքվի Հայոց ազգային խորհրդին ուղարկված նամակում վճռականորեն բողոք է հայտնվել Ադրբեջանի իշխանության դեմ, որը Ղարաբաղը հայտարարել էր Ադրբեջանի տարածք։ Այդ նամակում

վճռականորեն ասված է, որ Ղարաբաղը երբեք չի ճանաչել և չի ճանաչի Ադրբեջանի գերիշխանությունը։[61] Ազգային խորհուրդը որոշում է մի պատվիրակություն ուղարկել Բաքու՝ երես առ երես խոսելու անգլիական հրամանատարության հետ։ Պատվիրակության կազմում ընդգրկվում են Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Տեր–Գրիգորյանը և ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթրյանը։ Պատվիրակությունն անմիջապես մեկնում է Բաքու։

Այդ օրերին Սուլթանովը, ստանալով թարմ ուժեր և բավականին ռազմամթերք, ամրապնդում է ռազմավարական կետերը՝ ավելի նեղացնելով Արցախը շրջապատող օղակը։ Նա փետրվարի 21–ին շտապ մեկնում է Ջիվանշիր՝ մուսուլմաններից զորահավաք կատարելու համար։[62] 1919 թ. փետրվարի 27–ին կազմված մի փաստաթղթից իմանում ենք, որ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարից հետո անգլիական միսիայի պետ մայոր Մոնկ Մեսսենը, դիմելով Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին, հայտնում է, որ մինչև Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշումը նահանգապետ Սուլթանովի քաղաքացիական գծով օգնականը կլինի հայ, բացի այդ, նահանգապետին կից ստեղծվում է խորհուրդ՝ բաղկացած երեք հայից, երեք մուսուլմանից և անգլիական միսիայի մեկ սպայից։ Նա միևնույն ժամանակ պահանջում է կատարել այն բոլոր հրամանները, որոնք «դուրս կգան գեներալ–նահանգապետությունից»։[63]

Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդն իր լրիվ կազմով և շրջանային հրամանատարների մասնակցությամբ քննարկելով անգլիական միսիայի պահանջը, պատասխանում է, որ արցախահայությունը չի կարող հաշտվել Ղարաբաղում նահանգապետություն մտցնելու փաստի հետ, քանի որ ադրբեջանական կառավարությունից կախվածությունը, ինչպիսի ձևով էլ որ այն արտահայտվի, «Ղարաբաղի հայությունը գտնում է իր համար անընդունելի»։ Անգլիական միսիան, ստանալով նման բացասական պատասխան, դիմում է սադրանքի։ Նա հայկական զորահրամանատարներից պահանջում է ստորագրել մի փաստաթուղթ, որում ասված է, թե սույն փաստաթղթի տակ ստորագրողներս մտադիր չենք «ընդունել ադրբեջանական իշխանությունը, ինչ ձևով էլ որ նա արտահայտվի Ղարաբաղի և Զանգեզուրի սահմաններում։ Մենք նաև հրաժարվում ենք մտնել մարզը ղեկավարելու համար կազմակերպվող խորհրդի մեջ։ Մենք տեղյակ ենք անգլիական միսիայի այն պահանջին, որ ադրբեջանցիների դեմ յուրաքանչյուր գործողություն կդիտվի որպես անգլիական կառավարության դեմ գործողություն»։ Եվ երբ մերժվեց այդ լկտի պահանջը ևս, անգլիական ծառայության լեյտենանտ, նախկին ցարական բանակի սպա և «վայրի դիվիզիայի» ծառայող վերոհիշյալ Մասլեննիկովը նոր նամակ ուղարկեց զորահրամանատարներին, որով նրանցից պահանջում էր մերժել Ղարաբաղի ազգային խորհրդի բոլոր պահանջներն ու չորրորդ համագումարի որոշումները։[64] Այսպիսով՝ անգլիական միսիայի խարդախ գործողությունները՝ հակասություն առաջ բերելու ազգային խորհրդի և զորահրամանատարների միջև, վերջանում է անհաջողությամբ։ Արցախահայությունը մի անգամ ևս ցուցաբերեց իր միասնությունն ու անսասան կամքը։



Այդ ամենը իբրև քիչ էր, երկրամասում համաճարակի բնույթ էին ստացել բծավոր տիֆն ու իսպանկա կոչված հիվանդությունը։ Թե հայ և թե մուսուլման բնակիչները սարսափի մեջ էին։ Ազգային խորհուրդը հավաքելով քաղաքի բժիշկներին, կոչ արեց բոլոր միջոցներով պայքարել վարակիչ հիվանդությունների դեմ։ Մի շարք բժիշկներ՝ Հովհաննես Պետրոսյան, Արտաշես Գյանջեցյան, Լյուդվիգ Տեր–Գրիգորյան, Աբրահամ Բաղդասարյան և ուրիշներ, շատերի կյանքը փրկեցին և նվազագույնի հասցրին մահացությունը։

Սուլթանովը մի կողմից ձգտում էր ազատվել անգլիական հսկողությունից և իր արյունոտ ձեռքերին լրիվ ազատություն տալ, մյուս կողմից էլ իրեն դրսևորում էր իբրև անգլիացիներին հնազանդ և խոհեմ ծառա։ Նա Բաքու՝ իր հանրապետության նախարարների խորհուրդ ուղարկած 1919 թ. փետրվարի 25-ին դ 165 գրության մեջ բողոքում էր Շուշիի անգլիական միսիայից, որը ցանկանում էր մանրամասն իմանալ իր «կողմից ձեռնարկվող բոլոր քայլերը» և «մշտական հսկողություն սահմանել իր նկատմամբ»։ Սուլթանովն այնուհետև շարադրում է արցախահայությանը հնազանդեցնելու մի նենգ պլան, որի կատարումը հնարավոր էր համարում միայն «անգլիացիների ազդեցության պայմաններում»։ Սուլթանովը հաղորդում էր, թե անգլիացիները «սկսել են անվստահություն ցուցաբերել հայերի նկատմամբ»։ Նա հույս է հայտնում, որ «քայլ առ քայլ, առանց ֆիզիկական ուժ գործադրելու», կարող է «հայերին ստիպել ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը»։ Իսկ «դրա համար պետք է հայերի մեջ անվստահություն սերմանել իրենց ղեկավարների նկատմամբ»։ Նա խորհուրդ էր տալիս «անգլիացիների օգնությամբ... ձերբակալել և արտաքսել» հայերի առաջնորդներին։ Սուլթանովի համոզմամբ միայն այդ ձևով «հնարավոր կլինի, առանց ագրեսիվ միջոցներ գործադրելու, լուծել Ղարաբաղի հարցը»։[65] Մեկ այլ փաստաթղթում, որը նահանգապետության գրասենյակից մարտի 14–ին ուղարկվել է Մոնկ Մեսսենին, հարց էր դրվում երկու շաբաթվա ընթացքում Անդրանիկին հեռացնել Ղարաբաղից, անհապաղ արձակել Հայոց ազգային խորհուրդը, Ղարաբաղից արտաքսել առաջադեմ բոլոր մտավորականներին և փախստականներին մեկ ամսվա ընթացքում վերադարձնել իրենց բնակավայրերը։[66] Իսկ մի քանի օր անց Սուլթանովը նախարարների խորհրդի նախագահին հաղորդում էր, թե նահանգի չորս գավառների մուսուլմանական վայրերում ամեն ինչ կարգին է, միայն «անիշխանություն է հայկական շրջաններում, որտեղ քաղաքական իմաստով, մեր իշխանությունը հաստատելու համար ժամանակ չեմ գտնում»։[67] Ստացվում է այսպես. քանի որ արցախահայերը չէին ենթարկվում նահանգապետին և մերժում էին Ադրբեջանի իշխանությունը, նշանակում է այնտեղ «անիշխանություն է», նրանց հնազանդեցնելու համար պետք է ընտրել «հարմար ժամանակ», չեզոքացնել ղեկավարությանը, նրանց արտաքսել հարազատ օջախներից, քանի որ նրանք «սարսափի տակ են պահում բնակչությունը»։ Այդպիսի ցինիկության ընդունակ էին և Սուլթանովը և նրա տերերը։ Եվ պատահական չէր, որ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարն ավարտվելուց երկու օր հետո, փետրվարի 22–ին, Մոնկ Մեսսենը դիմելով նորընտիր Հայոց ազգային խորհր-

դին. հորդորում էր ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը, մինչև Ղարաբաղի հարցը կլուծվի Փարիզի վեհաժողովում:[68] Հակառակ դեպքում, սպառնում էր նա, ուժ կգործադրվի և հայերի դիմադրությունը «արմատախիլ կարվի ամենավճռական միջոցներով»:[69]

Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը մերժում է անգլիական հրամանատարության այդ նոր պահանջը նաև՝ պատասխանելով. «Հայկական Ղարաբաղը փաստորեն իրազեկ է պահել ամբողջ աշխարհին, որ նա չի ընդունել և չի ընդունում իր տարածքում ադրբեջանական կառավարություն, ինչպես դա որոշել է վերջերս տեղի ունեցած Ղարաբաղի ամբողջ հայության համագումարը»:[70]

Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը Բաքվի Հայոց ազգային խորհրդին, Ադրբեջանի և Հայաստանի կառավարություններին, գեներալ Թոմսոնին և խաղաղության վեհաժողովում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին 1919թ. փետրվարի 26–ին ուղարկած նամակում, հիմք ընդունելով փետրվարի 19–ին համագումարի անունից Բաքվի Հայոց ազգային խորհրդին ուղարկված վերոհիշյալ նամակում շարադրվածը, մի անգամ ևս շեշտում էր, որ Ղարաբաղի հայությունը հարգանքով է վերաբերվում ազգերի ինքնորոշման սկզբունքին և միևնույն ժամանակ բողոքում է հայկական Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի կառավարության ոտնձգությունների դեմ: Ազգային խորհուրդը համագումարի անունից պնդում էր «իր իրավունքների պաշտպանությունը ինչպես Անդրկովկասի դաշնակիցների, այնպես էլ խաղաղության կոնֆերանսի առջև»:[71] Դրանից երկու օր առաջ, փետրվարի 24–ին, Ղարաբաղի ազգային խորհուրդը գեներալ Թոմսոնին հղած նամակում բողոքել էր, որ ադրբեջանական կառավարությունն իր բանակը տեղավորում է Ղարաբաղի կարևորագույն ռազմավարական կետերում՝ Ասկերանում, Խանքենդում, Ջաբուղում, Շուշիում, Կարյագինոյում և որ Ղարաբաղում շարունակում են գործել նաև թաթարական ջոկատներ՝ թուրք սպաների հրամանատարությամբ: Այնուհետև ավել է, որ Ադրբեջանական կառավարության այդ ագրեսիվ քայլերը հայ բնակչության մեջ բնականորեն առաջ են բերում անհանգստություն և զայրույթ: Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը վստահություն էր հայտնում, որ Փարիզի խաղաղության վեհաժողովը կբավարարի «Ղարաբաղի ամբողջ հայ բնակչության արտահայտած կամքը և հայկական այդ մարզը կմիավորի Հայաստանի Հանրապետությանը», իսկ մինչ այդ հարկ է միակ նպատակահարմար, հարցի ժամանակավոր լուծում համարել այն վիճակի պահպանումը, որը Ղարաբաղում գոյություն ուներ մինչև թուրքերի գալը, այսինքն՝ միանգամայն ազատ և անկախ լինելը: Ազգային խորհուրդը անգլիացի գեներալին հիշեցնում է, որ նրա կողմից Մոնկ Մեսսենի միջոցով ներկայացված նախագծից և Վարանդայի զորահրամանատար Սոկրատբեկ Մելիք–Շահնազարյանի անունով ուղարկված նամակից պարզ երևում է, որ ցանկանում են հիմնել Զանգեզուրի, Շուշիի, Կարյագինոյի և Ջիվանշիրի գավառների թուրք–հայկական ժամանակավոր իշխանություն՝ անգլիական ներկայացուցչի մասնակցությամբ: Դա հակասում է Ղարաբաղի հայության կամքին: Այդ կնշանակի ենթարկվել ադրբեջանական կառավարությանը, որն անընդունելի է Ղարաբաղի



հայության համար: Ազգային խորհուրդը պահանջում է, շտապ կարգով հայկական Ղարաբաղի սահմաններից դուրս բերել մուսուլմանական զորամասերը: Նա հույս էր հայտնում, որ անգլիական հրամանատարությունը ընմբռնումով կմոտենա իր պահանջներին և Ղարաբաղում կհաստատի ժամանակավոր ինքնակառավարում:[72]

Բաքվում տպագրվող անկուսակցական «Նաշե վրեմյա» թերթն այդ օրերին գրել է, թե Ղարաբաղի հարցում «Ադրբեջանը օգտվում է բրիտանական հրամանատարության աջակցությունից»: Այդպիսի քաղաքականությունը, շարունակում էր թերթը, ստեղծել է անելանելի դրություն, բնակչությունը վճռականապես հրաժարվում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, «անգլիական հրամանատարությունը ձեռնարկում է բոլոր միջոցառումները» այնտեղ հաստատելու Ադրբեջանի իշխանություն և «ամեն կերպ խոչընդոտում է բնակչությանը ճանաչելու հայկական ազգային խորհրդի իշխանությունը»: Թերթը համոզված էր, որ «անգլիական հրամանատարությունը Ղարաբաղի հարցում կանգ չի առնի ոչ մի միջոցառման առաջ, որպեսզի հասնի ցանկալի արդյունքների»: Դժվար է ասել, շարունակում էր թերթը, թե «անգլիական հրամանատարությունը ինչ նկատառումներով է մի ամբողջ գյուղացիական հասարակության վզին փաթաթում խորթ և թշնամական կառավարում»: Թերթը եզրակացնում էր, որ անգլիական քաղաքականությունը լի է արյունոտ և լուրջ բարդություններով, որովհետև «Ղարաբաղի բնակչությունը ինքնակամ չի համաձայնի իր վրա ընդունել ադրբեջանական կալվածատերերի և բեկերի իշխանությունը»:[73]

Արցախ–Զանգեզուրի ճակատագրի հարցը հետզհետե ավելի էր անհանգստացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Ադրբեջանի հանդեպ Ղարաբաղի՛ հայության չորրորդ համագումարի դիրքորոշումը և Հայաստանի հետ միավորվելու համար նրա վճռական պահանջը, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունուն ստիպում է դիմել որոշ գործնական քայլերի: Նա 1919 թ. փետրվարի 24–ին Թիֆլիս՝ Ալեքսանդր Խատիսյանին ուղարկած նամակում հաղորդում էր, որ հանդիպել է Անդրկովկասում անգլիական բանակի հրամանատար գեներալ–մայոր Ֆորեստե Ուոկերի հետ և նրան բանավոր բողոքել Ադրբեջանի կողմից Ղարաբաղի ու Զանգեզուրի նահանգապետություն ստեղծելու և Սուլթանովին նահանգապետ նշանակելու առթիվ: Վարչապետը Խատիսյանին հուշում՛էր հանդես գալ բողոքով, հիմք ընդունելով այն փաստը, որ Արցախ–Զանգեզուրի լեռնային շրջանների հայ բնակչությունը զենքը ձեռքին պաշտպանել է իր անկախությունը Ադրբեջանից և իր տարածքը համարում է «Հայաստանի անբաժան մասը»: Ներկայումս, բացատրում էր վարչապետը, պետք է արվի ամեն ինչ թույլ չտալ Արցախ–Զանգեզուրում մտցնել գեներալ–նահանգապետություն: Բաքվի անգլիական ուժերի հրամանատար գեներալ Թոմսոնը ամեն ջանք գործադրում էր Ղարաբաղի հարցը վճռել գեներալ Ռիչի միջոցով: Քաջազնունին այդ մասին տեղյակ պահելով Խատիսյանին, գտնում էր, որ անհրաժեշտ է կառավարությունը այդ առթիվ հանդես գա գրավոր հատուկ բողոքով:[74] Այդ նույն օրը Երևանում անգլիական ռազմական ներ-

կայացուցիչ գեներալ Ասսերը ՀՀ արտաքին գործերի նախարարությանն է հանձնում Բաքվից ուղարկված Թոմսոնի հեռագիրը, որով հայտնվում է, թե բժիշկ Սուլթանովը մեկնել է Շուշի «այնտեղ միայն կարգ ու օրենք պահպանելու համար» և որ նրա գործունեությունը կիսկի Փենջափից եկած 54–րդ գնդի հրամանատար Մոնկ Մեսսենը:[75] Մի քանի օր անց, փետրվարի 28–ին, ՀՀ արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը Անդրկովկասում անգլիական զինված ուժերի հրամանատարությանն ուղարկած նամակում բողոքում է Արցախ–Զանգեզուրի նկատմամբ անգլո–մուսավաթականների նկրտումների դեմ և պահանջում հրաժարվել իրենց գործողություններից ու սպասել Փարիզի խաղաղության վեհաժողովի որոշմանը:[76] Տիգրանյանը մարտի 21–ին Ասսերին ուղարկած նամակում բացատրում է, որ ամբողջ Հայաստանը իր քաղաքական վերածննդի ճանապարհին «ղարաբաղյան հարցին նայում է որպես իր պետության և կենսական շահերի ամրապնդման հետ անքակտելի կապված» և որ հայ ժողովրդի ազգային կյանքին ու քաղաքական շարժմանը Զանգեզուրի ու հայկական Ղարաբաղի մասնակցությունը պետական, աշխարհագրական, էթնիկական ու ռազմավարական տեսակետից միշտ էլ ունեցել է կարևոր նշանակություն: Այնուհետև նա ասում է, որ Զանգեզուրն ու Ղարաբաղը «հանդիսանում են Հայաստանի ներքին ուժերի կարևոր տարրերից մեկը», նրա արտաքին պաշտպանության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տարածք: Հայաստանի կառավարությունը անգլիական հրամանատարությունից պահանջում է Զանգեզուրն ու Ղարաբաղը ճանաչել, ինչպես անցյալում էր, Ադրբեջանից անկախ և չմտցնել Ադրբեջանի կողմից ստեղծված գեներալ–նահանգապետության կազմի մեջ, քանի որ դրանք հայկական են և հանդիսանում են Հայաստանի անբաժանելի մասը:[77] Սակայն, ինչպես երևում է Անդրկովկասում անգլիական ռազմական ուժերի հրամանատարի տեղակալ փոխգնդապետ Կեմբլիի մարտի 8–ին Ղարաբաղի ազգային խորհրդի անդամ Հրանտ Բահաթրյանին ուղարկած նամակից, անգլիացիները միտք չունեին հրաժարվել Ղարաբաղ–Զանգեզուրը ղեկավարելու գեներալ Թոմսոնի մեթոդներից: Փոխգնդապետ Կեմբլին մինչև անգամ Ղարաբաղի հայությանը սպառնում էր, որ եթե նրանք հրաժարվեն Թոմսոնի կարգադրությունները կատարելուց, ապա «խստորեն կպատժվեն», և վտանգի կենթարկվի այն հնարավորությունը, որը սպասվում է Խաղաղության վեհաժողովից: Իսկ վերջում՝ «գեներալ Թոմսոնի բոլոր տեսակի հրամանները Ղարաբաղի հայ բնակչության կողմից պետք է կատարվեն անառարկելիորեն»:[78] Ոչ ավել, ոչ պակաս, որովհետև այդ էին ցանկանում և մուսավաթական Ադրբեջանը և էլ անգլիական գաղութարարները: Հակառակ դեպքում վերջիններիս համար Բաքվի նավթին տիրանալու ձգտումը կդառնար միայն ցնորք: Գեներալ Թոմսոնը ատամներով պաշտպանում էր մուսավաթական Ադրբեջանի ձգտումը՝ ինչ գնով էլ որ լինի, ճզմել Ղարաբաղ–Զանգեզուրի դիմադրությունը: Այդ նույն Թոմսոնը, փոխարինելով Ֆորեստե Ուոքերին, մարտի 25–ին ժամանում է Երևան և հանդիպում ունենում արդեն Հովհաննես Քաջազնունուն փոխարինած Հայաստանի Հանրապետության նոր վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի հետ: Վերջինս գեներալին հայտնում է, որ Ղա-



րաբաղը Հայաստանի համար ունի քաղաքական նշանակություն և «հանդիսանում է Հայաստանի անքակտելի մասը», հետևապես, այն պետք է ղեկավարվի երկրամասի բնակչության կողմից ընտրված ազգային խորհրդի կողմից: Խատիսյանը պահանջում է Ղարաբաղից դուրս բերել Ադրբեջանի զորամասերը: Անգլիացի գեներալը փորձում էր Հայաստանի կառավարությանը համոզել, թե իբրև ինքը նպատակ ունի միայն սննդամթերքով ապահովել Ղարաբաղում կուտակված 30 հազար հայ և 10 հազար մուսուլման փախստականներին ու բացել ճանապարհները, քանի որ, իբր, Հայաստանը կտրված է Ղարաբաղից և չի կարող այնտեղ սննդամթերք ուղարկել: Խատիսյանի պահանջով գեներալ Թոմսոնը խոստանում է դադարեցնել ադրբեջանական զորամասերի տեղաշարժը Ղարաբաղում, առանց անգլիական ներկայացուցիչ Մոնկ Մեսսենի հետ համաձայնության, արգելել Սուլթանովի որևէ ձեռնարկում, միաժամանակ, Մոնկ Մեսսենի հետ կապ պահպանելու համար Հայաստանի կառավարության կողմից ներկայացուցիչ ուղարկել Ղարաբաղ և շարունակել Զանգեզուրը ղեկավարել այնտեղի ազգային խորհրդի կողմից:[79] Ալեքսանդր Խատիսյանը ապրիլի 8–ին համանման բողոք է ուղարկում նաև Թիֆլիսում գտնվող ամերիկյան ներկայացուցչությանը:[80]

Ի միջի այլոց, այդ հարցերին Ալեքսանդր Խատիսյանն անդրադարձել է իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գրքում: Նա գրում է, թե Թոմսոնը պաշտպանում էր Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու պահանջը: Նա իր այդ միտումը ներկայացրեց Ղարաբաղի և Զանգեզուրի բնակչությանը: Խատիսյանը նշում է, որ «Ղարաբաղի հարցին մէջ հայկական բոլոր կուսակցութիւնները միահամուռ կերպով համերաշխ էին» և բավականին ուժեղ ճնշում էին գործադրում կառավարության վրա, չնայած Ղարաբաղի շնորհիվ Ադրբեջանը «կը զրկէր մեզ նաւթէ եւ հացահատիկէ»: Բայց «հակառակ ատոր մենք մինչև վերջ անդրդուելի մնացինք Ղարաբաղի հարցին մէջ»: Խատիսյանի վկայությամբ անգլիական բոլոր ներկայացուցիչներն էլ՝ Թոմսոն, Ռիչ, Միլն, Տեյվի, Ասսեր, Ուորտրոպ և այլք, պնդում էին, թե չպետք է բոլոր պահանջները հիմնավորել միայն ազգագրական պայմաններով, կարևոր են նաև տնտեսական, աշխարհագրական և ռազմագիտական պայմանները: Նույնիսկ զորավար Բիչը մտածում էր ղարաբաղցիներին տեղափոխել Հայաստան, իսկ այնտեղի մահմեդականներին՝ Ղարաբաղ: Անգլիացիները, գալով Անդրկովկաս, իրենց առաջին գործը համարեցին Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանի մաս հայտարարելը: Իսկ երբ Ադրբեջանի կառավարության կողմից ստեղծվել էր Ղարաբաղ–Զանգեզուր նահանգապետություն և ժամանակավոր նահանգապետ նշանակվել բժիշկ Սուլթանովը, այդ մասին Երևանում Բրիտանական գերագույն կոմիսարի ներկայացուցիչ Վ. Ասսերը 1919 թ. փետրվարի 24–ին հատուկ նամակով տեղյակ է պահում Հայաստանի արտաքին գործերի նախարարին և փորձում այն պատրանքը ստեղծել, թե իբրև Սուլթանովը Ղարաբաղ է գնում «միայն օրենքը և կարգը պահպանելու համար»: Սակայն, գրում է Խատիսյանը, «Հայաստանը բոպէ մը անգամ չէր հաշտուեր Ղարաբաղը և Զանգեզուրը Ատրպէճանին զիջելու հնարաւորութեան հետ», որովհետև

Արցախ–Զանգեզուրի «հայերը կը գտնէին, որ Ղարաբաղի ժողովուրդը իր պատմական անցեալով և ուժով, քաջ ու անկախ հոգիով Հայաստանի ողնաշարը կը ներկայացնէ»:[81]

Այդ ժամանակ առ ժամանակ Հայաստանի իշխանությունները հիշում էին Ղարաբաղը: Այսպես՝ նախարարների խորհրդի նիստը 1919թ. մարտի 4–ին լսելով Ղարաբաղի Ջրաբերդի շրջանում միլիցիա և վարչություն կազմակերպելու մասին ներքին գործերի նախարարի զեկուցումը, որոշում է Ղարաբաղի և Զանգեզուրի շրջաններում միլիցիա և վարչություն կազմակերպելու համար բաց թողնել 150.000 ռուբլի:[82] Նույն ամսի 18–ին նախարարների խորհուրդը դարձյալ լսելով ներքին գործերի նախարարի զեկուցումը Ղարաբաղի դրության և ազգային խորհրդի գործունեության մասին, որոշում է.

1. Բողոքի հայտագիր ուղարկել անգլիական հրամանատարությանը Ղարաբաղի չեզոքությունը՝ բժիշկ Սուլթանովին գեներալ–նահանգապետ նշանակումով և Ղարաբաղ զինվորական ուժեր մտցնելով, խախտելու համար:

2. Իրազեկ դարձնել այդ մասին Թիֆլիսի և Բաքվի մեջ դիվանագիտական ներկայացուցիչներին և Ադրբեջանի պառլամենտի հայ անդամներին:

3. Պահանջել դուրս տանել Ղարաբաղից Ադրբեջանի զինվորական ուժերը:

4. Պահանջել, որ Ղարաբաղում առայժմ լինի միայն տեղական վարչություն, անգլիական գեներալ–նահանգապետի ղեկավարությամբ և Ղարաբաղի չեզոք բնույթը չխախտվի ոչ ոքի կողմից, մինչև որ այդ հարցը չվճռվի միջազգային կոնֆերանսում:

5. 8 միլիոն ռուբլի վարկից ուղարկել Գորիսի պետական գանձարան 2400000ռ. այն հաշվով, որ դրանից Ղարաբաղը սույն տարվա փետրվար–մարտ և ապրիլ ամիսներում ծախսի նույնպես ամսական 400000ռ.:[83]

ՀՀ նախարարների խորհրդի հաջորդ նիստերում շարունակվում էր նման բնույթի որոշումների ընդունումը: Ապրիլի 3–ի նիստը լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը Հայաստանի և Ադրբեջանի միջև ժամանակավոր սահմաններ որոշելու վերաբերյալ անգլիական գեներալ Բիչի առաջարկության մասին, որոշում է պատասխանել, որ «կառավարությունը համաձայն է, բայց Ղարաբաղի վերաբերմամբ նա կարող է խոսել Ղարաբաղի ազգաբնակչության ներկայացուցչական մարմինների համաձայնությամբ»,[84] իսկ ապրիլի 14–ի նիստում դարձյալ լսելով արտաքին գործերի նախարարի զեկուցումը Սուլթանովին Ղարաբաղի գեներալ–նահանգապետ նշանակելու վերաբերյալ Բաքվում անգլիական զորքերի հրամանատար գնդապետ Շատելվորտի Բաքվի լրագրերում արած հայտարարությունների մասին, որով անգլիական հրամանատարությունը խոստանում է Սուլթանովին իր աջակցությունը, որոշում է «Հանձնարարել արտաքին գործերի նախարարին հայտնել գեներալ Թոմսոնին, որ Հայաստանի կառավարությունը ադրբեջանական գեներալ–նահանգապետին նշանակելու հարցում կանգնած է նախկին տեսակետի վրա, որն արտահայտվել է անգլիական հրամանատարությանը ներկայացրած բողոքի մեջ»:[85]

Այսպիսի կիսատ–պռատ, գործնական բնույթից զուրկ որոշումներով երբեք Արցախ–Ղարաբաղի հարց չէր լուծվի: Հայաստանի կառավարությունն իրեն



թույլ չէր տալիս Ղարաբաղի հարցում դիմելու կոնկրետ և վճռական քայլերի: Իսկ Ղարաբաղում կյանքն ընթանում էր չափազանց լարված ու սպասումներով, հույսով, որ Հայաստանի կառավարությունը դրական կարձագանքի իր խնդրագրերին: Այնուամենայնիվ, ապրելու, պայքարելու, միավորվելու օրենքները իրենցն էին թելադրում: 1919թ. մարտ–ապրիլ ամիսներին Ղարաբաղի քաղաքական ուժերը ավելի միասնական դարձան և մի կողմ նետեցին ներքին հակասությունները: Դա էր Արցախի փրկության հրամայականը: Հանդես եկան կարճատև «Գոլոս նարոդա», «Արցախ» և «Նոր կյանք» թերթերը, որոնց պահպանված եզակի համարներից երևում է, որ բոլոր քաղաքական ուժերի ամենաառաջնային խնդիրը հայրենի երկրամասի պաշտպանությունն էր և Հայաստանի հետ միավորվելը: Իսկ դրա համար հիմնականը հանդիսանում էր ռազմական գործի կարգավորումը: Այստեղ է, որ թիրախը չէր վերանում: Ապաշնորհ և փառասեր Սոկրատբեկ Մելիք–Շահնազարյանը, որը դեռ մնում էր Վարանդայի զորահրամանատար, եկել–նստել էր Շուշիում ու շարունակում էր վայելել քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի հովանավորությունը: Դեկտեմբերի սկզբին Շուշիի գնդի զինվորների հետ Արցախ եկած 10–12 սպաները, Հովակ Սուփիանյանի գլխավորությամբ, խիստ դժգոհ էին Սոկրատբեկի բռնած դիրքից: Իսկ նա, ինչպես ասվել է, փորձում էր դառնալ Արցախի զինված ուժերի ընդհանուր հրամանատար, որին դեմ էին թե ազգային խորհուրդը և թե սպայակույտը: Մարտի 1-ին տեղի ունեցած սպաների ընդհանուր ժողովում զեկուցումով հանդես գալով սպայական միության վարչության նախագահ Արտաշես Վարդապետյանը, հարցը դրեց կտրուկ և պարզ: Կային նաև Սոկրատբեկին կողմնակից սպաներ: Պատասխանելով նրանց՝ Արտաշես Վարդապետյանը և Մարտիրոս Այվազյանը, պատռելով Սոկրատբեկի դիմակը, հայտարարեցին.

ա) Թուրքերի՝ Ղարաբաղ մուտք գործելու օրերին Քյաթուկից մինչև Մյուրիշեն ճակատում տաճկական ուժերին դիմադրություն ցույց տվող մեր մարտական ուժերի ղեկավարողը եղել է սպա Արշավիր Պետրոսյանը, զինվորական միության անդամ, որ գործել է ինքնուրույն և ոչ մի կապ չի ունեցել Սոկրատի հետ, առավել ևս՝ վերջինին ենթակա չի եղել:

բ) Մամնայի ձորում թուրքական զորքի վրա նախահարձակ է եղել Դիզակի շրջանի Կարմրակուճ գյուղացի Ասլանիկը իր վաշտով, որին օգնության են հասել Տումի գյուղացիները՝ Թևանի գլխավորությամբ, ապա Վարանդայի մի շարք գյուղերի մարտիկներն էին հասել, հասնում է նաև սպա Արշավիր Պետրոսյանը և ստանձնում կռվի ղեկավարությունը, որում ոչ մի մասնակցություն չի ունեցել Սոկրատը, բայց վայելել է Մամնայի հաղթանակի փառքը, որպես Վարանդայի հրամանատար, որովհետև Մամնան Վարանդայի գյուղերից է:[86]

Առանձնապես սուր խոսվեց այն մասին, թե ինչպես է Սոկրատբեկը խաբել Անդրանիկին ու չի կատարել նրա հրամանը: Այլապես, Անդրանիկը կմտներ Շուշի, և հավանական է, որ այլ կերպ կընթանար Արցախ–Ղարաբաղի պատմությունը: Ղարաբաղի թե սպաների միությունը և թե ազգային խորհուրդը սպասում էին, որ Հայաստանի Հանրապետությունը շուտով կուղարկի որևէ զինվորականի, որը կգլխավորեր երկրամասի ռազմական ուժերը: Այդ դեպ-

քում բոլոր շրջանային զորահրամանատարները համաձայն էին լինել նոր ընդհանուր հրամանատարի տեղակալներ: Այդ առաջարկությունը պաշտպանեցին Ալեքսան դային, Արտեմ Պետրոսյանը, Բագրատ Ղազանչյանը և այլ սպաներ:

Հետզհետե ավելի էին սրվում հակասությունները ազգային խորհրդի և քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի միջև: Ղարաբաղի հայության չորրորդ համագումարն անվստահություն էր հայտնել քաղաքագլխին և առաջարկել ինքնակամ հեռանալ պաշտոնից, անկախ նրանից, թե անգլիացիները նրա նկատմամբ ինչ վերաբերմունք ունեին: Ժամանակի մամուլը, և թե որոշ գործիչներ հակասական կարծիքներ են հայտնել Գերասիմ Մելիք–Շահնազարյանի մասին: Ճիշտն այն է, որ նա անկաշառ ու մաքուր լինելու հետ միասին, քմահաճ բնավորություն ուներ և ձգտում էր ամեն ինչում «խաղաղություն» պահպանել: Հայ ժողովրդական կուսակցության մի քանի անդամների նախաձեռնությամբ 1919 թ. մարտի 4–ին տեղի ունեցած խառն խորհրդակցական ժողովը, որին մասնակցում էին բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները, քննության առնելով ազգային խորհրդի և Գերասիմ Մելիք–Շահնազարյանի միջև ստեղծված տարաձայնությունների հարցը, քաղաքագլխին առաջարկվում է կոոպտացիոն կարգով մտնել ազգային խորհրդի կազմի մեջ և համատեղ աշխատել: Սակայն քաղաքագլուխը հրաժարվում է: Նրան համոզելու բոլոր փորձերն անցնում են ապարդյուն: Դա նշանակում էր, որ քաղաքագլխի հետագա աշխատելն անհնար էր:

Արցախում օր օրի ավելի էր ծանրանում կացությունը: Թուրք–անգլիացիների քաղաքականության հետևանքով առաջ եկած շրջափակումը Արցախ–Ղարաբաղին նետել էր չափազանց ծայրահեղ վիճակի մեջ: Մի կողմից էլ, ինչպես նշվել է, վարակիչ հիվանդությունները հնձում էին մարդկանց: Բծավոր տիֆից մարտի 9–ին մահանում է ազգային խորհրդի անդամ Իշխան Միրզաբեկյանը, մի մարդ, որը վայելում էր հասարակության հարգանքը: Նրա մահը ևս մեծ հարված էր արցախահայության համար:

Արցախ լուր է հասնում, որ արդեն Գորիս է ժամանել Զանգեզուր–Ղարաբաղի կոմիսար կապիտան Արսեն Շահմազյանը: Ազգային խորհրդի որոշմամբ մարտի 9–ին Գորիս է ուղարկվում Մելիքսեթ Եսայանը, որը մարտի 12–ին վերադառնալով՝ բերում է Արսեն Շահբազյանի նամակը և Հայաստանի կառավարության անունից հրահանգ: Այս փաստաթղթերում արցախահայությունից պահանջվում էր նույն վճռականությամբ շարունակել պայքարել մուսավաթական Ադրբեջանի դեմ: Հայաստանի կառավարությունը արցախահայությանը վստահեցնում էր, որ «պիտի դիւանագիտական ճամբով ամէն միջոց գործի դնի, որ Ադրբեջանը հեռու քաշւի Ղարաբաղից»:[87] Մելիքսեթ Եսայանը բերել էր նաև 100 հազար ռուբլի, որը մի կաթիլ էր Ղարաբաղի ծով կարիքների մեջ:

Անգլիական կողմի խաղաքարտերը հետզհետե բացահայտվում էին, և արցախահայությունը տեսնում է նրանց երկրորդ երեսը: Ղարաբաղի հայության չորրորդ համագումարից մի քանի օր անց նորընտիր ազգային խորհուրդը Բաքու էր ուղարկել մի պատվիրակություն՝ գեներալ Թոմսոնին հանձնելու



Ղարաբաղի վիճակի մասին շարադրված բողոք–նամակը: Ազգային խորհուրդը հույս է հայտնում, որ Փարիզի վեհաժողովը կբավարարի Ղարաբաղի հայության խնդիրքն ու պահանջը և երկրամասը, որպես հայկական տարածք, կմիացնի իր մայր ժողովրդին:[88] Արցախի պատգամավորությունը գեներալ Թոմսոնին խնդրում է վերացնել մուսավաթական Ադրբեջանի նկրտումները Ղարաբաղի նկատմամբ և վերջինիս տալ ինքնավարություն: Մուսավաթական Ադրբեջանը և նրա դրած ժամանակավոր նահանգապետ Սուլթանովը Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին չէին ցանկանում անգամ լսել: Սուլթանովը թուրք դահիճների և անգլիական իմպերիալիստների ամենաջերմ աջակցությամբ պաշտպանում էր Ղարաբաղում «արյան բաղնիք» կազմակերպելու քաղաքականությունը: Իսկ դրանում նրան բոլորից շատ խրախուսում էր Խան Խոյսկու կառավարությանը փոխարինած Գ. Ուսուբբեկովի կառավարությունը: Այդ ամենի մասին Թոմսոնին իրազեկ պահելով՝ պատվիրակությունը նրան խնդրում է լռության չմատնել և ձեռնարկել գործնական միջոցներ: Գեներալ Թոմսոնը դժգոհ մնալով այդ պատվիրակությունից՝ Ղարաբաղից պահանջում էր նոր պատվիրակություն ուղարկել իր մոտ: Մարտի 20–ին հրավիրվում է խորհրդակցական ժողով՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Երկարատև քննարկումից հետո որոշվում է նոր պատվիրակություն ուղարկել Բաքու՝ հանդիպելու անգլիական հրամանատարության հետ:[89] Պատվիրակությունը Բաքու է մեկնում մարտի 22–ին: Թոմսոնին փոխարինած գնդապետ Դ. Շատելվորտի և Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանի ու Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի միջև մարտի 26–ին տեղի ունեցած զրույցի ժամանակ արցախահայության ներկայացուցիչները պնդում էին, որ Ղարաբաղի բնակչությունը ոչ մի քայլ չի նահանջի իր չորրորդ համագումարի որոշումներից: Շատելվորտի այն հարցին, թե ինչի՞ է ձգտում Ղարաբաղի հայությունը, ազգային խորհրդի նախագահը պատասխանում է. «Դեպի մեծ Հայաստանը, որի հետ ամեն ինչ ընդհանուր է»: Անգլիական գնդապետի այն պնդումը, թե Ղարաբաղի հայերը պետք է ենթարկվեին Ադրբեջանին, քաղաքագլուխը պատասխանում է, թե Ադրբեջանի կառավարությունը ի վիճակի չէ անգամ իր տանը կարգ հաստատել, ուր մնաց, թե կարողանա կարգ հաստատել Ղարաբաղում: Վրդովված Շատելվուրտը փորձում է խոսել ուժի դիրքից, ասելով, Ադրբեջանի և նրա գեներալ–նահանգապետության դեմ բոլոր տեսակի դիմադրությունը ուղղված է նաև Անգլիայի դեմ: Մենք այնքան ուժեղ ենք, ասում է նա, որ կարող ենք ձեզ ստիպել ենթարկվել: Քաղաքագլուխը կտրուկ պատասխանում է, թե Ղարաբաղի դռները կփակվեն Ադրբեջանի առջև, և երբեք չի ընդունվի նրա իշխանությունը:[90]

Դա էր արցախահայության անսասան կամքն ու մուսավաթական Ադրբեջանի ու անգլիական իմպերիալիստների հակահայկական գործողությունների պատասխանը:

## 2. ՂԱՐԱԲԱՂԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ: ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ 5-ՐԴ, 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ինչպես ասվել է, 1919 թ. գարնանը և ամռանը Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձություններն ավելի ծանր էին ու ողբերգական: Երկրամասը, գտնվելով շրջափակման մեջ՝ Հայաստանից կտրված, շարունակում էր հերոսաբար պայքարել անգլո–մուսավաթական ուժերի կողմից իրագործվող բռնարարքների դեմ: Սովը, հիվանդությունները, օրավուր աճող մահացությունը, տասնյակ հազարավոր փախստականների առկայությունը, թուրք–թաթարների կրկնվող ասպատակություններն ու այլ հանգամանքներ խիստ բացասական էին ազդում երկրամասի բնականոն կյանքի վրա: Երկրամասի ամբողջ բնակչությունը և քաղաքական կուսակցությունները կենաց ու մահու պայքար էին մղում իրենց երկրամասի ազատությունը պահպանելու համար: Արցախահայության համար կենսական խնդիր էր դառնում մայր հայրենիքի հետ միավորվելու պայքարի անհրաժեշտությունը:

Ազգային խորհուրդը գտնում էր, որ Արցախը Հայաստանի հետ հնարավոր է միավորել միայն այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետությունը կատարեր գործնական քայլեր, այսինքն՝ Արցախ ուղարկեր իր ներկայացուցչին, որը պետք է իր ձեռքում կենտրոնացներ երկրամասի ամբողջ ղեկավարումը: Բացի այդ, Զանգեզուր ուղարկեր թեկուզ մեկ գունդ, որը կարողանար անհրաժեշտության դեպքում մտնել Արցախ և, ամենակարևորը, հենց սկզբից Արցախ ուղարկեր դրամական միջոցներ, որը հնարավորություն կտար կազմակերպել ռազմական ուժը և կյանքի կոչել երկրամասի հիմնարկ–ձեռնարկությունները: Ազգային խորհուրդը զգուշացնում էր, որ եթե Փարիզի խաղաղության վեհաժողովն անգամ Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու որոշում ընդունի, միևնույնն է, Ադրբեջանը չի հաշտվի և ամեն կերպ կձգտի խոչընդոտել ու առաջ բերել ընդհարումներ: Հետևապես, դրան պետք է նախապատրաստվել այժմվանից:[91]

Հայաստանի կառավարությունը, ի վերջո, 1919 թ. գարնանը կատարում է հուսադրող որոշ քայլեր: Անդրկովկասում անգլիական բանակի հրամանատարության համաձայնությամբ ապրիլի սկզբին փոխգնդապետ Միքայել Արզումանյանը նշանակվում է անգլիական հրամանատարությանն առընթեր հայկական Ղարաբաղի «գործերի և կառավարման» գծով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ:[92] Արզումանյանին հանձնարարվում է «ջանքեր գործադրել» և Ղարաբաղի «կապն ամրապնդել» Զանգեզուրի ու Հայաստանի կառավարության հետ: Այդ նպատակով մեկ միլիոն ռուբլի է տրամադրվում Արզումանյանին:[93]

Թոմսոնին փոխարինած գնդապետ Դ. Շատելվորտը հատուկ հանձնարարություն ուներ՝ ամեն գնով ծնկի բերել Արցախ–Զանգեզուրը և այն հանձնել Ադրբեջանի ողորմածությանը: Շատելվորտը ապրիլի 3–ին ստորագրում է մի հրաման, որով Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի բնակչությանը տեղյակ է պահվում:



1. 1919 թ. հունվարի 15–ին ադրբեջանական կառավարության որոշմամբ բժիշկ Սուլթանովը նշանակվել է Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ–նահանգապետ և օգտվում է անգլիական հրամանատարության աջակցությունից:

2. Գեներալ–նահանգապետության կից կազմակերպվում է խորհուրդ՝ հայերի և մուսուլմանների կողմից վեցական հոգու մասնակցությամբ:

3. Խորհրդի կազմի մեջ կարող է մտնել անգլիական կողմից մեկ սպա:

4. Վիճելի բոլոր հարցերը վերջնական լուծում կստանան Խաղաղության կոնֆերանսում:

5. Գեներալ-նահանգապետության տարածքում ռազմական զորամասերի տեղաշարժման մասին նախօրոք պետք է տեղյակ պահվի անգլիական միսիային:

6. Գեներալ–նահանգապետությունից և նրա մարմիններից դուրս եկող բոլոր հրամաններն ու միջոցառումները պետք է իրագործվեն անառարկելիորեն և անգլիական հրամանատարությունը լիովին կաջակցի բոլոր օրինական միջոցառումներին:[94]

Դա քիչ համարելով, անգլիական հրամանատարությունը միևնույն ժամանակ ռոոգայթներ էր լարում արցախահայության ազատագրական պայքարի ղեկավարների դեմ: Անդրկովկասում գտնվող անգլիական 39–րդ բրիգադի հրամանատար գնդապետ Կլոտերբերգի կողմից 1919 թ. ապրիլի 3–ին Բաքվում կազմած զեկուցագրից տեղեկանում ենք, որ նա Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի որոշ անդամների հետ ունեցած զրույցից եկել էր այն համոզման, որ նրանք «կանգնած են ամենածայրահեղ անհաշտելիության տեսակետի վրա»: Անգլիական գնդապետի հաղորդման համաձայն «հայերից ամենաանհաշտը» ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանն է, որը հայտարարում է, թե «հայերը... չեն ենթարկվի Ադրբեջանի հրամաններին» և որ իրենք դիմադրություն ցույց կտան նրանց, ովքեր կփորձեն ներխուժել երկրամաս: Շատելվորտը Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահից պահանջում է հրաժարվել նման հայտարարություններից:[95] Անգլիական հրամանատարության ճնշման տակ Ասլան Շահնազարյանը ստիպված հրաժարվում է Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահի պաշտոնից:[96] Ազգային խորհրդի նախագահի պարտականությունները կրկին իր վրա է վերցնում Եղիշե Իշխանյանը: Գնդապետ Կլոտերբերգը և մայոր Մոնկ Մեսսենն այն համոզման էին, որ Ադրբեջանի զավթողական քաղաքականության դեմ արցախահայության պայքարը իբր ՀՅԴ ղեկավարների քարոզչության հետևանք է, հետևապես պետք է «նրանցից ազատվել»: Կլոտերբերգը գեներալ Բիչին հաղորդում է, որ Մոնկ Մեսսենը Ղարաբաղ է «վերադարձել ցուցմունքներով, որպեսզի վերջնականապես հասկացնել տա հայերին, որ մենք *կանգնած ենք Ադրբեջանի թիկունքում*» (ընդգծումը մերն է– Հ.Ա.):[97]

Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունը Բաքվից Շուշի է վերադառնում ապրիլի 4–ին և իր կատարածի մասին ապրիլի 5–ին

հանգամանալից զեկուցում ազգային խորհրդին: Պարզվում է, որ Շատելվորտը առաջարկել էր հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար, որպեսզի ինքը հնարավորություն ունենա խոսելու ժողովրդի ներկայացուցիչների հետ: Միևնույն ժամանակ նա ասել էր, որ համագումարի հրավիրման օրվա մասին լրացուցիչ կհայտնի անգլիական միսիայի միջոցով: Ազգային խորհրդի համար միանգամայն անսպասելի էր անգլիական հրամանատարության դիրքը ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանի նկատմամբ: Պատվիրակության անդամ Հրանտ Բահաթյանը իմանալով, որ Հովհաննես Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանն այդ օրերին գտնվում էին Թիֆլիսում, Բաքվից մեկնում է այնտեղ, հանդիպում նրանց հետ և մանրամասն տեղյակ պահում Ղարաբաղում տիրող իրավիճակի մասին: Քանի որ Հրանտ Բահաթրյանը նրանց հետ հանդիպել էր առանձին–առանձին, ուստի երկուսն էլ «իրարու հակասող խորհուրդներ են տուել Հ. Բահաթրեանին»:[98] Ալեքսանդր Խատիսյանը «Ղարաբաղի հայության բռնած դիրքը համարել էր ուղիղ և ճիշտ, պատշաճ ու համապատասխան իր պատմական անցեալին և ունեցած ներկայի դերին ու կոչմանը, որպէս ազատատենչ ժողովրդի, ուստի խորհուրդ է տուել, որ Ղարաբաղը մնայ անսասան իր դիրքում, շարունակէ իր ընդդիմութիւնը և չենթարկւի անգլիական հրամանատարութեան պահանջին, չճանաչէ Ադրբէջանի իշխանութիւնը, որի ոտնձգությունների դէմ Հայաստանի կառավարութիւնը անհրաժեշտ քայլեր կառնէ դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների մօտ, ազդեցութիւն գործ դնելու անգլիական հրամանատարութեան վրայ, որ Ղարաբաղը բռնի կերպով չենթարկէ Ադրբէջանին», իսկ Հովհաննես Քաջազնունին, ելնելով Հայաստանի Հանրապետութեան դժվար կացությունից, խորհուրդ է տալիս «բանակցութեան մէջ մտնել անմիջականօրէն Ադրբէջանի իշխանութեան ներկայացուցչի՝ Սուլթանովի հետ, համաձայնութեան եզր գտնել առժամապէս, քանի որ Ղարաբաղի և մեր այլ հողերի՝ Հայաստանին կցելու հարցը պիտի որոշւի հրաւիրուելիք համաշխարհային վեհաժողովում»:[99] Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը պաշտպանում էր Հովհաննես Քաջազնունու տեսակետը: Ի միջի այլոց, պատվիրակության անդամ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը Բաքվի ռուսաց ազգային խորհրդի սրահում համարձակ ելույթ է ունենում և ի լուր բոլորի հայտարարում, թե Ղարաբաղը հավատարիմ է մնում իր պատմական անցյալին և «միշտ ձգտել է միանալ ազատարար քրիստոնյա Ռուսաստանին և այժմ էլ նա չի ճանաչում Ադրբեջանի իշխանությունը, դարձյալ սպասում է, որ ռուսական զորքերը կգան, կգրավեն իրենց պատկանող հողերը, որոնցից մեկն էլ Ղարաբաղն է»:[100] Ժողովրդական Սահմանադրական կուսակցությունը քննադատաբար էր ընդունել իր անդամ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի այդ ելույթը, որովհետև վերջինս հակասել էր ազգային խորհրդի դիրքին: Խնդիրը հետևյալն է. չպետք էր բացահայտորեն դրսևորել արցախցիների ռուսական կողմնորոշումը, որովհետև իբր անգլիացիները այդ տեսնելով, հակառակ դիրք էին բռնել և թեքվել ադրբեջանցիների կողմը:



Ազգային խորհուրդը որոշում է Ղարաբաղի հայության հաջորդ համագումարը հրավիրել ապրիլի 23–ին և իր որոշման մասին անգլիական միսիայի միջոցով հայտնում է Շատելորտին: Այնուհետև, ազգային խորհուրդը սկսում է նախապատրաստել համագումարի հրավիրումը: Անգլո–մուսավաթական զավթիչների հակահայկական քաղաքականությունը հասցրեց նրան, որ 1919 թ. ապրիլի սկզբին Ղարաբաղում ուժեղացան հայ–մուսուլմանական ընդհարումները: Դեռևս մարտի 16–ին թուրքերի կողմից առաջին անգամ ուժեղ հարձակում էր տեղի ունեցել Դիզակի Խծաբերդ գյուղի վրա: Սակայն խծաբերդիցների և օգնության հասած Արտեմ Լալայանի ուժերը զգալի կորուստ էին պատճառել թշնամուն և նրան դուրս քշել Խծաբերդի սահմաններից: Իսկ ապրիլի սկզբներին, երբ հաճախ էին կրկնվում Աղդամի կողմից թուրքերի հարձակումները, հայկական ուժերը Ասկերանը վերցնում են իրենց ձեռքը և խզում կապը Աղդամի հետ: Անդրկովկասում գտնվող Անտանտի ռազմական ուժերի հրամանատարությունը որոշում է շտապ Ղարաբաղ ուղարկել մի հանձնաժողով՝ բաղկացած Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներից:[101] Չնայած ընդհարումների հետագա ծավալումը կանխվեց, բայց և այնպես, ընդհանուր մթնոլորտը շիկանում էր, և Սուլթանովն ու անգլիական հրամանատարությունը դառնում էին ավելի կոփի: Նրանք իրենց հակահայ գործողություններով էլ ավելի էին ծանրացնում Արցախի քաղաքական և տնտեսական ընդհանուր վիճակը: Ղարաբաղի ազգային խորհուրդն այդ մասին 1919 թ. ապրիլի 19–ին հանգամանորեն հաղորդելով Թիֆլիսում գտնվող իր ներկայացուցչին, ցուցում է տալիս՝ բոլոր ջանքերը գործադրել Ղարաբաղի քաղաքական հարցը լուծել առանց ընդհարումների: Մինչդեռ, մուսավաթական Ադրբեջանը և իմպերիալիստական տերությունները, մանավանդ, Անգլիան, գործում էին հակառակ ուղղությամբ և ամեն կերպ փորձում սեպ խրել արցախահայության և նրա ազգային խորհրդի միջև:[102]

Ղարաբաղի ազգային խորհուրդը, 1919 թ. ապրիլյան այդ օրերին, աշխատում էր չափազանց լարված: Ապրիլի 10–ին ազգային խորհուրդը և զինվորական միության վարչությունը, համատեղ քննարկելով ստեղծված վիճակը, որոշում են շտաբը Շուշիից տեղափոխել Տոնավարզ գյուղ, քաղաքում թողնելով 150 հոգուց բաղկացած մի վաշտ: Ապրիլի 11–ին անգլիական միսիան ազգային խորհրդին հայտնում է Շատելվորտի պահանջը՝ իբր մթնոլորտը խաղաղեցնելու համար պետք է երկրամասից հեռանան Եղիշե Իշխանյանը, Արտաշես Վարդապետյանը, Հովակ Ստեփանյանը, Տիգրան Տեր–Գրիգորյանը և Նիկոլայ Տեր–Գաբրիելյանը: Միանգամայն ակնհայտ է, որ անգլիացիները կատարում էին Սուլթանովի ցանկությունը: Ազգային խորհրդի անդամների մասին բոլոր տվյալներն անգլիացիները ստանում էին հենց Սուլթանովից: Անգլիական հրամանատարության այդ սանձարձակ պահանջը բուռն ցասում է առաջ բերում ինչպես քաղաքի, այնպես էլ ամբողջ երկրամասի հայության շրջանում: Այդ ամենի մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը տեղյակ պահելու և խնդրելու համար, որպեսզի

բողոք հայտնի անգլո–ադրբեջանական այդ ոտնձգությունների դեմ, Մելիք-սեթ Եսայանը կրկին մեկնում է Գորիս:

Դեռ Բաքվում, Ղարաբաղի ազգային խորհրդի պատվիրակությունը տեղեկություն էր ստացել՝ դեռևս 1918 թվականի ամռանը Թիֆլիսում քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանի ստացած 750 հազար ռուբլին նախատեսված է եղել ոչ թե միայն քաղաքի, այլև ամբողջ երկրամասի կարիքների համար: Մինչդեռ քաղաքագլուխը հայտարարել էր, թե այդ գումարը նախատեսված է ծախսել միայն քաղաքի կարիքների համար: Բաքվից վերադառնալուց հետո Գերասիմ Մելիք–Շահնազարյանից ազգային խորհուրդը պահանջում է հաշվետվություն ներկայացնել այդ գումարը ծախսելու վերաբերյալ: Քաղաքագլուխը հրաժարվում է՝ պնդելով, որ այդ գումարից 670 հազարը ծախսել է քաղաքի կարիքների համար, որի վերաբերյալ կան համապատասխան որոշումներ ու փաստաթղթեր: ՀՅԴ Ապառաժի ԿԿ–ն քննելով այդ հարցը, եզրակացրեց, որ միակ միջոցը Գերասիմ Մելիք–Շահնազարյանի քաղաքից հեռանալն է: Դրա համար նրան տրվում է 24 ժամ: Նույն մտքին է հանգում նաև ազգային խորհուրդը, երբ ապրիլի 18–ին քննարկում է այդ հարցը: Ապրիլի 19–ին քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը թողնում է Շուշին և մեկնում Թիֆլիս: Այստեղ խնդիրը Գերասիմ Մելիք–Շահնազարյանի հարցը չէր, այլ այն, որ Շուշիի քաղաքային խորհուրդը չէր ենթարկվում ազգային խորհրդին և գործում էր ինքնագլուխ: Մինչդեռ, ինչպես հայտնի է, ազգային խորհուրդը, որն ընտրվել էր Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի կողմից, օրենսդիր և գործադիր մարմին էր ամբողջ Ղարաբաղի համար և երկրամասի բոլոր մարմինները պարտավոր էին ենթարկվել և կատարել նրա բոլոր որոշումները:

***

1919թ. ապրիլի 23–29–ը Շուշիի թեմական դպրոցի դահլիճում տեղի է ունենում Ղարաբաղի հայության **հինգերորդ** համագումարը:[103] Անգլիական միսիան ապրիլի 23–ի առավոտյան ազգային խորհրդին հայտնում է, որ Շատելվորտն արդեն ժամանել է Շուշի և կմասնակցի համագումարին: Նաև հայտնվում է, որ Շատելվորտը դեմ է ազգային խորհրդի նախագահի պաշտոնակատար Եղիշե Իշխանյանի մասնակցությանը համագումարին: Ազգային խորհուրդը նախքան համագումարի սկսելը, որոշում է թյուրիմացությունից խուսափելու համար կատարել Շատելվորտի այդ վերջին պահանջը: Նաև որոշվում է, որ համագումարի բացումը պետք է կատարի Աշոտ Մելիք–Հովսեփյանը: Խնդրում են թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Տեր-Գրիգորյանին մասնակցել համագումարին: Թեմի առաջնորդը սիրով համաձայնվում է և համագումարի հենց առաջին նիստում ընտրվում է պատվավոր նախագահ: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Գյուլիստանի ներկայացուցիչը,[104] ինչպես և Շատելվորտն ու Սուլթանովը:

Համագումարի նախագահ է ընտրվում Նիկոլայ Իսախանյանը, փոխնախագահ՝ Հովհաննես Առաքելյանը (մենշևիկ), քարտուղարներ՝ Արշակ Առուստամյանը (դաշնակցական) և Թեոդորոս Տեր-Հովհաննիսյանը (մենշևիկ): Համագումարն իր աշխատանքները սկսում է երեկոյան ժամը վեցին: Հաստատվում է օրակարգը.

ա) Ադրբեջանի նահանգապետության հարցը, բ) Վարչական մարմնի վերակազմության հարցը, գ) Շրջանային խորհուրդների վերակազմությունը, դ) Դրամական հաշիվներ, ե) Ազգային խորհրդի գործունեության շուրջ զեկուցում, զ) Քոչի խնդիրը, է) Ազգային խորհրդի հրաժարականը և նրա ընտրությունը:

Բացման խոսքով հանդես է գալիս Աշոտ Մելիք–Հովսեփյանը: Նա համառոտակի խոսում է Ղարաբաղի հայության չորրորդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում ազգային խորհրդի կատարած աշխատանքների մասին և առանձնապես շեշտում, որ Ադրբեջանի որոշմամբ անգլիական հրամանատարությունը փորձում է արցախահայությանը ենթարկացնել Ադրբեջանի իշխանությանը: Հենց հինգերորդ համագումարը հրավիրվել է անգլիական հրամանատարության պահանջով, որպեսզի «հրամանատարութիւնը անմիջականօրէն խօսէ հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ և լսէ նրանց խօսքը»:[105] Դրանից հետո դահլիճ են մտնում գեներալ Շատելվորտը և նրան ուղեկցող մայոր Մոնկ Մեսսենը: Շատելվորտը, հանդես գալով երկարաշունչ ճառով, շեշտում է, որ ինքը գեներալ Թոմսոնի հետ Կովկաս է եկել հինգ ամիս առաջ և վարում է նրա շտաբի գլխավորի պաշտոնը: Իսկ հիմա, շարունակում է գնդապետը, ինքը Բաքվի շրջանի զորքերի հրամանատարն է, որի մեջ է մտնում նաև Ղարաբաղը: Ապա Շատելվորտը փորձում է արդարացնել Կովկասում բրիտանական քաղաքականությունը: Նա հայտնում է, որ բրիտանական հրամանատարությունը պետք է իրագործի երկու հիմնական խնդիր. Անդրկովկասի սահմաններից հեռացնի թուրքերին և գերմանացիներին, Բաթումի ու Բաքվի միջև վերականգնի երկաթուղային հաղորդակցությունը և երկրամասում հաստատի խաղաղություն ու կարգ: Այնուհետև անգլիական հրամանատարն անդրադառնում է Ղարաբաղի և Զանգեզուրի հարցին, նշելով, թե Արարատյան կառավարությունը համաձայն չէ Ղարաբաղի հարցի վերաբերյալ անգլիական հրամանատարության կարծիքի հետ, միայն նա համաձայն է Ադրբեջանի երկաթուղիներով, մանավանդ Եվլախ կայարանով, պարեն մատակարարել գաղթականներին և սովյալներին: «Մի քանի հայեր,– շարունակում է գնդապետը,– կարծում են, թե Ադրբեջանը մտադիր է գրավել Ղարաբաղը տաճիկներին հանձնելու համար: Դա ճիշտ չէ: Ադրբեջանը մտադիր է միայն իրավակարգ մտցնել երկրի մեջ և բաց անել բոլոր ճանապարհները: Դրա հետ միանգամայն համաձայն է բրիտանական հրամանատարությունը»: Եվ ապա, մոտենալով իր հիմնական խնդրին, գնդապետն ավելի է ոգևորվում. «...Բժիշկ Սուլթանովին մենք ճանաչում ենք իբրև լավ վարչագետ... Պետք է նկատի ունենալ, որ հողամասային վիճելի հարցերը պիտի վճռվեն Հաշտարար խորհրդաժողովում... Ես նորից եմ ուզում նկատել, որ Ղարաբաղի մասին արած մեր ժամանակավոր որոշումը ոչ մի կերպ չի ազդելու Խորհրդաժողովի վրա. Նույն ձևով էլ Նախի-

ջևանի այժմյան դրությունը նշանակություն չունի Խորհրդաժողովի համար:

Այստեղ կա անգլիական ներկայացուցչություն, որը մշտական կապ ունի անգլիական բարձր հրամանատարության հետ և ձեր կարիքների մասին միշտ հաղորդում է այնտեղ: Այստեղ է գալու ամերիկյան ներկայացուցիչ՝ գաղթական գործերի համար, գալու է նույնպես Լոնդոնի «Թայմս» թերթի աշխատակիցը, որ տեղեկություններ է հաղորդելու այստեղի դրության մասին Լոնդոն և Փարիզ:

Ամբողջ պատասխանատվությունը ծանրանում է Սուլթանովի վրա: Ի նկատի ունենալով նրա վրա դրված պարտականությունների դժվարությունը՝ **առաջարկում եմ** այստեղ հավաքվածներին ցրվել իրենց տեղերը և ժողովրդին համոզել այն, ինչ լսեցիք ինձնից և աջակցեք մեզ:

Բացի դրանից, կա նաև մի այլ կարևոր հարց.դա քոչվորների հարցն է, նրանք պետք է բարձրանան դեպի սարերի արոտները: Ես ցանկանում եմ այդ հարցը ձեզ հետ միասին խաղաղ ճանապարհով վճռել»:[106]

Գեներալ Շատելվորտը կտրուկ հայտարարում է, թե անգլիական հրամանատարության որոշմամբ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, ենթարկվի նրան, մինչև որ Ադրբեջանի և Հայաստանի սահմանները ճշտվեն հետագայում:

Հետո ելույթ է ունենում Վահան եպիսկոպոսը: Նա տեղյակ լինելով Հրանտ Բահաթրյանի և Հովհաննես Քաջազնունու միջև տեղի ունեցած վերոհիշյալ զրույցին, իր ելույթում նշում է, որ Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու և նրան ենթարկվելու խնդիրը շատ սուր կերպարանք է ստացել: Շատելվորտի առաջարկից պետք է հասկանալ, որ Ադրբեջանի իշխանությունը պետք է ճանաչվի ժամանակավոր, իսկ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի հետագայում, միջազգային վեհաժողովում: Հիմա խոսքը Ադրբեջանի իշխանությունը ժամանակավոր ճանաչելու մասին է:

Համագումարի պատգամավորները խիստ վրդովված էին: Ջրաբերդի շրջանից եկած պատգամավորներից մեկը նշում է, որ եթե այսօր ժամանակավոր ընդունենք Ադրբեջանի իշխանությունը, վաղը դա կդառնա մշտական: Դրա համար էլ մենք ժամանակավոր չենք կարող ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Խոսում են նաև պատգամավորներ Համբարձում Մելքումյանը, Բախշի Մուրադյանը, Շահնազար Գասպարյանը և ուրիշներ, որոնք, պաշտպանելով չորրորդ համագումարի ընդունած սկզբունքները, առաջարկում են մերժել Ադրբեջանի իշխանությունը, սակայն ընդունելի էին համարում Ղարաբաղում ժամանակավոր անգլիական կոմիսար նշանակելու գաղափարը, որը պետք է երկրամասը կառավարեր մինչև հարցի վերջնական լուծումը: Շատելվորտը դժգոհ հեռանում է համագումարից:

Հաջորդ օրը, ապրիլի 24–ին, Շատելվորտը հանդիպում է ունենում ազգային խորհրդի նախագահի պաշտոնակատար Եղիշե Իշխանյանի հետ և նրան մեղադրում անգլիական հրամանատարության առաջարկությունը համագումարի կողմից մերժվելու համար: Եղիշե Իշխանյանը Շատելվորտին պատասխանում է, թե համագումարը կատարել է միայն ժողովրդի կամքը: Ապա շեշտում է, որ արցախցիները ատելով ատում են ադրբեջանաթուրքական հանցագործներին, որոնք հազարավոր հայերի արյուն են թափել Բաքվում, Ղարաբաղում և այլ վայրերում: Եթե համագումարի կողմից ընտրված ազգային խորհուրդը մերժել է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, ապա կատարել է ժողովրդի կամքը և ցանկությունը, ինչն արտահայտել են իր ներկայացուցիչները համագումարում: Այնուհետև, արտահայտելով համագումարի պատգամավորների ցանկությունը, Եղիշե Իշխանյանը Շատելվորտից պահանջում է, որպեսզի անգլիական հրամանատարությունն իր զինվորականներից մեկին նշանակի Ղարաբաղի գեներալ–կոմիսար՝ հավասար թվով հայ և թուրք օգնականների հետ երկրամասը կառավարելու, մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը:

Հաջորդ օրը, ապրիլի 25–ին, Շատելվորտը զրույց է ունենում նաև Հադրութից պատգամավոր, ուսուցիչ Ստեփան Ստեփանյանի հետ: Նա ապշում է, երբ ուսուցիչը հայտարարում է, թե ինքը պատրաստ է իր տասը տղաների հետ հայրենի Ղարաբաղի համար կռվել Ադրբեջանի իշխանության դեմ: Ստեփան Ստեփանյանն ասում է, որ այս հողը հազարավոր տարիներ մերն է եղել: Թուրքը եկվոր է, ուժով է տեղ գրավել մեր հողում և այսօր իր սեփականությունն է համարում այն: Ես, շարունակում է նա, պատասխանատու եմ ինձ պատգամավոր ընտրած ժողովրդի առաջ և չեմ կարող գնալ նրա կամքին հակառակ: Ինչպես անցյալում, հիմա էլ քոչը սար բարձրանալու հնարավորություն կունենա, սակայն առանց մեր կողմից Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու:[107]

Ինչպես երևում է, Շատելվորտը թե՛ համագումարում արտասանած իր ճառում և թե գեներալ Թոմսոնին ուղարկած զեկուցագրում ճիգեր էր գործադրում անցկացնելու անգլիական տեսակետը: Բայց Ղարաբաղի հայության ներկայացուցիչները մնում են անդրդվելի: Համագումարում նրանք միանշանակ Շատելվորտին պատասխանում են, որ «Ադրբեջանը միշտ աջակից և գործակից է եղել Տաճկաստանի կողմից ընդհանարապես հայերի և մասնավորապես Ղարաբաղի հայության դեմ ուղղված գազանություններին, որպիսին մնում է և այժմ...»: Նրանք գտնում էին, որ թուրքերին Անդրկովկաս է հրավիրել Ադրբեջանը և նրանց հնարավորություն տվել ներխուժել Ղարաբաղի խորքերը: Համագումարը համոզմունք է հայտնում, որ «Մեծ Բրիտանիան, հանձինս իր կովկասյան հրամանատարության, բռնի չի ստիպի ընդունել Ադրբեջանի խանական լուծը, որն աներևակայելի տանջանքներով ու զոհերի գնով հայությանը դեն է շպրտել հարյուր տարի ետ»: Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը երկրորդ անգամ լսելով Շատելվորտի հրամայական պահանջը, դարձյալ «միանգամայն անհնարին է գտնում փոխելու իր ժխտական որոշումը, որը թելադրված է Ղարաբաղի ամբողջ հայության անհողդողդ կամքով...»: Ապրիլի 24–ի նիստում դիվանի ամբողջ կազմի և 48 պատգամավորի ստորագրությամբ ընդունված բանաձևում վճռականորեն ասված է. «Համագումարը անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ վարչական ծրագիր»:[108] Նիստին

ներկա գտնվող Շատելվորտը զայրացած հայտարարում է. «Ի նկատի ունեցեք, որ ձեր ճանապարհները կարող են փակվել, այն ժամանակ դուք որտեղի՞ց մթերք կստանաք, ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, կարո՞ղ եք առանց հացի ապրել: Եվ եթե հուզված, զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել»:[109]

Շատելվորտը այդ հարցը տալով, կարծես թե միևնույն ժամանակ Ադրբեջանին սովորեցնում էր, թե ինչ պետք է անել Ղարաբաղը հպատակեցնելու համար:[110] Հաջորդ օրը, ապրիլի 25-ին, խորամանկ Սուլթանովն առաջարկում է, որ համագումարի պատգամավորներից հանդիպեն իր հետ, քանզի «հաստատ որոշել է Ղարաբաղի բոլոր ժողովուրդների բարեկեցությունը, գույքը և անձի անվտանգությունը անաչառ, ազնիվ և անշեղ ապահովելու համար կյանքում իրագործել բոլոր միջոցառումները»:[111] Բայց ո՞վ կցանկանար հանդիպել այդ դահիճի հետ:

Թե Բաքվի Հայոց ազգային խորհուրդը և թե Զանգեզուրի արտակարգ լիազոր Արսեն Շահմազյանը ողջունում են Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարի վճռական դիրքը և ոգևորում նրա գործունեությունը:

Չսպասելով համագումարի ավարտին՝ գնդապետ Շատելվորտը ապրիլի 26-ին խիստ զայրացած մեկնում է Գորիս: Համագումարը հանգիստ շարունակում է իր աշխատանքները, քննարկում օրակարգի բոլոր հարցերը և ընդունում համապատասխան որոշումներ: Համագումարի վերջում ազգային խորհուրդը ներկայացնում է իր հրաժարականը, պատճառաբանելով, որ խորհրդի անդամներից Իշխան Միրզաբեկյանը մահացել էր, Լևոն Զառաֆյանը և Գերասիմ Բալայանն արտաքսվել էին Շուշիից, իսկ ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանն էլ Բաքվում պատանդ էր պահվում՝ Շատելվորտը նրան արգելել էր վերադառնալ Շուշի: Համագումարը չի ընդունում ազգային խորհրդի հրաժարականը և հանձնարարում է շարունակել իր պարտականությունների կատարումը՝ իրավունք տալով կոոպտացիոն կարգով ազգային խորհուրդ հրավիրել «հարմար համարվող անձինք»:[112]

Համագումարի որոշմամբ խմբագրվում է և Ղարաբաղի հայության անունից հրապարակվում է մի հայտարարություն, որտեղ ասված է, թե «Ղարաբաղը ի սկզբանե եղել է Հայաստանի անբաժան մասը, որպես նրա գավառներից մեկը, և որպես այդպիսին, պիտի կցվի Հայաստանին: Մերժել և ոչ մի կերպ չճանաչել Ադրբեջանի իշխանությունը»:[113]

Սա է պատմական ճշմարտությունը: Մինչդեռ ադրբեջանական որոշ հեղինակներ այդ ամենը շուռ են տալիս գլխիվայր: Ջամիլ Բահատուրօղլի Գուլիևը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման պատմությունից», հոդվածում, (այն նույնությամբ կրկնել է 16 տարի հետո),[114] մեջբերելով 1919թ. մայիսի 22-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմին Անաստաս Միկոյանի հասցեագրած զեկուցագրի այն տողերը, որտեղ ասված է, թե իբր Ղարաբաղի «հայ գյուղացիությունն» իր հինգերորդ համագումարում որոշել է ճանաչել Խորհրդային Ադրբեջանը և նույնպես միանալ նրան»[115] (հետաքրքիր է,



թե 1919 թ. ի՞նչ Խորհրդային Ադրբեջանի մասին կարող էր խոսք լինել), եզրակացնում է, որ Լեռնային Ղարաբաղի աշխատավորները հանդես են եկել «իրենց երկրամասը Ադրբեջանին միացնելու» օգտին: Նույնը տառացիորեն կրկնել է Ադրբեջանի ԳԱ թղթակից անդամ Թ. Քոչարին իր «Անհրաժեշտ ճշտումներ» հոդվածում:[116] Դ. Գուլիևի և մյուսների ստահոդ հորինվածքներին դեռ կանդրադառնանք: Սակայն մեզ հայտնի չէ, թե Ա. Միկոյանը որտեղից է քաղել այդ սխալ տեղեկությունը, երբ Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարի ընդունած վերոհիշյալ որոշումները տպագրվել են նույն 1919 թվականին Բաքվում, Թիֆլիսում և Երևանում լույս տեսնող, ինչպես հայկական, այնպես էլ ռուսական թերթերում: Ինչ խոսք, Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարի ընդունած այդ պատմական որոշումները խեղաթյուրելու համար թե Շատելվորտը, թե Սուլթանովը դիմում էին ամեն տեսակ կեղծիքի: «Բորբա» թերթը հաղորդել է, թե համագումարի կողմից որոշումն ընդունելու հենց հաջորդ օրը Շատելվորտի հրամանով Շուշի քաղաքի պատերին հայտնվում է մի հայտարարություն, որտեղ գրված էր, թե իբրև Ղարաբաղը «ենթարկվում է Ադրբեջանի իշխանությանը» և որ «Սուլթանովը, որպես Ադրբեջանի նահանգապետ, միաժամանակ հանդիսանում է Անգլիայի ներկայացուցիչը»:[117] Այդ նույն թերթը երկու ամիս անց գրել է, թե Ղարաբաղի բնակչությունը հայտարարել է, որ ինքը Հայաստանի հետ է, մինչդեռ անգլիական հրամանատարությունը Ղարաբաղի հարցում ճանաչում է «մուսուլմանական տեսակետի ճիշտ լինելը» և «համառում է Ղարաբաղը միացնել Ադրբեջանին»:[118]

***

Համագումարի վերջին օրը, ապրիլի 29-ին, Շուշի է հասնում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Միշա Արզումանյանը: Նա սպաներ Գարո Տեր Օհանյանի և Ռուբեն Կասումյանի հետ մասնակցում է համագումարին, որտեղ և հանդես է գալիս համառոտ զեկուցումով: Տեղեկություններ հաղորդելով Հայաստանի ընդհանուր վիճակի մասին՝ Մ. Արզումանյանը պարզաբանում է Ղարաբաղ–Զանգեզուրի հարցի շուրջը: Հայտնում է, որ Հայաստանի կառավարությունը դաշնակից հրամանատարությանը բողոքել է Ադրբեջանի ոտնձգությունների դեմ և պնդել, որ Զանգեզուր–Ղարաբաղը կազմում է Հայաստանի անբաժան մասը: Ապա նշում է, որ Ադրբեջանի կողմից Զանգեզուր–Ղարաբաղի նահանգապետ նշանակելն ապօրինի է: Նաև հաղորդում է, որ ինքը Ղարաբաղ է եկել Հայաստանի կառավարության որոշմամբ, որպեսզի «տեղի վրա վերահասու լինի շարունակ շփման մեջ լինելով անգլիական միսիայի հետ»: Այնուհետև գովաբանում է Զանգեզուր–Ղարաբաղի հայության բռնած դիրքը, որ դիմադրել է Ադրբեջանի ոտնձգություններին: Նա վստահություն է հայտնում, որ ժողովուրդը անսասան կմնա իր դիրքերում:[119] Այդ ընթացքում Սուլթանովը, ոգևորված անգլիական հրամանատարության աջակցությունից, շարունակում էր իր հայատյաց քաղաքականությունը: Ապրիլի 30-ին, համագումարն ավարտվելու հենց հաջորդ

օրը, նա պաշտոնական գրություններ է ուղարկում Շուշիի պետական հաստատությունների տնօրեններին, գանձարանի պետին, հաշտարար դատարանին, ռեալական և քաղաքային դպրոցների, տղաների և Մարինյան աղջիկների պրոգիմնազիայի տեսուչներին, որ ներկայանան նահանգապետին ու զեկուցեն իրենց հաստատությունների մասին, սակայն մերժում է ստանում նահանգապետի պահանջը: Ռեալականի տեսուչ Նիկոլայ Պետրովը, քաղաքային դպրոցի տեսուչ Իվան Ռազդորսկին և Մարինյան պրոգիմնազիայի տեսչուհի Մ.Միխայլովան կտրականորեն հայտարարում են, որ իրենք ենթակա չեն մի իշխանության, առավել ևս մի նահանգապետի, որին չի ճանաչում ժողովուրդը:[120]

Հայաստանի կառավարությունը շարունակում էր ցուցաբերել չափից դուրս զգուշություն և խուսափում էր վճռական պատասխան տալ արցախահայության պահանջին: Վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի ստորագրությամբ 1919 թ. մայիսի սկզբին Ղարաբաղի ազգային խորհրդին և Ղարաբաղ–Զանգեզուրում Հայաստանի կառավարության ներկայացուցիչներ Արսեն Շահմազյանին ու Միշա Արզումանյանին ուղարկած հրահանգում ասված է, որ եթե արցախահայությունը չի ճանաչում ադրբեջանական իշխանությունը և իր գոյությունը պահելու համար դիմել է ինքնապաշտպանության, ապա դրանում Հայաստանի կառավարությունը մեղք չունի:[121] Օգտվելով Հայաստանի կառավարության այդ անվճռականությունից, անգլիական հրամանատարությունը նախ փորձում է ռազմական ուժեր մտցնել Զանգեզուր և այն վերցնել իր իշխանության տակ,[122] ապա Ղարաբաղ–Զանգեզուրից արտաքսել Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին և ամբողջ երկրամասը վերջնականապես հայտարարել Ադրբեջանի տարածք:

Ղարաբաղ–Զանգեզուրի հարցը հանգիստ չէր տալիս նաև Անդրկովկասում ծվարած Անտանտի զինված ուժերի հրամանատարությանը: 1919 թ. մայիսի 3–ին Թիֆլիսում տեղի ունեցած Անտանտի ռազմական ներկայացուցիչների խորհրդակցությունում, որին ներկա էր նաև Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, քննության է առնվում Ղարաբաղ–Զանգեզուրի վերաբերյալ Շատելվորտի զեկուցագիրը, որում ասված էր, թե իբր Ղարաբաղի զինված ուժերը ղեկավարում են Հայաստանից եկած սպաները և արցախահայությունը չի վախենում սպառնալիքներից, որովհետև հույս ունի, թե օգնություն կստանա Զանգեզուրից: Բաքվում անգլիական ուժերի հրամանատարը Արցախի հարցում հիմնականում մեղադրում էր ՀՀ դաշնակցությանը: Գեներալ Թոմսոնն իր հերթին հայտարարում էր, թե Հայաստանը, խառնվելով Ղարաբաղի գործերին, դրանով իսկ պատերազմ է հայտարարում Անգլիային:

Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը հանդես գալով հայտարարությամբ, շեշտում է, որ չնայած Հայաստանի կառավարությունը Ղարաբաղը ճանաչում է որպես Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս, բայց այն չի ղեկավարվում Հայաստանի կառավարության կողմից, հետևապես վերջինս չի կարող այնտեղից որևէ մեկին հետ կանչել: Ապա՝ Ղարաբաղի ազգային խորհուրդը պիտի ունենա իր ռազմական ուժերը, որին Հայաստանի կառավարությունը ցուցումներ տալ չի կարող: Ղարաբաղ–Զանգեզուրի ղեկավարությանը Հայաստանի կառավարությունը կարող է միայն խորհուրդ տալ: Հայաստանի կառավարությունը Ղարաբաղում պետական մարմիններ չունի, հետևապես չի կարող պատասխանատու լինել այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների համար: Իսկ եթե անգլիական հրամանատարությունը ցանկանում է Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների համար պատասխանատու ճանաչել Հայաստանի կառավարությանը, ապա դրա համար պետք է Ղարաբաղի ղեկավարումը հանձնվի Հայաստանի կառավարությանը: Հայաստանի վարչապետն այնուհետև նշում էր, թե Ղարաբաղի 300 հազարանոց հայության ցանկության նկատմամբ ոչ ոք չպետք է բռնություն գործադրի և որ Ղարաբաղի հարցն անհանգստացնում է ոչ միայն Դաշնակցությանը, այլև Հայաստանի քաղաքական բոլոր կուսակցություններին և ամբողջ հայությանը: Այնուամենայնիվ, գեներալ Թոմսոնը պնդում էր, թե Արսեն Շահմազյանը պետք է անհապաղ հետ կանչվի Զանգեզուրից:[123] Ի միջի այլոց, այդ խորհրդակցությունից մեկ օր առաջ, մայիսի 2–ին, Գորիսում կապիտան Արսեն Շահմազյանին նման պահանջ ներկայացրել էր նաև մայոր Մոնկ Մեսսենը և այնտեղ գտնվող անգլիական կապիտան Տաուզենդիին հրամայել պաշտոնապես չճանաչել Շահմազյանին: Մինչև անգամ սպառնացել էր ձերբակալել նրան:[124]

Թե անգլիական հրամանատարությունը և թե ադրբեջանական իշխանությունները որոգայթներ էին հյուսում մանավանդ Միշա Արզումանյանի շուրջը և Ղարաբաղից նրան արտաքսելու «դրդապատճառներ» որոնում: Իսկ մինչ այդ, պատմում է Եղիշե Իշխանյանը, մայիսի 2–ին Ապառաժի ՀՀ կենտրոնում Միշա Արզումանյանը հանգամանալից հաղորդում է տալիս Հայաստանի տնտեսական և քաղաքական ծանր վիճակի մասին: Այն հարցին, թե Հայաստանը հնարավորություն ունի՞ Ղարաբաղը Հայաստանին միացնելու վճռական և ազդու միջոցներ գործադրելու, Արզումանյանը շիտակ պատասխանում է, թե պատերազմի, սովի և համաճարակ հիվանդությունների պատճառով մեր ժողովուրդը արյունաքամ է եղել ու հյուծվել: Այդպիսի ժողովրդի վրա հենված նորակազմ հայկական կառավարությունը, որը զուրկ է նյութական և այլ անհրաժեշտ միջոցներից, հազիվ թե կարողանա զենքի ուժով լուծել Ղարաբաղի հարցը, դաշնակիցներից անկախ: Նա գտնում էր, որ Հովհաննես Քաջազնունու տեսակետը պետք է պաշտպանել, Ղարաբաղի վերաբերյալ նրա տված խորհուրդը թերևս ճիշտ է: Երբ հաջորդ օրը մայիսի 3–ին, Միշա Արզումանյանը Մոնկ Մեսսենի հետ եղավ Գորիսում և իմացավ զանգեզուրցիների վճռական պատասխանը Ադրբեջանին ենթարկվելու վերաբերյալ անգլիական հրամանատարության պահանջին, մայիսի 4–ին՝ Շուշի վերադառնալուց հետո, այդ մասին ոգևորված պատմեց Ղարաբաղի ազգային խորհրդին: Նա Հայաստանի կառավարության ուղարկեց հանգամանալից զեկուցագիր, ինչպես նաև Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարի նյութերն ու որոշումները:[125]

Ինչպես նշվել է, անգլիական հրամանատարությունը ջանքեր էր գործադրում Ղարաբաղից արտաքսելու Միշա Արզումանյանին, որը նոր էր սկսել իր գործունեությունը: Մայոր Մոնկ Մեսսենը, մայիսի 1-ին Միշա Արզումանյանին ուղարկած պաշտոնական գրության մեջ դիմելով կեղծիքի, նշում է, թե իբր Հայաստանի կառավարությունը համաձայնվել է Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին և հրաժարվել է ճանաչել կապիտան Արսեն Շահմազյանին որպես Զանգեզուր–Ղարաբաղի կոմիսար:[126] Դրանից մի քանի օր առաջ այդ մասին Բաքվում Արզումանյանին հայտնել էր ինքը՝ Շատելվորտը և նրանից պահանջել հանդես գալ հատուկ հայտարարությամբ: Մ. Արզումանյանը նախ՝ հրաժարվել էր հանդես գալ նման հայտարարությամբ, հետո էլ՝ անգլիական հրամանատարության կեղծիքը բացահայտելու նպատակով մայիսի 4-ին հատուկ նամակով և մայիսի 7-ին հեռագրով հարցում է կատարել Հայաստանի կառավարությանը:[127] Վերջինս մայիսի 7-ին հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ, որտեղ ասված էր, թե Հայաստանի կառավարությունը երբեք, ոչ մի տեղ և ոչ ոքի ոչ մի խոստում չի տվել, դեռ, ընդհակառակը, «Հայաստանի կառավարությունը միշտ համարել և համարում է հայկական Ղարաբաղը Հայաստանի անբաժանելի մաս», որի մասին բազմիցս հայտնվել է թե բրիտանական հրամանատարությանը և թե Ադրբեջանի կառավարությանը:[128] Այդ օրերին Հայաստանից Զանգեզուր և Ղարաբաղ եկած Հովսեփ Արղությանը ևս պաշտոնապես հայտարարում է, թե Հայաստանը երբեք չի հրաժարվի Ղարաբաղից:[129] Անգլիական հրամանատարությունը, մանավանդ՝ Շատելվորտը, որոնք չէին «կարողանում հանդուրժել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը համառորեն պնդում էին Հայաստանին պատկանելու ցանկության վրա»,[130] փորձում էին դիմել նոր սադրիչ քայլերի: Շատելվորտը Միշա Արզումանյանի և միսիայի սպաներից մեկի հետ մայիսի 9-ին գնում է Գորիս, փորձ անելու համոզել Զանգեզուրի ազգային խորհրդին՝ ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Դարձյալ նրան չի հաջողվում կատարել իր միսիան: Վերադառնալով Շուշի, նա հաջորդ օրն իր մոտ է կանչում Միշա Արզումանյանին և առաջարկում կապի մեջ մտնել Հայաստանի կառավարության հետ ու համոզել, որ վերջինս օրինական համարի անգլիական հրամանատարության կարգադրությունը՝ Ղարաբաղը Ադրբեջանի իշխանությանը ենթարկվելու վերաբերյալ: Սակայն ստանալով մերժում, պահանջում է Մ. Արզումանյանը հեռանա Ղարաբաղից:

Մայիսի 15-ին Երևանից Շուշի է գալիս Հայաստանի կառավարության նոր ներկայացուցիչ Հովսեփ Արղությանը:[131] Հայոց ազգային խորհրդի նիստում հանդես գալով զեկուցումով՝ նա նշում է, որը ինքը Շատելվորտի հետ պիտի գնա Գորիս և փորձի լուծել անգլիական հրամանատարության և Զանգեզուրի ազգային խորհրդի միջև առաջացած անհամաձայնությունը: Նա նաև շեշտում է, որ գեներալ Թոմսոնի սխալ կարգադրությունը՝ Զանգեզուր–Ղարաբաղը ճանաչել Ադրբեջանի մաս, անգլիական հրամանատարությունը չի ցանկանում փոխել: Արղությանը հանդիպում է նաև Ղարաբաղի նախկին հրամանատարների հետ: Այդ հանդիպմանը, բացի Բագրատ



[illegible]յանից, մնացածները ներկա են լինում, նույնիսկ Սոկրատեսը: [illegible]յանը հաճախ խոսում էր սպառնալիքով, որն անթաքույց ուղղված էր [illegible]րեկի դեմ, որը չէր օգտվում որևէ հեղինակությունից և վերջին ա-[illegible]րին բացահայտորեն պայքարում էր Ղարաբաղի ուժերի միավորման դեմ:

Մայիսի 18-ին Միշա Արզումանյանը, Ռուբեն Կասումյանի և Գագո [illegible] Օհանյանի հետ միասին, անգլիական միսիայի հրամանով մեկնում են Շուշիից:[133] Այդ նույն օրը, երբ Ղարաբաղից արտաքսվում է Արզումանյանը, Շատելվորտը Հովսեփ Արղության հետ դարձյալ մեկնում է Գորիս:[134] Շատելվորտը փորձում էր Զանգեզուրի ազգային խորհրդին համոզել՝ կատարելու գեներալ Թոմսոնի հրամանը և ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Երբ ստանում է կտրուկ մերժում, պահանջում է իրեն հանձնել Արսեն Շահմազյանին, Արշակ Շիրինյանին, Մելիք Օսիպովին և Կալմակովին [illegible] Զանգեզուրից արտաքսելու համար: Դարձյալ ստանալով մերժում Շատելվորտը ժողովրդի ճնշման տակ ստիպված գնում է զիջման: Նա հայտարարում է, թե ադրբեջանական իշխանությունը առայժմ չի տարածվի Զանգեզուրի այն շրջանների վրա, որտեղ հաստատված է ազգային խորհրդի իշխանությունը: Դրա դիմաց նա ստանում է զանգեզուրցիների համաձայնությունը՝ բաց թողնել քոչը:[135]

Շատելվորտը մայիսի 19-ին Գորիսից վերադառնալով Շուշի, անմիջապես մեկնում է Բաքու: Հովսեփ Արղությանը Շուշի է վերադառնում մայիսի 21-ին: Հաջորդ օրը նա հանդիպում է ազգային խորհրդի անդամների հետ, իսկ 23-ին մեկնում է Երևան: Նրա հետ գնում է ազգային խորհրդի անդամ Աշոտ Մելիք-Հովսեփյանը, որպեսզի Հայաստանի կառավարությանը մանրամասն հաղորդի վերջին մեկուկես տարում Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Մայիսի 24-ին Բաքու է մեկնում հայտնի բարերար Սահակ Թադևոսյանի որդի Լևոն Թադևոսյանը, որպեսզի Բաքվի Հայոց ազգային խորհրդին զեկուցի վերջին օրերին Ղարաբաղում տեղի ունեցածի մասին:

Մուսավաթական Ադրբեջանը փորձում էր արցախահայությանը խեղդել սովի ճիրաններում: Դեպի հարթավայրային շրջաններ և դեպի Հայաստան տանող բոլոր հնարավոր ուղիները փակելու համար Սուլթանովն իր կառավարությունից մայիսի 17-ին պահանջում է անհապաղ ուղարկել 2000 հրացան, մեկ միլիոն գնդակ, 10 գնդացիր, մեծ թվով այլ ռազմամթերք և զորամասեր:[136] Սուլթանովի կարգադրությամբ մայիսի 20-ից հարթավայրային Ղարաբաղի բոլոր ճանապարհները արցախահայության առջև փակվեցին: Դա, ինչպես և այն, որ Գորիսից վերադառնալուց հետո Շատելվորտը կարգադրել էր բոլոր տեսակի կապերը խզել Զանգեզուրի հետ, չափազանց ծանր կացություն ստեղծեց արցախահայության համար: Ինչպես վկայում է «Կովկազսկոյե սլովո» թերթը, մուսավաթական ասկյարներն ու ավազակները հայերի նկատմամբ ձեռնարկված ոչ մի միջոցից չէին խորշում, կողոպտում էին նրանց ունեցվածքը, սպառնում երեխաներին, ուժ գործադրում

կանանց նկատմամբ: Արցախահայությունը բոլոր կողմերից շրջափակվել էր ու զրկվել դաշտային աշխատանքներ կատարելու հնարավորությունից:[137] Արխիվային փաստաթղթերից մեկում ասված է, որ այդ ժամանակաշրջանում հայ սովյալներից ոմանք փրկվեցին շնորհիվ հարևան թաթարների օգնության, որոնք օր ու գիշեր հաց էին տեղափոխում հայկական գյուղերը, վաճառում, հաճախ էլ «տալիս էին ավանսով կամ ձրի»:[138]

1919 թ. մայիսյան այդ ծանր օրերին արցախահայությունը խիստ անհանգստացած ու վրդովված էր: Գավառներից ամեն օր պատվիրակություններ էին գալիս Շուշի և ազգային խորհրդին բողոքում թուրք–թաթարների և անգլիացիների հակահայկական գործողություններից ու պահանջում կամ պատերազմ հայտարարել նրանց դեմ, կամ էլ կտրուկ պահանջել վերջ տալ հակահայ գործողություններին: Առանձնապես խիստ վճռական էին գավառների զորահրամանատարները, մանավանդ Դիզակի զորահրամանատար Արտեմ Լալայանը: Մայիսի 28–ին ադրբեջանցիները նոր հարձակում գործեցին խծաբերդի վրա: Արտեմ Լալայանը և նրա տեղակալ Արշակ Շահնազարյանը Դիզակի ուժերով օգնության են հասնում: Յարձակվողների թիվն անցնում էր մի քանի հազարից: Նրանց ղեկավարն էր Քյազիմ բեյը: Նա, ըստ երևույթին, հատուկ հանձնարարությամբ մնալով Ղարաբաղ–Զանգեզուրի տարածքում շարունակում էր ծավալել հակահայկական գործունեություն: Չնայած մի քանի օր առաջ ադրբեջանցիները Բարդայի (Պարտավ) և Աղդամի արանքում զինաթափելու նպատակով անհաջող հարձակվել էին անգլիական մի ջոկատի վրա: Շատելվորտը շարունակում էր հավատալ ադրբեջանցիների կեղծ քարոզչությանը: Իսկ խծաբերդի իրադարձությունները ոչնչով չանհանգստացրեցին անգլիական հրամանատարությանը: 120–130 ընտանիքից բաղկացած խծաբերդը, որը գտնվում է Դիզափայտ լեռան հարավային կողմի լանջի վրա, արդեն քանիերորդ անգամ ոտքի էր ելնում ադրբեջանցիներից պաշտպանվելու համար: Մայիսի 28–ի վաղ առավոտյան, թշնամին երկու ուղղությամբ հարձակվելով խծաբերդի վրա, նպատակ ունեին այն ամբողջովին ավերել և ջնջել հողի երեսից: Դիրքապահ տղաները նկատելով հակառակորդի առաջշարժումը, վտանգի ազդանշան են հնչեցնում և ամբողջ գյուղը շտապում է դիրքերը: Այդ կողմերում բոլորին հայտնի Ուլունց Ներսեսը, իր հորեղբայր Միրզայի և Մուխիի հետ քարծրանալով բլուրը, դիրք են բռնում: Խիզախ մարտիկները անվրեպ կրակով կասեցնում են ադրբեջանցիների առաջխաղացումը: Սակայն ասկյարներն ու վայրենացած ամբոխը, որը ծարավ էր թալանի և տենչում էր ժամ առաջ ներխուժել գյուղը, կրկնում էին հարձակումները: Առաջինը խծաբերդցիներին օգնության են հասնում Յին Թաղերի մարտիկները: Ապա հասնում են Արտեմ Լալայանն ու Արշակ Շահնազարյանը: Լալայանը ստանձնում է կռվի ընդհանուր հրամանատարությունը, ուժերը տանում է գրոհի: Մայիսի 30–ի առավոտյան հայ խիզախները դուրս գալով դիրքերից, անցնում են հարձակման: Թշնամին կատաղի դիմադրում է, բայց ահա մի քանի ժամից հետո, նրանք սկսում են նահանջել: Դա ավելի է ոգևորում հայոց քաջերին և



ադրբեջանցիների նահանջը վեր է ածվում փախուստի: Տալով 200 սպանված, նրանք սրախողող են անում 10–12 ծանր վիրավորների և դիմում գլխապատառ փախուստի: Մարտադաշտից առաջինը մի խումբ ձիավորների գլուխ անցած, սրարշավ փախչում է Քյազիմ բեյը: Դիզակցիների փայլուն հաղթանակի մասին շուտով իմանում են ամբողջ Արցախում, ինչը ոգևորում է բոլորին:[139]

Մինչ այդ Արցախում տեղի էր ունեցել մի կարևոր իրադարձություն ևս: Հովսեփ Արղությանը, իսկ նրանից առաջ Միշա Արզումանյանը, արցախցիներին խորհուրդ էին տվել վերակառուցել Արցախի ինքնապաշտպանական ուժերը և պահել պատրաստի վիճակում: Դեռևս փետրվարին, սպայական միությունը որոշում էր ընդունել հրավիրել Արցախի զինվորական համագումար և վճռել մի շարք կնճռոտ հարցեր: Ահա այդ ամենը եկել և գումարվել էին իրար: Այլևս ուշացնելը կլիներ դատապարտելի: 1919 թ. մայիսի 25–ին Վարանդայի Տռնավարզ գյուղում տեղի է ունենում Արցախի զինվորականների համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր մոտ 20 սպա: Զինվորական միության վարչության նախագահ և ընդհանուր հրամանատարի պաշտոնակատար Արտաշես Վարդապետյանի առաջարկությամբ համագումարը բացում է ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ապա համագումարի նախագահությունը ստանձնում է Արտաշես Վարդապետյանը: Յամագումարը քննարկում է հետևյալ հարցերը. 1. Զինվորական միության վարչության զեկուցումը: 2. Շտաբի կազմած ինքնապաշտպանության ծրագիրը: 3. Գործող սպաների ապրուստի հարցը:

Առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես է գալիս Սարտիրոս Ալվազյանը: Նա մասամբ շեշտում է, որ հայ զինվորական միության Շուշիի ճյուղի բացումից ի վեր, Ղարաբաղի զինվորական միությունը քիչ աշխատանք չի տարել, չնայած թուրքերի՝ Ղարաբաղ ներխուժելուց հետո այն որոշ ժամանակով դադարել է գործել: Երկրամասից թուրքերի հեռանալուց հետո միությունը դարձյալ սկսել է գործել ավելի լայն ծավալով:

Երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Արտաշես Առստամյանը: Նա համագումարին ներկայացրեց միության շտաբի կազմած ինքնապաշտպանական ծրագիրը, ըստ որի՝ Ղարաբաղը բաժանվում էր հինգ ինքնապաշտպանական շրջանների. 1. Դիզակի շրջան՝ տեղակալ Նիկոլայ Փիրումյանի հրամանատարությամբ, 2. Վարանդայի առաջին ենթաշրջան՝ փոխ–գլխապետ Հովակ Ստեփանյանի հրամանատարությամբ, երկրորդ ենթաշրջան՝ տեղակալ Ս. Չալյանի հրամանատարությամբ, 3. Խաչենի շրջան՝ տեղակալ Արշավիր Պետրոսյանի հրամանատարությամբ, 4. Ջրաբերդ–Գյուլիստանի շրջան՝ Արշակ Զախարբեկյանի հրամանատարությամբ:

Բոլոր ինքնապաշտպանական շրջանների հրամանատարներն ունեին իրենց օգնականները և կենտրոնատեղերը: Նախատեսվում էր երկրամասի ինքնապաշտպանության գործը կազմակերպել միլիցիոն կարգով: Ինքնապաշտպանության գործի ամբողջ պատասխանատվությունը թողնվում էր շրջանների հրամանատարների վրա:

Երրորդ հարցի վերաբերյալ համագումարը որոշում է, որ բոլոր հրամանատարները, նրանց օգնականները և յուրաքանչյուր շտաբից մեկ–երկու ծառայող պետք է նվազագույն աշխատավարձ ստանան ազգային խորհրդից: Նաև որոշվեց ինքնապաշտպանության ծրագիրը վերանայել, ամբողջականացնել և ներկայացնել զինվորական միության հաջորդ նիստի հաստատմանը: Այն տեղի է ունենում մայիսի 27–ին և հաստատում է վերամշակված ծրագիրը:[140]

Արցախ–Ղարաբաղում դրությունն ավելի սրվեց հունիսի սկզբին՝ քոչը սար բարձրանալու օրերին: Ասես կրակի վրա նավթ լցրեց նաև այն, որ «անգլիական միսիայի օրհնությամբ»[141] հունիսի 3–ին Սուլթանովը պահանջեց փոստն ու գանձատունը հայկական թաղամասից փոխադրել մուսուլմանական թաղամաս: Մինչ այդ, հունիսի 1–ին, Շատելվորտից ստացվեց հրաման, որի համաձայն՝ հայերն ու մուսուլմանները չպետք է այլևս դիրքապահություն անեին հայ–մուսուլմանական թաղերի սահմանի վրա: Անգլիական միսիան վստահեցնում է, թե երկու թաղերի սահմանների երկայնքով գիշերները հերթապահություն կանեն սիպայինները: Այդ օրերին առաջ էր եկել մեկ հանգամանք ևս. Անտանտի ուժերի հրամանատարությունը հետապնդում էր թուրք դահիճների պարագլուխներին: Նուրի փաշան թաքնվել էր Դաղստանում, լուրեր էին տարածվել, թե Էնվեր փաշան էլ եկել ու թաքնվել էր Հաջի Սամլուի կողմերում, Սուլթանովի հայրենիքում: Դեռևս փետրվարին ծննդով իռլանդացի Հանս անունով մի սպա, գալով Շուշի, Ղարաբաղի ազգային խորհրդին հայտնել էր, թե դաշնակիցները հետապնդում են թուրք ոճրագործներին: Ըստ նրանց հասած տեղեկությունների՝ դահիճ Էնվերը ծպտված հասել է Ղարաբաղ և գտնվում է ադրբեջանական գյուղերից մեկում: Մայիսի սկզբին խոսվում էր նաև այն մասին, թե իբր անգլիական սպաներից մեկը Աղդամում ճանաչել է Էնվերին և ձերբակալել նրան, սակայն տեղի մուսուլմանները նրան խորամանկաբար ազատել են և փախցրել: Մայիսի երկրորդ կեսին Շուշի է գալիս անգլիական գնդապետ Սանդերսը՝ իբրև Էնվերին ձերբակալելու նպատակով: Նա փորձում էր համագործակցել ազգային խորհրդի հետ: Վերջինս խոստանում է հնարավոր բոլոր միջոցներով օգնել անգլիացի գնդապետին: Սակայն Հաջի Սամլուի լեռներում գտնվող Էնվերին ձերբակալելը այդքան էլ հեշտ չէր, մանավանդ, որ Սուլթանովը գիտեր այդ մասին և հնարավոր չէր, որ տեղյակ չպահեր նրան: Հունիսի 1–ին ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը հանդիպելով գնդապետ Սանդերսի հետ, նրան զգուշացնում է, որ Էնվերին ձերբակալելու համար մշակված պլանը շատ է ուշացվում և հավանական է, որ նա արդեն հեռացած լինի Ղարաբաղից ու թաքնված ավելի հեռու տեղ: Անգլիացի գնդապետը պարծենում, է թե Էնվերը մեր ձեռքից ազատվել չի կարող: Եվ, իրոք, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից 1914 թվականից՝ ռազմական նախարար, Հայոց Մեծ եղեռնի գլխավոր հանցագործներից Էնվեր փաշան, որը առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո 1919 թ. հեռակա կարգով դատապարտվել էր



մահվան՝ միաժամանակ թաքնվելով Ղարաբաղի կողմերում, գնում է Միջին Ասիա, որտեղ և 1921 թ. սպանվում է:

Ազգային խորհրդին ավելի շատ անհանգստացնում էր գիշերապահությունը արգելելու վերաբերյալ Շատելվորտի վերոհիշյալ հրամանը: Հայտնի է, որ Միջկուսակցական բյուրոյի որոշմամբ գիշերապահությունը մտցվել էր Շուշի–Եվլախ ճանապարհը փակվելուց հետո: Այն հայերի կողմից իրագործում էին քաղաքի նախկին վեց ինքնապաշտպանական շրջանները, որի պատասխանատուն զինվորական միության վարչության անդամ կապիտան Արտաշես Վարդապետյանն էր: Ինքնապաշտպանական ջոկատներում ընդգրկված էին 550 մարտիկներ, որոնք զինված էին ռուսական և ֆրանսիական հրացաններով: Յուրաքանչյուր հրացանակիր ուներ 150–300 փամփուշտ: Նրանք, ովքեր հրացաններ չունեին, զինված էին ատրճանակներով: Այնպես որ, լավ կազմակերպվածության պայմաններում հնարավոր էր քաղաքի հայությանը պաշտպանել մուսուլմանների հնարավոր հարձակումից: Թուրքերի Շուշիից հեռանալուց հետո միաժամանակ դիրքապահությունը վերականգնվեց: Այն վերականգնվեց Սուլթանովի նահանգապետ նշանակվելուց հետո: Հաջի Սամլուի Փդանիս գյուղում հայուհուց ծնված այդ քուրդը մեծագույն դժբախտություն էր Ղարաբաղի համար: Նա, ավարտելով Շուշիի ռեալականը, հետո կրթություն էր ստացել Ռուսաստանում և բժշկի վկայականով վերադարձել:

Բոլորը, նույնիսկ անգլիական միսիան պարզորոշ տեսնում էին, որ այդ օրերին առանձնապես սանձարձակ էին գործում դեռևս գարնան սկզբին արյունռուշտ Սուլթանովի կազմակերպած քրդական 2000–ոց հրոսակախումբը, որի գլուխ էր կանգնած Սուլթանովի եղբայր Սուլթանբեկը: Այն մոտ էր Շուշիի մատույցներին և սպասում էր Սուլթանովի հրամանին՝ ներխուժել քաղաք և բնաջնջել հայերին: Իսկ մինչ այդ, անգլիական միսիայի գլխավոր Մոնկ Մեսոնը հունիսի 2–ին իր մոտ է հրավիրում Ասլան Շահնազարյանին, Հարություն Թումյանին, Ասատուր Ավետիսյանին և Արտեմ Լալայանին, որը խծաբերդի իրադարձություններից հետո եկել էր քաղաք, ինչպես նաև կապիտան Արտաշես Վարդապետյանին և նրա տեղակալ Նիկողայոս Տեր–Գաբրիելյանին (վերջին երկուսը գտնվում էին գավառում): Այդտեղ էր նաև կապիտան Տանգենդին: Վերջինս հայտնում է, թե եկել է հաղորդելու գեներալ Շատելվորտի հրամանը, որ չզբաղվեք քաղաքականությամբ և ստորագրություն տաք, որ պահանջված դեպքում կներկայանաք անգլիական զինվորական իշխանությանը: Արցախահայության քաղաքական գործիչների ջանքերը անգլիական հրամանատարությանը ապացուցել այդ պահանջի սխալ լինելը, ապարդյուն են անցնում: Թոմսոնի կիսատ թողածը տենդագին շարունակող Շատելվորտը, ի դեմս իր ներկայացուցչի, նահանջելու միտում չուներ: Հայ քաղաքական գործիչները անգլիական միսիայից հեռանում են միայն նախօրոք պատրաստված թուղթը ստորագրելուց հետո:

Այդ նույն օրը, ժամը 4–ին, ազերիները գրավում են քաղաքի արևմտյան կողմում գտնվող «Պուլլուր թումբ» կոչված բլուրը: Դա հնարավոր եղավ մեկ

օր առաջ դիրքապահությունը վերացնելուց հետո: Անշուշտ, այդ բլրի գրավումը, որը մարտավարական շատ կարևոր կետ էր Ավետարանոց, Սղնախ և Քարին տակ գյուղերի հետ կապ պահպանելու համար, տեղի էր ունեցել Սուլթանովի կարգադրությամբ և, ըստ երևույթին, անգլիական հրամանատարության նախնական համաձայնությամբ:

Այդ իրադարձությունները՝ դիրքապահության վերացումը, քաղաքական գործիչներից ստորագրություն վերցնելը, ռազմավարական որոշ դիրքերի գրավումն ազերիների կողմից, քաղաքի մատույցներում քրդական հրոսակների գտնվելը և այլ հանգամանքներ, խիստ անհանգստացրել էին քաղաքի հայությանը և խորացրել ատելությունն անգլիացիների ու ադրբեջանցիների նկատմամբ: Ազգային խորհրդի որոշմամբ Արցախի թեմի առաջնորդ Վահան Տեր–Գրիգորյանը, Հրանտ Բահաթրյանը և Եղիշե Իշխանյանը, ներկայանալով մայոր Մոնկ Մեսսենին, բողոքում են Սուլթանովի սադրիչ գործողությունների դեմ, որոնք ավելի էին խորացնում հակասությունները հայերի և մահմեդականների միջև: Մայորը կոնկրետ ոչինչ չխոստանալով, այդ նույն երեկոյան իր մոտ է կանչում ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանին, որտեղ ներկա է լինում Թիֆլիսից նոր ժամանած անգլիացի կապիտան Բոնիֆեյսը: Պարզվում է, որ նա ևս Ղարաբաղ էր եկել իբր էնվերին ձերբակալելու նպատակով, գնդապետ Սանդեսի հրամանով: Բայց իզուր,էնվերն արդեն ծլկել էր:

Հունիսի 3–ին ազգային խորհուրդը, քննելով վերջին օրերին իրար հաջորդած տհաճ իրադարձությունները, հանձնարարում է, որ իր անդամների մի մասը տեղափոխվեն Տոնավարզ, ուր գտնվում էր զինվորական միության և ինքնապաշտպանական ուժերի շտաբը, իսկ մի մասը պետք է մնար Շուշիում՝ ազգային խորհրդի աշխատանքները շարունակելու և անգլիական միսիայի հետ կապը պահպանելու համար:[142]

Շուշիում և հարևան հայկական բնակավայրերում վիճակն ավելի ծանրացավ հունիսի 4–ին և 5–ին: Հենց այդ օրերին Սուլթանբեկ Սուլթանովի հրոսակները սարսափելի սպանդ կազմակերպեցին քաղաքամերձ Ղայբալիշեն, Կրկժան, Փահլուր, Ջամիլու, Խանածախ, Դաշուշեն և այլն գյուղերում: Արխիվային նյութերում և մամուլում հաղորդումներ կան նաև այն մասին, որ Ղայբալիշենի 700 բնակիչներից կենդանի են մնացել 11 տղամարդ և 87 կին ու երեխա:[150] Ավազակախմբերը թալանում են գյուղի ամբողջ ունեցվածքը, վառում բոլոր տները: Ականատեսները պատմում են, թե ինչպես անգլիական միսիայի պարագլուխները Սուլթանովի տան պատշգամբից հանգիստ դիտում էին Ղայբալիշենի ողբերգությունը: «Մարդկային դեմքով այդ բորենիները,– հետագայում գրել է Աբրահամ Կիսիբեկյանը,– ականատես լինելով դժոխային տեսարանին... շատ հանգիստ շարունակում էին զրուցել ու ծիծաղել...»:[151]

Հունիսյան այդ չարաբաստիկ օրերին առանձնապես լարված վիճակ էր ստեղծվել Շուշի քաղաքում: Սուլթանովի հրամանով ադրբեջանական նոր զորամասեր և զգալի թվով ռազմամթերք էին տեղափոխվել քաղաք: Հա-



յլան շրջաններից այստեղ էին հավաքվել նաև բավականին թվով քրդեր, իսկ Խանքենդիի մերձակայքում խրամատներ էին փորում «ռուս սպայի հսկողությամբ»:[152] Հունիսի մեկից սկսած, թուրքերը, մանավանդ դիրքապահպանությունը վերացվելուց հետո, դիրքեր էին պատրաստում «քաղաքի հայ–թրքական սահմանի ամբողջ երկարությամբ»: Ասկյարները գալիս էին «տեղի այդ դիրքերը և գնդացիրներ... դնում զանազան ուղղությամբ»:[153] Օգտվելով ստեղծված խառնաշփոթ վիճակից՝ Սուլթանովի ավազակախումբը գրավում է «ճարման»՝ իբրև քոչի ճանապարհը ապահովելու համար: Դա լիովին կեղծիք էր, որովհետև, «քոչի ճանապարհը բացարձակապես ապահով էր, և մայիսի 17–ից... երբ քոչը սկսել էր բարձրանալ, դեռ ոչ մի դեպք, ամենաաննշան դեպք անգամ չէր պատահել»:[154] Եղիշե Իշխանյանը վկայում է, որ հունիսի 4–ի առավոտյան ժամը 6–ին, երբ հայ–ադրբեջանական սահմանի երկայնքով շրջակայող սիպայիները վերադառնում են զորանոց, ազերիները կազմ ու պատրաստ քաղաքի հարավային կողմից արագորեն շարժվում են դեպի Բաղունց հորելի թաղը: Նրանք քաղաքի հարավարևմտյան կողմի եզրից, դեպի Քարին տակ գյուղի վրա կախված ժայռի վրայով հասնում են մինչև Ժամհարյանների տան դիմացի կետը՝ Քերծի գլուխը, որն իշխում էր Բաղունց հորերի վրա: Դա կատարվում է այնքան արագ, որ Բաղունց հորերի թաղը հանկարծակի է գալիս:[155] Այդ պահին Գյավուր Ղալայի կողմի մարտիկները տագնապ են հնչեցնում: Դեռևս հունիսի 3–ին ասկյարները մոտեցել էին Քարին տակ գյուղին: Այստեղ նրանց շարժումը կանգնեցրել էր Արտեմ Էալայանի ջոկատը:[156] Տեսնելով, որ վիճակն ավելի է ծանրանում, ազգային խորհուրդը պահանջում է, որ քաղաքում գտնվող ինքնապաշտպանական ջոկատը ձեռնարկի անհրաժեշտ գործողություններ: Այդ ժամանակ վաշտապետի փոխտեղակալ Գևորգ Նազարյանը գնացել էր Տոնավարզ: Նրա օգնական Հակոբ Արզումանյանը և վերակացու Արտեմ Բաղդասարյանը 120 հոգուց բաղկացած ջոկատով անցնում են Գյավուր Ղալայի թաղը, որն իշխում էր քաղաքի հարավային մասի վրա: Այստեղից հայ մարտիկները համազարկ տալով և ուռա գոչելով գրոհում են թշնամու վրա: Ազերիները պաշտպանական դիրք են բռնում, և սկսվում է կռիվը: Հայ մարտիկները վերին աստիճանի խնայողաբար էին օգտագործում փամփուշտը, մինչդեռ ազերիներն անընդհատ կրակում էին, քանի որ թուրքերը Շուշիից հեռանալուց ռազմամթերքի մեծ պաշար էին թողել քաղաքի մահմեդականներին:

Եղիշե Իշխանյանը գրում է, որ ազգային խորհրդի մի քանի անդամներ Կուսանաց վանքի բակում խորհրդակցելուց հետո, որոշում են թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր–Գրիգորյանի գլխավորությամբ մի խումբ քաղաքացիների հետ գնալ անգլիական միսիա և խստիվ բողոքել Սուլթանովի հանցագործ արարքների դեմ: Այդ ժամանակ, նշում է նա, «Վանքի բակը, փաստորեն, դարձել էր ազգային խորհրդի կենտրոնատեղին, որտեղից անհրաժեշտ հրահանգներ էր ձգւում թէ շրջանապետներին և թէ թիկունքում աշխատող մեր գործիչներին»:[157] Ե. Իշխանյանի տվյալներով, այդ ժամանակ

քաղաքի ինքնապաշտպանական ուժերն ունեին ընդամենը 2700 փամփուշտ, որը, իրոք, ծիծաղելի էր:

Մինչև Շատելվորտի հրամանով դիրքապահության վերացումը «Պուլլուր թմբի» ռազմավարական պահակակետի պետն էր բերդաձորցի Ասատուրը: Նա հայրենակիցների և Գյավուր Ղալայի ստվար մի խմբի գլուխ անցած, կայծակի արագությամբ հարձակվում է «Պուլլուր թումբը» գնդացիրներով պաշտպանող հիսուն հոգուց բաղկացած ադրբեջանական ջոկատի վրա: Այդ անակնկալ հարձակումից շփոթված, հակառակորդը նույնիսկ չի կարողանում գործի դնել գնդացիրները: Ադրբեջանցիներն արագորեն նահանջում են, թողնելով շուրջ 18000 փամփուշտ: Միևնույն ժամանակ, Յակոբ Արզումանյանին հաջողվում է ադրբեջանցիներից մաքրել Բաղունց հորերը, առաջ շարժվել և գրավել Գյովհար աղայի տունը, որը կիսավեր էր դարձել 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների ժամանակ: Այս մարտում ազերիները տալիս են 37 զոհ, իսկ հայերը՝ մեկ:[158] Յայ մարտիկների այս հաջողությունները ոգևորում է քաղաքի հայությանը: Սակայն ցավալի էր, երբ պատահական մի գնդակից զոհվում է օրվա հերոս Յակոբ Արզումանյանը, որի դին ամփոփվում է եղբայրական գերեզմանոցում:

Ազերիները շարունակում էին անընդհատ կրակել՝ հիմնականում օգտագործելով պայթուցիկ արկեր: Միայն ուշ երեկոյան, գիշերվա ժամը 2–ին, մայոր Մոնկ Մեսսենի հրամանով սիպայիները բռնում են հայ–ադրբեջանական գիծը և երկու կողմից պահանջում դադարեցնել հրացանաձգությունը: Գիշերվա ժամը 4–ին մայոր Մոնկ Մեսսենը իր մոտ կանչելով Վահան եպիսկոպոսին և Յրանտ Բահաթրյանին՝ հայտնում է Շատելվորտի հրամանը՝ «ձերբակալել այն անձանց, որոնցից ստորագրություն է առնված, և ուղարկել Բաքու»: Ստորագրություն տվածներից միայն երեքն էին գտնվում քաղաքում՝ Ասատուր Ավետիսյանը, Յարություն Թումյանը և Եղիշե Իշխանյանը: Նրանց էլ հունիսի 5–ին անգլիական միսիայի ավտոմոբիլով արտաքսում են հայրենի Ղարաբաղից: Միանգամայն ակնհայտ է, որ անգլիական հրամանատարությունը վերջնականապես վճռել էր «ընկճել Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը» և նույնիսկ հայտարարում էր, թե արցախահայերը պետք է Ղարաբաղը թողնեն Ադրբեջանին ու տեղափոխվեն Ալաշկերտ, Վան, Բասեն:[159]

Անգլիական միսիան քաջալերում էր Սուլթանովի և նրա հրոսակախմբերի գործողությունները: Այն քաղաքի հայ բնակչությանը խոստացել էր, որ եթե ազգային խորհրդի անդամները հեռանան քաղաքից, ապա կդադարեցվեն հրաձգությունները: Մինչդեռ ազգային խորհրդի անդամներին եվլախ տանող անգլիական միսիայի ավտոմեքենան հազիվ էր հասել Մազի կամուրջ, երբ քաղաքում կրկին սկսվեցին հրաձգությունները: Քարին տակ գյուղում 200–ի չափ հայ զինվորներ Յովակ Ստեփանյանի գլխավորությամբ սպասում էին հրամանի, որ մտնեն քաղաք: Խաչենից Դալի Մահրասան 200 հոգով մոտեցել էր Խանածախ գյուղին և դիրքավորվել այնտեղ: Ղարաբաղի պաշտպանության պետ կապիտան Արտաշես Վարդապետյանը Գորիս



Արսեն Շահմազյանին հունիսի 5–ին ուղարկած նամակում պատմելով Շուշիում տեղի ունեցող իրադարձությունների մասին, խնդրում է շտապ կարգով ուղարկել դրամ և ռազմական հանդերձանք:[160]

Անգլիական միսիան և Սուլթանովը տեսնելով, որ ուժով չեն կարող Շուշին նվաճել, փոխում են իրենց ռազմավարությունը: Յունիսի 6–ին և 7–ին նրանք գրավում են հայկական մասում գտնվող զորանոցները և ասկյարներին տեղավորում այնտեղ, հայկական մասից մուսուլմանական մաս են տեղափոխում փոստն ու գանձատունը, փակում են մի շարք հիմնարկներ: Յայաստանի Յանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը, խիստ անհանգստացած, Արցախում տեղի ունեցած իրադարձությունների մասին հունիսի 7–ին հաղորդում է իր կառավարությանը:[161] Ղարաբաղի գեներալ–նահանգապետ Սուլթանովը այդ նույն օրը, հունիսի 7–ին, Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունների մասին, իր ները ին հանգամանորեն հաղորդելով իր կառավարությանը, հույս է հայտնում, թե «Ղարաբաղում հայերի ենթարկվելու հարցը արագ կունենա հաջող ավարտ»:[162]

Արցախում կազմակերպված այդ ոճրագործության մասին անմիջապես իմանում են Երևանում, Բաքվում, Թիֆլիսում և հայաշատ մյուս բնակավայրերում: Յայաստանի կառավարությունը բազմաթիվ բողոքներ է ուղարկում թե Ադրբեջանի կառավարությանը և թե Թիֆլիսում գտնվող դաշնակից տերությունների ներկայացուցիչներին,[163] որոնցում մերկացվում է անգլիական և ադրբեջանական իշխանությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ կազմակերպված այդ նոր ոճրագործությունը: Անդրկովկասում անգլիական ռազմական ուժերի նոր հրամանատար գեներալ Կորրիին և Անտանտի մյուս ներկայացուցիչներին բողոքով դիմում են նաև համայն հայության կաթողիկոս Գևորգ 5–րդը,[164] Յայոց ազգային խորհուրդները, հասարակական և քաղաքական կազմակերպությունները:[165] Գեներալ Կորրին, շարունակելով իր ները ի քաղաքականությունը, ցինիկաբար հայտարարում է, թե իբր Ղարաբաղում ոչինչ էլ չի պատահել, հայերը պարզապես աղաղակում են: Արխիվային մի փաստաթղթից իմանում ենք, որ երբ Վրաստանում Յայաստանի դիվանագիտության ներկայացուցիչը և արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը ներկայանում են Կորրիին և նրան բողոքում Ադրբեջանի կողմից Ղարաբաղում իրագործվող բարբարոսությունների առթիվ, անգլիական հրամանատարը պատասխանում է, թե այնտեղ է ուղարկել սպա Կիշբենին, որն իբրև ազնիվ և անզիջում անձնավորություն է, ամեն ինչ կպարզի, կբացահայտի հանցագործներին, որոնք «անգլիական հրամանատարության կարգադրությամբ կենթարկվեն դաժան պատժի»: Նա նաև հայտարարում է, որ եթե ղարաբաղյան իրադարձությունները կրկնվեն, ապա կդիմի վճռական գործողությունների և «քարը քարի վրա չի թողնի»:[166] Նման վերացական հայտարարություններ անգլիական հրամանատարությունը բազմիցս էր արել, սակայն, իրականում ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկվել և ամեն գնով կեղծել էր ճշմարտությունը: Այդ օրերին միայն

անգլիական գնդապետ Կլատերբերգը քաջություն ունեցավ որոշ ճշմարտություն ասել Շատելվորտին, նշելով, որ Ղայբալիշենի կոտորածը պատահական չէր, այն նախօրոք մտածված է եղել Սուլթանովի կողմից, և պահանջեց դատի տալ նրան։[167]

1919 թ. Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած այդ ողբերգական իրադարձությունները երբեք չվհատեցրին արցախահայությանը։ Հենց այդ օրերին՝ հունիսի 11–ին, Վարանդայի շրջանային համագումարը արդեն քանիերորդ անգամ որոշում ընդունեց երբեք և ոչ մի դեպքում չենթարկվել Ադրբեջանին ու զենքով դիմավորել նրա ոտնձգություններին։[168] Համանման որոշումներ ընդունվեցին նաև երկրամասի մյուս շրջանների համագումարներում և հավաքներում։ Հայաշատ բոլոր շրջաններում և բնակավայրերում տեղի էին ունենում բողոքի ցույցեր և ընդունվում դատապարտող որոշումներ։ Հունիսի 16–ին Երևանում տեղի ունեցավ քաղաքային համահավաք, որտեղ մերկացնող ճառերով հանդես եկան Դավիթ Անանունը, Վահան Խորենին, Դրոն, Ա. Խոնդիկարյանը և ուրիշներ։ Նրանք դատապարտում էին մուսավաթական Ադրբեջանի և անգլիական իմպերիալիստների հակահայ գործողությունները։ Ընդունված բանաձևում ասվում է. «Մենք համոզված ենք, որ սա շարունակությունն է էնվերների և թալեաթների արյունռուշտ քաղաքականության։ Այնտեղ՝ Տաճկաստանում, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ սրածության ենթարկվեց մեկ միլիոն հայ։ Այստեղ Ադրբեջանը դաշնակից պետությունների ներկայացուցիչների աչքի առջև փորձում է կոտորել Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը իր արյունոտ կարգերը հաստատելու այդ երկրում»։ Ցուցարարները վճռականապես բողոքում են «Ադրբեջանի կառավարության կողմից գործադրվող բարբարոսությունների դեմ» և պահանջում «անմիջապես հետ քաշել Սուլթանովի ավազակ խմբերը Ղարաբաղի սահմաններից»։[169]

Արցախ–Ղարաբաղում կազմակերպված սպանդն առանձնապես ցասումով ընդունեց Թիֆլիսի հայությունը։ Հունիսի 8–ին Վանքի բակում տեղի ունեցավ բազմահազարանոց հանրահավաք, որտեղ ելույթ ունեցան Հարություն Թումյանը, Դավիթ Անանունը, Եղիշե Իշխանյանը, ղարաբաղցիների հայրենակցական միության անդամներ Վ. Նավասարդյանը և Սաքո Սահակյանը։ Քննարկելով Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները և ի նկատի ունենալով, որ Ադրբեջանը ձգտում էր նման բարբարոսական ձևերով նվաճել հայկական Ղարաբաղը՝ նրանք դաշնակից պետություններին առաջարկում են անհապաղ միջոցներ ձեռնարկել և երկրամասում դադարեցնել արյունահեղությունը, ապահովել հայ բնակչության ֆիզիկական գոյությունը, նրան զերծ պահել նոր դժբախտություններից։[170] Հունիսի 21–ին դարձյալ Վանքի հրապարակում հայրենակցական միությունների վարչության նախագահ Հովհաննես Թումանյանը բաց անելով նոր հանրահավաքը, որին ներկա էին մոտ 30 հազար մարդ և 40–ից ավելի ազգային ու հայրենակցական կազմակերպություններ[171], նշեց, որ հայկական միջնաբերդը Ղարաբաղը մայր երկրից անջատելու համար կատարված իրադարձու-



ոճիրների հեղինակները թուրքական գործակալներ են։ Հանրահավաքն ընդունեց ծավալուն բանաձև, որում մերկացվում էր թուրք–թաթարների կողմից արցախահայության նկատմամբ իրագործվող բնաջինջ քաղաքականությունը։[172]

Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած այդ բարբարոսությունները մերկացրեց նաև արևմտահայերի հայրենակցական ընկերությունների ներկայացուցիչների հունիսի 11–ին Թիֆլիսում տեղի ունեցած հավաքը։[173] Իսկ Սուխումիի եկեղեցու բակում տեղի ունեցած հանրահավաքը, որտեղ նախագահում էր տեղի քաղաքական գործիչ Վահրամ Գասպարյանը, մերկացրեց Սուլթանովին և ընդունեց բանաձև, որտեղ նշված է, թե բավական չէ Թուրքիայում թափված հարյուր հազարավոր անմեղների արյունը, այժմ էլ պանիսլամիզմով տարված թուրքերն իրենց ոճրագործ քաղաքականությունն են վարում հայակեր ադրբեջանական կառավարության միջոցով՝ արյան բաղնիքներ սարքելով հենց դաշնակից պետությունների ներկայացուցիչների աչքի առաջ։ Չէ՞ որ Ղարաբաղի 300.000 հայությունը իր հինգ համագումարներում ցանկություն է հայտնել միանալ Հայաստանին։ Հանրահավաքը պահանջում է ոճրի և բարբարոսության հեղինակներին խիստ պատժել։[174]

Մուսավաթական Ադրբեջանն ամեն կերպ փորձում էր թաքցնել Ղարաբաղում կատարված ոճրագործությունները։ Նախ Բաքու է կանչվում նահանգապետ Սուլթանովը, հետո Ղարաբաղ է ուղարկվում խորհրդարանի անդամներից մի հանձնաժողով՝ տեղում ծանոթանալու ընդհանուր վիճակի հետ։ Այդ դեպքերը քննող հանձնաժողովի անդամ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Պողոս Չուբարյանն իր կազմած զեկուցագրում և Ադրբեջանի խորհրդարանում ունեցած ելույթում պնդում է, թե սպանդի հիմնական կազմակերպիչը եղել է Սուլթանովը։[175] «Մուսավաթ» ֆրակցիայի առաջարկությամբ խորհրդարանն ընդունում է այսպիսի բանաձև՝ «Լսելով կառավարության զեկուցումը և բացատրությունը Ղարաբաղի դեպքերի վերաբերյալ, գտնում է, որ տեղական իշխանության և մասնավորապես ընդհանուր նահանգապետի գործունեության մեջ անօրինականության ոչ մի փաստ չկա։ Ուստի խորհրդարանը հավանություն է տալիս այդ դեպքերին վերջ տալու համար կառավարության ձեռնարկած միջոցառումներին»։[176]

Հունիսյան իրադարձություններից հետո Արցախ–Ղարաբաղն ընկավ էլ ավելի ծանր վիճակի մեջ։ Դաշնակից պետությունները, մանավանդ Անգլիան, հավատալով ադրբեջանցիների ստահոդ քարոզչությանը, ավելի են ուժեղացնում ճնշումը արցախահայության նկատմամբ և նրանց ստիպում որպեսզի ընդունեն Ադրբեջանի իշխանությունը։ Հարցը դրել էին կտրուկ. ընդունո՞ւմ եք Ադրբեջանի իշխանությունը, թե՞ ոչ։ Ինչ խոսք, արցախահայության համար ազատությունը, մայր Հայաստանի հետ վերամիավորվելը ամեն ինչից վեր էր։ Հենց դա ի նկատի ուներ «Հառաջը», որ 1919 թ. մարտին գրում էր. «Մի ժողովուրդ, որ դարեր շարունակ ապրել է ազատ ու անկախ, որ չի ընկճվել ու ստրկացել խաներին ու փաշաներին՝ այդ ժողովուրդը չի կա-

մենում, չի կարող ստրկանալ, և պետք չէ, որ ստրկացվի Բաքվի ջարդարար խան Խոյսկիների բռնակալությանը:

Հայկական Լեռնային Ղարաբաղը հայկական է, պատմական և թե ազգագրական տեսակետներից և նա կամենում է կցվել Հայաստանի Հանրապետությանը, որովհետև այսպիսով միայն նա կարող է պահպանել իր կյանքից էլ թանկ ազատությունը»:[177] Հենց արցախահայության այդ ազատատենչ, ազատ ինքնորոշման իրավունքն ի նկատի ուներ Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, երբ հունիսի 16-ին Ադրբեջանի կառավարությանը ներկայացրած նոտայում պահանջում էր Ղարաբաղում դադարեցնել ադրբեջանական ուժերի հակահայկական գործողությունները և վերջ դնել Սուլթանովի բռնություններին:[178]

Ի՞նչ անել: Սեփական ուժերով տասնյակ անգամ գերազանցող մուսավաթական ուժերի դեմ կռվել ու հաղթանակ տանել հնարավոր չէր, մանավանդ, որ շատ թե քիչ նրանց զսպող անգլիական զորամասերն էլ պատրաստվում էին հեռանալ Լեռնային Ղարաբաղից: Զանգեզուրի հետ էլ կապերն ընդհատվել էին, և Զաբուղն անցնելը դարձել էր գրեթե անհնարին: Ահա այսպիսի պայմաններում, հունիսի 19-ին, հրավիրվում է Արցախի բոլոր քաղաքական կուսակցությունների և ուժերի ներկայացուցիչների ժողով, որը քննարկում է Ղարաբաղում ստեղծված վիճակը: Խնդիրը դրված էր այսպես. կռիվ կամ համաձայնություն: Ժողովի մասնակիցները հանգում են այն եզրակացության, որ կռվելու համար անհրաժեշտ ուժը չունեն, բայց և այնպես, ինչ էլ որ լինի, «պետք է Ղարաբաղն անվնաս պահել ապագայի համար:[179] Այդ նույն երեկոյան գումարվում է նոր ժողով: Երկար վիճաբանությունից հետո որոշում են հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար, որի աշխատանքներին պետք է մասնակցեին նաև անգլիական հրամանատարության և մուսավաթական Ադրբեջանի ներկայացուցիչները: Ժամանակի մամուլը հաղորդել է, որ համագումարի աշխատանքներին պիտի մասնակցեն նաև Թիֆլիսի ու Բաքվի ղարաբաղցիների հայրենակցական միությունների ներկայացուցիչները: Համագումարի նպատակը պետք է լիներ Ղարաբաղը փրկել նոր կոտորածներից և արյունարբու Սուլթանովից:

1919թ. հունիսի 28-30-ը Վարանդայի Շոշ գյուղում տեղի ունեցավ Ղարաբաղի հայության **վեցերորդ** համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էին նաև հարևան գյուղերից եկած շուրջ 500 հոգի:[180] Ադրբեջանի կառավարության և անգլիական հրամանատարության ներկայացուցիչները չներկայանալու պատճառով հունիսի 30-ին համագումարն ընդունում է մի որոշում, որտեղ ասված է. «Քաղաքի հայկական հանձնաժողովի նախաձեռնությամբ և անգլիական միսիայի գիտությամբ Հայկական Ղարաբաղի բնակչության ներկայացուցիչները հավաքվեցին վեցերորդ համագումարի՝ գլխավոր նպատակ ունենալով բանակցությունների միջոցով մշակել Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման պայմանները մինչև նրա վերջնական որոշումը խաղաղարար կոնֆերանսի կողմից: Ընդառաջ գնալով այն ամենին, ինչը կարող է սատկ նպաստել երկուստեք բարդրիացիական հարաբերությունների ամրապնդմանը Ղարաբաղի հայ բնակչությունը ողջունում է Ղարաբաղի ժամանակավոր ստատուս-քվոն խաղաղ ճանապարհով որոշելու ամեն մի փորձ»: Համագումարը ափսոսանք է հայտնում, որ հարցը չլուծվեց Ադրբեջանի Հանրապետության և անգլիական միսիայի ներկայացուցիչները չներկայանալու պատճառով: Համագումարը միևնույն ժամանակ բողոք է հայտնում «Ադրբեջանի իշխանությունների կողմից քաղաքում կազմակերպված ընդհարումների, հայկական հինգ գյուղերի ոչնչացման, Ղայբալիշենի կոտորածի և այլնի կապակցությամբ և պահանջում է հետաքննել այդ իրադարձությունները, բացահայտել մեղավորներին, նրանց պատասխանատվության կանչել...»:[181]

Ղարաբաղի հայության վեցերորդ համագումարն ընտրում է ազգային խորհուրդ հետևյալ կազմով՝ Ասլան Շահնազարյան (նախագահ), Լևոն Վարդապետյան, Գերասիմ Խաչատրյան, Ներսես Նասիբյան և Շահնազար Գասպարյան:[182]

Թե ազգային խորհրդի և թե զինվորական միության նստավայրը պաշտոնապես հայտարարվում է Տռնավարզ գյուղը: Հուլիսի մեկին այստեղ տեղի է ունենում խորհրդակցություն, որը որոշում է Ղարաբաղի հայության վեցերորդ համագումարի անունից երեք հոգուց բաղկացած պատվիրակություն ուղարկել Բաքու՝ բանակցելու Ադրբեջանի կառավարության հետ: Այդ պատվիրակության ղեկավար է նշանակվում Արամայիսը: Նաև որոշվում է, որ Բաքվում Ադրբեջանի կառավարության հետ տարվելիք բանակցություններին, բացի վեցերորդ համագումարի կողմից ուղարկվող պատվիրակության անդամներից, «պետք է մասնակցի նույնպես և Հայաստանի դիվանագիտության ներկայացուցիչը»:[183]

Արամայիսը և Շուշի քաղաքից պատվիրակության անդամ առաջադրված նոր քաղաքագլուխ Ռուբեն Մելիք-Շահնազարյանը հուլիսի 3-ին մեկնում են Բաքու՝ բանակցություններ վարելու Ադրբեջանի կառավարության հետ:[184] Հաջորդ օրը Բաքու է ճանապարհվում պատվիրակության երրորդ անդամ, վեցերորդ համագումարի նախագահ Գերասիմ Խաչատրյանը, որը Աղդամի ճանապարհին սպանվում է մուսավաթական դահիճների կողմից:[185]

Այսպիսով՝ Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու անգլիական նախանձախնդիրներ Թոմսոնը, Շատելվորտը, Կորրին և ուրիշներ առժամանակ իրենց հաղթող ճանաչեցին: Չնայած անգլիական միսիայի ճակատագիրն արդեն վճռված էր, բայց և այնպես, այն չէր հրաժարվում արցախահայության վրա ճնշում գործադրելուց: Վերջապես, 1919 թ. հուլիսի 12-ին, Ղարաբաղից հեռացավ Մոնկ Մեսսենը՝ իր 396 անգլիական զինվորներով:[186] Արցախահայությունը ատելությամբ և նզովքով ճանապարհեց ութ ամիս առաջ իր տունը ներխուժած անցանկալի անգլիացիներին:

***

Արցախ-Ղարաբաղի և մուսավաթական Ադրբեջանի միջև 1919 թ. կնքված օգոստոսյան ժամանակավոր համաձայնության մասին գրել և գնահատականներ են տվել թե հայ և թե ադրբեջանցի պատմաբանները: Գրիգոր Հովհաննիսյանը

որոշ դատողություններ անելուց հետո հանգում է այն եզրակացության, թե օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունը մի կողմից՝ «խիստ անհրաժեշտ էր մուսավաթական կառավարությանը, որովհետև Ադրբեջանը գտնվում էր ծանր վիճակում և իղի էր հեղափոխությամբ», իսկ մյուս կողմից էլ՝ «մեծ նշանակություն ունեցավ Լեռնային Ղարաբաղի համար», քանի որ այնտեղ «դադարեցին զինված ընդհարումները մուսավաթական զինված ուժերի և Հայկական Ղարաբաղի ինքնապաշտպանության ջոկատների միջև, վերականգնվեց խաղաղ կյանքը»։[187] Այնուհետև Գ. Հովհաննիսյանը մտցնում է նոր «պարզաբանում»՝ օգոստոսյան համաձայնությանը «բոլշևիկները համաձայն էին ու պաշտպանում էին, իսկ դաշնակները ամեն միջոցի դիմում էին համաձայնագիրը ձախողելու համար»։[188] Դա, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը։

Միքայել Սողոմոնյանն օգոստոսյան ժամանակավոր համաձայնության գնահատման հարցում վիճաբանելով Գրիգոր Հովհաննիսյանի հետ, պնդում է, թե «այդ համաձայնագիրը կնքվել է մուսավաթների և դաշնակների միջև՝ հեղափոխությամբ իղի Ադրբեջանի դեմ միասնական հակահեղափոխական ճակատ ստեղծելու նպատակով»։[189] Սա ճշմարտության տիպիկ խեղաթյուրում է։

Բագրատ Ուլուբաբյանը, առանց հանգամանորեն վերլուծելու այդ ժամանակ ստեղծված իրավիճակը, ի միջի այլոց գրում է, թե օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը «ադրբեջանցիներն... ընդունեցին որպես իրենց լիակատար հաղթանակը», իսկ «Հայաստանի Հանրապետությունն էլ դա ճանաչեց իբրև հայ ժողովրդի դեմ գործած ահավոր դավաճանություն»։[190]

Համլետ Հարությունյանը հպանցիկ շոշափելով օգոստոսյան համաձայնագրի հարցը, գրում է, թե «Համաձայնագրի հիմնական բովանդակությունը ընդհանուր գծերով հանգում էր նրան, որ արցախահայությունը Ղարաբաղը ժամանակավորապես ճանաչում էր Ադրբեջանի կազմում մինչև հարցի վերջնական լուծումը Փարիզի խաղաղարար կոնֆերանսի կողմից»։[191] Ճիշտ կլիներ, եթե «Ղարաբաղը ժամանակավորապես ճանաչվում է Ադրբեջանի կազմում» նախադասությունը մեջբերվեր սկզբնաղբյուրին համապատասխան՝ «Ղարաբաղը ժամանակավորապես ճանաչվում էր Ադրբեջանի սահմաններում»։

Ոմանք էլ այն միտքն են արտահայտել, թե օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունից դժգոհ էին և՛ մուսավաթականները, և՛ դաշնակցականները։[192]

Ադրբեջանի ԳԱ թղթակից–անդամ Թ. Քոչարլին վերոհիշյալ իր հոդվածում խոսելով օգոստոսյան ժամանակավոր համաձայնության մասին, Ղարաբաղի հայության կողմից իբրև Ադրբեջանի իշխանությունն ընդունելու փաստ, վկայակոչում է ընդունված օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը և, որպես դրա հաստատում, մեջբերում է Նարիմանովի, Մդիվանիի, Միկոյանի, Նանեյշվիլիի, Վեսնիկի, Լևանդովսկու և Միխայլովի Ռուսաստանի Կ(բ)Կ Կենտկոմին 1920 թ. հուլիսի 7-ին ուղարկած նամակից մի հատված, որտեղ ասված է, թե Ղարաբաղն ու Զանգեզուրը մշակութային և տնտեսական կապերով կապված են Բաքվի հետ, տասնյակ հազարավոր բանվորներ կտրված են Երևանից և «սնվում են Բաքվի հաշվին»։ Դա ապացուցում է այն, որ «19 թվականին Հայկական Ղարաբաղի գյուղացիական համագումարը», որոնց համար անտանելի էին թե մուսա-



վաթական կարգերը և թե Հայաստանի գործակալների պրովոկացիաները, «արտահայտվել է միասնական Ադրբեջանի» օգտին։[193] Իսկ պատմագիտության դոկտոր Զ. Գուլիևը վերոհիշյալ իր հոդվածում (էջ 12) գրում է, թե Ղարաբաղի կոմունիստները միշտ էլ հանդես են եկել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի հետ լինելու օգտին, որովհետև «նրանք դեռևս 1919 թվականին իրենց օգոստոսյան խորհրդակցությունում այդ առթիվ ընդունել են հատուկ որոշում»։ Զարմանալին այն է, որ Զ. Գուլիևը Ղարաբաղի հայության յոթերորդ անկուսակցական համագումարը շփոթում է կոմունիստների ինչ–որ խորհրդակցության հետ։ Ադրբեջանի ԳԱ թղթակից–անդամ՝ Ե. Տոկարժևսկին, հավատարիմ մնալով ադրբեջանցի իր գործընկեր Զ. Գուլիևին, տառացիորեն կրկնում է նրան։[194] Ադրբեջանցի մեկ ուրիշ պատմաբան՝ Իգրար Հաբիբ օղլի Ալիևը, գրում է, թե Ղարաբաղի հայության 1919 թ. օգոստոսյան համագումարն արտահայտվել է «Ադրբեջանի ամբողջականության օգտին և որոշել է միանալ Ադրբեջանին»։[195]

Այս հեղինակներն, անկասկած, սնունդ են ստացել «Մուսավաթ«» կուսակցության պարագլուխ տեսաբան Ռասուլ Զադեի խոհանոցից։ Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարից մի քանի օր անց նա գրել է. «Ղարաբաղը, մեր հայրենիքի այս սիրուն վայրը, ազատվեց մեր համառ դրացիների ոտնձգություններից, որոնք ջլատում էին մեր տնտեսական կյանքը, և մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրության մատնել։ Առանց տեղի տալու ավելորդ արյունահեղության՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ադրբեջանի գերիշխանությունը»։[196] Ի միջի այլոց, Արսեն Միքայելյանն իր «Ղարաբաղի վերջին դեպքերը» վերտառությամբ հուշերում օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունը համարում է «Ադրբեջանի դիվանագիտության հաղթանակը»։[197]

Օգոստոսյան ժամանակավոր համաձայնության գնահատման հարցում միանգամայն համամիտ ենք Լենդրուշ Խուրշուդյանի հետ։ Նա գրում է. «Օգոստոսի 22–ի համաձայնությունը ըստ էության չփոխեց Լեռնային Ղարաբաղի ստատուսը, նախկինի պես մարզը մնաց ինքնուրույն քաղաքական միավոր»։[198] Հետագայում, Թիֆլիսի ղարաբաղցիների հայրենակցական միության անունից Սիմոն (Սիմոնիկ) Փիրումյանը և Արամայիս Երզնկյանը 1920 թ. հունիսի 9–ին Վ. Լենինին ուղարկած նամակում, խոսելով օգոստոսյան ժամանակավոր համաձայնության մասին, շեշտել են, որ այդ պայմանագրով ղարաբաղցիները գրեթե պահպանում են իրենց ինքնուրույնությունը։[199] Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի պատգամավոր և քարտուղար Աբրահամ Կիսիբեկյանը իր հուշերում այսպես է մեկնաբանել օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունը. «Համագումարը, ընտրելով երկու չարյաց փոքրագույնը՝ կապելով Ադրբեջանի կառավարության հետ ժամանակավոր պայմանագիրը, թեկուզ խաբուսիկ, այնուամենայնիվ, կարողացավ գոնե ժամանակավորապես շահել խաղաղությունը և իր աշխատավորությանն ազատել սարսափներից ու կոտորածներից»։ Ապա նա նշել է համագումարում «հանդես չեկան կուսակցական նեղ շահերն ու կրքերը և դրանք ստորադասվում էին ընդհանուր հասարակական շահերին, և բոլորն էլ լուրջ ու սառն դատողությամբ մոտենալով հարցին՝ ի նկատի էին ունե-

նում Ղարաբաղի աշխատավորության անպատրաստ ու անհոգ վիճակը և միացյալ ուժերով փնտրում նրան դուրս հանելու այդ դժվարագույն դրությունից: Աիա թե ինչն էր ստիպում յոթերորդ համագումարի 140–150 պատգամավորներին, կուսակցականներին, գործելու միշտ ու համերաշխ՝ հօգուտ Ղարաբաղի ինքնուրույնության ու նրա ազգային շահերի...», և որ յոթերորդ համագումարի պատգամավորները օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրն ընդունեցին «ոչ թե իրենց ազատ կամքով ու համոզմունքով, այլ հարկադրանքով ու բռնությամբ»:[200] Սա է պատմական ճշմարտությունը: Այժմ օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի նախապատրաստման և ընդունման մասին:

Բաքվում Միսակ Տեր–Դանիելյանին (Արամայիս) և Ռուբեն Շահնազարյանին միացան Բաքվի Հայոց ազգային խորհրդի կողմից ընտրված Սերգեյ Մելիք–Յոլչյանը և Նիկոլայ Փիրումյանը: Հանձնաժողովը կազմում է 23 կետից բաղկացած պայմանագրի նախագիծ և հուլիսի 9–ին ներկայացնում Ադրբեջանի կառավարության նախագահ Նասիբ բեկ Ուսուբբեկովին ու Ղարաբաղի նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովին, հետևյալ հայտարարության հետ միասին. «Հայկական Ղարաբաղի վեցերորդ համագումարի նախագահության կողմից լիազորված հանձնաժողովը, հետևյալ կազմով՝ Մ. Տեր–Դանիելյան, Ռ.Ն. Շահնազարյան, Ս.Ա. Մելիք–Յոլչյան և Ն.Դ. Փիրումյան, առաջնորդվելով դարերով կողք կողքի խաղաղ և համերաշխ ապրող ղարաբաղցի հայերի և թաթարների միջև հարաբերությունները սրվելու հնարավորությունը կանխելու մասին Կովկասում Մեծ Բրիտանիայի հրամանատարության կողմից բազմիցս արված առաջարկություններով և Ղարաբաղի հայության 6–րդ համագումարի որոշումներով, բանակցությունների մեջ է մտնում Ադրբեջանի Հանրապետության կառավարության հետ՝ Ղարաբաղի լեռնային մասում ժամանակավոր modus vivendi հաստատելու համար»:[201]

Ադրբեջանի կառավարության հետ բանակցություններն ընդունում էին չափազանց ծանր, դժվարին ու լարված պայմաններում: Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը հուլիսի 7–ին իր կառավարությանն ուղարկած զեկուցագրում շարադրելով վերոհիշյալ հանձնաժողովի կողմից կազմված պայմանագրի նախագծի հիմնադրույթները, հարցնում է. մասնակցել բանակցություններին, որպես Հայաստանի ներկայացուցիչ, թե ոչ, մանավանդ, որ «ղարաբաղցիները պահանջում են, որպեսզի իրենց առաջարկությունները հաստատված լինեն ոչ միայն 7–րդ համագումարում, այլև հայկական կառավարության կողմից և մինչև անգամ ստիպում են իմ անմիջական մասնակցությունը բանակցություններին, մինչդեռ ես վճռականորեն մերժել եմ, մինչև ձեզնից հրաման ստանալը»: Այնուհետև շարադրում է իր կարծիքը. «Եթե ինքը՝ Ղարաբաղը համաձայն է ժամանակավոր modus–ին, մենք բարոյական իրավունք չունենք, առանց նրան օգնություն ցույց տալու, խանգարել նրա հաստատմանը»:[202] Երեք օր անց, հուլիսի 10–ին, Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի անդամներից երկուսը Թիֆլիսում Հայաստանի կառավարության ներկայացուցչին ուղարկած նամակում, հիշեցնելով Բաքվում Ադրբեջանի կառավարության և Ղարաբաղի հայության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցությունների մասին, նշում է, որ «բանակցություններում Հայաստանի ներկայացուցչի բացակայությունը օգտագործվում է Ադրբեջանի կողմից», որը «ղարաբաղյան հարցը համարում է իր ներքին գործը»: Հետևապես, բանակցություններին Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը խիստ անհրաժեշտ է:[203] Բայց և այնպես, Հայաստանի կառավարությունը մերժում է արցախահայության խնդրանքը և չի մասնակցում բանակցություններին: Դա դեռ բոլորը չէր: Բաքվի հայոց ազգային խորհուրդը բանակցություններին մոտենում էր ձևականորեն և չէր ցուցաբերում ոչ մի ակտիվություն: Մյուս կողմից էլ, թիֆլիսաբնակ ղարաբաղցիների և զանգեզուրցիների հայրենակցական միության ղեկավարությունը Միսակ Տեր–Դանիելյանից պահանջում էր դադարեցնել բանակցությունները և անհապաղ մեկնել Թիֆլիս: Մինչդեռ, Ադրբեջանի կառավարությունը և անգլիական հրամանատարությունը ճնշում էին գործադրում պատվիրակության վրա և պահանջում արագացնել պայմանագրի ստորագրումը:

Հայաստանի կառավարությունից ստացված պատասխանում սպառնալիք կար՝ «Արամայիսը պատասխանատու կլինի Դաշնակցական բյուրոյի և կառավարության առաջ, եթե ստորագրի համաձայնագիրը»: Ասված է նաև, թե Հայաստանի կառավարությունը կանգնած է իր նախկին տեսակետին՝ Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է և որ Միսակ Տեր–Դանիելյանի և Ռ. Շահնազարյանի կատարածը «непредуманным» քայլ է: Այսքանից հետո՝ եթե Ղարաբաղի ժողովուրդը ուզում է բանակցել Ադրբեջանի կառավարության հետ, ապա Հայաստանի կառավարությունը չի արգելի:[204] Այս հակասական դիրքորոշումից վրդովված Միսակ Տեր–Դանիելյանը չի թաքցնում իր դժգոհությունը. «Այսպես, ուրեմն, երբ ամիսների ընթացքում մեր աղաղակը խփում էր Երևանի խուլ պատերին ու անպատասխան մնում, երբ մենք շարունակ «փո՜ղ», «փամփո՜ւշտ» էինք աղաղակում և Երևանը խուլ էր մնում, երբ մենք Ղարաբաղում հնոցի մեջ եփվում էինք, Ադրբեջանն իր թնդանոթներն էր շարել մեր չորս կողմը, իսկ Հայաստանի կառավարությունը միայն իր գրպանում էր բռունցքը ցույց տալիս՝ մեզ թողնելով ահավոր թշնամու ճիրաններում մեն–մենակ թպրտալիս, այդ բոլորը «непредуманным» էին, իսկ երբ Տեր–Դանիելյանը հազար ու մի խորամանկ միջոցներով դարձյալ ձգձգում էր վճռական րոպեն ու ժամանակ տալիս Հայաստանի կառավարությանը՝ իր խելքն ու ուժը ցույց տալու, Խատիսյանը բացարձակապես արդարացնելով Երևանը, մեզմ ասած՝ անզգույշ էր համարում մեր արածը»:[205]

Հուլիսի 11–ին Թիֆլիսից Բաքու ժամանած ղարաբաղցիների և զանգեզուրցիների հայրենակցական միության վարչության անդամ Միքայել Ղարաբեկյանը հանձնաժողովից պահանջում է «Ադրբեջանին ուշադրություն չդարձնել»:[206] Հուլիսի 12–ին Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահությունը, մասնակցությամբ հայ ազգային միությունների ներկայացուցիչների, որոշում է պահանջել Հայաստանի կառավարությունից՝ իր վրա վերցնել Ղարաբաղի հարցի լուծման պատասխանատվությունը:

Անկախ այդ ամենից, արցախահայության պատվիրակությունը գտնում էր, որ պետք է շարունակել բանակցությունները և ամեն կերպ ձգձգել այն,

մինչև Երևանը կարթնանար նիրհից և որևէ հստակ պատասխան կտար։ Իսկ մինչ այդ, Ադրբեջանի կառավարությունը, քննարկելով հանձնաժողովի ներկայացրած հաշտության պայմանագրի նախագիծը, արտահայտեց դժգոհություն և հուլիսի 14-ին հանձնաժողովին հանձնեց իր նախագիծը, որն արցախահայության պատվիրակության կողմից անընդունելի էր։ Պատվիրակությունը կառավարության նախագահ Ուսուբբեկովից պահանջում է ընդունել իր ներկայացրած նախագիծը, բացի երկու կետից։ Քանի որ Զանգեզուրի հարցը հանգիստ չէր տալիս Ադրբեջանի կառավարությանը, ուստի նա որոշեց շատ չհիմադրել և համաձայնության գալ արցախահայության հետ։ Միսակ Տեր-Դանիելյանը մեկնում է Երևան՝ Հայաստանի կառավարությանը և ՀՅԴ Կենտկոմին զեկուցելու բանակցությունների ընթացքի մասին, իսկ Ռուբեն Տեր-Շահնազարյանը՝ Ղարաբաղ՝ ազգային խորհրդին ներկայացնելու համաձայնության նախագիծը։ Միսակ Տեր-Դանիելյանին փոխարինում է Ղարաբաղի ազգային խորհրդի անդամ Ներսես Նասիբյանը։ Հուլիսի 25-ին, ապա օգոստոսի 3-5-ը Ուսուբբեկովի հետ ունեցած հանդիպումների ժամանակ որոշվում է պայմանագրի վերջնական տարբերակը համաձայնեցնել Սուլթանովի հետ և այն քննության առնել Ղարաբաղի հայության 7-րդ համագումարում։

Խոսրովբեկ Սուլթանովը Շուշի է վերադառնում հուլիսի կեսերին։ Այդ օրերին արցախահայությունը նախապատրաստվում էր իր յոթերորդ համագումարին, որտեղ պետք է վերջնականապես վճռվեր Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու կամ չենթարկվելու հարցը։ Համագումարի վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանը նոր ուժեր է կենտրոնացնում Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում[207] և ակերածություններ կատարում Դոնալար, Բինյաթլու, Առաքել և այլ գյուղերում։[208] Այդ օրերին միայն Շուշի քաղաքում ծայրամասային գյուղերից կուտակվել էին 12 հազար փախստականներ։[209]

Արցախ-Ղարաբաղի գլխին կրկին կախվել էր ահավոր վտանգ։ Այն կանխելու, հետագա անելիքները հստակեցնելու, Ադրբեջանի կառավարության հետ ժամանակավոր համաձայնագիր կնքելու համար հրավիրվում է Ղարաբաղի հայության **յոթերորդ** համագումարը, որը տեղի է ունենում 1919 թ. օգոստոսի 13-ից մինչև 22-ը, Վարանդայի Շոշ գյուղում։ Սուլթանովը պահանջում էր համագումարը հրավիրել Շուշի քաղաքում և իր ներկայությամբ լուծել Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու հարցը։ Սակայն ազգային խորհուրդը մերժում է նրա պահանջը։

Համագումարը ղեկավարելու համար նախագահ է ընտրվում Արսեն Հովհաննիսյանը, փոխնախագահներ՝ Արշավիր Քամարյանը և Իսրայել Ղուլիբեկխյանը, քարտուղարներ՝ Աբրահամ Կիսիբեկյանը և Հովհաննես Աբրահամյանը։ Համագումարի օրակարգը բաղկացած էր երկու խումբ հարցերից՝ արտաքին և ներքին։ Արտաքին խմբի հարցերն էին. ա) Վեցերորդ համագումարի ընդունած որոշումների իրագործման ընթացքը (զեկուցող՝ ազգային խորհրդի անդամ Լևոն Վարդապետյան)։ բ) Ղարաբաղի քաղաքական դրությունը (զեկուցող՝ ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյան)։ գ) Ադրբեջանի կառավարության հետ վարած բանակցությունների արդյունքը (զեկուցող՝ Ներսես Նասիբյան)։



Ներքին հարցերն էին. ա) Զեկուցումներ ազգային խորհրդի, շրջանային խորհուրդների և զինվորական մարմինների գործունեության մասին։ բ) Հարկերի գանձման ընթացքը, հասարակական շտեմարանների ստեղծումը և նախկին պետական ու ազատ մնացած հողատարածությունների օգտագործումը։ գ) Ղեկավար մարմինների ընտրություններ։

Համագումարը նահանգապետ Սուլթանովին բողոք է ներկայացնում Ջիվանշիրից երկու պատգամավորների, ինչպես և վեցերորդ համագումարի նախագահ Գերասիմ Խաչատրյանի սպանությունների առթիվ և պահանջում հայտնաբերել հանցագործներին ու պատասխանատվության ենթարկել։ Ստանալով բողոքը, Սուլթանովը շտապ կարգով հայկական թաղամասից, որտեղ ապրում էր մինչ այդ, տեղափոխվում է մուսուլմանական թաղամասը։ Ապա համագումարին ուղարկում է վերջնագիր, որով պահանջում է 48 ժամվա ընթացքում ընդունել Բաքվում մշակված ժամանակավոր համաձայնագիրը։ Արցախահայության վրա ճնշում գործադրելու նպատակով, Սուլթանովի հրամանով հրանոթների փողերը շրջվում են Շոշ գյուղի և քաղաքի հայկական թաղամասի ուղղությամբ։[210] Համագումարի օգոստոսի 14-ի երկու նիստերում ելույթ են ունենում 55 պատգամավոր և բուռն ու երկարատև վիճաբանությունից հետո հանգում հետևյալ եզրակացության. համաձայնագրի բովանդակության մասին տեղյակ պահել երկրամասի ամբողջ բնակչությանը, կազմել հանձնաժողով՝ ծանոթանալու ռազմական ուժերի վիճակի հետ և զեկուցել համագումարին, ժամանակ շահելու և ռազմական ուժերը կարգի բերելու նպատակով ամեն կերպ ձգձգել բանակցությունները, զինակոչել 18-45 տարեկան տղամարդկանց, մերժել Ադրբեջանի կառավարության բոլոր նվաստացուցիչ առաջարկությունները և այլն։ Օգոստոսի 15-ի առավոտյան նիստում բուռն վիճաբանություններից հետո, 124 պատգամավորի ստորագրությամբ ընդունվում է հետևյալ բանաձևը. «Ղարաբաղի յոթերորդ համագումարը, քննելով ստեղծված լուրջ դրությունը, որ հավասարապես կործանաբեր կարող է լինել երկու ժողովուրդների համար, ընդառաջ է գնում Ադրբեջանի կառավարության առաջարկին՝ բանակցությունների միջոցով, խաղաղ ճանապարհով լուծել ներկա ճգնաժամային խնդիրները, իբրև հավասար կողմեր որոշում է պաշտոնական բանակցությունների մեջ մտնել։ Այդ նպատակով ընտրվում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ Արշավիր Քամալյան (նախագահ), Հակոբ Եսայան, Աթանես Ղահրամանյան, Ներսես Նասիբյան և Աբրահամ Իսախանյան, որն անմիջապես մեկնում է Շուշի, որտեղ քաղաքի ներկայացուցիչների հետ միասին վերանայում են Բաքվում մշակված համաձայնության նախագիծը»։ Օգոստոսի 15-ի երեկոյան նիստում ընտրվում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ ծանոթանալու զինվորական շտաբի աշխատանքների հետ։ Այդ նույն նիստում ընտրվում է Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նոր կազմ՝ Ներսես Նասիբյան, Իսրայել Ղուլիբեկխյան, Աթանես Ղահրամանյան, Աբրահամ Կիսիբեկյան, Բենիկ Բաբաջոխյան և Աբրահամբեկ Իշխանյան։ Ազգային խորհրդի նախագահ է ընտրվում Իսրայել Ղուլիբեկխյանը։

Օգոստոսի 16-ի առավոտյան նիստում, արդեն 133 պատգամավորի մասնակցությամբ, քննարկվում է ժամանակավոր համաձայնության նախագիծը և կատարվում որոշ լրացումներ, իսկ օգոստոսի 17-ի նիստում քննարկվում է զինվորական շտաբի գործունեությունը ստուգող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունները և ընդունվում անհրաժեշտ որոշում: Օգոստոսի 18-ի և 19-ի նիստերում քննարկվում են հարկերի գանձման ընթացքի, անտառների, արոտավայրերի և ազատ հողատարածությունների օգտագործման վերաբերյալ հարցերը: Երկրամասի բոլոր անտառները, արոտավայրերը և ազատ հողատարածությունները հայտարարվում են ժողովրդական սեփականություն, որոշվում է արգելել անօրեն հարկերն ու տուրքերը, թալանված ու վնասված բոլոր գյուղերն ազատել հարկերից և տուրքերից:

Սուլթանովի վերջնագրի պատասխանը ուշանում էր: Ադրբեջանի կառավարությունը Բաքվից, Գանձակից և այլ տեղերից նորանոր զորամասեր էր տեղափոխում Ղարաբաղ: Տագնապալի լուրերը հեղեղում էին համագումարը: Պատգամավորները մտածում էին ելք որոնել և կանխել վերահաս ողբերգությունը: Այս չափազանց ծանր և դժոխային պայմաններում համագումարը ստիպված ընտրում է 20 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը ազգային խորհրդի անդամների հետ գնում է Շուշի՝ Սուլթանովի հետ բանակցությունները շարունակելու: Հանձնաժողովը և ազգային խորհուրդը համագումարի կողմից ունեին լայն լիազորություններ: Նրանք կարող էին Ադրբեջանի կառավարության հետ վարել բանակցություններ և կնքել համաձայնություն, կատարել վարչական և այլ տեսակի նշանակումներ, հրավիրել խորհրդակցություններ և այլն: Համագումարը նրանց վրա դնելով «ամենածանր ու պատասխանատու պարտականություն»,[210] սպասում էր դրական արդյունքների: Օգոստոսի 22-ին Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի կողմից ընտրված հանձնաժողովը ստորագրում է Ադրբեջանի կառավարության հետ ժամանակավոր համաձայնություն,[211] որը բաղկացած էր 26 կետից:[212] Ադրբեջանի կառավարության կողմից համաձայնագիրը ստորագրել է Ղարաբաղի նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը:

Այդ ժամանակավոր համաձայնագրով Ղարաբաղի հայկական գավառները (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ և Շուշի քաղաքը, որտեղ բնակիչները հիմնականում հայեր էին), մինչև Փարիզի վեհաժողովի որոշումը «ժամանակավորապես իրենց համարում են Ադրբեջանի հանրապետության սահմաններում» (կետ 1 և 2), «լեռնային հայկական շրջանում վարչությունը նշանակվում է հայերից» (կետ 3 և 4) «նահանգապետության կից կազմվում է խորհուրդ՝ վեց հոգուց բաղկացած՝ երեք հայ և երեք մուսուլման» (կետ 5), «խորհրդի հայ անդամներին ընտրում են Լեռնային Ղարաբաղի հայության համագումարում» (կետ 6), «ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել կյանքում, առանց նախապես խորհրդի քննության ենթարկվելու» (կետ 7); խորհուրդը իրավունք ունի հսկելու գեներալ-նահանգապետության վարչության գործունեությունը (կետ 9), «հիմնվում է նահանգապետի օգնականի պաշտոն քաղաքացիական մասի վերաբերյալ, և այդ պաշտոնում նշանակվում է հայ» (կետ 10), Ղարաբաղի հայերը ստանում են «կուլտուրական ինքնորոշման իրավունք», որը «իրագործվում է Ղարաբաղի ազգային խորհրդի միջոցով» (կետ 12 և 13), «խաղաղ պայմաններում ռազմական զորամասերը տեղավորվում են Խանքենդում և Շուշիում» (կետ 15). «Ղարաբաղի. այսինքն՝ Շուշիի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների լեռնային շրջաններում, ուր բնակվում են հայեր, զինվորական զորամասերի յուրաքանչյուր տեղափոխություն կատարվում է խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ» (կետ 16), «քաղաքական համոզմունքների համար ոչ ոք չի կարող ենթարկվել հալածանքի ոչ դատական և ոչ էլ վարչական կարգով» (կետ 17), «Ղարաբաղում հայ և թուրք բնակչության զինաթափումը դադարեցվում է մինչև Ղարաբաղի հարցի որոշելը խաղաղարար կոնֆերանսում» (կետ 19), Ադրբեջանի կառավարությունը նյութական ու բարոյական աջակցություն է ցույց տալիս «վերականգնելու հայկական ու թուրքական ավերված գյուղերը» (կետ 20), երկրամասի բնակչությանը և միություններին տրվում է «խոսքի և մամուլի լիակատար ազատություն» (կետ 21), «մասնավոր և պաշտոնական անձանց յուրաքանչյուր հանցանք պետք է հետապնդվի դատական կարգով» (կետ 23) և այլն:

Շուշիում հարկադրաբար ստորագրված այդ համաձայնագիրը հաստատվում է համագումարի վերջին նիստում՝ օգոստոսի 22-ին: Այդ նույն օրն էլ նահանգապետ Սուլթանովը կոչով դիմելով Շուշիի, Զանգեզուրի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի բնակչությանը, ցինիկաբար նշում է, թե Ադրբեջանի կառավարությունը իբրև իր հիմնական նպատակն է համարում «նպաստել բոլոր ազգերի բարեկեցությանն ու երջանկությանը» և տարբերություն չդնել ազգերի միջև, քանի որ միայն «գոյություն ունեն Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիներ»: Սուլթանովը «խոստանում է» ոչ մի տարբերություն չդնել Ղարաբաղի ազգաբնակչության միջև և բոլորի նկատմամբ ամենայն խստությամբ կիրառել «ռազմական ժամանակաշրջանի օրենքները»:[213]

Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը յոթերորդ համագումարի կողմից ընտրված հանձնաժողովի հետ միասին մի քանի օրվա ընթացքում բավական աշխատանքներ են կատարում: Նահանգապետի օգնական է նշանակվում Գրիգոր Քալանթարյանը (Գիգի աղա), նահանգապետին կից խորհրդի հայ անդամներ են ընտրվում Լևոն Վարդապետյանը (իրավաբան, մենշևիկ), Նիկոլայ Երամիշյանը (բժիշկ, անկուսակցական) և Հակոբ Բալասանյանը (դաշնակցական), հայկական շրջանների ընդհանուր գավառապետ է նշանակվում մասնագիտությամբ գյուղատնտես Բագրատ Մելիք Շահնազարյանը: Լեռնային Ղարաբաղի հայկական շրջանների և Շուշի քաղաքի հայկական մասի ոստիկանապետներ են նշանակվում բացառապես հայեր: Այնուհետև հանձնաժողովը ցրվում է, իսկ ազգային խորհուրդը նախագահ Իսրայել Ղուլիքևխյանի գլխավորությամբ հանձնաժողով է ուղարկում Բաքու, Երևան և Թիֆլիս՝ հայրենակցական միություններին և Հայաստանի կառավարությանը մանրամասն զեկուցելու Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին:

Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի և Ադրբեջանի կառավարության միջև կնքված ժամանակավոր համաձայնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահ և արտաքին

գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը Փարիզի վեհաժողովին ուղարկած բողոքում, շարադրելով վերջին մեկ տարվա ընթացքում արցախահայության մղած ազատագրական պայքարի համառոտ պատմությունը, «ամենաբուռն կերպով բողոքում է Արցախի ազգաբնակչությունից կորզված» համաձայնության դեմ և հիշեցնում, որ «Արցախը ժամանակին կազմել է Հայաստանի անբաժան մասը»: Մինիստր–նախագահը վճռականորեն պնդում է, որ «Արցախը աշխարհագրական կապերով կապված լինելով հայկական սարահարթին, կազմում է Հայաստանի բնական ամրությունը, առանց որի նրա հյուսիսարևելյան սահմանը կմնա անպաշտպան»: Հետևապես՝ «Արցախի անջատումը Հայաստանից և նրա բռնակցումը մի այլ պետության, ամբողջովին հակասում է ազգերի ինքնորոշման սկզբունքին»: Մինիստր–նախագահը հույս է հայտնում, որ վեհաժողովը «իր մասնավոր և բարեհաճ ուշադրությունը կդարձնի Հայաստանի համար այնքան կենսական հանդիսացող Արցախի հարցը»:[214]

Արցախի և Զանգեզուրի բնակչության իրավունքները պաշտպանելու վերաբերյալ Փարիզի վեհաժողովին հուշագիր է ուղարկվում նաև Հայաստանի Հանրապետության անունից, որով պահանջվում է հայկական հինավուրց Ղարաբաղի և Զանգեզուրի տարածքները, որտեղ ապրում են բացառապես հայեր, անհապաղ միավորել Հայաստանի Հանրապետությանը: Օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը, ասված է հուշագրում, չի հանդիսանում Ղարաբաղի աշխատավորների կամքի ազատ արտահայտություն, այն կորզվել է բնակչությանը բնաջնջելու և նրա ամբողջ կարողությունները ոչնչացնելու սպառնալիքով: Արցախահայության ներկայացուցիչների համագումարը, համաձայնվելով Ղարաբաղը ժամանակավոր համարել Ադրբեջանի սահմաններում, հույս ունի, որ Փարիզի վեհաժողովը կընդունի արդարացի որոշում, հակառակ դեպքում նրանք պատրաստ են զենքը ձեռքին մարտնչել իրենց հայրենի հողը պաշտպանելու համար:[215]

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չէր հուսահատվել և սպասում էր դաշնակից պետությունների ղեկավարներից ազգային հիմնախնդիրների արդարացի լուծում: ՀՀ կառավարությունը խաղաղության համաժողովին ներկայացնելով վիճելի տարածքների խնդրի կարգավորման հստակ ծրագիր, պահանջում է հարգել արցախահայության ազատ ինքնորոշման ճանապարհով մուսավաթական Ադրբեջանի տիրապետությունից դուրս գալու և մայր Հայաստանին միավորվելու հարցը: Հայաստանի Հանրապետությունը, օգտագործելով դիվանագիտական բոլոր հնարավորությունները, վճռականորեն պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղի հետ միասնական մնալու իր պատմական, իրավական ու բարոյական անքակտելի իրավունքը: Մինչդեռ դաշնակից պետությունները կովկասյան տարածաշրջանում լոկ իրենց շահերն էին պաշտպանում՝ այդ նպատակով զոհասեղան բարձրացնելով մի հին ու քաղաքակիրթ ժողովուրդ:





# ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ: ԱՐՑԱԽԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

## *1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ 1919 Թ. ԱՇՆԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 1920 Թ. ՄԱՐՏԻ ՍԿԻԶԲԸ: ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ:*

Ադրբեջանի կառավարության հետ օգոստոսյան ժամանակավոր համաձայնագրի կնքումը արդյունք էր Ղարաբաղում գործող բոլոր քաղաքական ուժերի կոալիցիոն հիմունքով կատարված աշխատանքի: Նույնիսկ, Ղարաբաղի բոլշևիկները «ոչ մի կերպ չէին խանգարում և նույնիսկ իրենց ներկայացուցիչներով մասնակցում էին միջկուսակցական խորհրդակցական ժողովներին և համագումարներին»:[1]

Օգոստոսյան ժամանակավոր համաձայնության ընդունումից հետո Ղարաբաղի հարցը «լուծված» համարելով՝ Ադրբեջանի կառավարությունը տենդորեն նախապատրաստվում էր լուծել նաև Զանգեզուրի ու Նախիջևանի հարցերը: Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկին 1919 թ. օգոստոսին իր կառավարությանը հիշեցնելով, որ «Ադրբեջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի», առաջարկում է երկու շաբաթվա ընթացքում մաքրել հաշիվները Զանգեզուրի հետ և զորքերը հասցնել մինչև Ղամարլու Երևանի մատույցները:[2]

Մուսավաթական կառավարությունը հրահանգում է ռազմական զորամասերը տեղաշարժել և կենտրոնացնել ռազմավարական նշանակություն ունեցող բոլոր կետերում: Մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականության իրականացման ճանապարհին կարևոր խոչընդոտ էր Ղարաբաղը: Ուստի հարկ էր նախ հաշիվները մինչև վերջ մաքրել արցախահայության հետ, ամրապնդել թիկունքը, ճանապարհ բացել դեպի Զանգեզուր, նոր միայն անցնել հետագա գործողությունների: Մուսավաթական Ադրբեջանը արցախահայության դեմ օգտագործում էր ոչ միայն ադրբեջանցիներին և թուրք ասկյարներին, այլ Հաջի Սամլուի քրդերից կազմված հրոսախմբերին ու մուսավաթական բանակում ծառայող ցարական բանակի ռուս սպաներին: Նողկալի արարքներ էին կատարում առանձնապես վերջիններս, որոնք նպատակ

ունեին «ձեռք բերել թուրք իշխանությունների համակրանքն ու վստահությունը»:[3] Ադրբեջանի բանակի շտաբի պետ, գեներալ–լեյտենանտ Սուլկևիչը 1919 թ. սեպտեմբերի 7–ին նահանգապետ Սուլթանովին հասկացնում է, որ Ղարաբաղի հարցի լուծումը և Զանգեզուրի գրավումը հնարավոր է քրդերից կազմակերպված հեծյալ ջոկատների օգտագործման դեպքում, մանավանդ, որ նման ջոկատների «կազմակերպման գործնական ուժերը ստուգված են թուրքերի կողմից վերջին պատերազմի փորձով...»:[4] Հենց Սուլկևիչի խորհրդով է, որ Սուլթանովը քրդերից կազմակերպեց 600 սուսերից և 4 թնդանոթներից բաղկացած մի հեծյալ զորախումբ իր եղբայր Սուլթանբեկ Սուլթանովի հրամանատարությամբ, որը հետագայում, 1920 թ. մարտ–ապրիլին, ակտիվորեն մասնակցեց Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին: Հայ ժողովրդի, մանավանդ արցախահայության նկատմամբ խոսրովբեկ Սուլթանովի ատելությունն այն աստիճանի մոլեգին էր, որ երբ նրան առաջարկում են Ադրբեջանի կառավարության ներքին գործերի նախարարի պաշտոնը, նա հրաժարվում է, բացատրելով, թե Ղարաբաղից իր հեռանալն «անթույլատրելի» է, քանի որ «ներկայումս ամենակարևորը Զանգեզուրի հարցի վճռումն է» և որ «ներկա քաղաքական վիճակում... նահանգապետի պաշտոնում իր աշխատելը ամենից առաջ ձեռնտու է հանրապետության համար»:[5]

Մուսավաթական Ադրբեջանը տենդագին նախապատրաստվում էր ներխուժել Հայաստան: Այդ օրերին Բաքվում տեղի ունեցած «Իթթիհաթ» («Միություն և առաջադիմություն») պանթուրքական կուսակցության համագումարը Ղարաբաղ–Զանգեզուրի և Հայաստանի հարցը լուծելու համար խնդիր դրեց Ադրբեջանի հարուստներից հանգանակել մեկ միլիարդ ռուբլի և կազմակերպել 200 հազարանոց բանակ: Համագումարը բոլոր մուսուլմաններին կոչ արեց՝ ի զեն «ընդդեմ գյավուր հայերի»:[6] Համագումարը նաև հարց դրեց Հայաստանից հեռացած մահմեդականներին տեղավորել այնտեղ, որտեղ հայեր էին բնակվում՝ Գանձակ, Շուշի, Եվլախ և այլուր: Ելնելով համագումարի որոշումներից, Ադրբեջանի կառավարությունը վերջնագիր ներկայացրեց արցախահայությանը, որով պահանջում էր երկրամասից վտարել Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին, լրիվ զինաթափվել և արգելք չհանդիսանալ մուսավաթական զորամասերը Դիզակում, Վարանդայում և Խծաբերդում տեղավորելուն:[7]

Նախքան Արցախում Ադրբեջանի զորքերի կենտրոնացումը և Զանգեզուր ներխուժումը, մուսավաթական ջարդարարները ոգևորված թուրքերի խոստումներով և ամենագործուն օգնությամբ, ահաբեկչության ենթարկեցին Գանձակի լեռնային շրջանների հայ բնակչությանը, հայերի նոր ջարդեր կազմակերպեցին Ելիզավետպոլում, Արեշում, Նուխիում, Շամախիում, Նախիջևանում և այլ հայաշատ բնակավայրերում: Մուսավաթական Ադրբեջանի ռազմական նախարար, ցարական բանակի նախկին գեներալ, Բաքվի կոմունայի դահիճներից Սամեդբեկ Մեհմանդարովը և նրա աջակից գեներալ Ալի Աղա Շիխլինսկին արտակարգ եռանդով նախապատրաստվում էին «դաս տալ հայերին»: Ադրբեջանում զենքի են կոչվում մինչև 35 տարեկան տղամարդիկ և հա-



վաքագրվում մեծ թվով վարձկաններ: Արխիվային մի փաստաթղթում նշված է, որ 1919 թ. հոկտեմբերին Շուշիում և Խանքենդի ավանում մուսավաթական Ադրբեջանը կենտրոնացրել էր ջիվանշիրյան առաջին հետևակային, ղարաբաղյան երկրորդ հեծելազորային, շեքիյան երրորդ հեծելազորային գնդերը, ղաքաթալյան գնդի երկու գումարտակները, լեռնահրաձգային երկու դիվիզիա, չորս հաուբից և մեկ սակրավոր վաշտ: Այդ նույն փաստաթղթում նաև ասված է, թե Զանգեզուրի գավառում մուսավաթական կանոնավոր բանակի թիվը հասնում էր 600 հետևակի, 300 հեծյալի, 400 քրդերի, ութ թեթև և չորս հաուբից–հրանոթի: Կանոնավոր և ոչ կանոնավոր ասկյարների թիվը հասնում էր 20 հազարի:[8] Արխիվային մեկ այլ փաստաթղթում ասված է, որ Ադրբեջանի կառավարությունը որոշել է գեներալ Շիխլինսկու ղեկավարությամբ «Սուլթանովի կարգադրության տակ ուղարկել 7000 զինվոր: Սուլթանովը տեղում ունի 5000 քուրդ և 3000 ապստամբ նախիջևանցիներ: Բայազետ–Սուրմալուի շրջանում երևացել է թուրքական զորամաս: Ադրբեջանի բանակը ելել է 19-ին, մնացած զորամասերը կելնեն այս օրերին՝ Գյանջա–Թարթառ–Աղդամ–Շուշի–Գորիս ուղերթով: Ադրբեջանի բանակը կարող է տեղ հասնել 10 օրից... Ընդհարումն անխուսափելի է...»:[9]

Զանգեզուրն իր աշխարհագրական դիրքով կարևոր դեր ունի նաև հարևան հայկական մյուս շրջանների պաշտպանության գործում: Հենց դա ի նկատի ունենալով, Զանգեզուր–Ղարաբաղի կոմիսար Արսեն Շահմազյանը Հայաստանի կառավարությանը 1919թ. օգոստոսի 17-ին ուղարկած զեկուցագրում հարց է դնում արագացնել և Զանգեզուրը դարձնել ռազմական բազա, այլապես նա չի կարողանա կատարել իր պարտականությունը և անհրաժեշտ օգնություն ցույց տալ Ղարաբաղին, Գողթանին, Նախիջևանին, Շարուրին և Դարալագյազին:[10] Ահա թե ինչու մուսավաթական Ադրբեջանն ամեն կերպ շտապում էր արագացնել Զանգեզուրի գրավումը, օգտագործելով անգլիական կառավարության «քողարկված մուսուլմանամետ քաղաքականությունը»:[11]

Զանգեզուրում խիստ անհանգստացած էին թե՛ Ղարաբաղի և թե՛ Զանգեզուրի պաշտպանության հարցով: Դեռևս ամռանը, հուլիսի 31-ին, հիշում է Եղիշե Իշխանյանը, Արսեն Շահմազյանի հրավիրած խորհրդակցական ժողովը, քննության առնելով Զանգեզուր–Ղարաբաղի ինքնապաշտպանության հարցը, որոշում է, որ ինքնապաշտպանության գործը կազմակերպելու և ամուր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է Հայաստանի զինվորական իշխանությունը Երևանից Զանգեզուր ուղարկի 30 սպա, կես միլիոն փամփուշտ, 4 թնդանոթ և 25 միլիոն ռուբլի միանվագ:[12] Սակայն, ըստ էության, Հայաստանի իշխանության վերնախավում դեռևս իշխում էր այն տարտամ մտածողությունը, մանավանդ Ռուբենի և այլոց մոտ, թե շուտով պիտի ստանան Արևմտյան Հայաստանի մեր վիլայեթները (Կարին, Վան, Տրապիզոն, Խարբերդ, Տիգրանակերտ) և Ղարաբաղի հայությանը տեղափոխեն ու բնակեցնեն Ալաշկերտի հովտում ու Մշո դաշտում: Ըստ էության, Ադրբեջանի և Հայաստանի միջև սահման էին համարում Հագարո գետը:[13] Բայց դա լիովին ցնորամտություն էր: Իսկ ո՞վ էր հարցրել ղարաբաղցու ցանկությունը...

1919 թվականի աշնան սկզբից սկսած միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունում սկսեցին սթափ մտածել ու որոշ քայլեր կատարել Արցախ–Զանգեզուրը պաշտպանելու և գործնականում Հայաստանի Հանրապետությանը միացնելու համար: Սյունիք ուղարկվեց կապիտան Գարեգին Նժդեհը՝ Գողթան գնալու համար հավաքագրված մոտ 300 գողթանցիներով, Արսեն Շահմազյանի տնօրինության տակ ուղարկվեցին սպաներ, զենք և ինքնապաշտպանության համար այլ պարագաներ:

Հոկտեմբերի 17-ին Գանձակի վրայով Թիֆլիս է մեկնում Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատար կապիտան Արտաշես Վարդապետյանը, հեծելազորային ուժերի պետ Սերգեյ Մելիք Ադամյանը, սպաներ՝ Աբրահամ Խսադուլյանը, Արտեմ Մելքումյանը և զինվոր Վաղարշակ Նարինյանը: Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատարը ՀՅԴ բյուրոյի նախագահ Ռուբեն Տեր Մինասյանին մանրամասն զեկուցում է Արցախ–Ղարաբաղում տիրող իրադարձությունների մասին, միևնույն ժամանակ նրան հանձնում խիստ կարևոր տեղեկություններ մուսավաթական Ադրբեջանի զորամասերի տեղաշարժերի վերաբերյալ, որոնք, ինչպես գիտենք, պատրաստվում էին Զանգեզուր ներխուժել: Այդ մասին հանգամանորեն տեղյակ է պահվում նաև հանրապետության զինվորական նախարար Ք. Արարատյանին և Արսեն Շահմազյանին: Հայաստանի կառավարությունը խիստ բողոք է ներկայացնում դաշնակից պետությունների հրամանատարությանը և պահանջում Սուլթանովին ետ կանչել ու նրա փոխարեն դաշնակիցների զինվորականներից մեկին նշանակել Ղարաբաղի կոմիսար, մինչև հարցը կլուծվի Վերսալի վեհաժողովում:

Քանի որ խիստ դանդաղում էր Զանգեզուր-Ղարաբաղին ռազմական և ֆինանսական օգնություն ցույց տալը, Արսեն Շահմազյանը հոկտեմբերի վերջին ներկայացնում է իր հրաժարականը: Արսեն Շահմազյանին շատ լավ էին ճանաչում թե Զանգեզուրում և թե Ղարաբաղում: Զանգեզուրից նրան հեռացնելու համար թե անգլիական հրամանատարությունը և թե Ադրբեջանի կառավարությունը ոչ մի խարդավանքի առաջ կանգ չէին առնում: Արսեն Շահմազյանը Երևան վերադարձավ՝ իրեն հետ տանելով Զանգեզուր–Ղարաբաղի ժողովրդի սերն ու հարգանքը: Նրան փոխարինեց Սերգեյ Մելիք–Յոլչյանը: Նա, որպես նահանգական կոմիսար, վարում էր քաղաքական բաժնի գործը: Միևնույն ժամանակ, որպես Զանգեզուրի զինված ուժերի հրամանատար, ուղարկվում է գեներալ Ս. Ղազարյանը:

* * *

Ադրբեջանի և Ղարաբաղի միջև կնքված օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունից հետո ասես վերականգնվել էր արցախահայության անդորրը, որը, սակայն, երկար չշարունակվեց: Սուլթանովը շարունակում էր Ղարաբաղի ազգային խորհրդին ստիպել Ադրբեջանի իշխանությանը ենթարկվել ոչ թե սոսկ խոսքով, այլ գործնականորեն: Արցախցիները վճռականորեն մերժում էին այդ պահանջը: Ի պատասխան՝ Ադրբեջանի կառավարությունն իր հերթին տենդագին նախապատրաստվում էր վերացնել օգոստոսյան համաձայնագրով Արցախին տրված ինքնուրույնությունը և ուժով տիրանալ նրան: Սուլթանովը, կոպտորեն խախտելով օգոստոսյան համաձայնագիրը, հրամայում է մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել Արցախի բոլոր ռազմավարական կետերում: Սուլթանովի գլխավոր նպատակներից էր ազգային խորհուրդը լիովին ենթարկել իրեն և նրան զրկել իր բոլոր իրավունքներից: Կոալիցիոն կարգով ազգային խորհրդի կազմի մեջ են մտցվում Արշավիր Քամալյանը, Տիգրան Տեր–Գրիգորյանը (մենշևիկ), Սաքո Համբարձումյանը, Ալեքսանդր Ծատուրյանը (բոլշևիկներ), Հովակ Ստեփանյանը (դաշնակցական), Արսեն Հովհաննիսյանը, Ռուբեն Տեր–Գասպարյանը (սոց.հեղափոխականներ) և քաղաքագլուխ Ռուբեն Շահնազարյանը (անկուսակցական): Փաստորեն, ստեղծվել էր մի նոր «միջկուսակցական բյուրո», որը ազգային խորհրդի անունից վճռում էր երկրամասի հետ կապված հարցեր, հաճախ էլ հանդես գալիս զանազան հայտարարություններով: Սուլթանովը ջանում էր անվստահություն առաջացնել ազգային խորհրդի անդամների միջև և այն պառակտել: Այդ նպատակով, ինչպես վկայում են ժամանակակիցները, նա օգտագործում էր իր համախոհ քաղաքագլուխ Ռուբեն Շահնազարյանին: Աբրահամ Կիսիբեկյանը վկայում է, որ անասելի դժվարին պայմաններում էին գործում առանձնապես նահանգապետի հայ օգնականն ու նրան կից խորհրդի հայ անդամները: Նրանց չեզոքացնելու և գործունեությունը դադարեցնելու համար Սուլթանովը դիմում էր հազար ու մի խարդավանքի:

Օգոստոսյան ժամանակավոր համաձայնագիրը Սուլթանովի համար լոկ ժամանակ շահելու միջոց էր: Նա աստիճանաբար ընդարձակում էր լրտեսական ցանցը ոչ միայն քաղաքում, այլև գավառներում: Նրա հրամանով հետապնդվում էին ընդդիմադիր քաղաքական ուժերը և հայկական մամուլը: Սուլթանովը առանձնապես չէր կարողանում տանել այն, որ հայերը թուրք–թաթարների հարվածներին պատասխանում էին հարվածով, գավառները շարունակում էին չճանաչել Ադրբեջանի իշխանությունը և պահպանում էին իրենց զինված ուժերը: Ազգային խորհուրդը Սուլթանովից քանիցս պահանջում է չխախտել օգոստոսյան համաձայնագիրը և զորքերի տեղաշարժ չկատարել Ղարաբաղի տարածքով: Սակայն չափը կորցրած Սուլթանովը շարունակ խախտում էր օգոստոսյան պայմանագիրը:[14] Արցախցիները Սուլթանովի քայլերին պատասխանում էին իրենց ռազմական ուժերի ամրապնդումով: Քաղաքական բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները, մտավորականությունը, ազգային խորհուրդը և մյուս բոլոր ազգապաշտպան ուժերը գործում էին համատեղ: Աբրահամ Կիսիբեկյանի վկայությամբ նրանց «միջև հակամարտություն գոյություն չուներ», ընդհակառակը, «Ղարաբաղի ծանր պայմանները միշտ ստիպել են բոլոր հոսանքներին միահամուռ ուժերով դիմադրել թշնամուն»: Այն փաստը, որ Ղարաբաղի ազգային խորհուրդը դարձել էր «միջկուսակցական բյուրո», «որտեղ անխտիր կերպով մասնակցում էին բոլոր կուսակցությունները», դրա լավագույն ապացույցն էր:[15]

Մուսավաթական Ադրբեջանը, ինչպես ասվեց, նախքան Զանգեզուրի վրա հարձակվելը, չորս կողմից շրջափակեց Արցախը և փակեց դրսի աշխարհի

հետ կապող բոլոր ճանապարհները: Թուրք սպաների գլխավորությամբ ամենուր տեղաբաշխվում էին մուսավաթական զորամասեր: Նույնիսկ այդպիսի պայմաններում քաջարի արցախցիներն ու զանգեզուրցիները կարողանում էին ելք գտնելով իրար հետ կապվել ու տեղեկություններ հաղորդել: Մուսավաթական Ադրբեջանը մորթուց դուրս էր գալիս՝ խզելու Արցախի և Զանգեզուրի կապը: Ահա դա ապացուցող արխիվային մի փաստաթուղթ.

**ո 3947**
**3.8.1919թ.**
**Հրաման.**

*Ջեբրայիլի, Զանգեզուրի և*
*Շուշիի գավառների պետերին*

Ստացված տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանի իշխանությունը չճանաչող Զանգեզուրի հայերը ազատ անցնում են Զանգեզուրի գավառի սահմանները, շփվում հայկական գյուղերի բնակչության հետ և վերադառնում:

Առաջարկվում է Ձեզ անհապաղ իրագործել հետևյալը. ջանադիր հսկողություն սահմանել, որպեսզի Զանգեզուրի հայ բնակիչները չանցնեն իրենց սահմանները և չշփվեն մյուս գավառների հայերի հետ: Սույն հրամանը խախտողներին ձերբակալել և համապատասխան արձանագրության հետ ներկայացնել Շուշի:

*Ժամանակավոր նահանգապետ:*[16]

1919թ. սեպտեմբերի 20-ին թուրք-թաթարական ուժերը հարձակման անցան Խոզնավար, Բայանդուր և Տեղ գյուղերի ուղղությամբ: Դա, թերևս, նպատակ ուներ ստուգելու ասկյարների դիմացկունությունը և պարզելու հակառակորդի դիմադրողականության մակարդակը: Մեկօրյա կատաղի մարտերից հետո հրոսակները պարտված նահանջեցին: Նրանց օգնելու ուղարկվեցին Շուշիում և Խանքենդում կուտակված մուսավաթական զորամասերը: Այս անգամ մուսավաթական ուժերի ընդհանուր հրամանատարն էր գեներալ Ալի Աղա Շիխլինսկին: Նրա առաջ խնդիր էր դրված գավառը ճեղքել, բաժանել երկու մասի, արյունալի հաշվեհարդար տեսնել Գորիսի շրջանի, ապա՝ Զանգեզուրի մնացած մասի հայ բնակչության հետ, նվաճել ամբողջ Զանգեզուրը, Շարուր-Դարալագյազը՝ Նախիջևանի հետ միասին և դուրս գալ Թուրքիայի սահմանը: Շիխլինսկին նաև հանձնարարություն ուներ ինչ գնով էլ լինի ոչնչացնել Նժդեհի ուժերը և պատժել Զանգեզուր-Ղարաբաղի լիազոր Արսեն Շահմազյանին, որի վրա էր դրված տեղական ուժերի ընդհանուր հրամանատարի և ղեկավարի պարտականությունները:[17]

Ասվեց, որ Ադրբեջանը բուռն ձգտում էր միանալ Թուրքիային, իսկ դրա համար Արցախը և Զանգեզուրը հպատակեցնելը ամենաառաջնահերթ խնդիրն էր: Այդ ուղղությամբ ջանքեր էր թափում նաև թուրքական հրամանատարությունը, որը Էրզրումից իր գործակալների միջոցով ղեկավարում էր ամբողջ մուսավաթական շրջանները, իսկ Ադրբեջանն անմիջապես ղեկավարում էր Էնվեր փաշան: «Ադրբեջանը,– գրում է ժամանակակիցը,- ձգտում էր միանալ թուրքերի զորքերի հետ, որոնք գտնվում էին 1914 թ. սահմանների վրա: Այդ միացումն, անկասկած, հնարավորություն կտար Ադրբեջանին ուժեղանալ ամենից առաջ թուրք հրամանատարության խոստացած տեխնիկական սպառազինությամբ, որն ազատորեն պիտի ուղարկվեր Ադրբեջան՝ Զանգեզուրի վրայով, իսկ այնուհետև՝ անպայման նաև թուրքական զորքերով»:[18]



Ալի Աղա Շիխլինսկին Զանգեզուրի վրա հարձակվելու հրաման արձակեց նոյեմբերի 1-ին:[19] Մուսավաթական հրամանատարությունը գլխավոր ուժերը կենտրոնացրել էր Խոզնավար-Բայանդուր գծի վրա: Մինքենդի մոտ ծվարած Շիխլինսկին մուսավաթական հրոսակներին քաջալերում էր գրավել հայկական գյուղերը թալանել և հրի ու սրի մատնել: Հայ կամավորները չտեսնված հերոսություն էին ցուցաբերում: Չորսօրյա կատաղի մարտերից հետո թշնամին գլխովին ջախջախվեց և հետ շպրտվեց: Ջարդված զորքերի մի մասը փախավ Մաղավուզ-Մինքենդի շրջան, իսկ մնացածը՝ Արցախի և Ջեբրայիլի վրայով դեպի Ղարաբաղի հարթավայրերը: Այսպիսով, մուսավաթական Ադրբեջանի փորձը՝ զենքի ուժով նվաճելու Զանգեզուրը և ճզմելու արցախահայությանը, վերջացավ անհաջողությամբ: Երբ Գորիսի հրապարակում Արսեն Շահմազյանը, բժիշկ Պարոնյանը և Գեղեոն Տեր-Մինասյանը մեծարում էին հաղթանակով վերադարձած հայոց քաջերին, գեներալ Շիխլինսկին և Սամեդբեկ Մեհմանդարովը Ադրբեջանի Հանրապետության խորհրդարանում հաշվետվություն էին տալիս իրենց զորքերի խայտառակ պարտության մասին:

1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի միջև ստորագրված համաձայնագրով դադարեցվեցին ռազմական գործողությունները և պայմանավորվածություն ձեռք բերվեց վեճերը լուծել խաղաղ բանակցությունների ճանապարհով:[20] Սակայն դրանից հետո էլ Ադրբեջանի կառավարությունը չդադարեցրեց իր նվաճողական և ջարդարարական քաղաքականությունը: Այսպես, օրինակ, իբր թե հարաբերությունները բարելավելու նպատակով այն Սուլթանովի միջոցով Ղարաբաղի ազգային խորհրդին առաջարկեց, որ արցախահայությունը փոխադրվի Նախիջևան, իսկ Նախիջևանի թուրք-թաթարները Ղարաբաղ, պատճառաբանելով, թե «Ղարաբաղը կապված է Ադրբեջանի հետ, իսկ Նախիջևանը՝ Հայաստանի»:[21] Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը կտրուկ մերժեց այդ առաջարկությունը:

Մուսավաթական Ադրբեջանի պարագլուխները չէին հրաժարվում Արցախն ու Զանգեզուրը նվաճելու մտքից: Գործելով Թուրքիայի թելադրանքով՝ նրանք կրկին ու կրկին դիմում էին ահաբեկչությունների ու ջարդերի: Զանգեզուրից փախուստի ճանապարհին մուսավաթական հրոսակները մի քանի օրվա ընթացքում Խանքենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ խճուղու վրա սրի են մատնում 400-ից ավելի անմեղ հայերի:[22] Ահա թե այդ առթիվ ինչ է պատմում Աբրահամ Կիսիբեկյանը. «Ադրբեջանի կառավարությունը չէր կարողանում մոռանալ Զանգեզուրի ջարդը և որոշել էր կրկին փորձել իր ուժերը, որի համար նա ձգտում էր իր թույլ տված «սխալը» ուղղել և միանգամայն ապահովվելով

Լեռնային Ղարաբաղից: Ադրբեջանի զորքերի պարտության պատճառներից մեկը համարում էր Լեռնային Ղարաբաղը»:[23]

Իրոք, այն օրերին, երբ Սյունյաց աշխարհը կենաց ու մահու մարտեր էր մղում մուսավաթական հրոսակների դեմ՝ Արցախի ազատագրական ջոկատները հարձակումներ էին գործում երկրամասի ճանապարհներով դեպի Զանգեզուր շարժվող մուսավաթական զորամասերի վրա: Նրանք փակում էին ճանապարհները, կասեցնում շարժումը, պարտիզանական պայքար ծավալում մուսավաթական զորամասերի դեմ:[24] Սուլթանովը արցախահայությունից պահանջում էր օգնել մուսավաթական ուժերին: Այդ, ինչպես և ուրիշ մի շարք հարցերի պատասխան տալու համար 1919թ. նոյեմբերի 10–ին Մարիամ Ղուկասյան օրիորդաց միջնակարգ դպրոցի դահլիճում հրավիրվեց Ղարաբաղի հայության յոթերորդ համագումարի կողմից ընտրված հանձնաժողովի և ազգային խորհրդի անդամների համատեղ խորհրդակցություն, որը կտրուկ մերժեց Սուլթանովի անպատկառ և բարոյազուրկ պահանջը: Խորհրդակցությունը որոշեց հնարավոր բոլոր միջոցներով օգնել զանգեզուրցիներին և դյուրացնել նրանց պայքարը թուրք–թաթարական զավթիչների դեմ: Խորհրդակցությունը նաև լսեց ազգային խորհրդի զեկուցումն իր գործունեության մասին, ինչպես նաև քննարկեց նոր համագումար հրավիրելու և ընթացիկ այլ հարցեր:[25] Խորհրդակցությունը կոնկրետ ցուցում տվեց՝ ազգային խորհրդին և քաղաքական կազմակերպություններին «առանց որևէ զիջման ու շեղման, համառորեն պաշտպանել յոթերորդ համագումարի պայմանագրի բոլոր կետերը», իսկ եթե Ադրբեջանը շարունակի խախտել պայմանագիրը, ապա «անմիջապես հրավիրել համագումար» և քննել հարցը:

Խորհրդակցության ընդունած որոշումները ոգևորեցին արցախահայությանը՝ պաշտպանելու իր շահերն ու իրավունքները: Միևնույն ժամանակ, սանձահարեցին բոլոր նրանց, ովքեր դրսևորում էին թուրքամետ տրամադրություններ:[26]

Խորհրդակցությունում քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին ազգային խորհուրդը իրազեկ պահեց Սուլթանովին, որը խիստ կատաղեց: Իսկ երբ իմացավ, որ Հայաստանից Արցախ են եկել քաղաքական, հասարակական և ռազմական մի խումբ գործիչներ, որոնք «կարճ ժամանակամիջոցում, բացի Շուշի քաղաքից, իրենց ձեռքն են վերցրել ողջ Լեռնային Ղարաբաղը», զայրույթից դուրս եկավ իր ափերից: Աբրահամ Կիսիբեկյանը այդ առթիվ հիշում է, որ այդ օրերին «Ղարաբաղի հայ ժողովրդի՝... մի կողմից՝ հայ–թաթարական հին հիշողությունները, մյուս կողմից՝ Ադրբեջանի կառավարության հայահալած և հայատյաց քաղաքականությունը, մի երրորդ կողմից՝ մայր հայրենիքին միանալու բուռն ցանկությունը պատրաստի հող հանդիսացան անմիջապես ենթարկվելու Հայաստանից եկած գործիչներին և կատարելու նրանց բոլոր ցուցմունքներն ու հրահանգները»:[27]

Արխիվային նյութերից և, մանավանդ, Եղիշե Իշխանյանի հաղորդումից պարզ է դառնում, որ Հայաստանի կառավարությունը 1919 թ. աշնանից վերջնականապես սկսել էր լրջորեն մտահոգվել Զանգեզուրի և Ղարաբաղի ճակատագրով: Դրանով առանձնապես մտահոգված էին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը, Ռուբենը, Արշակ Ջամալյանը և ուրիշներ: Այդ օրերին Հայաստանի կառավարությունը դաշնակից պետությունների ներկայացուցիչներին Գանձակի շրջանը և Ղարաբաղը ներկայացրել էր միացյալ ձևով և պնդել, որ այդ տարածքները միշտ էլ կազմել են Հայաստանի անբաժան մասը և առաջիկայում պետք է կապված լինեն իրար հետ և ունենան երկու ղեկավար կենտրոններ: Հայաստանի կառավարությունը նպատակահարմար էր գտնում Ղարաբաղին ամսական հատկացնել 400, իսկ Գանձակի շրջանին՝ 120 հազար ռուբլի: Մինչդեռ դա խիստ անբավարար էր:[28]

Նոյեմբերի վերջին Հայաստանի կառավարության հրահանգով Զանգեզուրում ստեղծվում է «Վարիչների խորհուրդ» մարմինը, որի ձեռքում է կենտրոնանում գավառի ամբողջ իշխանությունը, իսկ դեկտեմբերի 20–ին 600 զինվորներով Գորիս է հասնում Զանգեզուր–Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատար Դրոն (Դրաստամատ Կանայան), որի «գլխավոր նպատակն էր զենքի ուժով վերջնականապես վճռելու Ղարաբաղի հարցը»:[29] Իսկ դրա համար անհրաժեշտ էր կազմակերպել Զանգեզուրի մարտական ուժերը, ապահովել թիկունքի անվտանգությունը, Զանգեզուրը դարձնել ռազմական բազա, հուսալի կապ հաստատել Զանգեզուրի և Ղարաբաղի միջև, որոշակի քայլեր ձեռնարկել Ղարաբաղի ինքնապաշտպանությունը վերակազմավորելու ու ամրապնդելու համար: Դրոն Ղարաբաղ է ուղարկում Կոստյա Աթայանին, Սասունցի Մուշեղին և ռոտմիստր Տեր–Մարտիրոսյանին՝ տեղում կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանության գործը «մինչև որ կստեղծվեին քաղաքական նպաստավոր պայմաններ, որից յետոյ վերջնականապես զէնքի ուժով Ղարաբաղը կմիացվի Հայաստանին»:[30] Դրանից առաջ Ղարաբաղ էին եկել Հայաստանի լիազոր–ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը (Տեր–Հովհաննիսյան), գնդապետ Զախար Մեսյանը, Խաչատուր Մելքումյանը, Արտեմ Թումյանը և ուրիշներ,[31] որոնք աշխատանք էին ծավալում Վարանդայի, Խաչենի և Ջրաբերդի շրջաններում: Հայաստանից ուղարկվածները կապ էին հաստատում Ղարաբաղի ինքնապաշտպանության մարմնի (ՂԻՄ) հետ, որը ստեղծվել էր այդ վերջին օրերին և նստավայր ուներ Տռնավարզ գյուղում: 1920 թ. հունվարի 3–4–ը տեղի է ունենում ՂԻՄ–ի ընդլայնված նիստ, որը հաստատում է նորաստեղծ Ղարաբաղի ինքնապաշտպանության կենտրոնական մարմնի (ՂԻԿՄ) ներքին կանոնակարգը,[32] ըստ որի՝ ՂԻԿՄ–ի հիմնական խնդիրն էր կազմակերպել և զինել արցախահայությանը, օգնել Հայաստանի կառավարությանը Ղարաբաղի նկատմամբ իր քաղաքականությունը դյուրին իրագործելու, Արցախի ինքնապաշտպանությունը կազմակերպել անկուսակցական հողի վրա, երկրամասի ինքնապաշտպանությանը մասնակից դարձնել ամբողջ բնակչությանը և այլն: Կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուր գյուղում ստեղծվում է ինքնապաշտպանության տեղական մարմին, որը զինում էր բնակչությանը, տեղերում հաստատում կարգ ու կանոն, պաշտպանական միջոցների նկատմամբ սահմանում խիստ հսկողություն: Գյուղերում ինքնապաշտպանության մարմնին կից ստեղծվում են նաև զինվորական մարմիններ,

որոնց ղեկավարները նշանակվում էին շրջանային զինվորական հրամանատարության կողմից: Ինքնապաշտպանական մարմին ստեղծվում է նաև Շուշի քաղաքում: Ամբողջ Ղարաբաղը բաժանվում է ինքնապաշտպանության վեց շրջանի՝ Գյուլիստան, Ջիվանշիր, Խաչեն, Վարանդա, Դիզակ և Շուշի: Յուրաքանչյուր շրջանի համար նշանակվում է զինվորական լիազոր, որի պարտականության մեջ էր մտնում բնակչությանը զինել, տեղական ուժերով հսկել սահմանները, կանխել ազգամիջյան ընդհարումները և այլն:[33]

Հայաստանից Ղարաբաղ եկած ռազմական և քաղաքական գործիչների գործունեությունը միանշանակ չգնահատվեց Արցախի քաղաքական ուժերի կողմից: Աբրահամ Կիսիբեկյանը վկայում է, որ 1919 թ. դեկտեմբերի երկրորդ կեսին տեղի ունեցած Ղարաբաղի ազգային խորհրդի հերթական նիստը, լսելով Լեռնային Ղարաբաղի գավառապետ Բագրատ Մելիք-Շահնազարյանի հաղորդումը իր կատարած աշխատանքների մասին, անդրադառնում է Հայաստանից եկած և գավառներում գործող ներկայացուցիչների հարցին: Երկարատև վիճաբանությունից հետո հանգում են հետևյալ եզրակացության. «այդ մարդկանց ներկայությունը Լեռնային Ղարաբաղում պիտի ավելի դժվարացնի» երկրամասի «անպաշտպան ժողովրդի վիճակը»: Հետևապես՝ «պետք է անպայման հանդիպել նրանց հետ, ծանոթանալ նրանց նպատակներին ու գործունեությանը, նրանց բացատրել Ղարաբաղի հայ ժողովրդի ծանր վիճակը, որից հետո որոշել» անելիքները:[34] Դրանում խիստ շահագրգռված էր նաև նահանգապետ Սուլթանովը, որին հաջողվել էր լրտեսների միջոցով տեղեկություններ ստանալ Ղարաբաղի հայկական գավառներում և բնակավայրերում տիրող վիճակի ու Հայաստանից եկածների գործունեության մասին: Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի անդամների հետ ունեցած հանդիպման ժամանակ Սուլթանովը հայտարարում է, թե Ղարաբաղում Ադրբեջանի դեմ պատերազմ է նախապատրաստվում, և ազգային խորհուրդը պետք է իր վճռական խոսքն ասի: Սուլթանովը մինչև անգամ տեղեկություն ուներ, որ արդեն Ղարաբաղ է ժամանել հայտնի ֆիդայի Դալի Ղազարը (Միքայել Բաղալբյոխյան), որը մինչև Ղարաբաղ հասնելը եղել է Գանձակի հայկական գյուղերում և զգալի աշխատանք է տարել այնտեղի հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ:[35]

Խիստ վտանգված էր նաև Գանձակի լեռնային շրջանների հայ գյուղացիության կյանքը: Մուսավաթական Ադրբեջանը փորձում էր խզել կապերը Լեռնային Ղարաբաղի և Արցախի հյուսիսային շրջանների հայության միջև: Թուրք-թաթար հրոսակները բազմիցս ավերածություններ են գործում Կարաչինար, Մանաշիդ, Ներքին և Վերին Աղջալա, Գյուլիստան և այլ հայկական գյուղերում: Գյուլիստանի շրջանից պատգամավոր Լևոն Տեր-Մինասյանը Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահին 1919 թ. նոյեմբերին ուղարկած նամակում հաղորդում է, որ Գյուլիստանի շրջանը, որը բաղկացած է 13 հայկական գյուղերից, դարերով մտել է Ղարաբաղի գավառի Ջրաբերդի տեղամասի մեջ: Անցյալում Ղարաբաղը պահպանել է իր ինքնուրույնությունը և միայն 1868 թ. է մտցվել Ելիզավետպոլի նահանգի մեջ: Հենց



այդ ժամանակ էլ Գյուլիստանի շրջանը անջատվել է Ղարաբաղից և հանձնվել թաթարների իշխանությանը: Ղարաբաղի հայության 5-րդ համագումարում, որին մասնակցել է նաև Գյուլիստանի ներկայացուցիչը, Ղարաբաղը, որը փաստորեն 1919 թ. մարտից ղեկավարվում է հայկական Ղարաբաղի վարչության կողմից, ստացել է անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Շատելվորթի վավերացումը՝ Գյուլիստանը Ղարաբաղի քարտեզի մեջ մտցնելու վերաբերյալ: Նույնիսկ նահանգապետ Սուլթանովը Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի օրերին խոստացել է Գյուլիստանի շրջանը դուրս բերել Գյանջայի նահանգից և մտցնել Ջրաբերդի շրջանի մեջ: Դեռևս սեպտեմբերի կեսերին, Չայքենդ (Գետաշեն) գալով, Գյանջայի գավառապետ Բահրամ բեկն իր մոտ է կանչել Գյուլիստանի շրջանի գյուղերի մի քանի պաշտոնյաների և պահանջել ենթարկվել իրեն ու զինաթափել բնակչությանը: Այդ մասին ժամանակին հայտնվել է Շուշիի ազգային խորհրդին, որտեղից ստացված հեռագրում նշվում է, որ Գյուլիստանի շրջանը ենթարկվում է ղարաբաղյան իշխանություններին և համաձայն օգոստոսյան համաձայնագրի, ենթակա չէ զինաթափման: Գյուլիստանի շրջանն անառարկելիորեն Ղարաբաղին միանալու վերաբերյալ 13 գյուղերի կողմից սեպտեմբերի 10-ին կազմված ընդհանուր համախոսականը Ղարաբաղի ազգային խորհրդին և գեներալ-նահանգապետի օգնական Բալանթարովին է ներկայացվել հոկտեմբերի 1-ին: Համախոսական-խնդրագրեր էին ուղարկվել նաև Ադրբեջանի իշխանություններին: Վարչապետ Ուսուբբեկովը, լինելով Գյանջայում, հայտարարել էր, թե շուտով խորհրդարանը որոշում կընդունի Գյուլիստանի շրջանը Ղարաբաղին միացնելու վերաբերյալ: Եվ այդքանից հետո Գյանջայի նահանգապետության ներկայացուցիչը նոյեմբերի 12-ին տեղի ունեցած շրջանային ժողովում պնդում էր, թե շրջանը պետք է ենթարկվի Գյանջայի նահանգապետությանը: Հետո Գյանջայի գավառի ներկայացուցիչը, նահանգապետի հանձնարարությամբ, նոյեմբերի 18-ին զինված խմբով գալով հարևան շրջանի Մոլլավալաթու գյուղը, պահանջում է, որ շրջանի յուրաքանչյուր գյուղից իր մոտ գնան վեցական ներկայացուցիչ՝ շրջանը Գյանջայի նահանգի վարչությանը ենթարկելու համար:

Այս բոլորը շարադրելով, Լևոն Տեր-Մինասյանը Հայաստանի կառավարությունից խնդրում է նպաստել Գյուլիստանի շրջանը Ղարաբաղի հետ միավորելու վերաբերյալ որոշումների իրագործմանը և մարդկային զոհերի կանխմանը:[36]

Արցախ-Ղարաբաղի վիճակը հետզհետե ավելի էր ծանրանում: Այդ հարցը քննության առնվեց 1920 թ. հունվարի սկզբին Շուշիի Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցում տեղի ունեցած Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին մեծ թվով մտավորականներ և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Բոլշևիկներն ու սոցիալ-հեղափոխականները առաջարկում են, որպեսզի Հայաստանից եկած ներկայացուցիչները հեռանան Ղարաբաղից, պնդելով, թե «իբրև նրանք են բորբոքում ազգամիջյան հարաբերությունները»:[37] Նիստը վարող Արշավիր Քամալյանը հայտարարում է, թե դա հնարավոր չէ, որովհետև երկրամասի ամբողջ գյուղացիությունը նրանց հետ է: Նա առաջարկում է հանդիպել Հայաստանից

եկած գործիչների հետ և «կատարել մտքերի փոխանակություն»։ Ազգային խորհրդի կողմից գավառներն ուղարկված պատգամավորությունները Շուշի են վերադառնում անարդյունք։ Բանն այն է, որ Հայաստանից եկած գործիչները՝ դժգոհ օգոստոսյան համաձայնությունից, անվստահություն ցուցաբերելով արցախահայության ազատագրական պայքարի գլուխ կանգնած արցախցի գործիչների նկատմամբ՝ գործում էին ինքնուրույն ու չէին ցանկանում կապի մեջ մտնել նրանց հետ։ Նրանք նույնիսկ կապեր չէին հաստատում Շուշիի հայ բնակչության հետ։ Անշուշտ, այս կոպիտ սխալը հետագայում իրեն զգացնել տվեց և խիստ բացասական ազդեցություն ունեցավ արցախահայության ազատագրական պայքարի վրա։ Հայաստանից եկածները չէին ցանկանում մինչև անգամ կապի մեջ մտնել գավառներում գործող մի շարք քաղաքական և ռազմական գործիչների հետ, մանավանդ նրանց, ովքեր մատնանշում էին նրանց սխալները։

Արտեմ Լալայանը պատմում է. «1919թ. դեկտեմբերի վերջերին ինձ մոտ եկավ Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Արսեն Ավանեսյանը (պետք է լինի Հովհաննիսյան կամ Միքայելյան– Հ.Ա.)՝ երեք ընկերների հետ։ Առաջարկեցին, որ ես օգնեմ իրենց՝ մուսավաթականների դեմ ըմբոստանալու գործում։ Ես նրանց խորհուրդ տվի վերադառնալ, քանի որ արդեն ուշ է, իրենք առաջ պետք է գային մեզ օգնության, երբ մեր ժողովուրդը կռվում էր միայն կայծակաքարով, հին հրացաններով։ Նրանք չհամաձայնեցին ինձ հետ։ Այդ ժամանակ ես մեր տանը խորհրդակցություն կազմակերպեցի՝ հրավիրելով նաև երկու կոմունիստի ու մի քանի ընթերականների։ Ես երկու կետ մշակեցի ու դրանք ներկայացրի Հայաստանից եկածներին։

1. Սեփական զորքերին ապահովել սեփական հացով։

2. Քանի որ քաղաքը (Շուշին) զինված չէ, քանի դեռ հայկական (Հայաստանի) զորքը չի հասել Շուշիից երկու վերստի վրա գտնվող Տոնավաճառ կոչվող վայրը, ապստամբությունը չսկսել։

Արսեն Ավանեսյանի հետ էին Ասլան Շահնազարյանը և Դալի Ղազարը»։[38]

1920 թ. հունվարի երկրորդ կեսին կրկին տեղի է ունենում Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նիստ, որտեղ բոլշևիկների առաջնորդ Ալեքսանդր Ծատուրյանը մեղադրում է Հայաստանից եկած գործիչներին և «սպառնում նրանց»։ Խորհրդի անդամ Ներսես Նասիբյանը, իր ելույթում քննադատելով Ղարաբաղի բոլշևիկների դիրքը, նշում է. «Կարիք չկա սպառնալ և մեծ–մեծ հայտարարություններ անել և տեղը հանգիստ նստել, եկեք միասին գնանք և անենք այն, ինչ–որ դուք ուզում եք։ Ես պատրաստ եմ...»։[39] Ընտրվում է երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն՝ Ալ. Ծատուրյան, Տիգրան Տեր–Գրիգորյան և Աբրահամ Կիսիբեկյան, հանդիպելու Հայաստանից եկած գործիչների հետ և նրանց հանձնելու ազգային խորհրդի որոշումը։ Սակայն այս անգամ ևս հանդիպումը դրական արդյունք չի տալիս։[40] Մինչդեռ, Սուլթանովը ազգային խորհրդից և քաղաքական կուսակցություններից վերջնական պատասխան էր պահանջում։[41] Նա Ադրբեջանի կառավարության անունից պաշտոնապես հայտարարում է, թե այլևս գոյություն չունի Փարիզի հաշտության վեհաժողով, հետևապես Ղարաբաղի հետ կապված որևէ հարց չի քննարկվելու, որովհետև «Դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան ի վիճակի չեն կուլ տալու իրենց իսկ սեփական ձեռքերով եփած սպասը, ուր մնաց ձեռք մեկնեն մեր շիլային։ Մենք ինքներս պետք է ելք որոնենք այս աննորմալ վիճակից դուրս գալու համար»։[42] Նա Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին 1920 թ. հունվարի 19–ին ուղարկված գրությամբ պահանջում է շտապ քննարկել և դրական լուծել Ղարաբաղը Ադրբեջանին վերջնականապես ենթարկվելու հարցը։ Նա արցախահայությունից միաժամանակ պահանջում է զինաթափ լինել և չխոչընդոտել «Ղարաբաղի մի քանի կետերում ադրբեջանական զորամասեր տեղավորելուն»։[43] Սուլթանովն իր կառավարությանը շտապեցնում էր այլևս չուշացնել և ուժով նվաճել Ղարաբաղն ու Զանգեզուրը։ Ադրբեջանի քաղաքական ուժերը և լրատվական միջոցները ևս աղմուկ–աղաղակ էին բարձրացնում և Ադրբեջանի կառավարությունից պահանջում արագորեն լուծել Ղարաբաղի ու Զանգեզուրի հարցը, մյուս կողմից էլ վարչապետ Ուսուբբեկովը գոհունակություն էր հայտնում, թե Ղարաբաղի հայերը սիրով են կատարում օգոստոսյան համաձայնագիրը և Ադրբեջանի կառավարությունն իբր միլիոններ է ծախսում Ղարաբաղի մշակութային կյանքը զարգացնելու համար։[44] Ադրբեջանի վարչապետը պնդում էր, թե ինչպես Ղարաբաղի հարցը լուծվել է խաղաղ ճանապարհով, նույնությամբ էլ պետք է լուծվի Զանգեզուրի հարցը։ «Բայց թող պարզ լինի ադրբեջանցիների համար,– այդ օրերին գրել է «Սյունիքը»–, որ Լեռնային Ղարաբաղը, հայ ժողովրդի պատմական ազատագրական օրրանը և սիրտն է եղել, և որպես այդպիսին չի կարող ենթարկվել վայրենի ադրբեջանցիներին»։ Իսկ ինչ մնում է Զանգեզուրին, ապա այն «մեխված է Ադրբեջանի կոկորդում և պատրաստ են դիմադրելու Ուսուբբեկովների ոտնձգություններին»։[45]

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը օր օրի ավելի էր ուժեղացնում իր զավթողական քաղաքականությունը Արցախի նկատմամբ։ «Աշխատավորը» 1920 թ. հունվարի 13–ին հաղորդել է, թե Ղարաբաղը գտնվում է ամենածանր պայմաններում. օգոստոսյան համաձայնության պահանջները չեն կատարվում, այդ թղթի կտորով Ադրբեջանը թոզ է փչում արտաքին աշխարհի աչքին։ Այնտեղ անիշխանությունը հասել է ամենալայն չափերի, գողությունը, մարդասպանությունը սովորական երևույթներ են դարձել։ Օգոստոսյան համաձայնությունից հետո կազմավորված ազգային խորհուրդը աչքի չի ընկնում իր որոշ և շեշտված քաղաքականությամբ, վարում է համաձայնողական գիծ և անտերության են մատնված շահագործվող հայ աշխատավոր զանգվածները։ Նույն տարտամ և գրեթե անգործունյա վիճակում էին գտնվում նաև նահանգապետության առընթեր ստեղծված հանձնախմբերը։ Թերթը գտնում էր, որ պետք է վերջ տրվի այդ հանցավոր գործողություններին։ Հաջորդ մի քանի համարներում հրապարակելով Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի պաշտոնական և ոչ պաշտոնական հաղորդումները, թերթը ցույց էր տալիս դրանց ստահոդ լինելը և պահանջում վերջ տալ հակահայկական հիստերիային։

1920 թ. փետրվարից սկսած Արցախի գլխին սկսեցին կրկին թանձրանալ սև ամպերը: Շուշի ժամանեցին Նուրի փաշան և գեներալ Նովրոզովը՝ «մի քանի հազարանոց ջոկատով»:[46] Ադրբեջանի կառավարությունն իր դաhիճներից պահանջում էր «լայն մասշտաբով և մի քանի ուղղություններով զինաթափ անել և ենթարկացնել Ղարաբաղ–Զանգեզուրը»:[47]

Մուսավաթական Ադրբեջանի այդ քայլերը լիովին հակասում էին օգոստոսյան ժամանակավոր համաձայնությանը: 1920 թ. փետրվարի 20–ին Հայաստանի կառավարության կողմից Ադրբեջանի կառավարությանն ուղարկված հեռագրում նշվում էր, որ «նման գործողությունները բացահայտ և անառարկելիորեն խախտում են բոլոր պայմանագրերը և առիթ են հանդիսանում արյունահեղության»:[48] Հայաստանի կառավարությունը Ադրբեջանի կառավարությունից խնդրում է շտապ միջոցառումներ ձեռնարկել և բեկանել նախատեսված հարձակման պլանը, հավատարիմ մնալ 1919թ. նոյեմբերի 23–ի պայմանագրին ու Ադրբեջանի կառավարության կողմից «բազմիցս ընդգծված և ողջունած բարի հարևանության հաստատմանը»:[49] Հայաստանի կառավարությունը բողոք է ներկայացնում նաև Անդրկովկասում գտնվող դաշնակից պետությունների հրամանատարությանը և պահանջում միջոցներ ձեռնարկել ու փակել Ադրբեջանի զավթողական քաղաքականության ճանապարհը: Թե Ուորդրոպը, թե Հասկելը և թե մյուսները տալիս են առատ խոստումներ և հույսեր ներշնչում, որ անպայման կհասնեն «բավարար արդյունքների»:[50] Ուորդրոպը հայտնում է, որ կկանխի Ադրբեջանի հարձակումը, հավատացած լինելով, որ Զանգեզուրում չկա հայկական բանակ, որի գոյությունը միայն իբրև «առիթ կհանդիսանա Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների»:[51]

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, որպեսզի թաքցնի իր զավթողական ձգտումները, կեղծ լուրեր է տարածում և իրարամերժ հեռագրեր ուղարկում տարբեր հասցեներով: Հայաստանի կառավարության բողոքին պատասխանում է, թե իբր նա առաջինն է խախտել նոյեմբերի 23–ի համաձայնագիրը և Զանգեզուրում ոչնչացրել է մինչև 40 մուսուլմանական գյուղեր: Ապա ձգնում է ապացուցել, թե իբրև Ադրբեջանի կառավարությունը միայն սահմանափակ քանակությամբ զորամասեր է ուղարկել՝ Հայաստանի բանակին «կանխագծված պլանից հետ պահելու համար»:[52]

Այսպիսով, երկու կառավարությունների թղթապանակները օր օրի հաստանում էին իրար մեղադրող և իրար հակասող փաստաթղթերով: Այս բոլորի մեջ ճշմարիտն այն էր, որ Ադրբեջանի կառավարությունը հավակնություն ուներ զավթելու Ղարաբաղն ու Զանգեզուրը: Մուսավաթական Ադրբեջանն իր այդ նվաճողական քաղաքականությունն իրագործելու համար առատ ռազմական և նյութական օգնություն էր ստանում ոչ միայն Թուրքիայից, այլև դաշնակից մյուս պետություններից: Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարությունում 1920 թ. փետրվարի 7–ին կազմված գաղտնի մի տեղեկագրից իմանում ենք, որ Ադրբեջանի կառավարությունը Սուլթանովին, որպես քրդերի պարագլխի, հանձնարարել էր արցախահայության դեմ օգտագործելու համար «կազմակերպել քրդական հրաձգային դիվիզիա»:[53] Այդ օրերին Բաքվում



տեղի ունեցած «Իթթիհատի» համագումարը Ադրբեջանի կառավարությունից պահանջում է բոլոր միջոցներն օգտագործել և արագորեն լուծել Ղարաբաղի ու Զանգեզուրի հարցը: Այդ նպատակով, Ադրբեջանի կառավարությունը Թարթառն ու Կարյագինոն նոր ուժերով համալրելուց հետո, որոշում է գրավել և զորամասեր տեղադրել Ջիվանշիրում գտնվող Ավան–Յուզբաշյանի կալվածքում, որպեսզի այստեղից հարվածի ջրաբերդցիներին: Երբ այդ մասին Սուլթանովը հաղորդում է նահանգապետին առընթեր խորհրդի հայ անդամներին և տեղակալ Գրիգոր աղա Քալանթարյանին, նրանք բացահայտորեն չեն առարկում: Հարցը քննարկվում է նաև փետրվարի 1–2-ը Հարավ գյուղում տեղի ունեցած Ղարաբաղի ինքնապաշտպանության կոմիտեի խորհրդակցությունում և որոշվում է Մարգուշևանը զիջել Ադրբեջանին:[54] Սակայն վճռական խոսքը պատկանում էր ջրաբերդցիներին: Փետրվարի 11–ին Ջրաբերդի Մինգրելսկ գյուղում տեղի ունեցած ենթաշրջանի 16 գյուղերի ներկայացուցիչների համախավաքը (նախագահ՝ Արամ Հովհաննիսյան, քարտուղար՝ Բագրատ Բաղդասարյան) մասնակցությամբ 86 հոգու, քննարկելով Մարգուշևանը Ադրբեջանին զիջելու վերաբերյալ պահանջը, միաձայն որոշում է այն մերժել:[55] Ջրաբերդցիների այդ վճռի վրա չկարողացան ազդել ոչ Զախար Մեսյանը, որը Ջրաբերդի շրջանի ինքնապաշտպանության կազմակերպման պատասխանատուն էր, ոչ Գ. Քալանթարյանը և ոչ էլ ՂԻԿՄ–ը:

Ջրաբերդցիների այդ վճռականությունը ոգևորեց արցախահայությանը: Փետրվարի 5–ին Սարուշենում տեղի ունեցած ՂԻԿՄ–ի նիստում որոշվում է ցուցակագրել երկրամասի բոլոր սպաներին, արագացնել Զանգեզուրից զենքի և զինամթերքի տեղափոխումը, մթերքների կուտակումը հասարակական շտեմարաններում և այլն, իսկ փետրվարի 14–ին Շուշիում տեղի ունեցած ազգային խորհրդի անդամների, նահանգապետին կից խորհրդի հայ ներկայացուցիչների, մտավորականության և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ընդլայնված խորհրդակցությունը որոշում է փետրվարի 28–ին հրավիրել Ղարաբաղի հայության նոր համագումար և վճռել մի շարք հրատապ հարցեր:[57] Սուլթանովը Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդին փետրվարի 19–ին ուղարկած պաշտոնական գրության մեջ առաջարկում է Ղարաբաղի հայության 8–րդ համագումարի «քաղաքական հարցերի օրակարգի առաջին կետը» դարձնել «Ղարաբաղի հարցը»: Նահանգապետը խնդրում է քննության դնել «Ղարաբաղը վերջնականապես Ադրբեջանին միացնելու սկզբունքային հարցը, որպես վերջինիս հետ տնտեսապես անխախտելի կերպով կապված մի երկրամասի»:[58] Արցախահայության վրա նոր ճնշում գործադրելու նպատակով, փետրվարի 22–ին, հայկական բարեկենդանի օրը, մուսավաթականները նոր ջարդ են կազմակերպում Ասկերանի, Խանքենդիի և Աղդամի ջրաղացներում գտնվող հայերի նկատմամբ: Այդ վայրագությանը զոհ են գնում ավելի քան 100 հոգի:[59]

Արցախ–Ղարաբաղում ստեղծված ծանր վիճակը երկրամասի առաջադեմ ուժերին ստիպում էր ելք որոնել և երկրամասը փրկել վերահաս աղետից: Դեռևս փետրվարի 20–ին Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի կողմից հա-

տուկ մանդատով Բաքու էին ուղարկվել սոցիալիստ-հեղափոխական կուսակցության անդամ Ռուբեն Տեր–Գասպարյանը և բոլշևիկների կուսակցության Ղարաբաղի օկրուգային կոմիտեի անդամ Արմենակ Ղարագյոզյանը,[60] որոնք համաձայնություն ունեին ինչ գնով էլ լինի, ուղիներ որոնել Ղարաբաղի հարցը «խաղաղ ճանապարհով» լուծելու և ազգամիջյան ընդհարումները կանխելու համար:[61]

Չնայած պատվիրակությունը Շուշիից դուրս էր եկել նահանգապետ Սուլթանովի իմացությամբ, սակայն Բաքվում տեղի նահանգապետի կարգադրությամբ պատվիրակության անդամները ձերբակալվում և նետվում են Պորտովոյ տեղամասի բանտը, որտեղից ապրիլի կեսերին մի նամակ են հղում Բաքվում լույս տեսնող «Իսկրա» թերթի խմբագրությանը, որում Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների ամբողջ մեղքը բարդում են Հայաստանի կառավարության և դաշնակցական կուսակցության վրա:[62] Վրդովեցուցիչն այն է, որ բոլշևիկ–էսէռ ներկայացուցիչների նամակում մեղադրական ոչ մի խոսք չի ասվում Ղարաբաղի և ադրբեջանահայության դահիճ Ադրբեջանի կառավարության, մուսավաթականների և թուրք բարբարոսների հասցեին, որոնք անխնա ավերում էին Արցախի գյուղերը, մշակույթի օջախները, տանջանքների ենթարկում ու բնաջնջում խաղաղ բնակչությանը, հափշտակում նրանց գույքը և ձգտում Արցախ–Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին: Պատվիրակության անդամներն ապրելով և գործելով Ղարաբաղում, տեսնելով այնտեղ ստեղծված սոսկալի ծանր պայմանները, որի հիմնական մեղքը ընկնում էր մուսավաթական Ադրբեջանի կառավարության և նրա դրածո նահանգապետ Սուլթանովի վրա, այդ բոլորը մոռացության են մատնում և չեն կանգնում հայրենիքի շահերի պաշտպանության դիրքերում:

Արցախի պաշտպանությունը, մայր Հայաստանի հետ նրա միավորման խնդիրը միշտ էլ հանդիսացել է Ղարաբաղի քաղաքական կուսակցությունների և մտավորականության հիմնական խնդիրը: 1917–1919 թթ. երկրամասի համար ստեղծված դժվարին և ծանր պահերին, երբ վճռվում էր արցախահայության լինել–չլինելու հարցը, Արցախում գործող քաղաքական ուժերը հանդես գալով համատեղ և ժամանակավոր մի կողմ դնելով ներքին անհամաձայնությունները, կարողացել են ժողովրդի հետ դիմակայել արտաքին ճնշիչ ուժերին և պաշտպանել իրենց օրրանը, հայրենի օջախը: Բայց ահա, 1920 թ. փետրվարի կեսերին, Ղարաբաղի հայության ութերորդ համագումարի նախօրյակին, երբ դրված էր Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու կամ չենթարկվելու հարցի վերջնական լուծումը, քաղաքական ուժերի ներքին հակասությունները օր օրի բացահայտվում են ու խորանում: Դրանք համեմատաբար սուր բնույթ էին կրում բոլշևիկների և դաշնակցականների միջև:

Արցախ–Ղարաբաղում բոլշևիկները, ինչպես գիտենք, ակտիվ են գործել մանավանդ 1917 թ. ամռանը և աշնանը: Հետո նրանց գործունեությունը թուլացել է: Այն կրկին ակտիվանում է 1918 թ. կեսերից հետո: Օգոստոսյան ժամանակավոր համաձայնության կնքման գործում որոշ գնահատելի դեր խաղացին նաև բոլշևիկները:



Խորհրդային Ռուսաստանի հաջողությունները ռազմաճակատներում և 11–րդ Կարմիր բանակի զորամասերի մոտենալը Անդրկովկասի սահմաններին. ոգևորել էր Ղարաբաղի բոլշևիկներին, որոնք պաշտպանում էին օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունը և գտնում, որ Ղարաբաղի գոյությունը հնարավոր է միայն Ադրբեջանի սահմաններում, քանի որ իբր տնտեսապես կապված է նրա հետ: Ղարաբաղի բոլշևիկների այդ մոտեցումը պաշտպանում էին էսէռները, իսկ մենշևիկները գտնում էին, որ Ղարաբաղը պետք է լինի Հայաստանի հետ, սակայն վտանգի դեպքում՝ մնալով չեզոք: Այդ հարցում ժողովրդական կուսակցությունը միասնական չէր. մի մասը կողմնակից էր Հայաստանի հետ միավորմանը, իսկ մի մասն էլ տատանվում էր: ՀՅ դաշնակցությունը գտնում էր, որ պետք է վճռականորեն մերժել Ադրբեջանի նկրտումները Ղարաբաղի նկատմամբ և այն միավորել Հայաստանի հետ:

Ազգային խորհրդի և քաղաքական կուսակցությունների կարծիքները բախվեցին համագումարի հրավիրման տեղի հարցում: Սուլթանովը պահանջում էր համագումարը հրավիրել Շուշի քաղաքում: Նրա այդ պահանջը պաշտպանում էին բոլշևիկների ղեկավար Ալեքսանդր Ծատուրյանը և ազգային խորհուրդը: Մենշևիկ Արշավիր Քամալյանը դեմ է արտահայտվում և պահանջում համագումարը հրավիրել գավառում, որպեսզի նախ՝ հեռու լինեն Սուլթանովի ճնշումից և հետո՝ Հայաստանից եկած գործիչները հնարավորություն ունենան մասնակցել համագումարի աշխատանքներին: Երկար վիճաբանությունից հետո ի վերջո որոշվում է համագումարը հրավիրել Շուշի քաղաքում: Փետրվարի 28–ի առավոտյան, պատմում է Աբրահամ Կիսիբեկյանը, ազգային խորհուրդը Մարիամ Ղուկասյանի օրիորդաց դպրոցի «ընդարձակ դահլիճում, որտեղ պետք է տեղի ունենար համագումարը, սպասում էր դիմավորելու պատգամավորներին»:[63] Առավոտյան ժամը 10–ին ներկայանում են հազիվ 8–10 պատգամավոր: Հետագայում, 1923 թ., Սուրեն Շադունցը գրել է, թե պատգամավորների ընտրությունները «Դիզակում, Ջիվանշիրում և Խաչենում մեծ մասամբ անցել էին բոլշևիկների օգտին»: Դրա համար էլ, շարունակում է Շադունցը, դաշնակցականները որոշում են պատգամավորների մի մասին պահել Շոշ գյուղում, իսկ Շուշի են ուղարկում 3–4 դաշնակցականների:[64] Ժամը 11–ին ազգային խորհուրդը ստանում է հետևյալ գրությունը. «Լեռնային Ղարաբաղի աշխատավորության 8–րդ համագումարը չի կարող տեղի ունենալ Շուշի քաղաքում, որտեղ գտնվում է Սուլթանովը: Համագումարը պետք է տեղի ունենա Շոշ գյուղում, որտեղ այժմ ժողովվում է պատգամավորների օրինական ու բացարձակ մեծամասնությունը՝ թվով 110–115 հոգի: Համագումարն արդեն սկսել է իր աշխատանքը, ուստի առաջարկում ենք Շուշիում գտնվող մի քանի պատգամավորների վերադառնալ Շոշ և մեզ հետ միասին շարունակել համագումարի աշխատանքները:

Նախագահ՝ Առաքելյան Դ.[անիել]

Քարտուղար՝ Ավագյան Վ. [ ]»:[65]

Սա անսպասելի էր թե ազգային խորհրդի, թե բոլշևիկների և թե Սուլթանովի համար: Խորհելուց հետո Շոշ է ուղարկվում Արշավիր Քամալյանը, հետո՝ Աբրահամ Կիսիբեկյանն ու Հադրութից բոլշևիկ պատգամավոր Ղևոնդ Պետրոսյանը՝

պատգամավորներին համոզելու տեղափոխվել Շուշի և համագումարը շարունակելու այնտեղ: Սակայն այդ բոլոր ջանքերն ավարտվում են անօգուտ: Շուշիում հավաքված պատգամավորները, քաղաքական կուսակցությունների մի քանի ներկայացուցիչներ և ազգային խորհրդի անդամները որոշում են իրենց հավաքն անվանել Ղարաբաղի հայ պատգամավորների խորհրդակցության: Թե Շոշ գյուղում հրավիրված Ղարաբաղի հայության ութերորդ համագումարը և թե Շուշիում տեղի ունեցած պատգամավորների խորհրդակցությունը տեղի են ունենում նույն օրերին՝ փետրվարի 28–ից մինչև մարտի 5–ը և քննարկում են միևնույն հարցերը, բայց ընդունում հակառակ որոշումներ:

Ղարաբաղի հայ պատգամավորների խորհրդակցությունն[66] ընդունում է բոլշևիկների ֆրակցիայի առաջարկած բանաձևը: Այն կոչ էր անում վերջ տալ ազգամիջյան ընդհարումներին, անհաշտ պայքար մղել ազգայնամոլության դեմ, տարածքային վիճելի հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով և այլն: Տվյալ պահին, քանի որ հիմնական հարցը Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկվելու կամ չենթարկվելու հարցն էր, պատգամավորների խորհրդակցությունը «Լեռնային Ղարաբաղի քաղաքական խնդրի վերջնական լուծման գործում... կանգնում է Ղարաբաղի հայության 7–րդ համագումարի տեսակետի վրա, գտնելով, սակայն, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական միացումը Ադրբեջանի Հանրապետությանը, կախված է այն պետական քաղաքականությունից, որ կունենա Ադրբեջանի կառավարությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»: Բանաձևում նաև ասված է, որ «7–րդ համագումարի օգոստոսյան համաձայնագիրը շատ կողմերով պակասավոր է», ուստի խորհրդակցությունը գտնում է, որ առապագա 8–րդ համագումարը «անհրաժեշտություն կզգա քննության ենթարկել այն»:[67] Պատգամավորների խորհրդակցությունը կողմնակից էր Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում և հասկացնել է տալիս, որ չի ճանաչում Շոշում տեղի ունեցող Ղարաբաղի հայության ութերորդ համագումարը:

Իսկ ի՞նչ էր տեղի ունենում Շոշ գյուղում: Ղարաբաղի հայության կողմից ընտրված պատգամավորներից այստեղ էին հավաքվել 96 հոգի,[68] որոնց թվում կային նաև բոլշևիկներ, էսէռներ, դաշնակցականներ, մենշևիկներ և այլ քաղաքական ուժերի ու մտավորականության ներկայացուցիչներ: Նրանք ներկայացնում էին Գյուլիստանի, Ջիվանշիրի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի հայ բնակչությանը: Շոշում հավաքված պատգամավորների հավաքը,[69] իրեն ճանաչում է որպես Ղարաբաղի հայության 8–րդ համագումար: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Հայաստանից եկած և Արցախի գավառներում գործող գործիչները, բազմաթիվ գյուղացիներ և մտավորականներ: Համագումարը, քննության առնելով Լեռնային Ղարաբաղի ներքաղաքական դրությունը, գտնում է, որ «7–րդ համագումարից հետո Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը»: Համագումարը հայտարարում է, որ Ադրբեջանի կառավարությունը շարունակում է հայասպանության իր քաղաքականությունը և «վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ Խանքենդում, Ասկերանում և Շուշի–Եվլախ ճանապարհի վրա տեղի ունեցած ան[illegible] կոտորածների առթիվ ու քաղաքակիրթ աշխարհին կոչ է անում վերջ տալ Ադրբեջանի այսօրինակ քաղաքականությանը»: Համագումարը վճռականորեն շեշտում է, որ «նման դեպքերի կրկնությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը կստիպի իր կյանքի ու պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների...»: Համագումարի ընդունած բանաձևի մասին տեղյակ է պահվում Անդրկովկասում դաշնակից պետությունների դիվանագիտական և զինվորական ներկայացուցիչներին, ինչպես և Սուլթանովին:[70] Այդ նամակագրում բացատրվում է օգոստոսյան համաձայնության կնքման մոտիվները և միևնույն ժամանակ շեշտվում «այն տխուր և միանգամայն ցավոտ հանգամանքը, որ համաձայնություն կայացնելուց հետո» Ադրբեջանի կառավարությունը չի կարողացել ոչ մի կարգ ու կանոն պահպանել Ղարաբաղում: Նաև նշվում է, որ «անցյալներում ոչ մի ժամանակ հայ ժողովուրդը զոհերով և թե տնտեսապես այնքան վնասներ չի կրել, որքան համաձայնությունը կայացնելուց հետո... Հայտնի մարդասպաններն ու գողերը օրը ցերեկով սպանում, թալանում են խաղաղ ժողովրդին և դրա դեմ ոչ մի միջոց ձեռք չէր առնվում, հանցավորները չեն պատժվում... Ասկյարները թալանում են խաղաղ ժողովրդի [illegible], կոտորում տղամարդկանց, կանանց ու երեխաներին, և նրանցից ոչ մեկը չի պատժվում: Ավերված գյուղերի հայ բնակիչները մինչև այսօր էլ թափառում են այս ու այն գյուղերում...»:[71]

Ղարաբաղի հայության 8–րդ համագումարը, մերժելով երկրամասը Ադրբեջանին ենթարկվելու մուսավաթականների պահանջը, անկասկած, ավելի խորացրեց հակամարտությունը Ադրբեջանի և Ղարաբաղի միջև: Փաստորեն, արցախահայությունը կանգնեց ազատագրական պայքարի ավելի ծանր փուլի շեմին: Մուսավաթական Ադրբեջանն իր արյունոտ ձեռքերն արձակած համա[illegible]ով, սկսեց տենդագին նախապատրաստվել արցախահայությանը նոր սպանդի ենթարկելու համար:

Ղարաբաղի հայության 7–րդ համագումարից մինչև 8–րդ համագումարն ընկած ժամանակաշրջանում Արցախ–Ղարաբաղի հասարակական–քաղաքական կյանքում տեղի ունեցան զգալի փոփոխություններ՝ «հանդես եկան իրար ներհակ նոր ուժեր», որոնց միջև «ստեղծվեցին նոր փոխհարաբերություններ»:[72] Եվ եթե 7–րդ համագումարում քաղաքական կուսակցությունները դրսևորեցին նպատակների միասնություն՝ ապահովել Արցախի բնակչության ֆիզիկական գոյությունը և թույլ չտալ ոտնահարել նրա ամենատարրական իրավունքները, ապա 8–րդ համագումարի օրերին բացակայում էր քաղաքական ուժերի նպատակների միասնությունը: Որոշ ուժեր, մանավանդ բոլշևիկները, գտնում էին, որ արցախահայության փրկության միակ ելքը, թերևս, օգոստոսյան համաձայնագրի պահպանումն է, իսկ դաշնակցական կուսակցությունը և նրանց համախոհ քաղաքական ուժերը, Ղարաբաղի մտավորականության զգալի մասը և երկրամասի գրեթե ողջ գյուղացիությունը գտնում էին, որ փրկության միակ ելքը մայր Հայաստանի հետ վերամիավորումն է՝ թեկուզ զինված պայքարի միջոցով: Անկախ այդ դիրքորոշումներից, մուսավաթական Ադրբեջանի նպատակը միանգամայն հստակ էր՝ ուժով նվաճել Արցախ–Զանգեզուրը:

## 2. ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ: ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ 9-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ: ԱՐՑԱԽԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը խիստ դժգոհ էր Ղարաբաղի հայության 8–րդ համագումարի որոշումներից: Արցախահայությունը այլընտրանք չուներ, քան մայր Հայաստանի հետ վերամիավորվելը: Այդ էին պահանջում Ղարաբաղի և Հայաստանի շահերը: Սուլթանովն ու նրա տերերն ի վերջո հասկացան, որ ահաբեկումներով անկարելի է ընկճել արցախահայությանը, և որ Արցախ–Զանգեզուրի հարցը կարելի է լուծել միայն այդ տարածքներում բնակվող հայությանը լիովին բնաջնջելու կամ էլ ծայրահեղ դեպքում տեղահան անելու միջոցով: Այդ ահավոր պլանն իրագործելու համար Սուլթանովի դահիճները սկսեցին տենդագին պատրաստություններ տեսնել Ղարաբաղը զենքի ուժով նվաճելու համար: Դեռևս մարտի 5–ին «Աշխատավորը» հաղորդել է, թե Սուլթանովը «մի կողմից Ղարաբաղում կազմում է քրդա–թաթարական զորամասեր, որպեսզի հենց տեղում վտանգ ստեղծի հայերի համար, մյուս կողմից՝ դրամի ու սպառնալիքների օգնությամբ փորձում է համագումարի միջոցով փոխել Ղայբալուի ջարդից հետո կայացած «համաձայնության» պայմանները, զորք մտցնելով այդ երկիրը»: Եվ ապա՝ «մարզարե չպետք է լինել գուշակելու համար, որ Ղարաբաղը կանգնած է արյունալի նախճիրների նախօրյակին, որովհետև կասկածից դուրս է, որ տեղացի հայությունը երբեք կամովին չի համաձայնի իր վիզը թեքել թրքական յաթաղանի հանդեպ: Մյուս կողմից պարզ է և այն, որ Ադրբեջանն էլ չի հրաժարվի իր նվաճողական ծրագրից, քանի չի փոխել ու սպառել բոլոր միջոցները»: Միանգամայն պարզ է, եզրափակում է թերթը, որ այսօր «Ադրբեջանի քաղաքական կուսակցությունների համար Զանգեզուրն ու Ղարաբաղը հարկավոր են ոչ թե ինչ–որ տնտեսական նկատառումներով, այլ քաղաքական, իրագործելու պանիսլամիզմի ծրագիրը»: Ադրբեջանի ներքին գործերի նախարար Խան Խոյսկին նույնիսկ հայտարարում էր, թե «Ղարաբաղի հարցերը Ադրբեջանի ներքին գործերի մեջ են մտնում»:[73] Եվ դա այն դեպքում, երբ Ղարաբաղը երբեք չի ընդունել Ադրբեջանի իշխանությունը:

Մուսավաթական ուժերը նախ ավելի ամրապնդեցին Աղդամ–Շուշի և Մուսուլմանլար–Հագարու գծերը, համոզված լինելով, որ «Ղարաբաղի դեմ պատերազմելու դեպքում, անկասկած, նրան օգնության կհասնի Հայաստանի կառավարությունը, որի միակ ճանապարհը Զանգեզուր–Կոռնիձոր–Խծաբերդ գիծն էր»:[74] Գանձակի լեռնային շրջաններից մինչև Թարթառ, այնտեղից մինչև Աղդամ–Կարյագինո–Ջեբրայիլ, շուրջ 300 կմ երկարությամբ, մուսավաթականները կուտակում էին մեծ քանակությամբ զորամասեր և ռազմական հանդերձանք: Արդեն 1920 թ. գարնան սկզբին Արցախի սահմանամերձ շրջաններում Ադրբեջանը ուներ մինչև 10 հազար ասկյար:[75] Մուսավաթականները քայլ առ քայլ ամրանում էին ռազմավարական կետերում: Մարտի 4–ին Շուշիի հայկական մասում տեղավորվեցին թուրք–ազերական սպաներ: Բաքվից տեղ հա-



սան նոր զորամասեր, իսկ մարտի 10–12–ը Շուշի մտան Հաջի Սամլուի կողմից եկած 150 քրդեր:

Մուսավաթական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում Խանքենդիի և Շուշիի ամրապնդմանը: Ադրբեջանական զորամասերը մարտի սկզբին գրավում են Ասկերանի անցուղին և դրանով իսկ ապահովում կապը Շուշիի հետ: Սուլթանովի հրամանով ձերբակալվում են մի շարք հայ մտավորականներ, Շուշիի շուրջը ստեղծվում է ուժեղ հսկողություն, ամրապնդվում են բոլոր ռազմական կետերը և հեռախոսագծով կապվում նահանգապետության հետ: Երկրամասի տարածքում ավելի է ուժեղացվում հայերի նկատմամբ կիրառվող ահաբեկչությունը: Մարտի 7–ին դեպի Խանածախ տանող ճանապարհի վրա սպանվում են 5–6, իսկ մարտի 10–ին Եվլախ–Շուշի խճուղու վրա՝ 10 հայեր:[76]

Արցախահայությունը զգում էր, որ շուտով ահեղ փոթորիկ կլինի, հետևաբար պետք է պատրաստ լինել պաշտպանության: Սակայն աշխատանքները դանդաղ էին ընթանում. Ղարաբաղի ինքնապաշտպանության կենտրոնական մարմինը զինվորագրել էր ընդամենը 3000 հոգի:[77] Աշխատանքներն առանձնապես անբավարար էին տարվում Շուշիի հայ բնակչության պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: ՂԻԿՄ–ը գրեթե կապ չուներ քաղաքի հայության հետ, վերջիններս անտեղյակ էին դրսում տեղի ունեցող իրադարձություններին: Հայկական թաղամասում նախկինում գոյություն ունեցած ինքնապաշտպանական ջոկատները, որոնցում ընդգրկված էին «հինգ հարյուրի չափ զինված մարտական ուժեր»,[78] մոռացվել էին: Շուշիում կանգ էր առել հասարակական կյանքը. վաղուց դադարել էին թերթերի տպագրումը, մեծ թվով մտավորականներ և ընտանիքներ Շուշիից տեղափոխվում էին գավառ: Այնտեղ էին գնում նաև հարյուրավոր երիտասարդներ և անցնում ՂԻԿՄ–ի տրամադրության տակ:

Այո, դարերի պատմություն ունեցող և հայոց հպարտություն հանդիսացած Շուշին շնչահեղձ էր լինում, դատարկվում էր հայերից: Պարզապես՝ կյանքը մեռնում էր: Շուշին իր հիմնադրումից ի վեր հանդիսացել է Արցախի Վարանդա գավառի կենտրոնը: Ղարաբաղի այդ հայաշատ քաղաքը, որը 1916 թ. ուներ 43864 բնակիչ[79] և որի մեծամասնությունը հայեր էին ու զբաղեցնում էին քաղաքի տարածքի մեծամասնությունը, 1920–ի գարնան սկզբին, կանգնած էր ոչնչացման եզրին:

Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդը, որը 1918 թ. հուլիսից մինչև 1920թ. մարտի սկիզբը մեծ աշխատանք էր կատարել Արցախ–Ղարաբաղի ազատագրական պայքարը կազմակերպելու և երկրամասը ղեկավարելու գործում, կարելի է ասել շղթայված էր և, ըստ էության, գոյություն չուներ: Նրա ֆունկցիաներն անցել էին ՂԻԿՄ–ին: Այդ էր պահանջում ստեղծված իրադրությունը, մանավանդ, երբ մուսավաթական Ադրբեջանը բացահայտորեն նախապատրաստվում էր ներխուժել Արցախ–Զանգեզուր: 1920 թ. մարտի սկզբին Ղարաբաղում ստեղծվել էր այսպիսի վիճակ. քաղաքում և մոտակա մուսուլմանական բնակավայրերում իշխում էր Սուլթանովը, երկրամասի գավառներում՝ ՂԻԿՄ–ը: Ղարաբաղի հայության ութերորդ համագումարում խոսք չգնաց

ազգային խորհրդի կազմի վերընտրության մասին: Ազգային խորհուրդը զգում էր, որ երկրամասի հայության շրջանում երկիշխանության գոյությունը կլիներ միանգամայն անիմաստ: Ուստի այն ձուլվեց ՂԻԿՄ–ի հետ և երկրամասի կառավարումը ռազմականացվեց: Գավառ տեղափոխվեցին Շուշիում գտնվող ազգային խորհրդի գրեթե բոլոր անդամները:

Իրենց գործունեությունը դադարեցրին նաև նահանգապետին առընթեր խորհրդի հայ անդամները: Ըստ էության, Շուշիի հայությունը, որպես պատանդ, մնաց Սուլթանովի ճիրաններում:

Ասկերան–Շուշի–Զաբուղ գիծը ազերիների հսկողության տակ անցնելուց հետո Արցախի Գյուլիստան, Ջրաբերդ և Խաչեն գավառները կտրվեցին Վարանդայից ու Դիզակից, ասել է թե երկրամասը կիսվեց երկու մասի: Բայց դա դեռ չէր նշանակում, որ Սարուշենում գտնվող ՂԻԿՄ–ը կապ չուներ Խաչեն–Ջրաբերդ–Գյուլիստանի ինքնապաշտպանական մարմինների հետ: Հայրենի լեռնաստանի կածաններն ու արահետները, քարքարոտ ճանապարհները, լեռներն ու անտառները նույնպես օժանդակում էին արցախահայությանը:

Արցախում ստեղծված այդ ծանր վիճակը, անշուշտ, հայտնի էր հայության բոլոր քաղաքական ուժերին, ինչպես և Հայաստանի կառավարությանը: Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը ամերիկյան ռազմական կոմիսարին 1920 թ. մարտի 6–ին ուղարկած հեռագրում անհանգստություն էր հայտնում «Ղարաբաղում թուրքական սպաների ղեկավարությամբ ադրբեջանական զորամասեր կենտրոնացնելու» առթիվ և այդ երևույթին վերջ տալու համար խնդրում է նրա, ինչպես և դաշնակից մյուս պետությունների ներկայացուցիչների միջամտությունը:[80] Երկու օր անց, մարտի 8–ին, Խատիսյանը վերջնագիր է ներկայացնում Ադրբեջանի կառավարությանը և պահանջում դադարեցնել ադրբեջանական զորամասերի տեղաշարժը դեպի Ղարաբաղի և Զանգեզուրի խորքերը:[81]

Արցախահայության ճակատագրով անհանգստացած էին նաև Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում, Պետրոգրադում, Ռուսաստանի այլ քաղաքներում և եվրոպական կենտրոններում գործող հայկական հասարակական խմբերը: Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավոր» թերթը մարտի 5–ին, ասես գուշակելով Ղարաբաղի մոտակա ողբերգությունը, ահազանգ է հնչեցնում. «Ադրբեջանի տարբեր վայրերում տեղի ունեցած հայկական մասնակի կոտորածները նպատակ ունեին ոչ միայն թուլացնել հայկական տարրը այդ պետության սահմաններում, այլև ահաբեկել Ղարաբաղը, կոնկրետ կերպով ցույց տալով այն հեռանկարը, որ նրան սպասում է...

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, Ղարաբաղի փրկությունը նրա կազմակերպված կամքն է ու կատարյալ վճռականությունը՝ ամեն գնով ապահովել իր ազատությունը, միանգամայն հավատացած լինելով, որ այդ գործում իր հետ է ամբողջ հայությունը...»:

Հենց այդ օրերին, մարտի 20–ին, Զանգնեզուր–Ղարաբաղի գեներալ–կոմիսար Ս.Մելիք–Յոլչյանը, կոչով դիմելով Զանգեզուրի քաջարի զորքին և գյուղացիությանը, նշել է. «Տաճկա–ադրբեջանական միությունը... այսօր զինվորական եռուն գործողությունների է դիմել մեր Գողթանի ճակատում և օղակելով Ղարաբաղի սահմանները ընդհանուր զինաթափության պահանջ է առաջադրել Ղարաբաղի հայությանը:

Ադրբեջանը... վերջին անգամ փորձում է ճնշել Ղարաբաղը, ոչնչացնել Զանգեզուրը և մեր երկրի փլատակների վրայով միանալ Տաճկաստանի հետ:

Զանգեզուրի հերոսներ, ձեզ եմ դիմում վերջին անգամ և կոչում՝ ի զեն, պաշտպանելու մեր պատմական Զանգեզուր–Ղարաբաղը, որը ծածկված է հայության դարավոր կոթողներով, ցողված է մեր փառապանծ նախնիների արյունով և ոռոգված ձեր ամենօրյա աշխատանքի քրտինքով...

Քաջարի մարտիկներ, վերջին անգամ կոչում եմ ձեզ՝ յառա՜ջ, մինչև որ ազատ Հայաստանի Հանրապետության դրոշակը կծածանի Ղարաբաղի բոլոր ամրոցների և մարդկոցների վրա...

Առանց Զանգեզուր–Ղարաբաղի չկա Հայաստան»:[82]

Կարկտաբեր ամպերը նորից կուտակվեցին Արցախի երկրակամարում՝ Մռավից մինչև Քիրս: Բավական էր մի ամպրոպ, որ երկինքը փուլ գար Արցախ աշխարհի գլխին: Եվ դա չուշացավ: ՂԻԿՄ-ը լուր ստացավ, որ Ադրբեջանի մուսավաթական ուժերը պատրաստվում են մուսուլմանական ամանորի (նովրուզ) գիշերը (մարտի 23–ին) ընդհանուր հարձակում սկսել Ղարաբաղի դեմ: Անհրաժեշտ էր պատրաստվել դիմադրության:[83]

Քաղաք մտած քրդական ջոկատը ահ ու սարսափ էր տարածում հայության շրջանում: Սուլթանովը հատուկ գրությամբ պահանջում է, որպեսզի հայկական շրջանների ոստիկանապետերը մարտի 23–ին գան քաղաք՝ նահանգապետի բայրամը շնորհավորելու:[84] Նրա անսքող նպատակն էր՝ այդ օրը ոչնչացնել երկրամասի բոլոր հայ ոստիկանապետերին: Տեղյակ լինելով Արցախի գավառներում տեղի ունեցող իրադարձություններին՝ նա հրամայում է մարտական վիճակում պահել բոլոր զորամասերը և քաղաքում գտնվող քրդական ջոկատը: Միևնույն ժամանակ քաղաքի մուսուլմաններին պատվիրում է պատրաստ լինել և սպասել իր ազդանշանին՝ քաղաքի հայկական մասը հրդեհելու, թալանելու և հայերին սրի մատնելու համար: Այդ նպատակով քաղաքի մուսուլմաններին նախօրոք բաժանվել էին նավթ, լուցկի, զենքի տարբեր տեսակներ: Հայկական թաղամասում հայերի բնակարաններում տեղավորված թուրք սպաներին հանձնարարվել էր վտանգի դեպքում հեռանալ տունը վառելուց հետո: Ամանորի շքերթին մասնակցելու պատրվակով Աղդամից, Խանքենդիից և այլ վայրերից բավական զորամասեր էին տեղափոխվել Շուշի, որտեղ հրավիրվել էին նաև հարևան մուսուլմանական բնակավայրերի ու շրջանների խան–բեկերը, թուրք սպաները և բոլոր պաշտոնյաները:[85]

Արցախ–Ղարաբաղի դեմ մուսավաթական Ադրբեջանի հարձակումը սկսվեց 1920 թ. մարտի 22–ի լույս 23–ի գիշերը, ավելի շուտ, քան սպասվում էր: Գանձակից մինչև Մուսուլմանլար–Զանգեզուր ծավալվում էին պատերազմական գործողություններ: Մուսավաթական զինված ուժերը թուրք սպաների հրամանատարությամբ փորձում էին Թարթառի ուղղությամբ ներխուժել Ջիվանշիրի լեռնային՝ Ջրաբերդի շրջանը: Սակայն Ջիվանշիրի հայ պաշտպանների հուժկու

հարվածներից նրանք հետ են շպրտվում: Ջրաբերդը մնում է անառիկ: Ջրաբերդցիները օգնության են հասնում նաև գյուլիստանցիներին ու խաչենցիներին:

Մուսավաթական Ադրբեջանը իր բանակի հիմնական ուժերը կենտրոնացրել էր Աղդամ–Ասկերան, Խանքենդ–Շուշի խճուղու ուղղությամբ և Քիրս–Տումի–Խծաբերդ գծի երկայնությամբ՝ իբր Զանգեզուրի կողմից Արցախ մտնելու ճանապարհները փակելու նպատակով: Այստեղ առանձնապես կատաղի էին գործում Խոսրովբեկ Սուլթանովի կազմակերպած քրդական «համիդե» ջոկատները: Ակնհայտ է, որ մուսավաթական Ադրբեջանը շտապում էր օր առաջ բնաջնջել արցախահայությանը և տիրանալ նրա պատմական տարածքներին: Ներքին գործերի նախարար Վ. Վեքիլովի 1920 թ. մարտի 25–ին Սուլթանովին ուղարկած հեռագրում կարդում ենք. «Վստահ եմ, որ շուտով ձեր ղեկավարությամբ բնակչությունը և բանակը կջարդեն թշնամուն... Խնդրում եմ հայտնեք, ինչպե՞ս է ձեր վիճակը, հայերը ո՞ր կողմից են հարձակվում ձեզ վրա, նկատվո՞ւմ է հայերի առաջխաղացում Զանգեզուրի կողմից, կապ ունե՞ք ձեր եղբայր Սուլթանովի հետ: Շատ պարտիզաններ ունենք (խոսքը վերաբերում է թաթարական խուժանին, որը ասկյարների ետևից շարժվում էր դեպի Արցախ–Յ.Ա.) հավաքված Ասկերանի տակ... Բանակն ու հրանոթները գտնվում են ճանապարհին: Մարտի 27–28–ին բանակը կլինի Աղդամում: Այդ դեպքում կհարձակվենք Ասկերանի վրա, և այլահը հնարավորություն կտա միանալ ձեզ հետ: Բանակի փոխադրումը հնարավորին չափ կատարվում է արագ: Այս կողմից մեր հարձակման օրվա մասին ձեզ շտապ կհայտնենք ժամանակին: Հավանական է այդ հարձակումը տեղի կունենա մարտի 28–29–ին»: Նախարարն այնուհետև հաղորդում է, թե Գանձակի և Թարթառի կողմից իրենց զորքերն ու պարտիզանները հարձակման են անցել հայկական գյուղերի վրա: Այստեղ, շարունակում է նա, «բոլորի տրամադրությունները բարձր է և նետվում են մարտի: Ասկերանի մոտ հավաքվել են բավականին քանակությամբ պարտիզաններ: Մենք զգում ենք ձեր վիճակի ծանր լինելը և ամեն կերպ ձգտում ենք ճեղքել ճակատն ու օգնության հասնել ձեզ»:[87]

Բոլոր տեղամասերի համեմատությամբ ամենավճռականը Ասկերանի ձորակի բախումներն էին: Ասկերանի ճակատը ձգված էր Վարազաբունից մինչև Քարագլուխ, շուրջ 15 կմ երկարությամբ: Դալի Ղազարը, որին հանձնարարված էր պաշտպանել Ասկերանը, իր 350 զինվորներով Քյաթուկ գյուղի մոտից անընդհատ գրոհում էր հակառակորդի դիրքերի վրա: Ասկերանի ուղղությամբ գործող հայկական զորամասերի սպայակույտի պետ Յարություն Թումյանը հետագայում գրել է. «Ասկերանի ուղղությամբ գործում էին մոտ 30 հազարից ոչ պակաս կանոնավոր և անկանոն ուժեր: Յայերը կռվում էին 300 կմ ավելի երկարություն ունեցող ռազմաճակատի ամբողջ տարածության վրա»:[88]

Թշնամին նորանոր զորամասեր էր տեղափոխում Ղարաբաղի ռազմաճակատ: Տվյալներ կան, որ այդ օրերին «բացի ճակատում գտնվողներից, Աղդամ էին բերվել... 1–ին Ջիվանշիրյան հետևակային գունդը, Գանձակի 3–րդ գունդը, 1–ին թաթարական, 2–րդ ղարաբաղյան և Շաքիի 3–րդ հեծյալ գնդերը, ռոտմիստր Սելիմբեկ Սուլթանովի վերակազմյալ քրդական հեծելազորը, մեծաքանակ



ով ծանր ու թեթև թնդանոթներ, գնդացիրներ և անսպառ զինամթերք: Կռիվների վերջին օրերին Ղարաբաղի դեմ հանված թուրք–ազերիների զինված ուժերի ընդհանուր թիվը, կանոնավոր ու անկանոն, առանց չափազանցության, կազմում էր ոչ պակաս, քան 80 հազար մարդ»:[89] Այնուամենայնիվ, հայ մարտիկները ցուցաբերում էին հերոսության օրինակներ: Միայն մարտի 31–ին հակառակորդը կորցրել է 500 սպանված և վիրավոր:[90]

Ռազմաճակատի հրամանատար Սելիմովը հեռացվում է պաշտոնից և նրա տեղը նշանակվում է թուրք Խալիլ փաշան: Ասկերանի ճակատում ապրիլի 2–ին տեղի ունեցած մարտերն իրենց թափով գերազանցում են այդ օրերի գործողությունները: Սակայն հաջորդ օրը, ապրիլի 3–ին, Արցախի համար սև օր էր: Թշնամուն հաջողվում է ճեղքել ճակատը և շարժվել դեպի Շուշի:

Ասկերանի հերոսներին օգնության է հասնում Զանգեզուրի հայկական զորամասի գնդացրային մի ջոկատ: Դալի Ղազարը խնդրում է իրեն փամփուշտ հասցնել: Քյաթուկ է բերվում 1918–ի հոկտեմբերին Մամնայի ճակատամարտում թուրքերից խլված հրանոթը: Փործված հրետանավոր Գասպարի դիպուկ կրակոցները անակնկալի են բերում թշնամուն: Դալի Ղազարը կորուստներ չտալու համար իր ջոկատին հրամայում է նահանջել, իսկ ինքը մնում է և կռվում մինչև վերջին փամփուշտը, որով վերջ է տալիս իր կյանքին: Ասկերանի պաշտպանությունը, իրավամբ, անվանվեց Ղարաբաղի Թերմոպիլ:

Երբ հայ մարտիկները գրավել էին Ասկերանի կիրճը, Շուշիում և Խանքենդիում մնացած թուրք զորամասերը կտրվել էին արտաքին աշխարհից: Գնդապետ Զախար Մեսյանը 400 զինվորներով շրջապատում է Խանքենդին և թուրքերից պահանջում անձնատուր լինել: Թուրքերը մերժում են: Այդեղ մարտերում զոհվում են Խաչենում և ամբողջ Արցախում հայտնի քաջ հրամանատար Ալեքսան դային, սպա Լալայանը և ուրիշներ:

Դիզակի ռազմաճակատում հայ պաշտպանների հրամանատարն էր Յովակ Ստեփանյանը, որի օգնականն էր Սասունցի Մանուկը: Նրանք մոտ 450 զինվորներով կարողանում են դիմադրել մի քանի անգամ գերակշռող հակառակորդի ուժերին ու ապահովել Զանգեզուրի հետ անխափան կապը:

1920 թ. մարտին ամենաողբերգական իրադարձությունները տեղի ունեցան Շուշի քաղաքում: Գիշերվա կեսին, Սուլթանովը, լուր ստանալով, որ քաղաք է թափանցել հայկական մի ջոկատ և փորձել հայկական թաղամասում գտնվող զորանոցներում տեղավորված թուրք–ասկյարներին զինաթափ անել, հրամայում է «սրի ու հրի մատնել հայկական քաղաքամասը»:[91] Մահմեդական մոլեռանդ խուժանը ասկյարների և թուրք սպաների գլխավորությամբ ներս են խուժում քաղաքի հայկական թաղամասերը, հրդեհում, կողոպտում տները, խանութները, հասարակական շենքերը, անխնա կոտորում անպաշտպան բնակչությանը: Մուսուլմանական սպաները, որոնք գիշերում էին հայերի տներում, սպանում են տան բնակիչներին, տունը վառում և գոռում–գոչյուններով նետվում փողոց: Այդ գեհենի ականատեսը հետո կգրի. «...իսկ այն, ինչ Շուշիում կատարվեց, նկարագրել անկարելի է. լուսաբացին, ժամը 4–ին, կիսահագնված... հայկական հրդեհի ալիքների միջից, գնդակների տարափի տակ

մի կերպ, շուրջս խիտ մառախուղ, գուցե և հրաշքի օգնությամբ կարողացա բակերով ու նեղ փողոցներով ճանապարհ գտնել դեպի Քարին տակ գյուղը, որով և ազատվեցինք վերահաս մահվանից»:[92]

Մեկ ուրիշ ժամանակակից՝ Տիգրան Իվանի Տեր–Գրիգորյանը,[93] պատմում է հետևյալը. մոտենում էր Նովրուզ բայրամը: Լուր է տարածվում, թե այդ օրը ադրբեջանցիները պիտի հարձակվեն քաղաքի վրա: Տոնի նախօրյակին բնակչությանը բաժանում են նավթ և շաքար: Ըստ այդ ցուցակների՝ քաղաքում մնացել էին 11200 հայ և 7600 ադրբեջանցի: Հայկական մասում տեղավորված էր քրդական գումարտակը, իսկ քաղաքի վերևի մասում գտնվող զորանոցներում՝ ադրբեջանական զորամասը, մոտ 400 մարդ: Խանքենդիում կանգնած էր լրիվ գունդ, որն իր տրամադրության տակ ուներ զենքի բոլոր տեսակները: Շուշիի հայերը շատ անհանգիստ էին:

Արսեն Տեր–Հովհաննիսյանը (Միքայելյան) որոշել էր մեկ հարվածով զինաթափ անել քաղաքի ադրբեջանական զորամասերին և նրանցից խլված զենքով զինել հայկական ջոկատներին, մանավանդ նրանց, ում արևածագին ուղարկել էին քաղաք: Որից հետո պիտի հայտարարեին, թե քաղաքը միացվում է Հայաստանին: Եվ դա պետք էր կատարել 12 հոգիանոց ջոկատը: Եվ ահա, մարտի 22–ի գիշերվա ժամը 2–ին քաղաքի վերին մասում լսվեցին կրակոցներ, որտեղ գտնվում էին զորանոցները: Միևնույն ժամանակ Խաչենի կողմից լսվում է ուժեղ «ուռա» և կրակոցներ: Քաղաքում բարձրացավ տագնապ: Զենք ունեցող բնակիչներից մի քանի հոգի գրավեցին հայկական թաղամասը ադրբեջանական թաղամասից բաժանող գիծը: Նրանք զգուշացնում էին, որ չեն կրակելու, եթե իրենց վրա չկրակեն:

Կրակոցներ լսվում էր միայն քաղաքի վերին թաղամասից:

Առավոտյան ժամը 9–ին հայկական թաղամաս է ժամանում պրիստավ Գևորգ Նազարյանը զինված ադրբեջանցիների հետ և Սուլթանովի անունից բնակչությանը հայտարարում, թե հայ բնակչության հետ ոչինչ էլ չի պատահի, և որ մի փոքրիկ ջոկատ է մտել քաղաք, որն անկարգության պատճառով դուրս է քշվել: Սակայն վերևի թաղամասում կրակոցները չէին դադարում:

Բայց ահա առավոտյան ժամը 10–ին հանկարծ հայկական թաղամասը գրավում են զինված ադրբեջանցիներն ու ասկյարները և սկսում են գնդակահարել պատահած հայերին: Նրանք ներխուժում էին տները և հաշվեհարդար տեսնում բնակիչների հետ: Միևնույն ժամանակ սկսվում է հրդեհը՝ հյուսիսային ծայրից մինչև հարավային մասը: Բնակիչները չէին կարողանում դուրս գալ վառվող տներից, որովհետև դուրս եկողներին գնդակահարում էին: Որոշ տեղեր զինված հայերը դիմադրում էին: Քաղաքի վրա նստած թանձր մառախուղը ամեն ինչ ծածկում էր: Ամենուր կարկտի պես թափվում էին գնդակները: Ինչ–որ մեկը գոռում էր, թե դեպի Քարին տակի ճանապարհը բաց է և գտնվում է հայերի ձեռքին: Բնակչությունը շարժվում է այդ կողմը: Քաղաքը վառվում էր, բոցերը երկինք էին բարձրանում: Բնակչության մի մասը, մանավանդ առևտրականներն ու ունևոր խավը, մտավորականության հետ հավաքվում են այգու մոտ և հույս ունեին, թե նրանց կփրկի Սուլթանովը: Նրանց տեղավորում են



ադրբեջանական թաղամասում, բայց ջարդվում են ադրբեջանական ամբոխի կողմից: Քաղաքից հազիվ դուրս են եկել և մահի ճիրաններից փրկվել 4880 մարդ: Մի քանի օրվա ընթացքում հայկական թաղամասը վեր է ածվում մոխրի և ավերակների:

Ահա և այլ ժամանակակիցների և ականատեսների վկայություններ. Արսեն Շահնազարյանը 1920 թ. մայիսի 20–ին կազմած իր զեկուցագրում պատմում է, որ «մարտի 22–ին պորուչիկներ Ներսես Ասբեկովը և Գևորգ Շուշանյանը 200–300 զինված մարդկանցով Քարին տակ տանող ճանապարհով մտնում են քաղաք, դիրքեր գրավում զորանոցների դիմաց, որտեղ կային 150 ասկյարներ, կրակում...»:[94] Աբրահամ Կիսիբեկյանը վկայում է. «1920 թ. մարտի 23–ին ժամը 4–ին սկսվեց կռիվը: Ղարաբաղի ղեկավարությունը, տեսնելով Ադրբեջանի կառավարության տենդագին պատրաստություններն ու ձեռք առած միջոցառումները, եկավ այն եզրակացության, որ Ադրբեջանի կառավարությունը եթե ոչ այսօր, վաղն անպայման հարձակման կանցնի և որպեսզի թշնամու մտադրությունը ձախողած լինի և նախաձեռնությունն իր ձեռքը վերցրած, նախահարձակ եղավ»: Դեպքերի նախօրյակին, շարունակում է Կիսիբեկյանը, մարտի 22–ին, երեկոյան ժամը 5–ին, ոստիկանապետ Աղապարոն Դանիելյանը (Մավաս գյուղացի էր, Թաղավարդի ձորակի ոստիկանապետ) 68 ոստիկաններով, Արսեն Հովհաննիսյանի կարգադրությամբ ճանապարհվեց Շուշի: Նա ուղարկվել էր իբրև թե քաղաքում գտնվող հայ զինվորության հետ միասին բռնելու հայ–թուրքական սահմանագիծը: Մի գումարտակ էլ սպա Ներսես Ազիզբեկյանի հրամանատարությամբ ուղարկվում է բռնելու Քերծի գլխից մինչև հայ–թուրքական սահմանագիծը: Մեկ ուրիշ ջոկատ էլ սպա Գևորգ Իշխանյանի գլխավորությամբ խնդիր ուներ շրջապատել զորանոցները: Սակայն Շուշի ուղարկված այդ անձնավորությունները չկարողացան կատարել իրենց վրա դրված պարտականությունները:[95] Հարություն Թումյանն այդ առթիվ նշում է, թե Շուշիի վրա անհաջող հարձակման ղեկավարն էր Աղապարոն Դանիելյանը, որը «մարտական գործերում ապիկար և անհուսալի մարդ էր: Արսեն Միքայելյանը թեթևամտորեն կարգադրել էր նրան հավաքել Վարանդայից 50 զինված մարդ և գիշերը հարձակվել քաղաքի ադրբեջանական կայազորի վրա, որը բաղկացած էր լավ զինված 400–500 ասկյարներից: Նա չլսեց խորհուրդները...»:[96]

Արցախահայության համար այդ սարսափելի բարդուղիմեոսյան գիշերը՝ 1920 թ. մարտի 23–ին, Շուշիում գլխատվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխաներ: Փրկվածները Քարին տակ գյուղ տանող ճանապարհով ցած են իջնում մառախուղի միջով և անցնում Վարանդա ու Դիզակ: Հայաստանի կառավարությանն ուղարկված մի զեկուցագրում ասված է, որ քաղաքից գաղթել են անցել 5–6 հազար մարդ: Քաղաքում մնացել են մոտ 5000 մարդ, որոնցից գերի են վերցվել 2200 հոգի, մնացած 3000 հոգին էլ փողոցներում մորթոտվել են:[97] Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը գրել է. «Քաղաքի հայկական մասում չի մնացել քարը քարի վրա: Մուսուլմանական խուժանը մարտի 24–ին ներս է խուժել այդ մասը (պետք է լինի 23– Հ.Ա.) և սկսել սպա-

նել հայ բնակիչներին: Մտնում էին տները, սպանում տան տերերին, հափշտակում բոլոր արժեքավոր իրերը և ապա տունը հրդեհում: Քաղաքի հայկական մասը մարտի 24–ի երեկոյան ներկայացնում էր իրենից կրակի ծով: Ամենուրեք լսվում էին ճիչեր, հառաչանքներ և լաց... Մարդկային զոհերը շատ էին... Հայկական մասից ոչինչ չի մնացել, ամենուրեք լիակատար ավերածություն է, երևում են միայն հրդեհված տների ցցված պատերը: Ճանապարհին փռված են սպանվածների դիակներ: Շատ դիակներ կան տների ավերակներում: Երբ խուժանի հանցավոր կրքերը մեղմացան, նա սկսեց կողոպտել տների տանիքները, պատուհանների շրջանակները, դռները և կրակից զերծ մնացած այլ մասեր»:[98] Բախշի Իշխանյանի հաշվումներով, այդ օրերին Շուշիում զոհվել է 8988 հայ:[99] Ականատեսների վկայությամբ հրդեհը շարունակվել է շուրջ մեկ ամիս: Հայկական թաղամասում, որն ուներ ավելի քան 7000 տուն, կանգուն էին մնացել զորանոցը, ռեալական դպրոցը, եկեղեցիները և մի քանի այլ շենքեր: Այդ օրերին Շուշիում զոհվեցին Ղարաբաղի բոլշևիկների ղեկավար Ալեքսանդր Ծատուրյանը, Ղարաբաղի թեմի առաջնորդ եպիսկոպոս Վահան Տեր–Գրիգորյանը,[100] քաղաքում հայտնի բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Մ. Ջանումյանը, Փիրջանյանը, մանկավարժներ Թավրիզյանը, Տեր–Գաբրիելյանը, մտավորականության և մշակույթի շատ ներկայացուցիչներ: Քաղաքում մնացած հայերին քշում են մահմեդական թաղամաս, հավաքում ռուսական եկեղեցու բակում, ջոկում երեխաներին և կանանց, ոմանց էլ տանում բանտ: Այդ գեհենի ականատես Կոնստանտին Հարությունյանը պատմում է, որ մահմեդական վայրագները բանտում իրենց չէին կերակրում, «ծեծում էին և անվերջ տեղի էր ունենում բարբարոսություններ և գեղեցիկ կանանց ու աղջիկների հափշտակում»: Իսկ երբ Ասկերանն ընկավ, շարունակում է Հարությունյանը, «դրսից քաղաք մտած բազմաթիվ մարդիկ լցվեցին բանտը և սկսեցին սրերով հարվածել՝ չնայելով ոչ ոքի...»:[101]

Բերենք մի քանի վկայություններ ևս, որոնք խոսում են այդ օրերին Շուշիում մուսուլմանների ցուցաբերած գազանությունների մասին: Այն ժամանակ տասնվեց տարեկան Սուրենը հետո պատմում է. «Մենք արթնացանք կրակոցներից: Ես և հայրս դուրս եկանք բակ: Հանկարծ մեր բակ են ներխուժում զինված վեց թուրք: Երեք թուրք գնդակահարում են հորս: Կրակոցների վրա փախչում է մեր ամբողջ ընտանիքը: Թուրքերը նետվում են նրանց վրա: Երկու թուրք բռնաբարում են մորս և հետո սպանում: Հետո բռնաբարում են երկու փոքր եղբայրներիս ու նրանց էլ սպանում: Բռնաբարում են ավագ քրոջս և նրան էլ սպանում: Մի հաղթանդամ ասկյար բռնում է երեք տարեկան քրոջս՝ Անահիտի ոտքից, գլուխը խփում պատին ու մարմինը շպրտում աստիճանների կողմը»:[102] Իսկ Տաթևիկ Տեր–Սահակյանցը սարսուռով է հիշում. «Երբ թուրքերը ներխուժեցին բակ, սկսեցին բոլորին հերթով բռնել: Կանանց ու աղջիկներին բռնաբարում էին, գեղեցիկներին վերցնում իրենց համար, իսկ մնացածներին՝ սպանում: Տղաներին ևս բռնաբարում էին ու սպանում: Այնուհետև սկսում են հաշվեհարդար տեսնել գերի տղամարդկանց և պատանիների հետ, որոնց նախօրոք կապկպել էին: Նրանց հերթով բերում էին կաշվե գոգնոցով դահճի մոտ, որը սուր դանակը ձեռքին նստած էր աթոռին: Առաջինը նրա մոտ բերեցին գեղեցկահասակ երկարամորուք քահանա Տեր–Հարությունյանին: Նրա ձեռքերը կապված էին թիկունքին, ոտքերը՝ շղթայված: Դահիճը նրան գցում է մեջքի վրա, գլուխը դնում է ծնկանը, հետո բռնում միրուքը և ցուցադրաբար սուր դանակով կտրում գլուխը: Հետո թուրքերը քահանայի գլուխը ցից են հանում և տանում քաղաքի թաթարական թաղամասի փողոցներով պտտեցնում»: Այնուհետև, շարունակում է Տաթևիկը, իրար ետևից դահիճի մոտ են բերում 15–20 տարեկան պատանիների, այդ թվում և նրա 14 տարեկան տղային... Հավաքված մահմեդականներն այդ ամենը դիտում էին անտարբերությամբ:[103]

Շատ կանայք և աղջիկներ իրենց հրկիզում էին կամ ինքնասպանություն գործում, միայն թե չընկնեին թուրքի ձեռքը: Եղիշե Իշխանյանն իր հուշերում մեջ է բերում այսպիսի մի դեպք. Մարիամ Ղուկասյան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի օրիորդ Էլեանորա Տեր–Դավթյանի համար սուր վեճ էր գնում երկու թուրք սպաների միջև, թե ով պետք է տիրանար նրան: Երկու սպաները միմյանց սպառնալով, երկուսն էլ միաժամանակ ատրճանակով կրակում են միմյանց վրա և երկուսով մահամերձ փռվում գետնին: Առիթից օգտվելով՝ Էլեանորան վերցնում է սպաների մեկի ձեռքից ընկած ատրճանակը և վերջ է տալիս իր կյանքին:[104]

Այդ վանդալիզմի մասին ահա թե ինչ են պատմում իրենք՝ մուսուլման ասկյարներն իրենց հարազատներին գրած նամակներում: Մուսուլման ասկյարը ապրիլի 8–ին Շուշիից գրում է մորը. «Աղդամից դուրս եկանք և մինչև Շուշի–ղալան գրավեցինք, ինչքան հայերի գյուղեր կային, այրեցինք և իրենց էլ կոտորեցինք... Շուշի–ղալայում ինչքան հայեր կային կոտորեցինք, կանանց բռնաբարեցինք, որոնց շատ նեղություններ էինք տալիս»:[105] Արխիվային այդ նույն փաստաթղթում մեջ է բերված մեկ ուրիշ նամակ. ասկյար Իսմայիլ Ալմանդանբեկովը Բաքվում գտնվող եղբորը Շուշիից գրում է. «Տեսածդ Էրմանիստանը (խոսքը վերաբերում է Շուշիի հայկական մասին–Հ.Ա.) այրվում է, հինգ կամ տասը տուն պահեցինք: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցինք, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (եպիսկոպոսին–Հ.Ա.)... Նշանավոր հայերին սպանելուց հետո գլուխները կտրել, բազարներում պտտեցնել էին տալիս»:[106] Շուշիում մահմեդականների կատարած թալանի ու ավերածությունների մասին նույն նամակագիրը շարունակում է. «Այս կողմերում այլևս ոչ մի հայ չեք գտնի և ոչ էլ այնպիսի թուրքի կարող եք հանդիպել, որ հարյուր հազարից պակաս թալան բերած լինի: Այնպիսի մարդիկ կան, որոնք մեկ միլիոնից ավելի ապրանք են բերել... Այս ժամին զորքը, թնդանոթները, գնդացիրները, խալիֆը (ի նկատի ունի Խալիլ փաշային–Հ.Ա.) բոլորն այստեղ են, մտադիր են Գորիսի կողմը գնալ, տեսնենք էն կողմն ինչպես է լինում: Այս կողմերում մուսուլմանների գործն ամեն կողմից լավ է... 10–15 տուն է մնացել (ի նկատի ունի Շուշիի հայկական մասը–Հ.Ա.), կառավարությունը չթողեց այրելու, որպեսզի ասկյարները բնակվեն: Քաղաքը ավերակ դարձավ»:[107] Այդ ոճրագործության կազմակերպիչները հանդիսացան Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, մասնագիտությամբ բժիշկ.

Ղարաբաղի ժամանակավոր նահանգապետ Խոսրովբեկ Սուլթանովը, նույնպես բժիշկ Մեհմանդարովը և ուրիշ հանցագործներ: Ոչ ոք չքննեց այդ կոտորածները, ոչ ոք չկանգնեց դատարանի առաջ: Դա նախօրոք պլանավորված հարձակում էր, սպանդ, 1915 թ. ցեղասպանության շարունակություն:

* * *

Արդյոք հնարավո՞ր էր արցախահայությանը փրկել այդ գեհենից: Այո, հնարավոր էր, չնայած, մուսավաթական Ադրբեջանը լրջորեն էր նախապատրաստվել Արցախ–Զանգեզուրը հոշոտելու համար: Ժամանակակիցներից շատերը այն միտքն են արտահայտել, թե Ղարաբաղի այդ ողբերգության մեջ մեղք է ունեցել նաև Հայաստանի կառավարությունը, երբ Ղարաբաղ է ուղարկել Արսեն Միքայելյանին, որն անփորձ էր և չէր հասկանում իր անելիքները: ԴԻԿՄ–ը կրակի վրա յուղ լցրեց, երբ իմանալով, որ թուրքերը պատրաստ են հարձակման ու սպասում էին հարմար պահի: Թերագնահատելով հակառակորդի ուժը՝ 35 (թող լինի 12 կամ 200, ինչպես ասված է տարբեր վավերագրերում) հոգիանոց ջոկատը, Արսեն Միքայելյանի կամ Աղապարոն Դանիելյանի գլխավորությամբ Երևանյան դարպասների կողմից մարտի 22–ին մտավ քաղաք և ադրբեջանական կայազորից պահանջեց զինաթափ լինել: Իսկ երբ վերջիններս մերժում են և անցնում գործողությունների, այդ արկածախնդիրները թողնում ու փախչում են: Գրեթե նույնը կրկնվեց նաև Խանքենդիում, երբ Ալեքսան դային փորձում էր զինաթափ անել այնտեղի կայազորին: Եվ այսպես. «Երբ բոլորը խաղաղ քնած էին, մի խումբ քեալլագեօզներ մտնում են քաղաք, համազարկ տալով կայազօրին պահանջում են անձնատուր լինել: Կայազօրը զէնքի է դիմում և համազարկով պատասխանում: Քաղաքը տակնուվրայ է լինում, հրդեհի մատնում և քաղաք մտած «հերոսները», ժողովրդին թողնելով բախտի կամքին, առանց խղճի խայթ զգալու, փախչում են»: Դա ոչ թե արկածախնդրություն էր, «այլ ոճիր», որի հետևանքով «Հազարաւոր ամէն հասակի և սեռի մարդիկ ջարդուեցին ու կոտորուեցին անմիտ քեալլագեօզների նամարդութեան հետևանքով»:[108]

Քաղաքի հայությունն անտեղյակ էր ԴԻԿՄ–ի այդ չմտածված գործողություններից: Արսեն Միքայելյանը, որի «գործողությունը ափաշկար էր և ցուցական»,[109] պարտավոր էր մի շարք հանգամանքներ հաշվի առներ, որը, սակայն, չարեց: Եվ պատահական չէ, որ Սիմոն Վրացյանը հետո կգրի. «Ապստամբությունը կազմակերպած էր անփորձ մարդկանց ձեռքով»:[110]

Խորհրդային Կարմիր բանակը, հաղթելով սպիտակգվարդիականներին, շարժվում էր դեպի Անդրկովկաս: Ղարաբաղի բոլշևիկների ղեկավարները՝ Ալեքսանդր Ծատուրյանն ու Սաքո Համբարձումյանը այդ մասին գիտեին, և Շուշիում տեղի ունեցած պատվիրակների խորհրդակցությունում հասկացրել էին և զգուշացրել, որ չպետք է գնալ արկածախնդրության ճանապարհով, պետք է սպասել Կարմիր բանակի գալուն: Մոռացության էին տրվել նաև Հովհաննես Քաջազնունու և Արտեմ Լալայանի խորհուրդները: Զանգեզուր–Ղարաբաղի նահանգապետ Սերգեյ Մելիք–Յոլչյանը հետո խիստ մեղադրում էր Արսեն Միքայելյանին, որը կանոնավոր կապ չի պահպանել իր հետ: Եվ չնայած նրան միշտ զգուշացրել է հանպատրաստից որևէ քայլ չանել, սակայն նա չէր լսել: Նույնիսկ զգուշացրել է, որ մինչև Գորիսում գտնվող Դրոն չմտնի Ղարաբաղ, ոչինչ չձեռնարկել: Մելիք Յոլչյանի վկայությամբ, կապը Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ապահոված էր, սակայն Ղարաբաղում տարվող աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ չէին հաղորդվում Գորիս և Երևան, նույնիսկ սկսված գործողությունների մասին ժամանակին չի հայտնվել Գորիս:

Պարզապես, Շուշիի հայությունը հանկարծակիի է բերվել և թողնվել դժոխքի մեջ: Ինչպե՞ս կարելի էր դիմել նման պատասխանատու քայլի, առանց տեղյակ պահելու քաղաքի հայությանը: Չէ՞ որ նրանք կարող էին դիմել ինքնապաշտպանության...

Կային նաև այլ բնույթի սխալներ ու բացեր:

* * *

Մուսուլման դահիճներն այդ օրերին նոր ջարդեր կազմակերպեցին նաև Գանձակի, Նուխու, Արեշի, Շամախու և այլ գավառներում դեռևս ապրող հայերի շրջանում: Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը ապրիլի 2–ին հաղորդել է, թե թաթար ասկյարները Քյազիմ բեյի գլխավորությամբ սկսել են ռմբակոծել Գանձակի շրջանի հայկական գյուղերը և ջարդել հայերին:[111] Հյուսիսային Արցախի հայությունը նույնպես հերոսական դիմադրություն է ցույց տալիս բարբարոսներին: Այդ պայքարը 1918–1920 թթ. գլխավորել է գնդապետ Եգոր Տեր–Ավետիքյանը: Նրա տաղանդավոր ղեկավարության շնորհիվ է, որ Գանձակի լեռնային շրջանները, Չարդախլուից մինչև Գյուլիստան հակառակորդի համար մնացին անմատչելի: Ապրիլի 11–12–ին թուրքերը խայտառակ պարտություն կրեցին Գետաշենի տակ: Քարհատի և Շամքորի լեռնային գյուղերը հաջողությամբ հետ էին մղում մահմեդական ավազակախմբերի հարձակումները: Այնուամենայնիվ, վերջիններիս հաջողվում է կողոպտել և հրդեհի մատնել Գյուլիստանի ենթաշրջանի հայկական գյուղերը:[112]

Արցախում և Ադրբեջանի հայաշատ մյուս շրջաններում թուրք–թաթարական դահիճների այդ քաղաքականությունը, որը 1915 թ. թուրքերի իրականացրած հայաջինջ քաղաքականության շարունակությունն էր, ցնցեց ոչ միայն աշխարհասփյուռ հայությանը, այլև շատ ժողովուրդների: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը հարյուրավոր հեռագրեր և նամակներ է ուղարկում ամենուր՝ նպատակ ունենալով մոլորության մեջ գցել հանրությանը, թաքցնել ճշմարտությունը և իր կատարած ոճրագործության մեղքը բարդել հայերի վրա:[113] Բանը հասել էր նրան, որ մուսավաթական կառավարության պարագլուխները պնդում էին, թե Ղարաբաղում և Գանձակում տեղի ունեցած իրադարձությունները հայերի զինված ապստամբության հետևանք են:[114] Ավելին. Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Խան Խոյսկին Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտության ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանին անամոթաբար հայտարարում է, թե իբր Շուշիի ամբողջ մտավորականությունը գտնվում է Սուլթանովի պաշտպանության տակ և «բանակին խստորեն

հրամայված է ոչ մի ուժ չգործադրել հայ խաղաղ բնակչության նկատմամբ»:[115]

Արցախ–Ղարաբաղում տեղի ունեցած այդ իրադարձություններից խիստ անհանգստացած էր Հայաստանի կառավարությունը: Վարչապետ և արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը դաշնակից պետությունների ներկայացուցիչներին մարտի 28–ին ուղարկված նամակում շարադրում է վերջին երկու տարում Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ ձեռնարկված ոտնձգությունները և ընդգծում, որ այդ նույն քաղաքականությունն ավելի բացահայտ շարունակվում է նաև ներկայումս: Դա երևում է հենց Ղարաբաղի և Զանգեզուրի օրինակով, որտեղ Ադրբեջանի կառավարությունը փորձում է զենքի ուժով զինաթափել այդ տարածքների հայությանը: Ա. Խատիսյանը խնդրում է գործնական միջոցներ ձեռնարկել մուսավաթական Ադրբեջանի զավթողական քաղաքականության դեմ:[116] Նույն հասցեով մարտի 30–ին Ա. Խատիսյանի ուղարկված հեռագրում վերստին զգուշացվում է, որ Ղարաբաղի, Զանգեզուրի, Բաքվի և Ելիզավետպոլի հայության նկատմամբ Ադրբեջանի վարած հայաջինջ քաղաքականությանը Հայաստանը չի կարող անտարբեր մնալ: Նա պահանջում է վճռական միջոցներ ձեռնարկել և վերջ տալ այդ բարբարոսությանը:[117] Թիֆլիսի և Երևանի ղարաբաղցիների հայրենակցական միությունների նախագահներ Լեոն և Գերասիմ Բալայանը Հայաստանի կառավարությանը մարտի 30–ին ուղարկված հեռագրում պահանջում են գործնական օգնություն ցույց տալ Ղարաբաղի բնակչությանը և նրան փրկել զանգվածային կոտորածներից:[118] Նրանք համանման կոչով դիմում են նաև դաշնակից պետությունների ներկայացուցիչներին ու Վրաստանի կառավարությանը:[119]

Ղարաբաղ–Զանգեզուրում ստեղծված իրավիճակը ապրիլի 3–ին հանգամանորեն քննության է առնվում ՀՀ խորհրդարանի արտակարգ նիստում և արձանագրվում. «Ղարաբաղը չունի հրանոթներ, չունի բանակ, և մենք նրան օգնության չենք գնում ոչ թե նրա համար, որ ի վիճակի չենք, այլ նրա համար, որ մենք ընտրել ենք ազնիվ ուղի, մենք անհամբերությամբ սպասում ենք խաղաղարար կոնֆերանսի վերջին խոսքին, և եթե որոշում չկայացվի, ապա կառավարությունը կգտնի միջոցներ՝ հայրենակիցներին օգնություն ցույց տալու համար»:[120] Հաջորդ օրը, ապրիլի 4–ին, Թիֆլիսի թատերական ընկերության դահլիճում տեղի ունեցած հանրահավաքը պահանջում է անհապաղ դադարեցնել արյունահեղությունը Ղարաբաղում և խաղաղ ճանապարհով վճռել Ղարաբաղի հարցը: Հանրահավաքը հույս է հայտնում, որ Անտանտան կարող է վերջ տալ Անդրկովկասի ժողովուրդների արյունոտ պայքարին:[121] Քանի որ ոչ դաշնակից պետությունների ներկայացուցիչները և ոչ էլ Ադրբեջանը ցանկություն չէին հայտնել վճռական միջոցառումներ ձեռնարկել և վերջ տալ ադրբեջանահայության կոտորածներին, ուստի ՀՀ արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը կառավարության նախագահ Ալեքսանդր Խատիսյանին ապրիլի 10–ին Թիֆլիսից ուղարկված նամակում գրում է, որ «մեր կառավարությունը պետք է ձեռնարկի ամենավճռական միջոցառումներ և պատրաստ լինի պատերազմ հայտա-



րարելու» Ադրբեջանին:[122] Եվ չնայած բավականին ուշացումով, այնուամենայնիվ Հայաստանի կառավարությունը վճռում է ռազմական օգնություն ցույց տալ արցախահայությանը: Հայաստանի կառավարությունը նախ՝ մի անգամ ևս դաշնակից պետությունների ներկայացուցիչներին հանգամանորեն տեղեկացնում է Արցախում տիրող ընդհանուր վիճակի մասին, հետո Զանգեզուրում գտնվող հայկական զորամասերին կարգադրում է մտնել Արցախ: Չէ՞ որ այդ էր խնդրում նաև արցախահայությունը, որի անունից ազգային խորհրդի նախկին նախագահ Ասլան Շահնազարյանը Հայաստանի խորհրդարանին ապրիլի 10–ին ուղարկված շտապ հեռագրով խնդրում է անհապաղ միջոցառումներ ձեռնարկել Ղարաբաղի «ժողովուրդը կործանումից փրկելու համար»:[123]

Դաշնակից պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Ուորդրոպը, կոմս Մարտելը և գնդապետ Գաբբան ապրիլի 1–ին մի հեռագրով դիմում են Բաքու և Երևան՝ պահանջելով խաղաղ միջոցներով անհապաղ լուծել Ղարաբաղի և մնացած գավառների հարցերը: Երկու կողմերն էլ համաձայնվում են, և ապրիլի 9–ին (որոշ աղբյուրներում՝ 11–ին) Թիֆլիսում սկսվում է համաժողովը, որին մասնակցում էին Անդրկովկասի ազդեցիկ քաղաքական գործիչներ. Ադրբեջանից՝ Հասան բեկ Աղաևը, Օլգերդ բեյ Կրիչինսկին, Ֆարիս բեկ Վեքիլովը, Հայաստանից՝ Համո Օհանջանյանը, Տիգրան Բեկզադյանը, Ս. Խաչատրյանը, Վրաստանից՝ Ե. Գեգեչկորին, Գ. Լորդքիպանիձեն և ուրիշներ:[124] Կոնֆերանսի հենց սկզբից Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները քողածածկված կապերի մեջ էին: Հայաստանը Ադրբեջանից պահանջում էր անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Ղարաբաղում: Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը հենց սկզբից ամեն կերպ փորձում էր ձախողել կոնֆերանսի աշխատանքները, անգամ փորձ արեց դաշնակից պետությունների ներկայացուցիչների կողմից ստեղծված հանձնաժողովին թույլ չտալ մտնել Ղարաբաղ: Այլևս հապաղելը կլիներ դավաճանություն արցախահայության նկատմամբ: Եվ ահա ՀՀ կառավարության կարգադրությամբ ապրիլի 14–ին Զանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառը մտան Դրոյի զորամասերը:[125]

Զանգեզուր–Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատար Դրոն չորս ամսվա ընթացքում բավականին աշխատանք էր կատարել այդ երկրամասերի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Ղարաբաղ ուղարկված ՀՀ ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը դեռևս երկու ամիս առաջ Դրոյին հաղորդել էր. «Թուրքութիւնը զինւում, կամաւորական խմբեր են կազմում և նախապատրաստական աշխատանքի են դիմում՝ յարձակուելու Զանգեզուրի և Ղարաբաղի հարցը ընդմիշտ լուծելու համար»: Ղարաբաղից Դրոյին խնդրում էին «միշտ պատրաստ լինել Ադրբեջանի յարձակման դէպքում օգնութեան հասնելու»: Միևնույն ժամանակ խնդրում էին ուղարկել փամփուշտ և դրամ:[126] Դրոն ղարաբաղցիներին վստահեցնում էր, որ ադրբեջանական զորքերի Ղարաբաղ ներխուժելու դեպքում «...ինչքան հնարավոր է, իր ուժերի սահմաններում կօգնի»: Նա առաջարկում է Ադրբեջանի հարձակման դեպքում Ղարաբաղի ինք-

նապաշտպանության գործողությունների տեղական նախագիծ ուղարկել իրեն, իսկ Ղարաբաղի համար դրամ և փամփուշտ ձեռք բերելու նպատակով շտապ մեկնում է Երևան: Գնալու նախօրյակին նա Արսեն Միքայելյանին հրահանգել էր շարունակել ինքնապաշտպանության կազմակերպման գործը, նախիարձակ չլինել, ադրբեջանական հարձակման դեպքում ժողովրդին դաշտավայրից տեղափոխել լեռներ և սպասել մինչև ինքը Ղարաբաղ կհասցնի հանրապետության կառավարությունից ստացած զենքն ու զինամթերքը:[127]

Արցախահայությունը հայ ազատարարներին ամենուր դիմավորում էր ցնծությամբ և հնարավոր բոլոր միջոցներով աջակցում նրանց: Եվ այսպես՝ երկար պայքարից, սպասումից ու տառապանքներից հետո Արցախ–Ղարաբաղը վերամիավորվեց մայր հայրենիքի հետ: Նահանգապետ Սուլթանովը չփորձեց դիմադրություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերին գերադասելով ասկյարներով շրջափակված մնալ Շուշիում և այնտեղից հրետանիով ռմբակոծել Շոշ, Սղնախ, Քարին տակ, Դաշուշեն (Քարաշեն) և քաղաքամերձ հայկական մյուս գյուղերը: Փոխգնդապետ Թարիվերդյանի հրետանավորները Տռնավարզ գյուղի տարածքից պատասխան կրակով հակառակորդին ստիպեցին լռել:[128]

Դրոն մտնելով Ղարաբաղ, կոչով դիմեց արցախահայությանը.

«Ես մտա Ղարաբաղ ամսույս 14–ին, այն ժամանակ, երբ արդեն հրդեհը սկսված էր, և երբ բավական հայ գյուղեր ավերի մատնված էին թշնամու կողմից, և երբ Ղարաբաղի գյուղացիությունը, հերոսաբար դիմադրելուց հետո, նորից մնացել էր իր դիրքերում՝ կուրծքը դեմ տված թշնամու գնդակներին:

Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ ազգաբնակչությանը, շարունակել իրականացնել տաճկական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու, այդպիսով, վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խոր համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթենք թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեզ հետ միասին և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ:

Հիշեք, որ պետք է միայն մի քանի հարյուր զոհ՝ վճռականորեն փրկելու Ղարաբաղը:

Ղարաբաղը միշտ հերոսներ է տվել Ռուսական մեծ բանակին և հայ ազատագրությանը, որոնք կռվել են բոլոր ճակատամարտերում:

Այսօր մենք բոլորս, ձեզ հետ միասին ձեռք ձեռքի տված, պիտի շարունակենք կռիվը մինչև վերջնական հաղթանակ:

Ամո՛ւր կաց, Ղարաբաղի հայ գյուղացիություն: Միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն ետ շպրտելու և մեր ազատությունը ձեռք բերելու:

**Զանգեզուր–Ղարաբաղի հրամանատար՝ ԴՐՈ**

26-ին ապրիլի 1920թ.»:[129]

Դրոն Վարանդայում, Դիզակում և Խաչենում զինվորական գործի ղեկավա-



վերցնում է իր ձեռքը և հայտարարում 23–35 տարեկան տղամարդկանց զորահավաք:[130] Նա լինում է բոլոր ռազմաճակատներում, հետ գրավում Ասկերանը և «Շուշին առնում նեղ օղակի մեջ»:[131] Արսեն Միքայելյանը վկայում է, որ Դրոյի հրամանատարության տակ են մտնում մինչև 3000 հոգի զինվորներ և կամավորներ: Արցախահայությունը «անտրտունջ կերակրում էր հազարավոր կռվողների»: Դրոն շատ արագ «հեռախոսային ցանցով պատում է Ղարաբաղի գլխավոր ճակատներն ու կենտրոնները և ապա Զանգեզուրի հետ կապվում ուղիղ գծով»: Ապրիլի 24–ին Խաչեն–Ջիվանշիր են ուղարկվում գնդապետ Զախար Մեսյանը և Գ. Ղարագյոզյանը՝ այնտեղ քաղաքացիական և զինվորական իշխանություններ կազմակերպելու համար:[132]

Դրոյի Արցախ մտնելուց մի քանի օր անց, Կափանի ուժերի մի մասից կազմված «Հարավղարաբաղյան» անվանումը ստացած ջոկատը Նժդեհի հրամանատարությամբ մտավ Դիզակ:[133] Գարեգին Նժդեհը մինչ այդ շատ էր հետաքրքրվում արցախահայության ճակատագրով: Ղարաբաղցիները բազմիցս օգնություն էին խնդրել Զանգեզուրի ռազմական ուժերի գլխավոր ղեկավար գեներալ Ս. Ղազարյանից և Գարեգին Նժդեհից: «Այժմ,– ասված է այդ խնդրագրերից մեկում,– երբ Ղարաբաղը բարձրացրել է ապստամբութեան սրբազան դրօշը և արնաքամ է լինում, պետք է օգնել նրան ոչ թէ զօրամասերով կամ դրամական միջոցներով, այլ մի փորձված առաջնորդով և ռազմամթերքով: Այդպիսի մի առաջնորդ առայժմ փոխգնդապետ Նժդեհն է, որի անունը թշնամիների համար դառել է վրէժխնդրութեան խորհրդանշան, և որի անունից թշնամին սարսափահար փախչում է, ինչպես ցոյց տուեցին մօտիկ անցեալի դէպքերը, երբ թշնամու կանոնաւոր զօրքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախստի դիմեցին: Գնդ. Նժդեհն ստեղծուած է ժողովրդի համար և նա պիտի լինի այնտեղ, ուր նրա կարիքն աւելի է զգացւում»:[134]

Գարեգին Նժդեհը վճռում է չհապաղել և օգնության ձեռք մեկնել արցախահայությանը: Նժդեհի դեպի Ղարաբաղ արշավանքի առթիվ նրա մոտ ընկեր Աշոտ Մելիք–Մուսյանը գրել է. «Հասկանում եմ քեզ. տմարդի է նա, ով խեղդւողին ձեռք չի մեկնում, խեղդւում են սակայն և Գողթանը, և Ղափան–Գենուազը, և Սիսեան–Զանգեզուրը, և Ղարաբաղն իր ամբողջութեամբ... Գնա՛ վճռականօրէն, գնա անկաշառ զինւորականի շաւղով: Թող չը խենթացնի քեզ այն հանգամանքը, որ ղարաբաղցիներն ևս լսել են քո քաջագործութիւնները: Քո մահարձանի պիէտէստալը վաղուց է, որ ես կոփում եմ, որպէսզի նա լինի յաւիտենական՝ բոլոր քարերն անխառն մաքուր կռանիդից պիտի պատրաստեմ»:[135]

Ջախջախելով Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած Բարկուշատ–Ղաբարլուի տարածքում կուտակված մուսուլմանական ուժերին Նժդեհի ջոկատը մտնում է Արցախի Դիզակի շրջան՝ չեզոքացնելով Դրոյի զորամասերի աջ թևին սպառնացող վտանգը: Դրոն ապրիլի 26–ին այսպես բնորոշեց Սյունյաց աշխարհի հերոսների Արցախ մտնելու փաստը. «Շնորհավորում եմ քաջարի զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, որ ցանկալի րոպէին նոքա օգնութեան

հասան, որ կռվելով պատմական Ղարաբաղի լեռներում, դրանով նա կռւում է ամբողջ Հայաստանի և մասնաւորապէս Զանգեզուրի ազատութեան և խաղաղութեան համար: Վստահ ենք, սպաներ և զինւորներ, առաջնորդութեամբ ձեր արժանավոր հրամանատար փոխգնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա ամբողջ մի ամիս է կռւում են, ոչ միայն կը թեթևացնէք Ղարաբաղի հայերի վիճակը, այլև ձեր կորովի ասպետական գործողութիւններով կը հանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտաւորութեան և ազատ գոյութեան ապագայի»:[136]

Այդ օրերին (ապրիլի 18–ին) Վարանդայի Ներքին Թաղավարդ գյուղում տեղի է ունենում Դիզակի և Վարանդայի գյուղացիության ներկայացուցիչների հավաք, որը լսում է Ղարաբաղում Հայաստանի լիազոր–ներկայացուցիչ Արսեն Միքայելյանի, ներքին գործերի վարիչ Աստվածատուր Ավետիսյանի, պարենավորման ընդհանուր վարիչ Խաչատուր Մելքումյանի, աշխատանքի և երկրագործության վարիչ Արշավիր Քամալյանի, բժիշկ Տեր–Գրիգորյանի հաղորդումներն իրենց կատարած աշխատանքների մասին: Ներկաներին հաղորդվում է, որ Վարանդան ու Դիզակը արդեն բաժանվել են վարչական շրջանների, նշանակվել են տեղամասային կոմիսարներ, որոնց ծախսերը լրիվ հոգում է Արարատյան Հանրապետությունը: Նաև հաղորդվում է, որ շուտով նման միջոցառումներ կձեռնարկվեն Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի շրջաններում: Հաղորդումներ տրվեցին, թե այդ օրերին ինչպիսի աշխատանքներ են կատարվել գարնան գյուղատնտեսական աշխատանքները վերսկսելու, երկրամասում բժշկասանիտարական աշխատանքները բարելավելու, զորակոչվածների ընտանիքներին օգնություն ցույց տալու, փոստ–հեռագրական աշխատանքները վերականգնելու և այլնի ուղղությամբ: Նշվեց, որ Վարանդայում և Դիզակում բարելավվել են հիվանդանոցների աշխատանքները, վերականգնված բժշկական կետերը մեծ օգնություն են ցույց տալիս բնակչությանը, մանավանդ գաղթականներին և զինվորներին: Հավաքը հաստատում է Դրոյի կողմից նշանակված կառավարիչների կազմը, ընտրում պարենավորման և գաղթականների հարցերով հանձնաժողովներ,[137] որոշում «ամեն կերպ օժանդակել հրամանատարին (Դրոյին–Հ.Ա.) և նրա նշանակած կառավարիչներին ռազմաճակատներում արագ և հաջող կերպով հաղթանակ տանելու կարգ ու կանոն հաստատելու համար»:[138]

Ապրիլի կեսերին կազմվեց Արցախի ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ էին մտնում տարբեր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ:[139] Կառավարությունը երկրամասում գործնականորեն իրագործում էր Հայաստանի Հանրապետության օրենքներն ու հանձնարարությունները: Այստեղ շրջանառության մեջ է դրվում Հայաստանի Հանրապետության դրամը, ընդունվում է դրոշը, հիմնը և զինանշանը: Կառավարությունը զգալի աշխատանք է կատարում երկրամասի աշխատավորներին միավորելու, Զանգեզուրի հետ բոլոր տեսակի կապերն ամրապնդելու ուղղությամբ:

Արցախի նորաստեղծ կառավարությունն իր առաջին նիստում, որը տեղի ունեցավ ապրիլի 23–ին, քննության առնելով արցախահայության կողմնորոշման հարցը, որոշում է պաշտպանել Արցախը մայր Հայաստանի հետ միավորվելու երկրամասի հայ բնակչության արդարացի պահանջը: Արշավիր Քամալյանն իր ելույթում շեշտում է. «Ներկա կոնկրետ պահի և Արցախի հայության ձգտումը հայկական կողմնորոշումն է. երբեք և ոչ մի դեպքում Ադրբեջանի հետ կապ ստեղծելու խնդիր չի կարող լինել»: Աստվածատուր Ավետիսյանը գտնում է, որ հայկական կողմնորոշումը պետք է հայտարարվի բացարձակապես, նույնիսկ այն դեպքում, երբ անգամ ռուսական մեծ բանակը կարշավի Կովկաս... Նրա առաջ էլ պիտի դրվի այդ պահանջը: Կասկածելի է բոլշևիկյան Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Մեր ժողովրդի կողմնորոշումը պետք է պարզ լինի. նույնիսկ սոցիալիստական կարգերի ժամանակ Արցախն ու Զանգեզուրը պիտի լինեն Հայաստանի հետ... Զանգեզուրի և Արցախի միացումը դեռևս հարցի լուծում չէ, որովհետև դրանից հետո դարձյալ պիտի պատերազմ մղվի: Քանի որ դա այդպես է, ապա պետք է պայքարենք հարցը լուծել արմատապես»: Ըստ Նիկոլայ Խախանյանի՝ «Հարցին պետք է մոտենալ գործնականորեն. կողմնորոշումը պետք է բխի Արցախի հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու պահանջից: Իսկ դրա միակ միջոցը Հայաստանն է ... Արցախի հայությունը համոզվել է, որ երբեք ոչ մի կապ չի կարող ունենալ Ադրբեջանի հետ»: Արսեն Միքայելյանն ասում է. «Որ կողմից էլ հարցին մոտենալու լինենք, միևնույն է, մեր կողմնորոշումը հայկական է»:

Համագումարը միաձայն ընդունում է հետևյալ որոշումը. «Քանի որ Արցախի հայության յոթերորդ համագումարի կողմից Ադրբեջանի հետ կնքված ժամանակավոր համաձայնագիրը խախտվել է Ադրբեջանի կողմից, ուստի արցախահայությունը երբեք և ոչ մի պայմանով հնարավոր չի համարում գտնվել Ադրբեջանի կազմում: Արցախը պետք է միանա ընդհանուր հայությանը՝ կազմելով Հայաստանի Հանրապետության անբաժան մասը: Իսկ եթե քաղաքական հանգամանքները կստիպեն Հայաստանի կառավարությանը ներկայումս այդ հայտարարությունը չանել, այն ժամանակ Արցախն ու Զանգեզուրը իրենց միանգամայն անջատ համարելով Ադրբեջանից, Հայաստանի կառավարության համաձայնությամբ կմշակեն կառավարման այլ ձև»:[140] Կառավարության այդ նույն նիստում որոշվում է հայտարարել 22–32 տարեկանների զորահավաք և ներքին գործերի վարիչին առաջարկվում է այդ մասին համապատասխան հրամաններ իջեցնել բոլոր շրջանները:[141] Որոշվում է Արցախի ժամանակավոր կառավարության նստավայր ընտրել Վարանդայի Ներքին Թաղավարդ գյուղը: Հետո ընտրվում է երեք հոգուց բաղկացած (Ասլան Շահնազարյան, Դավիթ Անանուն և Ներսես Նասիբյան) հանձնաժողով՝ Թիֆլիսում ընթացող երեք հանրապետությունների վերոհիշյալ կոնֆերանսին մասնակցելու համար:[142]

Արցախի ժամանակավոր կառավարության բոլոր բաժինները հնարավոր չէր տեղավորել Ներքին Թաղավարդում: Ուստի կառավարության հիմնական նստավայր ճանաչվում է Ավետարանոց (Չանախչի) գյուղը, որտեղ գտնվում էին կառավարության նախագահն ու ներքին գործերի բաժինը: Զինվորական բաժինը՝ ընդհանուր հրամանատար Դրոյի հետ գտնվում էր Ղարաբուլաղ գյուղում, իսկ սպայական կազմը տեղավորված էր Խաչմաչ գյուղում, գաղթական

ների և պարենավորման բաժինները Սխտորաշենում, արդարադատության և առողջապահության բաժինները՝ Ներքին Թաղավարդում, Ղարաբաղի ինքնապաշտպանության շտաբը մնում էր Սարուշենում:[143]

Ղարաբաղի և Զանգեզուրի միջև կապը դառնում է ամենօրյա: Գորիսից Կոռնիձոր–Խծաբերդ-Թաղավարդ ճանապարհով զենք և զինամթերք տեղափոխելու համար կազմակերպվում է գրաստագումակ, որն աշխատում էր գիշեր ու ցերեկ: Այդ աշխատանքը ղեկավարում էր Թաքոյի Գրիգորը:[144] Սննդամթերքը գյուղացիներից գնում էին կանխիկ դրամով: Բոլոր գաղթականները բաժանվում են գյուղերի վրա, որոնց կյանքը կազմակերպելու համար ստեղծվում են երեքական հոգուց բաղկացած կոմիտեներ: Կային նաև գաղթականների գործով տեսուչներ, որոնք հսկում էին նրանց վերաբերյալ կառավարության ընդունած որոշումների իրագործման ընթացքը:[145]

Այդ օրերին Արցախ է մտնում նաև զնդապետ Թարխանյանի (Կուռո) հեծյալ զորամասը, տեղավորվում Գյունե Ճարտարի կալերում ու այնտեղ կազմակերպում կայազոր: Նման կայազորներ ստեղծվում են նաև Ծովատեղում, Տռնավարզում և այլուր,[146] որտեղ զորակոչվածների և կամավորների հետ անց էին կացնում զորավարժություններ:

Արցախի ժամանակավոր կառավարության և Դրոյի նախաձեռնությամբ Վարանդայի Ներքին Թաղավարդ գյուղում ապրիլի 25–ին հրավիրվում է Ղարաբաղի հայության **9–րդ համագումարը**, որի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն ունեցան միայն Դիզակի և Վարանդայի պատգամավորները: Համագումարի հիմնական խնդիրն էր մեկ անգամ ևս հարցնել Ղարաբաղի հայության կարծիքը Հայաստանի հետ միավորվելու մասին և հաստատել ժամանակավոր կառավարության որոշումները: Բոլոր ելույթ ունեցողները հաստատակամորեն նշեցին, որ երբեք և ոչ մի անգամ Ղարաբաղը չպետք է մտնի Ադրբեջանի կազմի մեջ: Համագումարը միաձայն ընդունեց և հռչակեց.

1. Չեղյալ հայտարարել արցախահայության 7–րդ համագումարի անունից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը՝ ելնելով այն բանից, որ այն խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ:

2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս:

3. Խնդրել Հայաստանի Հանրապետության՝ Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը:[147]

Այդ օրերին շատ արցախցիներ ցանկություն են հայտնում վերադառնալ և պաշտպանել հայրենի երկրամասը: Թիֆլիսից, Երևանից, Հյուսիսային Կովկասից բավականին հայեր են վերադառնում և մտնում Արցախը պաշտպանող ուժերի մեջ: Հայաստանի բանակի 2–րդ գնդի ղարաբաղցի զինվորներն ու սպաները, զգալով հարազատ Լեռնային Ղարաբաղի ծանր վիճակը, հանդես գալով կոչով, նշում են, որ այսպիսի վիճակում հեռու մնալ հարազատ ժողովրդին պաշտպանելուց՝ անթույլատրելի է: Նրանք խնդրում են Հայաստանի կառա-



վարությանը ձեռնարկել ամենաանհրաժեշտ միջոցառումներ Ղարաբաղում ողբալի իրադարձությունները դադարեցնելու կամ էլ իրենց արագորեն ուղարկել Ղարաբաղի ռազմական գործողությունների թատերաբեմ, որի համար պատրաստ են «զոհվել պատվով», իսկ եթե «կառավարությունը նպատակահարմար չի գտնում մեզ ուղարկել ռազմաճակատ, ապա խնդրում ենք մեր սննդամթերքի մի մասն ուղարկել Ղարաբաղ»:[148]

Քանի որ Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի շրջանները հնարավորություն չեն ունեցել մասնակցել Ղարաբաղի հայության 9–րդ համագումարին, ուստի այդ շրջաններում ևս կազմակերպվում են համագումարներ ու ընդունվում համապատասխան որոշումներ: Այսպես՝ մարտակերտյան ճյուղի համագումարը, որը տեղի ունեցավ Մարտակերտում, ապրիլի 28–ին Գյուլիստանի, Մարտակերտի և Խաչենի 70 գյուղերից եկած 62 պատգամավորների մասնակցությամբ,[149] նախ Թիֆլիսում ընթացող կովկասյան հանրապետությունների կոնֆերանսին մասնակցելու համար պատգամավոր ընտրեց, ապա անցավ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից որի՛ իշխանությունն է ընդունում հարցի քննարկմանը: Բուռն ելույթներից հետո համագումարը միաձայն որոշեց. «Ընդունել Հայաստանի Հանրապետության կողմորոշումը և ոչ մի դեպքում և ոչ մի պայմանով չենթարկվել Ադրբեջանի խանբեկական կառավարությանը», որը 7–րդ համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում երեք շրջանների 32 գյուղերում ավերել էր 4266 տնտեսություն, չհաշված զոհվածներն ու կողոպուտը:[150]

Արցախի ժամանակավոր կառավարության կոչով համագումարներ և հավաքներ են տեղի ունենում նաև երկրամասի մյուս գավառներում ու գավառակներում: Ապրիլի 27–ին Ջիվանշիրի ներքին և վերին մասերի հայկական գյուղերի 86 ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած հավաքն արձանագրեց, որ Ադրբեջանի կառավարությունը կոպտորեն խախտել է Ղարաբաղի հայության 7–րդ համագումարի ընդունած համաձայնագիրը: Այսպես, մուսավաթական զինված ուժերի և մուսուլմանական բնակչության ձեռքով ավերվել են երեք հազար բնակիչ ունեցող Մարգուշևան, Մարաղա և այլ գյուղեր: Հետևապես, ջիվանշիրցիները իրենց իրավունք են վերապահում չընդունել Ադրբեջանի իշխանությունը:[151]

Այդ օրերին իրադարձությունները շիկանում են մանավանդ Գյուլիստանի, Ջրաբերդի և Խաչենի շրջաններում: Այդ մասին իմանում ենք Արցախի ժամանակավոր կառավարության ապրիլի 30–ի նիստի արձանագրությունից: Խաչենի ներկայացուցիչ Ներսես Նասիբյանը հաղորդում է հետևյալը. Ասկերանի անկումից հետո հրի ու սրի են մատնվում Բալլուջա, Ղլիշբաղ, Նորագյուղ, Մեհթիշեն, Փահլուր, Ջամիլլու և այլ գյուղեր: Շուտով խուճապն անցնում է, բնակչությունն ուշքի է գալիս, հավաքվում են 6–7 հազար հոգի և վերականգնում ռազմաճակատը: Գյուլիստանը փորձում է կանխել իրադարձությունների հետագա բարդացումը: Նրանք 100 հոգուց բաղկացած մի պատվիրակություն են ուղարկում մահմեդականների մոտ՝ բանակցություններ վարելու: Մուսուլման դահիճները պատվիրակության անդամներից շատերին սպանում են, իսկ

կենդանի մնացածների նկատմամբ գործադրում բռնություններ: Իսկ երբ Գետաշենին է մոտենում թուրք–մուսավաթական բարբարոսների խումբը, գետաշենցիները սպիտակ դրոշ են բարձրացնում: Գետաշենցիներից պահանջում են զինաթափ լինել: Քանի որ գետաշենցիները մասամբ են հանձնում զենքը, ուստի մուսուլման դահիճները հարձակվում են գյուղի վրա: Զայրացած հայ երիտասարդությունը դիմում է զենքի և հետ քշում հակառակորդին: Շրջանի հայերը սուրհանդակ են ուղարկում Բասարգեչար և օգնություն խնդրում:[152] Դրանից հետո մուսուլմաններն առաջարկում են հաշտություն կնքել: Նասիբյանը նաև հաղորդում է, որ Գետաշեն–Գյուլիստանում կատարյալ սով է, չափազանց ծանր է Խաչենում կուտակված 1500 փախստականների վիճակը: Նա առաջարկում է անհապաղ օգնություն կազմակերպել սովյալներին:[153]

Ղարաբաղի ժամանակավոր կառավարության հաջորդ նիստում, որը տեղի ունեցավ մայիսի 2–ին Սարուշեն գյուղում, Զանգեզուր–Ղարաբաղում տիրող ընդհանուր վիճակի մասին ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Հակոբ Տեր–Հակոբյանը: Նա մասամբ նշում է, որ Արցախն ու Զանգեզուրը առանձին–առանձին հասկացություններ չեն, դրանք անբաժան մասեր են: «Արցախում և Զանգեզուրում,– հաղորդում է Տեր–Հակոբյանը,– տեղի ունեցող յուրաքանչյուր դեպք հուզում է առաջ բերում Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող բոլոր հայերի մեջ: Հայաստանը չի կարելի պատկերացնել առանց Արցախի և Զանգեզուրի»: Հայաստանի վիճակը մխիթարական չէր, մանավանդ, որ Թուրքիան նոր պատերազմ էր նախապատրաստում նրա դեմ: Հայաստանն ի վիճակի չէր կռվել երկու ռազմաճակատներում: Այսպիսի պայմաններում, նշում է Տեր–Հակոբյանը, «Ղարաբաղին մենք կօգնենք ոչ թե կենդանի ուժով, այլ ռազմամթերքներով և դրամով»:[154]

Խաչենում իրավիճակը կայունացնելու նպատակով ժամանակավոր կառավարությունը որոշում է այնտեղ ուղարկել Գրիգոր Ղարագյոզյանին՝ իբրև ժամանակավոր կառավարության ներկայացուցիչ: Նա Իսրայել Ղուլիբեկյանի և Արամ Վերդիյանի հետ պետք է Խաչենում կազմակերպեին «քաղաքական մասի վարչություն»:[155] Միջոցառումներ են ձեռնարկվում նաև Դիզակի, Ջրաբերդի և Գյուլիստանի տեղական իշխանություններն ամրապնդելու ու կենսունակ դարձնելու ուղղությամբ: Այդ շրջաններն են ուղարկվում մի շարք հեղինակավոր քաղաքական և ռազմական գործիչներ:





# ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

## *1. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ*

Այն ժամանակ, երբ գործնական քայլեր էին կատարվում Արցախում հայկական պետության մարմիններ ստեղծելու և ամրապնդելու ուղղությամբ, երբ Արցախ–Ղարաբաղի միավորումը մայր հայրենիքի հետ իրական էր դարձել, Ադրբեջանում արագորեն փոխվում է իրավիճակը: Սպիտակգվարդիականների դեմ Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի տարած հաղթանակները նպաստավոր պայմաններ էին ստեղծել դեպի Անդրկովկաս արշավելու համար: Արդեն 1920 թ. ապրիլին խորհրդային բանակի զորամասերը դուրս էին եկել Ադրբեջանի և Վրաստանի սահմանները: Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Միխայիլ Տուխաչևսկին և ռազմական խորհրդի անդամ Սերգո Օրջոնիկիձեն 1920 թ. ապրիլի 21–ին Պետրովսկից հրաման են արձակում Ադրբեջան զորք մտցնելու և այն գրավելու համար: Ըստ տվյալների, այդ ժամանակ մուսավաթական Ադրբեջանի 30 հազարանոց բանակի 20 հազարը գտնվում էր Ղարաբաղ–Զանգեզուրի շրջանում:[1] Այդ պատճառով էլ, իբրև, մուսավաթական կառավարությունը չի կարողացել դիմադրել Կարմիր բանակին: Ադրբեջանական ազգայնամոլները իրենց այդ անհաջողությունը բացատրում էին նրանով, որ մուսավաթական Ադրբեջանը կռվում էր Ղարաբաղ–Զանգեզուրի հայերի դեմ, և ռուսական ամբողջ սահմանագծի վրա միայն 300 զինվոր էր մնացել:[2] Ադրբեջանի մուսավաթը իբր կամավոր իշխանությունը հանձնեց թուրք «բոլշևիկներին»: Բաքվում ստեղծվեց Ադրբեջանի ժամանակավոր հեղափոխական կոմիտե, որը ապրիլի 28–ին Ադրբեջանը հռչակեց խորհրդային և իր վրա վերցրեց պետական բարձրագույն մարմինների ֆունկցիաները: Առանց որևէ դիմադրության, Ադրբեջան է մտնում Խորհրդային Ռուսաստանի 11–րդ Կարմիր բանակի 2–րդ հեծյալ կորպուսը (հրամանատար՝ Վոդոպիյանով), 32–րդ հրաձգային դիվիզան (հրամանատար՝ Շտեյգեր), 28–րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Նեստերովսկի), 20–րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ Վելիկանով) և երկաթուղային մարտական տեղամասը:[3]

1920 թ. ապրիլի 29–ին և 30–ին հեղկոմներ են ստեղծվում Շուշիում, Կարյագինոյում և Աղդամում: Հետաքրքիրն այն է, որ Շուշիի հեղկոմի գլուխ էր կանգնած հայության դահիճ Խոսրովբեկ Սուլթանովը: Բանն այն է, որ Ղարաբաղի

սահմաններին Կարմիր բանակի զորամասերի մոտենալը Սուլթանովին ստիպել է մաշկափոխ լինել: Եվ նա մի գիշերվա ընթացքում դառնում է «կարմիր» ու իրեն հորջորջում Շուշիի հեղկոմի նախագահ: Այդ հանգամանքը խոր զայրույթ է առաջացնում արցախահայության շրջանում: Սուլթանով–դահիճի դիմակը պատռելու համար Ղարաբաղի աշխատավորների անունից հեռագրեր են ուղարկվում Խորհրդային Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վ.Ի. Լենինին և Ադրհեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովին: Մայիսի 14–ին լուծարվում է Սուլթանովի ստեղծած հեղկոմը և ստեղծվում է նոր հեղկոմ Բահադուր Վելիբեկովի նախագահությամբ, իսկ Սուլթանովը կանչվում է Բաքու: Թվում է, թե այդ դահիճը կստանար արժանի պատիժ: Սակայն նա Նարիմանովի հովանավորությամբ ազատվում է պատասխանատվությունից, ապահով տեղափոխվում է Պարսկաստան, ապա՝ Թուրքիա և շարունակում իր հակահայկական և հակախորհրդային գործունեությունը:[4]

Շուշիի հեղկոմը մայիսի 5–ին նամակով Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունից պահանջում է հեռանալ երկրամասից և արցախահայությանը հորդորում կատարել հեղկոմի բոլոր պահանջները: Զարմանալի է նաև այն, որ արյունառուշտ Սուլթանովի ստեղծած հեղկոմը փորձում էր Ղարաբաղի բնակչությանը համոզել, թե ինքը «կանգնած լինելով պրոլետարիայի շահերի պաշտպանության դիրքերում, պատրաստ է իր տրամադրության տակ գտնված բոլոր միջոցներով աջակցել վերացնել Ղարաբաղում հնարավոր անմիտ արյունահեղությանը»:[5] Այդ նույն օրը հրապարակվում է նաև բոլշևիկների կուսակցության Շուշիի օկրուգային կոմիտեի կոչը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հայ աշխատավորությանը: Կոմիտեն կոչ է անում տեղերում «ստեղծել հեղկոմներ և թույլ չտալ դաշնակցականները խցկվել «խորհրդային մարմինները»:[6] Դեռևս մի քանի օր առաջ, ապրիլի վերջին և մայիսի սկզբին, արդեն կարմիր շապիկ հագած Խոսրովբեկ Սուլթանովը միևնույն բովանդակությամբ հեռագիր էր ուղղել Ղարաբաղի ժամանակավոր կառավարությանն ու Ադրբեջանի խորհրդային իշխանությանը: Ահա այդ հեռագիրը.

«Հեղափոխական Ղարաբաղը, միշտ էլ կողմնակից լինելով Ադրբեջանի պրոլետարիատի շահերի պաշտպանությանը, սպասել է Ադրբեջանի կողմից խորհրդային իշխանության ճանաչմանը, կապիտալի բռնություններից նրա պրոլետարիատի ազատագրմանը և այդ իմանալով՝ մեր հայացքներն ուղղված են եղել դեպի Խորհրդային Ռուսաստանը: Այժմ Ղարաբաղի դեմոկրատիան երջանիկ է իր նվիրական ցանկությունների կատարումով և ավելի է համոզված նրանց կատարյալ հաջողությանը՝ շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի հետ ունեցած միության: Ղարաբաղի դեմոկրատիան խորապես համոզված է և հավատում է Անգլիայից ու արևմուտքի մնացած իմպերիալիստական պետություններից աշխատավոր ժողովրդի ազատելուն՝ Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի դաշնակցության ջանքերով:

Կեցցեն Խորհրդային Ադրբեջանը և Թուրքիան, Կարմիր բանակն ու պրոլետարիատի առաջնորդները:

Ղարաբաղի հեղկոմի նախագահ՝ Խ. Սուլթանով»:[7]



Նման բնույթի կեղծիքով և քծնանքով լեցուն փաստաթուղթ կարող էին ստեղծել ամեն մի ստորության ընդունակները:

Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը մայիսի 6–7–ին Վ. Լենինին, պատճեն՝ Ադրբեջանի կառավարությանը, և Շուշիի հեղկոմին ուղարկած հեռագրով դատապարտում է Շուշիի հեղկոմի գործունեությունը, նշելով, որ Ղարաբաղի 360 հազարանոց հայությունը չի հավատում «Շուշիի հեղկոմին» և կշարունակի պայքարել նրա դեմ, մինչև «Լեռնային Ղարաբաղի սահմաններին կմոտենան հեղափոխությանը հավատարիմ Խորհրդային Ռուսաստանի որդիները»:[8] Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը մայիսի 9–ին քննարկելով Շուշիի հեղկոմի կոչը, ցուցաբերում է սկզբունքայնություն և անհողդողդ կամք: Աստվածատուր Ավետիսյանը իր ելույթում շեշտում է. «Պետք է ընդունենք այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանը գալիս է. թեև դա մի կողմից ուրախացնող է, սակայն մյուս կողմից էլ տխրեցնում է, որովհետև նա գալիս է կիսալուսնի հետ»: Որոշվում է հրավիրել գավառային համագումարներ և հաղորդումներ տալ երկրամասում տիրող ընդհանուր վիճակի և Շուշիի հեղկոմի կոչին կառավարության տված պատասխանի մասին:[9]

Մեզ են հասել Արցախ–Ղարաբաղի երկու գավառների հավաքների արձանագրությունները, որոնցում արտահայտված է արցախահայության վերաբերմունքը Շուշիի, Կարյագինոյի և մյուս հեղկոմների նկատմամբ: Մայիսի 14–ին Տող գյուղում տեղի ունեցած Դիզակի հայ գյուղացիության համագումարի պատգամավորները զայրույթով խարազանում են Ադրբեջանի կառավարության և Շուշիի հեղկոմի վերջնագրերը և պահանջում «ընդունել միայն Արարատյան կառավարությանը որպես մեր հարազատի և Զանգեզուրի հետ միասին մտնել նրա կազմի մեջ»: Ընդունված որոշման մեջ վճռականորեն ասված է.

«1. Հավանություն տալ Արցախի ժամանակավոր կառավարության կողմից Շուշիի հեղկոմի կոչին տված պատասխանին,

2. Այսուհետև նման խնդիրների լուծումը կատարել ոչ թե անջատ ու առանձին, այլ Հայաստանի Հանրապետության հետ միասին»:[10]

Այդ նույն օրը Հաղորտի գյուղում տեղի ունեցած Վարանդայի գյուղացիության շրջանային համագումարը նույնպես մերժում է Շուշիի հեղկոմի վերոհիշյալ պահանջը, հավանություն տալիս Ղարաբաղի ժամանակավոր կառավարության դիրքորոշմանը և շրջանի բնակչությանը կոչ անում պաշտպանել կառավարության ձեռնարկումները և մայր հայրենիքի հետ միավորումը իրականացնել գործնականորեն:[11]

Դիզակի գյուղացիության համագումարում պատգամավորներից մեկի ելույթում ասված է. «Ադրբեջանի ղեկավարները բոլշևիկ անվան տակ ցանկանում են օգտվել ստեղծված հանգամանքներից և իրագործել իրենց իմպերիալիստական և պանիսլամական ծրագրերը»: Համագումարին ներկա ժամանակավոր կառավարության անդամ Հարություն Թումյանը պատգամավորներին իրազեկ է պահում, որ «Բաքվում կազմված խորհրդային կառավարության առաջին գործն է հանդիսացել վերջնագիր ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը և պահանջել վերջինս Արցախի և Զանգեզուրի սահմաններից

դուրս բերի իր ուժերը, որովհետև իբրև Արցախն ու Զանգեզուրը կազմում են Ադրբեջանի անբաժան մասը և առաջիկայում պիտի միանան Ադրբեջանին և ապա՝ Խորհրդային Անատոլիայի հետ: Այսպիսով՝ Թուրքիայի նպատակն է Կազանից մինչև Պոլիս կազմել մի մեկ Օսմանյան պետություն՝ ոչնչացնելով այդ երկրի մեջ ընկած Հայաստանը»: Համագումարում հանդես եկած բոլշևիկ–պատգամավորները հայտարարում են, թե իրենք չեն հավատում Ադրբեջանի նոր իշխանությանը, որովհետև խորհրդային կառավարության մեջ տեղ չպետք է ունենան Սուլթանովների նման հայակերները»:[12]

Արցախ–Սյունիքի աշխատավորները սպասում էին, որ Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումով վերջ կտրվի Ղարաբաղի և Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի զավթողական քաղաքականությանը: Սակայն այդպես չեղավ. արցախահայության գոյամարտը՝ նրա ազատագրական պայքարը թևակոխեց ավելի դժվարին, ավելի կնճռոտ և նոր ողբերգություններով լեցուն շրջան: Խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի կոմիսար Մ. Հուսեյնովը, ելնելով Ադրհեղկոմի ապրիլի 29–ի նիստի որոշումից,[13] ապրիլի 30–ին Հայաստանի կառավարությանը հղած հեռագրում Ադրբեջանի հեղկոմի անունից պահանջում է՝ «Նախ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի ու Զանգեզուրի տարածքը. երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները. երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածները», հակառակ դեպքում Ադրբեջանի հեղափոխական կոմիտեն «իրեն կհամարի Հայաստանի Հանրապետության հետ պատերազմական դրության մեջ»:[14] Մեկ օր անց, մայիսի 1–ին, Հայաստանի Հանրապետության անունով ստացվում է Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Օրջոնիկիձեի, Կիրովի և Լևանդովսկու ստորագրությամբ հեռագիր, որով առաջարկվում է «անհապաղ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողությունները Խորհրդային Ադրբեջանի տարածքում» և «զորքերը դուրս բերել նրա սահմաններից»: Իսկ դրա համար տրվում է քսանչորս ժամ ժամանակ, հակառակ դեպքում, «այն կիրագործվի Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով» և հետևանքների համար ամբողջ «պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության վրա»:[15] Այստեղ զարմանալին և վրդովեցուցիչն այն է, որ ազգերի ինքնորոշման իրավունքը հռչակած քաղաքական գործիչներն առաջին իսկ պատեհ առիթով չեն զլանում անտեսել այդ իրավունքը: Հենց այդ է վկայում նրանց վերոհիշյալ վերջնագիրը: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական կոմիտե՝ Օրջոնիկիձեին ուղարկած նոտայով ժխտում է Ադրբեջանի տարածքում ՀՀ զորքերի առկայությունը, նշելով, որ. ընդհակառակը, Ադրբեջանի մուսավաթական զորքերն են գտնվում հայկական Ղարաբաղում: Արտաքին գործերի նախարարն իր կառավարության անունից հույս է հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը, որը վաղուց է ճանաչել Հայաստանի անկախությունը, չի թույլատրի նոր բռնություններ աշխատավոր հայ գյուղացիության նկատմամբ, որը երկար տարիներ արյուն է թափում:[16] Համո Օհանջանյանը ՌՍՖՍՀ արտաքին գործերի նախարար Գեորգի Չիչերինին և ժողկոմխորհի նախագահ Վ.Ի. Լենինին մայիսի 3–ին ուղարկած նոտայում շարադրում է իրենց ազատության և մայր հայրենիքի կազմում մնալու համար Արցախ–Զանգեզուրի աշխատավորների վերջին տարիներին մղած ազատագրական պայքարի համառոտ պատմությունը և ցույց տալիս թուրք–մուսավաթականների կողմից երկրամասում իրագործված բարբարոսությունները:[17] Հայաստանի կառավարությունը Խորհրդային Ադրբեջանի կառավարությանը մայիսի 4–ին ուղարկած նոտայով հայտնելով, որ Ադրբեջանի տարածքում հայկական ոչ մի զորամաս չկա, պահանջում է բազմաչարչար Լեռնային Ղարաբաղից դուրս բերե Ադրբեջանի բանակը և տարածքային վիճելի հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով:[18]

Ադրբեջանի խորհրդային կառավարությունը մայիսի 8–ին Հայաստանի կառավարությանը ուղարկած ռադիոհեռագրով կրկին պահանջում է հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղի սահմաններից, իսկ մայիսի 9–ին հատուկ կոչով համաձայնություն է հայտնում անհապաղ բանակցություններ սկսել՝ թաթարների և հայերի միջև արյունալի ընդհարումներին վերջ տալու համար:[19] Հայաստանի կառավարությունը պատասխան հեռագրով հայտնում է, որ Ադրբեջանի կառավարությունը ոտնահարում է Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորների իրավունքներն ու կամքը: ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից Ադրբեջանի ժողովրդին և արտաքին գործերի նախարարությանը մայիսի 12–ին ուղարկած հայտարարության մեջ ասվում է. «...Ձեր կառավարության հարձակումները Հայաստանի կառավարության դեմ ստիպում են հայտնել Ձեզ. որ ադրբեջանական հեղաշրջման իսկական իմաստը խաբված և գնահատված է հայ ժողովրդի և նրա կառավարության կողմից Ադրբեջանի պետական և քաղաքական կյանքում, ըստ էության, ոչ մի փոփոխություն չի մտցրել: Այդ այսպես կոչված սոցիալիստական կառավարության առաջին քայլն ուղղված է Ղարաբաղի և Զանգեզուրի հայ աշխատավոր գյուղացիությանը Ադրբեջանի իշխանությանը ենթարկելուն, հակառակ ժողովրդի կամքին: Հայաստանին ուղղված նոտան ձեր կառավարության հաստատման երկրորդ օրն իսկ իր ագրեսիվ բնույթով ոչ մի բանով չի տարբերվում մուսավաթական կառավարության և տաճկական իմպերիալիզմի ղեկավարներ Մուստաֆա Քեմալի... ձեր երկրի պետական կյանքի կազմակերպողներ էնվեր, Խալիլ և Նուրի փաշաների միջև գոյություն ունեցող կապն ու դաշինքը, այն փաշաների, որոնք իրենց արատավորել են Տաճկաստանում և Կովկասում կազմակերպած հայկական սարսափելի կոտորածներով, այն ժամանակ բնական կլինի, որ Հայաստանի կառավարությունը չի կարող Ադրբեջանի այժմյան կառավարությունը համարել դեմոկրատական ու սոցիալիստական: Ձեր նոտայում հիշելով Հայաստանի կողմից մուսուլման ազգաբնակչության հանդեպ զանազան տեղերում իբրև թե կատարված բռնությունների մասին, բոլորովին չեք հիշում... այն մասսայական գազանությունների մասին, որ տեղի ունեցան Նուխիի, Արեշի, Գանձակի, Շամախու, Ղարաբաղի և Գողթանի հայ ազգաբնակչության նկատմամբ»:[20]

1920թ. մայիսի սկզբին 11–րդ Կարմիր բանակի 32–րդ դիվիզիայի զորամա-

սերը Եվլախից շարժվեցին դեպի Արցախ՝ առանց հարցնելու արցախահայության կամքն ու ցանկությունը։ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները հայտարարում էին, թե Ղարաբաղ են մտնում իբր ազգամիջյան ընդհարումներին վերջ տալու համար։ Դրա նախօրյակին, մայիսի 5-ին, Ադրբեջանի կոմկուսակցության Բաքվի ընդհանուր կոնֆերանսում Ս. Կիրովը հայտարարել էր. «Այն, ինչ կատարվում է Ղարաբաղում և Ադրբեջանի այլ վայրերում, այն, ինչ անվանվում է ցեղային թշնամանք, պետք է մեկընդմիշտ վերջ տրվի խորհուրդների դրոշի ներքո»։[21]

Այդ օրերին Ադրհեղկոմը շտապ լուծարում է Ղարաբաղի նահանգապետությունը և մայիսի 12-ին Ղարաբաղի արտակարգ կոմիսար նշանակում Դադաշ Բունիաթզադեին, իսկ տեղակալ՝ Արմենակ Կարակոզովին, որոնք Բաքվից Ղարաբաղ են ժամանում մայիսի 18-ին՝ այստեղ կուսակցական և պետական մարմիններում աշխատելու համար հավաքագրված 25 հոգուց բաղկացած շքախմբով։[22]

Ուշագրավ է այն փաստը, որ այդ օրերին Արցախում տեղավորված մուսավաթական նախկին բանակի գրեթե բոլոր ասկյարներին, որոնք մեկ-երկու շաբաթ առաջ վայրագորեն բնաջնջում էին արցախահայությանը, ընդունում են Կարմիր բանակի շարքերը և շտապ վերահանդերձավորում։ Մուսավաթական բանակն արագորեն վերակազմվեց Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակի, և «Իսլամ բանակի» ասկյարները դարձան «կարմիր ասկյարներ»։ Մուսավաթական բանակի նախկին հրամանատար Ալի Աղա Շիխլինսկին, մուսավաթական կառավարության նախկին ռազմական նախարար Սամեդբեկ Մեհմանդարովը, զինվորական գործիչներ Լ. Նախիջևանսկին, Ի. Ուսուբովը և այլոք դարձան «կարմիր» հրամանատարներ։[23]

Մայիսի 12-ին Շուշի է մտնում 11-րդ Կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը՝ հրամանատար Աբուզարովի և զինկոմ Կայդալովի ղեկավարությամբ։ Մայիսի 18-ին Շուշի է ժամանում Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեն, որը կատարվածի մասին մայիսի 22-ին Բաքվից հեռագրում է Լենինին։[24] Այդ օրերին, մայիսի 19-ին, 11-րդ Կարմիր բանակի պատվիրակությունը Սահակ Տեր-Գաբրիելյանի[25] գլխավորությամբ Վարանդայի Ղարաբուլաղ գյուղում հանդիպում է Դրոյի հետ և պահանջում հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղից։[26] Այդ հանդիպման և այդ օրերին Ղարաբաղում տիրող ընդհանուր վիճակի մասին ահա թե Դրոն ինչ է հեռագրել Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին. «Հենց այժմ Շուշիից եկան բոլշևիկների ներկայացուցիչները՝ Անդրկովկասյան ճակատի ռազմական խորհրդի լիազորներ Տեր-Գաբրիելյանը, Կայդալովը և Պարնակինը։ Ինձ հետ խոսեցին գլխավոր լիզոր Օրջոնիկիձեի անունից։ Հայտնեցին, որ մտադիր են կարմիր-ռուս զորքեր մտցնել Լեռնային Ղարաբաղ։ Մինչև Հագարու գետը Ղարաբաղը պետք է պատկանի Խորհրդային Ադրբեջանին։ Նպատակ ունենալով Ղարաբաղը միացնել Հայաստանին՝ ենթադրելով, որ բոլշևիկների մտադրությունների ներքո թաքնված է հին Ադրբեջանը, ես նրանց առաջարկեցի այդ հարցերի առթիվ կապվել Հայաստանի կառավարության հետ, քանի որ ես լիազորված չեմ այդպիսի հարցեր լուծելու,



որ ամեն պարագայի իրենց պահանջները չեն համերաշխվում ժողովուրդների կառավարման այն սկզբունքների հետ, որոնց հիմքը մեծամասնության ինքնիշխանությունն է, և որ Հայաստանի ճակատագրի պարզաբանման համար մայիսի 4-ին մեր պատգամավորներն ուղարկվել են Մոսկվա։ Բոլշևիկներն այսօր էլ վերադարձան Շուշի՝ Օրջոնիկիձեի հետ խորհրդակցելու։ Ես զինվորությանը հրաման տվի՝ բոլշևիկների առաջացման դեպքում նրանց դիմավորել կրակով և նրանց ցույց տալ համառ դիմադրություն։ Միաժամանակ Մեսյանից ստանում եմ տեղեկություն, որ Ջիվանշիրի շրջանի Հասան-Ռիզայի մեր գյուղերը հրաժարվել են ընդունել մեր իշխանությունը և բացահայտորեն իրենց հայտարարել են բոլշևիկներ։ Պարզվում է, որ նրանք բոլշևիկների հետ սերտ կապ ունեն, ուժգնորեն աշխատում են ագիտատորները... Կարծում եմ՝ այժմ ժամանակն է դեպի Ջիվանշիր շարժել Բասարգեչարի զորամասը։ Մեկնումի օրվա մասին հայտնեցեք ինձ ժամանակին, նկատի առնելով, որ ձեր հեռագիրը ես ստանում եմ ութ-ինը օր հետո։ Մայիսի 19, ժամը 20, Ղարաբաղ...

Զանգեզուր-Ղարաբաղյան (զորամասի) պետ Դրո»։[27]

Խորհրդային իշխանության ներկայացուցիչները բացահայտորեն դիմում են կեղծիքի և խաբեբայության։ Նրանք Դրոյին հայտնում են, թե իբրև «Հայաստանի նախկին կառավարությունն այլևս գոյություն չունի, մայիսի 2-ին Հայաստանում հայտարարված է խորհրդային իշխանություն»։[28] Հայաստանի հետ կապի բացակայության պատճառով հնարավոր չէր ստուգել պատվիրակության հաղորդածը։ Իսկ մինչ այդ Կարմիր բանակի զորամասերը ներխուժում են Ջրաբերդի, Գյուլիստանի, Խաչենի, Դիզակի և Վարանդայի շրջաններ։

1920 թ. մայիսի 22-ին տեղի ունեցավ Ղարաբաղի ժամանակավոր կառավարության վերջին նիստը, որը քննարկեց Ղարաբաղում ստեղծված իրավիճակի և Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցը։ Արշավիր Քամալյանը հայտարարեց, թե Ղարաբաղում ստեղծված իրավիճակում դրությունը «թերևս կարողանան փրկել տեղական բոլշևիկները՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով և Ղարաբաղը հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մաս, այլ ոչ թե Ադրբեջանի»։ Աստվածատուր Ավետիսյանը նշեց՝ «Քանի որ այլևայլ պայմաններ կապել են մեզ Հայաստանի հետ, մենք կարող ենք նրա հետ լինել։ Այդ մասին պետք է հայտնել Խորհրդային Ռուսաստանին»։ Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը խնդիր դրեց ամեն կերպ փրկել Արցախի աշխատավորների ֆիզիկական գոյությունը, միաժամանակ հայտարարեց, որ արցախահայությունը «որոշել է երբեք և ոչ մի պայմանով իր բախտը չկապել նույնիսկ Խորհրդային Ադրբեջանի հետ՝ պատրաստ լինելով իրագործել քաղաքական այն հասարակարգը, որ ստեղծել է հեղափոխական Ռուսաստանը, շարունակելով իր ինքնապաշտպանությունն ավելի ուժեղացնել, մինչև կստեղծվի քաղաքական կայուն վիճակ»։[29]

Այդ և ուրիշ մի շարք հարցերի պատասխան տալու համար որոշվեց մայիսի 26-ին հրավիրել Ղարաբաղի հայության հաջորդ՝ 10-րդ համագումարը.

Վիճակն օր օրի վրա ավելի էր ծանրանում։ Արսեն Միքայելյանը պատմում է, որ Դրոյի հրահանգով մայիսի 18-ին մի քանի սպաներ ուղարկվում են Վանք

Զախար Մեսյանին օգնելու և այդ շրջանի պաշտպանությունն ուժեղացնելու, բայց դեռ Խաչեն չհասած, վերադառնում են՝ լուր ստանալով, որ Խաչենի շրջանը բոլշևիկացել է: Մայիսի 21–ին Ջիվանշիրում գտնվող ռուս Կարմիր բանակի մի հարյուրյակ, բոլշևիկների մասնակցությամբ, հարձակվում է Վանք գյուղի վրա՝ Մեսյանին ձերբակալելու, բայց չի կարողանում:[30]

Խորհրդային Ադրբեջանը հնարավոր բոլոր միջոցներով օգնում էր 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությանը՝ ոչնչացնելու Արցախում գտնվող հայկական ուժերին: Այդ նպատակով նա ջանում էր հավաքել հետախուզական տեղեկություններ և հանձնել նրան: Խորհրդային Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ Զեյնալովի ստորագրությամբ կազմված ամփոփագրում, որն ուղարկվել էր Ադրբեջանի ռազմական և ծովային կոմիսարիատին, ասված է. «281–րդ հետևակային գունդը ժամանել է Ղոչազ–Ակդալարի շրջանը: Մուսուլմանլարում վերականգնվել է մինչև մայիսի 6–ը ընկած վիճակը: Մեր կողմից վիրավորվել է 1–ին հետևակային գնդի 4 ասկյար:

Հայերը խմբավորվում են Մեծ և Փոքր Քիրս լեռների շրջանում, Ալթըն Ռախտա–Կարակիշլար լեռնանցքում: Նշված այս բոլոր կետերը գտնվում են Շուշիից հարավ: Այդ տեղերի հայկական ուժերը դրանով իսկ փակում են դեպի Զանգեզուր Քեշիշքենդից գնացող լեռնային ճանապարհը: Այդ գյուղում Դրոյի շտաբն է: Հետախուզության միջոցով հաջողվել է պարզել, որ, իրեք, այդ ճանապարհով է կատարվում ղարաբաղյան հայկական զորքերի մատակարարումը (Զանգեզուրից): Հակառակորդն այդ շրջանում առայժմ ակտիվություն հանդես չի բերում»: Ինչպես երևում է փաստաթղթի վրայի մակագրությունից, այդ տվյալները փոխանցվել են 11–րդ Կարմիր բանակի շտաբ:[31]

Այդ նույն բաժինը մայիսի 19–ին նոր ամփոփագիր է ուղարկում 11–րդ Կարմիր բանակի շտաբ, հաղորդելով խիստ չափազանցեցված և մի շարք անճշտություններ պարունակող տվյալներ. «Հայկական նոր զորամասերի կազմավորման համար Ղարաբաղում և Զանգեզուրում մեծ աշխատանք է տանում գեներալ Դրոն, որի մոտ Երևանից ուղարկված էր տարբեր ազգությունների պատկանող մինչև 100 սպա, ինչպես նաև զենք և զինամթերք:

Գերի վերցրած հայ պարտիզանը, որը հարցաքննվել է Ադրբեջանի Կարմիր բանակի շտաբում, հայտնել է, որ Շուշիի շրջանում գործում է 3 ջոկատ, որոնց մեջ ընդհանուր թվով հաշվվում է մինչև 8000 մարդ: Այդ ջոկատները տեղաբաշխված են Քեշիշքենդ, Չարտազ–Գյունեյ, Զավեդ գյուղերում՝ Շուշիից արևելք: Չարտազ–Գյունեյում եղած ջոկատը, բաղկացած երեք վաշտից, ունի մինչև 500 սվին, 200 թուր, 7 գնդացիր, 2 լեռնային հրանոթ: Ջոկատի հրամանատարն է կադրային սպա Մինաս Բաբաևը: Բոլոր ջոկատները ենթակա են Դրոյին, որի շտաբը գտնվում է Քեշիշքենդում: Ջոկատներում մոբիլիզացված են տեղի բնակիչները: Ամեն մի վաշտում կա 2–3 սպա: Մարտիկները զինված են տարբեր սիստեմների հրացաններով, յուրաքանչյուր հրաձիգ ունի 50 փամփուշտ, դրանից բացի, իր պաշարում ջոկատն ունի 9000 փամփուշտ: Համազգեստը գյուղացիական է: Ջոկատների խնդիրը պայքարն է Ադրբեջանի դեմ»:[32]



Մայիսի 24–ին Ավետարանոց գյուղում Դրոյի, Նժդեհի, գնդապետ Միրիմանյանի և Արսեն Միքայելյանի մասնակցությամբ տեղի է ունենում խորհրդակցություն, որը քննության առնելով Արցախում ստեղծված ընդհանուր վիճակը, արձանագրում է. Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունները զգալի փոփոխության են ենթարկվել, որոնք աստիճանաբար կարող են վերածվել թշնամության, կտրված է կապը Հայաստանի կառավարության հետ, այնտեղից չկա տեղեկություն, նշանակում է Հայաստանի Հանրապետությունը գտնվում է օրհասական վիճակի մեջ, Նժդեհի Կապանի զորամասը չի կարող երկար մնալ Ղարաբաղում, որովհետև զինվորները գյուղացիներ են և պետք է վերադառնան դաշտային աշխատանքներ կատարելու, ռուսական զորքերը փորձում են կտրել Ղարաբաղում գտնվող հայկական զորամասի ճանապարհը:[33] Ելնելով այս ամենից՝ որոշվում է Ղարաբաղում իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին՝ նրանց տրամադրության տակ թողնելով ժողովրդի ինքնապաշտպանության համար բավականին թվով զենք և այլ միջոցներ ու վերադառնալ Զանգեզուր: Դրոյի զորամասերը մայիսի 25–ին թողնում են Ղարաբաղը և Քիրս լեռան փեշերով վերադառնում Գորիս: Արդյոք ճի՞շտ վարվեց Դրոն, երբ հեռացավ Ղարաբաղից: Աննպատակ չի լինի, եթե այստեղ մեջբերենք Զանգեզուրի գեներալ–կոմիսար Սերգեյ Մելիք–Յոլչյանի ՀՀ կառավարության նախագահին հունիսի 7–ին ուղարկած հեռագիրը. «Հունիսի 1–ին (պետք է լինի 25–ին– Հ.Ա.) Դրոն իր ամբողջ ջոկատով թողել է Ղարաբաղը և անցել Զանգեզուր: Պատճառը խորհրդավոր է և բոլորովին անհասկանալի մեզ: Ղարաբաղում վիճակը անորոշ է: Մեր ձեռքով մենք կործանել ենք Ղարաբաղը: Դա մեր կուսակցության կրախն է: Դրոն անձամբ է իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Ինչպես հայտնում է հենց նոր Ղարաբաղից եկած գնդապետ Մեսյանը, այնտեղ չկան ռուսական բոլշևիկներ, և ժողովուրդը տատանվում է: Դրոյի և նրա ջոկատի խուճապահար փախուստը (Ղարաբաղից) Զանգեզուրում ստեղծել է որոշ հուսալքում: Տարածված են լուրեր, թե ջոկատը հեռանում է Զանգեզուրից: Ժողովուրդը հուզմունքի մեջ է»:[34] Ղարաբաղից իր հեռանալը արդարացնելու համար, Դրոն հունիսի 8–ին Գորիսից հեռագրում է Երևան. «Հայ ժողովրդի և, մասնավորապես, Զանգեզուրի թշնամիները տարածում են բացահայտ սադրիչ լուրեր Զանգեզուրից կառավարական զորքերի հեռանալու մասին:

Թող ժողովրդի թշնամիներն իմանան, որ կառավարական զորքերը, ամրապնդված նոր ուժերով, նորից օգնության կգնան ղարաբաղյան գյուղացիությանը:

Խնդրում եմ լայնորեն տեղեկացնել բնակչությանը»:[35]

Ղարաբաղից ՀՀ զորքերի հեռանալը Նժդեհը բնութագրել է ճակատագրական: Հետագայում նրա գրել է. «Ղարաբաղն առանց կռվի թշնամուն թողնելը, անշուշտ, պիտի ունենար իր բարոյալքիչ ազդեցությունը Զանգեզուրի վրա: Կամ թշնամին չափազանց ուժեղ է, որ Երևանյան զորքերը խուսափել են չափվելու նրա հետ, կամ ինչ–ինչ քաղաքական նպատակներով չպետք էր կռվել և չեն կռվել մերոնք»:[36]

1920 թ. մայիսի 26–ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի է ունենում

Ղարաբաղի հայության **տասներորդ** համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հայտարարում է խորհրդային և ստեղծում հեղկոմ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Մինչև հունիսի վերջը հեղկոմներ են ստեղծվում բոլոր գավառներում և գյուղերում:

Արցախահայության այն հույսը, թե խորհրդային կարգերի հաստատումը կօգնի մայր հայրենիքի հետ Արցախի միավորմանը, շուտով հօդս ցնդեց և պարզ դարձավ, որ 11–րդ Կարմիր բանակի զորամասերը Արցախը օկուպացրել է հօգուտ Ադրբեջանի, որի քաղաքականության հիմնաքարը հանդիսանում էր մուսավաթական Ադրբեջանի գործելակերպը, միայն այն տարբերությամբ, որ այս նոր կարգերի օրոք «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» դրոշի տակ սուսկ փքուն ճառեր ու կարգախոսներ էին արտասանվում և ամենաանամոթ ձևով խաբում բոլորին: Հենց այդ ամենն ի նկատի ունեին Սիմոն Փիրումյանն ու Արամայիս Երզնկյանը, երբ Վ. Լենինին հղած նամակում հանգամանորեն նկարագրելով Արցախի քաղաքական և տնտեսական վիճակի, ինչպես խորհրդային Ադրբեջանի կառավարության՝ Ղարաբաղին տիրանալու գործողությունների մասին, շեշտում են, որ «ուլտիմատումների և բռնի միջոցներով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին միացնելու քաղաքականությունը մինչև այժմ եղել է Թուրքիայի, Անտանտի և մուսավաթի քաղաքականությունը»: Նրանք խնդիր էին դնում հնարավորություն տալ Արցախի գյուղացիությանը՝ «իր հայեցողությամբ կազմակերպել կյանքը, աշխատավորներին տալ իսկական ինքնորոշում: Այդ գյուղացիության կամքից անկախ, ամեն որոշում կդիտվի որպես բռնություն և կզրկի նրան ինքնորոշման այն իրավունքից, որը ծանր պայմաններում երեք տարի պաշտպանել է իր թշնամիներից»:[37]

Համանման խնդիր բարձրացնում են նաև 1920–1921 թթ. ՌԿ(բ)Կ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Ռուբեն Քաբանյանն ու Հայկական գործերի կոմիսարիատի աշխատակից Գուրգեն Հայկունին՝ Վ. Լենինին գրած նամակում: Նրանք առաջարկում են Ղարաբաղն ու Զանգեզուրը հայտարարել խորհրդային հանրապետություն ու դաշնակցային հիմունքներով մտցնել ՌԽՖՍՀ կազմի մեջ, և ապա շարադրում են իրենց առաջարկության ելակետերը:[38] Այդ օրերին (մայիսի 31–ին) Գ. Չիչերինին, Մոսկվայում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահին (Լևոն Շանթ) և կովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի նախագահ Ս. Օրջոնիկիձեին ՀՀ արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանի ուղարկած հեռագրում պահանջվում է 11–րդ Կարմիր բանակի զորամասերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից և այնտեղ անցկացնել հանրաքվե:[39]

Այդ օրերին «Ժողովուրդը» գրել է. «Համաշխարհային սոցիալիստական հեղափոխության ջահակիրներն այժմ միացած են մահմեդական թուրքական երկրների արյունռուշտ փաշաների, խաների հետ: Իրենց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ջատագովներ հռչակած (բոլշևիկները) բռնի ուժով ցանկանում են հոծ հայկական մեծամասնություն ունեցող Լեռնային Ղարաբաղը հպատակեցնել Ադրբեջանին: Դրանով, իհարկե, բոլշևիկա–թաթարական դաշնակիցները չպիտի բավականանան, այլ կաշխատեն իրագործել իրենց վաղե-



մի ծրագիրը՝ Հայաստանի վրայով միանալ Անատոլիայի թուրք «կարմիր» ազգայնականներին, պայքարելու համար դաշնակիցների դեմ»: Եվ ապա «...Հայ ժողովուրդը չպետք է թույլ տա, որ իր պապենական հողից մի թիզ անգամ գրավեն թշնամիները: Ղարաբաղը եղել է հայկական և պիտի կցվի մայր հայրենիքին: Հայ ժողովուրդը միահամուռ կդիմադրի իր գոյությունը վտանգող և անկախության սրբազան իրավունքը ոտնահարելու ձգտող բոլշևիկա–պանթուրքական բլոկի ամեն փորձին»:[40]

Ահա այսպիսին էին իրադարձությունները Արցախ աշխարհում, որը խորհրդային իշխանության հաստատման նախօրյակին վեր էր ածվել ծայրաստիճան քայքայված ու ավերածությունների ենթարկված երկրամասի, որտեղ մուսուլմանների կողմից բարբարոսաբար ոչնչացվել էին 59 գյուղ, անօթևան էր մնացել մոտ 37 հազար բնակիչ, փոշիացվել էր 7000 տնտեսություն, զոհվել էր 25 հազար մարդ (երկրամասի բնակչության 20.1 տոկոսը), այրվել էր Ղարաբաղի տնտեսական ու մշակութային կենտրոն Շուշի քաղաքի հայկական մասը, փակվել կամ ոչնչացվել էին ֆաբրիկաների և արհեստանոցների 90 տոկոսը:[41]

Ինչ խոսք, այս ամենը չէր լինի, եթե այստեղ՝ արցախյան աշխարհում, միջազգային իմպերիալիզմի, խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի կողմից չոտնահարվեին ազգերի ինքնորոշման իրավունքը և երկրամասի հետ կապված բոլոր հարցերը վճռվեին արցախահայության կամքի ու ցանկությունների համաձայն: Իսկ նրանց անսասան ցանկությունն էր լինել մայր հայրենիքի հետ:

## *2. ԱՐՑԱԽԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՁԳՏՈՒՄՆԵՐԸ: ՌԿ(Բ)Կ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՊՕՐԻՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ*

1920 թ. մայիսին 11–րդ Կարմիր բանակի ամենաակտիվ մասնակցությամբ Արցախի գավառներում մտցվեցին խորհրդային կարգեր: Թվում էր, թե վերջ կտրվի ազգամիջյան հակասություններին և ընդհարումներին, արցախահայությունը եռամյա պայքարից հետո ի վերջո ինքնորոշման ազատ իրավունք կստանա և կմիավորվի մայր հայրենիքի հետ, խաղաղություն և անդորրություն կհաստատվի ամենուր, քայքայված տնտեսության վերականգնման համար լայն հնարավորություններ կբացվեն, կվերակենդանանա մշակութային կյանքը և այլն: Սակայն ստացվեց հակառակը: Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ հորինվեցին նոր, ավելի կնճռոտ թնջուկներ, որոնց թիկունքին կանգնած էին խորհրդային–ադրբեջանական ուժերը: Ըստ էության, արցախահայության ազատագրական պայքարը մտավ ավելի բարդ, ավելի ողբալի շրջափուլ, որից փառքով դուրս գալու համար պահանջվեց շուրջ յոթանասուն տարվա հերոսական պայքար: Դյուրին չէր քանդել Ռուսաստան–Թուրքիա–Ադրբեջան եռամիության հյուսած խարդավանք–սարդոստայնը և բոլշևիկյան եռամիության հայատյաց դիվանագիտությամբ կառուցված դժվարանցանելի լաբիրինթոսը:

11–րդ Կարմիր բանակի և Ադրբեջանի «կարմիր» ասկյարների կողմից Արցախն օկուպացնելուց հետո նա այնտեղ չդադարեց արյունահեղությունը: 1920 թ. մայիսի 25–ի լույս 26–ի գիշերը մուսավաթականները հակախորհրդային խռովություն բարձրացրին Գանձակում, որին ակտիվորեն մասնակցում և գլխավորում էին թուրք սպաները: Խռովարարները տապալեցին խորհրդային իշխանությունը Գանձակում և ռազմական գործողություններ սկսեցին Կարմիր բանակի զորամասերի դեմ: Գանձակի խռովարարներին աջակցելու համար Արցախում գլուխ բարձրացրին նախկին մուսավաթականները և մյուս ազգայնամոլները: Խռովարարների շարքերում ակտիվ էին գործում գեներալ Նուրի փաշան. սպա Քյազիմ–բեյը, գնդապետ Նիկոլաևը և ուրիշներ: Մայիսի 31–ին խռովությունը ճնշվեց, և նրա մասնակիցների մի մասը փախավ Թարթառի և Աղդամի շրջանները: Նուրի փաշան, որը թաքնվել էր Դաղստանում, հունիսի սկզբին մի խումբ սպաների և զինվորների հետ շտապեց Ղարաբաղ: Հունիսի 4–ի գիշերը, ծպտված ժամանելով Շուշի, նա կապվեց այստեղի կայազորի պետ, նախկին մուսավաթական բանակի գնդապետ Ջեյնալովի[42] հետ և, օգտվելով այն հանգամանքից, որ Կարմիր բանակի զորամասերը դուրս էին բերվել քաղաքից, հունիսի 5–ին կազմակերպեց խռովություն: Խռովություն բարձրացավ նաև Բարդայում և Ղարաբաղի ադրբեջանական գյուղերում: Թիֆլիսում տպագրվող «Слово» թերթը հուլիսի 1–ին գրել է. «Ելիզավետպոլում բարձրացրած ապստամբության հետ միաժամանակ, Նուրի փաշայի նախաձեռնությամբ, Ջիվանշիրի գավառում թաթարների կողմից Թարթառ գետի հովտում սրի է քաշվել խորհրդային զորքերի մեծ ջոկատ: Խորհրդային իշխանության ներկայացուցիչներ Օրջոնիկիձեն և Սահակ Տեր–Գաբրիելյանը հրաման են արձակել ձերբակալելու Նուրի փաշային, որը թաքնվելով, մշակում է Ադրբեջանում խորհրդային բոլոր զորքերի ոչնչացման մասին պլան»:

Խռովարարները գրավեցին խորհրդային հիմնարկությունները, փոստը, գանձարանը, բանտը, զորանոցները: Ձերբակալվեցին և բանտ նետվեցին Շուշիի մուսուլմանական հեղկոմի անդամները: Դրությունը բարդացավ նրանով, որ Նուրի փաշայի կողմն անցավ Շուշիի կայազորը, որը կազմված էր Բաքվի նախկին մուսավաթական 5–րդ գնդի ասկյարներից: Խռովարարներին ակտիվ օգնում էին անպատիժ մնացած խոշոր բեկեր, դահիճներ Սեյիդբեկով Շուքուրը, Մաշադի Զուլֆուգարը, Աղալարովը, Զանգեզուրի նախկին գավառապետ Շահսուվարը, Բաքվի նախկին պրիստավ Մաշադի Նովրուզովը և ուրիշներ: Մինչև 36 տարեկանների զորահավաք հայտարարվեց, և մտցվեց օրկան մինչև 16 ժամ զինավարժություն: Մուսավաթական թափթփուկները խռովություն բարձրացրին նաև Կարյագինոյի շրջանում և շրջապատեցին Ղոչահմեդլի գյուղը՝ այդ կողմերի մուսուլման բոլշևիկների կենտրոնը: Այդտեղ ժամանած Նուրի փաշայի գործակալ Աղա Ջիվանշիրը պահանջում է, որ բոլորը հանձնվեն: Սակայն ղոչահմեդլիներին օգնության են հասնում Հադրութի և մոտակա հայկական գյուղերի աշխատավորները, որոնք լի էին մուսավաթական խռովարարների դեմ պայքարելու վճռականությամբ: Նրանք 15 օր պահում են 120 մահմեդականների և փրկում կոտորածից:[43]



Մուսավաթականների և թուրք սպաների խռովությունն ուղղված էր նաև արցախահայության դեմ: Արցախահայության ոչնչացումը դրվեց փաստի առաջ: Ինչ որ չէին հասցրել կատարել սուլթանովները, ձգտում էին իրագործել խռովարարները: Նրանց դեմ զանգվածային պայքար կազմակերպվեց Վարանդայում, Խաչենում, Ջրաբերդում և Գանձակի շրջանի հայկական գյուղերում: Գավառների և գավառակային կենտրոններում, գյուղերում հրավիրվում էին միտինգներ և կոչ արվում միասնական ուժերով օգնել Կարմիր բանակի զորամասերին ու մինչև վերջ ջախջախել մուսավաթական ուժերին: Արցախահայերը կազմակերպում են աշխարհազորային ջոկատներ, փակում գյուղերը տանող ճանապարհները: Խռովարարները չկարողացան մթերք և փոխադրամիջոցներ ձեռք բերել հայկական գյուղերում, ինչը հանգեցրեց նրան, որ խռովարարները չկարողացան գործողություններ ծավալել Շուշիի սահմաններից դուրս: Բավականին ակտիվ էին գործում Հյուսիսային Արցախի հայ գյուղացիները Գյուլիստանի Բուզլուխ գյուղի բնակիչ Մացակ (Մնացական) Հովհաննիսյանի և ռուսական բանակի գնդապետ Եգոր Տեր–Ավետիքյանի ընդհանուր հրամանատարությամբ:

Թուրք-մուսավաթականների բարձրացրած խռովությունը ճնշելու համար 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությունը ուղարկեց 32–րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը, մուսուլմաններից կազմված ավտոզրահապատներ ունեցող հատուկ ջոկատը և այլ զորամասեր: Դրանց պետք էր ուղեկցեր Լունինիչի ավիացիոն ջոկատը:

Զարգացնելով ռազմական գործողությունները՝ 32–րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը հունիսի 12–ին գրավեցին Աղդամը: Հաջորդ օրը դիվիզիայի ուժեղացված ջոկատներից մեկը շարժվեց դեպի Շուշի և հունիսի 15–ին գրավեց քաղաքը: Նուրի փաշան և գնդապետ Ջեյնալովը իրենց ջախջախված ջոկատների մնացորդների հետ Խուդաֆերինի կամրջով հուլիսի սկզբին անցան Արաքսը և հեռացան Պարսկաստան: Ս. Օրջոնիկիձեն Վ. Լենինին հեռագրեց, թե ապստամբությունը Ղարաբաղում ճնշված է, և պարագլուխները փախել են: Այդ օրերին, գրել է Աբրահամ Կիսիբեկյանը, Լեռնային Ղարաբաղի հեղկոմի նախագահ Սաքո Համբարձումյանը Շուշիի Ղուկասյան դպրոցի նախկին ուսուցիչ Գրիգոր Ղարագյոզյանին ուղարկում է Զանգեզուր՝ Դրոյին խնդրելու, որ Զանգեզուրից չհեռանա, մինչև չպահովվի արցախահայության պաշտպանությունը: Դրոն համաձայնվում է:[44] Հարություն Թումյանը հետագայում գրել է, թե խռովարարների ջախջախման գործում «կարևոր դեր խաղացին Ղարաբաղի և Գանձակի լեռնաբնակ հայերի միացյալ զինված ուժերը: Դա օգնեց 11–րդ Կարմիր բանակի գործողություններին»:[45]

Մինչ արցախահայությունը ազատագրական պայքար էր մղում թուրք–մուսավաթական խռովության դեմ, խորհրդային Ադրբեջանի կառավարությունը սուր էր ճոճում Ղարաբաղ–Զանգեզուրին տիրանալու համար: Դեռևս մեկ տարի առաջ, 1919 թ. հունիսի 3–ին, 11–րդ Կարմիր բանակի ռազմական խորհրդի անդամ Ս. Կիրովը՝ նշելով այդ հարցում մուսավաթականների պահանջի անհիմն լինելը, Վ. Լենինին հաղորդել է, թե «հայկական մարզեր» Ղարաբաղն ու

Զանգեզուրը չեն ճանաչում Ադրբեջանի կառավարությունը»։[46] Արցախ–Զանգեզուրը նույն աննահանջ դիրքում էր նաև հիմա, 1920 թ. ամռանը, երբ Ադրբեջանում խորհրդային կարգեր էին, և Ղարաբաղ ու Զանգեզուր էին ներխուժել Ռուսաստանի Կարմիր բանակի զորամասերը։ Հենց այդ ժամանակ էլ սկսվում է դիվանագիտական պայքարի մարաթոն, որի ընթացքում մի կողմից՝ Ադրբեջանը և 11–րդ Կարմիր բանակի ղեկավարությունը փորձում էին ճիշտ համարել Արցախի բռնազավթումն ու Ադրբեջանի տարածք հայտարարելը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը հայտնում էին, թե նրա կողմից Ղարաբաղի նկատմամբ կատարվել է բռնություն, որը հակասում է Խորհրդային Ռուսաստանի հայտարարած ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքին։

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները, ի դեմս հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի, արտաքին գործերի կոմիսար Մ. Հուսեյնովի, հեղկոմի անդամ Ա. Կարաևի և ուրիշների, բռնել էին կեղծիքի, կուսակցական և պետական մարմինների ղեկավարներին մոլորության մեջ գցելու, հասարակական կարծիքը «մշակելու» և Արցախ–Զանգեզուրի, Գանձակի հայկական շրջանների, Նախիջևանի և այլ տարածքների հայության նկատմամբ ուժ ու բռնություն գործադրելու ուղին։

Հայաստանի արևելյան տարածքները բռնազավթելու վերաբերյալ Խորհրդային Ադրբեջանի քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունից, միայն այն տարբերությամբ, որ եթե մուսավաթականները հենվում էին Անգլիայի և Անտանտի մյուս երկրների աջակցության վրա, ապա Խորհրդային Ադրբեջանն իր նպատակին հասնելու համար օգտագործում էր Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի ամենաակտիվ աջակցությունը։ Խորհրդային Ադրբեջանի հիմնական նպատակն էր Ղարաբաղ–Զանգեզուր–Նախիջևան ուղիով միանալ Թուրքիային և ամեն կերպ նպաստել Անդրկովկասում պանթուրքական քաղաքականության իրագործմանը։ Դրան հասնելու համար Ն. Նարիմանովը և նրա թիմը ճարպկորեն օգտագործում էին Խորհրդային Ռուսաստանի թուրքամետ քաղաքականությունը։

Խորհրդային Ադրբեջանի և Թուրքիայի քաղաքականությունը շատ լավ էին հասկանում Հայաստանում։ Ապրիլի վերջին և մայիսի սկզբին Բաքվից ստացվող հեռագրերն ու վերջնագրերը Երևանին ստիպում են ավելի սթափ մտածել։ Հայաստանի արևելյան տարածքների վերաբերյալ Խորհրդային Ադրբեջանի սանձարձակ քայլերի առաջն առնելու համար Հայաստանի կառավարությունը և ՀՀ դաշնակցության ղեկավար մարմինները «եկել էին այն եզրակացության, որ վերահաս վտանգի առաջն առնելու միակ միջոցը Մոսկվային դիմելն է և որևէ ձևով նրա հետ լեզու գտնելը՝ Հայաստանի Հանրապետության գոյությունը պահպանելու համար»։[47] Չնայած ուշացումով, այնուամենայնիվ, 1920 թ. ապրիլի վերջին Հայաստանի կառավարությունը պատվիրակություն է ուղարկում Մոսկվա՝ գրող Լևոն Շանթի ղեկավարությամբ։ Պատվիրակության կազմի մեջ էին ՀՀ խորհրդարանի անդամներ Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյա-



նը, ինչպես նաև Սարգիս Այդինյանը և Տեր Հակոբ քահանա Սառիկյանը։ Պատվիրակությունը Երևանից դուրս է գալիս ապրիլի 30–ին և Մոսկվա հասնում մայիսի վերջերին։ Ղարաբաղցիների հայրենակցական ընկերության խնդրանքով Թիֆլիսում պատվիրակությանը միանում են մենշևիկներ Արամայիս Երզնկյանն ու Սիմոն Փիրումյանը։[48] Մոսկվա մեկնած պատվիրակությունը Հայաստանի կառավարությունից հրահանգ ուներ հետևյալը. 1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչի Հայաստանի անկախությունը՝ ընդունելով, որ Հայաստանին են պատկանում Ղարաբաղն ու Գյուլիստանը. 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունի թուրքահայ հողերի կցումը Հայաստանին. 3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտի Հայաստանի ներքին գործերին, չպիտի Հայաստանում կոմունիստական գործունեություն ծավալի. 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թույլ տա, որ Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան. 5. Կայսերապաշտական պատերազմի պատճառով Հայաստանի աշխատավորությանը հասցված նյութական վնասները պետք է հատուցվեն և այլն։[49]

Մոսկովյան բանակցություններին Ռուսաստանի կողմից մասնակցում էին արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինը և նրա օգնական Լևոն Կարախանը, իսկ Հայաստանի կողմից՝ Լևոն Շանթը, Համբարձում Տերտերյանը և Լևոն Զարաֆյանը։ Պաշտոնական բանակցությունները սկսվեցին մայիսի 28–ին։ Հենց առաջին հանդիպման ժամանակ Գ. Չիչերինը Հայաստանի պատվիրակությանը հասկացնում է, որ թուրքերը իրենց՝ բոլշևիկներին պետք են և որ Ռուսաստանը համաձայն է և՛ զինվորական, և՛ տնտեսական օժանդակությամբ Թուրքիայից դուրս շպրտել եվրոպական աշխարհակալ «զավթիչներին», իբր թուրքերը գործողություններ կսկսեն, սակայն մտահոգված են, որ Հայաստանի կառավարությունը, որպես դաշնակիցների կողմնակից, կարող է իրենց հարվածել թիկունքից։ Եվ իբրև Ռուսաստանը ցանկանում է հաշտեցնել Հայաստանն ու Թուրքիան։ Իսկ «քանի որ ռուս–տաճկական համագործակցությունը այս րոպեիս Խորհրդային Ռուսաստանի համար մահու և կենաց խնդիր է, ուստի անհրաժեշտ է այդ խնդիրների վերաբերմամբ նշել Հայաստանի կառավարության դիրքը և վերաբերմունքը»։ Հայաստանի պատվիրակությանը պարզ է դառնում, որ Խորհրդային Ռուսաստանն իր վրա էր վերցրել Հայաստանի և Թուրքիայի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջնորդությունը, որպեսզի Հայաստանը ձեռք քաշի «դաշնակիցներից և հայոց դատը լրիվ հանձնի Ռուսաստանին»։ Միաժամանակ ակնհայտ էր, որ թուրքերն ուզում էին շահագործել ռուսներին։ Հայ պատվիրակությունը, հայտնելով իր տեսակետը, նշում է, որ «տաճիկները ռուսներից ստացած զենքով ամենից առաջ կհարվածեն հայերին», մինչդեռ ռուսները միամտորեն կարծում էին, թե իրենք «տաճիկներին մոտենալով, այնտեղ տեղի կունենա խորհրդայնացում»։ Նաև պարզվում է, որ խորհրդային կառավարությունը առանձնապես չէր հետաքրքրվում կովկասյան հանրապետությունների սահմանների խնդրով, «համարելով այն մի աննշան հարց», քանի որ «նրա մտահոգության առարկան Տաճկաստանի խնդիրն էր»։[50] Մինչդեռ հայ պատվիրակության հիմնական խնդիրներից մեկը սահմանների

ճշտման հարցն էր: Համբարձում Տերտերյանը գրում է, թե բանակցությունների ժամանակ Ադրբեջանի հետ սահմանների խնդիրը որոշվում է մոտավորապես հետևյալ ձևով. Նախիջևանի շրջանը և Զանգեզուրը անվերապահորեն պիտի համարվեն հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատվեր վիճելի, որի իրավական վիճակը որոշվելու էր հետագայում՝ ժողովրդական հանրաքվեով:[51] Թվում էր, թե ամեն ինչ հարթվել էր և կարելի էր ստորագրել նախնական պայմանագիրը: Սակայն դա տեղի չունեցավ ամենից առաջ Ադրբեջանի կառավարության և Բաքվում գործող մի խումբ հայ բոլշևիկների մեղքով, որոնք վիժեցրին հայ–ռուսական բանակցությունները և ձգտում էին ռուս բոլշևիկների և թուրքերի «օժանդակությամբ խորհրդայնացնել Հայաստանը»: Մյուս կողմից էլ այդ պղտոր ջրի մեջ ձուկ որսալու ցանկություն ունեցող Ադրբեջանը, «օգտվելով բոլշևիկյան զորքերի ներկայությունից, աշխատում էր իրագործել մուսավաթականների ծրագիրը ու գրավել ոչ միայն Ղարաբաղը, այլև Զանգեզուրն ու Նախիջևանը»:[52] Հուլիսի 1–ին Շանթը հեռագրում է Երևան. «Հենց առաջին տեսակցությունից պարզվեց, որ միակ դժվարությունը Ադրբեջանի սահմանն է, որովհետև Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքումը: Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջների արդար լինելը և չի փափագում զոհացում տալ Խորհրդային Ադրբեջանի և հայ բոլշևիկների բոլոր բաղձանքներին: Այնուամենայնիվ, վերջիններիս համառ պնդումի և սուտ տեղեկության ազդեցության հետևանքով դաշնագրի կնքումը դանդաղում է: Խորհրդային Ադրբեջանի կառավարիչները ցանկանում են օգտվել ռուսական հեղինակությունից և ռուս զորքերի ներկայությունից՝ իրագործելու համար մուսավաթական ծրագիրը՝ գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքերը թուրք ազգաբնակչության մեջ: Ռուսաստանը ցանկանում է ստանձնել իրավարարի դեր հայ–թաթարական վեճը լուծելու համար: Մոսկվայի կառավարությունը պատրաստակամություն է հայտնում Թուրքահայաստանի խնդրում հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի և Մուստաֆա Քեմալի միջև»:[53]

Ինչ խոսք, այդ ամենը չէր կարող անհետևանք մնալ: Եվ ահա հունիսի վերջերին Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը Խորհրդային Ռուսաստանից ստանում է նոր առաջարկություն, ըստ որի՝ Ղարաբաղը վերջնականապես թողնվում է Ադրբեջանին, Նախիջևանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրը համարվում էր վիճելի տարածք, որի «իրական վիճակը պիտի որոշվեր հետագայում, եթե խորհրդային կառավարության լիազոր պատվիրակ Լեգրանը տեղին վրա կծանոթանար Զանգեզուրի բնակչության ազգագրական կազմության ու տեղական ժողովուրդների ցանկություններին»:[54]

Ադրբեջանը չէր նահանջում այն մտքից, որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանն անառարկելիորեն պետք է մտնեն Ադրբեջանի կազմի մեջ: Գ. Չիչերինը բազմիցս փորձում է արգելք դնել Ադրբեջանի այդ ազգայնամոլ քաղաքականության առաջ: Նա դեռևս հունիսի 2–ին Ս. Օրջոնիկիձեին հայտնում է, թե Ադրբեջանը վիճելի տարածքներ է համարում ոչ միայն Ղարաբաղն ու Զանգեզուրը, այլև Շարուր–Դարալագյազը, մինչդեռ հայտնի է, որ նույնիսկ մուսա-



վաթական կառավարությունն այս վերջինը ճանաչում էր որպես Հայաստանի տարածք: Այնուհետև հաղորդում է, որ երկար դիմադրությունից հետո հայկական պատվիրակությունը համաձայնվել է Ղարաբաղն ու Զանգեզուրը ճանաչել վիճելի տարածքներ: Պետք է հասնել նրան, առաջարկում էր նա , որպեսզի այդ նույնն ընդունի նաև Ադրբեջանը:[55] Ս. Օրջոնիկիձեն հարմար է գտնում Մոսկվա հրավիրել Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչներին և վիճելի տարածքների հարցը վճռել նրանց հետ: Նա միևնույն ժամանակ խորհուրդ էր տալիս դա կատարել մինչև Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը:[56] Ս. Օրջոնիկիձեն չէր կարող չիմանալ, որ Ադրբեջանը դեմ էր Հայաստանի հետ հարաբերությունների բարելավմանը և ջանքեր չէր խնայում ձախողելու հայ–ռուսական բանակցությունները: Հենց այդ օրերին Բաքվից Մոսկվա՝ Վ. Լենինի, Գ. Չիչերինի հասցեով (պատճեն՝ Վլադիկավկազ՝ Ս. Օրջոնիկիձեին) ուղարկած մի հեռագրում, որի տակ ստորագրել էին Ն. Նարիմանովը, Բ.Մդիվանին և Ա. Միկոյանը, ասված է. «Ինչ վերաբերում է իբրև վիճելի Զանգեզուրին և Ղարաբաղին, որոնք արդեն մտել են Ադրբեջանի կազմի մեջ, վճռականորեն հայտարարում ենք, որ այդ շրջաններն անվիճելիորեն այսուհետև ևս պետք է մնան Ադրբեջանի կազմում:

Ջուլֆայի և Նախիջևանի շրջանները... ինչպես ռազմական տեսակետից, այնպես էլ Թուրքիայի հետ անմիջական կապի նպատակով պետք է գրավվեն մեր զորքերի կողմից և միացվեն Ադրբեջանին: Մեր կողմից մենք դաշնակցական կառավարության հետ ամեն մի բանակցություն համարում ենք ավելորդ, իսկ Թուրքահայաստանի հարցը ձեր մտադրված ձևով՝ անժամանակ»:[57] Նեղն ընկած Գ. Չիչերինը ստիպված է լինում դիմել Ս. Օրջոնիկիձեին՝ խնդրելով, որ նա ազդի Ադրբեջանի ղեկավարների վրա և սանձի նրանց ախորժակը: Ն. Նարիմանովին ջերմորեն պաշտպանում էր Խորհրդային Ռուսաստանի ազգությունների կոմիսար Ի. Ստալինը: Նա Ս. Օրջոնիկիձեին՝ հուլիսի 8–ին ուղարկած հեռագրով թելադրում է իր կամքը. «Իմ կարծիքն այն է, որ պետք է որոշակիորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ դեպքում, իհարկե, Ադրբեջանին՝ Թուրքիայի հետ միասին»:[58]

Այդ ժամանակ բոլշևիկյան կուսակցության և խորհրդային պետության մի շարք գործիչներ արդարացիորեն գտնում էին, որ Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը և ուրիշ մի շարք հայաբնակ տարածքներ պատմականորեն կազմում են Հայաստանի անքակտելի մասը և, հետևապես, պետք է վերամիավորվեն նրա հետ: Այդ խնդրում համեմատաբար վճռական էր գործում Գ. Չիչերինը: Նա 1920 թ. հունիսի 21–ին Վ. Լենինի այն հարցին, թե «չի՞ կարելի արդյոք Նարիմանովի հետ գործն ավարտել խաղաղությամբ», պատասխանում է. «Ղարաբաղը բուն հայկական բնակավայր է»:[59] Դրանից երկու օր առաջ, հունիսի 19–ին, Ս. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում նա գրում է. «Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուլֆան չպետք է միանան ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ Ադրբեջանին, այլ պետք է գտնվեն ռուսական օկուպացիոն զորքերի հսկողության տակ՝ այնտեղ ստեղծելով խորհուրդներ, քանի որ այդ վճիռը կձախողի խաղաղության մեր քաղաքականությունը»:[60] Այդ տեսակետն ար-

դարացնելու համար Գ. Չիչերինը հուլիսի 20–ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանին հաղորդել է. «Ստեղծվում են պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն վիճելի տարածքային հարցերի հանգիստ ու անաչառ քննարկումը»:[61]

Ն. Նարիմանովը պանթուրքական քաղաքականությունից հրաժարվելու միտում չուներ: Գ. Չիչերինը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին 1920 թ. հունիսի 29–ին ուղարկած նամակում խնդիր է դնում սանձել Բաքվի անկարգապահ ղեկավարներին, որոնք հակառակվելով Կենտկոմի քաղաքական կուրսին, չեն ցանկանում փոխզիջման մեջ մտնել Հայաստանի և Վրաստանի բուրժուական հանրապետությունների հետ: Բաքվի ղեկավարներն առանձնապես չեն ցանկանում համաձայնության գալ Հայաստանի հետ և կարգավորել վիճաբանության ենթակա հարցերը:[62] Ն. Նարիմանովը, Գ. Չիչերինին մեղադրելով «անհուսալի խառնաշփոթ» ստեղծելու մեջ, 1920 թ. հուլիսին Վրաստանում Ադրբեջանի ներկայացուցչի հետ հեռախոսային խոսակցության ժամանակ պահանջում է անհրաժեշտ հարկադրական միջոցներ ձեռնարկել վիճելի մարզի հայ բնակչության նկատմամբ, որպեսզի նա կողմնորոշվի Ադրբեջանին միանալու օգտին: Իսկ մինչ այդ Բաքվից ՌԿ(բ)Կ Կենտկոմին հուլիսի 10–ին ուղարկած հույժ գաղտնի նամակում, որը ստորագրել էին Նարիմանովը, Անդրերկրկոմի անդամ Մդիվանին, Ադրկոմկուսի Կենտկոմի անդամներ Միկոյանը, Նանեյշվիլին, 11–րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Վեսնիկը, Լևանդովսկին և Միխայլովը, խեղաթյուրելով մի շարք պատմական փաստեր,[63] գրված է, թե Զանգեզուրի և Ղարաբաղի չեզոքացումը կամ էլ դաշնակներին հանձնելը «խորհուրդներին կբերի մահ, աշխատավոր մասսաներին կրակ և սուր, ազգային ճակատի և թշնամանքի վերականգնում...», և որ այդ ամենը չկրկնվելու համար մուսուլմանական բնակչությունը գտնում էր, որ պետք է պահպանվեն Ադրբեջանի նախկին սահմանները:[64]

Խորհրդային Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը դատապարտելու և այն խափանելու նպատակով է, որ Գ.Չիչերինը 1920 թ. հունիսի 29–ին Վ. Լենինին գրել է. «Գործերի նոր վիճակը իր արտահայտությունը պետք է գտնի նաև Անդրկովկասի մեր պլաններում և մեզ ստիպի ավելի զգույշ վերաբերվել Օրջոնիկիձեի, Մդիվանու, Նարիմանովի և այլոց հարձակողական պլաններին: Այդ ընկերները սկզբում ձգտում էին զենքի ուժով խորհրդայնացնել Վրաստանն ու Հայաստանը և խիստ հիասթափվեցին, երբ մեր Կենտկոմն այդ մերժեց»: Նա այնուհետև նշում է, որ Ն. Նարիմանովը չի հրաժարվում Վրաստանի և Հայաստանի դեմ ուղղված հարձակողական տակտիկայից: «Այդ կոնֆլիկտի վերջին փուլը,– շարունակում է նա,– Ադրբեջանի կողմից պահանջներ ներկայացնելն էր հսկայական տարածքների նկատմամբ, որոնք մշտապես պատկանել են Հայաստանին և փաստորեն գտնվում են Հայաստանի Հանրապետության ձեռքում: Ադրբեջանի կառավարությունը պահանջ է ներկայացրել Ղարաբաղի, Զանգեզուրի և Շարուր–Դարալագյազի գավառների նկատմամբ՝ Նախիջևանի, Օրդուբադի և Ջուլֆայի հետ միասին: Այդ տարածքի մեծ մասը փաստորեն գտնվում է Հայաստանի Հանրապետության ձեռքում»: Գ. Չիչերինը չի թաքցնում, որ Ն. Նարիմանովը ցանկանում է այդ տարածքները գրավել խորհրդային զորքերի միջոցով: Իրոք, այդպես էլ եղավ. փաստորեն Արցախը վերագրավվեց 11–րդ Կարմիր բանակի կողմից: Արտաքին գործերի կոմիսարը գտնում էր, որ «չի կարելի Հայաստանից վերցնել նրա տարածքի մի մասը և տալ Ադրբեջանին, այդ նշանակում է մեր արևելյան քաղաքականությանը տալ միանգամայն կեղծ բնույթ... Մասնավորապես Հայաստանի նկատմամբ նման քաղաքականությունն անուղղելի հարված կհասցնի կոմունիզմի գործին»:[65]



Հուլիսի 9–ին Գ. Չիչերինը հեռագրում է Ս. Օրջոնիկիձեին. «Մեզ բազմիցս հայտարարում էին, որ իբրև Ղարաբաղն ու Զանգեզուրը մեր ժամանակավոր օկուպացիոն իշխանության տակ թողնելը, դրանք Ադրբեջանին տալու փոխարեն, կխորտակի խորհրդային իշխանությունը Բաքվում: Հաղորդեցեք պարզ ու կոնկրետ կերպով, թե բանն ինչումն է: Եթե բանը մահմեդական ազգայնամոլների զավթողական ձգտումներին հովանավորելն է, ապա դա վատ քաղաքականություն է, այդ ուղու վրա մենք կնպաստենք սոսկ ազգայնական բնազդների զարգացմանը, կհավասարվենք մուսավաթականներին և դրանով իսկ կօգնենք նրանց»:[66]

Այս և նման մի շարք անհերքելի փաստեր ունենալով իր ձեռքի տակ՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1920 թ. հուլիսի 7–ին ընդունեց մի որոշում, որը վերաբերում էր Կովկասում վարվող քաղաքականությանը: Դրա 8–րդ կետով Կովկասում աշխատող կոմունիստներին պարտավորեցնում էին Կարմիր բանակի զորամասերի զբաղեցրած տարածքների բնակչությանը բացատրել և համոզել, որ այդ միջոցառումը միայն ժամանակավոր բնույթ է կրում, որի նպատակն է կանխել ազգամիջյան կոտորածները և հավատացնում, որ տարածքների պատկանելիության հարցը կլուծի խառը հանձնաժողովը, որը կղեկավարվի այդ տարածքների էթնիկական կազմի ցանկությամբ:[67] Միանգամայն հստակ ու պարզ ասվում էր, որ կպաշտպանվի ազգերի ինքնորոշման սկզբունքը: Մնում էր միայն բարեխղճորեն իրագործել կարևոր նշանակություն ունեցող այս որոշումը:

Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը՝ Ն. Նարիմանովի գլխավորությամբ, չիք դարձրեց այդ որոշում–հրահանգը: Նա, թերևս, իրեն շրջապատող անձնավորությունների մեջ ամենացինիկն էր և ամենաշողոքորթը: Այդ մասին շատ բնորոշ արտահայտվել է Հայաստանի Հանրապետության Բաքվի դեսպանն իր կառավարությանն ուղարկած 1920 թ. օգոստոսի 9–ի հաղորդագրության մեջ: Նա գրում է, թե «Նարիմանովը չունի նույնիսկ թաթի ցեղին հատուկ վարվեցողության եղանակը», և նա «շատ ակնհայտորեն երևան է բերում իր հակահայկական տրամադրությունը և չի աշխատում այդ թաքցնել քաղաքավարության քողի տակ: Նա շատ հաճախ մոռանում է, որ կոմունիստ է, իր ազգային թրքական պատկերը ցայտուն կերպով հրապարակ է հանում: Անշուշտ, մյուսները, որ դրանից ավելի կոմունիստ և ինտերնացիոնալ չեն, իրենց մերժումները և հակակրանքը այդքան ցինիկ կերպով չեն արտահայտում»:[68] Օգտագործելով բարոյականության բոլոր հնարավոր միջոցները՝ Ն. Նարիմանովը ջանում էր այն

համոզումը ստեղծել, թե իբր Ղարաբաղը հնուց ի վեր եղել է ադրբեջանական տարածք և տնտեսապես կապված է Դաշտային Ղարաբաղի և հանրապետության այլ շրջանների, մանավանդ արդյունաբերական Բաքվի հետ, հետևապես անհնար է այն անջատել Ադրբեջանից: Այդ նույնը մեր ժամանակներում պնդում է նաև պատմաբան Դ. Գուլիևը: Նա ևս մեջտեղ է քաշում նույն տնտեսական գործոնը: Դ. Գուլիևի կարծիքով, նպատակահարմար չէ, որ Ղարաբաղը միանար տնտեսապես թույլ զարգացած Հայաստանի հետ, քանի որ վերջինս անկարող կլիներ օգնել ոտքի կանգնելու տնտեսապես քայքայված, ավերված Ղարաբաղին: Արդեն այն ժամանակ մի կողմ հրելով ազգային ինքնորոշման իրավունքը՝ նա առաջին գիծ էր քաշում սոցիալական հարցերը: Իսկ երբ հարցը վերաբերում էր Նախիջևանին, այդ նույն սոցիալական հարցերը հետ էին մղվում՝ առաջ քաշելով երկրամասի բնակչության գերակշիռ մասի ազգային հատկանիշը:[69]

Տնտեսական կապերի վերաբերյալ Նարիմանովյան կարգախոսությանը հիմնավորված և համոզիչ պատասխան է տվել Դավիթ Անանունը «Հայաստանի կոոպերացիա» պարբերականի 1920 թ. 17–րդ համարում տպագրված «Ղարաբաղ» վերտառությամբ հոդվածում: Նա ապացուցում է, որ Արցախը դարեր ի վեր տնտեսապես կապված է եղել մայր Հայաստանի հետ, հետևապես սնանկ են Ադրբեջանի «տեսաբանների» փաստարկները: Այդ առթիվ նա Հայաստանի կառավարության նախագահին գրել է. «Տնտեսական գործոնը չի կարելի գռեհկացնել մինչև այն աստիճան, որ ... վեր կենալ ու ասել, թե որովհետև թուրք թափառական խաշնարածը Շուշիի քաղաքացիներին մատակարարում է յուղ, պանիր ու բուրդ, ուրեմն Շուշին կապված է Ադրբեջանի հետ և պիտի լինի նրա անբաժան մասը»: Նա Հայաստանի կառավարությանը մեղադրում է այն բանում, որ «տեր չի կանգնում ողջ Ղարաբաղին մինչև Կուրը»:[70] Դ. Անանունը գրում է, որ «Ղարաբաղը Զանգեզուրի գավառի շարունակությունն է իր տեղագրությամբ և տնտեսակերպով. Ղարաբաղն ու Զանգեզուրը մի տնտեսական ամբողջություն է»:[71] Նա իր հոդվածը եզրափակում է հետևյալ մարգարեական խոսքերով. «Ղարաբաղն ամբողջապես Հայաստանից դուրս՝ դա խոց է, որ նախ և առաջ գերեզման պիտի իջեցնե անկախ Ադրբեջանի գաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի թունավորե և Հայաստանի անդորրությունը: Եթե Ադրբեջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին՝ նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան՝ նրանք օրնիբուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին:

Ղարաբաղը Հայաստանին»:[72]

* * *

Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայից Երևան վերադարձավ 1920 թ. սեպտեմբերի 14–ին՝ հույսով, որ Երևանում բանակցությունները կշարունակվի Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի հետ: Վերջինս Անդրկովկաս էր եկել ավելի շուտ, հուլիսի վերջերին և օգոստոսի 10–ին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ Արտաշես Բաբալյանի և Արշակ Ջամալյանի հետ Թիֆլիսում ստորագրել Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության միջև համաձայնագիր, ըստ որի՝ խորհրդային զորքերը գրավում են վիճելի տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ մինչև դրանց հետագա ճակատագրի վերջնական լուծումը:[73] Այդ ընթացքում, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները՝ Ն. Նարիմանովը և մյուսները, հետևողականորեն իրականացնում էին խորամանկ մի ծրագիր: Արցախ–Ղարաբաղի գրեթե բոլոր ղեկավար պաշտոններում առաջ էին քաշում ազգությամբ ազերիներ, և երկրամասի ղեկավար մարմինների ղեկն առանց աղմուկ–աղաղակի անցնում էր ադրբեջանական իշխանությունների ձեռքը: Դրանում, անկասկած, որոշ դեր խաղացին մի քանի հանգամանքներ: Այդ ժամանակ պատմական Արցախի տարածքը վարչական տեսակետից բաժանված էր Ջեբրայիլի, Շուշիի և Ջիվանշիրի գավառների, որոնք տարածվում էին մինչև Արաքս և Կուր գետերը: Այսպիսով, այդ գավառների դաշտային և լեռնային տարածքները մի ամբողջություն էին կազմում, որտեղ արդեն արցախահայությունը գերակշիռ տոկոս լինել չէր կարող: Եվ հետո, Լեռնային Ղարաբաղի հարցում Նարիմանովի քաղաքականությունը պաշտպանում էին Ա. Միկոյանը, Լ. Միրզոյանը, Հ. Նազարեթյանը, Ա. Կարակոզովը և ուրիշ անհեռատես հայ բոլշևիկ գործիչներ:

Խորհրդային Ադրբեջանի կառավարող ուժերը, առանց որևէ քայլ նահանջելու նախկին մուսավաթական կառավարության քաղաքականությունից, օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում մեծ գումարներ կաշառքներ տալը,ահաբեկման և այլ արգահատելի մեթոդների օգտագործումը: Հենց դա ի նկատի ուներ Գ. Չիչերինը, երբ Վ. Լենինին գրում է, թե Բաքվի խորհրդային իշխանությունը «ցանկանում է փոխհատուցման միջոցով կաշառել ազգայնական միտումներ ունեցող տարրերին» և նրանց միջոցով Ադրբեջանի համար ձեռք բերել այն տարածքները, որոնք հայտարարվում են վիճելի»:[74] Դրա ապացույցն են նաև Ն. Նարիմանովի գործակալ, Ղարաբաղում Ադրբեջանի իշխանության ներկայացուցիչներից Ասադ Կարաևի 1920 թ. հուլիսի 19–ին և 21–ին Գորիսի նահանգային հեղկոմի նախագահին ուղարկած նամակ–հրահանգները: Ասադ Կարաևը չի թաքցնում, որ ադրբեջանական իշխանություններից ստացած 200 միլիոն ռուբլին պետք էր օգտագործեր կաշառելու հայ մարդկանց և նրանց միջոցով իրագործել Ղարաբաղի և Զանգեզուրի հայ բնակչության ինքնապաշտպանական գործողությունների ձախողումը:[75]

Այն օրը, երբ Թիֆլիսում ստորագրվեց հայ–ռուսական ժամանակավոր պայմանագիրը, Փարիզի արվարձան Սևրում կնքվեց մի պայմանագիր, որի տակ ստորագրել էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Թուրքիայի և մի շարք այլ պետությունների ներկայացուցիչները: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը ճանաչվում էր ազատ և անկախ երկիր, Տրապիզոնի վրայով ելք էր ստանում դեպի Սև ծովը, Հայաստանի տարածքը մեծանում էր 72.000 քառակուսի կիլոմետրով:

Այդ պայմանագրից դժգոհ էին մանավանդ Ռուսաստանը և Թուրքիան: Վեր-

ջինս, որտեղ լայն թափ էր ստացել քեմալական շարժումը, ձգտում էր կապ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ: Քեմալականներն իրենց ներկայացնում էին որպես միջազգային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի ակտիվ մասնակից և համաշխարհային հեղափոխության ջատագովը մահմեդական Արևելքում: Մուստաֆա Քեմալը 1920 թ. հուլիսի 1-ին Մոսկվա ուղարկած առաջին ուղերձում խնդրում է իրեն տրամադրել ոսկի, զենք, զինամթերք՝ իբր թե արևմտյան ռազմաճակատում Անտանտի դեմ կռվելու համար:

Քեմալական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանից ստացած ոսկու և զենքի օգնությամբ ստեղծեց ռազմական հզոր ուժ և այն ուղղեց հայ ժողովրդի դեմ: 1920 թ. հունիսի 9-ին Թուրքիան իր արևելյան նահանգներում զորահավաք հայտարարեց և զորքերի հրամանատար նշանակեց դաhիճ Քյազիմ Կարաբեքիրին: Միանգամայն ակնհայտ էր, որ Թուրքիան պատրաստվում էր նոր պատերազմ սկսել հայ ժողովրդի դեմ: Իսկ դա կարող էր իրականացնել ամենից առաջ Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ:

Խորհրդային Ռուսաստանը երկդիմի քաղաքականություն էր վարում: Մի կողմից ձգտում էր իրեն ցույց տալ որպես հայ ժողովրդի բարեկամ, նրա ճակատագրով անհանգստացող, իսկ մյուս կողմից Թուրքիային ուղղում էր Հայաստանի դեմ: Հայաստանի դեմ էին ուղղված նաև մյուս ռեակցիոն ուժերը:[76] Դրա լավագույն ապացույցն է 1920 թ. սեպտեմբերի 1–8-ը Բաքվի Մայիլովի թատրոնում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների համագումարը: Հր. Սիմոնյանը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե այն 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախադուռն էր:[77] Համագումարում, որին մասնակցեցին 37 ազգերի 1891 պատվիրակներ, որոնցից 157-ը հայեր էին, հնչեցին մի շարք հակահայկական ելույթներ, որն ասես քեմալականներին կոչ էր անում արշավանք ձեռնարկել դեպի Հայաստան և ոչնչացնել «իմպերիալիստական Հայաստանը»:[78]

Հայության համար դժվարին այդ ժամանակաշրջանում քեմալական Թուրքիան կատարեց մի քայլ, որի նպատակներից մեկն էր օգնել ադրբեջանական իշխանություններին՝ Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի հարցը լուծելու հօգուտ իրենց: 1920 թ. սեպտեմբերի 28-ին թուրքական զորքերը, զինված Խորհրդային Ռուսաստանից ստացված զենքով, բաղկացած 50 հազար ասկյարներից և սպաներից, ներխուժեցին Հայաստանի Հանրապետության տարածք՝ իրենց ճանապարհին սփռելով մահ ու ավերածություններ: Հայաստան ներխուժած թուրք դահիճները գործում էին իբրև նոր գաղափարներ կրող «կարմիրներ»: Դահիճ Քյազիմ Կարաբեքիրն անձամբ առաջնորդում էր ասկյարների «կարմիր» գնդերը: Դժվար չէ ուղղակի կապ տեսնել Հայաստանի նկատմամբ Բաքվի, Անկարայի և Մոսկվայի վարած քաղաքականության միջև: Ն. Նարիմանովը ժամանակը պատեհ էր համարում «կարմիր թուրքերի» և խորհրդային զինվորների օգնությամբ վերջնականապես տիրանալ Նախիջևանին, Շարուր-Դարալագյազին, Զանգեզուրին և Ղարաբաղին:

Ստեղծված իրադրության մեջ Խորհրդային Ռուսաստանը փորձում էր Հայաստանը փրկելու քայլեր ձեռնարկել: Գ. Չիչերինը 1920 թ. նոյեմբերի 7-ին Բ.



Լեգրանին հաղորդում է. «Թուրքերը հայտարարում են, թե իբրև ուզում են ազատագրել Հայաստանը դաշնակցականներից: Դա խաբեբայություն է»:[79] Մեկ օր անց նա կրկին հեռագրում է Լեգրանին՝ «Հայաստանում կրկնակի խաղ են խաղում»: Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսարը ամեն կերպ փորձում էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Նույնիսկ ցուցում է տրվում զենք չմատակարարել Թուրքիային, եթե չդադարեցնեն ռազմական գործողությունները:[80]

Այնուամենայնիվ, Հայաստանը ծնկի բերվեց, և 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Ալեքսանդր Խատիսյանը ստորագրեց ապօրինի ու ստորացուցիչ պայմանագիր:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Մի քանի օր հետո, դեկտեմբերի 2-ին, համաձայնություն կնքվեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանի և Հայաստանի ներկայացուցիչներ Դրոյի ու Համբարձում Տերտերյանի միջև, որում ոչ մի խոսք չկար Արցախի մասին:

Համաձայնագիրը կազմելու պահին Երևանում հայտնի էին Բաքվում արված Ադրհեղկոմի հայտարարությունն ու ուղարկված հեռագիրը: Սիմոն Վրացյանը, Համբարձում Տերտերյանը և ուրիշներ, որոնք անմիջապես գտնվում էին ջրապտույտի կենտրոնում, այդ մասին լռում են և ոչինչ չեն գրում: Իրոք, այդ օրերին Ղարաբաղի հարցի վերաբերյալ ի՞նչ տեսակետ ունեին Բաքվում, Մոսկվայում և Անկարայում: Մոսկվայում և Անկարայում թերևս պարզ էր. Արցախ-Ղարաբաղը մնում էր Ադրբեջանի կազմում կամ էլ այստեղ հարցը վերջնականապես վճռելու համար պետք էր անցկացնել հանրաքվե: Իսկ Բաքվո՞ւմ: Այստեղ տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ տարբեր մեկնաբանություններ և մոտեցում գոյություն ունեին: Երբ Բաքվում ստացվեց Հայաստանի հեղկոմի հեռագիրը Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու մասին (հեռագիրը ուղարկվել էր Իջևանից), Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30-ի համատեղ նիստում ընդունվեց որոշում, որով Ադրհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին հանձնարարվեց հեղկոմի անունից հռչակագիր կազմել և մատնանշել, որ Խորհրդային Ադրբեջանի ու Խորհրդային Հայաստանի միջև վերանում են բոլոր տարածքային վեճերը: Այդ որոշման հիման վրա կազմվում է հռչակագիր և հեռագրով հաղորդվում Երևան, որը հրապարակվում է «Կոմունիստ» (Երևան, հայերեն) թերթի դեկտեմբերի 7-ի համարում: Ահա այդ հռչակագիրը.

«Ադրհեղկոմի ողջույնը բոլորին, բոլորին....

Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից հայ ժողովրդին հայտարարեք Ադրբեջանի հեղկոմի դեկտեմբերի 30-ի որոշումը. «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, ստանալով ապստամբած գյուղացիների անունից (հղված) ուրախալի լուրը Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանային վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային

Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը համարվում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության մասեր:

Կեցցե Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների եղբայրությունն ու միությունը:

Ադրբեջանի խորհրդային հեղկոմի նախագահ

Նարիմանով

Արտաքին գործոց կոմիսար Հուսեյնով»:

Թվում է, թե ամեն ինչ պարզ է ու հասկանալի. վերջապես Բաքուն հասկացել և հաշտության ձեռք է մեկնել հայ ժողովրդին: Բայց, ի վերջո, պարզվում է, որ Ադրհեղկոմի կողմից այդ քայլը հասարակությանը մոլորության մեջ գցելու միջոց էր:

Ադրբեջանի պատմաբանները, մյուս կարգախոսներն ու պաշտոնական շրջանները,[81] խոսելով Ն. Նարիմանովի ստորագրած հռչակագրի մասին, համառորեն պնդում են, թե թյուրիմացություն է և առնվազն կեղծարարություն, երբ հայ պատմաբանները և քաղաքական գործիչները Նարիմանովյան հռչակագրի մեջ տեղեկություն են տեսնում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին տալու վերաբերյալ: Ադրբեջանի պատմաբանների և մյուս կարգախոսների կողմից «պատմական ճշմարտությունը բացահայտելու» այդ քայլերը մերկացվել են հայ պատմաբանների կողմից:[82] Չնայած դրան, նպատակահարմար ենք գտնում որոշ պարզաբանումներ կատարել:

Դ. Գուլիևի խմբագրությամբ հրապարակված վերոհիշյալ «Документы и материалы...» փաստաթղթերի ժողովածուում զետեղված Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի 1920 թ. նոյեմբերի 30–ին տեղի ունեցած նիստի (ներկա էին Նարիմանովը, Կամինսկին, Ստասովան, Օրջոնիկիձեն, Կասումովը, Կարաևը, Սարգիսը, Եգորովը, Հուսեյնովը և Սերեբրովսկին) արձանագրության մեջ մասնակիորեն ասված է, թե խորհրդի և հեղկոմի անունից հայկական կառավարությանը դիմել են հռչակագրով և նշել, որ Զանգեզուրը հայտարարվում է Հայաստանի տարածք, իսկ Ղարաբաղի լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունքը: Հռչակագրի հրապարակումը հանձնարարվեց Նարիմանովին: Ապա մեջ է բերվում դեկտեմբերի 1–ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում Ն Նարիմանովի և Ս. Օրջոնիկիձեի ելույթները: Նարիմանովի ելույթում ասված է, թե «Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լրիվ իրավունքը» և ոչ մի խոսք Զանգեզուրի ու Նախիջևանի մասին: Մինչդեռ Ս. Օրջոնիկիձեն «պատմական իրողություն է համարում» Խորհրդային Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի տարածքներ ճանաչելու փաստը:[83] Այստեղ զետեղված է նաև Ա. Նազարեթյանի և Ս. Օրջոնիկիձեի հեռախոսազրույցը, որտեղ վերջինս ասում է, թե «Լեռնային Ղարաբաղին տրվում է ինքնորոշման իրավունքը»,[84] իսկ փաստաթղթերի ժողովածուում զետեղված է «Կոմունիստում» տպագրված վերոհիշյալ հռչակագիրը և դեկտեմբերի 2–ին Բաքվի «Կոմունիստում» (ռուսերեն) տպագրված հռչակագրի տեքստը, որտեղ ասված է, թե Զանգեզուրն ու Նախիջևանը հանդիսանում են



Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ «Լեռնային Ղարաբաղի աշխատավոր հայ գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լրիվ իրավունքը»: Այդ առթիվ հրապարակված փաստաթղթերը՝ Բաքվի խորհրդի նիստում Օրջոնիկիձեի զեկուցումից բերված հատվածում Ն. Նարիմանովի ելույթը, որտեղ միաձայնությամբ ասված է. «Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը ինքնորոշման լրիվ իրավունքը» տալու մասին, Վ. Լենինին և Ի.Ստալինին դեկտեմբերի 2–ին Ս.Օրջոնիկիձեի ուղարկած հեռագիրը՝ Ադրբեջանի որոշումը Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի տարածքներ ճանաչելու մասին, Ի. Ստալինի հոդվածը «Պրավդայում» (դեկտեմբերի 4) «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը» վերտառությամբ, որտեղ ասված է. «Դեկտեմբերի 1–ին Խորհրդային Ադրբեջանը հոժարակամ հրաժարվում է վիճելի գավառներից և հայտարարում է Զանգեզուրը, Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին»,[85] Մոսկվայի ռադիոյի դեկտեմբերի 5–ի, Վրաստանի հեռագրական գործակալության և Վրաստանում ՌԽՖՍՀ ներկայացուցչության առընթեր մամուլի բյուրոյի դեկտեմբերի 5–ի հաղորդումները՝ Ադրբեջանի կողմից Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Հայաստանին զիջելու մասին, հակառակն են ապացուցում:

Այս բոլոր նյութերը դնելով կողք կողքի և ուշադիր ուսումնասիրելով՝ հանգում ենք հետևյալին. Ադրբեջանցի պատմաբաններն իրենց եզրակացությունների համար հիմք են ընդունում Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում Ն. Նարիմանովի արտասանած ճառը և ընթերցած հռչակագիրը, որտեղ ոչ մի խոսք չկա Լեռնային Ղարաբաղը Հայաստանին հանձնելու մասին, իսկ հայ պատմաբաններն իրենց եզրակացությունների համար հիմք են ընդունում Բաքվի խորհրդի նիստում դեկտեմբերի 1–ին Ս. Օրջոնիկիձեի ելույթն ու դեկտեմբերի 7–ին «Կոմունիստ» թերթում հրապարակված վերոհիշյալ հռչակագիրը, որտեղ ասված է, թե Լեռնային Ղարաբաղը ճանաչվում է Խորհրդային Հայաստանի տարածք:

«Կոմունիստում» հրապարակված տեքստից երևում է, որ հեռագիրը Բաքվից ուղարկվել է նոյեմբերի 30–ին: Երևանում ո՞վ է ստացել հեռագիրը և հանձնել «Կոմունիստի» խմբագրությանը, չէ՞ որ հեղկոմը գտնվում էր Իջևան–Երևան ճանապարհին, որտե՞ղ է պահվում Երևանում ստացված հեռագրի տեքստը: Հետաքրքիրն այն է, որ Ա. Վիրաբյանը և Օ. Բալիկյանը «Բանբեր Հայաստանի արխիվներում» (դ 2, 1989) և թե «Нагорный Карабах...» փաստաթղթերի, ինչպես և անցյալում հրապարակված համանման ժողովածուներում Բաքվից ստացված հռչակագրի սկզբնատեքստը ցույց են տալիս «Կոմունիստը», մինչդեռ Թ. Քոչարլին հուշում է հետևյալ սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.80, թ.1. այնինչ այդ ֆոնդի նշված տեղում նման ոչ մի փաստաթուղթ չկա: Քոչարլին բացահայտորեն ստում է: Եթե հեռագիրն իրոք ուղարկվել է նոյեմբերի 30–ին, որտեղ շեշտված է Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի տարածքներ ճանաչելու մասին, ապա ստացվում է, որ դեկտեմբերի 30–ին տեղի ունեցած Ադրկոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և

կազմբյուրոյի միացյալ նիստի արձանագրությունը բացահայտորեն կեղծվել է. Ս. Օրջոնիկիձեն, որը մասնակցել է այդ նիստին, չէր կարող, եթե Լեռնային Ղարաբաղը խորհրդային Հայաստանի տարածք ճանաչելու մասին խոսք չլիներ, հաջորդ օրը Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում հրապարակայնորեն հայտարարել և Մոսկվա հաղորդել, թե խորհրդային Ադրբեջանը Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչում է խորհրդային Հայաստանի տարածքներ: Մեր կարծիքով, իրողությունը եղել է այսպես. Ադրկոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի նոյեմբերի 30–ի համատեղ նիստը որոշել է Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչել խորհրդային Հայաստանի տարածքներ և Ադրհեղկոմի նախագահ Նարիմանովին հանձնարարել է այդ մասին կազմել հռչակագիր ու հաղորդել Երևան: Նիստից հետո կազմվել է հռչակագիրը, և անմիջապես հաղորդվել: Այդ մասին տեղյակ էր Ս. Օրջոնիկիձեն: Սակայն հետո տեղի է ունեցել Բարդուղիմեոսյան գիշեր (այդպիսի մի գիշեր էլ տեղի է ունեցել հետո, 1921 թ. հունիսի 5–ին, Թիֆլիսում): Ն. Նարիմանովը (անշուշտ ոչ մենակ) խմբագրել է հռչակագիրը և վերոհիշյալ որոշմամբ, խորհրդային Հայաստանի տարածք ճանաչված Լեռնային Ղարաբաղի բաժինը փոխել և ձևակերպել է նրան «ինքնորոշման լրիվ իրավունք տվող» արտահայտությամբ: Նա այդպես էլ ընթերցել է Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում և դեկտեմբերի 2–ին ու 3–ին հրապարակում «Կոմունիստ» և «Բակինսկի ռաբոչի» թերթերում: Այստեղ մի միտք ևս. երեք–չորս օր առաջ Բաքվում տեղի ունեցած այդ իրադարձությունների մասին «Կոմունիստը» չէր կարող չիմանալ, մանավանդ որ, արդեն Բաքվից Երևան էր ժամանել Բ. Լեգրանը և իր ձեռքը վերցրել Հայաստանի խորհրդայնացման ղեկը: Այդ դեպքում «Կոմունիստը» ինչո՞ւ պետք է հրապարակեր հռչակագիրը, եթե կասկածեր նրա անճշտությանը:

Այնուամենայնիվ, համամիտ ենք Հրաչիկ Սիմոնյանի, Լենդրուշ Խուրշուդյանի, Հրանտ Ավետիսյանի և Բագրատ Ուլուբաբյանի հետ, որոնք նշում են, թե Ն. Նարիմանովի ստորագրած և Երևան հաղորդված հռչակագիրը կեղծվել է հենց այդ նույն Ն. Նարիմանովի ձեռքով՝ թյուրիմացություն ստեղծելով սկզբնաղբյուրներում:

Հետագա իրադարձությունները համոզեցին, որ Ն. Նարիմանովը բոլոր դեպքերում հավատարիմ է մնացել ինքն իրեն, և Բաքվում տեղի ունեցած հանդիսությունների ժամանակ նրա արած հայտարարությունը սոսկ միջոց էր մոլորեցնելու հասարակական կարծիքը և միջոց շահելու, մինչև որ կգտներ նոր գործելակերպ: Լևոն Մկրտչյանը նկատել է, որ «պատահածը պարզապես հասարակ աչքակապություն և խաբեություն է, Հայաստանի խորհրդայնացման ընթացքը արհեստականորեն դյուրացնելու համար»:[86]

1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին Հայաստանի ներքին և արտաքին լարված կացությունը հնարավորություն չտվեց գործնական քայլերի դիմելու՝ հայկական այն հողերը, որոնք Ադրհեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30–ի հռչակագրով Հայաստանի մաս հռչակվեցին, Հայաստանի հետ վերամիավորելու ուղղությամբ: Անժխտելի է նաև այն, որ Հայաստանում իշխանության գլուխ անցած բոլշևիկները անհեռատեսություն ցուցաբերեցին և այդ ուղղությամբ ոչինչ չարեցին:

Օգտագործելով պահը, երբ համաշխարհային հեղափոխությունը ամեն գնով առաջ տանելու կողմնակիցները դեպի մուսուլմանական Արևելք կողմնորոշվեցին և քաղաքական այդ նոր հաշվարկում գլխավոր դերը հատկացրին քեմալական Թուրքիային, Ն. Նարիմանովը եռանդուն գործունեություն ծավալեց իր իսկ հրապարակած հռչակագրի սկզբունքներին հակառակ՝ ամեն ինչ անելով, որպեսզի Հայաստանից հնարավորին չափ տարածքային զիջումներ արվեն, հօգուտ Թուրքիայի և Ադրբեջանի: Գաղտագողի այդ աշխատանքը, անշուշտ, իր ներգործությունն ունեցավ այն գործիչների վրա, որոնք պատրաստվում էին քեմալական Թուրքիայի հետ Մոսկվայում կայանալիք բանակցություններին:

Խորհրդաթուրքական պայմանագրի նախագիծը, որը մշակվել էր դեռևս 1920 թ. հուլիս–օգոստոսին տեղի ունեցած ռուս–թուրքական առաջին կոնֆերանսի ժամանակ, վերանայելու նպատակով ստեղծված քաղաքական, իրավական և խմբագրական հանձնաժողովները լուրջ դժվարությունների հանդիպեցին մանավանդ թուրքական կողմի ներկայացրած տարածքային պահանջների քննարկման ժամանակ: Թուրքերը պահանջում էին Կարսի և Բաթումի մարզերը, Սուրմալուի գավառը և Ախալցխայի ու Ախալքալաքի շրջանները: Քեմալականների ուշադրության կենտրոնում էր գտնվում առանձնապես Նախիջևանը, որտեղ մինչ այդ թուրքերի և մուսավաթականների մեղքով կազմակերպվել էին ազգամիջյան ընդհարումներ: Դրանց հետևանքով զգալի թվով հայեր ստիպված էին հեռանալ հայրենի երկրամասից: Այնուամենայնիվ, Նախիջևանը՝ հայկական այդ հինավուրց տարածքը, Հայաստանի հեղկոմի հռչակագրի համաձայն, ստանում էր ինքնորոշման իրավունք:

Կոնֆերանսը, որը սկսվել էր 1921 թ. փետրվարի 26–ին, մարտի 10–ին սկսեց քննարկել սահմանների հարցը: Թուրքական կողմից մասնակցում էին Յուսուֆ Քեմալ բեյը, Ռզա Նուրի բեյը և Ալի Փաուդ փաշան, իսկ Խորհրդային Ռուսաստանի կողմից՝ Գ. Չիչերինը և Ջելալեդդին Կորխմազովը: Նիստում նախագահում էր Յուսուֆ Քեմալ բեյը: Եվ այսպես, քննարկվում էր խորհրդային Հայաստանի սահմանների, նրա տարածքի հետ ուղղակիորեն առնչվող հարցը, իսկ նիստին չէր մասնակցում Հայաստանի ներկայացուցիչը: Ընդհանրապես չթույլատրվեց կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու խորհրդային Հայաստանի պատվիրակությունը: Մինչ այդ Մոսկվա էր ժամանել Հայաստանի պատվիրակությունը Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ, որը պիտի մասնակցեր 1921 թ. հունվարի 18–ին խորհրդաթուրքական սկսվելիք բանակցություններին: Բանակցություններից առաջ նա Գ. Չիչերինին և նրա տեղակալ Կարախանին տեղեկացնում է կոնֆերանսին ներկայացվելիք փաստաթղթերի մասին: Սպասվելիք առճակատումից խուսափելու համար խորհրդային Ռուսաստանի և Թյուրքիայի դիվանագետներն անհրաժեշտ գտան կոնֆերանսը դարձնել ռուս–թուրքական, իսկ Լ. Կարախանը Հայաստանի պատվիրակությունից ինչ–ինչ նպատակով վերցնում է փաս-

տաքղեքերի ժողովածուն, որը վերադարձվում է ռուս–թուրքական պայմանագիրը ստորագրվելուց 25 օր հետո:[87]

1921 թ. մարտի 16–ին, կնքված ռուս–թուրքական պայմանագրի համաձայն Կարսի մարզից, Սուրմալուից բացի, Հայաստանից անջատվեց նաև Նախիջևանը, 5,5 հազար քառակուսի կիլոմետր տարածքով, Թուրքիայի որոշած սահմանագծով, երրորդ կողմին այսինքն՝ Հայաստանին չվերադարձնելու պայմանով: Պայմանագրի երրորդ հոդվածում գրված է. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ այս պայմանագրի 1–ին (գ) հավելվածի մեջ նշված սահմաններով կազմի ինքնավար շրջան՝ Ադրբեջանի խնամակալության տակ, պայմանով, որ Ադրբեջանը այդ խնամակալությունը երրորդ պետությանը չզիջի»:[88] Եվ այսպես՝ Հայաստանի տարածքից խլվեց Նախիջևանը և դարձավ ինքնավար միավոր Ադրբեջանի կազմում: Իսկ սա ոչ միայն միջազգային նորմերի կոպիտ ոտնահարում էր, այլ անբարո արարք հայ ժողովրդի նկատմամբ, որում մեծ մեղք ուներ ազգությունների կոմիսարիատը՝ ի դեմս Ի. Ստալինի, Սկաչկոյի և ուրիշների:

Թուրքիայի պատվիրակության անդամ, Մոսկվայում Թուրքիայի դեսպան գեներալ Ալի Ֆաուդ Ջեբեսոյը իր հուշերում գրում է, թե Ստալինը իրենց վստահեցրեց, որ կոնֆերանսում հայկական հարց չի քննարկվի, որովհետև «Դուք Հայաստանի հարցը ինքներդ լուծեցիք: Եթե դեռ լուծվելիք ինչ–որ բան կա, դա ևս վճռեք ինքներդ, բայց վերջնական ժամկետի մասին մեզ տեղյակ պահեք»:[89]

Նախիջևանի հարցը վճռելուց հետո հերթը հասավ Ղարաբաղին: Այդ առթիվ վիճաբանությունները կրկին բորբոքվեցին 1921 թ. հունիս և հուլիս ամիսներին: Միանգամայն ակնհայտ էր, որ Ն. Նարիմանովը և Ադրբեջանի մյուս պարագլուխները հետզհետե հրաժարվում էին 1920 թ. նոյեմբերի 30–ի հռչակագրից: Դա բացահայտվում է մանավանդ ռուս–թուրքական պայմանագիրը ստորագրվելուց և Նախիջևանին տիրանալուց հետո: Ն. Նարիմանովը դիմում է բոլոր տեսակի խարդավանքների, միայն թե ձեռք գցի Արցախն ու Զանգեզուրը ևս: Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների հարցը, որպես կույր աղիք, իրեն զգացնել էր տալիս: Որպեսզի այդ հարցը վերջնականապես վճռվի, 1921 թ. մայիսի 2–ին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի բյուրոյի պլենումում որոշում է ընդունվում անդրկովկասյան երեք խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչներից Ս. Կիրովի նախագահությամբ ստեղծել հանձնաժողով, որը պետք էր ուսումնասիրեր այդ հանրապետությունների սահմանների հարցը: Հանձնաժողովի մեջ մտցվեցին Ա.Սվանիձեն և Ս. Թոդրիան՝ Վրաստանից, Մ.Հուսեյնովը, Մ. Հաջինսկին և Ա. Ռասուլզադեն՝ Ադրբեջանից, Ալ. Բեկզադյանը՝ Հայաստանից:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի մեկ ներկայացուցչի դիմաց հանձնաժողովում գործելու էին Ադրբեջանի երեք ներկայացուցիչներ: Կոպտորեն խախտվում էր հանձնախմբի համամասնական ներկայացուցչության սկզբունքը:

Մայիսի կեսերին Ադրբեջանի կառավարությունը դիմում էր ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի բյուրոյին և խնդիր դնում միջոցներ ձեռնարկել ու ճնշել Զանգեզուրում բռնկված ազգային–ազատագրական պայքարը, որի



գլուխ էր կանգնած Գարեգին Նժդեհը: Այդ պայքարը Ադրբեջանին անհանգստացնում էր, քանի որ Զանգեզուրի գավառներին սահմանակից Քրդստանում ակտիվացել էին հակախորհրդային ուժերի գործողությունները: 1921 թ. հունիսի 3–ին տեղի ունեցած Կովկասյան բյուրոյի պլենումի նիստը, քննարկելով զանգեզուրյան ապստամբությունն արագորեն վերացնելու հարցը, ընդունեց որոշում, որի հինգերորդ կետով Կովկասյան բյուրոյի պլենումը հաստատում է, որ Լեռնային Ղարաբաղը պատկանում է Հայաստանին: Նաև նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի խորհրդային Հայաստանին պատկանելությունը պետք է նշվի Հայաստանի կառավարության հատուկ հռչակագրով:[90] Իսկ մինչ այդ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը, լսելով Լեռնային Ղարաբաղի դրությունը , որոշում է այնտեղ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ նշանակել Հակոբ Հովհաննիսյանին՝ հեռագրով նրան Բաքվից կանչելով Թիֆլիս, որպեսզի համապատասխան հրահանգ ստանա Ալ. Բեկզադյանից:[91] Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, կատարելով 1921 թ. հունիսի 3–ի Կովկասյան բյուրոյի վերոհիշյալ որոշումը, հունիսի 15–ին կրկին լսելով Լեռնային Ղարաբաղի մասին հարցը, որոշում է հրապարակել հռչակագիր Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու մասին: Միևնույն ժամանակ որոշվեց որպես արտակարգ լիազոր ուղարկել Ասքանազ Մռավյանին և նրա հետ մի խումբ ընկերներ՝ Հակոբ Հովհաննիսյան, Տեր–Սիմոնյան, Փիրումյան և ուրիշներ:[92] Իսկ մինչ այդ, հունիսի 12–ին, Հայաստանի ժողկոմխորհը ընդունել էր հետևյալ հայտարարությունը.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների մեջ եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային
Հանրապետության ժողկոմների խորհրդի
նախագահ՝ Ա.Մյասնիկյան (Ալ. Մարտունի)
Քարտուղար՝ Մ. Ղարաբեկյան
1921 թ. հունիսի 12 Երևան»:[93]

Հունիսի 25–27–ին Թիֆլիսում տեղի է ունենում երեք հանրապետությունների սահմանների հարցով զբաղվող վերոհիշյալ հանձնաժողովի նիստը, որտեղ հունիսի 25–ին հանդես գալով, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանը նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ ցարական իշխանության օրոք Անդրկովկասում եղած վարչատարածքային բաժանումները չէր բխում երկրամասի ազգերի նորմալ զարգացման շահերից, այլ ուղղված էին գաղութային իրավիճակը այնտեղ պահպանելու նպատակին: Ալ. Բեկզադյանը հանձնաժողովի անդամներին առաջարկեց «հանուն ընդհանուր համերաշխության, հանուն մեկ անգամ ընդմիշտ ամենաանկեղծ բարեկամական փոխհարաբերությունների հաստատման»անել որոշ տարածքային զիջումներ, ընդ որում, խիտ հայ բնակչություն

ունեցող շրջաններում:[94] Խոսքը վերաբերում էր Ախալքալաքի գավառին, որտեղ հայերը կազմում էին բնակչության 72 տոկոսը, Լոռվա չեզոք գոտուն և Լեռնային Ղարաբաղին, որտեղ հայերը կազմում էին 94 տոկոսը: Ալ. Բեկզադյանը նաև նշեց, որ ինքը մայիսին եղել է Մոսկվայում, որտեղ Ալ. Մյասնիկյանի հետ հանդիպել են Ի. Ստալինի հետ, որը զրույցի ընթացքում կիսել է այն տեսակետը, որն ինքն այստեղ շարադրում է: Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները տարածքային փոփոխություններին դեմ արտահայտվեցին: Նրանց պաշտպանեց հանձնաժողովի նախագահ Ս. Կիրովը: Նրանք պատճառաբանում էին, թե իբր սահմանային փոփոխությունները Վրաստանում և Ադրբեջանում առաջ կբերեն անկառավարելի պրոցեսներ, ազգայնական հեղափոխությունը բացահայտ պայքար կսկսի խորհրդային իշխանության դեմ: Քանի որ հանձնաժողովում վիճաբանությունները ավելի էին սրվում, հունիսի 26–ին նիստին ստիպված եղան մասնակցել Ս. Օրջոնիկիձեն, Մ. Օրեխելաշվիլին և Շ. Էլիվան: Կողմերը, մանավանդ Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները, ընդհանուր լեզու չգտան: Իսկ խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը բողոք հայտնելով հայտարարեց, որ ստիպված է հարցը փոխանցել ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի լուծմանը:

Ինչպես նշվեց, Աս. Մռավյանը նշանակվել էր խորհրդային Հայաստանի արտակարգ լիազոր Լեռնային Ղարաբաղում: Այդ օրերին նա գտնվում էր Թիֆլիսում, ուր մեկնել էր մասնակցելու Ս. Օրջոնիկիձեի մոտ տեղի ունենալիք խորհրդակցությանը: Խորհրդակցության էին եկել նաև ադրբեջանական ԽՍՀ Կենտգործկոմի նախագահ Մ. Հաջիևը, արտաքին գործերի ժողկոմ Մ. Հուսեյնովը, ռազմածովային ժողկոմ Ալիհեյդար Կարաևը: Երբ ավարտվեց խորհրդակցությունը, Ս. Օրջոնիկիձեն Ա. Մռավյանին խորհուրդ տվեց՝ իբրև Հայաստանի կառավարության արտակարգ լիազոր, Թիֆլիսից մեկնել Լեռնային Ղարաբաղ և նախապատրաստել գործնականում իրականացնելու Կովկասյան բյուրոյի պլենումի հունիսի 3–ի որոշումը:

Հունիսի 25–ին, մեկնելուց մեկ ժամ առաջ, Ա. Մռավյանն իմանում է, որ իր հետ Լեռնային Ղարաբաղ պետք է մեկնի նաև Ալիհեյդար Կարաևը: Երբ Թիֆլիս–Բաքու գնացքով նրանք հասնում են Եվլախ կայարան, Ա. Մռավյանն ու Ա. Կարաևն իջնում են վագոնից: Ա. Մռավյանը շտապում էր ավտոմեքենայով հասնել Լեռնային Ղարաբաղ, մինչդեռ Ա. Կարաևը խորհուրդ է տալիս փոքր–ինչ հանգիստ առնել Եվլախում: Հետո Ա. Կարաևն ասում է, թե Լեռնային Ղարաբաղ չեն գնալու: Ա. Մռավյանը խիստ զարմանում է: Ա. Կարաևը բացատրում է, որ դեռ հունիսի 24–ի երեկոյան Մ. Հուսեյնովը Թիֆլիսից կապվել է Բաքվի հետ և հեռախոսով Ն. Նարիմանովին հայտնել Ա. Մռավյանի Լեռնային Ղարաբաղ մեկնելու մասին: Ն. Նարիմանովն ասել է, թե Լեռնային Ղարաբաղի հարցը պարզելու համար Ա. Մռավյանն ու Ա. Կարաևը ոչ թե պետք է այնտեղ մեկնեն, այլ գան Բաքու: Ա. Մռավյանը հրաժարվում է մեկնել Բաքու և այդ նույն օրը, հունիսի 25–ին, Ս. Օրջոնիկիձեին ուղարկում է մի երկտող, որի մեջ գրում է. «Լեռնային Ղարաբաղի հարցի ամենաարագ ու աներկիմաստ լուծումն ունի հսկայական կարևորության քաղաքական նշանակություն և վճռա-



կան գործոն կհանդիսանա Զանգեզուրի հարցը լուծելիս... Հետագա ձգձգումը լավ հաղթաթուղթ է մեր թշնամիների ձեռքում»:[95]

Ա. Մռավյանը շարունակում է ճանապարհը դեպի Ղարաբաղ,[96] որտեղ նրան ընդունում են մեծ ցնծությամբ: Շուշիում և այլուր տեղի են ունենում միտինգներ: Մի քանի օր անց, երբ Ա. Մռավյանը Ղարաբաղից վերադարձել էր Թիֆլիս, «Կարմիր աստղ» թերթը տպագրում է նրա հետևյալ հայտարարությունը. «Համաձայն Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի հայտարարության, Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի անբաժան մասն է դառնում: Մեր միսիան դեպի Ղարաբաղ նպատակ ունի այդ կցումը մեր երկրին դարձնել իրական և անմիջապես ներկայությամբ կանոնավորել Ղարաբաղի ներքին կյանքը: Միաժամանակ քաղաքական հսկողություն ունենալ Զանգեզուրի ուղղությամբ գործող զինվորական ուժերի վրա: Ղարաբաղն ու Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի զարդը կլինի, որովհետև եթե մեր երկրի անբաժան մասերի բանվորներն ու գյուղացիները հարկավոր հանգիստ ստանան, միջոցներ կտրվեն նրանց զբաղվելու շինարարական խաղաղ աշխատանքով, ապա կուլտուրական, տնտեսական զարգացման մեծ կարևորություններ են բացվում մեր այդ երկրամասի առջև»:[97]

Մինչ Ա. Մռավյանը վայելում էր արցախահայության ջերմությունը և կիսում նրանց ուրախությունը, Թիֆլիսում և Բաքվում իրադարձությունները զարգանում էին այլ կերպ: Նրա վերոհիշյալ գրությունը համընկնում է անդրկովկասյան հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովի քննարկման հետ: Հունիսի 26–ին, Մռավյանի գրությունը ստանալու օրը, Ս. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը Թիֆլիսից շտապ հեռագրում են Բաքու՝ Ն. Նարիմանովին. «Հայաստանի հետ սահմանների որոշման մասին բանակցությունների ընդմիջումը Զանգեզուրում գոյություն ունեցող իրադրության մեջ չափազանց աննպաստ տպավորություն կգործի: Ուստի Հուսեյնովի մեկնումը հետաձգել ենք մինչև հունիսի 27–ը: Խնդրում ենք արտակարգ կերպով հրավիրել քաղբյուրո և ժողկոմխորհ ու լուծել Ղարաբաղի հարցը այն հաշվով, որ վաղը՝ հունիսի 27–ին, կարելի լինի ավարտել բանակցությունները: Եթե հետաքրքրվում ես մեր կարծիքով, ապա այն հետևյալն է. ելնելով բոլոր տարածայնությունների վերջնական լուծման և իսկական բարեկամական հարաբերությունների հաստատման շահերից, Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս անհրաժեշտ է ղեկավարվել այսպիսի մի սկզբունքով. ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, հավասարապես ոչ մի մուսուլմանական գյուղ չպետք է միացնել Հայաստանին»:[98]

Սակայն Ն. Նարիմանովն ամբողջովին բացեց խաղաքարտերը և պնդեց, թե Լեռնային Ղարաբաղը պետք է մնա Ադրբեջանի կազմում: Հունիսի 27–ի առավոտյան տեղի ունեցավ Ադրկոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որը որոշեց Լեռնային Ղարաբաղը չհանձնել Հայաստանին՝ իբրև այդ ապօրինի որոշման հիմնավորում մեջտեղ բերելով այսպես կոչված տնտեսական գործոնը: Որոշման առաջին կետում ասված էր. «Ամբողջությամբ վերցրած Լեռնային Ղարաբաղի հարցը ընկ. Բեկզադյանի առաջադ-

րած ձևով, Քաղ. և Կազմբյուրոն անընդունելի են համարում, նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի անվերապահ տնտեսական հակվածությունը դեպի Ադրբեջան և հարցը պետք է լուծվի հենց այդ իմաստով»,[99] հաշվի չէին առնում մյուս կարևոր հանգամանքները՝ Ղարաբաղի և Զանգեզուրի աշխարհագրական միասնությունը, բնակչության ազգային կազմը, մշակույթը, սովորույթներն ու կենցաղը, նրա բուռն ձգտումը միավորվելու մայր Հայաստանի հետ և այլն: Ն. Նարիմանովին հանձնարարվում է Թիֆլիս հաղորդել Լեռնային Ղրաբաղի վերաբերյալ Ադրկոմկուսի Կենտկոմի կազմբյուրոյի և քաղբյուրոյի կարծիքը: Ադրժողկոմխորհը որոշում է Լեռնային Ղարաբաղի հարցը թողնել բաց, կազմել եռյակ հանձնաժողով (Բ.Շախտախտինսկի, Վեզիրով և Ալին), որը պետք է ծանոթանար նյութերին ու մանրամասն զեկուցեր ժողկոմխորհին: Վերջինս միևնույն ժամանակ որոշեց հեռագիր ուղարկել Ս. Օրջոնիկիձեին և Ալ. Մյասնիկյանին՝ պահանջելով ելնելով մի շարք քաղաքական նկատառումներից և մինչև Ադրբեջանական ԽՍՀ ժողկոմխորհում հարցի վերջնական լուծումը, չեղյալ հայտարարել Ա. Մռավյանի լիազորությունները և անհապաղ նրան հետ կանչել:[100]

Հունիսի 27–ի Ադրբեջանի ժողկոմխորհի նիստից հետո Ն. Նարիմանովը ուղիղ գծով կապվում է Թիֆլիսում գտնվող Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Մ. Հուսեյնովի հետ և նրան հաղորդում, որ Լեռնային Ղարաբաղը պետք է միացվի Ադրբեջանին: Նա սպառնում է, որ հակառակ դեպքում հնարավոր հետևանքների համար ինքը հրաժարվում է պատասխանատվությունից: Այդ խոսակցության մասին Հուսեյնովը անմիջապես տեղյակ է պահում Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավարությանը: Այդ նույն 27–ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահության նիստը, որին ներկա էին Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը և Յու. Ֆիգատները, լսեց Մ. Հուսեյնովի հաղորդումը Ն. Նարիմանովի հետ ունեցած հեռախոսային խոսակցության մասին և կրկնեց վերջինիս սպառնալիքը, որ Ադրբեջանի պահանջը չկատարելու դեպքում նրա ղեկավարությունը հրաժարական կտա, որը կհանգեցնի անկանխատեսելի մեծ բարդությունների:

Ն. Նարիմանովի կատարած քայլը, անշուշտ, իր բացասական հետևանքն ունեցավ: Ստեղծվեց այնպիսի վիճակ, որից դուրս գալու համար Կովբյուրոյի նախագահությունը գտավ, որ պետք է հրավիրել ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի արտահերթ պլենում Ն. Նարիմանովի և Ա. Մյասնիկյանի մասնակցությամբ: Բաքու և Երևան ուղարկված հեռագրերում նշվում էր որ արտահերթ նիստի օրակարգում հանրապետությունների սահմանազատման հարցն է:

Ալ. Մյասնիկյանը և Ն. Նարիմանովը շտապ մեկնում են Թիֆլիս: Սակայն պլենումը երեք օրով հետաձգվում է, որովհետև Նալչիկում գտնվող Ի. Ստալինին, Օրջոնիկիձեն տեղյակ էր պահել իրավիճակի մասին և սպասում էր նրա հեղինակավոր միջամտությանը: Ի. Ստալինը մեկնում է Թիֆլիս՝ մասնակցելու պլենումին: Այն տեղի ունեցավ հուլիսի 2–7–ը: Հուլիսի 4–ի երեկոյան նիստում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը զբաղվեց Լեռնային Ղարաբաղի հարցով: Նիստին մասնակցում էին Կովբյուրոյի անդամները, Ս. Օրջոնի-



կիձեն, Ֆ. Մախարաձեն, Ն. Նարիմանովը, Մ. Օրախելաշվիլին. Յու. Ֆիգատները Ալ. Մյասնիկյանը, Ս. Կիրովը և Հ. Նազարեթյանը: Նիստին ներկա էր նաև ազգությունների գործերի կոմիսար Ի. Ստալինը: Նիստի օրակարգում դրված էր «Ղարաբաղի» և ոչ թե Լեռնային Ղարաբաղի հարցը: Այստեղից պարզ է, որ Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճաբանության խնդիր էր Ղարաբաղի Լեռնային և Դաշտային մասերի հարցը: Ամբողջ Ղարաբաղի վերաբերյալ վիճաբանություններից հետո քվեարկության են դրվում չորս առաջարկություններ:

1. Ղարաբաղը ամբողջությամբ թողնել Ադրբբեջանական ԽՍՀ սահմաններում (կողմ են քվեարկում Ն. Նարիմանովը, Ֆ. Մախարաձեն և Հ. Նազարեթյանը, դեմ են քվեարկում Ս. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանը, Ս. Կիրովը, Յու. Ֆիգատները: Բյուրոյի անդամ Մ. Օրախելաշվիլին ինչ–ինչ պատճառներով դուրս էր եկել նիստի սրահից և քվեարկությանը չէր մասնակցում):
2. Հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում՝ ողջ բնակչության, ինչպես հայերի, այնպես էլ մուսուլմանների մասնակցությամբ (կողմ են քվեարկում Ն. Նարիմանովը և Ֆ. Մախարաձեն, դեմ են քվերարկում մյուս հինգ անդամները):
3. Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Հայաստանի կազմի մեջ (կողմ են քվեարկում Ս. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանը, Յու. Ֆիգատները և Ս. Կիրովը, դեմ են քվեարկում Ֆ. Մախարաձեն, Ն. Նարիմանովը, Հ. Նազարեթյանը):
4. Հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում, այն էլ հայերի շրջանում (կողմ են քվեարկում Ս. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանը, Յու. Ֆիգատները, Ս. Կիրովը, Հ. Նազարեթյանը, դեմ են քվեարկում Ն. Նարիմանովը և Ֆ. Մախարաձեն):

Քվեարկությունից հետո ընդունվում է հետևյալ որոշումը. «Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայաստանի ԽՍՀ կազմի մեջ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում»:[101]

Որոշումից պարզ է, որ Լեռնային Ղարաբաղը նախապես մտցվում էր Հայաստանի ԽՍՀ կազմի մեջ, նոր միայն անցկացվելու էր հանրաքվե:

Ն. Նարիմանովը, տեսնելով, որ հարցը լուծվում է արցախահայության օգտին, հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ. «Նկատի ունենալով այն կարևորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ ենք համարում նրա վերջնական լուծումը փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ»:[102] Այս հայտարարության համաձայն Կովբյուրոյի պլենումը ընդունում է նոր որոշում՝ հարցի վերջնական լուծումը փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ:[103]

Այդ գիշերը թե ինչ կատարվեց, ով ում հետ հանդիպեց, ոչինչ հայտնի չէ, բայց մի բան պարզ է, որ Ն. Նարիմանովը եռուն աշխատանք էր տարել: Հուլիսի 5–ի առավոտյան կրկին հավաքվում են բյուրոյի բոլոր ութ անդամները: Նիստին ներկա էր նաև Ի. Ստալինը: Ս. Օրջոնիկիձեն և Հ. Նազարեթյանը բարձրացրին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին հուլիսի 4–ին ընդունած որոշումը վերանայելու հարցը: Առանց որևէ վիճաբանության ներկա-

յացվում է մի նախագիծ, որն առանց քվեարկության դնելու, ընդունվում է անփոփոխ: Ահա այդ փաստաթուղթը.

ա. Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՅ–ի սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի կազմի մեջ:

բ. Յանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը:

գ. Յանձնարարել Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահությանը՝ բանակցել Յայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի պաշտոնի թեկնածության շուրջը:

դ. Լեռնային Ղարաբաղի ինքնավարության շրջանակները պետք է որոշի Ադրբեջանի Կենտկոմը և ներկայացնի Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը:»[104]

Այսպիսով, առանց հարցնելու արցախահայության կամքը, կուսակցական մարմնի կողմից կատարվեց անբարո քայլ և Արցախ–Ղարաբաղը թողնվեց Ադրբեջանի սահմաններում:[105]

Կովբյուրոյի հուլիսի 5–ի որոշումից խիստ դժգոհ էին թե՛ արցախահայերը և թե՛ Յայաստանի կոմկուսի Կենտկոմը, որի 1921 թ. հուլիսի 16–ի նիստում ընդունված որոշման մեջ հստակորեն ասված է, որ Յայկոմկուսի Կենտկոմը համաձայն չէ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5–ի որոշման հետ:[106] Կովկասյան բյուրոյի նիստի քնութագիրը Ալ. Մյասնիկյանը տվեց Յայաստանի կոմկուսի առաջին համագումարում, որը տեղի ունեցավ 1922 թ. հունվարի երկրորդ կեսին: Նա ի լուր բոլորի հայտարարեց, թե Կովկասյան երկրային կոմիտեի բյուրոյում «ի հայտ եկավ որոշակի նացիոնալիզմ կովկասյան հանրապետությունների կողմից: Եթե բնութագրելու լինենք Կովբյուրոյի վերջին նիստը, ապա կարծես այնտեղ նստած լինեին Ահարոնյանը, Թոփչիբաշևը և Չխենկելին: Այսպես՝ Ադրբեջանն ասում էր, որ եթե Յայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա նա նավթ բաց չի թողնի: Այդ նիստին մենք նստած էինք քարտեզը ձեռքներիս... Սա, իհարկե, նախկին նացիոնալիզմն է: Ես աշխատել եմ Արևմտյան Ռուսաստանում, որտեղ ազգային տարաձայնությունները լեհերի ու հրեաների միջև ավելի շատ են, քան այստեղ, բայց այնտեղ կոմունիստների միջև այդպիսի բան չկա: Իսկ այստեղ վրաց կոմունիստը ատում է հայ կոմունիստին, թաթար կոմունիստը՝ հայ կոմունիստին: Նրանց, ովքեր խոսում են սահմանների վերացման մասին, անվանում են գաղութատերեր»:[107]

Իրոք, Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5–ի որոշումը միանգամայն ապօրինի էր և այն չի կարելի հիմնավոր համարել: Ինչպե՞ս կարող էր մի ամբողջ ժողովրդի տարածքների հարցը, նրա սահմանների հարցը, նրա պատիվը շոշափող հարցը վճռել ինչ–որ ութ հոգուց բաղկացած մի մարմնի կողմից, որը մեկ ամսվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի մասին ընդունեց իրար հակասող մի քանի որոշում, կամ մի՞թե կուսակցական մարմինը, տվյալ դեպքում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն իրավասու էր «լուծելու» երկու հանրապետությունների միջև եղած վիճելի տարածքային հարցերը: Նման հարցը կարող էին լուծել միայն ու միայն բարձրագույն օրենսդիր մարմինները, կամ նվազագույնը՝ բարձր գործադիր մարմինները: Այդ միակողմանի որոշումով անտեսվեց հայերի ազգային ինքնորոշման սկզբունքը: Իրավացի է Յր. Սիմոնյանը, երբ գրել է. «Այսպես կատարվեց ժամանակի քաղաքական մեծ ոճրագործություններից մեկը: Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելը շատ բնութագրական եղավ ԽՍՅՄ–ում ազգային հարաբերությունների հետագա զարգացման տեսակետից: Դրանով բռնությունը փաստորեն մտավ ազգամիջյան հարաբերությունների գինանոց՝ իբրև հարցերի լուծման գլխավոր մեթոդներից մեկը»:[108]

### *3. ԱՐՑԱԽ-ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՅԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ 1920-1921 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ*

1920 թ. հունիսին Կարմիր բանակի հրամանատարությունը տենդագին նախապատրաստվում էր Ղարաբաղի կողմից ներխուժել Զանգեզուր, օկուպացնել այն և կապ հաստատել Նախիջևան ներխուժած թուրք «կարմիր» բարբարոսների հետ: Յունիսի վերջին Զանգեզուրի սահմանների մոտ կուտակված էին 28–րդ դիվիզիայի 1–ին գունդը, 281–րդ և 299–րդ հետևակային գնդերը, 1–ին և 2–րդ հեծյալ գնդերը, որոնք միասին կազմում էին 6–7 հազար սվին, 800–1200 թուր, 12 թնդանոթ:[109]

Մինչև ռազմական գործողությունների սկսելը Ադրբեջանի և Կարմիր բանակի գործակալները լայն աշխատանք էին ծավալել մուսուլմանների, մանավանդ քրդերի շրջանում: 11–րդ Կարմիր բանակի 32–րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար Շտեյգերի կազմած մի զեկուցագրից իմանում ենք, որ «քրդերի վերաբերմունքը կարմիրների նկատմամբ բարենպաստ է», և նրանց առաջնորդ Սուլթանբեկ Սուլթանովը, որը մուսուլմանների շրջանում հայտնի էր որպես «իր ժողովրդի առաջնորդ», խիստ զգուշանում է «հայերի Քրդստան ներխուժելուց»: Այնուհետև ասված է, որ հայերի դեմ կանգնած են 400 զինված քրդեր, 1500–ն էլ պահեստում են: Շեշտվում է, որ զորամասերի անցումը հնարավոր է Շուշի–Գորիս խճուղով:[110]

Չնայած Յայաստանի Յանրապետության բողոքներին և պահանջներին, այնուամենայնիվ, Խորհրդային Ռուսաստանը չէր հրաժարվում Արցախ–Զանգեզուրի նկատմամբ ունեցած իր զավթողական քաղաքականությունից: Յունիսի վերջերին կենտրոնը 11–րդ բանակի հրամանատարությանը հրահանգում է «գրավել Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանի շրջանները, Ջուլֆան և Օրդուբադը»:[111] 32–րդ դիվիզայի կոմիսար Կարլ Ռատնեկը հունիսի 29–ին մի հեծյալ ջոկատով ռազմաքաղաքական հետախուզության է գնում դեպի Զանգեզուր: Նույն օրը մտնում են Տեղ գյուղը և Գորիսի իշխանություններից պա-

հանցում մաքրել իրենց ճանապարհին ու Զանգեզուրը հանձնել Կարմիր բանակին: Ստանալով մերժում՝ Ռատնեկի ջոկատը վերադառնում է Շուշի: Բաքվից և այլ վայրերից նորանոր զորամասեր են կենտրոնացվում Զանգեզուրի սահմաններում: Զանգեզուր ներխուժումը փոքր–ինչ հետաձգվում է, որովհետև այդ օրերին Արցախում տեղակայված 32–րդ դիվիզիային փոխարինում էր 28–րդ հրաձգային դիվիզիան: Այդ դիվիզիայի 84–րդ բրիգադը, 247, 248 և 249–րդ գնդերը 1920 թ. հուլիսի 5–ին ներխուժում են Զանգեզուր: 11–րդ Կարմիր բանակի հրամանատարներից Վասիլենկոն այսպես է արդարացնում Զանգեզուր ներխուժելու իրենց այդ քայլը. «Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում տեղի ունի ազգամիջյան կոտորած հայերի և թուրք–թաթարների միջև, որի հետևանքով ջնջվում են աղքատների անբախտ և անօգնական ընտանիքները: Ոչնչանում են ամբողջ գյուղեր և հազարավոր գյուղացիներ զրկվում են օթևանից»: Հետևապես, անհրաժեշտ է այդ ամենին վերջ տալ:[112] «Ազատարար» 11–րդ Կարմիր բանակի զորամասերը, ներխուժելով Զանգեզուր, շուրջ հինգ ամիս շարունակ Զանգեզուրի աշխատավորների նկատմամբ իրագործում էին բռնություններ ու դաժանություններ: Պարզապես 11–րդ Կարմիր բանակը դարձել էր Ադրբեջանին ենթակա պատժիչ ջոկատ, որի նպատակն էր Արցախն ու Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին:[113]

Կարմիր բանակի օկուպացիոն ուժերը, Զանգեզուրը նվաճված համարելով, շարժվում են դեպի Ղարալագյազ, գրավում Սիսիանի՝ մինչև Բազարչայի արևմտյան լեռնաշղթան ընկած մասը, որտեղից էլ կապ են հաստատում Նախիջևանի և Թուրքիայի հետ: Մի զորամաս էլ հուլիսի 8–ին շարժվում է դեպի Կապան, ուր այդ ժամանակ գտնվում էր Գարեգին Նժդեհը, որը նույն թվականի օգոստոսի սկզբին իր մի քանի հավատարիմ մարտիկներով ժամանել էր Գողթան և նշանակվել Կապարգողթի հրամանատար:[114] Նժդեհը նստավայր է ընտրում Կապանի հանքերը: Նրա ամենաառաջին խնդիրն էր ամուր հիմքերի վրա դնել ժողովրդի ինքնապաշտպանության գործը և կազմակերպել Սյունիքի ուժերը: Նժդեհի խորհրդով ու պահանջով գյուղացիներն իրենք էին զենք պատրաստում, հաճախ էլ թշնամու դեմ կռվում նրանից խլված զենքով ու ռազմամթերքով: Նժդեհին հաջողվում է մի քանի ամսվա ընթացքում Սյունիքի ժողովրդի մեջ վերականգնել դիմադրական ոգին: Դրա շնորհիվ թշնամու իսկայական գերակշռության պայմաններում երկու տարում Գարեգին Նժդեհի զորամասերն ունեցան ընդամենը 28 սպանված և ոչ մի գերի:[115] Պատահական չէ, որ ժամանակակիցներից Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինկարյան) գրել է. «Եթե այսօր Զանգեզուրը Հայաստանի և ոչ թե Ադրբեջանի մաս կը կազմե, ատիկա շատ կարևոր չափով մը մենք պարտական ենք Նժդեհի զինվորական տաղանդին, ինչպես և անոր քաղաքական սուր իրատեսության»:[116]

Կապանի ուղղությամբ շարժվող զորամասը, Վերին Խոտանան գյուղի մոտ հանդիպելով գյուղացիների ուժեղ դիմադրությանը, ստիպված կանգ է առնում: Նրա զինվորական կոմիսար Իվանովը հուլիսի 10–ին Նժդեհին է ուղարկում հետևյալ գրությունը. «Արդեն Ղարաբաղ–Զանգեզուր է մտել Կարմիր բանակը, բոլոր տեղերում կազմակերպված են ռևկոմներ: Հրամայում եմ այդ առթիվ ժողովրդին հայտարարել և ճամփա տալ Վերին Խոտանանում գտնվող մեր զորամասերին Մեղրիի վրայով անցնելու Օրդուբադ–Ջուլֆա»:[117] Երկու օր անց կարմիր հրամանատարը ստանում է հետևյալ պատասխանը. «Կապարգողթի գյուղացիական ներկայացուցչական խորհուրդը հրամայել է վաղը՝ հուլիսի 13–ին, մինչև ժամը 7–ը թողնել Կապանի սահմանները, հակառակ դեպքում ստիպված կլինեմ անցնելու հարձակման և զենքի ուժով վանելու Ձեզ:

Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատար՝ Նժդեհ»:[118]

Օկուպանտները ստիպված էին թողնել դիրքերը և վերադառնալ Գորիս: Դաշնակցության օրգան «Յառաջ» թերթը հուլիսի 22–ի խմբագրականում գրել է. «Կարո՞ղ է արդյոք բովանդակ հայ ժողովուրդը հանգիստ ու անխռով Հայաստանի անկախության և ազատության բարիքները վայելել, երբ այդ անկախության և ազատության համար ամենից շատ պայքարած Ղարաբաղն ու Զանգեզուրը վերստին պիտի կրեն օտարի անարգ ստրկական շղթան:

Կա անկախ Հայաստան, բայց այդ Հայաստանի մեջ չկան ո չ Ղարաբաղը և ո չ էլ Զանգեզուրը,– սա մի այնպիսի դաժան հեգնանք է ողջ հայության, ողջ պատմության հասցեին, որի հետ չի կարող հաշտվել բովանդակ հայ ժողովրդի և ոչ մեկ շիտակ ու հայրենասեր զավակը:

Այսպես գիտենք մենք մեր ժողովրդին, այսպես գիտենք մեր արյունաներկ դարավոր պատմությունը, այսպես գիտենք, վերջապես, ըմբոստ, անվեհեր ու ազատասեր ղարաբաղցուն ու զանգեզուրցուն»:

Այդ օրերին Դրոն որոշեց Զանգեզուրը հետ գրավել: Նա Ղարալագյազից շարժվելով՝ օգոստոսի 3–ին ազատագրում է Գորիսը և հակառակորդին հետ շպրտում Զաբուղ: Դրոն հենց Գորիսի գրավման օրը հատուկ կոչով դիմելով 28–րդ և 32–րդ կարմիր դիվիզիաների հրամանատարներին և զինկոմներին, նշում է, որ Զանգեզուրում և Սիսիանում զինկոմների և հեղկոմների չորսշաբաթյա գործունեությունը համոզում է, որ դա եղել է «համատարած մղձավանջային թալանի և խաղաղ աշխատավոր գյուղացիության նկատմամբ ուժի գործադրում»: Նա կոչ է անում հեռանալ Հայաստանի տարածքից: «Արյունահեղություն միք ստեղծի,– գրում է նա,– քանզի երկու եղբայրակից հայ և ռուս ժողովուրդների միջև արյան թափման ամբողջ պատասխանատվությունը, ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ, ընկնում է Ձեզ վրա:

Ձեռներդ հեռու Ղարաբաղից:

Աշխատավոր հայ գյուղացիությանը վերադարձրեք ձեր կողմից թալանված իրերը»:[119]

Դրոն հույս ուներ, որ շուտով կրկին կմտնի Արցախ և փրկության ծեռք կմեկնի արցախահայությանը: Սակայն կարմիր զորամասերը, նոր ուժերով համալրվելով, անցնում են հակահարձակման և օգոստոսի 7–ին նորից գրավում Գորիսն ու Սիսիանը:

Ադրբեջանի կառավարության պահանջով 11–րդ Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 29–ին Կապանի շրջանում վերսկսեցին հարձակումները: Այս անգամ մարտերը շարունակվում են 72 օր:

Գարեգին Նժդեհի գլխավորած ազատագրական պայքարի դրոշի տակ հա-

մախմբվածների պայքարը նախ և առաջ ուղղված էր մի խումբ ազգադավ բոլշևիկների, ռուսական «ազատարար» Կարմիր բանակի օկուպացիոն քաղաքականության և «կարմիր մահմեդականների» բարբարոսությունների դեմ: 1920 թ. հուլիսից մինչև նոյեմբեր, հինգ ամիս շարունակ, Սյունիքի հայությունը հերոսական պայքար մղեց այդ ուժերի դեմ, որոնց կողմից այստեղի «հայ ազգաբնակչությունը բառացի կերպով կողոպտված» էր, և «ամբողջ կայքն ու գույքը՝ հափշտակված»:[120]

1920 թ. օգոստոսի 10–ին Թիֆլիսում Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված վերոհիշյալ պայմանագրի առթիվ Գարեգին Նժդեհը օգոստոսի 18–ին հանրապետության զինվորական նախարարին ուղարկած նամակում տարակուսանք է հայտնում այդ համաձայնագրի վերաբերյալ: Նա համոզված էր, որ բոլշևիկները «անձնավորելով Ադրբեջանի քողարկված վտանգը, համառորեն ձգտում են զինաթափելու Զանգեզուրի հայությանը»:[121] Օգոստոսի 20–ին հանրապետության զինվորական նախարարին ուղարկած նոր նամակում Գարեգին Նժդեհը զգուշացնում է, որ Կապարգողթի գիջումը Ադրբեջանին «նշանակում է մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանության գործը»: Ապա՝ նշում էր, որ «ձեռքից տալով Ղափանի, Գնդեվազի, Գեղվարդի և Գողթանի բնական ամրությունները, Արարատյան հարթավայրում մենք հաշտությամբ չպետք է կարողանանք կազմակերպել ու վարել մեր ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին գործը»:[122] Այդ նույն օրը Կապանի հանքերից Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատարը Երևան ուղարկած հատուկ զեկուցագրում հաղորդում է. «Ադրբեջանը գործում է: Նրա հարյուրավոր ագենտները՝ իրենց տարած պրոռուսական հաղթությամբ արբեցած՝ օրնիբուն չափչփում են Զանգեզուրի և Սիսիանի գյուղերը և համոզում, հավատացնում ժողովրդին, որ «Սովետական Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարությանը ձեռք քաշել Զանգեզուրից, որ այդ երկիրը արդեն տրված է Ադրբեջանին և այլն...»:[123] Չեկան և այլ հիմնարկություններ կողոպտում էին ժողովրդին, զբաղվում սպանություններով: Կարմիր բանակի հետ գործում էր Զանգեզուր բերված 1200 հոգիանոց թուրքական 8–րդ գունդը, որի ասկյարները զբաղվում էին կողոպուտով, բռնաբարություններով, ամեն տեսակի ավազակություններով:[124]

Կարմիր «ազատարար» բանակի ոճրագործությունների մասին վկայում են նաև հետևյալ փաստերը. 1920 թ. օգոստոսի 2–ին Գորիսից նահանջելուց առաջ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամներ Վահան Խորենունն և Արշակ Շիրինյանին, ինչպես և սիսիանցիներ Զախար Տեր–Ղազարովին և Մ. Աղամյանին գազանաբար կացնահարում են Գորիսի բանտում: Օգոստոսի 3–ին շղթայված Շուշի են տարվում 17 բանտարկյալներ և ճանապարհին, առանց որևէ հարցաքննության, գնդակահարվում Ղարադշլաղի դիմաց՝ Ծակեր կոչված տեղում: Հոկտեմբերի 16–ի գիշերը Գորիսի բանտում սպանվում են մի քանի տասնյակի հասնող մարդիկ:[125] Առանց քննության Բաքու են տարվում տասնյակ մարդիկ և այնտեղ ոչնչացվում:[126] Միայն Գորիսի բանտում մշտապես պահվում էր հարյուր բանտարկյալ՝ պատանդի անվան տակ: Այս-



տեղ տանջում և գնդակահարում էին նաև այն կարմիր զինվորներին, ովքեր հրաժարվում էին զենք օգտագործել խաղաղ բնակչության դեմ:[127]

1920 թ. հուլիսի 10–ին ձերբակալվում են Գորիսում գտնվող բոլոր սպաները իբր Ռուսաստան զինվորական դպրոց ուղարկվելու համար, մինչդեռ իրականում նրանք տարվում են Բաքու և Ռուսաստանի ներքին նահանգներ, որտեղ դատապարտվում են տաժանակիր աշխատանքի: Արխիվային մի փաստաթղթում ասված է, որ օկուպանտները Գորիսից տարել են 2000 գորգ, 1000 կարպետ, մոտ 100 կարի մեքենա, 500 անկողին, մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ, գյուղատնտեսական մթերքներ, քաղաքի բնակիչների ոտքերից հանել են 200 զույգ կոշիկ, գյուղերի և Գորիսի եկեղեցիները պարծրել են ախոռներ, Զանգեզուրից և շրջակա գյուղերից թալանել և տարել են 20 հազար փութ ցորեն և ալյուր, քաղաքում և գյուղերում կանանց գլխից պոկել են զարդարանքներ, հանել մատանիները և այլն:[128] 1920 թ. դեկտեմբերին 700 հայ կանանց ստորագրությամբ մի բողոք է ուղարկվում Գարեգին Նժդեհին, որում դատապարտվում են օկուպանտների բռնությունները: Նման բողոքներով Նժդեհին դիմում են նաև Տեղ, Կոռնիձոր, Խոտ և այլ գյուղերի բնակիչները:[129]

Սիսիան և Կապան էին ներխուժել Արցախով անցած մոտ 12000 զինվորականներ և այլ ծրիակերներ, որոնց հարկ էր կերակրել: Գորիսի գավառային հեղկոմի որոշմամբ յուրաքանչյուր գյուղ գնդակահարության սպառնալիքի տակ պարտավոր էր մթերքներ ուղարկել Գորիս: Զանգեզուրի գավառային հեղկոմը 1920թ. սեպտեմբերի 10–ին Սիսիանի միլպետին հայտնում է. «Հրամայում եմ 24 ժամվա ընթացքում Սիսիանից հավաքել և փոխադրել Գորիս 18000 փ. ցորեն, նույն չափ գարի, 800 ոչխար և 70 հատ գրաստ: Ընդդիմացողներին գնդակահարել և հաղորդագրել»:[130] Այդ օրերին 11–րդ Կարմիր բանակի զինվորական հեղափոխական խորհրդի լիազոր և Ղարաբաղի ու Զանգեզուրի արտակարգ կոմիսարի տեղակալ Արմենակ Կարակոզովը, որն Արցախի և Զանգեզուրի ողբերգությունների գլխավոր հեղինակներից էր, ստիպված էր Գորիսի կայազորի պետ Ֆեոդորովսկուն հետևյալ գրությունն ուղարկել. «Հաճախ կարմիր զորամասերը և այլ անձինք կողոպուտով են զբաղվում, որի պատճառով գյուղացիությունը ջղայնանում և խորհրդային իշխանությանը հակառակ է տրամադրվում»:[131] Ապա նա խնդրում է խորհրդակցություն հրավիրել և այդ հարցը քննել: Արմենակ Կարակոզովը մի այլ փաստաթղթում ցինիկորեն հայտարարում էր, թե Կարմիր բանակը Զանգեզուրի վրայով մշտական ճանապարհ է ունենալու դեպի «կարմիր Տաճկաստան» և ապա Սյունիքի հայությանը սպառնալով, նշում. «Վաղ թե ուշ, թշնամու ուժերը պիտի ջարդվեն և, այն ժամանակ մեր ցասումն ու բարկությունը պիտի թափվի այն գյուղերի վրա, որոնք պաշտպան են հանդիսացել նրանց: Ժամանակն է, որ հայ աշխատավոր գյուղացիությունը խելքի գա, խղճա իր կնոջն ու երեխաներին և թող նա իր զենքը բարձրացնի ոչ թե Կարմիր բանակի դեմ, որ եկել է հեռավոր Ռուսաստանից ազատագրելու բոլոր աշխատավորներին... այլ ավանտյուրիստ դաշնակների խմբերի դեմ, ո-

յունք իրենց կաշին փրկելու համար կամենում են հայ աշխատավոր ժողովրդին կործանել...»:[132]

11–րդ Կարմիր բանակի 28–րդ հրաձգային դիվիզայի հրամանատար Նեստերովսկու 1920 թ. հոկտեմբերի 14–ի դ. 29 հրամանով կարգադրվում էր Կապանի շրջանն արևելյան կողմից օղակել և «ճնշելով՝ դաժանությամբ վարվել ապստամբների հետ՝ ոչ մի բանդիտի կենդանի բաց չթողնելով»: Թիկունքն ապահովելու համար պահանջվում էր «Տեղ գյուղում կուլակներից վերցնել 100 պատանդ և կարմիր զորքի թիկունքից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում՝ բոլորին գնդակահարել»: Հրամանի վերջում 83 և 84–րդ բրիգադների հրամանատարներից պահանջվում էր «խուսափել ամեն տեսակի մարդասիրական միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հետ, որպեսզի նա զգա բանվորական բռունցքի թափը: Դիմադրողներին գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մի բանդիտի»:[133]

Կարևոր է նաև հետևյալ փաստը. ի լրումն վերոհիշյալ դ. 29 հրամանի, հոկտեմբերի 14–ին Նեստերովսկին հրամայում է «Զանգեզուրի գավառում ապստամբության քարոզիչներ դաշնակներին և սադրիչներին որսալու նպատակով ուժեղացնել լրտեսական գործունեությունը՝ չխնայելով ոչ ոքի, ոչնչացնել առանց դատի ու քննության»:[134]

Երկու օր անց Նեստերովսկին ստորագրում է նոր հրաման. «Թող իմանա Զանգեզուրի ամբողջ բնակչությունը, որ Կարմիր բանակն ինչքան որ բարյացկամ է դեպի աշխատավորությունը, ինչքան որ իր կյանքն է զոհում աշխատավորության բախտավորության համար, այնքան էլ նա խիստ է ու անխնա թշնամիների նկատմամբ: Բանդաների ու ապստամբների ձեռքով սպանված ամեն մի մարդու փոխարեն կոչնչացվեն հայուրավոր ապստամբներ»: Ապա պահանջում է վերադառնալ խաղաղ աշխատանքի և հանձնել զենքերը, հակառակ դեպքում նրանք կարժանանային «Կարմիր բանակի հեղափոխական դատավճռին», իսկ «եթե որևէ գյուղի բնակչություն բռնանա կամ սպանի մի կարմիր զինվորի, այդ գյուղը հողին կհավասարեցվի և կվերացվի երկրի երեսից»: Նեստերովսկու հրամաններից ելնելով՝ 252–րդ գնդի զինվորական կոմիսար Իվանովը հրամայում է Արևածաղիկը գրավելուց հետո «մանուկներից մինչև 80–90 տարեկան ծերունիներին չխնայել և բոլորին գնդակահարել»:[135]

Սյունիքում Կարմիր բանակի և բոլշևիկների այդ գազանային արարքների պատճառով Հայաստանի Հանրապետության կառավարությունը բողոք է ներկայացնում Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, իսկ Արցախ–Սյունիքի էքսպեդիցիոն զորամասի հրամանատար Դրոն՝ 11–րդ Կարմիր բանակի 28–րդ և 32–րդ դիվիզիաների հրամանատարությանը:[136] Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Գ.Չիչերինը 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ պահանջում է բացատրություն տալ այդ ամենի համար:[137] Նոյեմբերի 2–ին Գ. Չիչերինին ուղարկած հեռագրում Կովկասում գործող Կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է անամոթաբար ժխտել Կարմիր բանակի և մինչև անգամ մուսուլմանական գնդի կողմից «Արցախի և Սյունիքի հայության նկատմամբ իրա-



գործված բարբարոսությունները»:[138] Այդպիսի արարքներն նույնիսկ տխրահռչակ Արմենակ Կարակոզովին առիթ են տալիս Ադրհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին գրել, թե «նման դեպքերը նսեմացնում և վարկաբեկում են խորհրդային կառավարությանը»:[139]

Նախիջևանից մինչև Արցախ տեղի էին ունենում անհավասար մարտեր: Գարեգին Նժդեհը հանրապետության զինվորական նախարարին և սպարապետ Նազարբեկյանին գրում էր. «Թշնամու ուժերը հասնում են մի քանի հազարի: Հարձակվողների 70 տոկոսը թուրք է: Օրդուբադի ճակատից հարձակվողների մեջ կան նաև օսմանցիներ»:[140] Չնայած տեղի ունեցող թուրք–հայկական պատերազմի պայմաններում Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր ծանր դրության մեջ, այնուամենայնիվ, Սյունիքի ապստամբները Երևանից որոշ օգնություն ստացան:

Հայ մարտիկները կռվում էին հերոսաբար: Կարճ ժամանակամիջոցում նրանք ազատագրեցին Սյունիքի մեծ մասը: Հենց այդ օրերին Զանգեզուր են հասնում Բաքվից օգնության ուղարկված մուսուլմանական նոր ուժեր Զավալ փաշայի հրամանատարությամբ, իսկ Հյուսիսային Կովկասից օգնության է գալիս կարմիր հեծելազորի հրամանատար Պյոտր Վասիլևիչ Կուռիշկոն իր պատժիչ ջոկատով: Այդ առթիվ Արմենակ Կարակազովը հայտարարում է. «Ձգույշ, սրան Կուռոչկին կասեն, որը կատակ չի սիրում... Կտեսնեք... Վաղը Նժդեհի և Կապանի փոշին քամուն կտա»:[141] Սակայն Պ. Կուռիշկոն շատով խայտառակ պարտություն է կրում: Նժդեհը 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությանը ուղարկում է մի վերջնագիր, որով պահանջում է Սյունիքն ազատել:[142] Ապա Տաթևի և Գորիսի միջև գտնվող Եռաբլուր կոչվող դաշտում տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ Գարեգին Նժդեհի ջոկատները լիովին ջախջախում են Զավալ փաշայի «կարմիր» գունդը:

1920 թ. նոյեմբերի 22–ին առավոտյան Գորիսի բազմահազար ժողովուրդը լաց ու հացով է դիմավորում քաղաք մտած Գարեգին Նժդեհի ջոկատներին: 28–րդ դիվիզիայի կոմիսարի կողմից նոյեմբերի 23–ին ուղարկված նամակում փորձ է արվում Նժդեհին համոզել, թե իբրև Զանգեզուրում կռվող ռուսական բանակը երբեք էլ նվաճողական նպատակ չի ունեցել և իրեն չի համարել Հայաստանի հետ պատերազմական դրության մեջ: Կոմիսարն առաջարկում է 48 ժամվա ընթացքում Գորիսում մնացած հիվանդ, վիրավոր ու գերված զինվորներին և բանակին պատկանող գույքը վերադարձնել: «Հակառակ դեպքում,– ասում է նա,– ռուսական խորհրդային կառավարությունը կհրաժարվի Հայաստանի և տաճկական հեղափոխական զորքերի միջև կնքվող հաշտության միջնորդությունից»:[143] Դրան հաջորդում է 84–րդ բրիգադի հրամանատարի կողմից Զանգեզուրի գյուղացիությանն ուղղված մի սադրիչ հայտարարություն: Դրանում չի թաքցվում, որ «Կարմիր բանակի հրամանատարությունն ու Ադրբեջանի խորհրդային իշխանությունը կարող են հրաման տալ Կարմիր բանակի զորամասերին մաքրել Զանգեզուրն ու Ղարաբաղը», իսկ անհրաժեշտության դեպքում Կարմիր բանակն «ի վիճակի կլինի պաշտպանելու Խորհրդային Ադրբեջանը» և ապստամբների հետ «անողորմ վարվել»:[144] Գարեգին Նժդեհն

այդ օրերին ստանում է Ավդալարի և Զաբուղի կիրճերում ջարդված կարմիր զորամասի հրամանատար Սեմյոնովի պաշտոնական գրությունը, որում նա խաղաղ բանակցության առաջարկ էր անում։[145] Գարեգին Նժդեհը Սեմյոնովին նոյեմբերի 30–ին պատասխանում է մի ընդարձակ նամակով, որով մերկացնում է Կարմիր բանակի հակահայկական, հակաժողովրդական գործունեությունը։ Նա կոնկրետ փաստերով ցույց է տալիս, թե հուլիսից մինչև նոյեմբերի վերջերը այդ «ազատարարները» ինչպիսի անմարդկային արարքներ են կատարել Սյունիքում և Արցախում՝ թալանելով առանց այն էլ կարիքի մեջ գտնվող Ղարաբաղն ու Զանգեզուրը։ Նժդեհը Կարմիր բանակի պարտության պատճառները համարում է նրանց «չեկերի դեզերը... կաշառման սիստեմը... առանձին պոստերը, որոնց առաջ նսեմանում էին ցարական բոլոր տեսակի ժանդարմական վարչությունները ու օխրանկաները... արճճի, սվինի լեզուն, որ ժողովուրդը չուզեց հասկանալ... շպիոնաժը... չերեզվըչայկաները... խորհրդավոր սպանությունները ու հարյուրավոր պատանդ վերցնելու խայտառակ սիստեմը... քաղաքական անհամբերությունն ու աղանդավորությունը...»։[146]

1920 թ. նոյեմբերի վերջերին Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունները չէին կարող չանհանգստացնել իրենց ազատության համար մարտնչող զանգեզուրցիներին ու արցախցիներին։ Երևանից բավականին քանակությամբ մտավորականներ ու այլ անձնավորություններ, որոնք հրաժարվեցին ենթարկվել բոլշևիկների բռնատիրությանը, հեռացան Սյունիք՝ Գարեգին Նժդեհի մոտ։ Դեկտեմբերի 16–ին Խորհրդային Հայաստանի ռազմական ժողկոմը, Ավիս Նուրիջանյանը և Հանրապետության ռազմական ուժերի հրամանատար Դրոն մի կոչ ուղարկեցին Նժդեհին, որում ասվում էր, թե իբր Ադրբեջանը Զանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը զիջել է Հայաստանին և նրան առաջարկում էին վայր դնել զենքն ու «կանգնել Խորհրդային Հայաստանի աշխատավորության դրոշակի տակ, մերձենալ Ռուսաստանին և Խորհրդային Ադրբեջանին»։ Ապա նրանք պահանջում էին «անմիջապես դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություն և ենթարկվել Հայաստանի խորհրդային իշխանությանը»։[147]

Երևանից հասնող տագնապալից լուրերը խիստ անհանգստացնում էին Գարեգին Նժդեհին։ Նա իմացավ, որ Տրոցկու պահանջով Բաքվի վրայով Մոսկվա է մեկնել Դրոն, որին Բաքվում հայ, ռուս և թուրք բոլշևիկները համոզում են, թե իբրև Հայաստանի փրկությունը կախված է միայն Խորհրդային Ռուսաստանից, և որ ռուս–թուրքական կոնֆերանսը, որը նախատեսվում է փետրվարին սկսել Մոսկվայում, կարող է Քեմալի բանակը դուրս բերել Հայաստանից, եթե միայն Զանգեզուրը հայտարարի իրեն խորհրդային և իր բռնած դիրքով չխանգարի Մոսկվայի կոնֆերանսի աշխատանքներին։ Դրոն չէր կարող կանխագուշակել, թե Մոսկվա–Բաքու–Անկարա եռանկյունին ինչ էր նախապատրաստում Հայաստանի համար։ Նման պայմաններում Սյունիքի հայությունը վճռեց իր ձայնը հնչեցնել։ 1920 թ. դեկտեմբերի 25–ին Տաթևի վանքում կայացավ համազանգեզուրյան առաջին համագումարը, որի ընդունած բանաձևում դատապարտվում են Խորհրդային Ռուսաստանի Կարմիր



բանակի և «կարմիր մահմեդականների»՝ հինգ ամսվա ընթացքում Սյունիքում և Արցախում կատարած հակաժողովրդական արարքները։ «Խորհրդային հրամանատարությունը,– ասված է բանաձևում,– հենց առաջին քայլին, գավառի գյուղացիության նկատմամբ սկսավ իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որուն մեջ նսեմացած են պատմական Լենկ Թեմուրն ու Արևելքի բարբարոսներու արշավանքներն ու գործելակերպը...

Այս բոլորեն ետք, մենք համոզվեցանք, որ սովածներու այդ բանակը եկած է միմիայն հափշտակելու մեր կայքն ու գույքը, թալանելու մեզ և իսպառ ոչնչացնելու»։[148]

1921 թ. հունվարի 21–ին Բաքվից հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն է գալիս Զանգեզուր՝ բերելով Դրոյի և 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության նամակը, որի ամբողջ բովանդակությունը հանգում է նրան, թե իբր «Զանգեզուրի չճանաչելը Խորհրդային Հայաստանին խանգարելու է... լուծելու Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները», և որ Զանգեզուրի բռնած այդ դիրքը թուրքերի համար առիթ կծառայի «չհեռացնել իրենց զորքերը մեր երկրից»։ Դրոն հավատ էր տածում, թե «Զանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանը և կմիանան մայր երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայի՝ տաճիկների հետ բանակցությունը կգա ապացուցելու, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը»։[149]

Թե՛ Գարեգին Նժդեհը և թե՛ Սյունիքի ու Արցախի ողջ բնակչությունը շատ լավ գիտեին, թե ինչ է կատարվում Խորհրդային Հայաստանում։ Այդ իսկ պատճառով 1921 թ. հունվարի 25–ին 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկած պատասխանում Նժդեհը գրում է, որ 11–րդ Կարմիր բանակի բարձր հրամանատարության վարած քաղաքականության հետևանքով Հայաստանը դարձել է սոսկումների ու արյան թատերաբեմ։ Բացահայտելով Հայաստանի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության էությունը, Նժդեհը շարունակում է. «Հայաստանի այն մասերում, որոնք գրավված չեն տաճիկներով և գտնվում են խորհրդային իշխանության ներքո, ստեղծված է այնպիսի կացություն, որ սպառնում է հայ գյուղացիության ֆիզիկական գոյության, և ամենակարևորն է, գլխատվում, սպանվում է ժողովրդի կենդանի խոսքը։ Հարյուրներով հայ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչներ բանտարկվում են, գնդակահարվում և աքսորվում, ո՞ւր, հայտնի չէ»։ Այստեղ պարզ երևում է խորհրդային իշխանության ղեկավար շրջանների նենգամիտ միտումները՝ «գլխատել Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը և մեռցնել նորա անկեղծ հեղափոխական–սոցիալիստական միտքը»։ Գարեգին Նժդեհը պահանջում էր հայ մտավորականությանն ազատել բանտերից, վերացնել նրա դեմ սկսված հալածանքները, մաքրել քեմալականների կողմից գրավված հայկական հողերը և հրաժարվել զանազան մութ անձնավորություններ Զանգեզուր ուղարկելուց»։[150]

Բաքվից Գորիս եկած վերոհիշյալ պատվիրակության ղեկավար Գրիգոր Վարդանյանը պատմում է, որ Նժդեհն ամենից առաջ մեղադրում էր հայ բոլ-

շևիկներին, որոնք ամեն ինչում ոգևորել և օժանդակել են կարմիրներին:

Հայաստանում իրար հաջորդող ցավալի իրադարձությունները հասցրին նրան, որ հայ ժողովուրդն ըմբոստացավ: 1921 թ. փետրվարի 16–ին և 17–ին հանրապետության զանազան շրջաններում սկսվում են ժողովրդական ապստամբություններ: Գարեգին Նժդեհը, անշուշտ, տեղյակ էր փետրվարյան ապստամբության նախապատրաստմանը: Փետրվարի 16–ին նրա հրամանով Յապոնի (Հ. Սարգսյան) ջոկատները գրավում են Դարալագյազը և բացում Երևանի դռները: Հակառակ դեպքում, ապրիլի 2–ին ապստամբության ճնշումից հետո, հազիվ թե հնարավոր լիներ փրկել հազարավոր հայրենասերների: Նժդեհը կարողացավ ապահովել ճանապարհը և մինչև հուլիսի կեսերը 8041 հոգի անցան Արաքսը՝ փրկվելով տեռորից: Գարեգին Նժդեհը ամենավերջում, ծանր ապրումներով, 1921 թ. հուլիսին թողեց հայրենի ոստանը և անցավ Պարսկաստան:[151] Նա մոտ երկու տարի ոչինչ չխնայեց Արցախի և Սյունիքի հայությանը ցեղասպանությունից փրկելու և մայր հայրենիքին վերամիավորելու համար: Այդ ժամանակաշրջանում Կարմիր բանակը տվեց բազմաթիվ զոհեր և գերիներ:

Սյունյաց աշխարհի այդ հերոսական պայքարը չէր կարող ազդեցություն չունենալ արցախահայության վրա, մանավանդ, որ Կարմիր բանակի զորամասերը ներխուժելուց հետո Արցախի հողը կրկին կարմրեց նրա զավակների արյունից:

Կարմիր բանակի և Ադրբեջանի «կարմիր» բաշիբոզուկների կողմից Արցախում և Զանգեզուրում իրագործվող վայրագությունները թաքցնելու համար ադրբեջանախորհրդային քարոզչության մեքենան փորձում էր ամբողջ մեղքը բարդել հայ ժողովրդի, մանավանդ դաշնակցության վրա՝ թաքցնելով Շուշիի, Գանձակի, Բաքվի, Գորիսի բանտերում հազարավոր արցախցիների և զանգեզուրցիների տանջամահ արվելու փաստը:

Արցախ–Զանգեզուրում ձերբակալությունները և դաժանությունները լայն ծավալ ընդունեցին մանավանդ 1920 թ. հուլիսի սկզբից, երբ Կարմիր բանակի զորամասերը ներխուժեցին նաև Զանգեզուր: Ադրբեջանի և Կարմիր բանակի պարագլուխները մտածում էին թիկունքը «չեզոքացնել»: Նրանք համոզված էին, որ արցախահայությունը չի հանդուրժի և ամեն կերպ օգնության կհասնի իր եղբայրակիցներին՝ իրենց կաշվի վրա կարմիրների «դառնությունն զգալուց» հետո: Ժամանակակիցը գրում է, թե Արցախի խորհրդայնացումից հետո «ճնշումներն ու հալածանքներն անասել չափերի էին հասել», «նրանցից շատերը բանտարկվեցին և տասնյակներով գնդակահարվեցին»: Այդ հանգամանքը «ստիպում է շատերին պաշտպանվել անտառներում»,[152] կամ էլ անցնել Զանգեզուր և միանալ Նժդեհի ապստամբ ուժերին: Միայն Շուշիի բանտում բանտարկյալների թիվը հազարից ավելի էր, որից 20–25 հոգի էր թուրք, մնացածը հայեր էին, ովքեր տարիներ շարունակ իրենց կրծքով պաշտպանել էին հայրենիքը, իսկ դրանում «չափազանց վատ դեր խաղացին» հայ բոլշևիկները, մանավանդ Արմենակ Կարակոզովը, Սամվել Ասմարյանը, Սուկուչ Արզանյանը և ուրիշներ:[153] Այդ նրանց, մանավանդ Կարակոզովի մեղքով է, որ ձերբակալվեցին մի խումբ հայրենասերներ (Դալի Մահրասա, Կարապետ Ասրյան, Բաղդար Փիրումյան, կապիտան Արամյան, կապիտան Սեյդիշենցի, Աթանես Ավքանդիլյան, Բագրատբեկ, ռոտմիստ Մարտիրոսյան և ուրիշներ), տարվեցին Թարթառ և հանձնվեցին թուրք դահիճներին, որոնք էլ բոլորին կացնահարեցին:[154] Կան ուրիշ ավելի սարսափելի օրինակ, որի հեղինակները հանդիսացան ադրբեջանցի «կոմունիստ» դահիճները և նրանց թիկունք հանդիսացողները: Դա 1921 թ. հունվարին էր, երբ Արցախում լայն թափ էր ընդունել հակախորհրդային ազատագրական պայքարը: Վարանդայի Տռնավարզ գյուղում սպանվել էին մի քանի թուրք դերասաններ: Դա առիթ հանդիսացավ, որ մի ամբողջ զորամաս ուղարկվի Տռնավարզ՝ վրեժ լուծելու համար: Խաբեությամբ ձերբակալում են 60–65 մարդու, քշում Շուշի և հանձնում մուսուլման մոլեռանդ ամբոխի հաշվեհարդարին: Հենց Ադրբեջանի և Կարմիր բանակի ղեկավարության աչքի առջև բոլորին ոչնչացնում են քարերով ու փայտերով: Իբրև քիչ էր արվածը, նույնպես խաբեությամբ ձերբակալում են տռնավարզցիներ Շամիր Ալավերդյանին, նրա որդի Սամսոնին, Աղաջան Արզումանյանին և Համբարձում Պետրոսյանին՝ առանց որևէ հարցաքննության գնդակահարում:[155] Ժամանակակիցներն ավելի սարսափելի փաստեր են պատմում: Եվ այդ ամենից հետո Կարմիր բանակի հրամանատարությունը ցինիկաբար հայտարարում էր, թե իրենք հանդիսանում են «հայերի բարեկամները»: Եթե դա ճշմարիտ է, այդ օրերին գրել է «Մշակը», ապա ինչո՞ւ առանց հապաղելու «ձեր զորքերը դուրս չեք բերում Ղարաբաղից և Զանգեզուրից և գոնե մի անգամ կյանքերիդ մեջ, միայն, այո, մի անգամ, փորձեք հարգել ժողովուրդների ինքնորոշման գաղափարը»:[156] Այդ օրերին Գորիսում տպագրված վերոհիշյալ «Արնոտ գրքում» կարդում ենք. «Առանց որևէ դատի ու քննության կացնահարում և տմարդի եղանակով սպանում են Թարթառում Ղարաբաղի հայ գյուղացիության շահերին երկար տարիներ նվիրված գործիչները. հարյուրավոր ինտելիգենտ ուժեր տարվում են Բաքու, Գանձակ, Շուշի և փակվում բանտերում»:[157] Դեռևս օգոստոսի 17–ին, նույն ամսի 25–ին հաղորդել է «Յառաջ» թերթը, ՀՀ արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը հեռագրում է արդեն Թիֆլիս ժամանած խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանին և պաշտոնապես բողոքում բոլշևիկների կողմից Ղարաբաղում և Զանգեզուրում սանձազերծված բռնությունների և գնդակահարությունների առթիվ: Նույն թերթի հաղորդմամբ, օգոստոսի 22–ին Հ. Օհանջանյանը հայտագիր է ուղարկում դարձյալ Լեգրանին, որտեղ նշում է, թե սարսափելի հալածանքների են ենթարկվում ոչ միայն Ղարաբաղի և Զանգեզուրի հայ գործիչները, այլև նրանց ընտանիքներն ու բոլոր ազգականները: Նա խնդրում է «դադարեցվեն հալածանքները Ղարաբաղում և Զանգեզուրում մնացած հայ հասարակական գործիչների և նրանց ընտանիքների դեմ»: Միևնույն ժամանակ խնդրում է «հիշյալ շրջաններից հեռացնել ադրբեջանական զինվորական մասերը և հայ կոմունիստների խմբերը»: 1921 թ. փետրվարի 24–ին 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությանը հասցեագրված Լեռնահայաստանի կառավարության բաց նամակում զայրույթով գրված է. «Դուք էիք, որ խաբելով ավարի ու ավերա-

ծության մատնեցիք ըմբոստ ու ազատասեր Ղարաբաղը, Սյունիքն ու Վայոց ձորը. սոցիալական քայքայումի հետ անաստվածորեն առաջ տարաք այդ լեռնաշխարհը լցնող ժողովրդի գլխատման տխուր գործը»: Եվ ապա՝ «Ձեր, միայն թալանի մեջ մարզված ու Ղարաբաղում կին ու երեխաներ կոտորելու գործում մասնագիտացած զորքերը չեն, որ պիտ պաշտպանեն ձեր ձեռքերով գլխատված ու զինաթափ եղած հայ աշխատավորությանը»:[158]

Ահա՛ թե ովքեր էին «հայ ժողովրդի բարեկամները», մեզ «պաշտպանողները», ահա՛ թե ինչու ըմբոստացավ Արցախը և աջակից կանգնեց զանգեզուրցի իր եղբայրներին: Այդ օրերին Զանգեզուրի և Ղարաբաղի աշխատավորությանն ուղղված մի կոչում կարդում ենք.

«Զանգեզուրի և Ղարաբաղի հերոսնե՛ր:

Հայկական սև լեռների հերոսնե՛ր:

Հայե՛ր: Անկեղծ ու հավատարիմ բարեկամնե՛ր.

Մենք միշտ հրաժարվել ենք մեր գլուխը խոնարհելուց և միշտ բարձր գոռացել ենք մեր իրավունքների մասին, մեր նախատակված եղբայրների ու քույրերի մասին օտարների ուրախ խնջույքին:

Եվ այսօր մենք մնացել ենք առանց բարեկամների. մինչև անգամ Ռուսաստանի, որի վրա դարերով և մեծ հույսերով նայում էր տանջված ժողովուրդը, մեզ դավաճանեց և ձեռք ձեռքի տված Քեմալ փաշայի, Խալիլ փաշայի, Նուրի բեկի, Քերբալայ խանի ավազակային բանդաների հետ, քարուքանդ է անում մեր գյուղերը, ներս է խուժել մեր լեռները, որպեսզի արյան հեղեղների մեջ խորտակի մեր մանուկ ազատությունը:

Բայց մեր թշնամիները դառը կերպով սխալվում են: Կբացվեն խաբված ռուս ժողովրդի աչքերը և իրենց ազատության համար զոհվող մարմինները չեն գնա փոքր հայ ժողովրդի ազատության դեմ...

Զանգեզուրի և Ղարաբաղի հայե՛ր:

Մեր հայրենիքը ձեզ է սպասում, սպասում է ձեր զոհողություններին այն բանի համար, որ նա տվել է Ձեզ կյանք, Ձեզ տվել է անուն ու փառք:

Բուժեք նրա վերքերը, կանգնեցրեք արյունը...

Միևնույն մարզի զավակներ: Այս ծանր րոպեին կյանքի և մահվան առջև ձեռք ձեռքի տված միացեք հարազատ ժողովրդի դրոշակի շուրջը և կանգնեք հայրենիքի զոհվող մարտիկների շարքերում կռվելու հայրենիքի ազատության համար»:[159]

Արցախ–Զանգեզուրում մարդկանց թալանում էին, առանց դատ ու դատաստանի գնդակահարում, բռնագրավում գյուղացիների հացահատիկը, անասունները, տնային իրերը և ուղարկում Բաքու: Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը արտաքին գործերի նախարարին 1920 թ. օգոստոսի 27–ին ուղարկած հաղորդման մեջ գրում է. «Ղարաբաղի շրջանում հայ ժողովուրդը զինաթափ է արված: Թե՛ հայ և թե՛ թուրք բոլոր գյուղերում կարմիր զորքերից պահակներ են դրված, որոնք խստիվ հսկում են բերքի ժողովելու վրա և գյուղացիներին թողնելով սահմանված քանակությամբ հացահատիկ, մնացածը հավաքում են և տեղափոխում կենտրոնական վայրեր, իբրև պետական սեփականություն: Թե նորակոչի ենթարկված զինվորության և թե մանավանդ գյուղացիության շրջանում մեծ դժգոհություն կա խորհրդային իշխանության դեմ, բայց հարկադրված առժամանակ ենթարկվում են այդ կարգադրություններին»:[160] Որոշ ժամանակ անց, 1920 թվականի հոկտեմբերի 15–ին կազմված մի արձանագրության մեջ կարդում ենք, որ Ղարաբաղում և Զանգեզուրում ամբողջ հայությունը զինաթափ է արված բոլշևիկների կողմից և որ «բոլշևիկների վայրագություններին չափ ու սահման չկա: Քայքայված գյուղացիությունից պահանջում են տասնյակ հազարավոր փթերով ցորեն և գարի, խլում են ամբողջ երկրի բերքը, տավարը և այլ սեփականություն ու գիշերով ուղարկում Բաքու կամ Ռուսաստան: Գյուղերում շրջող զինված պահակները «խստությամբ հսկում են բերքահավաքի վրա և խլում նրա մեծագույն մասը: Գործադրում են ահաբեկչության բոլոր միջոցները...

Հայերին զոռով հավաքագրում են և ստիպում ծառայել Ադրբեջանի բանակում: Թուրքերն ուժեղ պրոպագանդա են մղում հայ ազգաբնակչությանը Ադրբեջանին հպատակ դարձնելու համար: Ուժով ստիպում են ստորագրել Ադրբեջանի իշխանությունը ճանաչելը»: Այնուհետև ասված է, թե «Ղարաբաղում և թե Զանգեզուր–Կապանի ժողովուրդը բուռն ատելությամբ է լցված դեպի իշխողները և հարմար առիթի է սպասում թոթափելու անտանելի լուծը»:[161]

Արցախում և Զանգեզուրում «ռազմական կոմունիզմի» քաղաքականության իրագործումը հասցրեց ծայրահեղությունների: Դրանում առանձնապես չափը կորցրեցին 28–րդ դիվիզիայի պարենային հանձնաժողովը և Բաքվից ներմուծված հեղկոմները: Առանց այն էլ քայքայված ու հյուծված գյուղացիներից խլում էին վերջին կտոր հացը, հաճախ էլ բանող անասունները և գյուղացուն զրկում իր տնտեսությունը վերականգնելու և առաջ մղելու խթանից: Արցախում բռնագրավումների աշխատանքները պլանավորված չէին, կատարվում էին առանց որոշակի կարգ ու կանոնի, առանց հաշվառման, մինչև անգամ հեղկոմներում չէր պահվում մթերքների կարգավորման վերաբերյալ որևէ հաշվարկ: «Եվ երբ,– գրել է բռնագրավումների ընթացքը ստուգող մի հանձնաժողով,– 28–րդ դիվիզիայի մթերային բաժինը սկսել էր մթերումը, բնականորեն մթերողները նշանակել են իրենք, և կատարվեց ոչ թե ավելցուկ մթերքների վերցնում, այլ գյուղացիների իսկական թալանում»:[162]

Արցախում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը լոկ շիրմա էր բնակչությանը թալանելու և ստորացնելու համար: Տեղերում ռազմական կոմունիզմի քաղաքականություն իրականացնողները ստեղծում էին այնպիսի պայմաններ, որ գյուղացիները «ախ ու վախ են անում» և արագորեն քայքայվում էին գյուղացիական տնտեսությունները:[163]

Երկրամասի աշխատավորների համբերության բաժակը լցվել էր: Ամենուր խոսում էին քաջարի Գարեգին Նժդեհի մարտիկների կողմից կարմիրներին և թուրք ասկյարներին հասցրած ջախջախիչ հարվածների մասին: Դա ոգևորեց արցախցիներին և նրանց մղեց պայքարի: Արցախահայությունը կրկին ոտքի ելավ իր ոտնահարված իրավունքները պաշտպանելու և Զանգեզուրի իր եղբայրների կենաց

ու մահու պայքարին աջակից լինելու համար: Այսպիսով՝ արցախահայության ազատագրական պայքարը թևակոխեց նոր շրջան: Այդ պայքարն ուղղված էր Ադրբեջանի արկածախնդիրների և նրանց հակահայկական պանթուրքական քաղաքականությունը պաշտպանող խորհրդային բռնատիրության դեմ: Ազգային ազատագրական այդ պայքարի գլուխ կանգնեց Թևան Ստեփանյանը:[164]

Թևան Ստեփանյանը ծնվել է 1892 թ. Լեռնային Ղարաբաղի Դիզակի շրջանի Տումի գյուղում, գյուղացու ընտանիքում: Նա ծառայել է ցարական բանակում, առաջին աշխարհամարտի տարիներին սպայի ուսադիրներով կռվել է նախ Արևմտյան, ապա՝ Կովկասյան ռազմաճակատում: Ականատես է եղել 1915–ի հայոց ցեղասպանությանը, տեսել է թուրք–թաթարների կողմից Ջաբուղի ձորում սրախողխող արված, ռազմաճակատից տուն վերադարձող հարյուրավոր հայ զինվորների դիակները, հայրենի Դիզակի շրջանում թուրք–թաթարների կողմից ավերված հայկական գյուղերը... Եվ ալեկոծվել է նրա սիրտն ու լցվել վրեժխնդրությամբ: Ժամանակակիցը այսպես է բնութագրել Թևան Ստեփանյանին. «Թևանը մի վառվռուն երիտասարդ, որն իր քաջության շնորհիվ հսկայական դեր խաղաց Ղարաբաղի ազատագրական պայքարում: Թևանն այն երիտասարդն էր, որ Ղարաբաղի սահմանագլխից ետ տվավ գնդապետ Թարիվերդիևին, որն իր զորքով ու թնդանոթներով թողնում էր Ղարաբաղը, իսկ ժողովուրդն էլ բռնել էր գաղթի ճանապարհը»:[165] Մեկ ուրիշ ժամանակակից՝ Թարխան Թարխանյանը, որը շատ լավ գիտեր Թևան Ստեփանյանին, հետագայում հիշել է. «Թիֆլիսի ռազմական դպրոցը միասին ենք ավարտել: Ավարտելուց հետո միասին մեկնել ենք ցարական բանակ: Երկուսով էլ սպաներ էինք, ես դասակի հրամանատար էի, իսկ Թևանը՝ վաշտի: Բանակում մեր հարգանքը փոխարինվեց սերտ բարեկամությամբ ու եղբայրությամբ: Մենք մեր վիշտն ու ուրախությունը միասին էինք տանում: Թևանը վեհանձն, պարզ, անսեթևեթ, մեծ կամքի ուժի և հայրենաբաղձ զգացմունքների տեր մարդ էր, լավ ընկեր ու բարեկամ: Որպես հրամանատար ու քաջ ռազմիկ՝ նա կարճ ժամանակում արժանացավ արծաթե մեդալի և պարգևատրվեց 10 հարվածանի մաուզերով»:[166]

Փետրվարյան հեղափոխությունից հետո Թևանը մասնակցում է զինվորների հեղափոխական ելույթներին: Ապա, իր վկայությամբ, 560 զինվորների հետ հեռանում է ռազմաճակատից և վերադառնում հայրենի Արցախ:[167]

Նրա տուն վերադառնալը համընկնում է թուրք–թաթարական բարբարոսների երկրամաս ներխուժելու հետ: Թևանը ակտիվորեն մասնակցում է Մսմնայի հերոսամարտին: Ապա կազմակերպում է մի ջոկատ՝ Դիզակի Մեծ Թաղ–Տումի ենթաշրջանի բնակչությանը Կարյագինոյի շրջանի մահմեդականներից պաշտպանելու համար: 1920 թ. ապրիլին, երբ Արցախ են մտնում Դրոյի և Գարեգին Նժդեհի զորամասերը, Թևանը սերտ կապ է հաստատում նրանց հետ: Իսկ երբ Արցախ են ներխուժում 11–րդ Կարմիր բանակի զորամասերն ու Ադրբեջանի հրոսակախմբերը և Արցախը հայտարարում Ադրբեջանի տարածք ու սկսում օկուպացնել այն, մի հանգամանք, որ խիստ վրդովմունք է առաջ բերում արցախահայության շրջանում, ահա այդ ժամանակ էլ Արցախում



ժողովրդական պայքարը ղեկավարելու համար Թևան Ստեփանյանը ստանում է Դրոյի հրամանը՝ իրեն «Լեռնային Ղարաբաղում գեներալ Նժդեհի տեղակալ նշանակելու մասին»:[168] Բայց, ինչպես վկայում է ինքը՝ Թևանը, բոլշևիկների գալուց 18 օր հետո նրան ձերբակալում են և հսկողության տակ տեղափոխում Մեծ Թաղեր գյուղը: Նրան հաջողվում է փախչել և կազմակերպել 40 հոգուց բաղկացած ջոկատ: «Զորակոչի և ջոկատի համալրման հետ կապված,– պատմում է Թևանը,– ամբողջ հետագա աշխատանքն ընթանում էր կարմիր զորամասերի հետ անընդհատ ընդհարումների պայմաններում, հանկարծակի հարձակումներով, որոնց նպատակն էր զենք բռնագրավել աճող հակաբոլշևիկյան ուժերի համար»:[169]

Վավերագրերը հաստատում են, որ Թևան Ստեփանյանը բավականին ակտիվ է գործել 1920 թ. աշնանից մինչև 1921 թ. ապրիլն ընկած ժամանակաշրջանում, երբ գլխավորում էր Ադրբեջանի արկածախնդիրների և 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության կողմից Արցախի և Զանգեզուրի աշխատավորների նկատմամբ կիրառվող հակահայկական քաղաքականության դեմ Արցախում բռնկված ազատագրական պայքարը: Ինչպես ասվել է, 11–րդ Կարմիր բանակը դարձել էր Ադրբեջանի կառավարությանը ենթակա պատժիչ ջոկատ, որի նպատակն էր Արցախն ու Զանգեզուրը բռնակցել Ադրբեջանին:[170]

Թևան Ստեփանյանը 1920 թ. աշնանը մեկնում է Զանգեզուր և Կապանում հանդիպում Գարեգին Նժդեհի հետ, որից էլ ստանում է հետևյալ հրահանգը. 1. Խորհրդային իշխանության դեմ պայքարը շարունակել և ուժեղացնել, դիմադրել հարձակման անցած խորհրդային զորքերին: 2. Խորհրդային իշխանության դեմ պայքարում միավորել բոլոր հակախորհրդային ուժերը:[171]

Այդ հանդիպման ժամանակ Գարեգին Նժդեհը խնդիր է դնում Լեռնային Ղարաբաղը միավորել Զանգեզուրի և Հայաստանի հետ: Նա Թևանին խոստանում է օգնել թե՛ զենքով և թե՛ մարդկանցով: Նժդեհը արցախահայության ապստամբներին ցույց է տալիս նաև ֆինանսական օգնություն: Կարճ ժամանակաշրջանում, ինչպես վկայում է Թևանը, ապստամբների թիվը հասնում է 1800–ի:[172]

Արցախահայության ապստամբությունը սկիզբ առավ Դիզակում և հասավ մինչև Վարանդա ու Խաչեն: Այդ մասին ահա թե ինչ է պատմում Թևանը. «Հեծյալ ու հետևակ ուժերով ես անհապաղ սկսեցի հարձակումը և 11–րդ ու 12–րդ բանակների դեմ անընդմեջ կռիվներով գրավեցի Լեռնային Ղարաբաղի Դիզակի և Վարանդայի բոլոր գյուղերը: Մեր ջոկատները զինամթերքով ու սննդամթերքով համալրվում էին 11–րդ և 12–րդ բանակների դեմ կռիվների ընթացքում, ապստամբությունների միջոցով: Այսպես, օրինակ, Թաղավարդ և Նորշեն գյուղերում մենք նվաճեցինք առանձին ստորաբաժանումների շտաբները՝ իրենց ամբողջ զենքով, զինամթերքով և սննդամթեքների պաշարներով: Ամենադաժան պայքարն էր գնում»:[173]

1920 թ. աշնանը հակախորհրդային ելույթներ են տեղի ունենում նաև Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ ադրբեջանական շրջաններում: Վավերագրերը խոսում են այն մասին, որ Թևանը Գարեգին Նժդեհի խորհրդով մինչև ան-

գամ փորձել է կապ հաստատել այդ ելույթների ղեկավարների հետ:

Ազատագրված գյուղերում ցրում են հեղկոմները և կուսակցական բջիջները, պատժում բոլոր նրանց, ովքեր ի չարն էին գործադրել իրենց պաշտոնը: Ղարաբաղի արտակարգ կոմիսար Ալիհեյդար Շիրվանին 1920 թ. հոկտեմբերի 21–ին Շուշիից հեռագրում է իր կառավարությանը. «Հայտնի ավազակ Թևանի կազմակերպած բանդան Շուշիի գավառի Թաղլարի և Թաղավարդի շրջանում զինաթափել է տեղական իշխանություններին, կուսբջիջներին և զավթել զենքի պահեստը: Նրա շայկան աճում է... Ազգամիջյան ջարդեր առաջ բերելու համար նրա զինվորները տեռորի են ենթարկում... գյուղերը: Լրացնում եմ, որ նշված շայկան նյութական օժանդակություն է ստանում և հրահանգավորվում Արարատի դաշնակցական ռազմական իշխանության կողմից»:[174]

Թևան Ստեփանյանը խնդիր ուներ հայրենի Արցախն ազատագրել Ադրբեջանի և Կարմիր բանակի բռնատիրությունից, միանալ Զանգեզուրին և միավորվել մայր Հայաստանի հետ: Դրա համար 1920 թ. վերջին և 1921–ի սկզբներին, օգնություն ստանալով Գարեգին Նժդեհից, նրա ջոկատները հասնում են նոր հաջողությունների և Կարմիր բանակի զորամասերին ստիպում նահանջել Աղդամ, Ջեբրայիլ և Շուշի: Արխիվային մի փաստաթղթում, որը կազմվել է 1920 թ. դեկտեմբերի 31–ին, ասված է, թե Ջեբրայիլ–Կարյագինոյի շրջանում 600 հոգուց բաղկացած մի հեծելազոր կա, որի նպատակն է Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ոտքի հանել և Շուշիի վրա միաժամանակ հարձակում գործել Լիսագորի, Ասկերանի բերդի և Խանքենդիի կողմից: 1921 թ. հունվարի 15–ին կազմված մեկ այլ տեղեկագրում ասված է, թե դաշնակները գրավել են Դրախտիկն ու Սոսը և հիմա գտնվում են Ճարտարից չորս վերստ հեռավորության վրա: Ապա՝ «Խորհրդային իշխանության նկատմամբ Թաղավարդ–Կարյագինոյի բնակչության վերաբերմունքը թշնամական է: Տող գյուղի հայերը շրջակա մուսուլմանական գյուղերին խնդրել են իրենց թույլ տալ գնալ և Շուշին մաքրել Կարմիր բանակից»: Հունվարի 24–ին կազմված տեղեկագրում նշվում է, որ՝ «...Հակառակորդը Լեռնային Ղարաբաղում գրաված գյուղերը միացնում է Արարատյան հանրապետությանը, որի ներկայացուցիչ Թևանը ուժով կատարում է 20–ից մինչև 65 տարեկան տղամարդկանց զորահավաք»: Այնուհետև ասվում է, թե «մոտակա ժամանակներում Ղարաբաղում սպասվում է Զանգեզուրից Նժդեհի գալուն, որը Թևանի հետ համատեղ կգործի Ղարաբաղում գտնվող Կարմիր բանակի դեմ»:[175]

Շուշիի գավառային հեղկոմի նախագահ և Ղարաբաղի արտակարգ կոմիսարի տեղակալ Շամիլ Մահմուդբեկովի 1921 թ. փետրվարի 15–ին կազմված զեկուցագրում, որն ուղարկվել է Ադրբեջանի ներքին գործերի ժողկոմ Հ. Սուլթանովին և ռազմածովային ժողկոմ Ա. Կարաևին, հաղորդվում է, թե ապստամբները ձգտում են «Լեռնային Ղարաբաղը լիովին կտրել հարթավայրերից»: Ապա՝ Թևանը, որը ֆինանսավորվում և հրահանգավորվում է Զանգեզուրի դաշնակների կողմից, ներկայումս կանգնած է ապստամբության գլուխ, որն ընդգրկվել է համարյա ամբողջ երկրորդ տեղամասը (խոսքը վերաբերում է Դիզակի և Վարանդայի շրջաններին– Հ.Ա.)»: Հեղկոմի նախագահը չի թաքցնում, որ «մինչև հիմա չի եղել դեպք, երբ Թևանի մարդիկ մտնեն որևէ գյուղ, և վերջինիս բնակչությունը դիմադրություն ցույց տա», իսկ «նման դեպքերում կուսբջիջները սովորաբար ցրվել են. մի մասն անցել է Թևանի կողմը, իսկ մնացածներն աններելիորեն լքել են իրենց հեղափոխական դիրքերը և փախել: Դեպքեր են եղել, երբ մեր ռազմական ջոկատները առաջ շարժվելով, հարձակման են ենթարկվել թիկունքից, որտեղ օր առաջ գոչել են՝ «կեցցե խորհրդային իշխանությունը»: Դրա համար էլ ամբողջ երկրորդ տեղամասը հանդիսանում է թշնամու ճակատ»:[176]

Արցախահայության ազատագրական պայքարը ճնշելու և այն արյան մեջ խեղդելու համար 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի պարագլուխները շտապ կարգի են բերում Զանգեզուրում Գարեգին Նժդեհի ուժերի կողմից ջախջախված և ղարաբաղ նահանջած 28–րդ դիվիզիայի 250, 251 և 252–րդ գնդերը, նրանց կցում Վարանդայում, Դիզակում և Խաչենում կազմակերպված կոմունիստների ջոկատները և այդ ամենն ուղղում Թևան Ստեփանյանի հազիվ մի քանի հարյուրի հասնող ուժերի դեմ: Շտապ Բաքվից Շուշի է փոխադրվում պատժիչ ջոկատ ռազմածովային ժողկոմ Ալիհեյդար Կարաևի գլխավորությամբ: Շամիլ Մահմուդբեկովը 11–րդ Կարմիր բանակի հեղափոխական ռազմական խորհրդին և Ադրհեղկոմին 1920 թ. դեկտեմբերի 31–ին ուղարկած հեռագրում պահանջում է կարգադրել Աղդամում գտնվող 84–րդ կոմբրիգադային և Շուշիի գավառների միլիցիային, պարտիզանական և հատուկ նշանակման ջոկատներին, որոնք պետք է կռվեին Ղարաբաղի և Զանգեզուրի ապստամբների դեմ, Շուշիի ռազմական պահեստից բաց թողնել 2000 հրացան: Վերջում հաղորդում է, որ հակահեղափոխությունը կոնկրետ և որոշակի բնույթ ունի:[177] 11–րդ Կարմիր բանակի քաղոչական մեքենան հետզհետե ավելի ու ավելի է ընդլայնում իր հակահայկական գործունեությունը: 1921 թ. գարնան սկզբին 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության կազմած հաղորդագրություններից մեկում ասված է. «Զանգեզուրի հակահեղափոխությունը հանդիսանում է Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների համար ներկայի և ապագայի դժբախտությունների մշտնջենական աղբյուրը: Դաշնակ–մուսավաթական հակահեղափոխությունը հանդիսանում է ընթացիկ տարում Հայաստանում և Ղարաբաղում տեղի ունեցած փետրվարյան ավանտյուրայի գաղափարական և ֆիզիկական ոգեշնչողը, ապստամբություն, որն այնքան թանկ նստեց հայ–մուսուլմանական չքավորության վրա...»:[178] Ահա թե ինչու կարմիր հրամանատարները, որոնք լուռ ու մունջ կատարում էին Ադրբեջանի պարագլուխների պահանջները և ակտիվորեն նպաստում նրանց նպատակների իրականացմանը, հիմա փորձում են իրենց հանցագործությունների համար մեղավոր ճանաչել ազատատենչ զանգեզուրցիներին:

Իմիջիայլոց, ինքը՝ Գարեգին Նժդեհը, երբեք էլ չի ժխտում, որ հանդիսացել է Արցախում բռնկված ազգային ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը: Այժմ լսենք նրան. «Լեռնային Ղարաբաղի հետ կապված էի դեռ 1920 թ. նոյեմբերի կեսերին, Գորիսը գրավելուց մի քանի օր հետո:

Այդ օրերին, որոշ հրահանգներ ստանալու նպատակով Սյունիք է անցնում Դիզակի խմբապետ Թևանը: Սրա վերադարձից հետո, Տաթև են հասնում Դի-

գակի երկու ներկայացուցիչները՝ ղեկավար, ռազմամթերք ու մի զորամաս խնդրելու առաջելությամբ:

Հունվարի կեսին Ղարաբաղ ուղարկածս սյունեցիների առաջին զորամասի աջակցությամբ տեղի ապստամբները օրերի ընթացքում մաքրում են բոլշևիկներից ամբողջ Դիզակը: Մի քանի օր անց, կարմիրները պարտված, տեղի են տալիս Վարանդայի շրջանում ետ քաշվելով դեպի հարավ, ամրանում են Հադրութում: Մարտի 8–ին խորհրդային զորքերը կորցնում են Ղարաբաղում ունեցած իրենց վերջին հենակետը: Մերոնց ճակատային մի խիզախ գրոհից հանկարծակի եկած թշնամին խուճապով փախչում է դեպի Ջեբրայիլ՝ թողնելով հարյուրավոր սպանված, 150 գերի, ռազմամթերք, գնդացիրներ. հացի պաշար և այլն:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը թոթափում է խորհրդային լուծը և միանում Սյունիքին»:[179]

Արցախում բռնկված ազատագրական պայքարը նոր թափ առավ 1921 թ. հունվար–փետրվար ամիսներին: Գարեգին Նժդեհը, որի համար «Ղարաբաղի գրավումը վճռված խնդիր մըն էր», վճռեց նախ դարձի բերել մեծամասնականներուն հպատակություն հայտնող» հայերին[180] և նոր ուժեր ուղարկել Արցախ: Այդ առթիվ հիշատակության արժանի է Վայոց ձորի աշխատավորների առաջին համագումարի նախագահ Եղիշե Իշխանյանի 1921 թ. մարտի 5–ին Գարեգին Նժդեհին ուղարկած խանդավառ նամակը. «Սիրելի Սպարապետ, դուք երկար ամիսների ընթացքում և հարազատ հայկական հանրապետութեան անկումից յետոյ բարձր և անուր պահեցիք ձեր ուժեղ ձեռքում ազատ և անկախ Հայաստանի սրբազան դրօշը, որը ծածանւում էր Միւնեաց Լեռնաշխարհում եվ դէպի որը ուղղւած էր ամբողջ հայութեան ուշադրութիւնը. Դուք գերմարդկային ճիգեր թափելով ազատագրեցիք ամբողջ Զանգեզուր–Ղարաբաղը հայ դավաճանների և դրսի բռնակալ ուժերի տիրապետութիւնից...

Կեցցէք մեր հայրենիքի ազատարար հերոս սպարապետ, և ձեր զինակիցները: Նախագահ համագումարի Եղիշե Իշխանեան:

Քեշիշքէնդ, 5 մարտի, 1921»:[181]

Կարմիր բանակի հրամանատարությունը շարունակում էր դեգերել և մեղքն իրենից վանելու ելք որոնել: 11–րդ Կարմիր բանակի 84–րդ բրիգադի հրամանատար Սեմյոնովը 1921 թ. հունվարի 22–ին Զանգեզուրի կառավարությանն ուղարկած պաշտոնական գրության մեջ գրում է. «Այն օրից, երբ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն, Զանգեզուրում և Ղարաբաղում գյուղացիության և բանվորության արյունը թափելն ավելի քան ոճրագործություն է»:[182] Բայց դա ո՞ւմ էր ասում. Սյունյաց աշխարհի և Արցախի ապստամբների՞ն, որոնք ոտքի էին ելել այդ նույն կարմիրների և թաթար ազգայնամոլների բռնությունների ու հայահայկական քաղաքականության դեմ:

Կարմիր բանակի հրամանատարության և Ադրբեջանի պարագլուխների պահանջով մոբիլիզացվում են Բաքվից և այլ վայրերից Արցախ ուղարկված կոմունիստները և բոլոր նրանք, ովքեր անցել էին բոլշևիկների «քուրայով»: Կազմակերպվում են կոմունիստական գումարտակներ և ջոկատներ, որոնք



անմիջապես ենթարկվում էին 11–րդ Կարմիր բանակի հրամանատարությանը: Այդ ամբողջ ուժերը կենտրոնացվեցին Կարյագինոյի, Աղդամի և Ավդալարի շրջաններում: Թևան Ստեփանյանի փոքրաթիվ ջոկատները շարունակում էին ջախջախիչ հարվածներ հասցնել Կարմիր բանակի զորամասերին և կոմունիստական գումարտակներին: Այս վերջիններին զինելու համար Բաքվից շտապ ուղարկվեց 600 հրացան, 50 հազար փամփուշտ, 400 համալիր հագուստ, գնդացիրներ և այլ ռազմական հանդերձանք:[183]

11–րդ Կարմիր բանակի հրամանատարությունը և Ադրբեջանի ղեկավարությունը տեսնում էին, որ Արցախ–Զանգեզուրի ժողովրդական ապստամբությունը լուրջ վտանգ է սպառնում խորհրդային կարգերին: Զանգեզուրի և Արցախի ամբողջ ապստամբությունը հանդես էր գալիս որպես մի միասնական ուժ, մի բռունցք: Ահա թե ինչու հակառակորդը շտապում էր ամենից առաջ խեղդել արցախահայության ազատագրական պայքարը, հետո ամբողջ ուժերը նետել Զանգեզուր: Դա խիստ անհանգստացնում էր Զանգեզուր–Արցախ ազատագրական պայքարի ընդհանուր ղեկավար Գարեգին Նժդեհին: «Դժբախտաբար,– հետագայում գրում է նա,– Ղարաբաղի մեր վերջին հաջողություններին հաջորդում է Վրաստանի անկումը: Վրաստանի գրավումը խորհրդային իշխանության կողմից, միանգամայն հուսահատեցրել է ղարաբաղցիներին: Իր մի հաղորդագրության մեջ, իմիջիայլոց, ասում էր մեր Ղարաբաղի էքսպեդիցիոն զորամասի պետ Տեր–Պետրոսյանը 1921 թ. ապրիլի 8–ին. «Ես նույնիսկ կասկածում եմ,– գրում էր նույնը,– որ մենք կարողանանք այստեղից ապահով դուրս գալ»: Իսկ 1921 թ. ապրիլի 12–ի թվակիր գրությամբ Տեր–Պետրոսյանը տեղեկացնում էր. «Կամուրջը քանդուած է, հաղորդակցությունը կտրուած, կռիվներն սկսուած»:

Թշնամին որոշել էր երկու կրակի մեջ առնելով, ոչնչացնել մեր Դիզակի զորամասին: Եվ չուշացավ նա»:[184]

Արցախի ապստամբական ուժերի դեմ ընդհանուր հարձակումը սկսվեց 1921 թ. ապրիլի 15–ի լուսաբացին. «Շաղախ, Աղջաքենդ, Թաղ, Խծաբերդ գյուղերը Թևանի հիմնական բազաներն էին,– հետագայում պատմում է 251–րդ գնդի հրամանատար Վ.Ֆ. Մըզդրիկովը:– Ինձ համար պարզ էր, որ Կարյագինոյի կայազորի հաջողությունից է կախված Լեռնային Ղարաբաղում բանդայի լիկվիդացիայի ընդհանուր հաջողությունը, 28–րդ բրիգադայի ամբողջ հաջողությունը»:[185] 250–րդ և 252–րդ գնդերը Վարանդայի և Խաչենի կոմունիստական ջոկատների հետ առաջ են շարժվում Մեծ Թաղի ուղղությամբ և ապրիլի 15–ի երեկոյան գրավում այն: Ապստամբները քաջաբար դիմադրում են: Խիզախորեն էին կռվում գրեթե բոլոր մարտիկները: Ճակատներում կռվողներին ակտիվորեն օգնում էին Դիզակի աշխատավորները:

Ապրիլի 16–ին փոխվում է ընդհանուր դրությունը: Զինախառն անձրևները անհնարին դարձրին կարմիր զորամասերի առաջխաղացումը, մանավանդ չէին կարողանում տանել հրանոթները: Այդ հրանոթներով սկսում են գնդակոծել հայկական գյուղերը և ավերել: Թևանի ջոկատների համարձակ հարվածների տակ 250–րդ և 252–րդ գնդերը ստիպված էին նահանջել: Այդ օրերին Նժդեհը նոր օժանդակ ուժեր է ուղարկում: Ապստամբները նախաձեռնությունը

վերցնում են իրենց ձեռքը, նրանք Գարեգին Նժդեհից նոր օգնություն են խնդրում: Վերջինս շտապում է «կազմակերպել Ղարաբաղում պաշարված զորամասերին օգնության հասնելու գործը»: Այդ օրերին ապստամբները կորցնում են Եփրեմ խանին, Փարսադան Շուշեցուն և այլոց:[186]

Ապրիլի 18–ին հակառակորդը անցնում է նոր հարձակման: Հետագայում Գարեգին Նժդեհը կպատմի. «Թշնամին փորձեր կատարեց սեպաձև թաղվելու Ղարաբաղի և Սյունիքի միջև: Նա ոտի հանեց նաև Դիզակի և Ջաբուղի միջև ապրող թրքությունը: Վերջինը ապրիլի 7–ից սկսած թշնամական գործողություններ սկսեց մեր դեմ: Նա պարբերաբար խորտակում էր Ջաբուղի կամուրջը, հարձակվում էր մեր քարավանների վրա, կտրում էր գիծը...

Վաղուց է, ինչ անհանդուրժելի ծանրացել էր դրությունը, բայց և այնպես, պետք էր դիմանալ Ղարաբաղում, մինչև որ կպարզվեր Երևանի դրությունը»:[187]

Արցախի հերոս մարտիկները ապրիլի 19–ին թողեցին վերջին կետը՝ Խծաբերդ գյուղը:[188]

Ահա այսպիսի ճակատագիր ունեցավ կարմիրների և ազերիների բռնատիրության դեմ Հայաստանի արևելյան տարածքի բնակչության մղած հերոսական պայքարը Թևան Ստեփանյանի գլխավորությամբ: Հետո կարմիր զինվորները և թուրք ասկյարները դաժան հաշվեհարդար տեսան արցախահայության հետ: Այդ հալածանքը Ադրբեջանում շարունակվեց երկար տարիներ: Աբրահամ Կիսիբեկյանը գրել է. «Ռուսական զորքը նորից գրավեց Ղարաբաղը: Շատերն ստիպված եղան թողնելու իրենց տունն ու տեղը և ընդմիշտ հեռանալու Ղարաբաղից, իսկ մնացածներից շատերն էլ բանտ նետվեցին և ոմանք էլ գնդակահարվեցին»:[189]

Հետագա իրադարձությունները այսպես է բնորոշել պատմաբան Լևոն Մկրտչյանը. «...Մի խումբ ապստամբներ, առաջնորդի գլխավորությամբ, անցան Պարսկաստան, ուրիշներն ապաստանում են Դիզակի լեռներում ու անտառներում, իսկ մյուսներն էլ անցան Զանգեզուր, Նժդեհի մարտիկներին միանալու համար»: Եվ չնայած «Թևանն ու նրա գործակիցները շարքից դուրս եկան, բայց «թևանականություն» գաղափարը մնաց ժողովրդի հիշողության մեջ, մինչև հիմա»: «Թևանականություն» արտահայտությունը, անմահ» մնաց թե՛ բնակչության և թե՛ իշխանությունների պատկերացման մեջ: Եվ ամեն անգամ, երբ հարկ եղավ որևէ պատրվակով մարդկանց կործանել, նրանց հայրենասիրական ըմբռնումների ու վարքի համար անմիջապես առաջ քաշվեց «թևանական» պիտակը, մանավանդ 1936–1938 տխրահռչակ թվականներին»:[190]

1920-30 թվականներին Թևան Ստեփանյանը մի քանի անգամ անցնում է սահմանը, լինում հայրենի երկրամասում: 1941 թ. նոյեմբերին, երբ նա ավտոմեքենայով գնում էր Շիրազ՝ անգլիացիների մոտ, Թեհրանից մոտ 10–12 կմ հեռու ձերբակալվում է խորհրդային չեկիստների կողմից, տարվում Բաքու և այնտեղ գնդակահարվում:

Այսպիսի ողբերգական ճակատագիր ունեցավ Արցախի ազատագրական պայքարի հերոս Թևան Ստեփանյանը, որի անունը դեռ թարմ է մնացել արցախահայության հիշողության մեջ:



## *4. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՎԱՐՏ*

1921 թ. գարնան վերջերին Արցախի քաղաքական վիճակը դեռևս անհայտ էր, և Ադրբեջանը ոչինչ չէր խնայում բռնատիրանալ նրան: Նախ և առաջ ուժեղացվում է տնտեսական ճնշումը, որով փորձ էր արվում արցախահայությանը հրապուրել Բաքվում, Ադրբեջանի մյուս բնակավայրերում ու հարթավայրային շրջաններում բարեկեցիկ ապրելու երազանքներով, միայն թե արցախցիները հեռանան իրենց բնակավայրերից, աստիճանաբար դատարկեն երկրամասը և այն զիջեն մուսուլմանական խաշնարածներին: Ադրբեջանի ազգայնամոլներն այդ հեռահար նպատակն իրագործում էին տասնամյակներ շարունակ:

Առաջին աշխարհամարտը, թուրք–թաթարական զավթիչների դեմ մղած պայքարը, և 11–րդ Կարմիր բանակի ավերիչ գործողությունները քայքայել էին Ղարաբաղի տնտեսությունը և բնակչության մի մասին արտանետել երկրամասից դուրս: Արցախցին սովոր է ունենալ կայուն տնտեսություն և ամեն կերպ հոգալ իր ապրելու միջոցները՝ թեկուզև արտագնա աշխատանքի միջոցով: Երբ արդեն դադարել էին կրակոցները, նա ավելի շատ մտահոգված էր իր տնտեսության վերականգնմամբ՝ ամենից առաջ հույսը դնելով սեփական ուժերի վրա: Արցախցիների վրա շատ ծանր էր նստում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որից փրկության ելք գտնելու միջոցներից մեկն էլ Բաքու աշխատանքի գնալն էր:

1920-ական թվականների սկզբներին Արցախի տնտեսությունը գտնվում էր ողբալի վիճակում: 1920 թ. այստեղ չէր գործում արդյունաբերական ոչ մի ձեռնարկություն: 1913 թ. համեմատությամբ գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունները կրճատվել էին 47.8. լծկան անասուններինը՝ 24, ձիերինը՝ 50,8, ոչխարներն ու այծերը՝ 35 տոկոսով:[191] Զգալիորեն ցածր էր հողի բերքատվությունը: 1921 թ. հազիվ ստացվեց 450 հազար փութ հացահատիկ, 1913 թ. 969 հազար փթի դիմաց: Լիովին անկում ապրեց տեխնիկական կուլտուրաների մշակությունը: Թթենիներն ու խաղողենու այգիները գտնվում էին քարձիթփոքի վիճակում, գրեթե դադարել էր բամբակի մշակումը, խաղողի հեկտարի միջին բերքատվությունը չէր անցնում 8 ցենտներից: Արխիվային մի փաստաթղթում ընթերցում ենք, որ Արցախում հողը քիչ է, բայց սերմերի և բանող անասունների բացակայության պատճառով մնում է անմշակ: Սերմերի բացակայության պատճառով Շուշիի գավառում սովի էին մատնվել ոչ միայն գյուղացիները, այլև բանվորները, զինվորները, հիվանդանոցների և խորհրդային հիմնարկների աշխատողները:[192]

1921 թ. Լեռնային Ղարաբաղի 225 բնակավայրերում ապրող 27058 տնտեսություններն ունեին ընդամենը 104.648 գլուխ անասուն: Երկրամասի գյուղական բոլոր տնտեսությունների 41 տոկոսը զուրկ էր լծկան անասուններից, իսկ

կեսից ավելին հողամշակման գործիքներից: Վարելահողերի քչությամբ Լեռնային Ղարաբաղն Անդրկովկասում բռնում էր վերջին տեղերից մեկը:

Արցախցիները, դարեր շարունակ ենթարկվելով քոչվոր մուսուլմանների անընդհատ ասպատակություններին և ճնշումներին, թողել են իրենց հարթավայրային տարածքները և ծվարել լեռներում: Մուսուլման վաչկատունները, տիրելով Արցախի հարթավայրերին, ձեռք էին մեկնում նաև ամառային արոտավայրերին: Այնուամենայնիվ, արցախցին մնաց իր օրրանում, իր անտառներին և հավերժական լեռներին կպած ու կարծրացած: Ոչ ոք նրան չկարողացավ պոկել իր արմատից: Եվ մնաց ու արարեց:

Յուծված ու ահաբեկված արցախցիները նյութական և բարոյական օգնության կարիք էին զգում: Երկրում իրագործվող նոր տնտեսական քաղաքականությունը խիստ դանդաղ էր արմատավորվում Արցախ աշխարհում: Այստեղի սակավահողությունը, եղած հողերի մի մասի անբերրի և վատորակ լինելը, գյուղական բնակչության գրեթե կեսի մոտ հողամշակման գործիքների և լծկան անասունների բացակայությունը, աշխատող տղամարդկանց տարագնացության բարձր տոկոսը և այլն, կուսակցական ու պետական մարմիններից պահանջում էին ստեղծագործական մոտեցում ցուցաբերել ժողովրդական տնտեսության շինարարության հարցերը լուծելիս: 1921 թ. ապրիլի 21–ին Շուշիում հրավիրված Ղարաբաղի գավառների պատասխանատու աշխատողների կոնֆերանսում նոր տնտեսական քաղաքականության վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ադրկոմկուսի Կենտկոմի անդամ Լևոն Միրզոյանը: Կոնֆերանսը պաշտպանեց նոր տնտեսական քաղաքականության կուրսը և որոշեց Ղարաբաղում թույլատրել բոլոր տեսակի մթերքների և արդյունաբերական ապրանքների ազատ առևտուրը, ապրանքների ներմուծում և արտահանումը գավառից գավառ, պետությանը եկամուտ չբերող անգործունեության մատնված արդյունաբերական ձեռնարկությունները, առաջին հերթին մետաքսագործական ֆաբրիկաները վարձակալության տալ և իրականացնել պարենահարկը:[193] Կոնֆերանսի որոշման համաձայն՝ Դիզակի և Խաչենի շրջաններում ազգայնացված մետաքսագործական ֆաբրիկաներից տասնմեկը վարձակալման հանձնվեց մասնավոր մարդկանց:[194]

Խորհրդային Ռուսաստանում և Անդրկովկասի դաշնակցային հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունները խոր կնիք էին թողնում Խորհրդային Ղարաբաղի կյանքի վրա: Եվ չնայած արցախցիների ապրելապայմանների ինքնատիպությանը՝ այնուամենայնիվ, այստեղ ևս գոյություն ունեին այն բոլոր կացութաձևերը, որոնք կային Հայաստանում և հարևան մյուս հանրապետություններում:

Նոր տնտեսական քաղաքականությունն աշխուժացրեց նաև Լեռնային Ղարաբաղի կյանքը: «Ղարաբաղում,– կարդում ենք ժամանակի մամուլում»,– պարենավորման դրությունը կանոնավորվում է: Ապրանքների ազատ արտահանություն հայտարարվելուց հետո, համեմատաբար էժանություն է նկատվում»:[195] Սկսած 1921 թ. աշնանից Արցախի առանձին շրջաններում, օրինակ, Ջրաբերդում, համեմատաբար ավելի արագ էր բարելավվում բնակչության



տնտեսական վիճակը: Ջրաբերդի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի 1921 թ. զեկուցագրերից մեկում նշված է, թե այս տարի ավելի շատ ցանքս է կատարվել, քան անցյալ տարի:[196] Ջրաբերդի շրջանում ջրովի հողատարածությունները համեմատաբար շատ էին, ուստի այստեղ ավելի բարձր էր բերքատվությունը: Դրա համար էլ լեռնային մասի շատ գյուղացիներ աշխատանք և հաց ձեռք բերելու համար գնում էին Ջրաբերդի նախալեռնային գյուղերը: Կյանքի աշխուժացման նշաններ կային նաև Խաչենի, Վարանդայի, Դիզակի և Գանձակի հայկական շրջաններում, ուր գյուղական տնտեսությունների մի զգալի մասը զբաղվում էին խաղողագործությամբ և թթագործությամբ: Ձեռնարկված միջոցառումների հետևանքով արդեն 1922 թ. երկրամասում կատարվեց 28 հազար դեսյատին ցանքս, 1921 թ. կատարված 17220 դեսյատինի դիմաց:[197] 1921 թ. Արցախում արտադրվեց 180 հազար փութ խաղող՝ 1913 թվականին արտադրված 320 հազար փթի դիմաց:[198] Հաջորդ երկու տարիներին խաղողի արտադրությունը մնաց նույն մակարդակին:

Լեռնային Ղարաբաղի կուսակցական և պետական մարմինները հատուկ ուշադրություն էին դարձնում սպիրտի և խմիչքների արտադրության արագ վերականգնմանը, որովհետև այդ ապրանքներն ամենից առաջ ունեին արդյունաբերական նշանակություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսությունն արագ էր վերականգնվում և կայունանում այն գյուղերում, որտեղ զբաղվում էին այդ ապրանքների արտադրությամբ: Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի տնտեսության զարգացման յուրահատկությունը ստիպում էր ուշադրություն դարձնել բամբակագործությանը, իսկ Խաչենի, Վարանդայի և Դիզակի շրջանների տնտեսության զարգացման յուրահատկությունը՝ սպիրտի և խմիչքների արտադրությանը: Ղարաբաղի արտակարգ կոմիսարիատի 1920 թ. հունիսի 27–ի հրամանով ազգայնացվեց Լեռնային Ղարաբաղի բոլոր տեսակի խմիչքների արտադրությունը: Այդ հրամանում ասված է, թե սպիրտային բունդ խմիչքները հայտարարվում են պետական մենաշնորհ, արգելվում է սպիրտային խմիչքների մասնավոր առևտուրը, եղած սպիրտային խմիչքները հաստատուն գներով պետք է հանձնվեն պետությանը, վերացվում է սպիրտային խմիչքներից գանձվող ակցիզային տուրքը և օղու քանակը հաշվառելու համար նշանակվում են հատուկ հսկիչներ: Կոմիսարիատը պարտավորեցնում էր բոլոր հեղկոմներին և կուսակցական բջիջներին՝ հրամանագրի բովանդակությունը հասցնել բնակչության գիտակցությանը և իրագործել կյանքում:[199]

Ադրբեջանի իշխանությունները ձգտում էին Լեռնային Ղարաբաղի ամբողջ տնտեսությունը կենտրոնացնել իրենց ձեռքում և արցախահայությանը նետել կարիքի գիրկը: Ամենից առաջ խիստ դժվարություններ են ստեղծվում արտադրված մթերքների իրացման գործում: Այդ է ապացուցում թեկուզև հետևյալ փաստը. 1920 թ. սեպտեմբերի 13–ին Դիզակի հսկիչը հաղորդել է, որ գավառում 28000 դույլ օղի է թորվել, որը պահվում է Հադրութում, Առաքելում և Էդիլլուում, իսկ Տող–Թաղի շրջանում թորված 1071 դույլ օղին գտնվում է հենց կաթսաների մոտ: «Օղագործները,– շարունակում է հսկիչը,– օղեպատրաստ-

ման աշխատանքներն ավարտելու օրից բազմիցս դիմել են ինձ և հարցրել, թե ինչ է արվելու հաշվառված օղին, այնպես որ շատ գյուղացիներ ապրում են բացառապես օղեգործությունից ստացվող օգուտով և հարցի ոչ օգտավետ լուծվելու դեպքում, նրանք կմատնվեն սովի»:[200] Գյուղացիները ստիպված էին խմիչքները տեղափոխել Յորադիզ և Եվլախ կայարանները, իսկ հաճախ էլ՝ սայլերով հասցնել Բաքու: Այդ էր պատճառը, որ 1922 թ. Լեռնային Ղարաբաղում արտադրվեց հազիվ 1.430.724 աստիճան սպիրտ, որը կազմում էր նախապատերազմյան մակարդակի գրեթե 45 տոկոսը:[201] Ըստ հավաքված թթի բերքի քանակի, ավելի քան մեկ միլիոն աստիճան սպիրտ պակաս արտադրվեց:

1920–1921 թթ. դրությամբ Լեռնային Ղարաբաղում օգտագործման ենթակա էին մնացել նախապատերազմյան մետաքսագործական թասերի 33, մետաքսաոլորման իլիկների 23 տոկոսը:[202] 1921 թ. սկսած, աշխատանքներ էին տարվում մետաքսագործական ֆաբրիկաները վերականգնելու համար: Արցախցի վարպետների համառ աշխատանքների շնորհիվ արդեն 1922 թ. գործի գցվեցին հինգ ֆաբրիկա, որոնցից երեքը Դիզակում, իսկ երկուսը՝ Խաչենում: Այդ ֆաբրիկաներից մեկը պետական էր, չորսը՝ վարձակալությամբ տրված: Այդ նույն թվականին բոլոր ֆաբրիկաները աշխատեցին ընդամենը 159 օր[203] և արտադրվեց 98 փութ մետաքս–հումք, որից 56 փութը բաժին էր ընկնում Խնձրստան գյուղում գտնվող պետական ֆաբրիկային:

Նոր տնտեսական քաղաքականության առաջին տարվա արդյունքները ցույց տվեցին, որ Լեռնային Ղարաբաղում ժողովրդական տնտեսության վերականգնման գործընթացը շատ հետ էր մնում խորհրդային երկրի տնտեսության զարգացման ընդհանուր մակարդակից: Բացահայտվեց, որ այստեղ գավառների միջև շատ դանդաղ էին զարգանում տնտեսական կապերը, լեռնային մասի շատ գյուղեր մնում էին շուկաներից կտրված, առևտրի մեջ իշխում էր ապրանքափոխանակությունը, նյութաֆինանսական միջոցների բացակայության պատճառով չափազանց դանդաղ էին վերականգնվում արդյունաբերական ձեռնարկությունները, չկային որակյալ կադրեր: Լեռնային Ղարաբաղում ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունների 90 տոկոսից ավելին մատնված էին անգործության, չէին գործում նաև Մեհմանայի պղնձի և Առաջաձորի ջրաղացքարերի հանքերը: Շոշափելի չէին նաև երկրամասում երևացած առաջին կոոպերատիվների արդյունքները:

1920–1921 թթ. նկատվում էին մասնատիրական կապիտալիզմի զարգացման առաջին նշանները, որի հետագա վերելքին խոչընդոտում էին պետական իշխանությունները: Մանր ապրանքային արտադրությունը որոշ տեղ էր գրավում առանձնապես այնտեղ, որտեղ զբաղվում էին բամբակագործությամբ, շերամապահությամբ, խաղողագործությամբ և թթագործությամբ: Արտադրված ապրանքները գյուղացիները հիմնականում իրենք էին հանում շուկա: Լեռնային և նախալեռնային շրջաններում մեծ տեղ էր գրավում նահապետական արտադրաձևը, որտեղ հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ:

Լեռնային Ղարաբաղի ժողովրդական տնտեսության վերականգնման երկրորդ և երրորդ տարիներին համեմատաբար արագ էր զարգանում մետաքսա-



գործությունը: Արդեն 1923 թ. գարնանը աշխատում էին 10 մետաքսագործական և մեկ մետաքսաոլորման ֆաբրիկաներ: Եթե 1922 թ. մեկ կարժական հաստոցը աշխատել էր 32,2 օր, ապա 1924–ին այն հասավ 145,6–ի:

Բավականին քիչ էր Լեռնային Ղարաբաղի հողօգտագործման ֆոնդը: Այստեղ մեկ շնչին միջին հաշվով ընկնում էր 0,41 դեսյատին վարելահող:[204] Միանգամայն հասկանալի է, որ իր պատմական հողերից զրկված արցախահայությանը չէր կարող բավարարել հողի նկատմամբ պահանջը, մանավանդ, որ հրամայական էր դարձել ցանքատարածությունների ընդարձակումը, խաղողենու, թթենիների, թխմաչայի և բամբակի պլանտացիաների ավելացումը, անասնապահության զարգացման համար կայուն կերային բազայի ստեղծումը և այլն: Արցախցիները զրկված էին ձմեռային արոտավայրերից: Միայն երկարատև պայքարից հետո հազիվ 16 հազար դեսյատին արոտավայր հատկացվեց հարթավայրային շրջաններից: Յետաքրքիրն այն է, որ Ադրբեջանի որոշ պատմաբաններ և տնտեսագետներ այս փաստը դրոշ դարձնելով՝ անընդհատ թմբկահարում են, թե Ադրբեջանը բավարարել է ղարաբաղցիների հողային պահանջները: Նախ՝ 16 հազար դեսյատին արոտավայրը հազիվ թե բավարարեր արցախահայության կարիքները, հետո արցախցին ոչ թե հող էր խնդրում, այլ պահանջում էր տիրոջ իրավունքով, պահանջում էր իր պատմական տարածքը:

Լեռնային Ղարաբաղի տարածքի 75 տոկոսը գտնվում էր լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ բերքատվությունը բավականին ցածր էր: Բացի այդ, հարևան շրջանների համեմատությամբ Լեռնային Ղարաբաղում զգալիորեն բարձր էին արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական գործիքների գները: Պարզապես դրանք անմատչելի էին բնակչության համար: Ադրբեջանի պարագլուխների վարած նենգ քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղում 1923 թ. 4–5 անգամ ընկավ ցորենի, որպես ապրանքափոխանակման հիմնական միջոցի գինը, 3–4 անգամ՝ գարու գինը, 4 անգամ՝ յուղինը, 6–7 անգամ՝ օղունը, 4–5 անգամ՝ գինունը, 7 անգամ՝ մսինը, 4 անգամ՝ մեղրինը և այլն:

Արցախցիները որպեսզի շատ վնաս չկրեին, ստիպված էին լինում հրաժարվել արդյունաբերական ապրանքներ գնելուց և տնայնագործական եղանակով իրենց համար պատրաստում էին հագուստներ, գյուղատնտեսական գործիքներ և այլն: Իսկ դա նրանցից խլում էր զգալի ժամանակ և ուժ: Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղին տրված որոշ քանակությամբ սերմացան և գյուղատնտեսական գործիքները արցախահայության վրա չափազանց թանկ էին նստում:

Արցախցին տեսնում էր, որ դեռևս բավարար չէ իր աշխատանքի արդյունքը: Իսկ դրա հիմնական պատճառը գյուղատնտեսության մեջ ձեռքի աշխատանքի և հասարակ գործիքների գերակշռությունն էր: Արցախցի գյուղացիները ձգտում էին իրենց տնտեսությունը դարձնել ապրանքային: Նրանք, ասված է արխիվային մի փաստաթղթում, ձգտում էին «բարելավել իրենց տնտեսությունը, նրան տալ արդյունաբերական բնույթ, վերամշակել իրենց հումքը, շուկայում հանդես գալ որպես մթերքներ հրացնողներ, օգտվել վար-

կից, ծեռք բերել անհրաժեշտ գործիքներ, իրեր և արդյունաբերական այլ ապրանքներ...»։[205]

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության վերականգնումը արագացնելու նպատակով 1923 թ. սկսած կազմակերպվում են մի շարք ագրոկետեր, որոնք գյուղական տնտեսություններին օգնում էին արմատավորելու հողամշակման առաջավոր փորձը։

Սպիրտի և խմիչքների նկատմամբ աճող պահանջը ստիպում էր որոշ ծախսեր կատարել և հետզհետե ավելացնել արտադրությունը։ Այդ տարիներին Լեռնային Ղարաբաղում ավելի քան 8000 գյուղական տնտեսություններ, կամ բոլոր տնտեսությունների 30 տոկոսից ավելին, զբաղվում էին սպիրտի և տարբեր տեսակի խմիչքների արտադրությամբ և տարեկան տալիս մինչև 640.000 ռուբլու արտադրանք։ Միայն 1924 թ. մարզում գործում էր օղեթորման 320 կաթսա։[206] Տնայնագործական եղանակով ստացված սպիրտն ու օղին իրացնելու համար գյուղացիները, ինչպես նշվեց, հանդիպում էին լուրջ դժվարությունների՝ կրելով նյութական վնասներ։ Դրա հիմնական պատճառներից մեկը թորման գործարանի բացակայությունն էր Լեռնային Ղարաբաղում։ Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղում նման գործարան կառուցելու փոխարեն, որն այնքան էլ մեծ ծախսեր չէր պահանջում, կառուցում է Աղդամում, որն ընդունում էր Արցախում արտադրված սպիրտի և օղու հազիվ 20–30 տոկոսը։ Դրան էլ ավելացնենք այն, որ սպիրտի և օղու համար կոպեկներ էին վճարում։ Դրա համար էլ գյուղացիների մի մասը հրաժարվում էր խմիչքների և սպիրտի արտադրությունից։ Պարզապես արցախցին թալանվում էր։

Լեռնային Ղարաբաղում, մանավանդ գյուղական շրջաններում, վճռական քայլեր չէին կատարվում կոոպերացիայի, մանավանդ սպառողական, զարգացման ուղղությամբ։ Սպառողական կոոպերացիան զարգանում էր միայն Շուշի քաղաքում, որտեղ բնակվում էին հիմնականում ադրբեջանցիներ։ 1923 թ. այստեղ գործում էին 137 առևտրական կետեր, որոնց թիվը հաջորդ տարում հասավ 212–ի։[207]

Հայտնի է, որ Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատման առաջին շրջանում ստեղծվեցին բանվորների, գյուղացիների և զինվորների պատգամավորների խորհուրդներ։ Դրանք ընտրովի մարմիններ էին։ Անդրկովկասում խորհուրդների փոխարեն ստեղծվեցին հեղափոխական կոմիտեներ։ Կարմիր բանակը և «կարմիր» մուսուլմանները, ներխուժելով Արցախ–Ղարաբաղ, 1920 թ. մայիս–հունիսին հեղկոմներ ստեղծվեցին գավառներում, տեղամասերում և գյուղերում՝ ժամանակավորապես ծեռնպահ մնալով խորհուրդների ընտրություններից։ Գավառային հեղկոմների կազմը նշանակվում էր վերադաս իշխանությունների կողմից, իսկ տեղամասային և գյուղական հեղկոմներինը՝ գավառային հեղկոմի կողմից։[208] Հեղկոմները պարտավոր էին պաշտպանել աշխատավորների շահերը, օգնել Կարմիր բանակին և բնակչությանը՝ նախապատրաստելու խորհուրդների ընտրությունը։ Գավառային հեղկոմը գավառի բարձրագույն իշխանությունն էր, որը և գործնականում իրագործում էր խորհրդային իշխանության բոլոր դեկրետներն ու հրահանգները։ Գավառային



հեղկոմն իրավունք ուներ որոշումներ ու հրամաններ արձակելու։ Մեծ իրավունքներ ունեին նաև տեղամասային և գյուղական հեղկոմները, որոնք իրենց կառուցվածքով շատ քիչ էին տարբերվում գավառային հեղկոմներից։

Ադրբեջանի իշխանությունները ջանքեր չէին խնայում 11–րդ Կարմիր բանակի հրամանատարության օգնությամբ Լեռնային Ղարաբաղի բոլոր տեսակի հեղկոմներում նշանակելու այնպիսի անձնավորությունների, որոնք հլու–հնազանդ կատարեին Բաքվից եկած բոլոր հրամանները։ Հեղկոմների շատ անդամներ ուղարկվեցին Բաքվից և 11–րդ Կարմիր բանակի զորամասերից։ Ղարաբաղում ստեղծված հեղկոմները հրահանգ ունեին արցախահայությանը համոզել մտնելու Ադրբեջանի կազմի մեջ և կատարելու նրա բոլոր պահանջները։

Բաքվի հրահանգով Ղարաբաղի հեղկոմների կազմը հաճախակի էր ենթարկվում փոփոխությունների։ Նրանք, ովքեր չէին ցանկանում պարել Բաքվի նվագի տակ, հեռացվում էին ոչ միայն հեղկոմներից, այլև Ղարաբաղից։ Շաբաթօրյակներ կազմակերպելու և «Գյուղական շաբաթ» միջոցառումներին մասնակցելու պատրվակով 1920 թ. աշնանը Բաքվից ուղարկվեցին հարյուրավոր «բանվորներ», որոնց մեծամասնությունը խցկվեց հեղկոմներ և կոմունիստական գումարտակներ։

1920 թ. աշնան կեսերից Լեռնային Ղարաբաղում ևս ծնունդ առան չքավորական կոմիտեները, որոնք հանձնարարություն ունեին իրագործել հողի վերաբերյալ օրենքներն ու հրահանգները, շարունակել շահագործողների նկատմամբ կիրառվող սեփականազրկման քաղաքականությունը, չքավորներին քաղաքական ակտիվ կյանքի կոչել և այլն։

Լեռնային Ղարաբաղում չքավորական կոմիտեների ստեղծումը սկսվեց 1920 թ. հոկտեմբերի երկրորդ կեսից։ Նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբներին տեղամասային չքավորական կոմիտեներ ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղի բոլոր գավառներում։ Հրավիրվում էին չքավորական կոմիտեների կոնֆերանսներ և համագումարներ։

Չքավորական կոմիտեներն իրենց պրակտիկ գործունեությամբ նպաստեցին գյուղի դասակարգային շերտավորման ընթացքի արագացմանը և պայմաններ ստեղծեցին տեղերում խորհուրդների ընտրություններ անցկացնելու համար։[209]

Խորհուրդների ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու համար 1921 թ. ապրիլի 29–ին Բաքվից Ղարաբաղ ուղարկվեցին մի խումբ կոմունիստներ և բանվորներ՝ քարոզչական–կազմակերպչական աշխատանքներ տանելու համար։ Ըստ երևույթին, այդ «առաքյալները» Ադրբեջանի իշխանություններին ծառայություն մատուցելու պատրաստ անձնավորություններ էին, որոնք առատորեն վարձատրվում էին։ Դիզակում և Ջրաբերդում խորհուրդների ընտրություններին ակտիվորեն մասնակցում էին նաև կարմիր բանակայինները և նույնպես հաճելի ծառայություն մատուցում Նարիմանովյան խմբին։[210]

1921 թ. ապրիլին տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի գյուղական, տեղամասային և գավառային խորհուրդների ընտրությունները։ Երկրամասում խորհուրդների այդ առաջին ընտրություններին մասնակցեց 70.000 մարդ։[211] Ադր-

բեջանի կառավարությունը և Ղարաբաղ ուղարկված նրա գործակալները
ջանքեր էին գործադրում խորհուրդներում և նրանց ղեկավար մարմիններում
անցկացնելու իրենց վստահելի մարդկանց: Ապրիլին Գյունե Ճարտարում տե-
ղի ունեցավ Վարանդայի տեղամասային խորհրդի առաջին կոնֆերանսը, որը
քննարկեց ընթացիկ պահի մասին հարցը, լսեց տեղամասային չքավորական
կոմիտեի հաշվետվությունը և ընտրեց շրջանային գործադիր կոմիտեի ու գա-
վառային խորհրդի անդամներ: Շուշիի գավառային հեղկոմի հողային բաժնի
վարիչ, Բաքվից ուղարկված Մուկուչ Արզանյանը հանդես գալով վրդովեցու-
ցիչ ճառով, մի երկդիմի կոչ ուղղեց խորհրդի անդամներին՝ «զգուշանալ թշնա-
միներից, չենթարկվել պրովոկացիաների, ճակատ առ ճակատ պայքարել աշ-
խատավոր ժողովրդի ոխերիմ թշնամիների դեմ և հեղափոխության կարմիր
դրոշն ավելի բարձր պահել»:[212] Կոնֆերանսում ելույթ ունեցողներն իրենց
ժխտական վերաբերմունքն արտահայտեցին Ղարաբաղի նկատմամբ Ադրբե-
ջանի ազգայնամոլների ունեցած բռնատիրական ձգտումների նկատմամբ:
Արցախի տարածքում կազմակերպված 140 գյուղական խորհուրդների
կազմում ընտրվեցին ավելի քան 1500 հոգի: Ապրիլի վերջին Շուշիում տեղի
ունեցած գավառային խորհուրդների առաջին համագումարն ընտրեց գավա-
ռային խորհրդի գործկոմ: Դրանով իսկ Լեռնային Ղարաբաղում ավարտվեց
խորհրդային շինարարության երրորդ փուլը:
Խորհուրդները խնդիր ունեին համախմբել բնակչության լայն զանգվածնե-
րին, պայքարել շահագործող տարրերի դեմ, նպաստել ժողովրդական տնտե-
սության վերականգնմանը, կայուն հիմքերի վրա դնել դպրոցական և նա-
խադպրոցական գործը, բացել անգրագիտության վերացման կետեր և այլն:
Ադրբեջանի պարագլուխները ձգտում էին իրենց իշխանությունը տարածել
նաև Ղարաբաղի խորհրդային մարմինների վրա: Առիթներ էին որոնում և խոր-
հուրդներից վռնդում բոլոր նրանց, ովքեր դեմ էին Ադրբեջանի քաղաքակա-
նությանը: Այդ էր պատճառը, որ 1921–1923 թթ. բազմիցս անց էին կացվում
խորհուրդների վերընտրություններ: 1922 թ. գարնանը տեղի ունեցած վե-
րընտրությունների ժամանակ գյուղական, տեղամասային և գավառային խոր-
հուրդներում առաջ քաշվեցին անկուսակցական հարյուրավոր աշխատավոր-
ներ: Գյուղական, տեղամասային և գավառային խորհուրդները բազմիցս հարց
էին բարձրացրել միավորելու Լեռնային Ղարաբաղի բոլոր գավառները և
ստեղծելու մի վարչական ու տնտեսական միավոր:
Արցախահայությունը խիստ դժգոհ էր ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի 1921 թ. հուլիսի
5–ի ապօրինի որոշումից: Ադրբեջանի կառավարող ուժերը շտապ կարգով մի
շարք ներկայացուցիչներ են ուղարկում Լեռնային Ղարաբաղ՝ հուլիսի 5–ի ո-
րոշումը գործնականում իրագործելու և տարհամոզելու նրա զայրացած
բնակչությանը: Աս. Մռավյանի՝ Ղարաբաղից Երևան վերադառնալուց հետո,
Բաքուն անմիջապես ամբողջ Ղարաբաղի լիազոր էր նշանակել Ալիհեյդար
Կարաևին: Սակայն արցախահայությունը բացահայտորեն նրան հայտնում էր
իր անհամաձայնությունն ու դժգոհությունը, չէր ընդունում և չէր ենթարկվում
նրան: Ն. Նարիմանովը ստիպված հուլիսի վերջերին, որպես երկրորդ լիազոր,



Ղարաբաղ ուղարկեց նաև Լևոն Միրզոյանին: Ադրբեջանից Ղարաբաղ գոր-
ծուղվածներից մեկը՝ Ֆոնտնշտեյն ազգանունով, Շուշիից Բաքու ուղարկած
իր տագնապալի զեկուցագրում հայտնում է, որ Ղարաբաղի հայ գյուղացինե-
րը «չեն ցանկանում հաց տալ Ադրբեջանին», վճռականապես հրաժարվում են
նաև մյուս հարկերը տալուց, բոյկոտում են Բաքվից եկած կարգադրություն-
ներն ու որոշումները:
Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիութ-
յունների հանրապետական խորհրդի նախագահ Լևոն Միրզոյանը, հանրապե-
տության ռազմածովային խորհրդի նախագահ Ալիհեյդար Կարաևը և Բաքվից
եկած մյուս գործակալները, օգտվելով իրենց պաշտոնական դիրքից, սպառ-
նում են ուժ գործադրել, եթե արցախահայությունը հակառակի Ադրբեջանի
կամքին ու ցանկություն հայտնի միավորվել Հայաստանի հետ: Լևոն Միրզոյա-
նը և Ալիհեյդար Կարաևը համձնարարություն ունեին Լեռնային Ղարաբաղի վե-
րաբերյալ Անդրերկրկոմի հուլիսի 5–ի որոշմանը տալ սահմանադրական ստ-
տատ և ամեն գնով արցախահայությունից կորզել ինքնավարության գաղափա-
րին հավանություն տալու երաշխիք: Նրանք Արցախի շրջաններում հրավիրե-
ցին խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ ու փորձեին
սպառնալիքի տակ այնպիսի որոշումներ ընդունել տալ, որոնք կբխեին Ադրբե-
ջանի ցանկություններից: Ադրբեջանցի պատմաբաններն այդ առթիվ միաբե-
րան վկայակոչում են 1921 թ. օգոստոսի 1–ին Հաղորտի գյուղում տեղի ունե-
ցած Շուշիի գավառի երկրորդ տեղամասի խորհուրդների արտահերթ երկրորդ
համագումարը, պնդելով, թե իբր այստեղ որոշում է ընդունվել հավանություն
տալ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում մնալու գաղափարին: Նախ՝
Վարանդան ամբողջական Արցախ չէր, նրա կողքին կային Դիզակ, Խաչեն, Գյու-
լիստան և Ջրաբերդ. հետո՝ չէ՞ որ ոչ մի շրջանային համագումար նման վճիռ չի
կայացրել, ժողովրդական հանրաքվե չի եղել, այլապես ադրբեջանցի կեղծա-
րարների ձայնն ավելի բարձր կհնչեր: Այնուհետև, ինչպես վերևում նշվեց, մին-
չև 1923 թ. աշունը Լեռնային Ղարաբաղը որպես մի վարչատարածքային միա-
վոր գոյություն չուներ: Այն ժամանակ Արցախը բաժանված էր Շուշիի, Ջիվան-
շիրի, Ջեբրայիլի և Գանձակի գավառների, ասել է թե, Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության ներկայիս վարչատնտեսական տարածքը մտնում էր նշված
գավառների մեջ: Այդ կարգը գոյություն ուներ 1868 թվականից, երբ 1867 թ.
դեկտեմբերի 9–ի կանոնադրության համաձայն Անդրկովկասում ստեղծվել էր
նոր՝ Ելիզավետպոլի նահանգը: Արցախահայությունը 1918 թ. սկսած պայքա-
րում էր երկրամասի հայկական բոլոր շրջանները մեկ վարչական միավորման
մեջ միավորելու և մայր Հայաստանին վերամիավորվելու համար:
Ադրբեջանի պարագլուխները շատ լավ էին գիտակցում, որ վաղ թե ուշ ջրի
երես կբարձրանան իրենց կողմից Արցախում իրագործած բոլոր անօրինակա-
նությունները: Հենց դրա համար էլ նրանք ամեն ջանք գործադրում էին համոզե-
լու, կաշառելու և կեղծ խոստումներ տալու արցախցիներին, որոշում ընդունել
տալ, թե իբր նրանք համաձայն են մնալ Ադրբեջանի կազմում: Հենց նման մի
փորձ կատարվեց վերոհիշյալ Հաղորտի գյուղում: Լեռնային Ղարաբաղի Հան-

րապետության պետարխիվի 485 և 486–րդ ֆոնդերում պահվում են Շուշիի գավառի երկրորդ տեղամասի, այսինքն՝ Վարանդայի և Ջիվանշիրի գավառի Մարտակերտի տեղամասի բանվորների, գյուղացիների և Կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների վերաբերյալ 1920–1923 թթ. նյութերը: 485–րդ ֆոնդի 14–րդ գործում պահվում է 1921 թ. օգոստոսի 1–ին Վարանդայի խորհուրդների վերոհիշյալ արտահերթ համագումարի արձանագրության մեքենագիր պատճենը: Համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Հադրութ է ժամանում Լևոն Միրզոյանը և զեկուցումով հանդես գալիս օրակարգի հիմնական հարցերի շուրջ: Նա, խոսելով Արցախի ինքնորոշման հարցի մասին պնդում է, թե նպատակահարմար չէ այդ հարցը քննարկել համագումարում, որովհետև իբր բոլոր տեսակետներից՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր, Լեռնային Ղարաբաղը կապված է Բաքվի հետ: Բավական է, որ Ղարաբաղին տրվում է ինքնավարություն և ենթարկվում է Բաքվին: Պատգամավոր Պետրոսյանը համագումարին ներկա 47 պատգամավորների անունից հայտարարում է, որ ոչ ոք չի ցանկանում արտահայտվել, որովհետև «բոլորին լավ հայտնի է Խորհրդային Հայաստանի հետ միավորված լինելու գյուղացիության ցանկությունը»:[213] Այսպես էլ ավարտվում է համագումարը, առանց որևէ որոշում ընդունվելու: Համենայն դեպս, արձանագրության մեջ բացակայում է որոշումը:[214] Նույն ոգով են ընթացել նաև մյուս շրջանների համագումարները:

Եվ ոչ միայն 1921 թվականին: Այնուհետև ամբողջ մեկուկես տարի, մինչև 1922 թ. դեկտեմբերը, Արցախում ոչ մի անգամ չի դադարել և գրեթե չի եղել շրջանային և տեղամասային որևէ համագումար կամ հավաք, որտեղ չպահանջվեր միավորվել մայր Հայաստանի հետ: Հենց դրա համար է Ադրբեջանում անընդհատ հետաձգվում և չէին կատարում 1921 թ. հուլիսի 5–ի Անդրերկրկոմի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Ադրբեջանի էմիսարները համախակի լինելով Արցախում, արցախցիներին խոստանում էին բաց թողնել նավթ, աղ, կտորեղեն, դաշտավայրում արոտավայրեր հատկացնել՝ միայն թե նրանք համաձայնվեն մնալ Ադրբեջանի սահմաններում, ինքնավար իրավունքով: Այդ է վկայում հետևյալ վավերագիրը, որը կազմվել է 1921 թ. աշնանը: Դրա հեղինակը պատմում է, որ հուլիսի վերջին Ասքանազ Մռավյանը Ղարաբաղից մեկնելուց անմիջապես հետո այստեղ են գալիս Ալիհեյդար Կարաևն ու Լևոն Միրզոյանը և Խանքենդի ավանում հունիսի 28–ին հրավիրում Շուշիի գավառի առաջին տեղամասի գործադիր կոմիտեների աշխատողների հավաք՝ իբր քննելու «հացահատիկի բերքահավաքի» հարցը: Հավաքին մասնակցում են մոտ 60 հոգի: Մինչդեռ, շարունակում է փաստաթղթի հեղինակը, «հացահատիկի բերքահավաքի» հարցը մղվում է ետին պլան» և օրակարգի առաջին հարց են դարձնում «Լեռնային Ղարաբաղի հարցը»: Ա. Կարաևը կաշվից դուրս էր գալիս ապացուցելու, թե իբր Լեռնային Ղարաբաղը տնտեսապես կախված է «Հարթավայրային Ղարաբաղից» և ներկաներին առաջարկում է արտահայտեն իրենց կարծիքը «Ղարաբաղը ինքնավար իրավունքով Ադրբեջանի իշխանության տակ մնալու» հարցի շուրջը: Հավաքույթի մասնակիցները պատասխանում են, որ իրենք չեն հավաքվել այդ հարցը քննելու համար, հետևապես չեն կարող ո-



րևէ կարծիք հայտնել այդ առթիվ, բացի այդ, նշում են, որ իրենք շրջանի բնակչության կողմից լիազորված չեն նման հարցի առթիվ կարծիք հայտնելու: Լևոն Միրզոյանը, «տաքացած պաշտպանում է Ադրբեջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու» գաղափարը և ավելի վճռական է ստիպում այդ հարցի առթիվ «գրավոր բանաձև ընդունել հօգուտ Ադրբեջանի»: Սակայն Ա. Կարաևի և Լ. Միրզոյանի ջանքերը հանդիպում են հավաքվածների «սառը դիմադրության»: Այսպիսով՝ Բաքվի էմիսարների ձգտումը՝ Լեռնային Ղարաբաղի աշխատավորներից պոկել «Ղարաբաղը ինքնավար իրավունքով Ադրբեջանի սահմաններում մնալու» համաձայնությունը, անցնում է ապարդյուն: Փաստաթուղթը կազմողը տագնապ է հայտնում, թե. «վիճակը կրիտիկական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Խորհրդային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու համար»:[215]

Ադրբեջանի իշխանությունները սկզբում հույս ունեին, թե Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի սահմաններում ինքնավարություն խոստանալով, կմարվի մայր Հայաստանի հետ միավորվելու արցախահայության պայքարը: Ադրկոմկուսի քաղբյուրոն և կազմբյուրոն շտապում և 1921 թվականի հուլիսի 20–ին ստեղծում են մի հանձնաժողով, որը պետք է մշակեր Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը:[216] Այնուամենայնիվ, դա երկար չի շարունակվում և Ադրբեջանի պարագլուխները քայլեր են գործադրում, որպեսզի Անդրկերկկոմի հուլիսի 5–ի որոշումը կյանքում չիրագործվի և Լեռնային Ղարաբաղին, որի բնակչության 94,6 տոկոսը հայեր էին, չտրվի ինքնավարություն: Ադրբեջանի ազգայնամոլները հասնելով նրան, որ Լեռնային Ղարաբաղը ինքնավար իրավունքով մնա Ադրբեջանի սահմաններում, հիմա էլ ամբողջ քարոզչությունը տանում են դա խլելու և Արցախի հիմնախնդիրը ջնջելու համար: Այդ է ապացուցում այն փաստը, որ 1921 թ. սեպտեմբերի 26–ին Ադրկոմկուսի քաղբյուրոն և կազմբյուրոն, քննարկելով «Ղարաբաղյան գործ» հարցը, ընդունում են մի որոշում, որը միայն ամբոխավարություն է: Ահա այդ որոշման առաջին կետը. «Խնդրել Կովբյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, մինչ այդ այսուհետև ինքնավարություն չհայտարարել»: Նիստին ներկա ինը հոգուց այդ որոշման դեմ են քվեարկում Ն. Նարիմանովն ու Բունիաթզադեն, որոնք առաջարկում են «ամենակարճ ժամանակում իրագործել Կովբյուրոյի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղն իբր ինքնավար միավոր առանձնացնելու մասին»:[217] Անկասկած, Ադրբեջանի «ինտերնացիոնալիստ» կոմունիստները նպատակ ունեին ինչ–որ խարդախությամբ հիմա էլ անհնարին դարձնել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու գործը: Նրանք որպեսզի «հիմնավորեն» իրենց որոշումը, ստեղծում են հատուկ հանձնաժողով (Ա. Կարաև, Էֆենդիև, Ստուկալով և Լ. Միրզոյան) և շտապ ուղարկում Ղարաբաղ՝ «նյութեր հավաքելու համար»:[218] Միանգամայն պարզ է, թե այդ հանձնաժողովն ինչպիսի մեթոդներով և ձևերով պետք է «նյութեր հավաքեր»՝ Անդրերկրկոմի առաջ արդարանալու համար: Նրանց հարկավոր էր Ղարաբաղում ամենից առաջ ուժեղացնել ուժային մարմինները: Ադրկոմկուսի կազմբյուրոյի 1921 թ. հոկտեմբերի 6–ի նիստի որոշումով ռազմածովային կոմիսար Ալիհեյ-

դար Կարանին առաջարկվում է Ղարաբաղի միլիցիայի համար բաց թողնել 500 համալիր զգեստ, իսկ ներքին գործերի նախարար, ադրբեջանահայության դահիճ Միրջաֆար Բաղիրովից պահանջվում է «հանձնաժողովի հետ» Ղարաբաղ ուղարկել «պատասխանատու աշխատող»:[219] Այս որոշումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Ադրբեջանի ղեկավարները նպատակ ունեին ուժով արցախահայությանը համոզել մնալու Ադրբեջանի կազմում: Ամենևին պատահական չէր, որ 1921 թ. հոկտեմբերի 21–ին հրավիրված Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանսը, որին մասնակցում էին Ն. Նարիմանովի դրածոներ Ալիհեյդար Կարաևը, Լևոն Միրզոյանը և Դադաշ Բունիաթզադեն, և որտեղ «Ղարաբաղի դրության մասին» հարցի շուրջը զեկուցումով հանդես եկավ Ա. Կարաևը, ընդունեց այսպիսի որոշում. «Ղարաբաղի աշխատավորների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբր առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում»:[220] Իսկ վերն ընդունված 12 կետից բաղկացած բանաձևում առաջարկվում է «անխնա գնդակահարել» անհնազանդներին, ասել է թե՝ արցախահայությանը, «անհնազանդներին», «ավազակներին», այսինքն՝ Ադրբեջանի իշխանությունը չընդունողներին, «թաքցնող գյուղերը դաժանորեն պատժվում են և պետք է տուգանվեն 10 միլիոն ռուբլով»[221] Այդ պատժողները պետք է լինեին «բացառապես դիմացկուն ինտերնացիոնալիստ աշխատողներից», այսինքն՝ ադրբեջանցիներից: Որոշման յոթերորդ կետը պահանջում էր. «ազգայնական հոգի ու ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր տրամադրությունները պետք է անհետաձգելիորեն դուրս շպրտվեն ու փոխարինվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով», իսկ ութերորդ կետը՝ «Այս կամ այն պաշտոնին աշխատակիցներ նշանակելիս անհրաժեշտ է ելնել ոչ թե ազգային ծագման հատկանիշներից, այլ նրա գործնականությունից, ընդունակությունից ու ազնվությունից...»:[222] Կոնֆերանսը, որի մասնակիցների ճնշող մեծամասնությունը մուսուլմաններ էին, հլու–հնազանդ ընդունեց Բաքվի հրահանգը, որը, բնական է, չէր կարող արտահայտել արցախահայության պահանջները: Ելնելով այդ որոշումից, Ադրկոմկուսի Կենտկոմի անունից ի լուր բոլորին հայտարարվում է, թե «կոնֆերանսի կողմից հաստատվել է, որ ոչ մի առանձնահատուկ, այսպես կոչված «Ղարաբաղյան հարց» էլ գոյություն չունի, որ այն ծագում է Ղարաբաղում կուսակցական և խորհրդային աշխատանքի թուլությունից, ամուր, ուղիղ ու հետևողական քաղաքականության բացակայությունից, և որ այդ հարցը կարող է լուծվել ոչ թե ինչ–որ ծայրահեղ ու բարդ ռեֆորմներով, այլ միայն Ղարաբաղում ծավալված աշխատանքով»:[223]

Այնուամենայնիվ, արցախահայությունը մնում էր անսասան և շարունակում էր աննահանջ պայքարել իր գոյատևման և մայր Հայաստանի հետ միավորվելու համար:

Չի բացառվում, որ Ադրբեջանի ղեկավարությունը 1921–1922 թթ. ևս ձգտում էր Ղարաբաղը Ադրբեջանի մեջ մտցնելու համար օգտագործել զենք և զինուժ: Այդ մասին խոսում են մի շարք արխիվային վավերագրեր: Ադրկոմկուսի լրատվական վիճակագրական ենթաբաժնի 1921 թ. հոկտեմբերի 9–ին կազմած մի տեղեկանքում, որի համար հիմք է հանդիսացել Կարյագինոյի ներկայացուցիչ Ստեփանյանի հաղորդումը, ասված է, որ Կարյագինոյի գավառը նույնպես բաղկացած է լեռնային և հարթավայրային մասերից, «լեռնային մասում բնակվում են հայերը, որոնց կուլտուրական մակարդակը անհամեմատ շատ ավելի բարձր է, քան հարթավայրային գյուղերի մուսուլման բնակիչներինը, որոնց մոտ շատ մեծ դեր է խաղում կրոնական ֆանատիզմը»: Այնուհետև ասված է, որ «բնորոշ է նաև այն փաստը, որ (Կարյագինոյի գավառի) հարթավայրային մասի բնակչությունը, ի հակադրություն լեռնային մասի, **մեծամասամբ զինված է** (ընդգծումը մերն է– Յ.Ս.)»:[224] Բաքվից Ղարաբաղ գործուղվածներից մեկն իր հերթին 1921 թ. օգոստոսի 3–ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին ղաղտնագրած իր զեկուցագրի մեջ բացահայտ գրում է, թե Ադրբեջանի պաշտոնյաները զինում են ղարաբաղի ադրբեջանցի բնակիչներին:

Այս ամենը տեսնելով և համոզվելով, որ այդպես շարունակվելու դեպքում հակասություններն ավելի կխորանան կողք–կողքի ապրող երկու ժողովուրդների միջև, Լևոն Միրզոյանը 1921 թ. օգոստոսի 8–ին Շուշիից Անդրերկրկոմին և Ադրկոմկուսի Կենտկոմին առաջարկում է «Ամբողջ Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր՝ ենթակա Կենտրոնին՝ Ադր. ժողկոմխորհին և Ադրկենտգործկոմին, իսկ կուսակցական գծով՝ Ադր. ԿԿ–ին»:[225]

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու վերաբերյալ Անդրերկրկոմի հուլիսի 5–ի որոշումը կյանքում իրագործելու համար մտահոգված էին նաև հենց այդ նույն Անդրերկրկոմի որոշ ղեկավար այրեր: 1922 թվականի փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի ամբիոնից Սերգո Օրջոնիկիձեն անդրադարձավ նաև Լեռնային Ղարաբաղի հարցին: Նա ասաց. «Ճիշտ է, Ադրբեջանում մենք երկար զբաղվեցինք ղարաբաղյան հարցով, սակայն, վերջիվերջո որոշեցինք ղարաբաղյան բնակչությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայերին, տալ ինքնավարություն Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության սահմաններում: Գործնականում այդ ինքնավարության կենսագործումը հանձնարարվել էր Ադր. ԿԿ. Կենտկոմին: Ես խոսեցի ընկ. Կիրովի հետ. ինչո՞ւ դա դեռևս չի արվել, և նա նշեց, թե հայերն ու մուսուլմանները համաձայնվել են (այն հարցում), որ այդ ինքնավարության անհրաժեշտությունը չկա: Ես չգիտեմ, դա այդպե՞ս է, թե մի ուրիշ կերպ, ամեն պարագայի այդ հարցն այնպես է լուծված, որ բնակչությանը հնարավորություն տրվի վճռելու իր խնդիրը:

Փաստն այն է, որ այնտեղ ոչ մի բախում, ոչ մի տարաձայնություն չկա, և դա ցույց է տալիս, թե ազգային հարցի այդ լուծումը, որ մենք կատարել ենք սկզբից իսկ, ճիշտ է: Ոչ մի ծայրագավառում ազգային հարցն այնպես հաջող չի լուծվել, ինչպես մեզանում»:[226]

Որ Ադրբեջանի պարագլուխներն ատամներով պայքարում էին Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն չտալու համար, ապացուցում է նաև այդ համագումարում ադրբեջանական կազմակերպության ներկայացուցիչ Կուլիևի ելույթը, որն ուղղված էր Անդրկերկրկոմի բյուրոյի տվյալ հարցում ցուցաբերած քաղա-

քսկանության դեմ: Կուլինը տրտնջում է, թե «Կովբյուրոն ուներ որոշակի սիստեմ: Նա մտածում էր, թե յուրաքանչյուր գավառ, ուր ապրում է որևէ ազգություն իր լեզվով, պետք է ինքնավարություն ունենա: Ադրբեջանական Կենտկոմն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն: Այդ մոտեցումը ճիշտ էր և այդպես պետք է մոտենալ, որպեսզի հաստատվի իսկական խաղաղություն և՛ Ղարաբաղում, և՛ ամբողջ Անդրկովկասում»:[227]

Համագումարին մասնակցող հայերը չէին կարող տանել նման մոտեցումը: Մինչև անգամ Լևոն Միրզոյանը, որն Ադրբեջանի պատվիրակության անդամ էր, խիստ վրդովված էր Կուլինի ելույթի դեմ: Նա իր ելույթում էական սխալ է համարում Ս. Օրջոնիկիձեի կողմից արված նման համեմատությունը, քանի որ մեկ չեն ծայրագավառների մակարդակն ու պահանջմունքները, և «այս հարցում չի կարելի ինքն իրեն կերակրել պատրանքներով»:[228]

Խիստ վճռական էր Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) ելույթը: Նա պնդեց, թե Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը դեռևս չի վճռվել: Ապա ավելացրեց. «Ղարաբաղի հարցը մեկն է այն հարցերից, որոնց մասին չի կարելի չխոսել և որոնք անհնար է լուծել մի քանի ժամվա ընթացքում թեկուզ և կոմունիստական ուղղությամբ:

Մենք մինչև այժմ չենք լուծել ազգային հարցը, բայց մենք կոչված ենք լուծելու այն»:[229]

Կամա թե ակամա, Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարն իր կնիքը թողեց Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցի վրա: Ադրկոմկուսի քաղբյուրոյի և կազմբյուրոյի 1922 թ. փետրվարի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղում աշխատանքի է ուղարկվում Արմենակ Կարակոզովը՝ որպես Ադրբեջանի հեղկոմի և Հայհեղկոմի ներկայացուցիչ:[230]

Ադրբեջանի իշխանությունների կողմից Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու ձգձգումը խիստ անհանգստացնում էր Հայաստանի ղեկավարությանը: 1922 թ. հուլիսի 5-ին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պլենումը, քննարկելով «Լեռնային Ղարաբաղի դրության մասին» հարցը, ընդունեց հետևյալ որոշումը. «Քարտուղարությանը հանձնարարել դիմելու Անդրերկրկոմ՝ պատճառաբանված խնդիրքով իրականացնելու Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավարություն տալու մասին»:[231]

Արցախահայությունը մնում էր իր դիրքերում: 1922 թ. գարնանը տեղի ունեցած խորհուրդների վերընտրությունների ժամանակ Արցախի աշխատավորները նախընտրական ժողովներում, մանավանդ գյուղական, ավանային, տեղամասային և գավառային խորհուրդների նիստերում և համագումարներում շարունակում էին համարձակորեն առաջ քաշել Արցախը մայր Հայաստանին միավորելու անզիջում պահանջը: Որպես դրա լավագույն ապացույց, հիշատակենք հետևյալ փաստը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում պահվում են ծննդով Արցախի



Փիրջամալ գյուղից Սուրեն Միրզաբեկյանցի հուշերը:[232] Ահա թե ինչ է պատմում նախկին գյուղխորհրդի քարտուղարը. 1922–1923 թթ. Լեռնային Ղարաբաղի բանվորների և գյուղացիների խորհուրդները ենթարկվում էին Մոսկվային, կենտգործկոմին: 1922 թ. երկրորդ կեսին, նոյեմբերին, երկրամասի գյուղական և շրջանային խորհուրդների նախագահներին և քարտուղարներին կանչում են Շուշի՝ խորհրդակցության: Հավաքվածներին հայտնում են, թե Բաքվից եկել են մի շարք պատասխանատու աշխատողներ՝ բանակցելու համար: Պարզվում է, որ եկել են Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի արդեն առաջին քարտուղար Ալիհեյդար Կարաևը և երկրորդ քարտուղար, միևնույն ժամանակ Բաքվի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար Լևոն Միրզոյանը: Նախ ելույթ է ունենում Ա. Կարաևը: Նա, բացատրելով հավաքի նպատակը, նշում է, թե Մոսկվայի համար դժվար է ճկուն ղեկավարել իրարից անջատված մարզերն ու գավառները, մանավանդ որ «խորհրդային նոր պետության շինարարությունը պահանջում է առանձին դեպքերում կիրառել արտակարգ միջոցառումներ, որը ներկա պայմաններում համարյա անիրագործելի է»: Այնուհետև նա նշում է, թե Մոսկվայից իրենց երաշխավորել են «տեղական խորհրդային իշխանությունների հետ քննարկել հանրապետությունների առանձին շրջանները և մարզերը խոշորացնելու (միավորելու) հարցը՝ ելնելով տնտեսական և ազգային հատկանիշներից»: Ա. Կարաևը պնդում է, թե Լեռնային Ղարաբաղը պետք է միանա Ադրբեջանին: Նա վկայակոչում է Արցախի տնտեսական կապը Ադրբեջանի հետ, շատ ղարաբաղցիների Բաքվում գտնվելը, Ռուսաստանից հացամթերք ստանալը, մինչդեռ ղարաբաղցիները զրկված են Հայաստանի հետ հաղորդակցության միջոցներից: Նա պահանջում է «Համաձայնվել Լեռնային Ղարաբաղը միավորել Ադրբեջանական ԽՍՀ-ին», այսինքն՝ մտնել խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ: Միանգամայն ակնհայտ է, որ 1922 թ. Լեռնային Ղարաբաղը լրիվ անջատ էր և անկախ, չէր մտնում Ադրբեջանի կազմի մեջ:

Ա. Կարաևի ելույթից հետո, շարունակում է Ս. Միրզաբեկյանցը, դահլիճում սկսվում են աղմուկ, ռեպլիկներ, նման առաջարկության դեմ կայանում են ելույթներ: Նկատելի էր, որ խորհրդակցության մասնակիցները ձայների բացարձակ մեծամասնությամբ համաձայն չէին «այդպիսի տարբերակով վերամիավորմանը»: Ելույթ ունեցողներից Արսոն (Արսեն Հովհաննիսյան– Հ.Ա.) արցախահայության անունից հայտարարում է, թե Լեռնային Ղարաբաղը երբեք չի մտնի Ադրբեջանի կազմի մեջ, հիշեցնելով, որ ադրբեջանական ազգայնականների կողմից ոչնչացվել են հայկական բազմաթիվ գյուղեր. Շուշի քաղաքի հայկական մասը, բարբարոսաբար հրի ու սրի են մատնել բազմահազար հայերի: Հենց այդ ամենի համար էլ հավաքի մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի միավորումը «Ադրբեջանի ԽՍՀ-ին ցանկալի չէ»: Ելույթ ունեցողներից ոմանք էլ հայտարարում են, թե նման բարդ և պատասխանատու հարցի վճռումը չի մտնում խորհրդակցության մասնակիցների իրավունքների մեջ: Նրանք գտնում են, որ հարցը պետք է վճռվի երկրամասի բնակչության հանրաքվեի միջոցով: Դրա համար պահանջում են իրենց տուն արձակել, ժամանակ տալ, որպեսզի այդ մասին

խորհրդակցեն ժողովրդի հետ։ Իսկ ոմանք էլ հայտարարում են, որ եթե խոսքը վերաբերում է միավորմանը, ապա Լեռնային Ղարաբաղի աշխատավորների համար նպատակահարմար և ցանկալի է մտնել Խորհրդային Հայաստանի կազմի մեջ։

Այնուհետև ելույթ է ունենում Լևոն Միրզոյանը։ Նա կրկնում է իր տերերի այն մաշված տեսակետը, թե իբր տնտեսական տեսակետից նպատակահարմար է Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, Հայաստանի հետ միավորումը հնարավոր չէ, որովհետև Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև ընկած է Քրդստանը։ Այդ ժամանակ, շարունակում է Ս. Միրզաբեկյանը, «դահլիճում ընկ. Միրզոյանի հասցեին խորհրդակցության մասնակիցների կողմից հնչում էին սուր ռեպլիկներ»։ Ընդհանրապես, ելույթ ունեցողների մեծամասնությունը «բացասական է արտահայտվում» Ա. Կարանի և Ա. Միրզոյանի «առաջարկությունների նկատմամբ» և պաշտպանում է Խորհրդային Հայաստանի հետ միավորվելու տարբերակը»։ Ա. Կարանը և Ա. Միրզոյանը երեք օր շարունակ «մշակում են» խորհրդակցության մասնակիցներին և ուժ գործադրում։ Այդ ամենից հետո միայն որոշվում է Արցախը թողնել Ադրբեջանի սահմաններում՝ ինքնավար մարզի իրավունքով։[233]

Արցախահայությունը վրդովված էր վերոհիշյալ խորհրդակցության որոշումից, որն ընդունվել է խիստ սպառնալիքների տակ։ Չէ որ երկրամասի բնակչությունը գյուղական խորհուրդների նախագահներին ու քարտուղարներին նման իրավունք չի վերապահել։ Այդ փաստը քննարկման առարկա դարձավ գյուղխորհուրդների նիստերում, կուսբջիջներում և համայնքների ժողովներում։ Բազմաթիվ բողոքներ են ուղարկվում Թիֆլիս, Մոսկվա և Երևան։ Անդրերկրկոմը կրկին ու կրկին է անդրադառնում Լեռնային Ղարաբաղի հարցին։ Նրա նախագահությունը 1922 թ. հոկտեմբերի 27-ին Ադրկոմկուսի Կենտկոմին հանձնարարում է իրականացնել իր 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին։ Այդ նույն նիստի որոշմամբ էլ Ա. Կարակոզովը նշանակվում է Ղարաբաղի գործկոմի նախագահ և Սուրեն Շադունցին էլ երաշխավորում պատասխանատու աշխատանքի Լեռնային Ղարաբաղում։[234] Մի փոքր անց, նոյեմբերի 30-ին, Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը որոշում է ստեղծել Ղարաբաղի ինքնավարության մշակումը նախապատրաստող հանձնաժողով։[235] Անդրկերկկոմի պլենումը, որը տեղի ունեցավ Բաքվում, 1922 դեկտեմբերի 14-ին, քննարկելով «Լեռնային Ղարաբաղում ինքնավարություն անցկացնելու» հարցը, ելնելով Անդրկերկրկոմի բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումից, հանձնարարում է Ադր. ԽՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծել Լեռնային Ղարաբաղի գծով հատուկ հանձնաժողով՝ բաղկացած յոթ հոգուց։ Հանձնաժողովի նստավայրը ճանաչվում է Շուշին և նախագահ է նշանակվում Ա. Կարակոզովը։ Հանձնարարվում է կարճ ժամանակամիջոցում Ղարաբաղի բնակչությանը ցույց տալ նյութական օգնություն և այնտեղ աշխատելու համար ուղարկել աշխատողներ։ Այդ որոշումը կատարելու համար տրվում է մեկ շաբաթ ժամանակ։[236] Հաջորդ օրն իսկ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախագահության որոշմամբ ստեղծվում է Լեռնային Ղա-



րաբաղի գործերի կոմիտե (յոթ հոգու կազմով), որի նախագահ է նշանակվում Արմենակ Կարակոզովը։[237] Նա դարձավ Ադրբեջանի կամակատարը Լեռնային Ղարաբաղում, հլու-հնազանդ կատարում էր Բաքվից ստացված բոլոր հրահանգները և ակտիվորեն նպաստում Արցախը Ադրբեջանին բռնակցելուն։

Ադրբեջանի ղեկավարությունը դարձյալ շարունակում էր ձգձգել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հռչակագրի ընդունումը։ Նա ամբողջ վեց ամիս Թիֆլիս և Երևան ուղարկած զանազան գրություններով հայ կադրեր էր խնդրում, զանազան խոսակցություններ բացում։ Անդրերկրկոմի Կենտկոմի 1923 թ. հունիսի 27-ին տեղի ունեցած պլենումը լսելով Ղարաբաղի ժամանակավոր կոմիտեի գործունեության մասին Ս. Շադունցի և Ա. Կարակոզովի զեկուցումները, պահանջում է «մեկ ամսվա ժամկետում Լեռնային Ղարաբաղն անջատել իբր ինքնավար մարզ»։[238] Երեք օր անց, հուլիսի 1-ին, Ադրկոմկուսի Կենտկոմի նախագահությունը Ադրբեջանի կենտգործկոմին հանձնարարում է «հռչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը»՝ նրանից կազմելով «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ՝ Խանքենդ կենտրոնով և գործադիր կոմիտեով»։ Այդ որոշումով ցուցում էր տրվում, թե ինչ բովանդակություն պետք է ունենար հռչակագիրը։ Բացի այդ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հեղկոմի նախագահ է նշանակվում Արմենակ Կարակոզովը, իսկ կուսմարզկոմի նախագահ՝ Սերո Մանուցյանը, որը Ղարաբաղ էր գործուղվել Հայաստանից։[239]

1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի Կենտգործկոմն ընդունեց հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» կազմավորման մասին, որը հուլիսի 9-ին հրապարակվեց հանրապետական թերթերում։ Իսկ մինչ այդ տեղի էին ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնք այս կամ այն կերպ կապ ունեն արցախյան հիմնահարցի հետ։ Ադրբեջանի պարագլուխները փորձում էին զրպարտել և ադրբեջանահայությանը մեղադրել ինչ-որ ազգայնամոլության մեջ։ 1923 թ. ապրիլին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարում Ի. Ստալինը, որը երբեք չի ցուցաբերել հայասիրության թեկուզ մեկ նշույլ, բացահայտելով որոշ հանրապետություններում պաշտպանողական ազգայնականությունը հարձակողական շովինիզմի վերածվելու առանձնահատկությունները, նշել է. «Ադրբեջանցիների մի մասի շրջանում նույնպես առկա է այսպիսի միտում՝ երբեմն չափազանց անսքող, այն թեմայով, թե մենք, իբր, ադրբեջանցիներս, բնիկ ենք, իսկ նրանք՝ հայերը, եկվորներ են։ Չի՞ կարելի արդյոք այդ պատճառով նրանց մի քիչ ետ քաշել, հաշվի չնստելով նրանց շահերի հետ։ Դա նույնպես շովինիզմ է»։[240] Ապրիլի 24-ի առավոտյան նիստում ազգային հարցի վերաբերյալ մտքերի փոխանակության ժամանակ, Կարլ Ռադեկը անամոթաբար հայտարարում է, թե իբր Ադրբեջանում գոյություն ունի հայ ազգային փոքրամասնության կողմից ադրբեջանցիների ճնշման վտանգ և իբր այդ մասին նա իմացել է ադրբեջանցի մի պատասխանատու ընկերոջ ասածներից։ Կ. Ռադեկի այդ հաղորդումը ներկացվել է առաջին հերթին ադրբեջանական պատվիրակության կողմից, որ նման կեղծ տեղեկատվություն «Ռադեկին են մատուցում ադրբեջանցի ուկլոնիստները»։[241]

Իր եզրափակիչ խոսքում, Ի. Ստալինը, մասամբ անդրադառնալով Կ. Ռադեկի հայտարարությանը, ասել է. «Ռադեկը խոսեց այն մասին, թե հայերն Ադր-

բեջանում ճնշում են կամ կարող են ճնշել ադրբեջանցիներին... Ես պետք է հայտարարեմ, ընդհանրապես այդպիսի երևույթներ բնության մեջ չեն լինում: Լինում է հակառակ երևույթը, որ Ադրբեջանում ադրբեջանցիները որպես մեծամասնություն ճնշում են հայերին և կոտորում, ինչպես դա եղել է Նախիջևանում, որտեղ կոտորել են համարյա բոլոր հայերին... Բայց որ օտար պետության մեջ փոքրամասնությունը ճնշի մեծամասնության մարդկանց, այդպիսի անբնական բաներ երբեք չեն եղել»:[242]

Չնայած Կ. Ռադեկի «վարկածը» մերժվեց, բայց և այնպես Ադրբեջանում չդադարեց շովինիստական քաղաքականությունը արցախահայության նկատմամբ, մանավանդ Ալիհեյդար Կարաևի, Լևոն Միրզոյանի, Արմենակ Կարակոզովի, Սերո Մանուցյանի և ուրիշների կողմից:

Ադրբեջանի ազգայնամոլները, շարունակելով տորպեդահարել Արցախի հիմնահարցը, հազար ու մի պատճառաբանություններ էին հորինում և ծգծգում Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակումը: Դրա գլխավոր դիրիժորը Ն. Նարիմանովն էր: 1922 թ. վերջին, երբ նրան փոխադրում էին Մոսկվա՝ Միության Կենտգործկոմի նախագահներից մեկի պաշտոնով, փոխվում է իրադրությունը և հնարավոր է դառնում արագացնել Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու հարցի վճռումը: 1989 թ. Ադրբեջանում հրապարակվեց Ն. Նարիմանովի մի գրպարտագիրը, որը 1923 թ. վերջին հասցեագրել է Ի. Ստալինին, պատճենները՝ Տրոցկուն և Կ. Ռադեկին: Այդ փաստաթուղթը, ըստ էության, գաղտնի մատնություն էր ընդդեմ Գ. Չիչերինի, Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ա. Միկոյանի, Սարգսի, Սերեբրովսկու, Լ. Միրզոյանի, նույնիսկ իր նախկին գործընկերներ Ա. Կարաևի և Հուսեյնովի: Նա փորձում է համոզել, որ Ադրբեջանում միայն ինքն է եղել հեղափոխությանը նվիրված և ոչինչ չի խնայել նրա հաղթանակի համար: Առաջ տանելով իր զրպարտությունը, նա գրում է, թե Ադրբեջանի հիմնարկները «լիքն են ռուսներով, հայերով, հրեաներով», որոնց նպատակն է հանրապետությունում բնաջնջել թուրքերին», Արևելքում էլ՝ հեղափոխության սրբազան գործը: Ն. Նարիմանովը հետագայում ավելացրել է, թե «ՌԿԿ Կենտկոմը, հանձին Սերգոյի ու Ստալինի, չեն վստահում մեզ՝ թուրքերիս, և Ադրբեջանի բախտը հանձնարարում են հայ դաշնակներին»: Դա էլ վերաբերվում էր Լևոն Միրզոյանին, երբ նա արդեն Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարն էր: Ն. Նարիմանովն անդրադառնալով իրեն խեղդող հիմնական հարցին՝ գրում է. «Ադրբեջանում դաշնակցական աշխատանքի մասին իմ կանխագուշակումների մյուս կեսը, ես մտածում եմ, ի հայտ կգա այս տարի: Լեռնային Ղարաբաղը Միրզոյանի ուժգին ճնշման տակ հայտարարված է ինքնուրույն մարզ: Իմ օրոք դա չէր հաջողվում ոչ թե այն պատճառով, որ ես դեմ էի այդ ինքնավարությանը, այլ պարզապես որովհետև իրենք՝ հայ գյուղացիները, դա չէին ցանկանում: Միրզոյանն այդ ընթացքում հայ դաշնակ ուսուցիչների օժանդակությամբ հող է պատրաստել և հարցն անց է կացրել Անդրերկրկոմում: Այդ պահից կտրուկ սրվել են հայ գյուղացիների ու թուրք գյուղացիների հարաբերությունները: Հետո էլ հարցը կդառնա Գանձակի լեռնային մասին ևս: Ադրբեջանում դաշնակցական քաղաքականությունն առաջ է գնում ամբողջ ուժով»:[243] Ն.



Նարիմանովի այդ շանտաժն ու զրպարտությունը, անշուշտ, հեռահար նպատակներ էին հետապնդում՝ հիմքեր ստեղծել ադրբեջանահայությունը լիովին վերացնելու համար:

Նման միտումը չէր կարող չնկատվել սթափ մտածող մի շարք հայ կոմու-
նիստների կողմից: Դրանց շարքում արժանի տեղ ուներ Սուրեն Շադունցը: Նա
1922 թ. դեկտեմբերի 21–ին, հանդես գալով «Բակինսկի ռաբոչի» թերթում, մե-
ղադրելով դաշնակներին և Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միավորելու
համար պայքարող մյուս ուժերին, փորձում է «հիմնավորել» Ղարաբաղի լեռնա-
յին մասը հարթավայրային շրջանի հետ տնտեսապես կապված լինելու վարկա-
ծը և իբր Ադրբեջանում «ազգային հարցը» լուծվում է ճշտորեն: Սակայն, որոշ
ժամանակ աշխատելով Ղարաբաղում, նա տեսավ և համոզվեց, թե ադրբեջան-
ցի ազգայնամոլներն ինչպիսի կեղտոտ քաղաքականություն են վարում ադրբե-
ջանահայության, մանավանդ Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ:
Նա Ս. Օրջոնիկիձեին 1923 թ. հունիսի 18–ին գրած նամակում հաղորդում է, թե
Ղարաբաղի հարցը քննելիս ինքն այն կապել է Զանգեզուրի հետ: Նա պնդում է,
որ «չի կարելի խոսել Ղարաբաղի վերականգնման մասին՝ աչք փակելով մի ու-
րիշ, նրա հարևան ամենահարուստ երկրամասի քայքայման նկատմամբ: Զան-
գեզուրը կապված է Ղարաբաղի հետ, երկուսի հարցն էլ պետք է լուծել միասին»:
Ապա՝ «Ես գտնում եմ, որ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում ազ-
գային հարցը ճիշտ լուծելու և այդ երկրամասի (Ղարաբաղի և Զանգեզուրի)
տնտեսական վերածննդի համար անհրաժեշտ է Ղարաբաղի լեռնային մասը
Զանգեզուրի հետ միասին առանձնացնել իբր մեկ ինքնավար միավոր»: Ս. Շա-
դունցը, այնուհետև խոսելով Անդրերկրկոմ ուղարկած Լեռնային Ղարաբաղի կո-
միտեի կազմած զեկուցագրի մասին, նշում է, որ «կոմիտեի ընդունած նախագ-
ծի մեջ շարադրված են եղել նախընթաց հայ–ադրբեջանական հարաբերու-
թյունների փաստերը, և որ դրանք (հայերի ջարդը Շուշիում, Զանգեզուրի կոմ. ջո-
կատի զինաթափումը Շուշիում, լեռնային գոտու շահերի լրիվ արհամարհելը)
բավական ակնառու կերպով ասում են, որ այդ երկրամասը թողնել Ադրբեջանի
սահմաններում այն հարաբերությունների պայմաններում, որոնք եղել են մինչև
հիմա, չի կարելի: Ուստի և ես գտնում եմ, որ ինքնավար մարզը պետք է կապված
լինի անմիջապես Անդրժողկոմխորհի հետ»:[244]

Այժմ համառոտակի «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորման մասին» վերոհիշյալ հռչակագրի վերաբերյալ, որը լույս աշխարհ եկավ արցախահայության կամքին ու ցանկությանը հակառակ: Հռչակագրի ներածական մասում ցարական ինքնակալությունը մեղադրվում է հետևողականորեն ցեղասպանության անցկացվող քաղաքականության մեջ, որը «չէր երկնչում նույնիսկ առանձին փոքր ազգությունների ոչնչացման դիմել, նրանց իրար հետ լարելու ճանապարհով»: Ցարական ինքնակալության այս ստոր քաղաքականությունից չեն հրաժարվում նաև հետագայում Անդրկովկասում առաջացած երեք «ինքնուրույն պետությունները», որոնց «գոյության աննշան ժամանակաշրջանում քիչ արյուն չհեղվեց» Ղարաբաղի լեռներում...»: Հռչակագրի կազմողները չէին տեսնում, որ փոքր ազգությունների ոչնչացման գործում իրենց

քաղաքականությունը գերազանցել էր ցարական ինքնակալության քաղաքականությանը և միթե Ղարաբաղի լեռներում, Զանգեզուրում, Նախիջևանում, Գանձակում, Արեշում, Բաքվում կամ այլուր հայերի և մյուս փոքր ժողովուրդների արյան հեղման պատճառը իրենք՝ թուրք–թաթարները չէին:

Այնուհետև ասված է. «Ազգային հալածանքի և անհավասարության, ինչ ձևով էլ որ այն դրսևորվելիս լինի, ոչնչացումը, միասնական պետական միության մեջ ժողովուրդների ազգային թշնամանքի և ատելության վերացումը բանվորագյուղացիական հեղափոխության և խորհրդային իշխանության հիմնական խնդիրներից է»: Խոսք չկա, լավ է ասված: Սակայն նրանք, ովքեր ներխուժեցին Արցախ և այն բռնակցեցին Ադրբեջանին, նրանք, ովքեր ձեռք բարձրացրին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի սահմաններում թողնելու կազմում, նրանք, ովքեր արցախահայությանը դատապարտեցին իրենց գոյությունը տասնամյակներ շարունակ քարշ տալ այլազգի հանրապետության սահմաններում, ի՞նչ էին մտածում, ի՞նչ նպատակ էին հետապնդում, ազգային հալածանքները վերացնե՞լ, թե՞ այն ավելի խորացնել: Իրականում Լեռնային Ղարաբաղի ինքնավարության կազմակերպումը երբեք էլ չծառայեց «բանվորա–գյուղացիական հեղափոխության և խորհրդային իշխանության խնդիրներին» և չնպաստեց «ազգային հալածանքի և անհավասարության ոչնչացմանը», այլ ինչպես ասված է Գ. Չիչերինի կողմից Վ. Լենինին 1920 թ. հունիսի 23–ին գրած վերոհիշյալ նամակում, ծառայեց Ադրբեջանի համար վիճելի համարվող տարածքները կաշառքով և այլ ճանապարհով ձեռք բերելուն:

Հռչակագրի առաջին կետում ասված է. «Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից կազմակերպել ինքնավար մարզ, որպես ԱխՍՀ բաղկացուցիչ մաս, Խանքենդի կենտրոնով», իսկ երկրորդ կետի ծանոթությունում գրված է, որ «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինումը ներկայիս տերերի գործն է», հինգերորդ կետով էլ ստեղծվում է «խառը հանձնաժողով»՝ ինքնավար մարզի «սահմանները որոշելու համր»: Ուրեմն՝ մարզը կազմավորվել է Լեռնային Ղարաբաղի հայկական հատվածից, որտեղ բնակվում են հայեր և որոնք հանդիսանում են ամբողջ արոտավայրերի, անտառների, այգիների, հողի ու ջրի փաստական տերերը և մարզի կենտրոն է հայտարարվեց Խանքենդի բնակավայրը, այդ այն դեպքում, երբ վերոհիշյալ Անդրերկրկոմի հուլիսի 5–ի տխրահռչակ որոշումով մարզի կենտրոն էր ճանաչվել Շուշի քաղաքը: Հռչակագիրը կազմվելուց երեք օր առաջ, հուլիսի 4–ին, տեղի ունեցած Ադրկենտգործկոմի նախագահության նիստը քննարկելով «Լեռնային Ղարաբաղի մասին» հարցը, որոշել էր ստեղծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները որոշող հանձնաժողով՝ նախագահ Ա. Կարաև, անդամներ՝ Ա. Կարակոզով, Սվիրիդով, Բունիաթզադե և Իլդրըմ,[245] որը պետք է որոշեր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սահմանները, հարթավայրային Ղարաբաղի տարածքը և Քրդստանի վիճակը: Հռչակագրի բացերը ծածկելու համար Ադրբեջանի խորհուրդների Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1923 թ. հուլիսի 16–ին տեղի ունեցած համատեղ նիստը որոշում է.

ա) ավերված նախկին ռուսական Սկոբելևսկ բնակավայրի հողատարա-



ծությունները «կցել ինքնավար Ղարաբաղի տարածքին»,

բ) «Շուշի քաղաքը մտցնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմի մեջ»,

գ) քրդերի կողմից զբաղեցրած տարածքի վրա կազմակերպել «Քուրդիստանի գավառ»,

դ) հանձնարարել Ժողկոմխորհին ճշտորեն որոշել այդ գավառների սահմաններն ու վարչական կենտրոնները,

ե) ստեղծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հեղկոմ հինգ հոգուց կազմված. նախագահ՝ Կարակոզով, անդամներ՝ Բունիաթով, Կոստանդյան, Կաֆիև և Չալյան,

զ) Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կանոնադրությունը վերջնական մշակման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով. Կարակոզով, Բունիաթով, Չալյան, Վարեյնիս և Մանուցյան,

է) Քուրդիստանի և Հարթավայրային Ղարաբաղի երկու տեղամասերի ղեկավար մարմինների ստեղծումը հանձնարարել Կենտկոմի քարտուղարությանը:[246]

Թե հռչակագիրը կազմելուց և թե վերոհիշյալ որոշում ընդունելուց առաջ Ադրբեջանի ղեկավարներն, անշուշտ, գլուխ են ջարդել և եկել այն եզրակացության, որ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու վերաբերյալ Անդրերկրկոմի հուլիսի 5–ի որոշումը և Հայաստանի պահանջը պետք է կատարվի, բայց կատարվի թուրքավարի, այսինքն՝ բզկտել հայոց Արցախ աշխարհն այնպես, որ հետո հեշտ լինի նրա իսկական տերերին՝ արցախահայությանն ամբողջովին վերացնել: Հենց այդ նպատակով էլ.

1. Ղարաբաղից անջատեցին նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը, որը երեք տարի առաջ խմիչքներ արտադրող հայերի սեփականությունն էր և դարծրին կենտրոն,
2. Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան մասը կտրեցին և ստեղծեցին մտացածին «Քուրդիստանի գավառ» և դրանով իսկ Արցախը անջատեցին մայր Հայաստանից[247]
3. Արցախից կտրեցին նրա ամբողջ հյուսիսային տարածքը՝ Գյուլիստանն ու Գանձակի հայկական լեռնային մյուս շրջանները:

Այսպիսով, 11,5 հազար քառակուսի կիլոմետր տարածք և 12 գավառ ունեցող պատմական Արցախից թողնվեց միայն 4,4 հազար քառակուսի կիլոմետր տարածություն:

Ամբողջովին ավերված Խանքենդին[248] նորաստեղծ մարզի կենտրոն դարձնելը միայն ռազմավարական նպատակ էր հետապնդում: Ադրբեջանի ազգայնամոլները համոզված էին, որ եթե Շուշին դառնար մարզի կենտրոն, ապա երկրամասի հայ բնակչությունը, մանավանդ նախկին շուշեցիները, կսկսեին վերադառնալ այնտեղ և կրկին կդառնար Արցախ աշխարհի տնտեսության, հոգևոր և վարչական կենտրոնը: Հակառակ ամեն մի տրամաբանության և դրան նախորդած որոշումների, ադրբեջանցի ազգայնամոլներն իրենց համար Շուշին ռազմավարական կետ դարձրին հետագա էքսպանսիայի համար:

Աբրահամ Կիսիբեկյանն իր հուշերում պատմում է, որ ադրբեջանական կառավարության կողմից Խանքենդին մարզի կենտրոն դարձվեց երկրամասի բնակչության կամքին հակառակ: Շուշիում, շարունակում է Ա. Կիսիբեկյանը, հրդեհից փրկվել էին մի շարք երկհարկանի տներ, բավականին բնակարաններ էլ ստացել էին չնչին վնասվածքներ, որոնց տերերը շատ հեշտ կարող էին վերականգնել: Շուշիի նախկին բնակիչներից 400 ստորագրությամբ դիմում է տրվում «Լեռնային Ղարաբաղի պատուհաս Արմենակ Կարագոզովին որպես կառավարության նախագահի, թույլ տալ վերաբնակվել իրենց անվնաս մնացած տներում, սակայն մերժում ստացան»: Մինչդեռ թուրքական գյուղերից շատ մարդիկ փոխադրվեցին և բնակություն հաստատեցին քաղաքում, իսկ հայ գյուղացիների առաջ հազար ու մի խոչընդոտ հարուցելով, արգելք էին հանդիսանում թեկուզ ավերակներում բնակվելու համար»:[249]

Հռչակագրի չորրորդ կետով մարզը լիովին գրկվում է ռեալ ինքնավարությունից և ամբողջովին կախման մեջ էր դրվում Ադրբեջանի կառավարությունից ու «Կենտգործկոմի անմիջական» կարգադրությունից, մանավանդ տնտեսաֆինանսական տեսակետից: Ասել է, թե արցախահայությունը պիտի անառարկելիորեն կատարեր Բաքվի բոլոր ցանկությունները:

Արցախում հանրաքվե անցկացնելու հարցը բազմիցս է արծարծվել: Սակայն այն չկազմակերպվեց մինչև ինքնավար մարզի ստեղծումը: Բանն այն է, որ Ադրբեջանում շատ լավ հասկանում էին, որ նման հանրաքվե կազմակերպելու դեպքում արցախահայությունը կքվեարկեր Ադրբեջանին կցվելու դեմ և մայր Հայաստանին միավորվելու օգտին: Բայց քանի որ կատարվել էր անօրինություն, ուստի Ադրբեջանում որոշեցին ինչ–որ կերպ օրինականացնել հռչակագիրը, այսինքն՝ արցախահայությունից կորզել հավանություն և համաձայնության հավաստիք: Բայց ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով, չէ՞ որ հանրաքվե անցկացնելու դեպքում արցախահայությանը «ոչ» կասեր: Եվ վերջապես, ինչո՞ւ Ադրբեջանում այսօր այդքան ամուր են կառչել Արցախում չկազմակերպված հանրաքվեն կազմակերպված ճանաչելու պոչից: Դ. Գուլիևը, Ե. Տոկարժսկին, Թ.Քոչարլին, Ս. Ալիևը և ուրիշներ[250] պնդում են, թե իբր Լեռնային Ղարաբաղում 1923 թ. օգոստոսին անց է կացվել հանրաքվե, և մարզի բնակչությունը պաշտպանել է Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի սահմաններում մնալու գաղափարը: Նրանք իրենց ասածները հաստատելու համար հիմք են ընդունում այն ժամանակ մարզկոմի քարտուղար Սերո Մանուցյանի Ադրկոմկուս ուղարկած 1923 թ. հոկտեմբերի 12–ի թվակիր զեկուցումը, որտեղ գրված է. «Ինքնավարության ակտը գյուղացիների կողմից ընդունվել է միաձայն... Գյուղացիներն իրենց մասսայական բանաձևերով ողջունել են ինքնավարությունը և խորհրդային կարգերը...»:[251]

Այժմ տեսնենք այդ ինչ «մասսայական բանաձևեր» է, որոնք ընդունվել են Լեռնային Ղարաբաղի բնակչության կողմից: Ուշադիր նայեցինք Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի 1923 թ. հուլիս–նոյեմբեր ամիսների մամուլը,



Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի պետական արխիվների այդ նույն ժամանակաշրջանի նյութերը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթի 1923 թ. նոյեմբերի 18–ի համարն ամբողջովին նվիրված է նոյեմբերի 6–ին Ստեփանակերտում տեղի ունեցած ԼՂԻՄ–ի խորհուրդների առաջին համագումարին:[252] Դրանում թե՛ ժամանակավոր հեղկոմի հաշվետվության շարադրանքում և թե՛ ընդունված բանաձևերում ոչ մի խոսք չկա հանրաքվեի մասին: ԼՂՅ պետական արխիվի 1–ին և 460–րդ ֆոնդերում ևս, որոնցում պահվում են ԼՂԻՄ խորհուրդների առաջին համագումարի նյութերը, ոչինչ չկա հանրաքվեի մասին: ԼՂԻՄ ներքին գործերի կոմիսարիատի (ֆ.64, կազմակերպվել է 1923 թ. օգոստոսի 4–ին), ԼՂԻՄ քաղաքային և շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների (ֆ.6) ինչպես և գյուղական խորհուրդների 1923 թ. նյութերում ևս ոչ մի խոսք չկա հանրաքվեի մասին: Հարց է առաջանում. այդ ի՞նչ հանրաքվե է եղել, որի մասին Սերո Մանուցյանը գիտեր, իսկ արցախահայությունը՝ ոչ:

Այդուհանդերձ, արդյո՞ք Լեռնային Ղարաբաղում 1923 թ. ամռանը անցկացվել է հանրաքվե, թե՞ ոչ: Իրականությունը հետևյալն է: Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին հռչակագիրը հրապարակվելուց հետո Բաքվից Լեռնային Ղարաբաղ են ուղարկվում մի խումբ կուսակցական և պետական աշխատողներ, որպեսզի Արմենակ Կարակոզովի, Սերո Մանուցյանի և ոմանց օգնությամբ կազմեն փաստաթղթեր, թե իբր այստեղ անցկացվել է հանրաքվե և բնակչությունը հավանություն է տվել Ադրբեջանի կազմում մնալու օգտին: Հարցը չի քննարկվում ո՛չ կուսակցական բջիջներում, ո՛չ խորհուրդների նիստերում և ո՛չ էլ հանրաքվե է անցկացվում: Այդ ամենի փոխարեն հրավիրում են համայնքների ներկայացուցիչների անկուսակցական կոնֆերանսներ և խոսում Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու վերաբերյալ հռչակագրի շուրջ: Եվ դա էլ համարվել է հանրաքվե: Ահա թե այդ առթիվ ինչ է գրել «Խորհրդային Ղարաբաղ» թերթը, որի խմբագիրն էր այդ նույն Սերո Մանուցյանը. «Համաձայն անկուսակցական կոնֆերենցիաներում հանված բանաձևերի, Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալը միակ և անսխալ միջոցն է համարվում երկու հարևան ժողովուրդների՝ թուրքերի և հայերի միջև ստեղծելու սերտ, բարեկամական միություն»:[253] Ժամանակակիցները (Հարություն Թումյան, Աբրահամ Կիսիբեկյան և ուրիշներ) վկայում են, որ Բաքվից ուղարկված այդ գործակալները Շուշի կամ շրջկենտրոններում հավաքում էին կուսակցական «ակտիվիստներին» և ստորագրել տալիս նախապես կազմված արձանագրություն, որով համաձայնություն էր հայտնվում՝ միանալու Ադրբեջանին: Հարություն Թումյանը պատմում է, թե ինչպես է Լևոն Միրզոյանն իր հայրենի Աշան գյուղում Ա. Կարաևից ստացած բավականին մեծ գումարով փորձել է կաշառել իր մոտ ազգական Զավադ Առստամյանին, որպեսզի նա գյուղացիներին համոզեր ստորագրել Ադրբեջանին միանալու արձանագրություն, սակայն կտրուկ մերժում էր ստացել:[254] Այդ առթիվ ահա թե ինչ է պատմում Աբրահամ Կիսիբեկյանը. սկսեցին Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններում ժողով-

ներ գումարել: Բաքվից եկած ներկայացուցիչները գյուղերից հավաքում էին իրենց «ցանկացած» մարդկանց, որոնք գալով կենտրոն, լսում են Բաքվից եկածներին ու ցրվում: Այնուհետև «կազմում են արձանագրություն, վավերացնում շրջանի կառավարչի միջոցով, այս ձևով դառնում է «հանրաքվե»: Վերցնելով այդ փաստաթուղթը՝ անցնում են մի այլ շրջան»: Այդպիսի մի ժողով էլ տեղի է ունենում Գյունե Ճարտար գյուղում, որն այն ժամանակ Վարանդայի շրջկենտրոնն էր: Բաքվից եկել էին Ա. Կարաևը և Լ. Միրզոյանը: Ժողովուրդը դեմ դուրս եկավ նրանց ցանկությանը և որոշեց չմիանալ Ադրբեջանին: Ժողովի քարտուղարն էր Սամվել Տեր–Գրիգորյանը, «որը մանրամասն արձանագրում էր բոլոր խոսածները, որոնք միաձայն դեմ են արտահայտվում Ադրբեջանին»: Երբ ժողովականները ցրվում են, Ա. Կարաևն ու Լ. Միրզոյանը Սամվել Տեր–Գրիգորյանին ստիպում են փոխել արձանագրությունը և գրել այնպես, թե իբր բոլորը համաձայն են միանալ Ադրբեջանին: Սակայն նա հրաժարվում է: Նրան պաշտպանում է ուսուցիչ Արմենակ Բեգլարյանը: Երկուսին էլ ձերբակալում և ուղարկում են Բաքու, ուր մի քանի ամիս մնում են բանտում: Ա. Կարաևն ու Լ. Միրզոյանը թելադրում են արձանագրության իրենց ցանկացած ձևը և հեռանում: «Հանրաքվեն» նման ձևով է կազմակերպվում նաև Խանքենդիում և Ղարաբաղի մյուս շրջաններում:[255] Սակայն արցախահայությունը երբեք էլ չհաշտվեց ստեղծված իրավիճակի հետ և չհրաժարվեց իր ազատագրական պայքարից: Ադրբեջանից ազատվելու և մայր հայրենիքին միավորվելու հարցը երբեք էլ չմարվեց, և մխացող կրակից բոց բռնկվեց... Այս անգամ արդեն անզիջում և վճռականությամբ:



# ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## *ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

1. "Кавказское слово", 23 марта 1919.

2. Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ., մաս 1-ին, Երևան, 1919, ՀԽՍՀ դեկրետների ու հրամանների ժողովածու, պրակ 1-12, Էջմիածին, 1921, Գաղտնի փաստաթղթերը: Ադրբեջանական դավադրական գործունեությունից մի էջ, Երևան, 1920, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1999, Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երևան, 1998, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, Արնոտ գիրք, Գորիս, 1921, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920-1930 (հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Երևան, 1930, Документы внешней политики СССР, т. 3-ий, М., 1959, т. 4-ый, М., 1960, 1-й съезд народов Востока, П-град, 1920, Двенадцатый съезд РКП(б), 17-25 апреля 1923 года, М., 1968.

3. ***Արսեն Միքայելյան,*** Ղարաբաղի վերջին դեպքերը («Հայրենիք», 1923, դ 7-12), ***Հովակ Ստեփանյան,*** Ղարաբաղյան կամ Շուշվա գնդի պատմությունը (նույն տեղում, 1934, դ 1-7), նույնի՝ Անդրանիկը Սյունյաց երկրում («Վեմ», 1936, դ 3-5), ***Եղիշե Իշխանյան,*** Դեպքերը Ղարաբաղում, («Հայրենիք», 1933, դ 11-12), ***Քիրս Սարոտ,*** Ղարաբաղի կցումը Ադրբեջանին (նույն տեղում, 1929, դ 8), նույնի՝ Ղարաբաղի կռիվների շուրջը (նույն տեղում, 1934, դ 5), նույնի՝ Տաճիկների մուտքը Ղարաբաղ («Հուսաբեր», 1929, դ 235-247), ***Համբարձում Տերտերյան,*** Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները: Լևոն Շանթի պատվիրակությունը («Հայրենիք», 1954, դ 1-2), ***Լեո,*** Անցյալից, Թիֆլիս, 1925, ***Գ. Նժդեհ,*** էջեր Լեռնահայաստանի գոյամարտեն, Ազատ Սյունիք, Հայ բոլշևիկների կռիվները, Ինչո՞ւ պայքարեց Լեռնահայաստանը («Հայրենիք», 1923-1925 թթ.), ***Արսեն Սարգսյան,*** Հեղափոխական կրակների միջով, Երևան, 1967, ***Արամայիս,*** Ղարաբաղի տագնապը. օրագրություն, Երևան, 1993, ***Зарэ Мелик-Шахназаров,*** Записки карабахского солдата, М., 1995, ***В.А. Мурадян,*** Отец и отчим, Ереван, 1998 և այլն:

4. ***Հարություն Թումյան,*** Դեպքերը Լեռնային Ղարաբաղում. 1917-1920, (Մատենադարան), ***Աբրահամ Կիսիբեկյան,*** Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում (ՀՀ ՊԿՊԱ):

5. ***Եղիշե Իշխանյան,*** Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999:

6. ***Ս. Վրացյան,*** Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, ***Հով. Քաջազնունի,*** ՀՅ Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1924, ***Ալ. Խատիսյան,*** Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, ***Ռուբեն (Տեր-Մինասյան),*** Հայ հեղափոխականի մը հիշատակները, Է հատոր, Լոս Անճելըս, 1932 և այլն:

7. ***Գ.Ա. Հովհաննիսյան,*** Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971:

8. ***Ծ. Աղայան,*** Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, ***Գ.Բ. Ղարիբջանյան,*** Հայ ժողովրդական հերոս Անդրանիկ, Երևան, 1990, Անդրանիկ Օզանյան. փաստաթղթեր և նյութեր (ռուսերեն), Երևան, 1991, ***Հրաչիկ Սիմոնյան,*** Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, ***Համբարձում Կարապետյան,*** Անդրանիկ, Երևան, 1994, Արցախը կանչում էր Անդրանիկին, փաստաթղթեր, Երևան, 1995 և այլն:

9. ***Գ. Մեյրան,*** Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928, ***Ա.Ն. Բարսե,*** Լեռնային Ղարաբաղ, Բաքու, 1963, ***Երվանդ Սարգսյան,*** Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երևան, 1964, ***Ա.Բ. Լալայան,*** Զանգեզուրյան դրվագներ (1914-1921թթ.) , Երևան, 1985, ***Լեո,*** Սահմանավեճեր. Լոռի-Ախալքալաք-Ղարաբաղ, Թիֆլիս, 1919, ***Հր. Ռ. Սիմոնյան,*** Թուրք-ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան 1986, ***Ա.Հ. Հարությունյան,*** Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, ***Գ.Ա. Գալոյան,*** Պատմության քառուղիներում, Երևան, 1982, նույնի՝ Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, ***Հրանտ Ավետիսյան,*** Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, նույնի՝ Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918թ. մայիս, Երևան, 1998, ***Վարդան Գևորգյան,*** Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921), Պուքրէշ, 1923, ***Ք.Ա. Խուդավերդյան,*** *Զանգեզուր* (1917-1921), Երևան, 1988, ***Կիմ Ղահրամանյան,*** Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993, Դրո, Երևան, 1991, ***Վարազ Առաքելյան,*** Նժդեհ, Երևան, 1989, ***Վ.Սևյան,*** Շուշի, Երևան, 1991, ***Ռ.Հ. Տեր-Գասպարյան,*** Շուշի, Երևան, 1991, ***Շահեն Մկրտչյան,*** Արցախ, Երևան, 1991, ***Սմբատ Ավագյան,*** Ղարաբաղի մամուլի պատմություն (1882-1920, Երևան, 1989), ***Վ.Ա.Մուրադյան,*** Պարտքին հավատարիմ, Երևան, 1988, ***Վ. Ա. Վիրաբյան,*** Հայաստանը Անդրկովկասյան հանրապետությունների 1920թ. ապրիլյան վերաժողովում և ազգամիջյան փոխհարաբերությունները, Երևան, 1988, ***Բակուր,*** Շուշի բերդաքաղաքը, Երևան, 2000, ***Հ.Ա. Հարությունյան,*** Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թ.., Երևան, 1996, ***Рем Казанджян,*** К предистории самоопределения Нагорного Карабаха, Москва 1997 և այլն:



10. ***Արամ Սիմոնյան,*** Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000:

11. ***Հ.Սիմոնյան,*** Ազգամիջյան լարվածության ակունքում, «Խորհրդային Հայաստան», սեպտեմբերի 14 և 20 1989, նույնի՝ Մի մոռացեք փաստերը, նույն տեղում, 23 օգոստոսի 1989, նույնի՝ Մի էջ զանգեզուրյան հերոսամարտից, «Երեկոյան Երևան», 13 և 14 հունիսի 1989, ***Լ. Խուրշուդյան,*** Պատմագրության միակ չափանիշը ճշմարտությունն է, նույն տեղում, 23 և 24 օգոստոսի 1989, նույնի՝ ***Վարդգես Միքայելյանի*** համահեղինակությամբ՝ Некоторые вопросы истории Нагорного Карабаха, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 4, ***Г.Аветисян,*** Как все это было Закавказье в 1918-1920 годах, «Коммунист», 26 августа 1989, նույնի՝ На кого это расчитать, նույն տեղում՝ 6 октября, ***Բագրատ Ուլուբաբյան,*** Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, նույնի՝ 1989-1994 թվականներին մամուլում հրապարակված հոդվածները, Գ. *Գալոյանի* և *Լ. Խուրշուդյանի* խմբագրությամբ Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, ***Լ. Մկրտչյան,*** Արցախ-Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988 և այլն:

12. Нагорного Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992.

13. ***Дж. Гулиев,*** Под знаменем ленинской национальной политики..., Баку, 1972, ***М.С. Искендаров,*** Из истории за победу Советской власти, Баку, 1958, ***Андраник Галустян,*** Из истории борьбы трудящихся Гянджиской (Елизаветпольский) губернии Азербайджана за Советскую власть (1917-1920), Баку, 1963, ***Играр Алиев,*** Нагорный Карабах. История. Факты. События, Баку, 1989, ***Токаржевский, Е.А.,*** Из истории иностранной войны в Азербайджане, Баку, 1957, ***Ф. Шушинский,*** Шуша, Баку, 1968, և այլն:

*14. Конфликт в Нагорном Карабахе, Баку, 1990, История Азербайджана по документом и публикациям, Баку, 1990* և այլն:

*15.* К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. Документы и материалы, Баку, 1989.

## ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԸ
### 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ-1918 Թ. ՄԱՅԻՍ

1. «Փայլակ», Շուշի, 9 մարտի 1917:
2. Նույն տեղում, 12 մարտի:
3. Մինչև 1918 թ. դեկտեմբերի վերջը Արցախում պահպանվել է հին տոմարը, այդ այն դեպքում, երբ Անդրկովկասում նոր տոմարին էին անցել Սեյմի 1918 թ. ապրիլի 13-ին ընդունած օրենքով:
4. «Փայլակ», 12 մարտի:
5. Նույն տեղում:
6. «Известия Бакинского Совета Рабочих и Солдатских депутатов», Баку, 1917, դ 8, (այսուհետև՝ «Известия Бакинского Совета...»)
7. «Յորիզոն», 29 մարտի 1917:
8. «Փայլակ», 16 մարտի: Կոմիտեի կազմի մեջ մտնում էին 12-ական հոգի հայ և թուրք հասարակական հիմնարկներից, երեքը՝ քաղաքական վարչությունից, չորսը՝ զինվորներից, չորսը՝ սպաներից, երկուսը՝ ռեալական ուսումնարանից, մեկը՝ քաղաքի ռուսներից: Քաղաքագլուխը մտնում էր կոմիտեի մեջ և գլխավորում էր այն («Յորիզոն», 29 մարտի):
9. «Փայլակ», 19 մարտի:
10. «Պայքար», 30 ապրիլի 1917:
11. Յայաստանի Յանրապետության Պետական կենտրոնական պատմական արխիվ (ՅՅ ՊԿՊԱ), ֆ. 221, ց.1, գ.30, թ.19:
12. «Փայլակ», 16 մարտի:
13. Նույն տեղում, 13 ապրիլի:
14. ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ.19:
15. «Փայլակ», 23 մարտի:
16. Նույն տեղում:
17. «Խորհրդային Յայաստան», 25 մարտի 1928:
18. ՅՅ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ.19:
19. Ընդհանրապես, Արցախում արտադրված հացահատիկը բնակչությանը հերիքում էր հազիվ 3-4 ամիս: Այդ պատճառով էլ շատ հայ գյուղացիներ հաց էին հայթայթում թաթարական գյուղերում՝ աշխատելով նրանց համար:
20. Большевики в борьбе за победу социалистической революции в



Азербайджане. Докумнеты и материалы 1917-1918 гг., Баку, 1957, ст. 70 (այսուհետև՝ Большевики в борьбе за победу...).

21. «Յորիզոն», 26 օգոստոսի:
22. Ցորեն գնելու և Շուշի տեղափոխելու աշխատանքների կազմակերպումը հանձնարարվել էր նախկինում Շուշիի գավառի առաջին տեղամասի գավառապետ, իսկ ժամանակավոր կառավարության օրոք այդ նույն տեղամասում կոմիսար-քաղաքացի հռչակված Միքայել Ղոլուխանյանին: Նա անտարբեր գտնվեց իրեն հանձնարարված այդ հույժ կարևոր գործի նկատմամբ, տապալեց ցորենի գնման և տեղափոխման աշխատանքները, որը չափազանց բացասական ազդեց քաղաքի հետագա կյանքի վրա:
23. ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 150, ց.1, գ.22, թ. 1-31: Արամայիսը (1874-1954) ծնվել է Արցախի Փրջամալ գյուղում: Ավարտել է Շուշիի թեմականը, մարտնչել է Արևմտյան Յայաստանում: 1905-1906 թթ. Արցախում կռվել է մուսուլման ազգայնամոլների դեմ: Կրկին Արցախում էր 1917-1919 թվականներին: 1949 թ. Բաքվից աքսորվել է Ալթայի երկրամաս, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Բազմաթիվ ստեղծագործությունների հեղինակ է: Նրա «Ղարաբաղի տագնապը» օրագրությունը տպագրվել է տողերիս հեղինակի կողմից, 1993 թ.:
24. Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ, թուղթ 240[12], ցուցակ 74, վավերագիր 29, էջ 8 (այսուհետև՝ Մատենադարան...):
25. «Փայլակ», 30 ապրիլի:
26. Նույն տեղում, 2 ապրիլի:
27. Նույն տեղում:
28. Նույն տեղում, 9 մայիսի:
29. Նույն տեղում, 20 ապրիլի:
30. Նույն տեղում, 30 ապրիլի:
31. Նույն տեղում, 8 հունիսի:
32. «Գործ», Բաքու, 1917, դ 7-8, էջ 197-208: Դավիթ Անանունը (1879-1943) ծնվել է Արցախի Մեծ շեն գյուղում: Յանդիսացել է Յայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության (սպեցիֆիկներ) գաղափարախոսը: Ստալինյան բռնությունների առաջին զոհերից է: Առանձնապես աչքի է ընկնում նրա «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր գիրքը:
33. ՅՅ ՊԿՊԱ, ֆ. 314, ց.1, գ.34, թ.46, նաև՝ «Փայլակ», 8 հունիսի:
34. Նույն տեղում:
35. Յրանտ Ավետիսյան, Յայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 161 (այսուհետև՝ Յ.Ավետիսյան...):
36. «Յորիզոն», 26 օգոստոսի 1918:

37. Նույն տեղում, 13 հոկտեմբերի:

38. «Մշակ», 1917, №148:

39. Գ.Յովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 49 (այսուհետև՝ Գ. Յովհաննիսյան...): Յայկ Տեր–Սարկիսովը (1894–1969) վկայում է, որ Ղարաբաղի բոլշևիկների և մենշևիկների անջատումը տեղի է ունեցել 1917 թ. սեպտեմբերի 12–ին (տես՝ Սուրեն Կարապետյանի անձնական արխիվ, Ստեփանակերտ, գործ՝ Յայկ Մովսեսի Տեր–Սարկիսով, էջ 3 և 31: Պատճեն՝ տողերիս հեղինակի անձնական արխիվ, այսուհետև՝ Յեղինակի անձնական արխիվ):

Սուրեն Աղաբեկի Կարապետյանը (1916–1983) ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Կոլխոզաշեն (Մաշադիշեն) գյուղում, չքավորի ընտանիքում: Բաքվի Վ.Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո, աշխատել է ԼՂՄ մի շարք դպրոցներում, որպես պատմության ուսուցիչ: Մասնակցել է Յայրենական մեծ պատերազմին: Զորացվելուց հետո աշխատել է նախ՝ որպես մանկավարժ, ապա՝ կուսակցական և պետական մարմիններում: Կյանքի վերջին տարիներին եղել է մարզային պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն: Նրա գրչին են պատկանում «Լեռնային երկրամասի քաջարի որդիները», «Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում» գրքերը, տասնյակ հոդվածներ և «Լեռնային Ղարաբաղի անվանի մարդիկ» անտիպ գիրքը:

40. «Նեցուկ», 18 օգոստոսի 1917:

41. Նույն տեղում:

42. Գ. Յովհաննիսյան..., էջ 45–47, «Արև», 1917, 16 հունիսի, «Ապառաժ», 1917, 13 մայիսի:

43 Եղիշե Իշխանյան, Լեռնային Ղարաբաղ 1917–1920, Երևան, 1999, էջ 18 (այսուհետև՝ Ե. Իշխանյան...): Եղիշե Իշխանյանը ծնվել է 1886 թ. հունվարի 1-ին, Շուշի քաղաքում: Նա դեռ պատանի տարիքից հարել է Յայ հեղափոխական դաշնակցությանը: Ցարական ոստիկանության կողմից Շուշիից արտաքսվելուց հետո ուսումը շարունակել է Երևանի թեմական դպրոցում: Յետո սովորել է Պետերբուրգի գյուղատնտեսական բարձրագույն վարժարանում: 1917 թ. հունիսին վերադառնում է հայրենի Շուշի և լծվում կուսակցական-հանրային եռուն աշխատանքի: Ընտրվում է Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահ: 1919 թ. հունիսին անգլիացիները նրան արտաքսում են Ղարաբաղից: Յետո նշանակվում է Դարալագյազի (Վայոց ձոր) տեղական գործադիր մարմնի քարտուղար: 1921թ. հուլիսին, հետապնդումից փրկվելու համար, անցնում է Պարսկաստան: Ե. Իշխանյանի կյանքի վերջին տարիներն անցել են ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում: Մահացել է 1975 թ. ապրիլի 28-ին:

44. Նույն տեղում, էջ 19:

45. Большевики в борьбе за победу..., ст. 73-74.



46. Գ. Յովհաննիսյան..., էջ 41:

47. «Սոցիալ–դեմոկրատ» (Բաքու), 6 օգոստոսի, 1917:

48. «Նեցուկ», 28 սեպտեմբերի:

49. «Ապառաժ», 3 սեպտեմբերի:

50. Նույն տեղում:

51. «Նեցուկ», 24 օգոստոսի:

52. Նույն տեղում:

53. Նույն տեղում:

54. Նույն տեղում:

55. Նույն տեղում:

56. Նույն տեղում, 31 օգոստոսի:

57. Նույն տեղում, 14 սեպտեմբերի:

58. Նույն տեղում, 7 սեպտեմբերի:

59. Նույն տեղում, 14 սեպտեմբերի:

60. Ե. Իշխանյան..., էջ 33:

61. «Յորիզոն», 4 հոկտեմբերի:

62. Ե. Իշխանյան..., էջ 42–43:

63. ՅՅ ՊԿՊԱ, ֆ.314, ց1, գ.34, թ.45:

64. Ե. Իշխանյան..., էջ 51:

65. «Փայլակ», 4 մայիսի:

66. «Նեցուկ», 24 օգոստոսի:

67. «Ապառաժ», 20 հուլիսի:

68. «Известия Бакинского Совета...,», 23 июня 1918.

69. Մատենադարան..., էջ 12–13:

70. «Արև», 11 փետրվարի, 1918:

71. ՅՅ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ.20:

72. Յով. Քաջազնունի, ՅՅ Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1924, էջ 27 (այսուհետև՝ Յով. Քաջազնունի...):

73. Ե. Իշխանյան..., էջ 89:

74. Նույն տեղում, էջ 81:

75. Մատենադարան..., էջ 14:

76. Ե. Իշխանյան..., էջ 81:

77. Նույն տեղում, էջ 83: Այլ տեղում նշված է, որ քարտուղար է ընտրվել Նիկոլայ Իսախանյանը:

78. «Մշակ», 22 փետրվարի 1919։

79. Ե. Իշխանյան..., էջ 84։

80. Մատենադարան..., էջ 16։

81. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.33, թ.11։

82. Ե. Իշխանյան..., էջ 87։

83. Դալի Մահրասան (Մեսրոպ Շահջանյան) Խաչենի Առաջաձոր գյուղի Եսայի քահանայի որդին էր, որը Շուշիի թեմականի չորրորդ դասարանից հեռացավ, մեկնեց Բաքու, որտեղ զբաղվում էր փականագործությամբ։ Հետո բանվոր էր Նավթարդյունաբերող Մանթաշովի նավթահանքերում։ Նա Բաքվում հայտնի էր Քեշիշ օղլի Արտյոմ անունով։ Մահրասան հաղթանդամ, վայելչակազմ ու գեղեցիկ տղամարդ էր, աhռելի ֆիզիկական ուժի տեր։ Նա Բաքվում մենամարտելով Այթաղլըղ հայտնի ըմբիշի հետ, զարկել էր գետնին։ Հոր ցանկությամբ 1903 թ. Մահրասան ձեռնադրվեց քահանա և նշանակվեց Դաշբուլաղի եկեղեցու հովիվ։ 1905–1906 թթ. Ղարաբաղում տեղի ունեցած հայ–թաթարական ընդհարումների ժամանակ եղել է Համազասպի խմբում և նրա օգնականներից մեկը։ Դալի Մահրասան միևնույն ժամանակ Խաչեն գետի աջափնյա տարածության վրա գտնվող գյուղերի գործակալն էր (Ե. Իշխանյան..., էջ 79)։

84. «Վայրենի դիվիզիան» ստեղծվել է առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասի մուսուլմաններից (չեչեններ, ինգուշներ, չերքեզներ, թաթարներ և այլն)։ Այդ դիվիզիան աչքի էր ընկնում կողոպուտով և ավազակությամբ։ Դրա համար էլ ստացել է «վայրենի» անունը։ Դիվիզիայի զորամասերը 1918 թ. հունվարի 9–12–ը Շամխորի մոտ կողոպտեցին տուն վերադարձող ռուսական զորամասերին և գնդակահարեցին մեծ թվով անզեն մարդկանց։ Այդ ավազակության հիմնական ուժը թաթարների (ադրբեջանցիների) «վայրենի դիվիզան» էր, որի ոգին սպա Մեհմանդարովն էր։ Այդ նա էր ձգտում տիրանալ Հադրութի և Խանքենդու զորանոցներին, մինչդեռ այդ զորանոցները, ինչպես գիտենք, Կովկասյան շտաբի պաշտոնական կարգադրությամբ տրվել էին Հայ զինվորական միության Շուշիի ճյուղին։

85. «Մշակ», 19 հուլիսի 1917։

86. Ալեքսանդր Միրզաջանի Ծատուրյանը ծնվել է Շուշիում, 1881 թ.։ 1903 թ. մտել է սոցիալ–դեմոկրատական բանվորական հայ կուսակցության մեջ։ 1913 թ. ավարտելով Մոսկվայի տնտեսագիտական ինստիտուտը, վերադարձել է Շուշի, թեմականում դասավանդել պատմություն, ապա վարել տեսուչի պաշտոնը։ 1917 թ. հետո պայքարել է Ղարաբաղում խորհրդային կարգերի հաղթանակի համար։ Զոհվել է 1920 թ. մարտին մուսավաթական խռովության ժամանակ։ ժամանակի հայ մամուլում տպագրվել են նրա մի քանի հոդվածներ։

87. Ծննդով Ճարտար գյուղից Արտաշես Վարդապետյանը ավարտելով Շուշիի ռեալականը, ուսումը շարունակել է Ռուսաստանում։ Առաջին աշխարհամարտի տարիներին երեք տարի կռվել է Արևմտյան ռազմաճակատում։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո վերադարձել է Արցախ և 1918–1919 թթ. իրեն նվիրել հայրենի երկրամասի ինքնապաշտպանության գործին։ 1919 թ. Օգոստոսյան ժամանակավոր համաձայնությունից հետո անգլիացիների ճնշման տակ տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ և 1920 թ. հունվարին մահացել է թոքերի բորբոքումից։

88. Մատենադարան..., էջ 28–39, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ.22–23։

89. Ե. Իշխանյան..., էջ 109։

90. Ճակատամարտի մասնակիցներից Դանիել բեկ Փիրումովը, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը, եպիսկոպոս Զավեն Մահտեսի Բաբայանը և շատ ուրիշներ արցախցիներ էին (տես՝ Բագրատ Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, Երևան, 1994, էջ 18)։ Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական հրետանու հրամանատարն էր արցախցի կապիտան Տեր–Մովսիսյանը, որն իր հայրենակից հրետանավորների հետ հերոսական ջանքերով աշխատում էր թշնամու զորամասերի առաջխաղացումը կանգնեցնել, պատճառելով նրանց մեծ կորուստներ (Իսահակ Տէրտէրեան, Հայկական գոյամարտը, Թեհրան, 1957, էջ 307–309)։

91 . «Բանվոր», 15 մարտի 1918։

92. Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992, ст. 1-3 (այսուհետև՝ Нагорный Карабах...).

93. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 423։ Շուշիի գնդի կազմակերպման աշխատանքներին օգնելու նպատակով 1918 թ. հունվարի 15–ին Թիֆլիսի Գայանյան դպրոցում կազմակերպվում է ժողով, որին մասնակցում են Հովհաննես Թումանյանը, Նիկոլ Աղբալյանը, Դերենիկ Դեմիրճյանը և մի շարք հայ անվանի մտավորականներ։ Հանգանակվում է 40 հազար ռուբլի, 20 հազար էլ հատկացնում է Հայոց ազգային խորհուրդը։ Քանի որ Եվլախ–Շուշի ճանապարհը փակ էր, ուստի գունդը Արցախ է ուղևորվում Նոր Բայազետի ճանապարհով։ Գունդը Թիֆլիսից դուրս է գալիս 1500 հոգով, որից 600–ն էր զինվոր, մնացածը հայրենիք վերադարձող արցախցիներ էին։ Գունդը Դարալագյազի վրայով Գորիս է հասնում չորս ամսում («Հայրենիք», 1935, դ 2, էջ 84)։

94. «Մշակ», 25 հուլիսի 1918։

95. Հ. Ավետիսյան..., էջ 164։

96. Նույն տեղում, էջ 169։

97. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ. 23–24։

98. Ե. Իշխանյան..., էջ 130–131։

99. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ.23–24, 28–29։

100. Ե. Իշխանյան..., էջ 137։

101. Նույն տեղում, էջ 141։

102. Մատենադարան..., թ.31–32:

103. Դավիթ խանը Ջիվանշիրում գտնվող Ավան Յուզբաշյանի կալվածքի կառավարիչն էր:

104. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ.23:

105. Նույն տեղում, թ.25:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ

1. Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 161 (այսուհետև՝ Ս. Վրացյան...):
2. Հ.Ա. Ավետիսյան, 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը, «Պատմա–բանասիրական հանդես», 1988, № 2, էջ 32, նաև՝ В. И. Адамия, Из истории английской интервенции в Грузии (1918-1921гг.), Сухуми, 1961, ст.35.
3. Այդ երևույթը հայ պատմաբանը այսպես է մեկնաբանում. եթե «Վրաստան» ու «վրացի» և «Հայաստան» ու «հայ» հասկացությունները գոյություն ունեին, ապա Ադրբեջանի հանրապետություն էր ստեղծվում մի հողի վրա, որը պատմության ընթացքում երբեք Ադրբեջան չի կոչվել... Հայտնի է, որ «ադրբեջանցի» հավաքական անունը... սոսկ 11–րդ դարից հետո Անդրկովկաս խուժած և ապա մահմեդականություն ընդունած թուրք–սելջուկների և ուրիշների մնացորդներից է կազմվել, տեղական բնակիչներին աստիճանաբար բնաջնջելու, դավանափոխելու, լեզվափոխելու և կամ էլ այլ ճանապարհներով: Անդրկովկասում մահմեդականներին անվանում էին «կովկասյան թաթարներ», վրացիների կողմից՝ պարզապես «թաթարներ», իսկ հայերի կողմից՝ «թուրքեր»: Թուրքերի լեզուն «թուրքերեն» էր, այնուհետև փոխարինելով «ադրբեջաներենով», իբր «ադրբեջանցիների մայրենի լեզու»: Ազգային հանրապետություն ստեղծելիս գործածական չէին ոչ «ադրբեջանցի», ոչ էլ «ադրբեջաներեն» արտահայտությունները, եթե չհաշվենք «ազերի»–ն՝ իբր ազգի ու նրան պատկանողների խոսակցական անունը (Լ. Մկրտչյան, Արցախ–Ղարաբաղը՝ իր անցյալով ու ներկայով, Աթենք, 1988, էջ 25–26, այսուհետև՝ Լ. Մկրտչյան...):
4. Ս. Վրացյան..., էջ 169, Հ.Ավետիսյան..., էջ 286:
5. З.Авалов, Независимость Грузии в международной политике. 1918-1921 гг., Париж, 1924, ст.5.



6. Нагорный Карабах..., ст.5.
7. Լ. Մկրտչյան..., էջ 27:
8. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց.1, գ.33, թ.5:
9. Ռուբեն Տեր–Մինասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, է հատոր, Լոս Անճելըս, 1992, էջ 137:
10. Տես՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, № 1, էջ 31:
11. Լ. Մկրտչյան..., էջ 28:
12. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ.656, թ.25:
13. Նույն տեղում, գ.49, թ.6–9:
14. Ե. Իշխանյան..., էջ 148–150:
15. Նույն տեղում, էջ 154:
16. «Հայրենիք», 1933, № 11, էջ 85:
17. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ. 30, թ.26: Կոմիսարների խորհրդի կազմը, ըստ Եղիշե Իշխանյանի, հետևյալն էր. «Նախագահ՝ Անուշ Տեր–Միքայէլեան, դաշնակցական, քարտուղար՝ Ռուբեն Տեր–Գասպարեան, փոխ–նախագահ՝ Աշոտ Մելիք Յովսէփեան, արտաքին գործերի վարիչ, Յարութիւն Թումեան՝ զինուորական հարցերի վարիչ, Արամ Միքայէլեան՝ ֆինանսների վարիչ, Արսեն Բակունց՝ հաղորդակցութեանց վարիչ, Արտաշես Պետրոսեան՝ ներքին գործերի վարիչ, Ասատուր Ստեփանեան՝ հաշվապահ» (Ե. Իշխանյան..., էջ 155):
18. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց.1, գ.30, թ. 26:
19. Մատենադարան..., էջ 43–44:
20. Կոմիսարների խորհրդի հրահանգով կազմվեցին հիսունական հոգուց բաղկացած կամավոր հեծյալ խմբեր, որոնք պետք է պատրաստ լինեին ցանկացած առաջադրանք կատարելու: Դիզակի հեծյալների խմբի պետ է նշանակվում Արտեմ Լալայանը, օգնականներ՝ Աշոտ Շադունց, Ավանես Զետեյանց, Վարանդայինը՝ Աղալար Հայրապետյան, օգնական՝ Աղապարոն Դանիելբեկյան, Աջափնյա Խաչենի՝ Աղասի Վերտեյան, օգնական՝ Դալի Սահրասս, Ձախափնյա Խաչենի՝ Ասատուր և Արտեմ Սուքիասյաններ, Ջրաբերդի՝ Նիկոլայ Համբարձումյան և Նիկոլայ Զախարբեկյան (Ե. Իշխանյան..., էջ 163):
21. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, գ.30, թ.26:
22. Ե. Իշխանյան..., էջ 172:
23. Որոշ աղբյուրներում գործ է ածված Ղարաբաղի հայ գյուղացիության համագումար անվանումը: Քանի որ համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև Շուշի քաղաքի ներկայացուցիչները, ուստի Ղարաբաղի հայության համագումար անվանման գործածումը, մեր կարծիքով, ճիշտ է, մանավանդ, որ աղբյուրների մեծ մասում այդպես է գործածված:

24. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.51:
25. Ե. Իշխանյան..., էջ 172–173:
26. Մատենադարան..., էջ 74:
27. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ. 26:
28. «Ղարաբաղի Սուրհանդակ», 19 օգոստոսի 1918: Թերթի մեքենագիր տեքստը ինձ է տրամադրել վաղամեռիկ պրոֆեսոր Սմբատ Ավագյանը: Նա այդ տեքստը ստացել էր Արշավիր Քամալյանից: Հայտարարության տեքստը տես՝ Մատենադարան..., էջ 75–76, ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ. 75–77:
29. «Մշակ», 23 փետրվարի 1919:
30. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ. 60:
31. Ե. Իշխանյան..., էջ 178–183: Օգոստոսի սկզբներին ջրաբերդցիների օգնությամբ սարովցիներին փոխադրեցին վեց օրում, առանց որևէ միջադեպի: Սարովցիները տեղավորվեցին Մարաղայում, Չայլիում, Մարտակերտում և Ջրաբերդի հարթավայրային մյուս գյուղերում:
32. «Кавказское слово», 27 июля 1918.
33. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ. 60:
34. Կոմիսարների պաշտոնավայրեր են հաստատվում. 1–ին գավառամաս (Խաչեն)՝ Խանքենդ ավան, 2–րդ գավառամաս՝ (Վարանդա)՝ Հաղորդի գյուղ, 3–րդ գավառամաս՝ (Դիզակ)՝ Հադրութ գյուղ և 4–րդ գավառամաս (Ջիվանշիր)՝ Մարտակերտ գյուղ:
35. Հաշտարար դատարանների պաշտոնավայրեր հաստատվեցին. Ջրաբերդի շրջանի համար՝ Մեծ շեն գյուղը, Խաչենի շրջանի համար՝ Խանքենդ ավանը, Վարանդայի համար՝ Ներքին Թաղավարդ գյուղը, իսկ Դիզակի համար՝ Հադրութ գյուղը:
36. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ. 61:
37. Մատենադարան..., էջ 85: Մասնագիտությամբ ինժեներ, Շուշիի Միջկուսակցական բյուրոյի անդամ Լյուֆտալի բեկ Բեհբուդովը, Գրիգոր Հովհաննիսյանի բնորոշմամբ, «ազնիվ մարդ է եղել և համառ ու հետևողական կերպով պայքարել է հանուն հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության: Նա խստորեն խարազանել է մուսավաթականների, առավել ևս՝ թուրք զավթիչների հայատյաց քաղաքականությունը» (Գ. Հովհաննիսյան..., էջ 91): «Ժողովուրդ» թերթը 1918 թ. հոկտեմբերի 30–ին գրել է, թե Ասկերանի կռվում սպանված «այդ հրաշալի մարդուն» քչերն են ճանաչում, նա միակն էր, որ «անողոք հարվածում էր» Ղարաբաղի թուրք բեգերին և նրանց քաղաքականությանը, «միակն էր թաթարական աշխարհում, որն ամեն կերպ աշխատում էր հայ–թուրքական հարաբերությունները լավացնել, աշխատելով մոտեցող վտանգի առաջն առնել ամեն միջոցով»: Եվ ապա՝ «նա սպանվել է թուրքի ձեռքով, և Շուշիում հայերը հոգեհանգիստ են կազմակերպել»:



38. Միայն Երևանի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի, Բաքվի, Կարսի նահանգներում և Բաթումի մարզում թուրք–մահմեդական հրոսակների մեղքով 387 գյուղերում ի սպառ ոչնչացվել կամ խիստ տուժել է 52.696 տնտեսություն (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.255, թ. 5:)
39. Е. А. Токаржевский, Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, ст.49.
40. Լեո, Անցյալից, էջ 425:
41. Սիմոն Վրացյան..., էջ 191–192:
42. Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 219:
43. Եղիշե Ա. քահ. Գեղամյանց, Տաճիկները Կովկասում և Բաքվի անկումը, Բաքու, 1919, էջ 32:
44. «Кавказское слово», 26 января 1919.
45. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.7, թ. 19:
46. Նույն տեղում, գ. 300, թ. 124:
47. Նույն տեղում:
48. Նույն տեղում, թ. 124–125:
49. Նույն տեղում, թ. 205:
50. Нагорный Карабах..., ст.19.
51. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.7, թ. 62: Հայերից պատվիրակության կազմում էին դաշնակցական Խորեն Համասփյուռը և էսէռ Գևորգ Մելիք–Շահնազարյանը: Կոմիսարների խորհրդի որոշմամբ Շուշիում պատվիրակությանը պահում են «արգելափակված վիճակում», որպեսզի չշփվի բնակչության հետ: Նուրի փաշայի հրամանով եկած պատվիրակությունը հայտնում է, որ «ինչպես Գանձակն է ընդունել Ադրբեջանի իշխանությունը, այնպես էլ Ղարաբաղն ընդունի»: Կոմիսարների խորհուրդը կտրուկ պատասխանում է, որ Արցախը Ադրբեջանի կառավարությանը ենթարկվելու կարիքը չունի և չի «ուզում ճանաչել Ադրբեջանի իշխանությունը»: Պատգամավորները «ձեռնունայն վերադառնում են Գանձակ առանց շփումներ ունենալու ժողովրդի հետ» (Ե. Իշխանյան..., էջ 164–165): Այդ առթիվ «Մշակը» 1918 թ. օգոստոսի 20–ին հաղորդել է, որ մի քանի օր բանտարկության մեջ մնալուց հետո Ելիզավետպոլ վերադարձած պատվիրակությունը զեկուցագիր է ներկայացրել Ադրբեջանի կառավարությանը, որից պարզվում է, որ Ղարաբաղը, չցանկանալով մտնել Ադրբեջանի պետական սահմանների մեջ, «իրեն հայտարարել է անկախ», ունի իր իշխանությունը, որի մեջ մտնում են նաև մուսուլմանները: Ադրբեջանի իշխանությունները փորձում են հարցը լուծել խաղաղ ճանապարհով, հակառակ դեպքում, «որոշել է դիմել թուրքական սվինի օգնությանը»:
52. «Մշակ», 18 փետրվարի 1919, «Աշխատավոր», 18 սեպտեմբերի 1918: Նուրի փաշայի այդ կոչում փաստորեն առաջին անգամ Ղարաբաղը հայտարարվում

է Ադրբեջանի մաս: Դեռևս օգոստոսի 29–ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտության ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը Վրաստանի Հանրապետությունում Ադրբեջանի դիվանագիտության ներկայացուցչին ուղարկած գրության մեջ մերժել է Ղարաբաղը Ադրբեջանի մաս ճանաչելու Ադրբեջանի իշխանությունների միտումը (Нагорный Карабах..., ст. 22-23):

53. Բերդաձորը, որն անվանվում էր Ղարաղշլաղ կամ Կարադարասի, ուներ ավելի քան 5000 բնակիչ: Որոշ աղբյուրներում նշված է, որ Բերդաձորի համայնքի մեջ մտնում էին 10 գյուղ, որոնք ունեին 1000–1200 ընտանիք՝ 6–7 հազար բնակիչներով (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.232:): Բերդաձորը գտնվում է Շուշիից Գորիս տանող ճանապարհին: Այն ուներ ռազմավարական մեծ նշանակություն թե Արցախի և թե Զանգեզուրի համար: Ղարաղշլաղը շատ կարևոր դեր է խաղացել մանավանդ հայ–թուրքական ընդհարումների ժամանակ՝ Արցախի և Զանգեզուրի միջև կապն ամրապնդելու գործում (Ե. Իշխանյան..., էջ 190):

54. Մատենադարան..., էջ 97:

55. Նույն տեղում, էջ 98:

56. Շուշիի գնդի տեղափոխման և նրա ձախողման հարցի շուրջ հակասական բացատրություններ են տալիս ժամանակակիցներից Զարեհ Մելիք–Շահնազարովը, Հարություն Թումյանը, Եղիշե Իշխանյանը, Հովակ Ստեփանյանը և ուրիշներ: Եղիշե Իշխանյանը գրում է, որ գնդի տեղափոխման գործը դյուրացնելու համար Ալեքսան դայու գլխավորությամբ 450 հոգիանոց ջոկատ է կազմվել, որը պետք է ուղարկվեր Հաջի Սամլուի կողմերը, սակայն Ղարաբաղի կառավարությունը արգելել է, որը կոպիտ սխալ էր (Ե. Իշխանյան..., էջ 191–192):

57. «Հայրենիք», 1933, դ 11, էջ 87: Մարդի Այվազյանը ապագա սավառնորդ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հարազատ քեռին էր:

58. Мелик-Шахназаров Зарэ, Записки Карабахского солдата (воспоминания участники событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе), М. 1995, ст.22 (այսուհետև՝ Записки...).

59. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ. 125:

60. Նույն տեղում, թ. 205:

61. Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 90 (այսուհետև՝ Ալ. Խատիսյան...):

62. Հ. Ավետիսյան..., էջ 317:

63. Բ. Իշխանյան, Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 187:

64. «Զանգ» (Երևան), 5 հոկտեմբերի 1918: Նուրի փաշան փորձում էր խուսափել պատասխանատվությունից՝ հայտարարելով, թե տաճիկները չեն մասնակցել կոտորածներին: Նրան նույնիսկ պաշտպանում էր Վրաստանի «Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթը (1918, դ 50):



65. «Աշխատավոր», 20, 25, 26 սեպտեմբերի: Բաքվի Հայոց ազգային խորհրդի պատվավոր նախագահ եպիսկոպոս Բագրատ Բակինսկին 1918 թ. նոյեմբերի 10–23–ին Բաքվում գտնվող դաշնակից ուժերի գլխավոր հրամանատար գեներալ–մայոր Վ.Մ. Թոմսոնին ուղղած նամակում պատմում է թուրքերի կողմից Բաքվի հայության նկատմամբ իրագործված բարբարոսությունների մասին: Չնայած քաղաքի հայ հոգևորականությունը բնակչությանը փրկելու համար որոշել էր խաղաղությամբ դիմավորել քաղաք ներխուժողներին, սակայն «կիրակի, կեսօրին քաղաք ներխուժած կազմակերպված դահիճներն ու ռազմական զորամասերը սկսեցին մասսայական կոտորածներ ու թալան, որը շարունակվեց երեք օր», նույնիսկ Բալախանիի հիվանդանոցում գտնվող բոլոր հայ հիվանդներին, ծառայողներին և բժիշկներին կոտորեցին (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.23, 1–ին մաս, թ. 25):

66. «Кавказское слово», 29 сентября 1918.

67. Ալ. Խատիսյան..., էջ 109–110:

68. «Кавказское слово», 29 сентября 1918.

69. Ս. Վրացյան..., էջ 328: Ջամիլ Ջահիդ բեյը ազգությամբ չերքեզ էր, Կովկասյան մուսուլմանական առաջին դիվիզիայի հրամանատարը:

70. «Մշակ», 23 փետրվարի 1919, Ե. Իշխանյան..., էջ 194:

71. Բերդաձորցի 5000 գաղթականներից 1500–ը մահանում են սովից ու զանազան հիվանդություններից (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.94):

72. Ե. Իշխանյան..., էջ 197:

73. Համագումարին մասնակցել են Ղարաբաղի 22 գյուղական համայնքներից 66 հոգի, քաղաքից՝ 10, գաղթական տաճկահայերից՝ 3, կուսակցություններից երկուական հոգի՝ 10: Համագումարին մասնակցել են նաև կառավարության 9 անդամները, ընդհանուր թիվը՝101: Համագումարի նախագահ է ընտրվել Գրիգոր Ղարագյոզյանը (դաշն.), փոխնախագահներ՝ Ս. Վարդապետյանը (ս.դ. մենշևիկ), Ասատուր Ավետիսյանը (դաշն.), քարտուղարներ՝ Թեոդորոս Տեր–Հովհաննիսյանը (մենշ.) և Արշակ Ասատուրյանը (դաշն.), (նույն տեղում, էջ 197 և 200):

74. «Հուսաբեր», 12 հունվարի 1929, «Մշակ», 22 հոկտեմբերի 1918, ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1., գ.30, թ.28, ն.տ., ֆ.314, ց.1, գ.34, թ.66–67, Ե. Իշխանյան..., էջ 200–201:

75. Ե. Իշխանյան..., էջ 203–204: Չնայած կառավարության անունը փոխվեց, սակայն ազգային խորհրդի փոխարեն շարունակվում էր անվանվել կառավարություն և այդ անունով էլ գրվում էին արձանագրությունները: Եղիշե Իշխանյանը նաև նշում է. «Մեր կառավարութիւնը բառի իսկական առումով կառավարութիւն չէր իր ստորաբաժանումներով, բայց և այնպէս աշխատանքի բաժանումը կատարւում է ըստ տեսակների» (նույն տեղում):

76. «Հուսաբեր», 12 հունվարի 1929, «Մշակ», 22 հոկտեմբերի 1918, ՀՀ ՊԿՊԱ,

ֆ.221, ց.1, թ.28, ֆ.314, ց.1, գ.34, թ.66–67, Ե. Իշխանյան..., էջ 204–205:

77. Մատենադարան..., էջ131:

78. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ.27, «Հուսաբեր», 9 հունվարի 1929:

79. Ե. Իշխանյան..., էջ 206: Սեպտեմբերի 15–ի երեկոյան, երբ իմանում են, որ բանագնացներից երեք հոգի պահվել են Աղդամում, Մարիամ Ղուկասյանի անվան դպրոցի ընդարձակ բակում հավաքվում են մոտ 2000 հոգի, որոնց հետ և պատանդների հարազատները: Ելույթ ունեցողները միանշանակ պահանջում են հնարավորին բոլոր միջոցները գործադրել պատանդներին ազատելու համար:

80. Մատենադարան..., էջ 125:

81. Ե. Իշխանյան..., էջ 209:

82. Ղարաբաղի հայության երրորդ արտակարգ համագումարի նախագահ է ընտրվում Մուշեղ Զաքարյանը, փոխնախագահներ՝ Ասատուր Ավետիսյանը և Գրիգոր Ղարագյոզյանը, քարտուղարներ՝ Թեոդորոս Տեր–Հովհաննիսյանը և Արշակ Առուստամյանը:

83. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.43, թ.94:

84. Ե. Իշխանյան..., էջ 211:

85. «Հուսաբեր», 9 հունվարի 1929:

86. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.94, ֆ.221, ց.1, գ.30, թ.27. ֆ.314, ց.1. գ.34, թ.68–69, Մատենադարան..., էջ 139, Ե. Իշխանյան..., էջ 211–214 և այլն:

87. Մատենադարան..., էջ 130:

88. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.65, ֆ. 200, ց.1, գ.7, թ.62, «Հայրենիք», 1933, դ. 11, էջ 86 և այլն: Այդ երկրորդ պատվիրակության կազմում էին Լևոն վարդապետ Փսերյանը և Սարգիս (Սերգեյ) Տեր–Իսրայելյանը (սոց. հեղափոխ.): Եղիշե Իշխանյանը գրում է, թե համագումարի օրերին, սեպտեմբերի 21–ին, Նուրի փաշան գալիս է Աղդամ և նրա հրամանով Բանտից ազատում են պատանդներին (Ե. Իշխանյան..., էջ 227):

89. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.6, թ.2:

90. «Հուսաբեր», 9 հունվարի 1929:

91. Նույն տեղում, 5 հունվարի:

92. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.276, ց.1, գ.73, թ.278:

93. Նույն տեղում, ֆ.314, ց.1, գ.34, թ.69: Համագումարի ընդունած որոշման վերաբերյալ կան հակասական տվյալներ: Եղիշե Իշխանյանը ոչ հստակ նշում է, որ համագումարը պաշտպանել է կառավարության վերոհիշյալ տեսակետը (Ե. Իշխանյան..., էջ 228): Արամ Միքայելյանը բերում է որոշման հետևյալ ձևակերպումը. 1. ժամանակավոր ընդունել Ադրբեջանի հանրապետությանը, մինչև Ղարաբաղի հարցի լուծումը Կոստանդնուպոլսի կոնֆերանսում. 2. Զգտել, ինչ էլ որ լինի, օրակարգից հանել զինաթափման հարցը և թուրքական հրամանատարությանը համոզել բանակը չմտցնել քաղաք (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ.27): Դավիթ Անանունը բերում է որոշման հետևյալ ձևակերպումը. 1. Ի նկատի ունենալով ուժերի փոխհարաբերությունը և Բաթումի կոնֆերանսի որոշումները, որոնց տակ ստորագրել են Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչները, որ Ղարաբաղի հարցը վերջնականապես պիտի որոշվի խաղաղարար վեհաժողովում՝ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: 2. Զինաթափության հարցը չի ընդունվում, մինչև որ չստեղծվեն որոշ իրավական նորմեր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու գույքը ապահովելու համար («Մշակ», 27 փետրվարի 1919): Սիմոն Վրացյանը գրել է. «Համադարաբաղցիական երրորդ համագումարը... որոշեց չդիմադրել և ընդունել Ադրբեջանի իշխանությունը» (Ս. Վրացյան..., էջ 328–329): Մեկ ուրիշ ժամանակակից և դեպքերին ականատես Հովհաննես Առաքելյանը գրում է, թե համագումարը խնդրել է թուրքական հրամանատարությանը, որպեսզի պայմաններ ստեղծվի պատվիրակություն մեկնի Բաքու և բանակցություններ սկսի Ադրբեջանի կառավարության հետ, սակայն թուրքական հրամանատարությունը չի ընդունել այդ առաջարկությունը (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.11):

94. Ե. Իշխանյան..., էջ 228:

95. Նույն տեղում, 228–229, «Մշակ», 21 փետրվարի 1919:

96. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.276, ց.1, գ.78, թ.278:

97. «Азербайджан», 23 октября 1918 Г..

98. «Кавказское слово», 26 января 1919.

99. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.22:

100. Նույն տեղում, գ. 49, թ. 30–31:

101. Ե. Իշխանյան..., էջ 239: Մի շարք աղբյուրներում գրված է, թե համագումարի պատասխանը ժամանակին չհասավ թուրքական հրամանատարությանը, որովհետև համագումարի կողմից ուղարկված պատվիրակությունը ձերբակալվել է Ասկերանը պաշտպանող գյուղացիական ջոկատների կողմից: Նաև ասված է, որ Ղարաբաղի գավառների բնակչությունը համաձայն չէր համագումարի որոշման հետ և դեմ էր թուրքերի հետ բոլոր տեսակի բանակցություններին, ուստի թույլ չեն տալիս պատվիրակությունը մեկնի Աղդամ: Թուրքական հրամանատարությունը, սպասելով նման առիթի, բանակը մտցնում է Ղարաբաղ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ..221, ց.1, գ.37, թ.61, գ.309, թ.125 և այլն): Դա համոզիչ չէ, որովհետև ինչպես տեսանք. թուրքերը հարձակումը սկսել էին մինչև համագումարը որոշում կընդուներ և պատվիրակություն կուղարկեր Աղդամ:

102. Ե.Գ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914–1918 թթ., Երևան, 1964, էջ 463 (այսուհետև Ե. Սարգսյան...):

103. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.49, թ.47: Որոշ աղբյուրներում նշված է, թե թուրքե-

րը Շուշի են մտել սեպտեմբերի 25-ին։ Հստակություն չկա նաև Շուշի մտած թուրքերի զինվորների թվի վերաբերյալ։ Եղիշե Իշխանյանը գրում է, թե Ջամիլ Ջահիդ բեյը Գալիպուլյան 6000-անոց դիվիզիայի գլուխն անցած, 9 դաշտային թնդանոթներով, 66 գնդացիրներով և 3 զրահապատ ինքնաշարժերով Շուշի է մտել սեպտեմբերի 26-ին (Ե. Իշխանյան..., էջ 239)։ Սիմոն Վրացյանը ևս գրում է, որ թուրքերը Շուշի են մտել սեպտեմբերի 26-ին (Ս. Վրացյան..., էջ 329)։ Արամ Միքայելյանը նշում է, որ քաղաք են մտել 3–4 հազար մարդ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.30, թ.27)։ «Кавказское слово» թերթի 1918 թ. նոյեմբերի 13-ի համարում գրված է, թե քաղաք են մտել ընդամենը 1000 ասկյար. «Նոր հորիզոնի» հաղորդման համաձայն, թուրքերը միայն Շուշիում կենտրոնացրել էին «1500–1700 ձիավորներ և հետևակ զորքեր՝ մի քանի թնդանոթներով և տասնյակ գնդացիրներով» («Նոր հորիզոն», 12 դեկտեմբերի 1918)։ Վրաստանում Հայաստանի լրատվական բյուրոյի հաղորդման համաձայն Շուշի են մտել մինչև 5000 թուրք և թաթար (Нагорный Карабах..., ст.47.)։

104. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1. գ.30, թ.27, Ե. Իշխանյան..., էջ 239–240։

105. Երկու օրվա ընթացքում Շուշիում հավաքվում են հարյուրից ավելին հրացան և այլ զենքեր։ Քաղաքի Թոփխանա կոչված հրապարակում մի խումբ հայ երիտասարդներ հարձակվում են զենքը տեղափոխող սայլի վրա, խլում զենքը և Քարին տակ տանող ճանապարհով հեռանում Վարանդա («Հուսաբեր», 15 հունվարի 1929)։

106. Нагорный Карабах..., ст. 47։ Եղիշե Իշխանյանը Արսեն Բակունցի փոխարեն նշում է Արմենակ Ղարագյոզյանին (Ե. Իշխանյան..., էջ 241)։

107. «Աշխատավոր», 22 հոկտեմբերի 1918, ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.135, ֆ.221, ց.1, գ.30, թ.28, «Кавказское слово», 22 октября 1918.։

108. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.22։

109. Նույն տեղում, ֆ. 221, ց.1, գ.30, թ.28։

110. Ս. Վրացյան..., էջ 329։

111. «Հայրենիք», 1933, դ 11, էջ 90։

112. Ե. Իշխանյան..., էջ 242։

113. Ե. Իշխանյան..., էջ 243։ Ձերբակալվածների վերաբերյալ աղբյուրներում տարբեր թվեր են նշված։ Օրինակ. Հ. Թումյանը նշում է 70 հոգի (Մատենադարան..., էջ 156)։

114. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.22–23։

115. Նույն տեղում։ Այդ օրերին մուսավաթական «Азербайджан» թերթը (22 հոկտեմբերի) հրապարակում է մի կեղծիք. թե իբր «հայ բնակչությունը քաղաքում և գյուղերում մեր բանակին դիմավորում է աղ ու հացով, ընդունում են ադրբեջանական հպատակություն և պատրաստ են կատարելու կառավարական իշխանությունների բոլոր կարգադրությունները, զենքը հանձնում են կամավոր»։



116. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.85, թ.22։

117. Նույն տեղում ֆ.200, ց.1, գ.309, թ.125։

118. «Հայրենիք», 1935, դ 7, էջ 124։

119. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.5, նաև՝ Արցախը կանչում էր Անդրանիկին, Երևան, 1995, էջ 20–21։

120. Արտեմ Լալայանը ծնվել է 1878 թ., Արցախի Դիզակի Հադրութ գյուղում։ Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում, հետո աշխատել է Բաքվի նավթահանքերում։ 1909 թ. Իրանում բռնկված հեղափոխության ժամանակ քաջաբար կռվել է Եփրեմ Խանի ջոկատում։ Առաջին աշխարհամարտի տարիներին կռվել է Քեռու ջոկատում։ Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել է հայրենի Դիզակ և 1918 թ. աշնանից Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարն էր։ Կյանքի վերջին տարիներին ապրել է Թիֆլիսում։

121. «Մշակ», 16 նոյեմբերի 1918։

122. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.49, թ.47։

123. Նույն տեղում։

124. Ե. Իշխանյան..., էջ 265։

125. «Մշակ», 18 փետրվարի 1919։

126. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.12։

127. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.49, թ.49, նաև՝ «Մշակ», 18 փետրվարի 1919։

128. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.12։

129. «Արցախ» (Ստեփանակերտ), 1990, դ 1, էջ 31։

130. Աղբյուրներում շփոթված են պարետների անունները։ Օրինակ. Քյազիմ բեյը մեկ նշվում է Աղդամի պարետ, մեկ՝ Կարյագինոյի։

131. Այդ մասին 1987 թ. ապրիլի 28-ին Ստեփանակերտում ինձ պատմել է 1918 թ. Արցախի հերոսամարտին քաջատեղյակ, մասնակից, ծննդով Հաղորտի գյուղացի Գրիգոր Գրիգորյանը։ Ասենք նաև, որ Սամնայի հերոսամարտի մասին Եղիշե Իշխանյանի (էջ 266–268) մի շարք փաստարկներ չեն համապատասխանում արխիվային և ժամանակի լրագրային բազմաթիվ հաղորդումներին։ Ձենք կարող համաձայնվել նաև Վիկտոր Մուրադյանի Отец и отчим (Ереван, 1998). գրքում տրված որոշ մեկնաբանությունների հետ։

132. «Արև», 21 փետրվարի 1919։

133. Մատենադարան..., էջ 159։

134. «Հուսաբեր», 18 հունվարի 1929։ Աբրահամ Կիսիբեկյանը գրում է, թե թուրքերը Սամնայից պետք է գնային Ամարասի ուղղությամբ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.74)։

135. «Արցախ», 1990, դ 1, էջ 34։ Արտեմ Լալայանը նշում է, որ «Գրած եմ եղել

Վարանդայի հրամանատար Սոկրատ Մելիք–Շահնազարյանին, որ օգնի Ասլանիկին: Բայց մերժել է: Հրաժարվել է օգնելուց և անցել ինձ մոտ բողոքելու, թե ինչու եմ այդպիսի հանդուգն քայլ անում» (նույն տեղում, էջ 32): Եղիշե Իշխանյանը գրել է, թե «Մսմնայի կռիվը ղեկավարել է «Քարինտակ գյուղացի տեղակալ, Արևմտեան (գերմանական) ճակատում կրակների միջից անցած և բազում անգամներ մահուան հետ խաղացած Յարութիւն (Արտեմ) Պետրոսեանը, որ իրականին մարտական ուժերի ղեկավարն էր Վարանդայի, իսկ Սոկրատը՝ անուանական հրամանատարը և Մսմնայի յաղթանակի թողած տպաւորութիւնից օգտուողը, յեղինակութիւն ձեռք բերողը» (Ե. Իշխանյան..., էջ 289): Եղիշե Իշխանյանի այդ հաղորդումը որոշ ճշտումների կարիք ունի:

136. «Արևը» գրել է, թե ճակատամարտը տեղի է ունեցել հոկտեմբերի 18–ի գիշերը, որը ստույգ չէ («Արև», 21 փետրվարի 1919):
137. ԼՂՀ Մարտունու շրջանի Քարահունջ գյուղի գերեզմանոցում միասին թաղված եղբայրների շիրմաքարի վրա փորագրված է. «Մենք մեր ազգի ազատագրությանը զոհվեցինք»:
138. Մատենադարան..., էջ 160:
139. Աբրահամ Կիսիբեկյանը գրում է, թե ճակատամարտի հաջորդ օրը «կռվի վայրում գտնում են 95 դիակ, մի վիրավոր... Հայերից սպանվել էին 5 հոգի և վիրավորվել յոթը» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.75): Եղիշե Իշխանյանը թուրքերի զոհերի թիվը նշում է 231 («Հայրենիք», 1933, դ 11, էջ 92): Արխիվային փաստաթղթերից մեկում այդ թիվը ցույց է տրված 300 (ն.տ., ֆ. 199, ց.1, գ.40, թ.17): Լեոն գրում է, թե 400 հոգուց բաղկացած զորամասի մարտիկները «գրեթե բոլորովին» ոչնչանում են (Լեո, Սահմանավեճեր..., էջ 171): Քիրս Սարոտը գրում է. «Տաճիկները ջախջախվում են... Նրանք կորցրեցին 400–ից ավելի կռվողներ... 30 ասկյարներ Փոլատովի գլխավորությամբ փրկվում են («Յուսաբեր», 18 հունվարի 1929): Արխիվային մեկ այլ փաստաթղթում գրված է, որ ջոկատի 400 հոգուց փրկվել են ընդամենը 60 հոգի (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.85, թ.23): Հրաչիկ Սիմոնյանը թուրք զոհվածների թիվը ցույց է տալիս 86 (Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 427):
140. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.221, ց.1, գ.85, թ.23:
141. Նույն տեղում, ֆ.370, ց.1, գ.38, թ.11:
142. Նույն տեղում, ֆ.221, ց.1, գ.85, թ.23:
143. Նույն տեղում, գ. 30, թ.28:
144. «Кавказское слово», 12/29 декабря 1918.
145. Գ. Հովհաննիսյան..., էջ 95:
146. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.1:
147. «Վէմ», 1936, դ 3, էջ 78:
148. ՀՀ ՊԿՊԱ. ֆ.370, ց.1, գ.35, թ.1:



149. Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել այդ նամակը: Արցախցիների Անդրանիկին գրած նամակները տե՛ս մեր կողմից հրատարակած «Արցախը կանչում էր Անդրանիկին» փաստաթղթերի ժողովածում:
150. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.30, թ.2–3:
151. Նույն տեղում, գ.38, թ.3:
152. Նույն տեղում, թ.4:
153. Նույն տեղում, թ.5–6:
154. Նույն տեղում, թ. 33–34:
155. Նույն տեղում, գ.33, թ.33–38:
156. Հրաչիկ Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, էջ 389:
157. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.33, թ.43:
158. Նույն տեղում, թ.7–8:
159. Նույն տեղում, գ.35, թ.17:
160. Նույն տեղում, գ.33, թ.35:
161. Սոկրատբեկի այդ, ինչպես և ուրիշ որոշ նամակներ ևս մեզ չհաջողվեց գտնել:
162. Նույն տեղում, գ.35, թ.17: Այստեղ անհրաժեշտ է տալ հետևյալ բացատրությունը. Սոկրատբեկ Մելիք Շահնազարյանի մասին կարծիքները հակասական են և ընդհանուր եզրակացությունը խոսում է ոչ նրա օգտին: Ժամանակակիցներից Հարություն Թումյանը գրում է, թե Սոկրատբեկը «Անգլիացիների օրոք դարձավ նրանց լրտեսը և գործում էր ի վնաս Ղարաբաղի հայության շահերի» (Մատենադարան..., էջ 160): Եղիշե Իշխանյանը նշում է, թե Սոկրատբեկը «չէր համապատասխանում իր պաշտոնին» և չէր կարողանում վճռել. ո՞ւմ ընդունել, Անդրանիկի՞ն, թե՞ Թոմսոնին, և որ քաղաքագլուխ Գերասիմ Շահնազարյանը և Սոկրատբեկը «սնապարծ ու փառամոլ էին» («Հայրենիք», 1933, դ 12, էջ 111–121): Սոկրատբեկի մասին նույն կարծիքին էին նաև Քիրս Սարոտը, Արտեմ Լալայանը և ուրիշներ:
163. «Վէմ», 1936, դ 5, էջ 53:
164. Նույն տեղում, էջ 55–56:
165. Նույն տեղում, դ 4, էջ 65:
166. Այդ օրերին Անդրանիկը, ըստ երևույթին, Խաչենի և Ջրաբերդի զորահրամանատարների հետ կապը պահպանում էր Արտեմ Լալայանի և Սոկրատբեկի միջոցով: Դա եզրակացնում ենք Անդրանիկին Լալայանի գրած մի նամակից և Եղիշե Իշխանյանի մի հաղորդումից («Հայրենիք», 1933, դ 12, էջ 111): Իսկ թե ինչու Անդրանիկը կապ չուներ Ղարաբաղի զինվորական կոմիսար Հարություն Թումյանի և սպայակույտի պետ Արտաշես Վարդապետյանի հետ, այդ մասին արխիվներն ու ժամանակակիցները լռում են:

167. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.10:

168. Ե. Իշխանյան..., էջ 284–298:

169. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.11–12:

170. «Վէմ», 1936, դ 5, էջ 53:

171. Հ. Սիմոնյան..., էջ 445:

172. Նույն տեղում, էջ 447:

173. «Հայրենիք», 1929, դ 8, էջ128, «Ալիք», 22 մայիսի 1974 և այլն:

174. «Վէմ», 1936, դ 5, էջ 59, Հ. Սիմոնյան..., էջ 449:

175. «Վէմ», դ 3, 1936, էջ 60:

176. «Հայրենիք», 1929, դ 8, էջ 128:

177. Նույն տեղում, էջ 129:

178. Նույն տեղում, 1933, դ 12, էջ 116:

179. Ժեներալ Անդրանիկ. Հայկական առանձին հարուածող զորամասը, Պոստոն, 1921, էջ 152:

180. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.39, թ.2: Ժամանակակիցները պատմում են, որ երբ Բաքվից ստացված հեռագիրը ընթերցում են, Անդրանիկը զայրացած ասում է. «Այս բոլորը էն սրիկա Սոկրատեսկի պատճառով եղավ, թե չէ, ես վաղուց Շուշի կլինեի» («Հայրենիք», 1929, դ 8, էջ 130):

181. Նույն տեղում, գ.52, թ.2ա:

182. «Մշակ», 12 դեկտեմբերի 1918, նաև՝ Հ. Սիմոնյան..., էջ 455:

183. Հ. Սիմոնյան..., էջ 457:

184. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.52, թ.1:

185. Նույն տեղում, գ.51, թ.13: Նշված անունները տարբեր հեղինակներ տարբեր ձևով են գործածել՝ Գուլդսմիտ և Կասֆիլդ, Ագուստ և Գասֆելդ, Սկուեր և Կասֆելդ: Իսկ Եղիշե Իշխանյանի մոտ՝ Գոլդսմիտ և Կասֆելդ, ըստ որում, Կասֆելդը ֆրանսիացի է, իսկ Գոլդսմիտը՝ անգլիացի (Ե. Իշխանյան..., էջ 298):

186. Որոշ աղբյուրներում գրված է, թե թարգմանիչը եղել է Մազմազակի Ավդուլանու գյուղացի դաչաղ Շիրինը («Ալիք», 22 մայիսի 1974, Հ. Սիմոնյան..., էջ 459): Հիմա տեսնենք, ինչ է գրում Եղիշե Իշխանյանը. Շուշիի քաղաքական հոսանքներն իմանալով, որ Անդրանիկի մոտ է մեկնում Բաքվից ժամանած Թոմսոնի պատվիրակությունը, որոշում են որպես թարգմանիչ և հայերի կողմից ներկայացուցիչ ուղարկել նաև «Դոքտ. Արտաշէս Գյանջեցեանը... Ժընեւի համալսարանից վկայուած, գիտէ ֆրանսերէն և գերմաներէն»: Այդ մասին տեղեկացվում է քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանին, որը դիմում է զինվորականներին ու ստանում նրանց համաձայնությունը (Ե. Իշխանյան..., էջ 298):

187. «Հայրենիք», 1935, դ 7, էջ 129: Այդ նամակը նույնպես չհաջողվեց գտնել:



188. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.39, թ.2: Թոմսոնի նամակը անթվակիր էր: Հրաչիկ Սիմոնյանը ենթադրում է, որ այդ նամակի տեքստը Բաքվից հեռագրով հաղորդվել էր Շուշի որպես ոչ թե հեռագիր, այլ՝ նամակ (Հ. Սիմոնյան..., էջ 459):

189. «Վէմ», թ.3, 1936, էջ 62:

190. «Հայրենիք», 1935, դ 7, էջ 127–129:

191. «Новое время», 23 января 1919, «Մշակ», 28 հունվարի 1919: Այդպես էլ Փարիզի հաշտության խորհրդաժողովում, որին նույնիսկ հրավիրված չէր Հայաստանի ներկայացուցիչը, մի ամբողջ տարի (1919 թ. հունվարի 17–ից սկսած) նիստեր ունեցավ, բայց ոչ մի անգամ չանդրադարձավ Հայկական հարցին: Նաև ավելացնենք, որ Թոմսոնի ուղարկած պատվիրակության հետ Շուշի են գնում Զանգեզուրի ազգային խորհրդի ներկայացուցիչներ Արշակ Շիրինյանը և Նիկոլայ Հովսեփյանը, այնտեղից էլ՝ Բաքու, իբր Զանգեզուրի հետ կապված որոշ հարցեր լուծելու: Անգլիական հրամանատարությունը նրանց տալիս է երկու միլիոն ռուբլի ու հետ ուղարկում, որից 200 հազարը տալիս են Ղարաբաղի իշխանություններին՝ գաղթական ղարաղշլաղցիներին բաժանելու համար (Ե. Իշխանյան..., էջ 301):

192. Հ. Սիմոնյան..., էջ 463:

193. «Հայրենիք», 1935, դ 7, էջ 129:

194. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.51, թ.13:

195. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.143, թ.31:

196. Նույն տեղում, գ.619բ, թ.44–48, նաև՝ Մատենադարան..., էջ 92:

197. Նույն տեղում, ֆ.370, ց.1, գ.38, թ.13:

198. Նույն տեղում, գ.51, թ.12:

199. Լեո, Անցյալից, էջ 426:

200. «Кавказское слово», 1 июля 1919.

201. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.39, թ.7:

202. Նույն տեղում, գ.33, թ.20-22:

203. Նույն տեղում, թ.23:

204. Նույն տեղում, թ.28:

205. Նույն տեղում, թ.24–25:

206. Նույն տեղում, գ.38, թ.26:

207. Նույն տեղում, գ.40, թ.15–17:

208. Նույն տեղում, գ.38, թ.29:

209. Նույն տեղում, գ.40, թ. 16–17:

210. Նույն տեղում, գ.38, թ.37:

211. Նույն տեղում, գ.40, թ.20–23:

212. Նույն տեղում, թ.18–19։

213. Նույն տեղում, գ.38, թ.37։

214. Ծ.Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ687։

215. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.76, թ.9–15։

216. «Кавказское слово», 26 июля 1919.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 370, ց.1, գ.40, թ.4, Մատենադարան..., 2–րդ մաս, էջ 11–13։
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.51, թ.11։
3. «Զանգ», 24 նոյեմբերի 1918։
4. Нагорный Карабах..., ст.49.
5. Նույն տեղում, էջ 50։
6. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.5։
7. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.49, թ.32–33։
8. Նույն տեղում, ֆ.370, ց.1, գ.38, թ.28։
9. Նույն տեղում, թ.29։
10. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.49, թ.51։
11. «Հայրենիք», 1923. դ 9, էջ 104–105։
12. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.49, թ.1–3։
13. Նույն տեղում, գ.38, թ.17։
14. Ի միջի այլոց, այստեղով պետք անցներ նաև Շուշիի գունդը։ Այդ երբը, որը երկու անգամ կղճատում էր ճանապարհը, մշակվել էր Շուշիում։ Սակայն գնդապետ Միքայել Մելիք–Շահնազարյանը հրաժարվել էր։ Իսկ դա ճակատագրական հանդիսացավ գնդի, ցուցե նաև Ղարաբաղի համար։
15. «Հայրենիք», 1935, դ 7, էջ 123–124։
16. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.5–6, գ.43, թ.45։
17. Նույն տեղում։
18. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.243, թ.1։
19. Նույն տեղում, թ.5–6։
20. Տոնավարգը գտնվում է Շուշիի դեմ–դիմաց, 10 վերստ հեռավորության վրա։
21. «Հայրենիք», 1923, դ 9, էջ 104։
22. Հայրապետ Մուսայելյանը, որը բնիկ Դաշբուլաղ գյուղացի էր, բայց վերաբնակեցված Խանքենդ ավանում, 1903 թ. Շուշիի թեմականն ավարտելուց հետո, ուսումը շարունակել է Լայպցիգի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետում։ 1907 թ. ուսումն ավարտելուց հետո. վերադառնում է հայրենիք։ Սկզբում Շուշիի ռուսաց դպրոցում դասավանդում էր հայոց և ընդհանուր պատմություն։ Հետո ստանձնում է Մարիամ–Ղուկասյան օրիորդաց դպրոցի տեսչի պաշտոնը։ Նա ՀՅԴ ղարաբաղյան կոմիտեի նախագահն էր։ Խմբագրել է «Ապառաժ» թերթը։
23. Ե. Իշխանյան..., էջ 302։
24. Վարանդայի ուժերի հրամանատար Սոկրատբեկը ձգտում էր իր ձեռքը վերցնել խորհրդի ղեկավարությունը, սակայն վերջինիս անդամները դեմ էին՝ նախ և առաջ Անդրանիկին խաբելու համար։ Բացի այդ, խիստ հակասություն կար Հայրապետ Մուսայելյանի և քաղաքագլուխ Գերասիմ աղայի միջև։ Այդ պատճառով էլ քաղաքագլուխը հրաժարվում է մտնել ժամանակավոր ազգային խորհրդի կազմի մեջ։ Հետո Ղարաբաղի հայության չորրորդ համագումարն անվստահություն է հայտնում քաղաքագլխին։ Եղիշե Իշխանյանը Գերասիմ Մելիք–Շահնազարյանի մասին հայտնել է հետևյալ կարծիքը. «Ճիշտ է, մաքուր մարդ էր, նիւթամոլ ու կաշառակեր չէր ուրիշ քաղաքագլուխների պէս, սակայն ջղագար, քմահաճ ու կամակոր, հիւանդագին անձնասէր, դիտողութիւն չհանդուրժող մէկն էր» (Ե. Իշխանյան..., էջ 306)։
Ղարաբաղի Հայոց ժամանակավոր ազգային խորհրդի կազմում շրջաններից ընտրվել էին. Ջրաբերդից՝ Մարկոսբեկ Տեր–Աստվածատրյանը, Խաչենից՝ Եղիշե Իշխանյանը, Վարանդայից՝ Արտաշես Տեր–Միքայելյանը, Դիզակից՝ Ասլան Շահնազարյանը («Հայրենիք», 1933, դ 12, էջ 117, Ե. Իշխանյան..., էջ 303)։
25. «Հայրենիք», 1929, դ 8, էջ 133։
26. Այդ անունը հեղինակների մոտ տարբեր կերպ է տառադարձված՝ Գիբոն, Գիբբոն, Գիբբօն, Գիբոնս, Կիպոն, Կիպըն, Կիպոնզ և այլն։
27. Տես՝ Հ. Սիմոնյան..., էջ 468։
28. Ե. Իշխանյան..., էջ 302–303։ Արցախի թեմի առաջնորդ, եպիսկոպոս Վահան Տեր–Գրիգորյանը այդ օրերին մեծ աշխատանք է կատարում զորահրամանատարներին, քաղաքական գործիչներին և մյուս ուժերին միավորելու և մի բռունցք դարձնելու համար։ Եղիշե Իշխանյանը գրել է, թե երբ ազգային խորհրդում անհամաձայնություն էր, սրբազանը «Խոր ցաւ յայտնեց, որ նման պատմական մի ժամանակաշրջանում լինում են եսակենտրոն մարդիկ, որոնք չեն կարողանում դուրս գալ իրենց կեղևից, լինել լայնախոհ, համբերատար և իրարու հանդուրժող։ Հենց սրբազանը իր վրա վերցրեց

կազմել ժամանակավոր ազգային խորհուրդ» (Նույն տեղում, էջ 307)։
29. Հ. Սիմոնյան..., էջ 469։
30. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.40, թ.3։
31. Նույն տեղում, թ.4։
32. Ե. Իշխանյան..., էջ 304–313։
33. «Новое время», 22 января 1919.
34. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.223, ց.1, գ.75, թ.5։
35. Նույն տեղում, գ.86, թ46։
36. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.425, թ.1։ Այս, ինչպես և ուրիշ մի շարք գործեր, որոնք մտնում էին նշված ֆոնդի մեջ, փոխանցվել են ՀՀ ՊԿՊԱ, որոնք ներկայումս գտնվում են վերամշակման ընթացքում։ Այդ պատճառով էլ ցույց ենք տալիս նախկին տեղը և արխիվային միավորը։
37. «Кавказское слово», 1 июлья 1919.
38. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.32, նաև՝ «Մշակ», 10 մարտի 1919։
39. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.100, 101։
40. Նույն տեղում, գ.309, թ.85։
41. Նույն տեղում, գ. 244, թ.4։
42. Ե. Իշխանյան..., էջ 328։
43. Նույն տեղում, էջ 329։
44. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.24–25։
45. Նույն տեղում, գ.40, թ.11։
46. Ե. Իշխանյան..., էջ 336։
47. Այս անունը տարբեր հեղինակների մոտ տարբեր ձևով է տառադարձված՝ Մոնկ Մէսըն. Մոկմեզեն, Մոնկ Մեսսեն, Մոնկ Մեսսըն, Մոնկ Մեզոն, Մակ–Մեսին, Մոնկ Միզոն, Մաք–Մոզըն, Մոնկ–Մազոն, Մոնկ Մեսսոն և այլն։ Մոնկ Մեսսենը ազգությամբ իռլանդացի էր։ Եղիշե Իշխանյանը նշում է, որ մի անգամ նա իրեն ասել է, թե ինքը չի սիրում թուրքերին, որովհետև նրանք «վայրենի, գազանաբարո, արյունռուշտ մարդիկ են»։ Ապա նշել է, որ ինքը համակրում և հարգում է «հայ ժողովրդին, որովհետև քրիստոնյա է, խաղաղասեր և աշխատող»։ Նա խորհուրդ է տալիս «զգույշ լինել, դեմոնստրատիվ քայլեր» չանել և ղարաբաղցիների բոլոր պահանջները ներկայացնել Հայաստանի կառավարության միջոցով (Ե. Իշխանյան..., էջ 361–362)։ Իշխանյանի բնորոշմամբ՝ այդ «ջերմ հայասերը» իբր «Ադրբէջանի պահանջը Ղարաբաղի վերաբերեալ համարում էր անիրաւ և անարդար» (էջ 446)։
48. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.448, թ.25։
49. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.208, ց.1, գ.41, թ.23։
50. Նույն տեղում, ֆ. 370, ց.1, գ.40, թ. 18։ Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի մասին ավելի հանգամանորեն տես՝ Ե. Իշխանյան..., էջ 340–354։
51. «Արև», 1919, դ 17։
52. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.40, թ.18–19։
53. «Հայրենիք», 1933, դ 11, էջ 134։
54. Սալմանբեկ Ալիբեկովը ծնվել է Ջիվանշիրի գավառի Նարիմանբեկլի գյուղում։ Ավարտելով Թիֆլիսի ուսուցչական ճեմարանը, որպես ուսուցիչ աշխատել է իրենց գյուղում, ապա՝ Թարթառում։ Նա թուրք-թաթարների շրջանում հայտնի էր որպես սոցիալիստ։ Թուրք խաներն ու բեկերը ատում էին նրան։ Հենց նրանց պահանջով ձերբակալվում է և նետվում Շուշիի բանտը՝ «իբր խռովարար, գյուղացիությանը բեկերի դեմ լարող, գրգռող»։ Սալմանբեկը որևէ կուսակցության անդամ չէր, ուզում էր անկախ լինել։ Համախսլամությունը համարում էր հետադիմական շարժում և խիստ դեմ էր թուրք հոգևորականությանը։ Ուներ ռուսական կողմնորոշում։ 1918 թ. նոյեմբերի վերջին հայերը նրան փախցնում են Շուշիի բանտից և թաքցնում Գյավուր արխում, ապա տեղափոխում են Շուշիի հայկական թաղամաս, ուր բերում են նաև նրա ընտանիքը։ Սալմանբեկը մերկացնող հոդվածներով հանդես է գալիս Բաքվում Ավետիս Օհանջանյանի խմբագրած «Պերիոդ» թերթում, որն ավելի է կատաղեցնում մուսավաթական իշխանություններին։ Կապիտան Սերրայտը 1919 թ, հունվարի 31–ին Շուշիի հայկական իշխանություններից պահանջում է Սալմանբեկին հանձնել մուսավաթական Ադրբեջանի իշխանություններին, սակայն ստանում է մերժում։
55. Ե. Իշխանյան..., էջ 343–344։
56. Նույն տեղում, էջ 353–354, նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ.243, թ.31։ Համագումարից մի քանի օր անց, Մելիքսեթ Եսայանն ու Տիգրան Տեր–Գևորգյանը հրավիրվում են ազգային խորհուրդ, որպես անդամներ։
57. «Հայրենիք», 1933, դ 11, էջ 86։
58. Սպայախմբի անդամներն էին. Հովակ Ստեփանյանը, Նիկոլայ Իսախանյանը, Արամ Միքայելյանը, Արտաշես Վարդապետյանը և ուրիշներ։
59. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.370, ց.1, գ.38, թ.18։
60. Ե. Իշխանյան..., էջ 355։
61. Нагорный Карабах..., рв. 79-80.
62. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.201, ց.1, գ.41, թ.23։
63. Նույն տեղում, թ.11։
64. Նույն տեղում, թ.13։
65. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.429, թ.2–4։
66. Նույն տեղում, գ. 422, թ.8–9։
67. Նույն տեղում, գ. 441, թ.3։

68. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.252, ց.1, գ.1, թ.4–5:
69. Նույն տեղում, ֆ.201, ց.1, գ.41, թ.12:
70. Նույն տեղում:
71. Նույն տեղում, ֆ.223, ց.1, գ.75, թ.77:
72. Նույն տեղում, թ.78–79, նաև՝ ֆ.200, ց.1, գ.271, թ.10–11:
73. «Наше время», 5 апреля 1919.
74. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.235, թ.12–13:
75. Նույն տեղում, գ. 244, թ.2:
76. Նույն տեղում, թ.3:
77. Նույն տեղում, գ.243, թ.63–64:
78. Նույն տեղում, թ.38:
79. Նույն տեղում, գ.231, թ.51, ֆ.276, ց.1, գ.101, թ.14–15, «Զանգ», 4 ապրիլի 1919:
80. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.32, թ.162:
81. Ա. Խատիսյան..., էջ 167–182:
82. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.43, թ.37:
83. Նույն տեղում, թ. 47:
84. Նույն տեղում, թ.59:
85. Նույն տեղում, թ.67:
86. Ե. Իշխանյան..., էջ 365:
87. Նույն տեղում, էջ 373:
88. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.15, նաև՝ «Աշխատավոր», 16 մարտի 1919:
89. Որոշ աղբյուրներում նշված է, թե այդ նոր պատվիրակության կազմում մտնում էին Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթրյանը, Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, ազգային խորհրդի անդամ Արտաշես Տեր–Միքայելյանը, Ավետարանոց գյուղի գյուղական հասարակության կոմիսար Արամ Թումասյանը, ազգային խորհրդի փախստականների բաժնի ղեկավար Կ.Բ. Մինասբեկյանը, երդվյալ հավատարմատար Մ.Մ. Վարդապետյանը և մանկավարժներ Ս. Ղուկասյանն ու Ա. Տեր–Միքայելյանը, մինչդեռ Եղիշե Իշխանյանը նշում է, որ խորհրդակցական ժողովը հարմար է գտել Բաքու ուղարկել ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանին, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք–Շահնազարյանին, փաստաբան Գրիգոր Մինասբեկյանին և թեմական դպրոցի ուսուցիչ Անուշավան Տեր–Միքայելյանին (Ե. Իշխանյան..., էջ 375): Ըստ էության, Բաքու էին գնացել Վահան եպիսկոպոսը, Հրանտ Բահաթրյանը, Գերասիմ Մելիք–Շահնազարյանը, Գրիգոր Մինասբեկյանը, Արտաշես Տեր–Միքայելյանը և Ասլան Շահնազարյանը:



90. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ. 10–11, 107–108:
91. Նույն տեղում, թ. 55–57:
92. Նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ.42, թ.9: Միշա (Միքայել) Արզումանյանը ծնունդով արցախցի էր: Խորհրդային իշխանության տարիներին աքսորվել է Սիբիր, որտեղ և գտել է իր մահկանացուն:
93. Նույն տեղում, թ. 10:
94. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.244, թ.4:
95. Нагорный Карабах..., рВ. 150-151.
96. Ասլան Շահնազարյանը Շուշիի օրիորդաց գիմնազիայի տնօրենն էր: Նա Շուշի էր եկել 1914 թ.: Մինչ այդ աշխատել էր Բեռլինում, Փարիզում և Թիֆլիսում: Անգլիական հրամանատարությունը Աս. Շահնազարյանին թույլատրում է Շուշի վերադառնալ միայն մայիսի 9–ին:
97. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.11–12:
98. Ե. Իշխանյան..., էջ 381:
99. Նույն տեղում, էջ 382: Լեոն հետագայում գրել է. «Քաջազնունին ունեցել է այսպիսի մի մտադրություն. լեռները տալ ադրբեջանցիներին, իսկ ժողովրդին, ինչպես առողջ և քաջ մի տարր, գաղթեցնել Հայաստանի տափարակ տեղերը: Այնտեղ թույլ և ջլատված ժողովրդի հետ խառնելու և այսպիսով նրա արյունը վերակենդանացնելու համար... Այս մասին ինձ հետ երկար խոսակցություն է ունեցել Քաջազնունու վարչապետության ժամանակ գյուղատնտես Կամսարականը, որ այն ժամանակ ինչ–որ խոշոր պաշտոն էր վարում հայոց կառավարության մեջ: Ղարաբաղի հայ ժողովրդին նա նայում էր անասնաբուծական տեսակետից, գտնելով, որ նա շատ լավ արտադրող կհանդիսանա Հայաստանի համար» (Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 425):
100. Ե. Իշխանյան..., էջ 383:
101. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.553, թ.54:
102. Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.42, թ.68–69:
103. Հարություն Թումյանը նշում է, որ համագումարին մասնակցել են 69 հոգի (Մատենադարան..., մաս Բ, էջ 39), իսկ Եղիշե Իշխանյանը գրում է, թե համագումարին 22 գյուղական հասրակություններից մասնակցել են երեքական հոգի, 8 հոգի քաղաքի հայությունից, կուսակցություններից երկուական՝ 10 հոգի, ընդամենը՝ 84 հոգի (Ե. Իշխանյան..., էջ 394): Համագումարին մասնակցած պատգամավորների թվի մասին նաև տես՝ «Հայրենիք». 1933, դ 11, էջ 86:
104. «Кавказское слово», 1 июля 1919.
105. Ե. Իշխանյան..., էջ 394:
106. «Աշխատավոր», 20 մայիսի 1919:

107. Ե. Իշխանյան..., էջ 395–400։

108. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ.38, թ.27, նաև՝ Արամայիս, «Ղարաբաղի տագնապը», Երևան, 1993, էջ 18, «Հայրենիք», 1929, դ 8, էջ 136 և այլն։

109. Ղարաբաղի Տագնապը..., էջ 18։

110. Ակամայից հիշվում է Մ. Գորբաչովի 1988 թ. փետրվարին արած այն հայտարարությունը, թե ինչպիսի ճակատագիր է սպասում ադրբեջանահայությանը։ Պարզվում է, որ Ադրբեջանի հայությանը հպատակեցնելու գործողության մեթոդները սնվել են անգլիական ստոր քաղաքականության զինանոցից։

111. Нагорный Карабах..., ст.167.

112. Ազգային խորհրդի կազմը ձևավորվում է հետևյալ կերպ. Եղիշե Իշխանյան (նախագահ), Աշոտ Մելիք–Հովսեփյան, Տիգրան Տեր–Գրիգորյան, Հրանտ Բահաթրյան, Գրիգորբեկ Սինասաբեկյան և Միսակ Տեր–Դանիելյան (Ղարաբաղի տագնապը..., էջ 25, 35, ՀՀ ՊԿՊԱ, ֆ.201, ց.1, գ.42, թ.17)։

113. Ե. Իշխանյան..., էջ 403։

114. «Известия Академии наук Азербайджанской ССР. Серия истории, философии и права», 1973, դ 3, Конфликты в Нагорном Карабахе. Сборник статией, Баку, 1990, ст. 9-23.

115. Ա. Միկոյանի զեկուցագրի այդ հատվածը տես՝ Из истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР, 1919-1925. Документы и материалы, Баку, 1989 (այսուհետև՝ Документы...)։ Ի միջի այլոց, Ա. Միկոյանի այդ սխալը թյուրիմացության մեջ է գցել նաև Ս. Կիրովին (տես՝ Нагорный Карабах..., ст.144)։ Մինչդեռ նա դեռևս 1919թ. հունիսի 3–ին Վ. Լենինին գրել է, թե «Հայկական մարզեր Ղարաբաղն ու Զանգեզուրը չեն ճանաչում Ադրբեջանի կառավարությունը» (Նույն տեղում)։

116. Конфликты в Нагорном Карабахе, Сборник статей, Баку, 1990, ст. 9-23, 30-42 (այսուհետև՝ Конфликты...)։

117. «Борьба», 30 апреля 1919.

118. Նույն տեղում, 28 հունիսի։

119. Ե. Իշխանյան..., էջ 405։

120. Նույն տեղում։

121. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.39–40։

122. Нагорный Карабах..., ст. 171.

123. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.36–38։

124. Նույն տեղում, թ.25 և 32։

125. Ե. Իշխանյան..., էջ 406–407։

126. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.38, թ.29։



127. Նույն տեղում, թ.30, ֆ.200, ց.1, գ.309, թ.43։

128. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.309, թ.42–43։

129. Նույն տեղում, ֆ.201, ց.1, գ.42, թ.17։

130. Ղարաբաղի տագնապը..., էջ 23։

131. Հովսեփ Արղության (1865–1925), ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Որպես մանկավարժ աշխատել է Տրապիզոնում, Երևանում, Թիֆլիսում։ 1897 թ. Խանասորի արշավանքի հրամանատարն էր, եղել է Հայկական կամավորական 7–րդ ջոկատի հրամանատարը։ 1919 թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի անդամ, 1919–1920 թթ. եղել է Հայաստանի դեսպանը Թեհրանում։ Մահացել է Փարիզում։

132. Սոկրատբեկ Մելիք–Շահնազարյանի անունն այլևս չենք հանդիպում որևէ փաստաթղթում։

133. Անդրկովկասում անգլիական ռազմական հրամանատարությանը մայիսի 26–ին Միշա Արզումայանի ներկայացրած բողոքից և մայիսի 27–ին Հայաստանի կառավարությանն ուղարկած զեկուցագրից, ինչպես և այլ արխիվային նյութերից իմանում ենք, որ Մ. Արզումանյանին և նրա օգնականներին անգլիական միսիայի ավտոմոբիլով տանում են Եվլախ, որտեղից էլ գնացքով ուղարկում Թիֆլիս։ Շատելվորտի հրամանով Մ. Արզումանյանը մայիսի 20–ին Աղստաֆա կայարանում նահանգապետ Խ. Սուլթանովի կողմից ենթարկվում է խուզարկման և նրանից խլվում են բոլոր փաստաթղթերն ու իրերը, այդ թվում և Ադրբեջանի իշխանությունը չճանաչելու վերաբերյալ Ղարաբաղում անցկացված հանրաքվեի նյութերը՝ 45 հազար ստորագրությամբ (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.87, 105, 121–123)։

134. Շատելվորտը Հ. Արղությանի հետ Գորիս է մեկնում՝ 25 հնդիկ զինվորների ուղեկցությամբ և 11 ավտոմոբիլներով։ Տեղ գյուղի դիրքերում գտնվող զինվորները նրանց կանգնեցնում են, հարց ու փորձի ենթարկում Շատելվորտին։ Այդ միջադեպը խիստ վատ է ընդունում նրա վրա։ Գորիսում Շատելվորտի հոխորտանքներին Ղափանի ազգային խորհրդի նախագահ Սմբատ Մելիք–Ստեփանյանը հայրենակիցների անունից հանգիստ պատասխանում է. «Մեկընդմիշտ, գեներալ (թող) պարզ լինի ձեզ, որ Զանգեզուրը, ինչ գնով էլ լինի, չի ընդունելու Ադրբեջանի վարչակազմը...» (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.3, գ.91, թ.33–34)։

135. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.69, ֆ.201, ց.1, գ.42, թ.17։

136. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.4, գ.446, թ.1։

137. «Кавказское слово», 20 Ո՛վ՛ 1919.

138. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.243, թ.25։

139. Ե. Իշխանյան..., էջ 418–424։

140. Նույն տեղում, էջ 415–418։

141. Ղարաբաղի տագնապը..., էջ 47։

142. Այս վերջին էջերի տվյալները հիմնականում քաղվել են Եղիշե Իշխանյանի վերոհիշյալ գրքի 418–436 էջերից։

150. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.1, ց.309, թ.165։ Մի այլ տեղ ասված է, թե 700 հոգուց կենդանի են մնացել 188–ը («Աշխատավոր», 26 հուլիսի 1919)։ «Կավկազսկոյե սլովո» թերթը զոհվածների թիվը ցույց է տալիս 530 (1 հուլիսի 1919)։

151. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.92ա։

152. Ղարաբաղի տագնապը..., էջ 51։

153. Նույն տեղում։

154. Նույն տեղում. էջ 52։

155. Ե. Իշխանյան..., էջ 436։

156. Այդ առթիվ Հարություն Թումյանը գրել է, թե ազգային խորհուրդը «Ասլանիկ (Սասնայի հերոս) միջոցով, որը եկել էր Դիզակից տեղեկություններ տանելու քաղաքի անցուդարձի մասին, նամակ ուղարկեց Լալայանին և հանձնարարեց շտապ հավաքել Դիզակի և Վարանդայի ընտիր մարտիկներից մինչև 2000 մարդ ու ամեն կերպ աշխատել հունիսի 5–ի գիշերը մտնել քաղաք։ Գործողության պլանը մանրամասնորեն հայտնվեց Ասլանիկին՝ Լալայանին բանավոր տեղեկացնելու համար (Մատենադարան..., Բ մաս, էջ 48)։ Թումյանը ճիշտ չէ, որովհետև Ասլանիկը դավադրաբար սպանվել էր դեռևս մայիսի կեսերին, իսկ Արտեմ Լալայանն էլ Խծաբերդի իրադարձություններից հետո մի ջոկատով եկել էր Շուշի (Ղարաբաղի տագնապը..., էջ 40, 43, 52)։ Լալայանի ջոկատը տեղավորված էր Քարին տակ գյուղում։

157. Ե. Իշխանյան..., էջ 438։

158. Նույն տեղում. էջ 439։

159. «Հայրենիք», 1923, դ  9, էջ 100։

160. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.136։

161. Нагорный Карабах..., ст. 236-237.

162. Նույն տեղում, թ. 237–238։

163. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.211, թ.164, գ. 309, թ.171–173, գ.299, թ.403, ֆ.276, ց.1, գ.42, թ.96, 111–112։

164. «Ժողովուրդ», 22 հունիսի 1919։

165. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.141–142։

166. Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.42, թ.81։ Բրիտանական ուժերի հրամանատարը մինչև անգամ հունիսի 19–ին Հայաստանի կառավարությանն ուղարկած նամակում անամոթաբար պահանջում էր չմիջամտել Հայկական Ղարաբաղի գործերին (Нагорный Карабах..., ст. 258-259)։

167. Նույն տեղում, ց.1, գ.309, թ. 165։



168. «Աշխատավոր», 19 հունիսի 1919։ Այդ օրերին Երևանում տեղի է ունենում Հայաստանի անկախության տարեդարձին նվիրված նիստ, որտեղ Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի անունից ելույթ է ունենում Գերասիմ Բալայանը։ Նա խոսում է Ղարաբաղի բարբառով։ Մեջ ենք բերում այդ ելույթի լրագրային հրապարակումը.

Յարգելի պ. մինիստրներ, ըղօրթա մունք ծըզանայ շատ հեռուընք էս ազիզ օրը, կարըմ չընք վեր լեավ մասնակից ընինք էս մեծ ուրախութեանը, ամմա դէ մունք լօխ հոգով, սրտով ծըզընհետընք և ծըզ ըհետ էլ ըլալընք։ Խէ, հուչի գիւտում, վեր մեր խօխեքը վընընըպեպէիկ երընկալ քեցալ  Սասուն, Զէթուն և Հայաստանի և ժողովրդի համար արիւն թափալ։

Ըսօրան օրը մեզ օգումըն ծըզանայ բաժան անին և մեզ անդար թողնին։ էդ բենը ընլիի բեն չի և մունք ծըզընա կարել չընք բաժան ընինք։ Տիեր Աստուած. տւեր տուք, պ. մինիստրներ, հանց ըրէք, վեր մեր վեզը ծեր վեզան կարած կենայ, մեր ժողովուրդը ծեր ժողովուրդի նըհետ ընի։

Ուրիշ բան չօնինք ըսելի, լիա էսա մեր խնդիրքը մեզ մըննընրադ քցիք վուչ («Աշխատավոր», 13 հունիսի 1919)։

169. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.23, 1–ին մաս, թ. 387։

170. «Աշխատավոր», 10 հունիսի 1919։

171. «Кавказское слово», 25 июня 1919. Ս. Վրացյան..., էջ336։

172. «Աշխատավոր», 24 հունիսի 1919։

173. «Кавказское слово», 26 июня 1919.

174. «Աշխատավոր», 15 հուլիսի 1919։

175. Նույն տեղում, 2 օգոստոսի 1919։ Ադրբեջանի խորհրդարանի 53 պատգամավորներից ութը հայ էին՝ Խորեն Համասփյուռ, Արշակ Մարկոսյան, Պողոս Չուբարյան, Արշակ Պարոնյան, Երվանդ Թաղիանոսյանց, Աբգար Պապյան, Ալեքսանդր Տեր–Ազատյան և Իսահակ Խոջոյան (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.198, թ.63)։

176. «Աշխատավոր», 25 հուլիսի, 6 օգոստոսի 1919։

177. «Յառաջ», 11 մարտի 1919։

178. Нагорный Карабах..., ст. 256.

179. Ղարաբաղի տագնապը..., էջ 77–78։

180. Նույն տեղում, էջ 81։

181. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց.7, գ.98, թ.5։

182. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.81։

183. Ղարաբաղի տագնապը..., էջ 88։

184. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.181, թ.486։

185. Նույն տեղում, ֆ.314, ց.1, գ.111, թ.93ա, Ս. Վրացյան..., էջ 338։

186. «Հայրենիք», 19333, դ 12, էջ 125:
187. Գ. Հովհաննիսյան..., էջ 116–117:
188. «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, դ 3, էջ 272:
189. Նույն տեղում, էջ 268:
190. Բ. Ուլուբաբյան..., էջ 70:
191. Հ.Մ. Հարությունյան, Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թ., էջ 182:
192. «Կոմունիստ», Բաքու 28 ապրիլի 1921:
193. Конфликты..., ст. 39-40.
194. Նույն տեղում, էջ 26:
195. Играр Алиев, Нагорный Карабах. История. Факты. События: Баку, 1989, ст. 78.
196. Տես՝ Ս. Վրացյան..., էջ 342:
197. «Հայրենիք», 1923, դ 7, էջ 165:
198. Л.А. Хуршудян, Истина-единственной кретерий исторической науки, Ереван, 1989, стю 16 (այսուհետև՝ Լ. Խուրշուդյան...):
199. ՀՀ ԿՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.4, գ.50, թ.7:
200. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.206–207: Աբրահամ Կիսիբեկյանը (1892–1971) ծնվել է Վարանդայի Մխտորաշեն գյուղում, երկրագործ գյուղացու ընտանիքում: Ավարտել է Շուշիի թեմականը և որպես մանկավարժ աշխատել է մի շարք գյուղերում: Նա ՀՅԴ անդամ էր և ակտիվ դեր է խաղացել 1918–1920 թթ. Արցախ–Ղարաբաղի ազգային–ազատագրական պայքարում: 1943–1945 թթ. ստացել է մանկավարժական բարձրագույն կրթություն: 1949 թ. Բաքվից աքսորվել է Ալթայի երկրամաս, որտեղից վերադառնալուց հետո մինչև կյանքի վերջն ապրել է Երևանում: Նա գրել է ինը մասից բաղկացած հուշեր, որոնք պահվում են ՀՀ ՊԿՊԿ արխիվում:
201. Նույն տեղում, թ. 104–105, նաև՝ Ղարաբաղի տագնապը..., էջ 91, 95–96:
202. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.309, թ.210–211:
203. Նույն տեղում, թ.216:
204. Ղարաբաղի տագնապը..., էջ 100, 101–102:
205. Նույն տեղում, թ.102:
206. Նույն տեղում:
207. «Кавказское слово», 10 августа 1919.
208. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.80, թ.2, ֆ. 276, ց.1. գ.42, թ.204:
209. «Кавказское слово», 1 августа 1919.
210. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.123:
211. Ժամանակավոր համաձայնագիրը Ղարաբաղի կողմից ստորագրել են 1. Դանիել Առաքելյանը, 2. Աբրահամ Կիսիբեկյանը, 3. Սիմոն Պողոսյանը, 4. Սմբատ Բալայանը, 5. Բենիամին Բաբաքևխյանցը, 6. Իսրայել Ղուլիքևխյանը, 7. Աբրահամբեկ Իշխանյանը, 8. Բախշի Մուրադյանը, 9. Հովհաննես Աբրահամյանը, 10. Ստեփան Ստեփանյանը, 11. Հակոբ Բալասանյանը, 12. Տիգրան Մելիք–Գասպարյանը, 13. Հովհաննես Գասպարյանը, 14. Լևոն Վարդապետյանը, 15. Արսեն Հովհաննիսյանը:
212. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.21, թ.67–68: Նաև՝ Ղարաբաղի տագնապը..., էջ 96–99: Համաձայնագիրը կազմվել է հայերեն և ռուսերեն օրինակներից:
213. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.202, թ.1–2:
214. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.50 /1 մաս/, թ.121–124:
215. Նույն տեղում, գ.309, թ.244–245:



## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ: ԱՐՑԱԽԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1. Ե. Իշխանյան..., էջ 474:
2. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.43, թ.53:
3. Մատենադարան..., Բ մաս, էջ 79:
4. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.427 II, թ.294, նաև՝ ֆ. 276, ց.1, գ.131, թ.41:
5. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.438 թ.20:
6. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.427 II, թ.241:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, թ. 240:
9. Нагорный Карабах..., ст. 348: Այդ նույն փաստաթղթում նաև ասված է, որ Գորիսում Բեկ Փիրումովի հրամանատարությամբ կենտրոնացված է հայկական երկու գումարտակ չորս հրանոթով:
10. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.76, թ.239–240:
11. Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.101, թ.80:
12. Ե. Իշխանյան..., էջ 493: Հայաստանի կառավարությունը կապիտան Արսեն Շահմազյանին որպես նահանգական կոմիսար ուղարկելով Զանգեզուր՝ չէր բարձրացրել նրա զինվորական աստիճանը: Ավելի բարձր զինվորական աստիճաններ ունեցող մի շարք զինվորականներ պետք է ենթարկվեին նրան, որը տեղիք էր տալիս վիճաբանությունների:

13. Նույն տեղում, էջ 506–507:
14. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.113–152:
15. Նույն տեղում, թ.148:
16. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.446, թ.15:
17. Արսեն Շահմազյանի գործունեությունը պետք է ըստ արժանվույն գնահատել: Նա, 1919 թ. մարտի 15-ին գալով Զանգեզուր, զգալի աշխատանք կատարեց Զանգեզուրը, մանավանդ Գորիսի շրջանը ամրացնելու, արցախահայությանը ռազմական օգնություն ցույց տալու գործում:
18. Մատենադարան..., Բ մաս, էջ 83:
19. Պատերազմական գործողությունների մասին մանրամասն տես՝ Հ. Սիմոնյան, Մի էջ զանգեզուրյան հերոսամարտից, «Երեկոյան Երևան», 1989, դ 139 և 140:
20. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.282, թ.35–36:
21. Նույն տեղում, ֆ.314, ց.1, գ.34, թ.151:
22. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.427, թ.238:
23. Նույն տեղում, ֆ.314, ց.1, գ.34, թ.163:
24. Հետաքրքիր է հետևյալ դրվագը. Սուլթանովն իր մոտ է կանչում ազգային խորհրդի անդամներին և լուտանքներ թափում նրանց գլխին՝ ասելով, թե մեզ պարտություն պատճառողը ոչ թե Զանգեզուրն էր, այլ Ղարաբաղի բռնած դիրքը: Ղարաբաղը «ոչ թե չեզոք մնաց, այլ նա շատ ակտիվ կերպով մասնակցեց կռվին, որպես հակառակորդ»: Երբ ազգային խորհուրդը փորձեց առարկել, Խ. Սուլթանովն ավելի կատաղած վրա տվեց. «Եթե այդպես չէ, ապա ի՞նչ գործ ունեին կռվում Չիթչյան Ասծատուրը, Ուլանց Ներսեսը, տումեցի Թևանը, դարադշլաղցի Բախշին, Եղիշեն և ուրիշներ... Իհարկե, մեր ամենամեծ սխալն է եղել, որ զինված Ղարաբաղը թողել ենք մեր թիկունքում»: Խ. Սուլթանովը ազգային խորհրդին առաջարկում է պատվիրակություն ուղարկել Զանգեզուր «նրանց համոզելու հարցը վերջացնելու խաղաղ կերպով» (Նույն տեղում, թ. 152, 154):
25. Նույն տեղում, թ. 155–160:
26. Նույն տեղում, թ.160–161:
27. Նույն տեղում, թ. 164:
28. Ե. Իշխանյան..., էջ 551:
29. Դրո, Երևան, 1991, էջ 138 (այսուհետև՝ Դրո...):
30. Նույն տեղում, էջ 139:
31. «Հայրենիք», 1923, դ 7, էջ 167, դ 8, էջ 110: Արսեն Միքայելյանը Արցախի Վարանդայի շրջանից էր: Այդ վերջին տարիներին նա ապրել է ԱՄՆ-ում և լավ պատկերացում չուներ Արցախ-Ղարաբաղում ստեղծված իրավիճակի մասին: Ժամանակակիցներից շատերը գտնում էին, որ նրան այդ պաշտոնով Արցախ ուղարկելը մեծագույն սխալ էր և երկրամասի հայության համար ճակատագրական:
32. ԴԻԿՄ-ի անդամներ են նշանակվում Ա.Մ., Ա.Շ., Զ.Մ., Ա.Ա., Պ.Ա. (Արսեն Միքայելյան, Ասլան Շահնազարյան, Զախար Մեսյան, Ասատուր Ավետիսյան: Պ.Ա.-ի անուն-ազգանունը չկարողացանք պարզել–Հ.Ա.):
33. «Հայրենիք», 1923, դ 8, 15 112–114: Եղիշե Իշխանյանը պատմում է, որ 1919 թ. դեկտեմբերի 20-ին Թիֆլիսում հանդիպելով երևանաբնակ ղարաբաղցիների հայրենակցական միության նախագահ Գերասիմ Բալայանին, նրանից իմանում է, որ Արցախում նախապատրաստվում էին ապստամբել մուսավաթական Ադրբեջանի դեմ: Գերասիմ Բալայանը Թիֆլիս էր գնացել «կամաւորներ արձանագրելու և ուղարկելու Բալաջեդ՝ այնտեղ մի գումարտակ կազմակերպելու համար»: Եղիշե Իշխանյանը դեմ էր արցախցիների ապստամբությանը, պատճառաբանելով, որ «համապատասխան պատրաստութիւն չունենք ու չպիտի ունենանք, մանավանդ գործին տրամադրուող այն չնչին միջոցներով, որ բաց է թողնւում» Հայաստանի կառավարության կողմից: Եղիշե Իշխանյանը պնդում էր, որ «առանց Հաջի Սամլուն գրաւելու, Ղարաբաղը անհնարին կը լինի միացնել մայր երկրին. այլապէս, ապստամբութեան ամէն փորձ կը լինի իսկական արկածախնդրութիւն, դատապարտված անյաջողութեան՝ մեծ կորուստներով» (Ե. Իշխանյան..., էջ 562–563):
Հայոց հին Աղահեջք գավառը, որն ընկած է Գորիսի ու Շուշիի միջև և ունի մոտ 50 վերստ լայնություն, և որտեղ ապրում էին մոտ 20–25 հազար շիա քրդեր, խիստ անմատչելի էր: Գրավելով այդ տարածքը՝ «Հայաստանը ոչ միայն տեր կըդառնայ ընդ միշտ Զանգեզուրին ու Ղարաբաղին, որովհետև Հաջի Սամլուն Սիւնիքի միջնաբերդն է, այլև մեծապես կը նվազի Նախիջևանի, Շարուրի, Ղազախի և սեպի պէս մէջ մտած միւս թրքական շրջանների վտանգը»: Իրոք՝ «Հաջի Սամլուն Զանգեզուր-Ղարաբաղի միջնաբերդն է, որին տիրելուց յետոյ, Ադրբեջանի ոտնձգութիւնները կը վերանան և Հայաստանի կառավարութիւնը ընդմիշտ տէր կը դառնայ Զանգեզուր-Ղարաբաղին» (նույն տեղում, էջ 468–469): Չես կարող չհամաձայնվել Եղիշե Իշխանյանի հետ:
34. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.165–168:
35. Արսեն Միքայելյանը հետագայում գրել է. «Հուզումնալից այդ շրջանի մեջ, երբ քաղաքական մթնոլորտը բավականաչափ էլեկտրականացած էր, երբ Ադրբեջանը կոիմեր հարձակողական որոշ քայլերի և երբ, իբր այդ հուզման արդյունք, կուսակցությունները պատգամավորություն կուղարկեին գավառ, Ղարաբաղ մտավ հին հեղափոխական և հանդուգն մարտիկ Դալի Ղազարը իր 18 զինված ձիավորներով»: Նա 1920 թ. հունվարի վերջին հասնում է Ղարաբաղ և նրա գալն ասես «վառվող կրակի վրա յուղ կլցնե» («Հայրենիք», 1923, դ 8, էջ 120): Իսկ Եղիշե Իշխանյանն ակնարկում է, որ Դալի Ղազարը Ղարաբաղ է եկել 1919 թ. դեկտեմբերի վերջին, Ղազախի վրայով, 12 հոգով (Ե. Իշխանյան..., էջ 563):

36. Нагорный Карабах..., ст. 356-359:
37. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.173:
38. «Արցախ», 1990, դ 1, էջ 36:
39. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.175:
40. Ալ. Ծատուրյանը հրաժարվում է կատարել ազգային խորհրդի որոշումը, ուստի Աբրահամ Կիսիբեկյանը և Տիգրան Տեր–Գրիգորյանը ստիպված գավառ են մեկնում երկուսով և Սառուշեն գյուղում հանդիպում Արսեն Միքայելյանի հետ (Նույն տեղում, թ.176–185):
41. Ոմանք կարծում են, թե այդ ժամանակ գոյություն ուներ և՛ ազգային խորհուրդ, և՛ Միջկուսակցական բյուրո (Գ. Հովհաննիսյան..., էջ 133), որը ճիշտ չէ: Քանի որ ազգային խորհրդի մեջ էին մտել քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, ուստի ազգային խորհուրդը կատարում էր նաև Միջկուսակցական բյուրոյի դեր:
42. «Սյունիք», 21 մարտի 1920:
43. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.185:
44. «Աշխատավոր», 6 հունվարի 1920:
45. «Սյունիք», 15 հունվարի 1920:
46. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.271, թ.49, գ.249, թ.139:
47. Նույն տեղում, գ.249, թ.139:
48. Նույն տեղում, թ.129:
49. Նույն տեղում:
50. Նույն տեղում, 271, թ.50:
51. Նույն տեղում:
52. Նույն տեղում, գ.475, թ.29–30:
53. Նույն տեղում, գ.486, թ.19:
54. «Հայրենիք», 1923, դ 8, էջ 122:
55. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.432, թ.78: Արձանագրության տակ ստորագրել են 78 հոգի:
56. «Հայրենիք», 1923, դ 9, էջ 117:
57. Նույն տեղում:
58. Նույն տեղում, էջ 118, նաև՝ «Կոմունիստ» (Բաքու), 13 ապրիլի, 1923 թ.:
59. «Հայրենիք», 1923, դ 9, էջ 117:
60. Արմենակ Մկրտիչի Ղարագյոզյանը (Կարակոզով, 1890–1937) Բոլշևիկյան կուսակցության գործիչ էր: Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում, ապա ավարտել Պետերբուրգի համալսարանը: Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկյան աշխատանք է կատարել Գորիսում և Շուշիում: Եղել է 11–րդ Կարմիր բանակի՝ Ղարաբաղ–Զանգեզուրի գրավման



գծով գործերի արտակարգ լիազոր: Խորհրդային իշխանության տարիներին մի շարք պաշտոններ է վարել Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանում, Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կենտգործկոմներում: Նա քիչ մեղք չի ունեցել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին բռնակցելու հարցում:
61. «Կոմունիստ», 13 ապրիլի 1923:
62. «Искра» (Баку), 20 апреля 1920.
63. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.198:
64. «Կոմունիստ», 13 ապրիլի 1923:
65. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.198–199:
66. Պատգամավորների խորհրդակցության նախագահն էր էսէռ Արսեն Հովհաննիսյանը, փոխնախագահը՝ մենշևիկ Նիկոլայ Իսախանյանը, իսկ քարտուղարը՝ բոլշևիկ Հայկ Տեր–Սարգսյանը:
67. «Կոմունիստ», 13 ապրիլի 1923: Այստեղ անհրաժեշտ է տալ հետևյալ բացատրությունը. Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը 1920 թ. մարտի 25–ին Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Խան Խոյսկու հետ ունեցած հանդիպման ժամանակ վերջինս հայտնում է, թե Ադրբեջանի համար կարևոր է պատվիրակների խորհրդակցության որոշումը: Մ. Հարությունյանը պնդում է, որ դա չի կարող օրինական լինել, որովհետև 130 պատգամավորներից Շուշի են գնացել միայն 62–ը, որոնցից 10–ը ձեռնպահ են մնացել և կազմված բանաձևն անցել է ընդամենը 52 ձայնով (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.278, ց.1, գ.14, թ.72): Հարությունյանի հիշատակած 62 հոգուց մի մասը համագումարի պատգամավորներ չէին:
68. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.29:
69. «Սյունիք», 14 մարտի 1920, Ս. Վրացյան..., էջ 395:
70. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, թ.29–35, 38–50, «Հայրենիք», 1923, դ 11, էջ 113–114:
71. «Սյունիք», 14 մարտի 1920:
72. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.206:
73. «Աշխատավոր», 21 մարտի 1920:
74. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.212:
75. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.581, թ.173–174, նաև՝ Ս. Վրացյան..., էջ 394:
76. Ս. Վրացյան..., էւ 395:
77. «Հայրենիք», 1923, դ 11, էջ 118:
78. Ե. Իշխանյան..., էջ 576:
79. Кавказский колендар на 1917 Г., ст.190.
80. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.249, թ.198–199:
81. Նույն տեղում, գ.475, թ.117:

82. «Սյունիք», 21 մարտի 1920:

83. Այդ օրերին ՂԻԿՄ-ը շտապ կարգով կատարում է աշխատանքային նոր բաժանում. 1. Պարենավորման ընդհանուր վարիչ, ապա Ասկերանի ճակատում սպայակույտի պետ է նշանակվում Հարություն Թումյանը, որն Արցախ էր վերադարձել դեռևս 1919 թ. դեկտեմբերի վերջին, 2. Վարանդայի պարենավորման վարիչներ՝ Բյուզանդ վարդապետը, Մարտիրոս Արզումանյանը, Դանիել Առաքելյանը. 3. Կաղարծի–Հացի–Ղզղալայի շրջանի պարենավորման վարիչ՝ Խաչատուր Մելքումյանը, 4. Դիզակի պարենավորման վարիչ՝ Ասլան Շահնազարյանը, օգնականներ՝ Արմենակ Տեր–Բաղդասարյանը, Աբրահամ Աթաբեկյանը, 5. Սարուշենի զինապահեստի, ինչպես նաև պարենավորման վարիչ՝ Խաչատուր Եղիազարյանը, 6. բժշկական մասի պատասխանատու Ասատուր Ավետիսյանը, 7. Կենտրոնական շտաբի պետ Բագրատ Բաղրամյանը, 8. Դաշուշենի ճակատի վարիչ և հրետանու պատասխանատու՝ Կոստյա Աքայանը, 9. Ճարտար–Սոսի շրջանի պարենավորման վարիչ՝ Ճարտարցի Գևորգը, 10. Ընդհանուր կապը պահպանողն էր Արսեն Միքայելյանը («Հայրենիք», 1923, դ 23, էջ 119): Բագրատ Ուլուբաբյանը գրում է, թե աշխատանքի այդ նոր բաժանումը կատարում են «Ազգային խորհրդի, Միջկուսակցական բյուրոյի և, այսպես կոչված, ինքնապաշտպանական մարմնի անդամները...» (Բ.Ուլուբաբյան..., էջ 83): Մինչդեռ այդ ժամանակ գոյություն չուներ ոչ ազգային խորհուրդ և ոչ էլ Միջկուսակցական բյուրո:

84. «Հայրենիք», 1923, դ 11, էջ 116:

85. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.102:

86. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.1, գ.496, թ.1–3:

87. Նույն տեղում:

88. Մատենադարան..., Գ մաս, էջ 21:

89. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.224: Մեր կարծիքով, Աբրահամ Կիսիբեկյանը չափազանցրել է հակառակորդի թիվը:

90. Նույն տեղում, էջ 21–23: Այստեղ հարկ ենք համարում հիշել մի վկայություն. մուսավաթական բանակի ջոկատի հրամանատար Զեյնալովը պատմում է, որ ռազմական գործողությունների սկզբին իբր Ասկերանը հայերին է հանձնվել առանց մարտական գործողությունների, որի հետևանքով խիստ վատացել էր Շուշիի և Խանքենդիի վիճակը: Ինչ էլ որ լիներ, շարունակում է նա, պետք է ազատեինք Աղդամ–Շուշի ճանապարհը և օգնության հասնեինք շրջապատված մուսուլմաններին: Օգնության եկած զորքերը Աղդամ են հասնում մարտի 28–ին և հաջորդ օրը փորձում են Ասկերանը հետ վերցնել: Սակայն Հայաստանի Հանրապետության ուժերը լավ էին պաշտպանում Ասկերանը: Ապրիլի 3–ին կրկին հարձակվելով՝ շուրջ 11 ժամ շարունակվող մարտերից հետո Ադրբեջանի ուժերին հաջողվում է ետ խլել Ասկերանը: Ապրիլի 5–ին երեկոյան մուսավաթական առաջատար զորամասերը մտնում են Շուշի: Ապրիլի 9–ին նրանք փորձում են գրավել Քեշիշքենդը (Տողավարզ), որտեղ գտնվում էր հայերի շտաբը: Ապրիլի 12–ին հաջողվում է գրավել այն, բայց հետո ստիպված են լինում թողնել ու վերադառնալ Շուշի: Զեյնալովի վկայությամբ, բոլոր մարտերում իրենք տվել են 400 սպանված ու վիրավոր: Իբր՝ հայերի կորուստները ևս մեծ էին: Շուշի է գալիս Սալիմովի ջոկատը... Հետո գալիս է գեներալ Դրոն, որը մեծ հեղինակություն ուներ... Թուրք սպան չի մոռանում նաև շեշտել, որ հայկական բանակը ղեկավարում էին ռուսական բանակի դպրոցն անցած սպաները, որոնք ունեին մարտական փորձ... (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.1, գ.43, թ.4–6):

91. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.223:

92. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4041, ց.1, գ.103, թ.14:

93. Ծննդով Ղարաբաղի Քարաղբյուր գյուղացի, երևանաբնակ, պահեստի փոխգնդապետ Վարդան Խաչյանը 1997 թ. ծանոթանալու համար ինձ տրամադրեց Տիգրան Տեր–Գրիգորյանի, որը ծննդով Շուշիից էր, մի քանի ձեռագրեր, որոնց թվում և «Нагорно-Карабахская автономная область (исторический очерк)» գրքի 9–րդ գլուխը՝ «Карабах в период гражданской войны перед советизацией»: Այն գրավեց մեր ուշադրությունը, մանավանդ այն էջերը, որտեղ խոսվում է Շուշիի ավերման մասին: Վարդան Խաչյանի համաձայնությամբ արտագրեցի նշված ձեռագրի 43–52–րդ էջերը, որտեղից կատարում եմ քաղվածքներ: Տիգրան Տեր–Գրիգորյանի վկայություններից ոչ բոլորն են համընկնում այլ հեղինակների վկայությունների հետ:

94. ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.3, թ.24:

95. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.219–220:

96. Մատենադարան..., Գ մաս, էջ 15:

97. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.145–146:

98. «Слово.», 16 апреля, 1920г.: Արխիվային մի փաստաթղթում, որի տակ ստորագրել է Ադրբեջանի բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Վեքիլովը, ասված է, որ մարտի 22–ին Շուշիում գլխատվել է 8000 մարդ (Нагорный Карабах..., ст. 446):

99. «Հառաջ», 1 ապրիլի 1920:

100. Եղիշե Իշխանյանը հետո գրել է. «...Կրկին ու կրկին յիշեցի Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, որի հետևանքը եղաւ Շուշու հայկական մասի ծայրէծայր հրդեհի ճարակ դառնալը ու հիմնայատակ կործանւելը և կրկին պատկերացրի, թե ինչպէս է նահատակւել այն բարի ծերունին, այրւելով հրդեհւած հինաւուրց առաջնորդարանի շէնքում, որտեղ իր կացարանն էր» (Ե. Իշխանյան..., էջ 657):

Վահան Եպիսկոպոս Տեր–Գրիգորյանը (այլ ոչ թե Գևորգյան, ինչպես գրել է Եղիշե Իշխանյանը) ծնվել է 1860 թ., Մեղրիում: Ավարտել է Ս. Աթոռի ճեմարանը: 1917 թ. ապրիլի 18–ից վարում էր Ղարաբաղի թեմակալի պաշտոնը: Նա հեզ, համեստ պաշտոնյա էր եկեղեցում: Շուշիի կոտորածի օրերին նրան գազանաբար սպանել են թուրք ասկյարները, գլուխը կտրել, նի-

զակի ծայրին անցկացրել ու քաղաքի փողոցներով շրջեցրել: Մ. Աթոռում 1920 թ. հունիսի 13-ին նրա հիշատակին կատարվեց հոգեհանգիստ:

101. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.228–299:

102. Мелик- Шахназаров Зарэ, Записки Карабахского солдата (воспоминания участники событий 1918-1920 гг. в Нагорном Карабахе), Москва, ст. 40-41.

103. Նույն տեղում, էջ 43–44:

104. Ե. Իշխանյան..., էջ էջ 613:

105. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.112:

106. Նույն տեղում, թ.113:

107. Նույն տեղում, թ. 153.

108. Եղիշե Իշխանյան..., էջ 624, 664:

109. Նույն տեղում, էջ 615

110. Ս. Վրացյան..., էջ 396:

111. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.271, թ.130ա:

112. Նույն տեղում, գ.563, թ. 69:

113. Նույն տեղում, գ.427, թ.214:

114. Նույն տեղում, գ.568, թ.164:

115. Նույն տեղում, ֆ.278, ց.1, գ.14, թ.93–94:

116. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.475, թ.173`

117. Նույն տեղում, թ.204:

118. Նույն տեղում, գ.563, թ.3–5:

119. Նույն տեղում, թ.175–176:

120. «Յառաջ», 7 ապրիլի 1920:

121. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.103:

122. Նույն տեղում, գ.423, թ.9:

123. Նույն տեղում, գ.423, թ.9:

124. Կոնֆերանսի նյութերը տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.548 և 576:

125. Արսեն Միքայելյանը գրել է, թե Դրոն Ղարաբաղ է հասել ապրիլի 17–ին («Հայրենիք», 1923, դ 12, էջ 123): Արամ Սիմոնյանը նշում է, թե «Գորիս–Ավդալար–Շուշի գծով Ղարաբաղ մեկնեց Դրաստամատ Կանայանի (Դրո) գլխավորած Զանգեզուր–Ղարաբաղյան էքսպեդիցիոն ջոկատը» (Արամ Սիմոնայն, Զանգեզուրի գոյամարտը, Երևան, 2000, էջ 43, այսուհետև՝ Զանգեզուրի գոյամարտը...): Սակայն դա ճիշտ չէ, քանի որ Ա. Սիմոնյանի ցույց տված գիծը այդ ժամանակ գտնվում էր թուրք–քրդերի ձեռքին: Դրոն Ղարաբաղ է մտել Կոռնիձոր–Խծաբերդ–Տումի–Թաղավարդ գծով:



Դրոն (1884–1956) ծնվել է Սուրմալու գավառի Իգդիր ավանում: Հանդիսացել է հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, տաղանդավոր ռազմական կազմակերպիչ, Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից է: Սովորել է Երևանի ռուսական գիմնազիայում, հետո մտել է զինվորական ծառայության: Հենց նրա հարվածից 1905 թ. ընկավ Բաքվի նահանգապետ Նակաշիձեն: 1907 թ. նա պատժեց նաև հայերի ու վրացիների ոճրագործ, գեներալ Ալիխանով–Ավարսկուն: Հայաստանի առաջին հանրապետության տարիներին եղել է պաշտպանության նախարար: Դրո զինվորն ու ազգային գործիչը մտահոգված էր Արցախ–Զանգեզուրի պաշտպանության և Հայաստանի հետ վերամիավորվելու խնդրով: Մահացել է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում: 2000 թ. աճյունը փոխադրվել և հողին է հանձնվել Ապարանում:

126. Դրո..., էջ 142:

127. Նույն տեղում, էջ 143:

128. Մատենադարան..., Գ մաս, էջ 30–31:

129. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.252, ց.1, գ.6, թ.14:

130. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.1, գ.36, թ.2:

131. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.270:

132. «Հայրենիք», 1923, դ 12, էջ 124:

133. Գարեգին Նժդեհը (1888–1955) ծննդով Նախիջևանի գավառի Կզնութ գյուղից էր: Նա հայ ականավոր պետական–ռազմական գործիչ էր: Նժդեհը 1919–1921 թթ. մեծ դեր է ունեցել Զանգեզուր–Արցախի ազատագրական պայքարի կազմակերպման և այդ տարածքների փրկության գործում: Նա 1944 թ. մինչև մահը գտնվել է ԽՍՀՄ բանտերում:

134. Տես՝ Վարդան Գևորգյան, Լեռնահայաստանի գոյամարտը (1919–1921), Պուքրէշ, 1923, էջ 32 (այսուհետև՝ Լեռնահայաստանի գոյամարտը...): Սույն գիրքը վերատպվել է Երևանում, 1991թ. (այստեղ՝ էջ 57–58):

135. Նույն տեղում (նաև՝ 59):

136. Նույն տեղում, էջ 42–43 (59):

137. Հանձնաժողովներում ընտրվում են Միքայել Մուրադյանը (Վանք), Արմենակ Տեր–Բաղդասարյանը (Ներքին Թաղավարդ), Մեսրոպ Վարդանյանը (Ջրակուս), Սիմոն Օհանյանը (Բինյաթլու), Պողոս Տեր–Բաբայանը (Գիշի), Արսեն Ղահրամանյանը (Քերթ), Արշակ Սուսայելյանը (Ներքին Թաղավարդ) և Ալեքսան Քոչարյանը (Սոս):

138. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.94:

139. Արցախի ժամանակավոր կառավարության կազմը՝ ա)Հայաստանի Հանրապետության քաղաքական մասի ներկայացուցիչ՝ Արսեն Միքայելյան, բ) Ներքին գործերի վարիչ՝ Աստվածատուր Ավետիսյան, գ) Խնամատարության վարիչ՝ Հարություն Թումյան, դ)Պարենավորման գործերի վարիչ՝ Խաչատուր Մելքումյան, ե) Բժշկասանիտարական գործերի վարիչ՝ Նյուդվիգ

Տեր–Գրիգորյան, գ)Աշխատանքի և երկրագործության բաժանմունքի վարիչ՝ Նիկոլայ Իսախանյան, է) Լուսավորության վարիչ՝ Գրիգոր Ղարագյոզյան, քարտուղար՝ Տիգրան Տեր–Գրիգորյան (Արցախի ժամանակավոր կառավարության կոլեգիայի արձանագրությունները՝ տես Հ. Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 137–151):

140. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.498, թ.2–4:

141. Նույն տեղում, թ.5:

142. Նույն տեղում: Ընտրված պատգամավորներին տրված մանդատով (համաձայն ժամանակավոր կառավարության մայիսի 2–ի նիստի որոշման, նույն տեղում, թ.13) նրանց իրավունք է տրվում կոնֆերանսում պաշտպանել «Ղարաբաղի խնդիրը՝ համաձայն Ղարաբաղի հայության 9–րդ համագումարում մշակված քաղաքական քանաձևի»: Ապա կատարվում է երկու լրացում. «1. Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը խնդրում է Հայաստանի կառավարությանը՝ պատգամավորությանը ցույց տալ նյութական աջակցություն հիսուն հազար (50.000) ռուբլու սահմաններում, եթե նրանք կարիք կզգան:

2. Նույն պատգամավորությանը հանձնարարվում է ներկայացնել Հայաստանի կառավարությանը Ղարաբաղի կարիքները և տալ զեկուցում՝ Ղարաբաղի գործերի մասին» (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.144):

143. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.271–272:

144. Թաքոլի Գրիգորը (Գրիգոր Օհանյան) Հյուսիսային Արցախի Բանանց գյուղացի էր: Նա 1910 թ. իր հեծյալ ջոկատով մասնակցել է հանրահայտ Ռևանդուզի ճակատամարտին: Առաջին աշխարհամարտի տարիներին Գրիգորը, որպես կամավոր, մտել է հայկական չորրորդ կամավորական գունդ, որի հրամանատարն էր Քեռին (Արշակ Գաֆաֆյան): Թուրքերի դեմ կռիվներում Գրիգորը ստացել է Գեորգևյան չորս խաչ:

Թաքոլին առանձնապես մեծ աշխատանք է կատարել 1917–1921 թթ. Արցախի և նրա հյուսիսային շրջանների պաշտպանության գործում: Խորհրդային իշխանության տարիներին ապրել է հայրենի Բանանցում, որտեղ և մահացել է պատերազմից հետո (տես՝ Հրանտ Աբրահամյան, Թաքոլու հարցի շուրջը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Երևան, 2001, դ 1–2, էջ 84–85):

145. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.273:

146. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.37, թ.3:

147. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.98:

148. Нагорный Карабах..., рЗ. 433-434.

149. Գ. Հովհաննիսյանը նշում է (էջ 153), թե իբր Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի գավառների հայ բնակչությունը 9–րդ համագումարը ենթարկել է բոյկոտի և ոչ մի ներկայացուցիչ չի ուղարկել: Նախ՝ նրան անհայտ էր Մարտակերտում առանձին համագումար հրավիրվելու փաստը, հետո՝



ինչպես նշվել է, Աղդամ–Ասկերան–Շուշի ճանապարհը փակ էր. Ասկերանը դեռ չէր ազատագրվել Դրոյի կողմից: Այսպիսի պայմաններում վերոհիշյալ շրջանների պատգամավորները չէին կարող գալ Ներքին Թաղավարդ: Ուստի, նրանք հարմար գտան, ինչպես նշվեց, առանձին համագումար հրավիրել:

150. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.191–192: Արձանագրության տակ ստորագրել է 61 պատգամավոր:

151. Նույն տեղում, թ.193:

152. Ըստ երևույթին, գետաշենցիներին հայտնի էր, որ ՀՅԴ բյուրոյի որոշմամբ դեռևս 1919 թ. վերջերից սկսած, Համազասպի գլխավորությամբ Բասարգեչարում կազմակերպվում էր կամավորական ջոկատ՝ Ղարաբաղ մտնելու համար:

153. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.498, թ.9–10:

154. Նույն տեղում, թ.12–13:

155. Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

1. Кадишев А.Б., Интервенция и гражданская война в Закавказе, Москва, 1960, ст. 304 (այսուհետև՝ Кадишев А.Б...,)

2. Տես՝ Զանգեզուրի գոյամարտը..., էջ 47:

3. Տես՝ Кадишев А.Б., ст.244.

4. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4005, ց.1, գ.27, թ.26, «Կոմունիստ (Բաքու), 1920, դ 12: Արամայիսը պատմում է, որ երբ Խ. Սուլթանովը ժամանում է Բաքու, զգում է, որ իրեն պիտի ձերբակալեն. փորձում է փախչել, բայց նրան ձերբակալում է չեկայի աշխատակից Արտավազդ Հովհաննիսյանը: Խ. Սուլթանովի հետ Բաքվի բանտում միևնույն խցում նստած էին նաև Ադրբեջանի նախկին խորհրդարանի անդամներ Խորեն Համասփյուռը և Արշակ Մալխասյանցը: Խ. Սուլթանովը փորձում է բանտից փախչել, բայց չի հաջողվում: Նա բանտում ամեն ինչ ստանում էր՝ «լավ ճաշ, գինի, օղի, կոնյակ...» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.150, ց.1, գ.25, թ.36–38): Աբրահամ Կիսիբեկյանը նաև վկայում է, որ Խ. Սուլթանովին բանտից ազատել են Ն. Նարիմանովի կարգադրությամբ: Շուշիի գավառային հեղկոմի նախագահ Շամիլ Մահմուդբեկովը 1921 թ. փետրվարի 15–ին Ադրհեղկոմին ուղարկած զեկուցագրում հաղորդում է, որ Քրդստանում մեծ հեղինակություն ունեցող Սուլթանբեկ Սուլթանովը պա-

հանձում է բանտից ազատել իր եղբայր Խոսրովբեկ Սուլթանովին, հակառակ դեպքում չի դադարի խորհրդային կարգերի և Կարմիր բանակի զորամասերի դեմ պայքարելուց: Մահմուդբեկովը միջնորդում է Խ. Սուլթանովին ազատել բանտից, որի «լոյալությունը, բարեհուսությունը և գործունեության ամբողջ պատասխանատվությունը» վերցնում էր իր վրա (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.208, թ.2): Կան տվյալներ, որ բանտից ազատվելուց հետո Խոսրովբեկ Սուլթանովը որոշ ժամանակ մնացել է Հաջի Սամլու գյուղում, ապա տեղափոխվել է Պարսկաստան: Հետագայում մամուլում գրվել է, թե Խոսրովբեկ Սուլթանովը Պարսկաստանում հակախորհրդային կազմակերպություն է ստեղծել՝ նպատակ ունենալով անցնել Անդրկովկաս և այնտեղ գործել («Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի, 1926): 1944 թ. մոսկովյան բանտում հարցաքննության ժամանակ տված մի բացատրության մեջ Գարեգին Նժդեհը նշել է, թե հայտնի մուսավաթականներ Ռասուլզադեն և Խոսրովբեկ Սուլթանովը կապ ունեին գերմանական հետախուզության հետ: Նրանք «ակտիվորեն աշխատում եին թուրքերի համար» և նրանց «գործունեությունը պանթուրքիզմի իրականացումն է»: Ապա հաղորդում է, թե Ռասուլզադեն ներկայումս ապրում է, իսկ Սուլթանովը մահացել է» (ՀՀ ազգային անվտանգության նախարարության արխիվ, գ.5231, հատոր առաջին, թ.35, այսուհետև՝ ՀՀ ԱԱՆ արխիվ...): Որ Խ. Սուլթանովը կապի մեջ է եղել գերմանական ֆաշիզմի հետ և հակախորհրդային լայն աշխատանք էր ծավալել, ապացուցում են նաև ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի կողմից գերմանական արխիվներում հայտնաբերած փաստաթղթերը (Нагорный Карабах..., ст. XV-XVI):

5. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.55:
6. Նույն տեղում, թ.54:
7. К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы, Баку, 1989 ст. 42-43 (այսուհետև՝ Документы...).
8. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.461, թ.164:
9. Նույն տեղում, գ.498, թ.19, 21:
10. Նույն տեղում, թ.91:
11. Նույն տեղում, թ.64–65:
12. Նույն տեղում:
13. Борьба за победу Советской власти в Азербайджане, Баку, 1967, ст. 476-477.
14. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.576, թ.43:
15. Նույն տեղում, գ. 427, թ.274, նաև՝ ֆ. 276, ց.1, գ.218, թ.137:
16. Նույն տեղում, ֆ.278, ց.1, գ.38, թ.90, նաև՝ ֆ.200, ց.1, գ.271, թ.202:
17. Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.271, թ.213–214:
18. Նույն տեղում, գ.581, թ.30–31:



19. Նույն տեղում, թ.41:
20. Նույն տեղում, թ.44–46:
21. С.М. Киров, Избранные статьи и речи (1912-1934), Москва, 1957, ст.103.
22. Ադրբեջանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ.410, ց.1, գ.78, թ.6 (այսուհետև՝ Ադր.Հ. ՆՊՊԿԱ...):
23. Шихлинский А.Н., Мои воспоминания, Баку, 1984, ст.176-177.
24. ՀՀ ՀՔԿՊ ԿՊԱ, ֆ.4005, թ.1:
25. Սահակ Տեր–Գաբրիելյանը (1886–1937) ծնվել է Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ռեալական դպրոցում: Հեղափոխական աշխատանք է կատարել Բաքվում: 11–րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր, բանակի քաղբաժնի պետ: Խորհրդային իշխանության տարիներին Խորհրդային Հայաստանում և Մոսկվայում աշխատել է մի շարք կուսակցական և պետական մարմիններում:
26. Պատվիրակության կազմում էին 281–րդ գնդից Պարնակինը և Կայդալովը (տես՝ Պարնակինի զեկուցագիրը, Нагорный Карабах..., ст. 467–469): Արսեն Միքայելյանը գրում է, թե հանդիպումը տեղի է ունեցել մայիսի 4–5–ը, որին մասնակցել է նաև 11–րդ Կարմիր բանակի հրամանատար Մ. Լևանդովսկին («Հայրենիք», 1929, դ 12, էջ 125): Մինչդեռ այդ օրերին Մ. Լևանդովսկին գտնվում էր Եվլախում և Ղարաբաղ չի եկել: Գ. Հովհաննիսյանը իր հերթին գրել է, թե մայիսի առաջին կեսին Շուշիի օկրուգկոմը Սաքո Համբարձումյանի գլխավորությամբ հատուկ պատվիրակություն է ուղարկել Դրոյի մոտ, որը նրանից պահանջել է «առանց դիմադրության Լեռնային Ղարաբաղի սահմանները թողնել» (Գ. Հովհաննիսյան..., էջ 162–163): Արխիվային որևէ փաստաթղթում կամ էլ ժամանակակիցների հուշերում ակնարկ չկա այն մասին, թե Շուշիի օկրուգկոմը պատվիրակություն է ուղարկել Դրոյի մոտ:
27. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.563, թ.154:
28. Դրո..., էջ 149:
29. ՀՀ ՀՔՓԿ ԿՊԱ, ֆ.4033, ց.5, գ.498, թ.27:
30. «Հայրենիք», 1923, դ 12, էջ 121-122:
31. ՀՀ ՀՔՓԿ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.37, թ.21:
32. Նույն տեղում, թ.2–3:
33. «Հայրենիք», 1923, դ 12, էջ126: Խորհրդակցության ժամանակ Դրոն հայտնում է, թե Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը հանել Ղարաբաղից: Դա առաջ է բերում Նժդեհի բուռն դժգոհությունը: Դրոն ու Նժդեհը խիստ ընդհարվում են (Եղիշե Իշխանյան..., էջ 681):
34. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.195, ց.3, գ.981, թ.3:
35. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.52, թ.2:

36. «Հայրենիք», 1923, դ 12, էջ 93:
37. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.5, գ.53, թ.2–12: Ս. Փիրումյանի և Ա. Երզնկյանի կազմած նամակում տեղ են գտել նաև անճշտություններ, որի մասին գրել է «Մշակ» թերթը նույն թվականի օգոստոսի 21–ին «Ինչպես պաշտպանեցին Ղարաբաղի շահերը» վերտառությամբ հոդվածում, որտեղ ասված է, թե «նամակի հեղինակները ,կաշվից դուրս են գալիս ապացուցելու, թե այս երկու–երեք տարվա ընթացքում Ղարաբաղը կռվել է մեծամասնական գաղափարների համար, սպասել է մեծամասնականներին և ոչ թե գլխավորապես արյուն թափել՝ արյունոռուշտ Ադրբեջանից ազատվելու և Հայաստանին միանալու համար»: Բացի այդ, շարադրվածից բխում է այն միտքը, թե արցախահայության համար չարիք է եղել մայր հայրենիքի հետ միանալու համար մղված պայքարը: Նույն թերթի օգոստոսի 24–ի համարում տպագրված Արամայիս Երզնկյանի պատասխանում հեղինակը փորձում է արդարանալ և հայտարարում է, թե «մեր նպատակն էր պատերազմը կասեցնել և որ Ղարաբաղի բախտը որոշելիս հարցվի այդ ժողովրդի կամքը»:
38. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.2, գ.157, թ.12:
39. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.62–63:
40. «Ժողովուրդ», 3 հունիսի 1920:
41. «Խորհրդային Ղարաբաղ», 1930, դ 31, М.Шагинян, Нагорный Карабах, Москва, 1930, ст.9, «Революция и национальности», 1936, դ 11, ст. 52.
42. Գնդապետ Ջեյնալովը Շուշիի ողբերգության կազմակերպիչներից էր: Տվյալներ կան այն մասին, որ նա հայերի տները կողոպտելով կուտակել է 3 մլն 200 հազար ռուբլի դրամ և մի քանի փութ ոսկե ու արծաթե իրեր՝ դրանք պահ տալով բանկին: Խռովությունը ճնշվելուց հետո Ջեյնալովը փախել է արտասահման՝ կողոպտածը թաքցնելով Խորհրդային Ադրբեջանի բանկում («Կոմունիստ», 24 հունիսի 1920):
43. Ադր.Հ Քաղաքական կուսակցությունների փաստաթղթերի պետական արխիվ (այսուհետև՝ Ադր.Հ ՔԿՓՊԱ), ֆ.456, ց.16, գ.129, թ.32:
44. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.34, թ.266–277:
45. Մատենադարան..., մաս Գ, էջ 42:
46. С.М. Киров, Статьи, речи, документы, Т.1, М., 1936, ст.144.
47. «Հայրենիք», 1954, դ 1, էջ 2:
48. Նույն տեղում, էջ 5, Համբարձում Տերտերյան, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները. Լևոն Շանթի բանակցությունները, «Հայրենիք», 1954, դ 1, 2, 5:
49. Նույն տեղում, էջ 5: Նաև՝ Ս. Վրացյան..., էջ 479–480, Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրին 1930–ի կովկասյան ապստամբությունները, հատ.Ա, Մարսել, 1934, էջ 47:
50. Նույն տեղում, էջ 9–10: Մայիսի վերջերից Մոսկվայում էին գտնվում նաև



Թուրքիայի ներկայացուցիչներ Բեքիր Սամի–բեյը և Մուստաֆա Քեմալի եղբայր Յուսուֆ Քեմալ–բեյը, որոնք Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ էին վարում ռազմական օգնություն ստանալու համար (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.529, թ.39):

51. «Հայրենիք», 1954, դ 2, էջ 14: Արամ Սիմոնյանը բացատրում է, որ խորհրդային ղեկավարները «մի դեպքում Զանգեզուրը և Ղարաբաղը տեսնում էին Ադրբեջանի կազմում, իսկ Նախիջևանը՝ Հայաստանի, մյուս դեպքում՝ մտածում էին երեք մարզերն էլ հանձնել Ադրբեջանին, երրորդ դեպքում՝ Զանգեզուրը խոստանում էին թողնել Հայաստանին, իսկ Նախիջևանն ու Ղարաբաղը միացնել Ադրբեջանին և այսպես շարունակ: Եվ ամեն անգամ Ադրբեջանի շահն առաջին գծի վրա էր» (Զանգեզուրի.գոյամարտը..., էջ 93):
52. «Հայրենիք», 1954, դ 2, էջ 15:
53. Ս. Վրացյան..., էջ 483:
54. «Հայրենիք», 1954, դ 2, էջ 15:
55. Нагорный Карабах..., ст.476-477.
56. Նույն տեղում, էջ 505:
57. Ադր.Հ ՆՊԿՊԱ, ֆ.410, ց.1, գ.69, թ.183:
58. Нагорный Карабах..., ст. 524.
59. Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, ст.25.
60. Нагорный Карабах..., ст. 506.
61. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.581, թ.203:
62. Нагорный Карабах..., ст. 509.
63. Օրինակ. խոսելով 1919 թ. օգոստոսյան ժամանակավոր համաձայնության մասին, գրում են, թե իբր Ղարաբաղի հայության 7–րդ համագումարը «վճռականորեն արտահայտվել է Ադրբեջանի լրիվ ամբողջականության» օգտին, մինչդեռ հայտնի է, որ Ղարաբաղն իրեն ճանաչել է «ժամանակավոր Ադրբեջանի սահմաններում»:
64. Нагорный Карабах..., ст. 529-531.
65. Նույն տեղում, էջ 515–518:
66. Նույն տեղում, էջ 528:
67. Նույն տեղում, էջ 524:
68. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.4, թ.17:
69. Конфликты..., ст. 10,47.
70. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.198, թ.242:
71. «Հայաստանի կոոպերացիա», 1920, դ 17, էջ 245:
72. Նույն տեղում, էջ 249: Այստեղ կատարենք մի շեղում. հետագայում, երբ 1927 թ. Դավիթ Անանունը ձերբակալվում է, նրան մեղադրում էին հայահա-

վաքման գաղափարը պրոպագանդելու և հայկական մի շարք տարածքներ Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով առաջ քաշած պահանջների համար։ Առանձնապես թիրախ էր ընտրվել Դ. Անանունի պահանջը Նախիջևանը, Լեռնային Ղարաբաղը, Ախլքալաքի շրջանը և այլ հայկական տարածքներ Հայաստանին հանձնելու համար։ Քննիչի այն հարցին, թե ինչպես կարելի է լուծել Հայաստանի ազգային հարցը, Անանունը պատասխանել է. «...Իմ համոզմամբ բացառվում է համերաշխությունը քեմալական Թուրքիայի հետ... Խորհրդային Միությունը կարող է Թուրքիային ստիպել հավաքել իր փեշերը և հեռանալ հայկական տարածքից։ Մեր կոմունիստների կարծիքը, թե իբր այդ հարցը կվճռվի Թուրքիայի խորհրդայնացման դեպքում, ես չեմ ընդունում..., որովհետև Թուրքիան որպես հետամնաց երկիր, ոչ մի անգամ չի բարձրանա այն գիտակցության, ինչպես խորհրդայնացում, պրոլետարիատի դիկտատուրա և այլն» (ՀՀ ԱԱՆ արխիվ, գ. 9373, թ. 33–34)։

73. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.529, թ.66։

74. Нагорный Карабах..., ст. 517.

75. Նույն տեղում, էջ 541–542, 544–545։

76. Ինքը, խորհրդային Ռուսաստանը, չէր ժխտում Թուրքիային ցույց տված բազմապիսի օգնությունը։ Արևելքի ժողովուրդների համագումարի ամբիոնից խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Զինովևը հայտարարել է. «Թուրքիայում, ընկերներ, դուք գիտեք, խորհրդային կառավարությունն աջակցում է Քեմալին։ Մենք ոչ մի րոպե չենք մոռանում, որ Քեմալի գլխավորած շարժումը կոմունիստական շարժում չէ։ Մենք դա գիտենք։ Մենք գիտենք, որ Թուրքիայում իշխանությունների կողմից ստեղծվել են խաղալիք–«խորհուրդներ», որոնք ոչ մի առնչություն չունեն աշխատավորների շահերի հետ» (1-ый създ народов Востока. 1-8 сент. 1920 Г. Стенографическое отчеты, П. 1920, ст.11-42)։

77. Հրաչիկ Սիմոնյան, Զավթողական պատերազմի նախաբանը, «Երեկոյան Երևան», 14 սեպտեմբերի, 1990։

78. Նույն տեղում։

79. «Երեկոյան Երևան», 28 հունիսի, 1989։

80. Նույն տեղում։

81. Դ. Գուլիևը պնդում է, թե Ն. Նարիմանովի ստորագրած հռչակագրում շեշտվում է «Լեռնային Ղարաբաղին լրիվ ինքնավարություն տալու սկզբունքը» (Конфликты..., ст. 13-14)։ Այդ նույնը պնդում է նաև Ե. Տոկարժևսկին (նույն տեղում, էջ 27), իսկ Թ. Քոչարլին ավելի հանգամանորեն է խոսում և փորձում ապացուցել, թե սխալ է թույլ տրվել մանավանդ 1920 թ. դեկտեմբերի 1–ին Բաքվի խորհրդի նիստում Ս. Օրջոնիկիձեի ելույթում, որը և հաղորդվել է Վ. Լենինին, Ի. Ստալինին և մյուսներին (նույն տեղում, էջ 31–34)։ Այդ նույնը երրորդ լարի վրա նվագում է ոմն Ա. Սկիբիցկի (Союз, 7, 1991.)։

82. Հրաչիկ Սիմոնյան, Ազգամիջյան լարվածության ակունքներում («Խորհրդային Հայաստան», 14, 20 սեպտեմբերի, 1989), նույնի՝ Մի մոռացիր փաստերը (նույն տեղում, 23 օգոստոսի 1989), Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարը, էջ 122–128, Л.А. Хуршудян, Истина-единственный критерий исторической науки, Ереван, 1989, ст 27-31, Г. Аветисян и М. Карапетян, На кого это расчитано («Коммунист», 6 октября 1989)։ Իր մի շարք հոդվածներում այդ հարցն արծարծել է նաև Ռեմ Ղազանչյանը։

83. Նույն տեղում, էջ 64 և 65։

84. Նույն տեղում, էջ 69։ Տողատակ գրված է, թե Ս. Օրջոնիկիձեն իբր սխալ է թույլ տվել, երբ Հայաստանին զիջած տարածքների շարքում նշել է նաև Լեռնային Ղարաբաղը։

85. Ի.Վ. Ստալին, Երկեր, հ.4, էջ 459։

86. Լ. Մկրտչյան, Արցախ–Ղարաբաղը՝ իր անցյալով և ներկայով, Աթենք, 1988, էջ 37 (այսուհետև՝ Լ. Մկրտչյան...)։

87. «Ավանգարդ», 5 հոկտեմբերի 1990։

88. Документы внешной политики СССР, М-а, 1959, т.3, ст.598-599։ Հետագա իրադարձությունները հանգեցրին նրան, որ 1923 թ. փետրվարին կազմավորվեց Նախիջևանի ինքնավար երկրամասը խորհրդային Ադրբեջանի կազմում, իսկ մեկ տարի անց այն վերածվեց Նախիջևանի Ինքնավար խորհրդային Հանրապետության՝ նույն Ադրբեջանական ԽՍՀ կազմում։

89. «Երեկոյան Երևան», 9 հունիսի 1988։

90. Хармандарян С.В., Ленин и становление Закавказской федерации 1921-1923, Ереван, 1969, ст.102 (այսուհետև՝ Ս. Խարմանդարյան...)։ Փաստորեն, Կովբյուրոյի սույն որոշումն ի չիք է դարձնում 1920 թ. դեկտեմբերի սկզբին Բաքվում հրապարակված՝ Լեռնային Ղարաբաղի հարցը հանրաքվեի միջոցով որոշելու վերաբերյալ առաջարկը, մինչդեռ Թ. Քոչարլին, Դ. Գուլիևը և ուրիշներ չտեսնելու են տալիս այս կարևոր որոշումը և առաջ քաշում կեղծ ու հակագիտական տեսակետ։ Նրանք, մոլորության մեջ գցելով ընթերցողներին, փորձում են ապացուցել, թե իբր Լեռնային Ղարաբաղը 1918 թ. Բաթումի պայմանագրից հետո մինչև Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը գտնվել է մուսավաթական Ադրբեջանի տիրապետության տակ և հետո, կամավոր, հանրաքվեի միջոցով մնացել է Խորհրդային Ադրբեջանի կազմում (Конфликты..., ст.11-12, 39)։

91. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.1, գ.39, թ.5։

92. Նույն տեղում, թ.10։

93. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.113, ց.3, գ.56, թ.31, նաև «Խորհրդային Հայաստան», 18 հունիսի 1921։ Հայտարարությունն այնուհետև լույս տեսավ առանձին թերթիկով՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն, ինչպես և «Բակինսկի ռաբոչի» թերթի հունիսի 22–ի համարում։

94. Нагорный Карабах..., ст.640-644.
95. Ս.Խարմանդարյան..., էջ 102–103:
96. Ոմանք նշում են, թե իբր Աս. Մռավյանը Եվլախից ետ է վերադարձել Թիֆլիս:
97. Տես՝ «Կոմունիստ» (Բաքու), 5 հուլիսի 1921:
98. Нагорный Карабах..., ст.644-645.
99. Նույն տեղում, էջ 645:
100. Ս. Խարմանդարյան..., էջ 103–104:
101. Նույն տեղում, էջ 107–108:
102. «Խորհրդային Հայաստան», 14 և 15 սեպտեմբերի 1989:
103. Նույն տեղում:
104. Նույն տեղում:
105. Զարմանալին այն է, որ Ալ. Մյասնիկյանը չափազանց պասիվ գտնվեց և վճռական քայլի չդիմեց, ինչպես ասենք դա կատարեց Ն. Նարիմանովը: Չէ՞ որ նա ևս կարող էր պահանջել հարցի վերջնական լուծումը տեղափոխել Մոսկվա: Դա կլիներ միանգամայն ճիշտ քայլ:
106. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.1, գ.39, թ.5:
107. Նույն տեղում, ց.2, գ.1, թ.23:
108. «Խորհրդային Հայաստան», 20 սեպտեմբերի, 1989:
109. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.427, մաս 1–ին, թ.180–181:
110. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.67, թ.2–3:
111. Нагорный Карабах..., ст.514.
112. «Մշակ», 7 օգոստոսի 1920:
113. Ավո, Նժդեհ, կյանքն ու գործունեությունը, Բեյրութ, 1968. էջ 289 (այսուհետև՝ Ավո...):
114. 1919 թ. օգոստոսի 10–ին Նժդեհն իր առաջին պատգամ–հրամանով Զանգեզուրը բաժանում է հետևյալ շրջանների՝ Կապան, Գողթան, Արևիկ (Մեղրի, Գնդեվազ): Կապարողույթը կազմված է նշված անունների առաջին վանկերից:
115. «Հայրենիք», 1923, դ 11, էջ 78:
116. Ավո..., էջ 430:
117. Արնոտ գիրք, Գորիս, 1921, էջ 6:
118. Նույն տեղում:
119. Нагорный Карабах..., ст.566, Նաև՝ «Մշակ», 22 հոկտեմբերի 1920:
120. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.198, ց.1, գ.73, թ.9:
121. Նույն տեղում:



122. Նույն տեղում, թ. 20–21:
123. Նույն տեղում, թ.16:
124. Վարագ Առաքելյան, Նժդեհ, Երևան, 1989, էջ 26:
125. Կարմիր բանակի 28–րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկու 1920 թ. հոկտեմբերի 17–ի հրամանում գրված է. «Զանգեզուրի գավառի Կոռնիձոր գյուղի բնակիչներ Ավագիմ Պողոսյանը, Սիմոն Պողոսյանը, Շամիր Կարապետյանը, Ալեքսանդր Հասրաթովը, Հակոբ Վանեսովը և Ահարոն Դահրամանովը գնդակահարվում են հակահեղափոխության և կոմունիստների ծնողներին ծաղրելու համար»: (Արնոտ գիրք..., էջ 65):
126. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.70, թ.11:
127. «Հայրենիք», 1924, դ 6, էջ 118:
128. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.70, թ.11–11ա:
129. Նույն տեղում, թ.21, 25:
130. Արնոտ գիրք..., էջ 15:
131. Նույն տեղում, էջ 14:
132. Նույն տեղում, էջ 13:
133. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.1, գ.142, թ.1–2:
134. Նույն տեղում, գ.138, թ.1–2:
135. Արնոտ գիրք..., էջ 64:
136. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.1, գ.138, թ.1–2:
137. Արնոտ գիրք..., էջ 64:
138. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.1, գ.133, թ.1:
139. Արնոտ գիրք..., էջ 23:
140. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.198, ց.1, գ.79, թ.15:
141. Վարդան Գևորգյան..., էջ 103:
142. Ավո..., էջ 132:
143. Արնոտ գիրք..., էջ 70–71:
144. Նույն տեղում, էջ 72–73:
145. Նույն տեղում, էջ 75:
146. Նույն տեղում, էջ 78–84:
147. Նույն տեղում, էջ 86–88:
148. Ավո..., էջ 77:
149. ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց.2, գ.70, թ.29, Արնոտ գիրք, էջ 90–92:
150. Արնոտ գիրք..., էջ 96–99:
151. Գարեգին Նժդեհի մասին հրապարակված մի շարք նյութերում գրված է, թե

նա Զանգեզուրից հեռացել է հուլիսի 10-ին: ՀՀ ԱԱՆ արխիվում պահվող Նժդեհի հարցաքննության նյութերում տեղեկություն կա այն մասին, որ նա Զանգեզուրից հեռացել ու Պարսկաստան է անցել 1921 թ. հուլիսի 15-ին (ԱԱՆ արխիվ. գ.5231, հ.3, թ.68):

152. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.54–55:

153. Նույն տեղում, էջ 60–62. 156: Այդ օրերին, 1920 թ. օգոստոսի 8-ին, Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը տեսակցում է Ն. Նարիմանովի հետ և նրան ներկայացնում հայ-ադրբեջանական հարաբերությունների հետ կապված մի շարք հարցեր, սակայն և ոչ մի հարցում պատասխան չի ստանում: Մ. Հարությունյանը պահանջում է, որպեսզի նրան թույլատրվի տեսակցել Ադրբեջանի բանտերում տառապող հայերի հետ, բայց Ն. Նարիմանովը մերժում է: Այդ հանդիպման ժամանակ Մ. Հարությունյանը նաև բողոքում էր, որ Հայաստանի բժիշկներին ու սպաներին Զանգեզուրում և Ղարաբաղում ստիպողաբար ծառայության են կանչում Կարմիր բանակի զորքեր (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.4, թ.17–18):

154. Նույն տեղում, էջ 184–185:

155. Նույն տեղում, էջ 186–191: Իբրև այդ ողբերգությունից հետո Տռնավարզը վերանվանվել է Կարմիր գյուղ:

156. «Մշակ», 28 հուլիսի 1920:

157. Արնոտ գիրք..., էջ 2:

158. Նույն տեղում, էջ 105–106:

159. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.290, ց.1, գ.43, թ.1:

160. Նույն տեղում, ֆ.200, ց.2, գ.90, թ.1:

161. Նույն տեղում, գ.94, թ.9–10: Եվ այդ ամենը կատարվում էին ազգուրացների օգնությամբ: Հենց դա ի նկատի ուներ Նժդեհը, երբ գրել է. «Բաքվի մի քանի տասնյակ կաշառված հայերով Ադրբեջանը տեր դարձավ Ղարաբաղին: Սովետականացված Ղարաբաղը վարակեց բուն Զանգեզուրի որոշ գյուղերը և թշնամու քալանի տենչով խելագարված սրիկայախմբերը, գրեթե առանց կռվի, մտան Գորիս...»: («Հայրենիք», 1929, դ 12, էջ 96):

162. Ադր.Հ ՆՊԿՊԱ, ֆ.410, ց.1, գ.293, թ.36:

163. Նույն տեղում:

164. 1941թ. նոյեմբերի 17-ին և 25-ին Ադրբեջանի ՊԱԿ-ի քննիչ, միլիցիայի կրտսեր լեյտենանտ Իշխանովը (Իշխանյան) և Ադր.ԽՍՀ ՆԳԺԿ 6-րդ բաժնի քննիչ, միլիցիայի կրտսեր լեյտենանտ Մուսենկոն Թևան Ստեփանյանի հարցաքննության ժամանակ (կարելի է ենթադրել, թե ինչ մեթոդներով էր տարվում հարցաքննությունը) ստիպում են վերջինիս «խոստովանել» խորհրդային իշխանության հանդեպ ունեցած իր «մեղքերը»: Այնուամենայնիվ, Թևան Ստեփանյանն իրեն պահում էր արժանավայել:



եվ այսպես. «Իմ իսկական անունը Բաղդասարով Թորոս է կամ Թևան Աղաջանովիչ. Լեռնային Ղարաբաղի մարզում, որտեղից ես սերում եմ, հայտնի էի Թևան անունով»,– վերոհիշյալ հարցաքննության ժամանակ Թևանի տված պատասխանից (Հրանտ Աբրահամյան, Թևան, Երևան, 1999, էջ 43–44, այսուհետև՝ Թևան...):

165. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.159–160:

166. «Արցախ» (Ստեփանակերտ), 1990, դ 1, էջ 67–68:

167. Թևան..., էջ 44:

168. Նույն տեղում, էջ 49:

169. Նույն տեղում, էջ 50:

170 Ալօ..., էջ 289:

171. Թևան..., էջ 51:

172. Նույն տեղում, էջ 51–52:

173. Նույն տեղում, էջ 52:

174. Ադր.Հ ՆՊԿՊԱ, ֆ.420, ց.1, գ.3, թ.42:

175. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1022, ց.8, գ.189, թ.5–6:

176. Նույն տեղում, գ. 208, թ.1–2:

177. Ադր.Հ ՆՊ ԿՊԱ, ֆ.420, ց.1, գ.3, թ.84:

178. ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.17, գ.193, թ.18–19:

179. «Հայրենիք», 1925, դ 9, էջ 84–85:

180. Վարդան Գևորգյան..., էջ 128:

181. Նույն տեղում, էջ 149:

182. Արնոտ գիրք..., էջ 95:

183. Ադր.ՔԿՓԿԱ, ֆ. 456, ց.16, գ.128, թ.35:

184. «Հայրենիք», 1925, դ 5, էջ 85:

185. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ (այսուհետև՝ ԼՂՀՊԱ), ֆ.3, ց.1, գ.60, թ.110: Ասենք նաև, որ արցախյան վերջին պատերազմի տարիներին ԼՂՀ պետական արխիվը բավականին կորուստներ է կրել ռմբակոծությունների ժամանակ: Արխիվը վերանորոգվելուց հետո որոշ ֆոնդերի և գործերի անունները փոխվել են, բավականին գործեր ոչնչացվել: Մենք գործ ենք ածում հին ֆոնդահամարներն ու գործահամարները:

186. «Հայրենիք», 1925, դ 9, էջ 85:

187. Նույն տեղում:

188. Նույն տեղում, էջ 86:

189. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.164:

190. Լ.Մկրտչյան..., էջ 47:
191. ԼՂՅՊԱ ֆ.23, ց.1, գ.2, թ.51:
192. Ադր.Յ ՆՊԿՊԱ, ֆ.410, ց.1, գ.90, թ.3:
193. Ադր.Յ ՔԿՓՊԱ ֆ.1, ց., գ.155, թ.150:
194. Նույն տեղում, թ.8:
195. «Կոմունիստ» (Բաքու), 1921, դ 56:
196. ԼՂՅ ՊԱ, ֆ. 486., ց.1, գ.3, թ.35:
197. Ադր.Յ ՔԿՓԿՊԱ, ֆ.89, ց.1, գ.28, թ.35:
198. ԼՂՅ ՊԱ, ֆ.2, ց.1, գ.135, թ.11:
199. Ադր.Յ ՆՊԿՊԱ, ֆ.185, ց.1, գ.12, թ.1:
200. Նույն տեղում, թ.12:
201. ԼՂՅ ՊԱ, ֆ.11, ց.1, գ.18, թ.58:
202. Նույն տեղում, գ.94, թ.45:
203. Г.А. Кочарян, Нагорный Карабах, Баку, 1925, ст. 32 (այսուհետև՝ թ.А. Кочарян...).
204. ԼՂՅ ՊԱ, ֆ.2, ց.1, գ.135, թ.11:
205. Նույն տեում, ֆ.8, ց.1, գ.25, թ.11:
206. թ.А. Кочарян... ст.31.
207. Նույն տեղում, էջ 30:
208. Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ ստեղծվեցին գավառային հեղկոմներ, Ջրաբերդի շրջանը մտավ Ջիվանշիրի գավառի մեջ, Դիզակինը՝ Ջեբրայիլի, իսկ Խաչենն ու Վարանդան մնացին Շուշիի գավառում: Իսկ երբ 1920 թ. հունիսին Լեռնային Ղարաբաղի հեղկոմը միավորվեց Ղարաբաղի հեղկոմի հետ, Լեռնային Ղարաբաղը մինչև 1923 թ. որպես վարչական ինքնուրույն և միասնական միավոր դադարեց գոյություն ունենալ:
209. Ф.Ш.Шабанов, Развитие Советской государственности в Азербеджане, Москва, 1959, ст.56.
210. ԼՂՅ ՊԱ, ֆ.3, ց.1, գ.60, թ.111:
211. Նույն տեղում, ֆ.485, ց.1, գ.8, թ.53:
212. Նույն տեղում, թ.54 և 57:
213. Նույն տեղում, ֆ.485, ց.1, գ.14, թ.70:
214. Դ.Պ.Գուլինը Յաղորտի գյուղում տեղի ունեցած վերոհիշյալ համագումարի արձանագրությունը զետեղելով իր խմբագրած «Документы...,» ժողովածուի մեջ, այն աղավաղել է և մասամբ կեղծել (էջ 95–96):
215. ՅՅ ՆՊԿՊԱ, ֆ.113, ց.3, գ.7, թ.40–41:



216. Документы..., ст.94.
217. Նույն տեղում, էջ 97:
218. Նույն տեղում:
219. Նույն տեում, էջ 98:
220. Նույն տեղում, էջ 101:
221. Նույն տեղում, էջ 99:
222. Նույն տեղում, էջ 100:
223. Նույն տեղում, էջ 103:
224. Нагорный Карабах..., ст. 654.
225. Документы..., ст.96.
226. Первый Заковказский създ коммунистических организаций (Стенографический отчет), Тифлис, 1922, ст.41-42.
227. Նույն տեղում, էջ 80:
228. Նույն տեղում:
229. Նույն տեղում, էջ 85:
230. Документы..., ст.105.
231. ՅՅ ՅՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.2, գ.3, թ.6:
232. Սուրեն Միրզաբեկյանցն իր հուշերը գրի է առել 1972 թ.՝ այն ժամանակ Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանի տնօրենի խնդրանքով: Ս. Միրզաբեկյանը 1930–ական թվականների վերջից ապրել է Մոսկվայում: 1998 թ. 94–ամյա Միրզաբեկյանն ինձ է ուղարկել նշված խորհրդակցության մասին վերամշակված և լրացված իր հուշերը:
233. ԼՂՅ պետական պատմաերկրագիտական թանգարան, ֆ.2, ց.34, գ.5569, թ.1–7, նաև՝ հեղինակի անձնական արխիվ: Ցավոք, ոչ ԼՂՅ պետական արխիվում, ոչ Բաքվի և ոչ էլ Երևանի արխիվներում չգտանք այդ խորհրդակցության արձանագրությունը: Դա, թերևս, որոշ մանրամասնություններ կպարզեր:
234. Документы..., ст124.
235. Նույն տեղում, էջ 129:
236. ՅՅ ՅՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.2, գ.10, թ.70:
237. Документы..., ст. 132-133.
238. ՅՅ ՅՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց.3, գ.12, թ.3:
239. Документы..., ст. 149-150.
240. Двенадцатый съезд РКП(б). Стенографический отчет, М-а, 1968, ст.487.
241. Նույն տեղում, էջ 823–824:
242. Նույն տեղում, էջ 660:

243. «Аербайджан» (Баку), 1989, ноябрь, դ 5, ст.4-5.
244. Нагорный Карабах..., ст. 667-668.
245. Документы..., ст. 151.
246. Նույն տեղում, էջ 154–155:
247. Արցախի և Հայաստանի միջև տարածքային կապերն ավելի հեռացնելու նպատակով, 1930 թ. Քարին տակ և Հին ու Նոր Ղարաղշլաղներն անջատեցին Ստեփանակերտի շրջանից և հանձնեցին Շուշիի շրջանին:
248. Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզկոմի 1923 թ. սեպտեմբերի 18–ի որոշմամբ Խանքենդը Ստեփան Շահումյանի անունով վերանվանվեց Ստեփանակերտ:
249. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.167–168:
250. Конфликты..., ст.16, 27, 40 և այլն:
251. Документы..., ст. 203.
252. Մինչև հիմա հրապարակված հոդվածներում կամ գրքերում ճիշտ չի նշված ԼՂՀՄ–ի խորհուրդների առաջին համագումարի բացման օրը:
253. «Խորհրդային Ղարաբաղ», 19 օգոստոսի, 1923:
254. Սատենադարան..., Գ մաս, էջ 39–40:
255. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.314, ց.1, գ.111, թ.171–172:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽ–ՂԱՐԱԲԱՂԸ 1917թ. ՓԵՏՐՎԱՐ 1918 թ. ՄԱՅԻՍ ........ 11

*1. Իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում Փետրվարյան հեղափոխությունից հետո* ........ 11
*2. Արցախը անդրկովկասյան իշխանությունների ժամանակաշրջանում (1917 նոյեմբեր -1918 թ. մայիս)* ........ 29

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ........ 43

*1. Տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծումը Ղարաբաղում* ........ 43
*2. Արցախահայության հերոսական պայքարը թուրք-մուսավաթական զավթիչների դեմ* ........ 54
*3. Անդրանիկը և արցախահայությունը* ........ 79

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ ........ 97

*1. Անգլիական օկուպացիոն իշխանությունների ադրբեջանամետ քաղաքականությունն Արցախում* ........ 97
*2. Ղարաբաղի գոյապայքարը ադրբեջանական ագրեսիայի դեմ: Ղարաբաղի հայության 5-րդ, 6-րդ և 7-րդ համագումարները* ........ 124

**ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ**

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ: ԱՐՑԱԽԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ............. 159

1. *Քաղաքական կացությունը Արցախում 1919 թ. աշնանից մինչև 1920 թ. մարտի սկիզբը: Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը* ........................ 159
2. *Զինված ապստամբությունը Արցախում: Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը: Արցախի միացումը Հայաստանին* ........................ 178

**ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ**

ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ........................ 199

1. *Իրադարձությունները Արցախում Ադրբեջանում խորհրդային իշխանության հռչակումից հետո* ........................ 199
2. *Արցախի և Զանգեզուրի բռնազավթման խորհրդային Ադրբեջանի ձգտումները: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշումը* ........................ 209
3. *Արցախ-Զանգեզուրի հակաբոլշևիկյան պայքարը 1920-1921 թթ.* ........................ 233
4. *Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը որպես ադրբեջանական իշխանությունների հակահայկական գործունեության առաջին փուլի ավարտ* ........ 253

**ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ............ 277




ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ՄԱՐՏՆՉՈՂ ԱՐՑԱԽԸ
# 1917-2000

## ԳԻՐՔ Ա
## 1917-1923

•●•

АБРАМЯН ГРАНТ БАРСЕГОВИЧ

# СРАЖАЮЩИЙСЯ АРЦАХ
# 1917-2000

## КНИГА А
## 1917-1923

*Книга посвящена бурным событиям, которые происходили в Арцах-Коробахе в 1917-1923 гг., и областях, незаконно и насильно присоединенных к Азербайжану советской империей.*

•●•

ABRAHAMYAN HRANT BASEG

# FIGHTING ARTSAKH
# 1917-2000

## BOOK A

*The book is declirated to 1917-1923 fatal events taken place in Artsakh - Garabag and is on the violent adjoinment of the region to Azarbaijan by the Soviet Empire.*



Հրանտ Բարսեղի Աբրահամյան

*Ծնվել է 1931 թ. օգոստոսի 12–ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Քերթ գյուղում: 1954 թ. գերազանցիկության դիպլոմով ավարտել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1973 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Լեռնային Ղարաբաղը 1920-1937 թվականներին», իսկ 1997-ին՝ դոկտորական թեզ՝ «Արցախահայության ազատագրական պայքարը 1917-1923 թթ.» թեմաներով:*

*Շուրջ 100 գիտական հոդվածների և ավելի քան 10 գրքերի հեղինակ է: «Արցախի հերոսամարտը» և «Թևան» գրքերի համար 1998 թվականին, իսկ «Ճակատագրին ընդառաջ» գրքի համար 2001 թ. արժանացել է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի:*